



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել կյուրը զանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա կյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ՉԱՐԱՐԻՔԻՆԵ  
ՆՇԱՆԻՆԵ  
ԿՈՒՆՍՏԱՆ



ԱՇԽԱՏԱՍԻՐԱԿԻՅԵԱՄ  
ԿՐԻՔՏԱՆԻՆ, ՄԱՆԱԿՆԵՐ

ՀԱՅԳՐԱԿԻՆԵ  
ՈՒՐԻՆԻ Յ. ԶԻՒՅԵԱՆ  
ԿՐԻՔՏԱՆ

Ltn  
✓ 497





1999 [ ]





ՎԱՐՃՈՒԹԻՒՆ

ՆԱԿԱՐԱՆՆԵՐ



Faint, illegible text or markings, possibly bleed-through from the reverse side of the page.

*Հիշարժան*

**ՎԱՐԺՈՒԹԻՒՆ**

**Ն Ա Մ Ա Կ Ա Յ**

ՈՐ Է ՀԱՒԱՔԱԾՈՅ  
Փուռչ իմն երփնագեղ ծաղկանց  
Ննորհագիծ ճոխիմաստ բանից  
Պիտանացուաց



**ՅԸՆՅԱԹՈՒՄՆ**

Ի ունգուսն մտաց ուսուսմնասիրաց  
ԵՒ ՈՐՔ ԾԱԾԱՆԻՆ  
Ի լուսակալյակ գիտութիւնս  
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԶԱՏ ԱՐՀԵՍՏԻ  
Զարգանալ շարագրութեամբ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՂԻՎԵԱՆ

**Կ. ՊՈԼԻՍ ՖԻՆԱՆՍԻՍ**



Աշխատասիրութեամբ  
ԽՈՀԱԿԱՆ ԵՐԵՒՏԱՍԱՆ ՄԱՆԿԱՆՑ  
ՉԵՌՆԱՍՈՒՆ ԱՇԱԿԵՐՏԱՅ  
Մ Ա Հ Ց Ե Մ Ի Գ Բ Ի Գ Ո Ր  
ՀԱՅԿԱՐԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ  
ԳԻՐԶԱԿԱՆ

4497-60

39.497





ՅԱՌԱՋՆԵՐՈՐԴ ԱՄԻ  
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
**Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ**

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
Է՛


ՀՐԱՄԱՆԱԻ

**Տ. ՅԱԿՈՎԲԱՅԵ**

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԻ  
Կոստանդնուպոլսոյ

1874

## ՅԵՌԵՂԵՔԵՆՈՐԲԻՆՆ



Լուսաշաւիղ ուսումնասիրութեան իղն էւ ջան' որ յԱզգիս, յորդեալ յանջափս' գապառնեոյն տայ արդարեւ գուշակ պայծառարփի փայլման ազգիս 'ի լուսանկար գիտութիւնս գօրեն տիեզերալոյս արեգական. ընդ որ ժամանել խաւարամած տըգիտագոյն մանկանց մերազնեից' զբազմաքիւ. Իպրոցաց վաղվաղ յառաջադիմութենէ փոյր մեծ կալեալ յԱրգոյ Ազգասիրաց' ընդ հովանեաւ յոգնահանճար պէրճիմաստ էւ խնամակարկառ ուսուցցաց յանձնել ջանան զմանկտին հայկազանց համօրեն, ըստ Առդմոնի գերազնիւ բանագրութեան' իբր ծաղիկ դաշտաց էւ շուշան հովտաց անբազջելի նկատեալ զհոգեգուարճ անուշահոտութիւն ուսմանց, դիւրաւ ստանալ ամե-

նից. զի այգիք բանականք ծաղկեացին է տացեն զհոտ իւրեանց:

Որպէս է անա աստանօր 'ի մերս Դպրոցի հոգեշան զիտութեանցն աղբիւր' ոչ փակեալ է կնքեալ, այլ մշտաբուռիս լեալ յորդավտակ, իւրաքանչիւրքս ըստ բանակութեան անօրոյ մտաց մերոց զկենդանին ընկալեալ զշուր, ամենայն փութով զհետ պնդեցաք զոնե դուզնաքեայ ուսմանց մերոց զնիշ 'ի յայտ ածել ազգայնոց, հոգելից Դասատուին մերոյ բարեյորդօր ջանիւր:

Զի մի ըստ անպտղութեան մերում 'ի կասկածս լիցի վարանումն 'ի դերեւ էլանել ալնկալութեան. է մի էրեւեսցի անհաւատարիմս լինել մեզ շնորհապարգեւ քանքարաց, որով է անկանիլ դատապարտութեան: Զի ուռ. անողկոյզ հատանի, է զծառն անպտուղ խլել արմատաքի' հրաման է Աստուածային ջխափանել զերկիր. յանդիմանութիւն բանի՞ է որ քանքարաբազոյցն իցե բեւ կարի սակաւագոյնս իցե ընկալեալ զմնաս. ընդ որս է զանիծակրութիւն պտղակորոյս բզենւոյն զմտաւ ածեալ մեր պարտ կալար յանձին, զի մինչ տակուսին 'ի Դպրոցի եաք յուսմունս պատաղեալ, միաբանական սիրովջօրինել զայս գրքոյկ զաշխատանաց մերոց արդիւնս իբրեւ զընծայս փանաքի' վերանուիրել Ազգիս անարժա-

նութեամբ, ոչ միայն լիուլի Քերականա-  
կան եւ ճարտասանական կանոնաց ճոխ  
բանագրութեամբ գեղեցիկ նիւթ ինչ 'ի զը-  
ւարճութիւն ուսումնագիտաց, եւ 'ի կըր-  
րութիւն կաղազնացից իբրեւ փոքրիկ ցուպ  
ինչ յենարան, այլ բացածանուցմամբ եւ  
յարմար վկայագրութեամբ խորիմաց բա-  
նից սրբոց Հարց 'ի զանազան նիւթս ըստ  
աստիճանաւորութեան անձանց նամակօ-  
րէն բանահիւսութեամբ 220 բունով իբր  
գործեալ վիպասանութիւն, զվայելչականն  
բանականին 'ի կիր առնուլ իւրաքանչիւ-  
րոց 'ի կենդանութեան 'ի դեպ ժամանա-  
կի. գոր իբրեւ ճիւղ մի փոքրագոյն առ-  
ընթեր ունել ծանրակշիւ, ողկուզոյ անըս-  
պառ. գանձուց մտաց ձերոց՝ ընկալարուք  
ողջմտութեամբ, եւ բերութեանց մերոց խա-  
կամտաց երկայնմտութեամբ ներող զը-  
տանիլ:

Արդարեւ ջունի ըստ անուանն եւ ըզ  
ճոխութիւն բաւական զերթ նրբարուեստ  
ինչ հրաշաշեն այս պրակ ստուարաշեն,  
սակայն աղաջեմբ եւ ոչ ընդ Ռւլունս Սին-  
լիբորս իսպառ. համարիլ. այլ խնդրեմք յըն-  
թերցողացդ ընդունելութեան առնելով ար-  
ժանի, բարեմաղթու. լինել վասն ապիկաբ  
ժառայիցս, զի եւ այլովք Ազգասիրական  
հոգեշահ գործովք բարեաց կարացուք մա-  
սըն օգտակարութեան ինչ գտանիլ Ազգիս

Ժ

առ. յայլայն, որով մեծասցիանունն Քայկագ-  
եան Գպրոցիս Եկեղի-Գափու բաղիս ըստ  
բաղձանաց նուաստ ստորագրեալ աշակեր-  
տելոցս:

Ն. ԵղիփԱՆ Մ. ՓԱՊՈՒՃՃԵԱՆ. Շ	50
Ն. ԳԷՈՐԳ )	
Ն. ՆՇԱՆ ) Յ. ՍԷՐՎԷՐԵԱՆ.	» 40
Ն. ՅԱՐՈՒԹԻԻՆ. Ս. ՄԱԶԼԸՄԵԱՆ.	» 25
Ն. ՅԱԿՈԲ ԹԱԳԻՈՐԵԱՆ.	» 25
Ն. ՍԱՀԱԿ ԱԻԵՏԻՍԵԱՆ.	» 46
Ն. ՄԱՐՏԻՐՈՍ ԱԻԵՏԻՍԵԱՆ.	» 44
Ն. ՄԱՐՈՒԳԷ. Կ. ՅՐԷՆԿԵԱՆ.	» 40
Ն. ԽՆԴԻՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ.	» 40
Ն. ՍՏԵՓԱՆ ԳԱՄԻԱՆՈՍԵԱՆ.	» 40
Ն. ՅԱԿՈԲ ՍԻՐՈՒՆԵԱՆ.	» 40
Ն. ՆԵՐՍԷՍ ԱԻԵՏԻՍԵԱՆ.	» 8
Ն. ՆՇԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ.	» 7



ԱԶԻՍԵՍՒԲՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿԱՆԻ ՇԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

(ԵԷՆԻ-ԳԱՓՈՒԻ)

ՄԱՅՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՅԿԱԲԱՆ ԳԱՍԱՏՈՒ

**ՄԱՀՏԵՍԻ ԳՐԻԳՈՐԻ**

ՉԵՌՆԱՍՈՒՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

---

Հրատէր Սրբազանին առ պյցելութիւն Գաղոցի  
պատ. նուիրամատոյց տեսրակիս միջնորդաւ:

---

Հահ արփիափայլ եւ արքուն ղիտա-  
պետ Սրբազնասուրբ Վսեմայարգ Վեհա-  
փառուրեան վերատեսչիդ երկնաճեմ սուրբ  
գարշապարաց առ վերընծայեմք համբոյր  
ժառայաբար:

Չնաշխարհիկ բաղդաւորութիւն զի-  
տեմք արդարեւ ծնելոցն 'ի ջրոյ և 'ի հողւոյ .  
զի նովաւ ունին համարիլ որդիք լուսոյ այ-  
սինքն որդիք Աստուծոյ բարձրելոյ . և քրիս-

տոնեայ անուամբ եղբօրգիր Վրիստոսի  
անդրանկի՝ ըստ Վուկասու. զոր կրկնակի  
վկայեաց Յիսուս, սոքա են իմ եղբայր և  
քոյր և մայր, և ՚ի խաչին ահա որդի քո  
ասելով առ մայր իւր՝ զաւետարանիչ սե-  
րանուն զսուրբ Յովհաննէս սիրելի աշա-  
կերտ իւր եցոյց առանց անուանակոչու-  
թեան : Ի նոյն բաղդաւորութեան կարգի  
համարիմք որ ՚ի ներքոյ հովանաւորութեան  
հոգունակ հարց ունիցի որ ըստ հոգւոյ  
մտսին և ըստ մարմնոյ . և այն արթուն  
հսկողութեամբ ՚ի խնամս, որ ՚ի վիճակ  
երջանկութեան հպատակաց զրէ նպատակ :

Վհաւասիկ սոյն բաղդաւորութեամբ  
հասեալ կամք նոյն երանական վիճակի  
ընդ հովանեաւ լինել յոգնախնամ Զօրդ  
հոգւորի երկրորդ աստուածարան կոչեցե-  
լոյ . գոհ եմք և ուրախ անսպասում ցըն-  
ծութեամբ, ո՞վ աստուածարեալ երիցս ե-  
րանեալ գերզգօն Զայր մեր սրբազան . փա-  
ռաւորեալդ յազգս մեր, որպէս զի Յի-  
սուս փառաւորեցաւ յաշակերտս իւր, շու-  
նելով զհօրն անխորաբար . Պի քո եմք և  
մէք տէր սգեսէր, ընտիր ազգասէր, աստ-  
ուածատուր բաղդաւորութեամբ մշտնջենա-  
կան վայելել յորդավտակ խնամողական  
զքոյդ տեսչութիւն :



Ը՛յն է փառաւորութիւն վեհին կամ՝ վարդապետին , յորժամ վայելչական հայրախնամ տեսչութեամբ հանդիսացի առաջակերտս . նոյն գունակ այն է հպատակաց կամ աշակերտելոց միտթարական փառաւորութիւն , յորժամ նշանք յայտնեսցին հնազանդութեան ըստ հաճոյից կամաց Տեառն :

Բանզիեթէ արդարեւ զամն ողջոյն հանապազօր մշտածաւալ շիցէ լուսասփիւռ արեգական ջերմութիւն ներգործել զօրութիւն պարտիզաց և անդաստանաց երկրի . բայց 'ի տարւոջ միանգամ հազիւ կարողանայ երկիր տալ զպտուղ կամ զարմրտիս : Ըստ նմին օրինակի համարեսջի՛ր և զմերս տարեկան դուզնաքեայ պտուղ զայս տետր շարագրութեան . զերթ տարեկան պտուղ հոյակապ պարտիզիս , թէ և շիցէ ըստ արժանւոյն բազմաբեղուն և վայելուչ ընծայ ըստ հաճոյից կամաց վերատեսչիդ սրբազնութեան քում . խնայեա՛ փոքրահասակ տկարութեան մերում խակուսումն գրչաց . փաղփիւնափայլ նշուլագեղ ջահի՛ւք վայելել ընդ առաջ ելանել 'ի պատիւ ամենապատիւ Ս՛նհափառութեանդ՝ յոգնածածանջ խնամակարկառ այցելութեանդ փոխարէն : Ը՛յլ զի՛ գէթ այսքան ապիկար

գրչիւ մերով՝ միաբանութեամբ հանդերձ  
իւրաքանչիւրոցս ստորագրութեամբ՝ ոմն  
այսոյէս և ոմն այնպէս նամականի նիւթով  
իրբև փոքրակոտոր կայծիւք վառարան մի՝  
հաղիւ կարացաք կազմել արծարծմամբ բա-  
րեջան ուսուցչին մերոյ մահտեսի Վրիգորի  
Պերձակեան, ըստ պարտուց մերոց նշան  
հնազանդութեան ցուցանել. զի սովին ջեր-  
մութեամբ յաւէտ յաւելցի բորբոքիլ բազ-  
մեռանդ սէր քո հայրական առ մեզ, ՚ի խրա-  
խոյս : Վիտակ իսկ ես Տէր բարեգութ՝  
զի ամենայն ծաղկոցք կամ անդաստանք  
չեն միօրինակ արդասաւոր, են որ գոյն զգոյն  
և հոտաւէտ ծաղկամբք բազմաբեղուն զար-  
դարեալ, և են որ հասարակ փայրի  
վտիտ ծաղկամբք, ո՛չ հոտաւէտ, այլ խո-  
տաւէտ : Այնպէս իմա և զմերս այժմեան  
փունջ երկցուկ ծաղկանց. արդէն առ ըն-  
թեր քո ՚ի բարձիդ մնալ մինչև յօր հան-  
դիսի քննութեան խնամովդ պերճացեալ  
այսր դպրոցիս, գուցէ երբեմն ընթեանլովդ՝  
անդիս տեղիս սրբազան Վրոց յարմար վե-  
կայութեանց քաղցրահոտութիւն որ ՚ի նո-  
սա, ՚ի ընդունս գերզգօն մտաց քոց դի-  
պեսցի առ ՚ի զմայլիլ ուսումնատենչ բա-  
րեփափաք սրտիդ. որով զնշոյլ ինչ տա-  
րեկան աշխատանաց մերոց զգացեալ, սի-

րով առ մեզ գալ յայցելութիւն աստ 'ի նմին  
աւուր , և անանատես գող գտանիլ 'ի վը-  
կայութիւն ճշգրիտ : Իսկ եթէ անվայելինչ  
բանագրութիւն գոցի 'ի սմա՝ ներողամիտ  
լեր թերալարժ տկարութեան մերում , Տէր  
գթառատ , ոչ ամենայն շէնք բնակարանի  
քաղաքաց են միօրինակ . են որ արքայա-  
վայել և կայսերարնակ իցեն պալատք՝  
լայնարձակ պարտիզօք և պողոտայիք . իրրև  
այլոց դպրոցաց իմա՝ զսքանչելի զանազան  
գիտութեանց գրարանական արհեստահմուտ  
մեծաջան աշակերտելոց . և են որ իրրև  
զմերս փոքրիկ աղքատանոց : Ըրգարև ո-  
մանք ներքնալողակ կամ կարթաձիգ լինե-  
լով յատակս ծովու , փութալ փութան  
ունել զշահաբեր ձուկն և զսատեր . և ո-  
մանք արծուոյն օրինակաւ ուժգին վերա-  
սլանան երկնային համարիլ կամ զտեսու-  
թիւն վայելել զերկնայնոցն : Իսկ մեք փոք-  
րագոյն թևովք աղանուոյ զոր խնդրէ՝ Կա-  
ւիթ , հազիւ կարացաք ըստ կարեաց մե-  
րոց խոնարհաբար զվերինն քան զմեր խոր-  
հիլ , և ցանկալ այսչափ . այն իսկ է ենթա-  
կայանալ ցանկալի՝ որհնութեանդ սովաւ  
հանապազ : Ասև հաշուագիւտ գողով Տա-  
կոբնան սանդուղք , սովաւ ճարտարաւորեցաք  
պսել ըստ մարգարէութեանն Ալքիայ : Ե-

կայք ելցուք 'ի լեառն Տեառն, և 'ի տուն  
աստուծոյ Յակորայ: Ապա իբրև զկաթիլ  
մի 'ի դուլէ, և իբրև զմետ մի 'ի կշոց,  
և իբրև շիթք 'ի բերանոյ համարեսչի՛ր ա-  
զաչեմք: Քանզի մեք ամենեքին ցանկամք  
առթիւ իւրք ընդունել զերկնացնցուղ աստ-  
ուածածիր օրհնութեանդ զցօղ զերթ Պե-  
դէոն, և զխեցեղէն խոտան մեր անօթ՝  
յոսկեղէն անօթոց կարգի համարեալ, ան-  
ընդհատ արասցես հեղուլ զբարձրագոյն  
խնամոցդ յորդառատ վտակ, 'ի մխիթա-  
րութիւն և 'ի պարծանս նուաստագոյն թե-  
րաւարժ աշակերտելոցս Սայր Պպրոցիս  
(Աէնի գափուի):

Ն. Ծ. ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

## ՇԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### Մտերի՛մ բարեկամ

Ա՛հ՝ քանի՞ցս եղև այս տեղալ յիս ցա-  
 լառի թնախառանայ 'ի բերմանէ մշտասովոր  
 լեզուագարութեանդ . ամենևին տխմա՞ր ի-  
 ցես չգիտել զչափ և զկանոն , թէ ո՛րչափ  
 պարտ է ունկնդիր լինել և ո՛րչափ խօսիլ .  
 Աստուածային նախախնամութիւնն կրկնա-  
 կի արար դործիս 'ի լսել բազում . իսկ  
 զբերան՝ մի , առ 'ի խօսիլ սակաւ . զորմէ  
 իմաստասէր ոմն առ շատաբան աշակերտ  
 իւր ասէ , թէ զբերան քո տեսանեմ որ-  
 պէս զականջ , և զականջս քո՝ որպէս զբե-  
 րան : Այլ այլ ոմն , ուսիր լսել յաւէտ , և  
 խօսիլ սակաւ : Քանզի եթէ բերանն խօ-  
 սուն լիցի , ականջն ե՞րբ զպաշտօն իւր կա-  
 րողասցի կատարել . ըստ որում յայսմ  
 տաղտկալիւր լեզուագարութենէ և 'ի շա-  
 տաբանութենէ ծնանի ստուծիւն անշուշտ .  
 որպէս և ասացեալ է իմաստասիրի ումեմն .  
 յորում ուրեք իցէ շատաբանութիւն , անդ  
 է ստուծիւն . և մանաւանդ զշատաբանու-  
 թիւնն աղբիւր գիտեմք մահաբեր բազմա-  
 տեսակ վնասուց . յորմէ հոսն կերպ առ  
 կերպ վտակք մահառիթ և հողեկորոյս մե-

դաց ըստ հոգեկանին և մարմնականին . այն է՝ բամբասանք , հակառակութիւն , պարծանք , վիճարանութիւն , ատելութիւն , նենգութիւն և այլն : Արոց գործադիր եղեալ են բազումք նախապատճառ շատարանութեամբ : Ա՛լ վնասաբեր շատարանութեանս , որով նախաստեղծն Աւայ դուն գործել ջանայր աւելարանութեամբ , քան թէ զարժանին պատասխանել առ չարն , շասէ միայն թէ Աստուած պատուիրեաց շուտել , այլ մի հուպ լինիր ասաց ասելովն 'ի շատարանութեան գտաւ բան նորա 'ի թելադրութիւն սատանայի պատասխանել . որով սկըզբնադուռ իմն պատրաստեաց չարին մտանել , որով եղև ստասացութիւն . քանզի ոչ ասաց Աստուած մի հուպ լինիցիք , այլ միայն մի ուտիցէք , յորմէ յաջորդեաց ամենայն մարդկան լինել տառապակիր , զոր ինչ երբեր զվնաս շատարանութիւնն՝ Ախամօր մերոյ : Գիտե՞ս արդեօք , անասունք 'ի բերանոյ որդնահարին , նոյն օրինակ մարդիկ 'ի բերանոյ ըմբռնին և կործանին : Ասև որպէս ասացի և նենգութիւն ծնանի 'ի շատարանութենէ , զոր հաստատէ Աւախթայ սու բանիւ , թէ լուսնո՞ զլեզու քո 'ի շարութենէ , զի մի խօսեսցի ասէ շրթունք քո զնենգութիւն . որ է հետեակ առաջ-

Նոյն՝ այսինքն խօսելոյն . և զկանոն լու-  
կացութեան ուսարուք 'ի նմանէ, որ ասէ .  
պահեցից զճանապարհս իմ . զի մի մեղայց  
լեզուաւ իմով, որով ստուգեցաւ բան ի-  
մաստասիրին՝ թէ լռելն լուազոյն է քան  
զբարի բանս խօսիլ : Ապա դու զիա՞րդ հա-  
մարձակիս լեզուազարութեամբ մնասաբերս  
խօսիլ զբանս յամենայն տեղիս , ոմանց  
խորտակել զանուն , և ոմանց տոչորել  
զսիրտս . յորոց բազումք եկեալ առ իս գան-  
գատին . շե՞ է լուեալ քո զայս բան 'ի  
սուրբ Աւետարանի որ 'ի Փրկչէ մերմէ Յի-  
սուսէ Վրիստոսէ , թէ ամենայն դատարկ  
բանի համարս տալոց էք . ո՞չ ապաքէն առ  
'ի սանձահարել զլեզուս մեր , Աստուած  
կրկնակի դրամբք հաստեաց զբերան , շքր-  
թամբք և աստամամբք :

Ա՛հ ցանկալի և գովելի լռութիւն . որ  
արդարեւ արժանի գովաբանութեան , օրի-  
նակ առցուք միանգամայն 'ի Փրկչէն մեր-  
մէ , զորմէ ասի , թէ « և նա լուռ կույր առա-  
ջի Ապրիափոյ և Աննայի » . և 'ի տախտակի  
գրութեամբ իմաց արարեալ՝ պատուեաց  
զլուութիւնն : Աւրեմն եթէ կամիս ազատ լի-  
նել 'ի շարեաց և 'ի մնասուց՝ պահեա՛ զայս  
օրէն , այսինքն զգուշութիւն առնել բանից  
քոց . զի մի՛ մեղիցես լեզուաւ քով . և

Թեպէտ յաւէտ ձեռնարկութեան բանս կարէ գտանիլ վասն շատարանութեան, բայց որովհետեւ գործածութիւն ականջաց 'ի վեր է քան զբերանոյն, զորմէ և Սողոմօն զեկուցանելն առական, « որ իմաստունն իցէ՛ լոնսցէ » , հաճելի և գովելի լինել յաչս ամենեցուն և առ Մատուած, որով անգորրունել անձին իւրում զկեանս: Վասն այնորիկ եթէ այսքանեաւ համոզեցար սանձահարել զլեզու քո, բաւական համարիմ զայսքան բանագրութիւն յիմաստնոցն բերեալ քեզ վկայութիւն, ապա թէ ո՛չ և ես ո՛չ կարեմ քեզ նման մտանել 'ի կարգս շատարանից քան զայս առաւել խօսելով, և զբազում թերթս թղթոց սեական ներկել:

Ն. Ծ. ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

Ն Ո Ւ Է Ր Ե Ր Ա Խ Տ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն  
ԱՌ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԴՊՐԱՏԱՆ

Չնաշխարհիկ հոգաբարձու տեառնդ մերոյ բարեբարի, համբարձ ձեռաց վերընծայեմք շնորհակալ գող անթերի:

Ա՞յլ երախտագիտութեանս պարտաւորութեան, քանի՞ քանի արդեօք պարտիմք



զնորհակալութեան բարբառիլ բանս փոխանակ բաղմաղան երախտեաց քոց , բարեգութ . որովհետեւ բարդեցան կուտեցան 'ի վերայ մեր երախտիք հայրախնամ բարերարիդ . զի յայսքան ժամանակ մշտաբորոք սիրով , յանձնառու եղեալ՝ անխոնջ աշխատութեամբ և սիրաբորոք ջանիւք հոգաս հանապաղ զպիտոյս մեր , զարդանալ և պայծառանալ լուսակայլակ իմաստութեամբ յազգս մեր , անզբաղ կենօք սիրաւառ վաստակաւորեալ 'ի կենցաղօգուտ ուսմունս : Այորմէ ճառագայթաւէտ անշամանգաղ շողշողումն աստուածահաճոյ մարդասիրութեանդ յոգնախումբ բարեաց հայրական խնամոց՝ արեգակնապէս փայլփայլե 'ի մեզ բաղմապատիկ արդիւնաւորութեամբ : Վանզի ուսումնարանս այս պարտեզ՝ ահա բեղմնաւորեցաւ պէսպէս ուսմամբ կարեւորօք , իբրև զաստուածաձեմ պտղալիր պարտեզ Ադինայ . յորմէ հրաման առեալ եմք 'ի քէն ճաշակել , այսինքն ուսանելով ուսանիլ զբանն կենաց սրբոց Մատենից զերկնապարգև իմաստութիւն բարեպէս , և բարեկրօն վարուք պերճանալ լուսով իմաստից շնորհաց Արբոյ Հոգւոյն որ իբրև սաստիկ հողմոյ շնչէ անսպառ և յայս վերնատուն , յորմէ աւատահոս բղխէ աղբիւր

ջրոյ կենաց անմահական զիտութեան քան զհոսանս յորդանանու , յորում երբեմն պատահեցաւ իմաստութիւն Հօր Յիսուս , զչնորհաբուլիս սուրբ Հոգին Աստուած առ բերելով 'ի յերկնից ընդ իւր երևցուցեալ . սակայն առ մեզ աստանօր յարակայ աներևութապէս հեղեալ զերկնապարզե զչնորհ , ըստ իւրում բանի թէ ուր ժողովեալ են յանուն իմ , անդ եմ և ես 'ի մէջ նոցա :

Արդ՝ զի որպէս սոյն սիրարորոք ջանիւքդ՝ հասուցեալ զմեզ յայս երանական վիճակ , և համապատշաճ հանապազօրեայ երտխտեաց քոց արդեամբ ուրախացուցանես . ահա զտրիտուն բաւական փոխանակել բարութեան քան զայս շունելով մեզ հատուցանել 'ի նիշ շնորհակալութեան և երախտագիտութեան , պարտաւոր համարիմք զնուաստութիւնս 'ի հանապազօրեայ աղօթս մեր յիշել բարեմաղթելով . զի հաճութեամբ ընկալեալ զայս մերս նուէր փանաքի , զիշխանացն Սահակայ և Համազասպայ ընկալի՛ք աստ զօրհնութիւն 'ի Տեառնէ ընդ երկոսին եղբարց քոց միանդամայն . և 'ի հանդերձեալն հանդերձ համայն ընտանեօքդ արժանաւոր գտեալ յաւիտենական երանական վիճակի սուրբ արքայութեան , ամեն

նախառաւոր լուսատեսիլ փառաց տեսու-  
թեամբ սուրբ Երրորդութեանն՝ յաւիտեան  
խնդասջի՛ք յանվախճան ուրախութիւնս 'ի  
մխիթարութիւն մեզ որդեգրեցելոցս, որք  
եմք :

Բարեկարգ դպրոցիս համայն մանկտի,  
'ի ձեռն նախադաս Եպիփան գրչի :

---

### ԲԱՆՔ ԹԱՆԴԻՄԱՆԱԿԱՆ

#### ՎԱՍՆ ՍՆԱՊԱՐԾՈՒԹԵԱՆ ԵՂԲՕՐ ՈՒՐՈՒՔ

Սիրաւառ տատրակ եղբորդ մտերմի և հարողատի .  
հանդերձ ողջունիւ բանք անկեղծական սիրոյ նուիրի :

Չի՛ք ինչ առիթ լինել ձանձրութեան  
քան տկարամիտ սնապարծից զանձանցն դո-  
ւլութիւնն : Որպէս յերեկեան աւուր 'ի խըն-  
ջոյս 'ի տան 'ձերում անընդմիջելի բանիւ  
պարծանաց քոց՝ իբր 'ի լեղահամ աղբերէ  
առատահոս խաղացելոյ լցեր զսննեակն .  
յիրաւի խլացուցին ո՛չ միայն զիմ լսելիս ,  
այլ և զհամայն հանդիսականացն , մինչև  
ձանձրանալ ամենից և նիրհել ոմանց քա-  
նիցս երևեցաւ : Մպա անդ էր տեսանել  
առ ամօթոյս զտխուր դիմացս զայլագու-  
նութիւն : Որոյ վասն յայս գիր անկեղ-

ծուծեան ձեռնածիգ լինել պատշաճ համարեցայ, աւասիկ ոչինչ խնայելով 'ի բանս պիտանիս . զի մի և յայլ ուրեք պատահեսցի այսպիսի սնտպարծուծիւն 'ի քէն : Տես զի՞նչ ասէ իմաստասէր ոմն, « որ պարծի , ամենեցուն պարտական եղիցի » . և այլ ոմն, « որ պարծի , ամենեքին խուսափին անտի յաւէտ ձանձրացեալ » : Արդարև յաւէտ ձանձրացեալ որպէս և մեքս . վասն զի բանք պարծանաց միշտ հպարտութեան բուրէ զհոտ . ընդ որս ոչ ոք ախորժի երբէք կենակցիլ , որպէս և գրեալ է 'ի զիրս Սաղմոսաց , որ ամբարտաւան էր աչօք և ագահ սրտիւ , ընդ նմա և հաց ոչ ուտել :

Օր թեպէտ բազում գիտութեամբ ձութացեալ երևիս , բայց զի՞նչ օգտիս նորօք այսուհետև . միայն զնուազութիւն բարեկամաց . զի այդպիսի հպարտութեամբ անարգ և ատելի երևեսցիս թէ առաջի Աստուծոյ և թէ առաջի մարդկան : Ահաւասիկ բերք տղայական և գործառնութիւն տղայամիտ մարդկան . ամենեին անվայել է զիտնոց պարծիլ . զի գրեալ է , մի՛ գովեսցէ զքեզ բերան քո՞ : Այլ սրբազան Առաքեալն Պօղոս ոչ այլով իւրք պարծէր . բայց միայն 'ի խաչ Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի , և ասէր . որ պարծի 'ի Տէր ,

պարծեսցի : Ապացուցական յարացոյց լինել բանիս շատ է և զայս յիշեցուցանել սիրելութեանդ . Արարիչն արարածոց ամենազօր՝ յորժամ լուսաւորեաց զաչս կուրին , պատուիրելով պատուիրէր , եթէ մի՛ ումէք ասիցես 'ի շինին . զի մի՛ բանք պարծանաց վերերեւեսցին առ ինքն , որ չէր հաճոյ կամաց իւրոց : Միթէ զօրութիւն քո և կարողութիւն քան զՀիսուս Փրկչին մերոյ առաւել է . զոր կուրին աչս բացեր . տեսցուք : Բազում սրբազան անձինք աստուածային կարողութեամբ զանազան հիւանդս բժշկեցին . մինչ զի՛ ոմանք 'ի նոցունց մեռելյարոյց ևս կոչեցան , զմեռեալս յարուցանելով . ո՞վ որ 'ի նոցունց պարծէր , և ոչ մի . քանզի գիտէին եթէ Ամենակարողին մատամբն լինէր , զոր ինչ առնէին :

Այկեսցուք ճոխիմաստ գրասէր անձանց . որպիսի պատուական ազգօգուտ ընտիր գրեանք ազգասիրութեամբ իւրեանց շնորհեցին ազգիս անջնջելի յիշատակ , ուսուցանել նորօք զկամս Տեառն , 'ի բարգաւաճիլ առաքինական աստուածահաճոյ վարուք . ո՞վ որ 'ի նոցանէ Լմուտ 'ի պարծանս յանձնէ . քանզի քաջ գիտէին , եթէ լոյս գիտութեան իմաստից չունիցին , չեն կարող այնպիսի աստուածահաճոյ ինչ առ-

նել , և մանաւանդ սկզբունք և շտեմարանք ճոխարանութեան նոյնն սորբ Մեծատարանն էր . որ յատուկ ջատագով է խոնարհութեան : Իսկ դու զի՞նչ . զի՞նչ մեծամեծ հրաշագործութիւնս արարեալ է ձեռք քո , կամ զի՞նչ ազդօղուտ գործոց պատճառ եղեր մեծագործութեամբ , որ սիրես անդադար պարծիլ : Մէջ ա այս է՝ զի ոմանք տկար անձինք , որք բոլորովին անծանօթ են արհեստի ինչ կամ գիտութեան , միշտ յաշոյակ երևեցուցանել ջանան զանձինս իւրեանց , գիտեմ ասելով և ճոռոմարան խօսելով , որ է սուտ պարծանք . քանզի բոլորովին տկար են գործով այնպիսիքն զերթ անդամալոյծ :

Մէջա բերք տղայական և նշան տգիտութեան , որ չունի ձեռս գործելոյ՝ բերան իւր զօրաւոր առնէ . ոմանք ձեռամբ զօրաւոր են , ոմանք բանիւ , ոմանք գործով փայլփայլին , և ոմանք իբրև զթըռչուն ճոճուան . կարծես թէ նա ինքն է սոխակ , չասեմ թէ իբրև զգօրտ :

Մյուս ամենայնիւ բաւական համարեալ 'ի խրատ քեզ , կնքեմ աւասիկ զբանս յայտ երկոսին սկզբունս , թէ գիտեմ ասել՝ տգիտութեան է նշան , և կարող եմ ասել՝ տկարութեան : Մասն որոյ յիշելով

յիշեալի՛ր անդադար զբան ասաբելոյն որ  
ասէ , թէ զի՞նչ ունիս զոր չես ասեալ .  
և զոր ասեր , զի՞ պարծիս իբրև գշտեալ :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆ  
ԻՒՐԱՔԱՆՉԻԻ ԱՍՏԻՃԱՆԻ

Սիրուն սիրական սիրասունուդ յորդեակը  
իմ նագելիք :

Երդարև զուրախութիւն մեծ զգամ յան-  
ձին իմում և բերկրիմ հոգեպէս , մինչ տե-  
սանեմ զսիրելիսդ իւրաքանչիւր՝ 'ի զանա-  
զան գործս զբաղեալ և 'ի զանազան վի-  
ճակին կենցաղաւարութեան . զոր յիրաւի  
մխիթարութիւն գոյ գիտեմք ոչ միայն մեզ  
ձնողացս , այլ ամենից գերդաստանաց ի-  
մաց : Տէր Եստուած անհուն գթութեամբ  
իւրով յաւելցէ 'ի ձեզ զանսպառ խնամս  
մարդասիրական :

Երդ՝ որովհետև պարտաւորութիւն է ծը-  
նողին զկարևորն ծանուցանել 'ի ժամու՝  
որդւոց իւրոց , ապա և ես որդեսիրական  
պարտաւորութեամբս փութացայ այժմ  
զհարկաւորն ձեզ յայտնել , ընկալարուք և

գութ՝ յօժարակամ սիրով 'ի մօտի ձեր ան-  
մտաց ունիլ : Ապաքէն՝ ամենայն ոք ըստ  
աստիճանի մերձաւորին պարտի ունիլ զկեն-  
ցաղաւարութիւն , զի ոչ է օրէն ծառայից  
կենցաղաւարիլ ընդ տեարս իւրեանց իբրև  
ընդ ընկերս . նոյնպէս և ոչ աշակերտելոց  
վայել է ընդ վարդապետս իւրեանց իբրև ընդ  
ընկերս . վասն որոյ կարի կարևոր է և  
վայելուչ միանգամայն և հարկաւոր ամենից  
գիտել զէանոն կենցաղաւարութեան որ են  
պստոբիկ :

Արդիք 'ի կենցաղաւարութեան ջանան  
գիտել զկամս ծնողաց իւրեանց և զգործս .  
որպէս զի ըստ հաճոյից նոցին վարելով  
արդիւնաւոր ընկալցին զսէր նոցին ծնողա-  
կան խնամածութեան . և զճնողս իւրեանց  
պատուելով ենթակայ գասնիլ բարեաց  
բաղմաց ըստ Առաքելոյն՝ և ըստ Աստու-  
ծոյն , թէ պատուեալ զհայր քո և զմայր  
զի քեզ բարի լինիցի , և երկայնակեաց ե-  
ղիցիս 'ի վերայ երկրի :

Աշակերտաց ջան՝ տյս է թէ յազատա-  
կանի և թէ 'ի ծառայականի արհեստս վա-  
րել հնազանդութեամբ ընդ ուսուցիչս , և  
ըստ բանի Առաքելոյն հաղորդութիւն առ-  
նել վարդապետին յամենայն բարութիւնս .  
զի վայելել կարացցեն 'ի նոցին խնամս ու-



սանելով զկարևորն 'ի շահընկալութիւն հոգեկան և մարմնական, անկարօտ և անդորր լինել 'ի կենդանութեան :

Պաշտօնեւոյք կամ սպասաւորք ջանան անձանձրոյթ աշխատութեամբ արդիւնաւորել զպաշտամունս իւրեանց և միամտութեամբ սրտի ծառայել տերանց իւրեանց և մի' առականէ իբրև մարդկան . զի վայելչական պարգևօք վարձատրեսցին հետզհետէ :

Նոյնպէս և 'ի զինուորական դասու, իւրաքանչիւր աստիճանք հպատակութեամբ զլիաւորաց իւրեանց ընդդէմ թշնամեաց յաղթող գտանիլ ջանան 'ի պատերազմի, զի յաղթանակաւ փառաւորեսցին :

Երհնատաւորք շուկայի ևս ջանան միշտ ըստ կամաց եկաւորին յօրինել զվաճառս իւրեանց . զի զդէղնագոյն ոսկին զցանկալին իւրեանց առատօրէն շահաւորեսցին 'ի նոցունց վայելել 'ի պարէն :

Ոչ ապրքէն և տնասէր և ժրագլուխ կանանց է և այս ջան . զի խնդրեն հնարինչ ցուցանել պաշտպանից իւրեանց զնշան հնազանդութեան և քաղաքաւարութեան . զի հաճոյսցին նոցա . և ըստ Նաափելլոյն՝ թէ կին երկնչիցի յառնէ իւրմէ, երկիւղածութեամբ տքնին անթերի հոգալ զպի-

տոյս իւրեանց և որդւոցն . զի մի՛ զուրկ  
գտցին և ինքեանք 'ի նացին խնամողական  
պաշտպանութենէ . այլ կարասցեն ամե-  
նայնիւ կեալ հանդիստ և խաղաղ :

Մեծարու տան խոհարարք ես (և զայս  
վասն ապացուցութեան բանիցս ասեմ)  
խնդրեն միշտ պատրաստել զկերակուրս ըստ  
հաճոյից տեարց իւրեանց . զի կարասցեն  
երբեմն զպարգևական ինչ դրամ կամ զնո-  
րոգ հանդերձ ընդունիլ . բաց 'ի յամսա-  
կան վարձուց իւրեանց , Ահա այսպիսեաւ  
իւրաքանչիւր դասք հպատակաց՝ կատարող  
գտանին առաքելական աւանդութեանն՝ թէ  
հատուցէք զպարտս իւրաքանչիւրոց . որում  
զհարկ՝ զհարկն , որում զմաքս՝ զմաքսն ,  
որում զերկիւղ՝ զերկիւղն , որում զպա-  
տիւ՝ զպատիւն :

Այլ և ծնողք փափագին տեսանել միշտ  
զհաճոյական վարս որդւոց իւրեանց . զի ա-  
ռաւել բորբոքեսցի ծնողական սէր իւրեանց  
'ի նոսին : Տքնին արթնութեամբ պահպա-  
նել զնոսա յամենից վտանդից . զի մի՛ լի-  
ցի նոցա 'ի Կիորձանս ինչ անկանիլ խակա-  
մտութեամբ . և օրինակ բարեաց լեալ ջա-  
նան բարեսնունդ առնել զնոսա ամենայն  
բարեպաշտական մասամբք և քաղաքավա-  
րութեամբ : Գի բարեյիշատակ թողցեն

զնոսա յիտ մահուան իւրեանց : Այլ և մինչ տեսանեն զորդիս իւրեանց բաւական զարգացեալ յուսմունս ազատականին զիտութեան , խնդրեն և վարժել զնոսա 'ի ծառայականին արհեստաւորս առնել զիտելով զբնական հաճութիւնս նոցա , թէ զոր արհեստ զիւրաւ կարեն ստանալ , սակաւ աշխատանօք բաղումս շահաւորիլ անտի . զի անկարօտ կելով՝ բաւական լիցին ողորմութեամբ աղքատաց զհոգեւորն ստանալ 'ի փրկութիւն հոգւոց իւրեանց և ծընօղացն :

Հոգեւոր ծնողք մեր կրօնաւորաց համայն դասակարգութիւնք քահանայից և վարդապետաց՝ իւրաքանչիւրքն առ հասարակ հեռացեալ յաշխարհային զբաղմանց ժուժկալ վարուք , անխոնջ աշխատութեամբ անընդհատ կատարել ջանան զհոգեւոր պաշտամունս իւրեանց ըստ առաքելական աւանդութեանն : Այլ զիտելով զի Յիսուսականդ երկոքին դրամովք՝ այսինքն Հին և՛ Աոր Ատակարանացն բանիւք պանդոկապետ կարգեալ են յԱստուածուստ դարմանել զհոգեկան վերս մեր 'ի բժշկութիւն , տքնին հանապազօր ամենայն հոգունակութեամբ և բարուք վերակացութեամբ օրինակ բարեաց գտանիլ , բայց ոչ զօշաքաղութեամբ այլ

յօժարութեամբ . զի 'ի ներկայութեան երկ-  
նաւոր թաղաւորին յաճեղ հրապարակին  
պարզերես • զիմօք համարձակեցին ասել  
զմէնջ , « ահա՛ ես և մանկունք իմ ք . և կրկին  
պատուոյ լիցին արժանի 'ի յարութեան յա-  
ւուր յայնմիկ , ահա՛ այսպէս է և կենցա-  
ղաւարութիւն կրօնաւորաց , որք զիտնն  
անթերի կատարել զպարտաւորութիւնս  
իւրեանց . զի ասէ Շատուած 'ի բերանոյ  
մարգարէին՝ թէ զարիւն նորա 'ի ձեռաց  
քոց խնդրեցից :

Վաստաւու ուսուցիչք ևս երկուցեալ թէ  
մի՛ գուցէ պետ անուամբ անպէտ և խոտան  
երևեսցին վարուք և գործովք իւրեանց .  
այլ ջանան բարի վարուք օրինակ բարեաց  
լինել աշակերտելոց իւրեանց որպէս հայր  
որդւոց . և հանապազ անյագ բաղձանօք և  
բարեջան սիրով յորդորիչ լինին նոցա՛ բա-  
րեսնունդ և առաքինասէր առնել զնոսա ա-  
զատ պահելով զգուշութեամբ 'ի ժանեաց  
կերչաց գաղանաց անհաւատ մոլորելոց .  
այլ և առանց քանքարաթագոյց գտանելոյ  
հաղորդեն զոր ինչ գիտենն թէ զկրօնական  
բարեչաւիղ ուսմունս և թէ քաղաքական  
դանազան գիտութիւնս . Օի ասէ առա-  
քեալն . ես տնկեցի , Մսօղոս ջուր ետ .  
ով իցէ Մսօղոսն . ո՞չ ապաքէն հոգեխը-

բատ ուսուցիչքն են , որ այնպիսիքն գործակիցք Մատուծոյ համարին . որոյ վասն անխոնջ աշխատութեամբ աշալուրջ տքնին 'ի վերայ աշակերտաց , զի բարեյիշատակ առնելով զձեռնասունս իւրեանց յաւելցի վարկումն իւրեանց աստ , և 'ի հանդերձեալն մասնակից լիցին այնմ բարեհամբաւ մեծութեան , զոր ասէ սուրբ Մեթարանն՝ թէ որ արասցէ և ուսուցէ , նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից :

Խելամուտ իշխանազուն և ազգապետ յարգելիք որ պերճացեալ են 'ի վերայ ամբոխից աղգաց , և ունեցով զճոխութիւն , կարող են զտկարութիւն տկարացն բառնալ . ոչ խնդրեն զիւրեանց օգուտս , այլ զմտաւածելով զհրաման առաքելոյն թէ ընկալարուք զմիմեանս որպէս և Քրիստոս ընկալաւ զձեզ 'ի փառս Մատուծոյ , գիտելով զպարտաւորութիւնս իւրեանց ամենայն փութով տքնին գտանիլ յազգասիրական գործքս գթառատ մարդասիրութեան պաշտպանութեամբ , զիրաւունս և զհաւատարմութիւն ծառայից շնորհել , ներելով առնել զպատուհաս , որպէս և դրեալ է . սաստեալ յանդիմանեալ և դարձեալ մսիթարեալ . և թէ լերուք առ միմեանս քաղցունք , գթածք , շնորհել միմեանց , և թէ անգամք բազումք

են, և մարմին՝ մի, ոչ կարէ ասելակն ցձեռն  
թէ չիս ինձ պիտոյ: Արոյ վասն՝ ոչ երբէք  
մերժեն զաղբատս, այլ ամենայօժար բաշ-  
ձանօք հոգան խնամեն ամենայն կերպիւ, զի  
ասէ սրբազան Մ. Ռաֆեալն. եթէ որ իւրոց  
և մանաւանդ ընտանեացն խնամք ոչ տա-  
նիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է: Վ. մենայն  
բարեսրտութեամբ կատարեն զկանոն կեն-  
ցաղաւարութեան իւրեանց ընդ հպատակս.  
և բարեյօժար կամք հաճին լսել քաղցրու-  
թեամբ զաղաղակ տնանկաց և զըկելոց՝ զա-  
զագ ազատութեանն հոգալ, կարեկից գը-  
տանելով. և քօջ զիտելով թէ իւրաքան-  
չիւր հասակի անձինք ամբողջական մա-  
սունք և անդամք են աղգիս, վասնորոյ միշտ  
խնամատար լինին ամենից իբրև եղբարց  
կամ իբրև որդւոց որ է զլիսաւոր կանոն  
կենցաղաւարութեան ընդ ամենեսին:

Արեմն հոգեհատոր որդեակք իմ, զոյ-  
սոսիկ ընդհանուր կանոնս կենցաղաւարու-  
թեան և զայլ ամենայն խրատս պիտանիս  
ամբարեցէք յընդարձակ շտեմարան մտաց  
ձերոց անմոռաց ունիլ մինչև 'ի վախճան  
կենաց ձերոց. զի պայծառ մտօք և լուսա-  
ւոր խորհրդով եռանդալիւր և եռափափաք  
գօլ 'ի շահեկանութեան ըստ հոգեկան մա-  
սին և մարմնական, յո՛ և իցէ գտանիցիք

յատարիճան, մի լիցի ձեզ ընդդէմ քաղաքականութեան ինչ գործել. 'ի հպատակութեան էք կարգի, մի' 'ի հնազանդութենէ տերանցդ նահանջիք: Հպատակաց գտայք հոգածու, մի' յետս ընկրկիք խնամածու գտանիլ նոցա սիրով: Օի բարի կենցաղավարութեամբ ձերով յարգի և պատուաւոր եղիջիք. 'որով կարէք լինել այր բարի՝ հաճոյ՝ և կատարեալ, 'ի մշտնջենական մխիթարութիւն կարօտակէզ սիրաժառ ծնողի ձերոյ:

ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ՅՈՐԴԻՌՅ ԱՌ. ՀԱՅՐՆ

ՎԱՄՆ ԿԱՐՕՏՈՒԹԵԱՆ

Մեծապատիւ և բարեխնամ հօրդ վեհանձնութեան, բաղմանամ ձեռացն համբոյր սիրով կարօտական:

Ո՞ր քաջիմաստ գրիչ կարէ նկարագրել զարտմաթախիծ վարանումն ձագուց թըռչնոց կամ այլազգ կենդանեաց, թէ իցեն հեռաւորութեամբ ծնողաց իւրեանց զուրկ մշնացեալ 'ի նոցին խնամոց. զի յարաժամ զաչս իւրեանց յաճելով այսր անգրակընկալեալ սպասեն կարօտեալ տեսաւորութեան

ծնողացն . ահա զօրէն թռչնոցն այնոցիկ և նուաստս կամ 'ի մեծի տրտմութեան . ափսոս դժբաղդութեանս . զի արդարացաւ յիս բան իմաստնոյն թէ զյարգ բարւոյն զոր ոք ունի քաջ ճանաչէ , մինչ կորնչի . զի զոր 'ի մերձակայութեանդ հանապազորդ վայելէի զբազմաջան խնամակալութեանդ պտուղ զանշափական սէր հայրական , ահա բարձաւ վերացաւ իսպառ՝ յաղագս հեռաւորութեանդ : Ահա եւր իմ վեհազուն . չեմ բաւական ըստ արժանւոյննկարագրել յորդահոսան զերախտիս ձեր որդեսիրական . զոր գետօրէն առ իս հոսելով հոգենօրոգ բարեմասնութեամբ բազմօք հասունակ զիս առնել ջանայիր . ապա այժմ իրաւամբ անչիջաննելի հուր հայրական սիրոյդ այրէ ըզսիրտս և տոչորէ զերիկամունս իմ : Աւտի ակնակառոյց սպասեմ լուսածրար մխիթարական նամակիդ ծանօթանալ աւետարեր համբաւոյ պատուական անձինդ անդորրական քաջողջութեան : Խնդրեմ և աղերսանօք յազնուագութ կամացդ քաղցրութենէ զսքանչելահրաշսիրասարաս սէր սրբասունդ սրտիդ անչէջ պահելով յատրուշան սիրոյդ , անմուտց ունել զմեզ 'ի մտի , որ աղօթարար եմք վասն խաղաղական կենացդ երկարատևութեան . զի յամենայն վտանգից չա-



բաց զերծ գտեալ 'ի պանդխտութեանդ  
յայդմիկ, վերստին վերարժանասցուք վայել-  
լել վսեմաշուք հօրդ զբազմազան խնամս :

Աղջ լեր 'ի բազում ամս անդորր կենօք 'ի  
մշտնջենական մխիթարութիւն սրտի

Նուաստ եղբօր քուսմ

ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Յ Ո Ր Գ Ի Ռ Յ Ա Ռ Մ Ա Յ Ր Ի Ի Ր

Վ Ա Մ Ն Գ Ա Լ Ս Տ Ե Ա Ն Ն Ա Մ Ա Կ Ի

Քաղ աղանակուեռ սրտիս՝ գորովագութ  
համեստուհի մօրդ իմոյ սիրելւոյ՝ հոգաբարձ  
բարերար ձեռաց համբոյր ընծայեմ կարօ-  
տիւ մեծաւ :

Ընկալայ զսիրապատար գրութիւն բազ-  
մախնամմօրդ իմոյ տիրուհւոյ, և հոգենո-  
րոգ բանիցդ եղէ ժառանգորդ անարժանս :  
զոր անձկանօք մեծաւ ձեռբակալելով առքն-  
կալայ յանօթ սրտիս համբուրիւ մեծարա-  
նաց, և մեծ շնորհակալութեամբ . որով  
շարժեալ 'ի սիրտ և յոգի ստիպեցայ հա-  
ռաչել 'ի խորոց սրտէ, անձնատուչոր կարօ-

տիւ ասել ընդ Վաւթի . ո՞ տայր ինձ զթևս  
որպէս զաղաւնւոյ , զի թռչէի վերանայի  
և հեռացեալ յանձկութենէ սրտիս դադա-  
րէի ընդհովանեաւ խնամոց մօրդ բազմե-  
րախտի . այլ զի՞նչ օգուտ , զի ընդարձակա-  
տարր միջոցն որ մեկնէ զմեզ յիրերաց , խո-  
չընդակօք բազմօք արգելու զիմ ընթաց ,  
և շթողու մեզ գէթ քանի մի վայրկեանս առ  
'ի լցուցանել զկարիս ըղձանաց . վասն ո-  
րոյ կերակուր եղեն ինձ արտասուք իմոյս  
հառաչանաց , իբր զի 'ի մէջ ուռեաց կա-  
խեցաւ . առ այժմ մեր սիրոյ կտակարան .  
բայց մշտավառ սիրոյս իմանալի հուր ան-  
շէջ գիտեմ 'ի դիպմանէ առթից : Երգարև  
ըստ առաջնոյն տառապէր յիս հոգի իմ .  
բայց ըսա երկրորդին քաջալերէի Եստու-  
ծով , յոր յուսացեալն եմ . զի ակն ունիմ ,  
եթէ որ միանգամ բաժանեաց՝ կրկին ունի  
միաւորել . որ զրկեացն փոքր մի 'ի քաղցր  
տեսութենէ ձերմէ՝ ընդ երկայն աւուրս ար-  
ժանացուցէ վայելել . որ սովեցոյցն 'ի սի-  
րոյ ձերոյ՝ որով խնամարկէիր զիս և յան-  
ձանձէիր , լիացուցէ դարձեալ առատապէս :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ

ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՄ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ՎԱՍՆ ԳԱԼՍԵՏԵԱՆ ՕՐՀՆԱՌԱԲ ՆԱՄԱԿԻ

Որք սորեկ 'ի բուրաստանս սուրբ մատենից ընծիւղեալ,  
առնածիր շնորհօք հոգւոյն իմաստութեան պերճացեալ,  
Երկնագնաց գարշապարաց գերերջանիկ սրբոյ հօրդ,  
մատուցանեմ համբոյր սիրոյ ծառայարար խոնարհեալ

Տոր եթէ ըստ հանդիպելոյն տողել ինչ  
ցուցցի 'ի յանձուկ քարտիզիս զհոգենորոգ  
ցնծութիւն սրտիս՝ որ 'ի ծանօթութենէ քա-  
ջողջութեան սրբոյ հօրդ, թէ և փոքր 'ի  
շատէ փութացից նշանակել, տկարանայ  
գրչիս խաղացումն. վասն զի շնորհազեղ պար-  
գե օրհնառաք նամակի աստուածընտիր վե-  
հիդ պանծալոյ՝ գերունակեցաւ զինե 'ի  
վեր քան զօրինակ և զնմանութիւն. որով  
ըստ օրինակի հօրն երկնաւորի ընդ առաջ  
ելեալ որդւոյս կորուսելոյ գրկես սիրով  
համբուրիւ, և զանսպառ խնամոցդ լուսա-  
ծաւալ զպատմութեան զգեցուցեալ զօրացե-  
լոյս, զերկնապարգե գրութիւնդ զերթ մա-  
տանին ակնախտիդ շնորհեցեր անարժանիս  
ունել ընդիս հանապաղ 'ի մխիթարութիւն,  
որով զդառնութիւն այլատարազ կրից կաս-  
կածանաց առուղեկան կենցաղոյս շրջեցեր  
յամոքելի քաղցրութիւն. զի ոչ տանջեցե-

լոցն 'ի սովու այնչափ խոստովանելի է  
 ցնծութիւն լինել սրտի դիպողութիւն հա-  
 ցալից սեղանոյ, և պասքիւրցն 'ի ծարաւու-  
 հոսանք վտակաց, որքան վայելք խնամոց  
 հայրենի հովանաւորութեանդ՝ ինձ եռափա-  
 փագ խնդրողիս : Օորմէ երախտագէտ մտօք  
 աղօթապարտ գոլ խոստովանիմ զանձինս ա-  
 պիկարութիւն . որում և շարունակութեան  
 ցանկալով յաւէտ տարփանօք սրտի, խընդ-  
 բեմ ողջ լինել յամս յոլովս 'ի վերայ ծաղ-  
 կեալ գաւաղանիդ իշխանութեան 'ի պարծա-  
 նըս և 'ի մխիթարուի համօրէն աղգիս, և ինձ

Ամենախոնարհ ծառայիչ

ԵՊԻՓԱՆԻՍ  
 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԲԱՆ ՅԱՆԴԻՄԱՆԱԿԱՆ

Ա Ռ Չ Ա Ր Ա Խ Ո Ր Հ Ո Ի Ր Գ Ո Ք

Աջբոյ 'ի լոյս եղիցի շի'նծու բարեկամ :

Օհ զոր շարայորդոր բանիւք անդադար  
 ստիպէիր զընկեր քո՝ ձեռնաձիգ լինել յայն  
 վտանգառիթ գործ, որ արգիլեալ էր յար-  
 քունուստ, ահաւասիկ ըստ կամաց քոց յոր  
 ցանկայիր՝ կատարեաց, բայց կատարեցաւ և

ինքն մեծի պատժօք յաւէտ բանտարգելու-  
թեան : Աւր բարեկամութեան կանոն . ո՛ր  
ճշմարիտ եղբայրսիրութիւն . զի յորմէ 'ի  
զգուշանալն նորա ձեռնամուխ լինել, մե-  
ծամեծս բարբառելով պաշտպան լինել խոս-  
տանայիր , և 'ի միասին ճաշակել զպտուղ  
պատժոյն . զօրութեամբ մեծի վարկման քո՝  
պատրաստ ցուցանէիր անձամբ անձին ազա-  
տել զնա իբրև ամենակարող նման այնց փա-  
րիսեցւոց , որք ասէին առ պահապան զին-  
ուորս տերունեան գերեզմանին . եթէ լուր  
լիցի այդ առ դատաւորն , մեք հաճեսցուք  
զնա , և զձեզ անհոգս արասցուք : Այժմ  
ո՛ւր թագչիս . ընդէ՞ր փախչիս . եկ՝ ցոյց մեզ  
զսքանչելի զօրութիւն քո հաստարմատ եղ-  
բայրսիրութեամբ քով . բարեկամ էիր փո-  
խարքայի . ընդէ՞ր թագչիս այժմ յանկողնի .  
բայց չէ ինձ զարմանք . զի բազումանգամ  
տեսեալ է իմ այդպէս 'ի բացուստ ճոռոմս  
խօսիլ , և 'ի պատասխանատուութեան պա-  
հու պապանձեալ կարկիլ . ընդէ՞ր չարախը-  
րատ յորդորմամբ պատճառ եղեր ձեռնա-  
մուխ լինել նմա յայն ինչ մահառիթ տր-  
գելական գործ . զի՞նչ շահեցար քեզօգուտ՝  
վատախորհուրդ եղբայր . այդպէ՞ս է քոյդ  
եղբայրսիրութեան դառնաճաշակ մահառիթ  
պտուղ . եղբայր քո վասն քո չարաչար տագ-

նապի յանել արդելան, արքունական դատակնքաւ մինչև ցլախճան, իսկ դու հեռաւոր դիտողութեամբ ուրախ լեր հանապազ ուրախ լեր:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՎԱՄՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

Մ Ո Ւ Ր Հ Ա Կ Ա Ք Ի Ր Խ Ն Գ Ր Ե Լ Ո Յ Ն

Խանդակաք էմ գրեհ եւ գբարեպաշտութեամբ քով:

Օր՞ է, փոխանակ զի ասացեալ էր իմ'ի բարեխօսութեան վասն աղքատի ուրուք, թէ փոխ տայ, որ ողորմի աղքատին, դերևս հանել փութաս զայդ բանագրութիւն ճըշմարիտ. զի գրես 'ի նամակիդ, « թէ զտուր տուր բառն զիա՞րդ ուսեալ է քո անդադար յիշել. և թէ ո՞ւր այժմ առանց վկայագրութեան կամ առանց մուրհակադրի փոխ գրամ: Այլ թէ չի՞ք ոք յայսմ աշխարհի, որ չունիցի կարօտութիւն. ամենայն ոք կարօտ է, ոմն այսպէս և ոմն այնպէս: Այո՞ և ես վկայեմ, չի՞ք ոք անկարօտ, բայց միայն Աստուած, սակայն ըստ բանի քում ոմն

այսպէս և ոմն այնպէս , առարկայ ինձ լի-  
ցի բանս այս յայսմ նուագի : Քանզի հա-  
ցակարօտն առ դրունս լիցն դեղերի յօգ-  
նականութիւն . իսկ տղէտն թէ և յղփացեալ  
իցէ ընչիւք , կարօտ գոլով իմաստից կամ  
խրատուց բարեաց , առ դրունս իմաստնոց և  
զիտնոց . ահա ամենայն կարօտելոց կարգ  
այսպէս իմա՛ բարեկամ : Այա և նորին որ  
կարողն իցեն Աստուածային ձրիւք , պար-  
տին միմեանց օղնական և ձեռնտու լինել  
ըստ չափու պարգևաց տեսան , ոմն այսպէս  
և ոմն այնպէս : Իսկ եթէ վկայագիր կամ  
մուրհակագիր խնդրես՝ ցուցից քեզ յԱստ-  
ուածաշունչ գրոց ապացուցարար ամենևին  
անկասկածելի գրեալ ՚ի Հոգւոյն սրբոյ , և  
խոստացեալ անսուտ բանիւ Տեսան մերոյ  
Յիսուսի Քրիստոսի : Յորժամ սեղանաւոր  
անուանելով զաղքատս ինքեան , զի՞նչ յան-  
դիմանական կերպիւ խօսեցաւ Յիսուս . ո-  
րով պարտաւոր արար ողորմիլ աղքատաց ,  
և զփոխարէնն տոկոսեօք հատուցանել զին-  
քն արար պարտաւոր , այսու առհաւատչեալ  
թէ ընդէր զարծաթն իմ ոչ ետուր ՚ի սե-  
ղանաւորս , զի եկեալ և ես տոկոսեօք պա-  
հանջէի : Ահա քեզ վկայագրութիւն , ահա  
մուրհակագիր հաստատուն և ամենայն հա-  
ւատարմութեան արժանի . յոր հաւատաց-

եալ ողորմած անձինք աներկբայ յուսով և  
փրկչականդ մարդասիրութեամբ յօժար են  
ձեռնտու լինել աղքատաց և կարօտելոց,  
և են երկայնամիտ զփոխարէնն առնուղերկ-  
նային փառս և զգանձ անապականութեան  
անսպառ բարեաց: Վանզի չի՞ք քան զայս  
առևտրական գործ շահաւոր: Ըպա և դու  
ջերմեռանդդ հոգւով՝ ընդ նոսին լեր երկայ-  
նամիտ և առատասիրտ յայսպիսի առաքի-  
նական գործս բարութեան իբրև երանական  
գործոց պաշտօնեայ: Ո՞չ ապաքէն երանելի  
են բաղաբացիք, թէ ունիցին կարօտեալ որ  
կամ աղքատ, քանզի ուր եթէ չիցէ կարօ-  
տեալ, ո՞ւմ ողորմիլ կարէ որ: և ո՞ր ողոր-  
մութիւն փոխ համարեսցի Ըստուծոյ, զո-  
րոյ զփոխարէնն հանդերձ տեկոսեօք լուաք  
ընկալնուլ յաւուր դատաստանի ըստ կեն-  
սախրախոյս անսուտ բանի բանին Ըստուծոյ:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---



## ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅՈՐԳԻՈՅ

### ԱՌ ՀԱՅՐ ԻԻՐ ՎԱՄՆ ԵՐԱԽՏԵԱՅՆ

Պայծառարփի լուսատու՝ հայր բարե-  
բար խնամածու:

Ահա իբրև եղէ խելահաս, օր ըստ օրէ  
խոր տպաւորին 'ի միտս իմ երախտիք բո  
բաղմազան բարերարութեանց քոց. որ 'ի  
մանկութենէ անտի իբրև առատահոս աղ-  
բիւր կենաց իմաստութեան խաղալ յիս 'ի  
զարգացումն տքնեցար անդադար: Աւտի  
պարտաւոր համարիմ երախտապարտ գտա-  
նիլ: 'ի կեանս հայրատիրական գործով և ծա-  
ռայական հնազանդութեամբ առաջի որդե-  
սէր խնամածու տէրութեանդ. և շնորհ մեծ  
ունելով աղօթել առ Աստուած, զի վար-  
ձատրեսցէ զփոխարէնն բիւրապատիկ ե-  
րախտեաց քոց, անդորր պահելով զքեզ  
յերկոսին կեանս բազմերախտ հօրդ նուաս-  
տագոյն

ԵՊԻՓԱՆ ԾԱՌԱՅԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ՃԱՌԻ ՎԵՐԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՎԵՐՋՆՈՅ

Քստ սիրավառ խնդրանաց քոց՝ հոգեհատոր սիրելի,  
ընկալ զտկար գրչիս գրութիւնն՝ ի սերանկեղծ փարեւի:

Օրինչ տեսեր գու Ն՝ զեկիկէլ, աշէ  
պատմեա՛ զի՛նչ ունիս լուր մարգարէական,  
կրկնեա՛ բարբառդ վաղեմնական վասն յա-  
րութեան մեռելոց մարդկան և վասն դա-  
տաստանի վերջնոյ յերկրորդում գալստեան  
բանին Նստուծոյ, զօրինակ նոյն դատաս-  
տանի՞ն տեսեր ՚ի դաշտի վերայ ոսկերցդ  
մեռելոց մտրմնանալ ՚ի յարութիւն, արգարև  
զօրինակ և զնմանութիւննորա բերէ ՚ի ցոյց,  
՚ի մարգարէանալն քո զայս բան ասելով.  
Թէ այսպէս ասէ տէր տէր, ահաւասիկ ես  
բացից զգերեզմանս ձեր, և հանից զձեզ ՚ի  
գերեզմանաց ձերոց, և տաց զոգիիմ ՚ի ձեզ,  
և լինիջիք կենդանի, խօսեցայ և արարի: Ն-  
յո՛, և մարգարէն Ղաւթիթ թէպէտ նմանօ-  
րինակ բանիցդ բարբառի, աւետաճատոյց  
լեալ աղատութեան ՚ի հողապատար շիրմէն,  
թէ եհան զիս ՚ի գրոյ տառապանաց ՚ի կա-  
ւոյ և ՚ի տղմոյ, բայց ո՛չ զարհուրեալ խօ-  
տի իբրև զքեզ, այլ մեծապէս ուրախանայ  
խնդութեամբ զուարճացեալ վասն կենաց  
յարութեան, և մեզ ուրախառիթ աւետիս  
պարգևէ ՚ի յոյս կենացն յաւիտենականաց:

իսկ դու՝ զիսորդ զարհուրեալ գոչես զօրու-  
թեամբ՝ ասելով, թէ եղև շարժումն մեծ ՚ի  
մարգարէանալն իմում. ապա եթէ օրինա-  
կին ցոյցք այդքան զարհուրական իցէ, եղ-  
բաւք մարմնակից, զիսորդ և ո՞րքան ահ և  
գողումն բերէ մեզ իսկականին տեսք յաւուր  
յայնմիկ, յորժամ Վարրիէլեան փող բարձ-  
րագոչ ձայնիւ հնչեցէ յընդհանուր աշխարհ  
համայն միանգամայն: Ահա ճշմարտիւ ասեմ.  
արդէն գողգոչումն կալաւ տկարիս ապիկա-  
րիս ձեռնամած գրչիս ուղղագնացութիւն ՚ի  
սկզբան ճառիս, զոր ունիմ խօսիլ սակաւ  
ինչ զհանդերձելոցն աւետեօք հանդերձ. զի  
արդարև՝ ամենակարողն Աստուած անբաւ  
գթութեամբ իւրով, զհուրը կիզեալն և ըզ-  
հողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծա-  
խեալն, ՚ի քթթեղ ական՝ նովին հիւթակա-  
նութեամբ անպակաս յարուցանելոց է,  
յորժամ ահագին ձայնիւ Վարրիէլեան փո-  
ղոյն հնչեսցէ տիեզերալուր բարբառ, արիք  
մե՛ռեալք որք յադամայ, քանզի ահա եկն  
փեսայն. և թէ ահա փեսայն գոյ, արիք  
ընդառաջ: Աւ ահա յայնժամ սուրբ Այաչն  
փայլեալ յարևելից և օթնպատիկ պայծառ  
քան զարեգակն, առաջնորդեսցէ գալստեան  
Վրկչին մերոյ ՚ի դատաստան: Այլ և շնոր-  
հալոյն յիշեցից զբանս, զոր ՚ի հաստատու-

Թիւն գրաբանական ձայնի մարդարէին երգարանէ 'ի շարականի, թէ մեծ և ահեղ է օրն դատաստանի, և դողումն առաջի բեմին . զի արդ կարացից զորմէ բաւական խօսիլ տրկարադոյնս յիմաստից, զոր ոչ ոք 'ի մարդկանե հանգամանօք հանդերձ կարէ նկարագրել զայն սարսափելի տեսարան, զահի հարեալ գոլ, որպէս և զիս արդէն սարսափ կալաւ 'ի լսելս զայս բան միայն (ահեղ) . ապաքէն եթէ ահեղ, ապա երկիրդալի և սարսափելի . և արդարև օր ամպոյ և մառախլոյ, օր խաւարոյ և մթոյ : Ապաքէն յայնժամ յաշխարհաժողով ատենի դատաւորն ո՞վ իցէ արգեօք, ընդ որ ներկայանալոց եմք ամենեքին 'ի ձորն յովսափաթու : Աստեալն յաթոռ քերովբէից, յորմէ դողան և սարսին ամենայն բնութիւնք երևելեաց և աներևութից . զամենայն դատաստանս ետ որդւոյ իւրում : Ապա արգարև ահեղ է օրն . ըստ որում ահեղ է դատաւորն, և ահաւոր է ատեանն . անաչա՞ն է դատաստանն, և ահարկու հրամանն . մերկապարանոց է յանդիմանութիւնն, և անողորմեն սպառնալիքն . յորմէ հոլաթեւան սերովբէք և քերովբէք թեւօքօղեալ հանապազ զդէմս իւրեանց 'ի խոնարհ ունելով՝ զարհուրին և դողան վասն ահեղատեսիլ և արփիահրաշ փառաց որդ-

ւոյն Մատուցոյ: Քանզի արարիչն երկնի և  
 երկրի Քանն Մատուած ահեղակերպ տես-  
 լեամբ յարդարութեան բազմեալ աթոռ,  
 ոչ ըստ առաջին գալստեան 'ի կերպարանս  
 ծառայի խոնարհաբար, այլ 'ի ձեռին ունե-  
 լով հատուցմանն վճիռ զիւրաքանչիւրոց  
 գործոց՝ համար պահանջելոց է 'ի մէնջ  
 մանրազննին քննութեամբ. որպէս երևեցոյց  
 Հովհաննու զկերպարանս իւր 'ի տեսլեան  
 սրտես և փայլակնացայտ աչօք, և 'ի բերան  
 երկօսյրի սուր. որպէս զի կամի ասել, թէ  
 սրտես արթնութեամբ մանրազննին քնն-  
 նելոց եմ, և սրակտուր վճռահատ բանիւ  
 բերանոյ իմոյ դատելոց եմ զամենեսին. ա-  
 պա և՛ ընդ նմին գոլ իմա արդարութիւնն  
 և կշիռն, վճիռն և հատուցմունքն, քնն-  
 նութիւնն և լոյսն, մերկութիւնն և պատ-  
 կառանքն, յայտնութիւնն և ամօթն. զի  
 յայնժամ սպասաւորք ահաւոր թագաւորին  
 իբրև սերմանաքաղ առեալ զգերանդի սուր՝  
 հնձնն զհունձս մարդկային բնութեանց. զո-  
 մանս 'ի յարութիւն կենաց հրաւիրեն, և  
 զոմանս 'ի յարութիւն դատաստանաց դատա-  
 պարտեն. այսինքն զբարի բարին յամանս և  
 զխոտանն 'ի բաց ըստ աւետարանչին. քան-  
 զի եկեալ հասեալ է ժամանակ հնձոցն ըստ  
 յայտնութեանն (Հովհաննու, զի ոմանք աս-

տէն 'ի յուս բարձեալ տանին ընդ իւրեանս զառաքինական գործս 'ի պաշար յաւիտեանականին . սակայն ոմանք զանազան մուլութեանց ձեռնամուխ լեալ աստէն պատրաստին ինքեանց անշիջանելի հօր տանջողական, սյրիլ և տանջիլ 'ի նմա յաւիտեան :

Ապա՛ լուարուք զբազմակերպ տանջանացն և տանջանարանացն պատրաստելոց , որ վասն տաժանատեսիլ խաւարարնակաց ժանտիցն , և վասն ընկերակցաց նոցին մեղսամակարդ անձանց . որպէս այժմէն ծանուցանէ հոգելից արքայ մարգարէն զտեսիլ մեղսատագնապ տանջանացն մեղաւորաց , թէ դարձցին մեղաւորք անդրէն 'ի դժոխս : Ասե՛ ապա թէ ոչ դառնայք առ նա , զսուր իւր սրեալ է ասէ , և զաղեղն իւր լարեալ , և 'ի նմա պատրաստեալ է զանազան անօթս մահու , և զնետս իւր այրեցելովք են գործեալ : Առ ո՞րս է , գոր ասէ՛ և զբարք , և վասն որո՞ց պատրաստեալ . ուստի՞ ունիցին մեղաւորք քան զայս առաւել մեծ գուժկան , յորժամ անաչառ դատաւորն ասիցէ , ընկեր՝ զիա՞րդ մտեր այսր , եթէ շունէիր հանդերձ հարսանեաց . կապեցէք զգորա ձեռս և զոտս , և ընկեցէք 'ի խաւարն արտաքին . ահա նմա և այնպիսեացն է պատ-

րաստեալ զանազան անօթս մահու, սուր  
 սրեալ և նետս այրեցեալ: Այլ յորժամ ըս-  
 պասաւորք թագաւորին մեկնեցեն զօգիս  
 յայժեաց, ա՛նդ է տեսանել տեղալ ՚ի վե-  
 րայ մեղաւորաց հուր և ծծումք. ահա այս  
 է զոր կրկնէ մարգարէն, թէ կատարեսցին  
 չարիք ՚ի վերայ մեղաւորաց: Ահ յաւիտե-  
 նական տրտմառիթ գուժիս, ողբալի և ա-  
 ղէտալի պատգամիս. զի կատարեսցին բառ՝  
 զորքանութիւն ցուցանէ անթերի, որով չա-  
 րիք ամենայն անպակաս և անթերի լինելոց  
 են յայնմ ժամանակի ՚ի մեղաւորս արգեօք,  
 այ՛ո՛. ո՛չ զմինն ՚ի բաց թողեալ ՚ի չարեաց.  
 քանզի որք անյագք էին աստանօր, յա-  
 գեսցին և անդ ամենայն չարեօք: Ապա վա՛յ  
 անձանց պարտապանաց զանազան քանքա-  
 րաց, որ տողորելոց են ՚ի գեհննին կիզա-  
 նողական նիւթով մեղաց, յորժամ դատա-  
 ւորն ահեղ ահեղագոչ ձայնիւ բարկութեան՝  
 երթայք յինէն անիծեալք ասելով վանես-  
 ցէ զնոսա յանդնդախոր հուր խաւարային,  
 ուր որդն ո՛չ մեռանի, և հուրն ո՛չ շիջա-  
 նի երբէք յաւիտեան. և մատնեսցէ ՚ի ձե-  
 ուրս խաւարարգել իշխանին, յայնժամ տագ-  
 նապ երկիւղի ո՞րչափ, կրճումն ատամանց  
 քանի՞. սպառնալիք սրբազան սպասաւո-  
 րաց լուսեղինաց ամենեկին անսպառ. որք



սայրասուր սլաքաւ սլանան 'ի սանդարա-  
 մետս սուղանել զնոսա, անդ եղիցի լալ և  
 կրճել տտամանց. արդեօք զի՞նչ գործես-  
 ցեն կամ ո՞ւր թագիցեն, և որո՞վ իւրք  
 գտցեն զազատութիւն ինչ. քանզի չի՞ք և  
 չի՞ք յայնմ ժամանակի եք հնարից ազատու-  
 թեան իբր խուն մի վայրկեան յակնթարթ  
 ժամանակի, ո՞չ բարձութիւնք լերանց, ո՞չ  
 անձաւք քարանց, ո՞չ շտեմարանք յարկաց,  
 ո՞չ փապարք փոսից, ո՞չ ողբունք ձայնից,  
 ո՞չ համբարձմունք ձեռաց, ո՞չ հեղեղք  
 արտասուաց, և ո՞չ պաղատանք շրթանց  
 կարեն օգնել մեղսամած անձանց. այլ ան-  
 դուլ անդադար հոյք խաւարատեսիլ սան-  
 դարամետից՝ իբրև զկատաղի սովալլուկ գա-  
 զան շրջին և խնդրեն թէ զ՞ կլանիցեն, և  
 անխնայաբար խուճապեն, և անողորմաբար  
 շարչարեն. որպէս ասի. մտցեն 'ի ներքոյ  
 անգնդոց երկրի. մատնեսցին 'ի ձեռս սրոյ,  
 և բաժինք ազուխուց եղիցին. ո՞ւմ, աղ-  
 ուխուց այսինքն ամենաչար սատանայի, և  
 շարածճիկ գործակալաց նորին նենգաժո-  
 տին և ժանտաժուտ չարին: Ա՛, տէ՛ր, բե-  
 լեռեա՛ ընդ երկիւղ քօ զմարմին իմ, զի 'ի  
 դատաստանաց քոց երկեայց յոյժ:

Իսկ հոգիք ընտրելոց կոչեցեալք 'ի տեառ-  
 նէ, ո՞չ այնպէս. այլ յայնմ աւուր փառաց



'ի փառս բարձրացեալ յանանց կեանս սուրբ արքայութեան, երկնային անթարչամպսակօք զարդարեալ, և անտրտում ուրախութեամբ ցնծացեալ բերկրին ընդ հրեշտակս աստուածտեսութեամբ: Այսն ընտրելոց կարճեսցին աւուրքս ասացաւ:

Օի յայնժամ երգարանութիւն 'Վաւթի արդարացի, որ ասէ, թէ յայնժամ ցնծացեն ծառք անտառի, յորժամ գայ, և գայ նա 'ի գատել զերկիր, և թէ լոյս ծագեաց արգարոց, ուղղոց սրտից եղև ուրախութիւն. քանզի որք յանցաւոր կեանս իւրեանց ըզցանկութիւն աշխարհիս ունայն վայելութեանց, իբրև զկղկղանս մահահոտ համարեալ, Աստուածաբանական առաքինութեամբ պաշտեցին զԱստուած հաստատուն հաւատով՝ աներկբայ յուսով և անկեղծ սիրով սիրահարեցան 'ի սէր փրկչին հաւատարիմ գտեալ յԱստուածային պատուիրանս, իբրև անաղօտ լապտերաւ ելցեն ընդ առաջ անմահ փեսային յաւուր յայնմիկ 'ի լսել զայս երանական բարբառ աւետեաց, թէ եկանչիւ ծառայ և բարի, որ 'ի փոքուն հաւատարիմ գտար, 'ի բազմիցս կացուցից զքեզ, մոռտ յուրախութիւն տեառն: Քանզի նոյն ինքն սոսկալին և սարսափելին սրբագոյն սերովբէից սաւառնաթելից սրբասնունդ սըր-

տից սկզբնահորն սերնդոց ստեղծողն սէր  
անուն յիսուս՝ սիրավառ սրտիւ սքանչելա-  
հրաշսիրով սաստիկ սիրահարի ընդ հօրիւ-  
րում գալ բնակիլ ՚ի սուրբս և օթեանս առ-  
նել առ նոսա :

Արանի՛ ձեզ՝ հազարիցս երանի . ընտ-  
րեալք Քրիստոսի և բարեկամք , պանծալի  
պսակօք փառաց բարձրելոյն փառաւորեալ  
անճողոպրելի . զի զկամս Աստուծոյ արա-  
րեալ՝ եղբայր և քոյր և մայր անուանեցայք .  
և լուսանկար առաքինութեամբ ձերով ան-  
տեսիցն ճոխութեամբ փարթամացայք , ար-  
ժանի լինելով անվախճան ուրախութեան  
վերնում խորանի սուրբ արքայութեան . և  
լսելոց էք զուրախառիթ բարբառ բերկրա-  
նաց ՚ի մեծի դատաւորէն , թէ եկայք օրհ-  
նեալք հօր իմոյ , ժառանգեցէք զպատրաս-  
տեալ ՚ի սկզբանէ ձեզ զարքայութիւն . ո-  
րովհետև միում ՚ի փոքրկանցս արարիք , ինձ  
արարիք : Գիտեմ , արդէն լուեալէ ձեր  
՚ի բերանոյ տեառն ըստ գործոց ձերոց բա-  
նըս երանականս Մ. ւետարանի . ապա յայնմ  
ներկայութեան հրպէս և քանի՞ . զի ընդ հը-  
րեշտակս ունիք դասակցիլ , և անդ զուար-  
ճանալ լուսով տեսութեան փառաց ամենա-  
սուրբ Արքորդութեան . ըստ այնմ թէ լու-  
սաւոր են ճանապարհք արդարոց , և ՚ի բիւ-

բաւոր բանակս հրեշտակաց ամպովք ընթա-  
նան . և որպէս յայտ առնէ 'ի տեսլեան  
Հովհաննու : Եւ թէ երանելիք են, որք պահեն  
զպատուիրանս նորա . նոքա ունին իշխանու-  
թիւն մտանել յանհպելին եղականաց և ու-  
տել 'ի ծառոյն կենաց , զոր նախաստեղծ ծը-  
նողք մեր Լ. դամ Լ. այ ճաշակելոց էին ,  
եթէ 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չա-  
րի ժուժկալէին հնազանդութեամբ :

Բազմաց երանութեան և տառապանաց  
պատճառ նախաստեղծ ծնողք մեր . տեսի՞ք  
արդեօք զժամանակ վայելման ծառոյն կե-  
նաց , որ առանց հրամանի ճաշակեալ զար-  
գելեալն զայն պտուղ , երանութեան հասա-  
նել կարծէիք . Ըստուած ամենախնամ նա-  
խախնամութեամբ իւրով յատկապէս պատ-  
ուիրանաւ իւիք եդ զձեզ 'ի դրախտի , զի մի  
իրբև զսադայէլեան գունդս անպատուէր գո-  
լով՝ անեղ և անտէր կարծիցէք զձեզ , նը-  
ման անեղին Ըստուծոյ . որով և դուք ըն-  
դունիցիք զպատիժ որպէս և նոքայն : Եւ  
այս էր դիտաւորութիւն ամենակարողին Ըս-  
տուծոյ , զի հաստատուն կալեալ ձեր 'ի  
պատուիրանս իւր , արժանաւոր վարձառու-  
թեամբ վայելեալիք զվերին օթեան սուրբ  
արքայութեան . յորում ունէիք ճաշակել 'ի  
ծառոյն կենաց , յաջորդաբար և մեր : Ու-

րեմն որպէս անհնազանդութեամբ առաջին  
Մշակայ գերի վարեցաք յայսմ ծովածուփ  
աշխարհի, նոյնպէս և ահա երկրորդ Մշա-  
մաւ բարեխնամ Վրկչաւ մերով Յիսուսիւ  
Վրիստոսիւ, անտրտում ուրախութեան և  
անվախճան կենաց հասանել շնորհեցաւ ազ-  
գի մարդկան: Իցէ՞ թէ յայնմ աւուր ահեղ  
ատենի փոխանակ պատմութեանի դրախտին  
զհանդերձ առաքինութեան ունիցին մարդիկ,  
յաւիտեան բնակիլ ՚ի նոյն տիրանուէր սուրբ  
արքայութեան արժանապէս:

Իայց արդ՝ Տէր իմ և արարիչ իմ, ըստ  
որում կարգեցեր ՚ի միում դասս հրեշտա-  
կաց երգել և փառաբանել զայս բան ան-  
լռելի ձայնիւ գոհարանութեան հանապազ  
առաջի ամենասուրբ Աշրրորդութեանդ և միոյ  
Մատուածութեանդ վասն մարդկային բնու-  
թեան, թէ ողորմեա, դու ստեղծեր՝ մի կո-  
րուսաներ, ընդ որս և մեք արարածքս ձայ-  
նակցելով՝ անկեալ յերեսս հողանիւթ կեր-  
պիւ մերով ծնրադրական երկրպագութեամբ  
պաղատիմք առ քեզ բազկատարած, բարձ-  
րեալ անբնին, բարեխօսութեամբ անարատ  
ծնողի քո, և ամենայն ընտրելոց հաճելի  
վարուց և աղօթիցն օժանդակութեամբ՝  
բարձցին մեզուցեալ դատապարտելոցս վե-  
տանգք յայնմ ժամանակի, թողցին պար-

տիքն մերոց պարտեաց ըստ Ավսեան բա-  
նին . հալածեսցի խաւարն , վատնեսցի հու-  
րըն սաստկութեան , հերքեսցին տանջանա-  
րանքն բազմօրինակք , աղաչե՛մք . մի՛ կապ-  
տեսցէ գոռոզն ապստամբ զզարդ փշմանդ  
շնորհի , և մի՛ թագաւորեսցէ մեղքն խա-  
փանեալ մարմնոց մահացուի առ 'ի գրաւել  
զմեզ 'ի նոյն , ըստ 'Ասրեկացւոյն . այլ հաշ-  
տարար և կենարար մարմնոյ և արեանդ միջ-  
նորդիւ՝ եկեսցեն գթութիւնք կենաց պար-  
գեողիդ , ծագեսցի փայլահնացայտ լոյսդ ո-  
ղորմութեան . արագահաս լիցի փրկութիւնդ  
հոգւոց ամենից . քանզի դին եմք անապա-  
կան արեան քոյ , զոր ստացար 'ի վերայ  
կենսունակ Ասաչիդ . եթէ յայնմ ժամանակի  
ոչ կարացուք պաղատիլ , արդէն ընկալցիս  
զպաղատանս մեր , մարդասիրութեամբ և ա-  
մենառատ գթութեամբ քով քաւելով զբի-  
ծըս շարեաց մերոց . և մի՛ մտաներ 'ի դա-  
տաստան մանրակրկիտ խուզարկութեամբ  
համարս լենդրել զամենայն իրաց մերոց շա-  
րեաց , զի ոչ արդարանայ առաջի քո ամե-  
նայն կենդանի , առողջն անդամօք անկարօտ  
են բժշկութեան , դու ասացեր Տէր իմ և  
Աստուած իմ . և այսու մեծացար թէ ողոր-  
մած եմ ես . և որպէս ասէիրդ և ասես գը-  
թառտ մարդասիրութեամբ , թէ եկա՛ք

առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք ,  
և ես հանգուցից զձեզ . այն ցանկալի՜ ե-  
կալք բառ՝ սիրելութեան է բարբառ . յա-  
ւիտենական ուրախութեան է պատճառ . ըն-  
տանութեան է ձայն . որով առ մեզ բնա-  
կիլ կամիս , և մեք ՚ի քեզ , որ է ընտա-  
նութեան կերպառութիւն . և որպէս ՚ի տը-  
նօրէնութեան բուժ ՚ի խաչին քաղցր հա-  
յեցողութեամբ քով յաւազակն մեղսատագ-  
նապ՝ շնորհեցեր զփափագելին այսու բա-  
նիւ , թէ այսօր ընդիս իցես ՚ի դրախտին ,  
նոյնպէս և յայնմ ժամանակի լսելի արա և  
մեզ մեղաւորացս զայն ըղձալի ձայն աւետ-  
եաց քոց կոչման ՚ի սուրբ արքայութիւն .  
զի յետ կատարման բանիդ վճռոյ արժա-  
նասցուք ընդ աջակողմ աւազակին աջակող-  
մեան դասուն դասակցեալ արժանապէս՝ գալ  
՚ի քո լուսաճեմ խորան սուրբ արքայութեան ,  
զոր խոստացեալ ես քումդ սիրելեաց . և ընդ  
նոսին դասակցեալ յաւիտենական ուրա-  
խութեամբ զուարճասցուք անգ լուսով տե-  
սութեան ամենասուրբ Արրորդութեանդ . և  
գոհաբանութեամբ հանգերձ՝ օրհնել յաւի-  
տեան զարարիչդ երկնի և երկրի , որում  
վայելէ փառք իշխանական , երգօք գոհաբա-  
նութեան այժմ և յապայն և համայն յա-  
ւիտեան :

ԵՊԻՓԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՌ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԲԱՐԵԿԱՄ ԻՒՐ

Ազատագնեա՛յ յարգի բարեկամ.

Յոյժ խելամուտ եղէ փորձով, զի սիրով բարեկամութեան տարրացեալ է սիրտքո՛ւ. սերտիւ անփոփոխ. յորմէ իբրև բուրումն յարքունական ծաղկալից պարտիզէ՛ բազմազան գործս բարիս բուրես զանուշահոտութիւն անկեղծական եղբայրսիրութեան, սէր անթարչամ ճիսուսաւանդ : Ըստ օրինակի ժամացուցին, որ արտաքին ըոպէացոյց գործին յայտնէ զներքին ոսկեզարդ համայնից մասանց զընտրութիւն և զամբողջութիւն. ըստ սմին օրինակի ճշմարիտ բարեկամութիւն մարդկային ներքին սիրոյ զնչան արտաքին գործով յայտնէ. որպէս և դու ազնուարարոյ մտերիմդ յայտնեցեր ինձ նուաստիս, կատարելով զայս ինչ գործ ընտիր յիշատակաց արժանի : Ուստի պարտաւոր եմ հանապազ մեծապէս շնորհակալ լինել զվաղեմի անկեղծ մտերմութենէ քումմէ՛ ՚ի կեանս իմ, և բարեմաղթու լինել առ Քստուած. և մանաւանդ գոհանալ զնմանէ, որ քեզապիսի բարեկամունիլ՝ արժանի արար զանարժանս :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

## ԵՕԹՆԵՔԻՆ ՀՆԱՐՔ ԱՆՄԵՂՈՒԹԵԱՆ

Բարեսնունդ որդեակք իմ Է քոռունք սիրելիք.

Փառք ամենախնամ Մարտիրոս որ արժանի արար զմեզ զամենեսին հաղորդ գտանիլ կենսատու մարմնոյ և արեան կենարարին : Ուրեմն՝ 'ի սոյն երանական վիճակ հասեալ մեր կարեմ ասել, թէ բնակարանս այս որ յառաջ Սարուգոգոնոսորեան մեհեան համարէր վասն մեղաւորացս, որոց գլուխ զիս ինքնս ճանաչեմ, այժմ նմանեցաւ անշուշտ այնմ հնոցին, ուր եմուտ բանն Մտուած առ երիտ մանկունսն, և զքնութիւն հրոյն կիզողական զօրութեան նուաճելով, զուսաւորութեանն միայն եթող ըզ զօրութիւն՝ անվաս պահել որք 'ի միջի էին. ահաւասիկ և մէք հաղորդութեամբ մարմնոյ և արեան Տեան հրաւիրեցաք 'ի մահուանէ 'ի կեանս յապականութենէ յանպականութիւն, և 'ի ծառայութենէ խաւարասէր իշխանին 'ի սիրելութիւն տեառն ամենակալին : Մրդ՝ պարտ և պատշաճ համարիմ ինձ ծերունւոյս նամակագրութեանն միջոցաւ սակաւ ինչ խրատաբանութիւն խօսիլ յայտմ աւուր ձեզ որդւոցդ և թոռանց, զի կացջիք յանմեղութեան : Հայտ իսկ է



ամենեցուն, զի խոհեմ ճանապարհորդք մե-  
ծաւ աչալրջութեամբ խնդրեն իմանալ թէ  
որով ճանապարհաւ կարին անվնաս և ան-  
վտանգ հասանել 'ի նպատակս իւրեանց. և  
ամենայն խնամով անթերի հոգան զկարևոր  
պաշարս ճանապարհորդութեան և զղէնս :  
Երդ՝ եթէ մարմնաւոր ճանապարհորդու-  
թեան պսքան զգուշութիւնք պիտին, ապա  
հոգևորին որչափ առաւել, զի զաշխարհս  
զայս ճանապարհ իմն գիտեմք հասուցանել  
զմեզ 'ի սուրբ արքայութիւն : Վիտէք՝ սի-  
րելիք. յայտնի են թշնամիք մեր այսինքն  
սատանայ, մարմին և աշխարհ. որոց զօրե-  
ղագոյնն նա ինքն է սատանայ, գլխաւոր  
պազակ, որում շեմք անտեղեակ հոգեկորոյս  
հրապուրանացն. որպէս և գրեալ է. ոտ-  
խըն ձեր սատանայ իբրև զառիժ գոչէ,  
խնդրէ, թէ զո՞ կլանիցէ : Ասն զի ոչ մի-  
այն զնախաստիղծ ծնողս մեր մերկացոյց 'ի  
լուսեղէն պատմուճանէն՝ սկզբնական մեղօք  
վիրաւորելով, այլ և զսերունդս նոցին ըզ  
մեզ զամենեօին առ հասարակ մերկամար-  
մին վիրաւորեալ եթող զճանապարհաւն Աշ-  
րիքովի. ջանք մեծ ունի աստ մեղօք ատելի  
առնել զմեզ Եստուծոյ, և 'ի հանդերձեալն  
ընդ իշխանութեամբ բռնալիր և չարատանջ  
ժանեաց իւրոց նուաճեալ զյուրտենական

մահն մահացուցանել. որում գեղ՝ զամենա-  
մաքուր կենսառիթ արին չարչարանաց բը-  
ժշկապետին և զմկրտութիւն լուսասփիւռ  
սուրբ աւազանին ընկալաք, որ ջրով և իւ-  
րև հրանիւթ զօրութեամբ հոգւոյն շնորհօք  
մաքրեաց զմեզս մեր նախկին. որպէս և ա-  
սէ Շարականն, ջրով կիզու զմեզս մեր. և ՚ի  
սուրբ Մետարանի, թէ պատեաց զվերս  
նորա արկեալ ՚ի վերայ ձէթ և գինի:

Ուրեմն իրաւունք է ձեզ ասել, թէ յա-  
ւուրս յայտոսիկ յետ խոստովանութեամբ ա-  
պաշխարանաց և Հաղորդութեան միջոցաւ  
ազատեցաք ՚ի ներգործական մեղաց. սակայն  
ոչ գիտեմք որով հնարիւք կարեմք յայսմ  
հետէ ազատ լինել ՚ի հոգեկորոյս թունից  
նոյն վիշապին: Ուրեմն սիրելիք եթէ կամիք  
իմանալ զհնարս զգուշութեան ՚ի մեղաց՝ ցու-  
ցից ձեզ պատնէշ մի ամրակառոյց կազմեալ  
եօթնեքին անկործան քարամբ. որոց ամ-  
րութիւն զերթ աշտարակ հաստախարիսխ  
կարէ զգէմ ունել ամենայն հնարից չարին,  
զորոց զերիսն՝ մտածականութեամբ, և ըզ-  
չորեսին՝ գործառնութեամբ պարտիմք կա-  
տարել, որք են այսօրիկ:

Վասխ՝ պարտ է զմտաւ ածել, զի երկ-  
նի և երկրի ստեղծող բանն Մտուած՝ ան-  
հուն ողորմութեամբ իւրով վասն մեր մարմ-

նացեալ խաչեցաւ անտանելի տառապանօք  
և պատուական արեամբ իւրով գնեաց զմեզ,  
որով կենսառիթ մահուամբ իւրով մահացոյց  
զմահ մեր : Այա եթէ յիշեսցէ որ զցաւս  
անարգանաց նորին , զապտակաց և բեւ-  
ուաց և խարազանից , զիմորդ կարէ կրկին  
մեղանչել . կարեմասել , զի այնպիսին ընդ-  
դէմ կամաց տեսան զսովորական չար կամօ  
իւր անխափան շարունակելով՝ յօժարի վե-  
րըստին խաչել զՎրկիչն մեր՝ ի փրկութիւն  
վասն կրկին խօթացեալ հոգւոյն : Ահա այս  
է առաջին մտածականութիւն ազատ կալ  
՚ի մեղաց :

Բ. Պարտ է զմտաւ ամել զի Աստուած  
յամենայն տեղիս գոլով , ամենակարողու-  
թեամբ իւրով տեսանէ զամենայն գործս  
մեր , ուր և իցեմք . թէ ՚ի տան թէ ՚ի փա-  
պարս կամ ՚ի քարանձաւս լերանց կամ ՚ի  
ներքնախոր դարանս . որպէս և ասէ ՚Իա-  
ւիթ . տէր քննէ ՚զսիրտս և զերիկամունս ,  
և թէ արտեանունք նորա քննեն զորդիս  
մարդկան : Արպէս և ՚ի տեսլեանն Հոհան-  
նու բոցաճաճանչաչօք երևելով յայտնի ծա-  
նոյց զսրատեսութիւնն առ ՚ի քննել զամե-  
նայն գործս մեր : Ահ ցաւալի գործառնու-  
թիւն ապստամբողական . զի ոմանք անկա-  
րութիւն ինչ տալով Աստուածային սրտե-

սուժեան՝ շարունակեն զշարութիւնս իւրեանց  
 'ի հաստատութիւն բանի Մարգարէին, զոր  
 ասէ. ասաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ  
 ո՛չ գոյ աստուած. սակայն վախճան այնպիս-  
 սեացն 'ի կորուստ է յաւիտենական. որում  
 վկայէ և Յոր Աշրանելին, այնպիսին մեռցի  
 'ի սաստկութիւն անզգամութեան իւրոյ ա-  
 սելով: Ա՛ւր այնպիսի բարեսնունդ երկիւ-  
 ղած զաւակ օրհնեալ. որ 'ի գողանալ հօր  
 իւրում զցորեան 'ի գիշերի 'ի կալէ իմէքէ,  
 մինչ հայրն 'ի չորեսին կողմն հայէր չտե-  
 սանել ումեք, ասէ նմա. հայր իմ՝ մոռա-  
 ցար հայել 'ի վեր յերկինս ուր բաղմեալ  
 կայ ամենատեսն. որով արգարև յետս ե-  
 կաց հայրն. յայնմ մեղաց գողութեան. ու-  
 րեմն սի՛րելիք՝ զօրել է այս զգուշութիւն որ  
 զօրէ անարատ պահել զմարդիկ 'ի մեղաց:

Գ. Պարտ է զմտաւ ածել զվախճան հո-  
 ղազանգուած մարմնոյ մերոյ, թէ զի՞նչ լի-  
 նելոց է յիս մեկնելոյն հոգւոյն. զի՞նչ ի-  
 ցէ արդեօք նիւթ մարմնոյ մերոյ. ո՛չ ապա-  
 քէն հող և մոխիր խառնեալ 'ի չորից ան-  
 բան և անզգայ տարերց. իւրաքանչիւր տա-  
 րերք պարտին քակտիլ 'ի միմեանց և երթալ  
 'ի տեղիս իւրեանց. և վերստին ունի նո-  
 րոգիլ 'ի պատասխանատուութիւն ամենից  
 գործոցն յայնպիսի ատենի, ուր դատաւորն

է ահեղ, դատաստանն անաշառ, և գործք  
մեր մերկապարանոց, և յաշխարհախումբ  
հրապարակի անդ առաջի դասակարգութեան  
հրեշտակաց ոմանք պատրաստ լիցին՝ ի կեանս  
հրաւիրել և ոմանք յամօթն դատապարտել.  
ըստ առաքելոյն, թէ կայ և մնայ մարդոյս  
մեռանիլ և յետոյ դատաստան: Ապա որ  
աներկիւղն կարէ կրկին մեղանչել, եթէ ըզ  
մտաւ ածիցէ զմահն անհրաժարելի, զդա-  
տաստանն ահեղ և պատկառելի և զդժոխոց  
անվախճան տանջանսն և զյաւիտենական  
զրկումն յանորտում կենաց սուրբ արքա-  
յութեան: Արբութեան է նշան, եթէ որ-  
դին կամ աշակերտն գիտելով թէ պատժա-  
կիր լինելոց է գանահարութեամբ փոխան  
չարեացն, կրկին համարձակեսցի չարիս գոր-  
ծել: Յիմար է այն աւազակ՝ որ գիտելով  
թէ կախաղան է վախճան աւազակութեան,  
վերստին վստահացի ձեռնամուխ լինել ՚ի  
գողութիւն: Արքեմն ամենահարկաւոր է ՚ի  
կիր առնուլ զհոգեչահ խրատ Արաքայ որ  
ասէ, յիշեալ զվախճան քո, և յաւիտեան  
ճշ մեղանչեսցես. և Պղատոն ասէ, իմաս-  
տասիրութիւն մեծ է մտածել զմահ: Արդ՝  
յետ այսց երից մտածականութեանց այսին-  
քըն չարչարանացն Հիսուսի, ամենատե-  
սութեան Աստուծոյ, և վախճանի կենաց

Տերոց, պատրաստ եղերուք սիրելիք՝ նաև  
ուշագրութեամբ ունկնդիր լինել գործադ-  
րութեամբ եղեալ հնարից անմեղ մնալոյ,  
որք են այսորիկ:

Գ. Լստուծոյ և աստուածայնոց հետե-  
ւիլ հնազանդութեամբ. այն է սիրալառ  
օրտիւ հնազանդութեամբ անթերի կատա-  
րել զպատուիրանս Տեառն, զՍոխիսականն  
ասեմ զհին օրէնս և զԼեւտարանական շք-  
նորհական նոր օրէնս. յետ այսորիկ հնա-  
զանգիլ և աստուածայնոց. զի Լստուածա-  
յին անուանին սրբազան կրօնաւորք, հո-  
գելից քարոզիչք, հոգեխրատ ծերք և ու-  
սուցիչք և ծնողք և ամենայն բարեխրատ  
անձինք. որոց հնազանգիլ պարտիմք իբրև  
Լստուծոյ. և այս իբրև ամուր պարիսպ  
հնարք հիլիցի մեզ յանմեղութեան գտանիլ,  
զյանձնառականն կատարելով, և 'ի հրա-  
ժարելեացն հեռանալով. ոչ ապաքէն ամե-  
նայն պատշաճաւոր մատեանք հոգելից պեր-  
ճիմաստ անձանց Լստուածային հրամանաւ  
և 'ի ձեռնտուչութեան շնորհաց հոգւոյն  
սրբոյ հասեալ են 'ի լրումն. զորմէ գրեալ  
է 'ի սուրբ Լեւտարանի. ունին զՍոխէս և  
զմարգարէս, նոցա լուիցեն:

Ե. Լնմեղ մնալոյ հնարք մին ևս այս է,  
տրտմիլ 'ի վերայ մեղացն առաջնոց. վասն

զի՛ թէպէտ մաքրեցաք սրբեցաք խոստովա-  
նութեամբ և ապաշխարութեամբ և Հաղոր-  
դութեամբ, բայց չէ՛ վայելուչ անհոգու-  
թեամբ յուրախութիւնս ընկզմիլ իսպառ .  
այլ մի յիշեր զմեզս իմ զառաջինս ասելով՝  
ներումն խնդրել պարտիմք մեզաց մերոց և  
պատժոցն . քանզի զմահի՛ճ երեսուն և ութ-  
ամեայ անդամալուծին՝ զոր բժշկեաց Յի-  
սուս, նմա՛ հրամայեաց բռնաւորիլ : զիւր  
մահի՛ճ զոր ընկալեալն էր մեղսատագնապ  
հիւանդութեամբն : Արպէս և Ղաւիթ թէ-  
պէտ լուաւ զձայն թողութեան և զղջացաւ  
մեզայ գոչելով, բայց անպատիժ ո՛չ կարաց  
լինել . զի Ղաթան զերիս տեսակս պատժոյ  
եցոյց նմա յԱստուածուստ . յորոց միայն ըզ-  
մահն ընտրեաց Ղաւիթ . որով յառաւօտէ  
մինչ ՚ի միջօրեայ ժամանակ մեռան արք եօ-  
թանասուն հազարք . ապա պարտ է ասել  
ընդ Ղաւթի, մեղք իմ առաջի իմ են յամե-  
նայն ժամ . քանզի ո՛րք կարէ մեղանչել ե-  
թէ յիշելով զմեզս իւր նախկին ՚ի տըրտ-  
մութեան սգայցէ . զի տրտմութիւնն սանձ  
իմն է ամենեցուն չգայթակղիլ վերստին և  
ազատ լինել յամենայն մեղաց, թէ յորո-  
գայթից սատանայի թէ մարմնոյ թէ աշխար-  
հի . և այս իմաստնոց է գործ . զի գրեալ է .  
սիրտ իմաստնոյն ՚ի տան սգոյ, և սիրտ ան-

մտին 'ի տան ուրախութեան :

Զ. Եւ իւր հնարք անմեղութեան՝ միշտ  
զբաղեալ գտանելն է գործով . քանզի դա-  
տարկութիւնն է առիթ մեղանչելոց . ըստ  
այնմ, թէ դատարկութիւնն է պատճառ ա-  
մենայն մոլութեանց . կամ թէ ուր դատար-  
կութիւն , անդ և մոլութեան յաջողութիւն :  
Վասնորոյ առաքեալն Պօղոս խրատէ ըզ-  
մեղ յասելն , թէ ո՛րդեակ՝ կամ աղօթեալ  
կամ գրեալ կամ ընթերցի՛ր և սոյն : Երգարև  
զիա՛րդ կարէ որ մեղանչել , մինչ զբաղեալ  
իցէ գործով . զասն զի՝ օձակերպ սատանայ  
ոչ կարէ միջոց ինչ՝ գտանել որոմնացան  
լինել հրապուրելով 'ի մեղս : Այժմէ ջաղաց  
մի աղսոյցէ զցորեան , զիա՛րդ կարասցէ ա-  
ղալ և զայլ ինչ միանգամայն : Սոյնպէս և  
'ի միումականէ աղբեր ո՛չ կարէ բղխել  
ջուր քաղցր միանգամայն և գառն : Եպա-  
սթէ զդայարանք մեր 'ի բարիս զբաղեսցին ,  
ո՛չ կարին արդիւնաւորել և զգործարան  
ստտանայի : Այժմէ բարութեանց սերմամբ  
մշակեալ իցէ անպատան մտաց մերոց՝ նա  
ո՛չ կարէ գտանել տեղի ինչ հերկել ան-  
գանօր չարութեամբ : Աւրեմն իւրաքանչիւր  
որ գոնէ օրական պաշտաման արհեստին  
զբաղելով , կարէ յանմեղութեան գտանիլ :

Է. Չորրորդ գործադրութիւն վասն ան-



մեղութեան՝ հարկ է հեռանալ յախտաւոր մօլի անձանց, զի համակցորդութիւնն հարդակցութիւն բերէ միմեանց սովորական գործոց. թէ և այնպիսին մօտաւոր ազգական իցէ կամ սիրելի իբրև զաշամեր, պարտիմք ՚ի նմանէ ևս զգուշանալ, ՚ի բաց խըլելով ըստ բանի Աւետարանին, եթէ ակնքո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա ՚ի քէն, զի լաւ է քեզ միով ակամբ մտանել յարքայութիւն երկնից, քան երկու ակամբ անկանիլ ՚ի գեհնն հրոյն. ապա գործադիր լինել պարտ է այնմ համառօտարան գլխաւոր սկզբան որ վասն անմեղութեան, թէ ընր համբերող և հրաժարող: Ահաւասիկ զեօթնեսին կանոնս անմեղութեան զոր ծանուցի ձեզ, անմոռաց ունելով ՚ի մտի, վկայէք և դուք հաւաստի դիտութեամբ, զի են ճշգրիտ միջոցք անմեղութեան: Աւերմն յիշեցէք զգուշութիւն դեռաբուժ հիւանդաց, որք մեծաւ ուշադրութեամբ ունկնդիր լեալ բանից բժշկաց, գուն գործել փութան ամենայն յօժարութեամբ անձերի կատարել ՚ի բժշկութիւն կատարելապէս. զի մի վերստին դարձ արասցեն ՚ի հիւանդութիւն, որ է մահահրաւեր: Ապա և դուք որ լուաք զդեղս զայսոսիկ, պարտիք ՚ի ըզգուշութեան լինել ըստ օրինակի դեռաբու-

ժից . թէպէտ մաքրեցաք խոստովանութեամբ  
և հաղորդութեամբ , ըայց լուաք և զայս ,  
թէ մի՛ մեղանչեր , զի մի՛ շար ևս ինչ լի-  
նիցի քեզ : Ըհա այս է անազատ մահապար-  
տութիւն . յորմէ ամենախնամն Ըստուած  
ազատ պահեսցէ զձեզ զամենեսին . և խնա-  
մողական ամենազօր սուրբ աջն մարդասիրին  
Ըստուծոյ հովանի լիցի ՚ի վերայ Չեր յա-  
մենայն ժամ յամենայն ուրեք . զի մի՛ հա-  
մակուրութեամբ զհետ պնդեսջիք վերստին  
շար կամաց ձերոց սովորականաց անկանիլ  
՚ի մեծ մեղս սրբապղծութեան . այլ ըստ  
բանի վրկչին արթուն գտանիլ զգուշասջիք  
այսու վերոյիշեալ եօթնեքին կանոնօք . ո-  
րով անվտանգ և անսայթաք ունիք նաւար-  
կել զանձինս ձեր ՚ի բազմակոհակ ալեաց  
աշխարհի վշտամբեր կենցաղոյս , և անարա-  
տութեամբ ժամանել ՚ի վերնագաւառ սուրբ  
արքայութիւն , որ պատրաստեալ է սիրել-  
եաց այսինքն անարատից :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՅՈՐԳՈՐՈՒՄՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ  
ԵՒ ՎԱՍՆ ԶՈՐԻՅ ՏԵՍԱԿԱՅ  
ՄԵՌԵԼՈՒԹԵԱՆ

Հոգեհատոր սիրելի.

Սերոզամբնիտ լեր. մտերիմս ես յայսմ  
նուագի զիարդ կարացից լուել զանց արար-  
եալ զգրութենէ 'ի յորդոր սիրեցելոյդ: Ար-  
գարև 'ի բազում ժամանակաց հետէ գիտե-  
լով իմ քաջ ծանեայ, զի եկեղեցասիրու-  
թեան բազմանք շերելի երբէք 'ի բեզ, որ  
լատ օրէ կանխել 'ի սուրբ Ակեղեցի ընդ  
այդն ընդ առաւօտուն, բող Ակեղեցի' եղ-  
բայր, լատ ստուգարանութեանն կամի ասել  
եկ զի եղիցի այսինքն կատարեսցին խնդր-  
ուածքդ: Վաս զի'նչ է պատճառ հոռի  
խուսափելոյդ անտի. մի' գուցէ իբրև զայլս  
ամանս սովորութիւն ունելով յետ ընթրեաց  
'ի գիշերի տանէ 'ի տուն շրջագայել, երբե-  
մըն 'ի զանազան խազս թարթափելով և եր-  
բեմն գինարբութեամբ բազմախորաիկ համա-  
գամս ունելով առաջի, յանօգուտս վաստա-  
կեսցիս առաւել քան զչափաւորն անբուն ա-  
կամբ տքնելով, ոչ երբէք զմտաւ ածելով  
զհետեւեալ տէրունական աւուր կամ զմեծա-  
հանդէս տաղաւարաց սրբազան պաշտամանց

Հոգեխրատոյս զուարճութիւն. այժ այս է պատճառն, զիտեմստուգապէս, զի յիւս այնորիկ առանց աղօթից մտեալ 'ի քուն թանձրութեան մինչ 'ի ծագումն արևու, վերմակաւ խնուլ ջանաս զլսելիսդ շտեղ զհոգեշարժ գանգակահարութիւն և զքաղցրանուագ երգարանութիւն ժամակոչին և զառաւօտեան գոհարանական ձայնս թռչնոց. որք ամենեքին սոքա յորդորեն զմեզ զարթնուլ 'ի փառաբանութիւն Տեառն. զիւրդ հաճոյ թուի քեզ քան զնոսին ստորին զըտանիլ՝ նման յիմար կուսից նիրհելով. զարթիցուք սէր իմ՝ յայգուց, զի կարացուք պաղատիլ առ Աստուած, զարթիր ընդէր ննջես, տէր մի՛ մերժեր զմեզ իսպառասելով. և գացուք գողորմութիւն 'ի տեառնէ՛ զիմելով 'ի տուն տեառն, որ է ապաստանի մեծ հոգեկեցոյց. քանզի յարժանուհաս պատժոյ ջրհեղեղի որ 'ի ցասմանէ տեառն՝ ո՞ք կարացին տղատ լինել. ո՞չ ապաքէն որք մտեալ էին 'ի տապան անդր. որ էր օրինակ սրբոյ Ակեղեցւոյ. ապա և դու 'ի կենսառիթ տապանէ Ակեղեցւոյ հեռանալովս 'ի կարգս հարիւրամէի՞ց համարիլ կամիս լսել. որ հարիւրամեայն մեռանիցի՞, մեղաւոր և անիծեալ կոչեսցի :

Իսկ զեկեղեցատիրաց բազմազան հոգե-

կեցոյց օգտից ծանուցից սիրելութեանդ սուսեալ 'ի սրբոյ Աւետարանէն : Օրհրանուհի իւզարեր սուրբ կանայք մինչ ընդ արշալոյսն միաշարածու Օգտկի աստուածսիրութեամբ գնացին 'ի գերեզման Տեառն Տերոյ Հիսուսի Վրիստոսի անուշահոտ խնկովք օճանել զմարմին նորա , հրեշտակ Տեառն երեւելով յաւետելն զսուրբ Յարութիւն Տեառն՝ մի երկնչիք ասէ . զի՞նչ զարմանք . ո՞չ ապաքէն զարհուրեցոյց զկանայսն ահեղատեսիլ կերպարանօք երեւելով : Հայտ է զի՛ երևումն հրեշտակին նստեալ՝ նախ ցուցանէ զմշտընջինական պահապան գոլն 'ի գերեզմանին . և երկրորդ ակներև ապացոյց է մեզ ճշմարիտ Հարութեան Վրկչին . զի ծառայն ո՞չ կարէ բազմիլ առաջի Տեառն . ուր և իցէ . զիցուք թէ յառաջ կանանց երեւելոյն այս է պատճառ , զի նախ Աւոյ մեղաւ . սակայն զի՞նչ երկիւղ իցէ սա , զի ասէ մի երկնչիք . ո՞չ ապաքէն և պահապանք գերեզմանին տաստիկ պակուցեալ յահել փառաց Հիսուսի և զարկուցեալ զգետնի մնացին իբրև զմեռեալս . կարելի՞ իցէ արդեօք բնական երկչոտ կանանց չերկնչիլ . մանաւանդ երկիւղունիլ ամենեցուն է հարկաւոր . զի երկիւղ տեառն սուրբ ասէ Ղաւթիթ , և մնայ յաւիտեան . նաև նոյն ինքն աղերսէ առ Աստուած , բե-

ւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ ասելով :  
Եւ որդի նորա Սողոման սկիզբն զգօնու-  
թեան երկիւղ տեառն է, ասէ : Ըստուծոյ  
է միայն չերկնչիլ որպէս և գրեալ է, ոչ  
երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ 'ի  
նեաէ որ թռչի 'ի տուէ. ապա երկիւղա-  
ծու թիւնն ընդունելի է ամենեցունցս. զի եր-  
կիւղ գեհնին յանձեղութեան կացուցանէ  
զեզ ազատ լինել 'ի յաւիտենական դատա-  
պարտութենէ. որպէս և սէր Ըստուածա-  
յին յառաքինական գործս զարգացուցանէ.  
ահա սոքա երկոքին՝ երկիւղ և սէր՝ իւրա-  
քանչիւրոցս ամենեցուն հարկաւոր են ան-  
սխալ նաւարկել զանձինս մեր 'ի ծովածուփ  
աշխարհիս այսորիկ և հասանել 'ի նաւա-  
հանգիստ սուրբ արքայութեան :

Բայց լիան էր հրեշտակն ասէ մի եր-  
կընչիք : Ի իտե՞ս սի՛րելիս, չորք են տեսակք  
մեռելութեան. մին առ հասարակ ծնելոցս  
հարկաւ պատահելոց է. ըստ որում ծնաւ,  
ապա պարտի մեռանիլ. որպէս և ոմն յիմաս-  
տասիրաց ասէ այսու մտօք, յայնժամ մե-  
ռայ, յորժամ ծնայ, և Հիսուս ասէ 'ի սուրբ  
Ըւերտաբանի. ոչ գիտէք ե՞րբ տէր տանն  
գայցէ, յերեկորեա՞յ եթէ 'ի մէջ գիշերի ե-  
թէ 'ի հաւախօսի եթէ ընդ առաւօտս, այ-  
սինքն կամ 'ի մանկութեան կամ 'ի պատա-

նեկութեան կամ յերիտասարդութեան և  
կամ 'ի ծերութեան : Որպէս և Հիսուս Փրկիչն  
մեր մարմնացեալ գոլով յարենէ սուրբ  
կուսին Սարիամու, մահ ընկալաւ, և ինք-  
նազօր յարութեամբ իւրով ննջումն կոչեաց  
զանուն ընդհանուր մահուանս այսորիկ : մահ-  
ուամբ զմահ կոխելով . զի ասէր . Ղազարոս  
բարեկամ մեր ննջեաց . և Առաքեալն ասէ,  
գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է 'ի  
մեռելոց, այսուհետեւ ոչ մեռանի, և մահ ոչ  
ևս տիրէ :

Բ. Մեռելութիւն այս է՝ զի անզեղջ մե-  
ռանելով՝ յաւիտենական դատապարտու-  
թեան ենթակայ գտանին ոմանք, որ է յա-  
ւիտենական մահ և յաւիտենական մեռելու-  
թիւն . յորմէ տէր Աստուած զամենեսին լից  
մեզ զերծ կացուցէ մարդասիրութեամբ իւ-  
րով : Ահա հրեշտակ Տեառն տեսեալ զիւ-  
ղարբր կանայս ազատ յայս՝ յաւիտենական  
մահուանէ, աւերտէ աներկիւղ լինել . որով  
կամի ասել, որովհետեւ Աստուածային ջեր-  
մեռանդ սիրով ազատացեալք 'ի մեղաց և  
առաքինութեամբ զարդարեալ զԱստուած  
խնդրէք, կանխելով 'ի գերեզման 'ի տուն  
տեառն անուշահոտ խնկովք այսինքն ջեր-  
մեռանդ հաւատով օծանել զմարմին տեառն,  
ապա մի երկնչիք : Ահ իցէր թէ ընդ ձեզ

լեալ էր ինձ յայնմ ժամանակի՝ երանելի՛ սուրբ  
 կանայք . ո՞րպիսի ժամանակ էր . ո՛չ արե-  
 գական և լուսնի խաւարմամբ մթացեալ ժա-  
 մանակ , այլ սքանչելահաշ սուրբ Յարու-  
 թեան Վրկչին լուսասփիւռ ճառագայթիւք  
 պայծառացեալ . այնուհետև ո՞ւմ պատշաճի  
 երկնչիւ . մի թէ երկեան՝ Տօբիա , որումօգ-  
 նական էր Աստուծոյն հրեշտակ : Այլ իբրև  
 զայնոսիկ , որք կործանեցին զՏնգեքին քա-  
 ղաքս միանգամայն , այլ Աստուածային փա-  
 ռուորութեանն լրոյ աղգարար . չէ սա որ  
 կացեալ ՚ի կալն ոսնայ , երուսացւոյն սպա-  
 նանէր զամենեսին անխնայ ՚ի պատիժ մեղացն  
 Պաւթի . այլ ինքն է Պարրիէլ հրեշտակա-  
 պետն որ սպասուոր եղև ամենից կենսա-  
 բեր և փրկատիժ տնօրէնութեանցն Յիսու-  
 սի . որ և այժմ ձեզ աւետէ ուրախութեամբ .  
 ապա և ես ասեմ մի երկնչիք . զի որպէս  
 վասն միոյ ապաշխարող մեղաւորի ուրախու-  
 թիւն ունին հրեշտակք ՚ի յերկինս , սոյնպէս  
 յուրախութենէ ստիպեալ քարոզէ ձեզ , թէ  
 մի՛ խնդրէք զկենդանին ընդ մեռելս . մե-  
 ղանչական Աւայ տրտմեցաւ զրկելով՝ յԱստ-  
 ուածտեսութենէ ՚ի պատիժ մեղացն , իսկ  
 դուք արդարացեալ դստերք Աւայի՛ արժա-  
 նի գտայք նախ քան զԱռաքեալս ուրախա-  
 նալ աստուածտեսութեամբ : Պետրոս ա-



նաքեալ ո՛չ գիտելով զժամանակն՝ մինչև  
էր լրումն փրկառիթ տնօրէնութեան փրկ-  
չին յառաջ քան զյարութիւնն անառն ցան-  
կայ մնալ 'ի թափօր լերին աստուածտեսու-  
թեամբ ցնծալ, այլ յորժամ կատարեաց  
զամենայն տնօրէնութիւնս հայրակամ, և  
փառաւորեցաւ 'ի Նաչին, ընդ հովանեաւ  
թևոց իւրոց որպէս զհաւ զձագս իւր ըն-  
կալաւ զամենեսին որք հպատակ գտան Աս-  
տուծոյ, և լուսափայլ սուրբ յարութեամբ  
իւրով մաքրեաց զհոգիս մեղսունակ, յորս  
գտան և իւզարեր սուրբ կանայք:

Ապա զայս ուսանիմք աստի, զի որ Աստ-  
ուածային սիրով վառեալ կանխէ օր ըստ  
օրէ 'ի տուն Տեառն 'ի սուրբ Ակեղեցի  
զԱստուած խնդրելով յօգնականութիւն ան-  
ձին, այնպիսումն հրեշտակ Աստուծոյ աւետե-  
մի երկնչիք ասելով, Չէ հարկ հարցանել  
սիրելիս, թէ ապա ո՞չց պատշաճի երկնչիլ.  
մեզէն կարեմք գուշակել: Օի որք ըստ կա-  
մաց իւրեանց անհոգութեամբ 'ի քուն թանձ-  
րութեան կան 'ի մահճի և շունին զԱստ-  
ուած որոնել և փառարանել, այնպիսեաց  
է երկնչիլ. զի շունին ընդ իւրեանս զանու-  
շահոտ խունկս առաքինութեան հաճոյ լի-  
նել Աստուծոյ: Ղանեսս՞ր արգեսք սիրե-  
րելիս, զի՞նչ ասէ հրեշտակն կանանցն այ-

նոցիկ զՄատուած խնդրողաց . և զի՞նչ կա՞ծի  
ասել հեռացելոցն 'ի տանէն Մատուծոյ .  
մտախոհ լեր յիշելով զվերջոյգրեալ բանս ,  
զի երկնչիլ երեւի քեզ պարսեաց :

Իսկ երրորդ մեռելութիւն ախտաւորու-  
թիւնն է . զի մեղսասէր անձինք զմահարեր  
դառն ճաշակ մոլութեան ընկալեալ գոլով  
'ի քիմս իւրեանց , ո՛չ կարեն հեռանալ յախ-  
տից իւրեանց՝ ո՛չ խոսսովանութեամբ և ո՛չ  
յախտենական տանջանացն երկիւղիւ . այլ  
իրրև ծառայ նուաճեալ կան ընդ իշխանու-  
թեամբ մեղաց . որպէս և զմեռելութիւն մեղ-  
սամած անձանց յայտ առնէ Շնորհալին այ-  
սու բանիւ , թէ 'ի միջօրեայն նսեմացաւ ,  
յորժամ Մ. դամ մեղօք մեռաւ : Չորրորդ  
տեսակ մեռելութեան՝ ծուլութիւն . զի որ-  
պէս շիք կարողութիւն մեռելոյն շարժիլ , ըստ  
նմին օրինակի և վատ անձինք կամելով ան-  
աշխատ կենօք 'ի հանգստութեան լինել ,  
ո՛չ հաճին բնաւ շարժել զանդամս և զգա-  
յարանս իւրեանց 'ի խնդիր շահուց հոգե-  
կան և մարմնական , որով արժանապէս հա-  
մարին մեռեալ : Արեմն հոգեհատո՛ր եղբայր  
իմ , յիրաւի առ հասարակ ամենեքեանքս  
ենթակոյ եմք առաջին մեռելութեան հողա-  
զանգուածքս 'ի հող դառնալ , սակայն պար-  
տիմք զգուշանալ 'ի միւս երկից մեռելութե-

նէ. ապա թէ ոչ՝ ոչ կարեմք լսել զհողե-  
խրախոյս աւետիս նման իւղարեր կանանց .  
զի նոքա աղատ էին 'ի մեռելութեանց աւ-  
տի. եթէ կամիցիմք մասնակից գտանիլ նո-  
ցին երանութեան, զամենայն աշխարհային  
զբաղմունս 'ի բաց թողեալ իրրե քարլնկեց,  
անուշահոտ խնկովք առաքինութեան պար-  
տիմք գիմել առ Աստուած որ բազմեալ կայ  
'ի տաճար սուրբ Ակեղեցւոյ . որպէս ասէ  
Պարեկացին, անտուն շրջի անբովանդակե-  
լին, եթէ ոչ 'ի սոյն տան տաղաւարեսցի:  
Ապա՝ մի՛ ըստ օրինակի ծուլից յօժարես-  
ցուք կալ. զի մի՛ լուիցուք թէ ննջեցին ըզ-  
քունս իւրնանց, և ինչ ոչ գտին. այլ փու-  
թասցուք արժանի գտանիլ լսել զերանաւէտ  
աղօթական զձայն պատարագամատոյց Քա-  
հանային, թէ սրբեալ զոսա որք ողջունե-  
ցին՝ սիրով զվայելութիւն տան բոյ:

Ն. Ծ. ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՄԻՐԱԼԻՐ ՊԱՏԱՍԻԱՆԻ

Հ Ա Ի Ա Ս Ա Ր Ա Չ Ա Փ Ն Ա Մ Ա Կ Ի

Լուսափայլ լապտեր հողւոյս սենեկի,  
Աղնուամենուկ եղբորդ մտերմի.  
Սէր յարափոփաք յաւէտ նուիրի,  
Խնդալ միշտ 'ի տէր յարգանօք մեծի:

Մի՛ և մի՛ իւրիք խնդասցէ քանակութիւն  
Հեռաւորութեանց կամ քաղմութիւն լերանց  
և դաշտից սնոտի կարծեօք իմն, թէ ար-  
գելթ իցեն յերկուց եղբարց կամ բարեկա-  
մաց հեռաւորաց միջի՝ սակս սիրոյ, քանզի  
աւետարեր աղաւնին բերէ 'ի տապան անդր  
զուարթառիթ ճիւղն ձիթենուոյ 'ի հեռուստ  
որպէս զքոյգ նամակ պանծալի. յորմէ իրրև  
'ի լուսատեսիլ հրեշտակէ առեալ մեզ ըզ  
ծանօթութիւն զբարեբաստիկ քաջողջութե-  
նէ պատուական անձին բուժ, ևս քան զլս  
ուրախացաք յանարտում ուրախութիւնս,  
մինչ զի գժուարին է մեզ սեակաւ պարու-  
րել աստանօր զբովանդակն հանդիսի մեծի  
ուրախութեան մերումս սրտի, որ անմոռաց  
յիշմամբ բով ծանուցանես երբեմն երբեմն  
մեզ կարօտելոցս զաղնուութեանդ ողջկե-  
ցութիւն ցանկալի:

Եպա անգազար աղօթիւք հայցեմք 'ի  
'ի սէրարփի Փրկչէն մերմէ Հիսուսէ Վ.Բ-

րիստոսէ անդորր կենօք պահել զսիրելիդ՝  
 անթարչամ 'ի նոյն սէր Հիսուսաւանդ 'ի հա-  
 րուստ ամս: Սէրն ճշմարիտ որ 'ի հոգւոյն  
 գիտեմք պարգև, անխափան ունի Հնչումն  
 առ ամենեսին իբրև սաստիկ հողմոյ, զի ուր  
 կամի՝ հնչէ, յորժամ շարժի վերնայարկ  
 ծածկոյթ սրտի մարդոյ սիրակէզ կայծականց  
 իմանալի հրոյ բորբոքմամբ. ըստ այնմ թէ  
 'ի յաւելուածոյ սրտի խօսի բերան. որպէս  
 ահա խիտ առ խիտ գործնական նշանօք իւրա-  
 քանչիւրոցս՝ երթևեկութեամբ նամակաց  
 ակներև տեսանի: Ալ եթէ կրկին յօժա-  
 րեսցիս զորպիսութիւն մեր իմանալ, փառք  
 խնամառատ մարդասիրին Աստուծոյ. զի  
 անբաւ ողորմութեամբ նորին և սատարու-  
 թեամբ խնկանուէր աղօթիցդ օժանդակու-  
 թեան՝ հանդերձ համայն ընտանեօք մերովք  
 մինչև ցկէտ գրոյս ողջ 'ի մարմնի լեալ, վա-  
 յելեմք տակաւին 'ի բազմածուփ աշխարհիս  
 այսմիկ զբազձալի բարեկամաց մերոց զաստ-  
 ուածաւանդ հոգեպարար սէր մեր ամենե-  
 քին սիրով քով սիրահարեալ եղբարքս  
 որք եմք . . . :

ԵՊԻՓԱՆ  
 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՊԱՐՍԱԻ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԴՈՎԵՍԻ ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

Նուէր սիրոյ սիրեցելոյդ 'ի խնդութիւն  
Եւ 'ի խրատ.

Ղառնաճաշակ թիւնարբու թիւն, մահա-  
ղեկոյց գործառնութիւն, պարագլուխ մեղաց  
ժանտասաղարթ մոլութիւն, նա ինքն է դը-  
ժոխըմբեր հպարտութիւն.

Ոչ կամիմ եթէ տգէտ իցես, թէ զի՞նչ  
պատահեցաւ քեզ բօթալի դէպք յոլովա-  
մեղձ եղեոն հպարտութեան յաւուր յայն-  
միկ 'ի խորհրդակցութեան ժողովարանի 'ի  
միջի բազմականաց, որում ականատես իսկ  
եղէ. վա՛յ աչաց իմոց զոր տեսի, և ական-  
ջաց իմոց զոր լուայ. յոր շնորհակալութեան  
բան ձեռնամուխ եղէց սակաւ սեւակաւ, սակս  
սևորակ բասրելի բարուց քոց եղբայր. որ  
այդպիսի անվայել գործառնութեամբ ստէպ  
ստէպ պատճառ լինիս ինձ վարանիլ 'ի տըրտ-  
մութեան. որով պարտ վարկայ զայս գիր  
բանագրութեան տողել փոքր 'ի շատէ յի-  
շեցուցանելով քեզ զժանտաժուտ հպար-  
տութեան զիջաս, և զանձկալի խոնարհու-  
թեան զօգուտ: Աթէ յանկողինս զղջաց-  
եալ իցէ քո այսինքն ընդ երեկոյս յաւուր  
յորում մեղարդ, չի՞ք ինչ քեզ տեղի են-

Թակայանալ այսց խրատական բանից իմոց :  
 Ապա թէ ոչ՝ իմա՞ աղաչեմ՝ զանկեղծ եղբայր-  
 սիրութեանս պարտաւորութիւն : Ապաքէն  
 ուր մեծամտութեան է խորհուրդ , անդ և  
 կործանումն է անշուշտ . և ուր խոնարհու-  
 թիւն , անդ մօտ է վեհանձնութիւն . քանզի  
 պատգամ տեառն է աննահանջելի . թէ՛ որ  
 բարձրացուցանէ զանձն , խոնարհեսցի . յոր-  
 մէ մակարերի թէ՛ ՚ի խոնարհ զիջանելոց են  
 անշուշտ , որք մեծամտութեամբ հպարտաս-  
 ցին :

Մարգարէն՝ Վաւիթ քաջագէտ գոլով այսմ ,  
 տէր ամբարտաւանից հակառակ կայ թսէ ,  
 տայ շնորհս խոնարհաց : Ալ որդին նորա  
 Սողոմոն ընդ հօր իւրում ձայնակցեալ , ծա-  
 նուցանէ մեզ զամբարտաւանից զվնաս յա-  
 սելն . զայր ամբարտաւան նկուն առնէ , և  
 զխոնարհս փառօք կանգնէ տէր . ահա եր-  
 կոցունց վաղեմնական ծանուցումն հարազատ  
 գտան ՚ի միասին սրբազնասուրբ Աւետարա-  
 նական բանի փրկչին : Ապա վա՛յ այնպիս-  
 եաց՝ որք հակառակ կացուցանեն ինքեանց  
 զտէրն տերանց . ո՞չ ապաքէն նոյն հակա-  
 ռակութիւնն էր , որ ցրուեաց զամբարտաւանս  
 մտօք սրտից իւրեանց . իսկ դու ո՞չ մտօք ,  
 այլ բանիւ և գործով , որ ծանրագոյն ե-  
 ղեռն է քան զմտօք : Ապա՛ ես զիա՞րդ կա-

բացից իբրև սուտ բարեկամ աղուական  
բանիւք շողովել իբրև սիրայորդոր նամակա-  
նի բարբառ զուարթ քաղցրաբանութեամբ  
շարամանել յայս նիւթ դառնապատում և  
եղեռնալուր, այս մահագուշակ մեղաց մեա-  
սուց քանակութեան զչափ 'ի յայտ ածել  
յայտնի ապացոյց լինել մեղ՝ բաւական է  
մտաբերել և եթ զանկումն խաւարարգել  
չարին յանդունդս երկրի յիններորդ դա-  
սակարգութենէ երկնից, որ սկիզբն ամբար-  
հաւաճութեան լեալ, փոխեցաւ հապճեպ  
միջոցաւ 'ի լուսանիւթ գոյացութենէ 'ի խա-  
ւար, և եղև ստորասուզ հանգերձ խմբիւ  
իւրով սեպհականելով ինքեան զանուն՝ սա-  
տանայ, որ ասել է բարեաց հակառակ,  
քանզի այն եղև սկզբնաներհակ բարւոյն  
Ըստուծոյ : Ը, ԵԼ և չիցէ՞ ընթերցեալ քո  
զանարգագոյն մահ գոռոզին համանայանա-  
գորոյն իշխանին, որ յամենեցունց երկրպա-  
գութիւն խնդրէր, ահանոյն հպարտութեանն  
միջոցաւ պատժեցաւ կախիլ զբարձրաբերձ  
փայտէ 'ի նշաւակ ամենից անարգաբար :

Սոյն օրինակ և Փարալօն արքայն ե-  
զիպտացւոց, որ գոռոզութեամբ իւրով ըն-  
կեցիկ առնէր զմանկունս եբրայեցւոց 'ի գեան  
համայն զօրօք իւրովք կառօք և երիվարօք  
ծովակուլ լեալ 'ի ջրահեղցոյց մահ սատա-



կեցաւ . զի այն հեզիկ բնութիւն ջուրցն տարեր կարի զօրացաւ յայնժամ յաղթող գտանիլ գոռոզացելոյն և որք էին ընդ նմա :

Ար սիգաճեմ հպարտութեամբ զգնայր 'ի պալատին մեծահամբաւ թաղաւորն 'Ասբուգոգոնոսոր՝ զիա՞րդ վաղվաղ միջոցաւ 'ի սուլ վայրկենի զանձին բանականութիւն կորոյս հպարտութեամբ , և զամս եօթն անբանիցն անասնոց ունեցաւ զկարգ . հրպէս և երբ . մինչ 'ի տանիս իւր պալատան հպարտութեամբ ասացի զգնայր . և հայեցեալ 'ի վերայ Ռարիլոն քաղաքի , խօսէր իբրու անձին բուռն զօրութեամբ կամ քաջութեամբ տիրեալ . սակայն ճայթումն յերկնից 'Աստուածային բարկութեան վաղվաղ ժամանեալ առ ինքն պատշաճադատ եղև հարուածեալ . վասն զի՝ որ հակառակ կայ ամբարտաւանից 'Աստուած՝ ահա նոյն հետայն բարձեալ զխոհականութեանն զօրութիւն 'ի նմանէ՝ յիմարեցոյց զերթ քառոտանիս սըղամանակ միջոցաւ . որով յարքայական գահոյիցն 'ի վայր գլորեալ ընդ անասունս գասակարգեաց . տեսե՞ր արդեօք ողբալիս թըլուառութիւն . հրպիսի նկուն արար տէր , որպէս և ցնախայանցիցն բազմայոլով գունդս որք յոլովամեղձ ամբարհաւաճութեամբ խըրոխտացան բարձրացան . իսկ յետոյ վաղ-

վաղ զիջան յորսայս անկան Մատուածային բարկութեամբ, ընդ այն զեկուցանէ մարգարէն՝ թէ քակեաց զհզօրս յաթոռոց, և զուգընթաց բանիս զի՞նչ, բարձրացոյց ասէ զխոնարհս:

Ո՛հ վեհապանծ ցանկալի խոնարհութիւն, դու լուսաշաւիղ երկնընթաց ճանապարհ, դու երկնագնաց սանդուղիս յակորեան, դու ամրակառոյց աշտարակ ընդդէմ թշնամեաց, բաղձալի խաղաղարարաց, մերժումն սպառնալեաց, գգուանք զաւակաց, զարգացումն աշակերտաց, սիրելութիւն եղբարց, անդրանկութիւն կրտսերաց, խաղաղութիւն վըրդովմանց, յաղթութիւն ամբարտաւանից, յարգութիւն պաշտօնէից, բարձրութիւն նուաստից, առիթ հաշտութեան, զիջումն բարկութեան, հանդարտութիւն մրրկայոյզ ալեաց ցասման, կարի կարևոր յատկութիւն և միջնորդ քրիստոնէիցս փառազարդութեան, պատուանդան քաղաքավարութեան, և հիմըն ամենայն առաքինութեան, քե պարտին ասել տանուտեարք 'ի վեր մատիր, 'ի վեր ո՞ւր մատչիլ, 'ի վերինն երուսաղէմ իմա հրաւեր, 'ի տեղի անկելոց վեհագունից դասուց հրեշտակաց, յորմէ հպարտութեամբ արտալած եղեն յանդունդս, ուր խոնարհութեամբ միայն համապատշաճ է ելանել:

զորոյ օրինակն իսկ եցոյց մարմնացեալ բանն  
 Աստուած, որ հեղինակ եղև խոնարհութեան  
 յամեն տնօրինական գործս իւր, տանելով  
 զխոնարհագոյն հողազանգուած մեր բնութիւն  
 յամենաբարձր վերին խորան սուրբ երրոր-  
 դութեան: ‘Ասև Մարիամ սուրբ կոյս’ ծը-  
 նունդ հողեղէն՝ որ ծնանելով զԱստուած,  
 կոչեցաւ Աստուածամայր, բարձրացաւ ՚ի  
 գերագոյն աստիճան վերափոխիլ մարմնով  
 յերկինս մերձ առ սուրբ Արրորդութիւնն,  
 որով, եթէ ոչ՝ խոնարհութեամբ իւրով զոր  
 հաստատեալ ունէր յինքեան, որպէս և ին-  
 քըն վկայէ յասելն. հայեցաւ ՚ի խոնար-  
 հութիւն աղախնոյ իւրոյ: Հակոբ կրտսեր  
 եղբայր Ասաւայ խոնարհութեամբ զանդրան-  
 կութիւնն, ընդ նմին և զանդրանկութեանն  
 ընկալաւ ՚ի հօրէն զօրհնութիւն. և ՚ի վերա-  
 դառնալն ՚ի Աբանայ առ եղբայր իւր խո-  
 նարհութեամբ՝ զոգի հաշտութեան եղեալ  
 ՚ի սիրտ եղբօրն, զնախանձ նորին ՚ի սէր  
 փոխարկեաց, և զատելութիւնն ՚ի խանդա-  
 ղատանս: Իջումն Յովսեփայ ՚ի խոր գբին՝  
 ընդ արքունիս գասել եղև պատճառ. մին-  
 չև երկրորդ լինել արքային փարաւօնի, ոս-  
 կեթել զգեստուք զարդարեալ. որ նա ին-  
 քըն խոնարհութեամբ իւրով թէպէտ կըրտ-  
 սերն էր յեղբարս իւր, բայց առաւել սի-

րելի եղև յաչս հօր իւրոյ քան զամենեսին :  
Պաւիթ որ կրտսերն էր յեղբարս , զբարձ-  
րայօն հպարտութիւն հաստարազուկ և սոս-  
կավիթխար հսկայ Պողիաթու՝ որ միայն յիւր  
գօրութիւն ապաւինեալ էր , իսպառ նուա-  
ձեաց , սպանմամբ զնա . և սիրելի եղև Աս-  
տուծոյ և ժողովրդեան քան զՍաւուղ թա-  
գաւ որ : Օ իմրդ մերժեաց զպատուհաս Աստ-  
ուածային բարկութեան խոնարհութիւն ար-  
քային՝ Աինուէացւոց , որ սակաւարառ քա-  
րողութեամբ Յովնանու էջ յաթոռոյ իւր-  
մէ , անմիջապէս և մերկացեալ զշքեղ փա-  
ռաւորութիւն արքայական զգեստուցն՝ բըր-  
ձազդեաց եղև : Յորժամ ապօրինակ համա-  
րէր ամենափրկիչն Յիսուս թողուլ զոչխարս  
զընտանիս տանն իսրայէլի և շանց անհաւատից  
ընձեռել , զիմրդ անյապաղ մերձեցաւ խնա-  
մով՝ ՚ի բժշկութիւն դստեր քանանացւոյն ,  
մինչ լուաւ զխոնարհագոյն պատասխանին ,  
և զյանձնառութիւն յաւէտ ստորին աստի-  
ճանի համարիլ իբրև զշուն ասպականաս-  
պաս լինել փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ  
մանկանց : Այրենի գաղանք չին ումք սի-  
րելի , այլ գառինք վասն խոնարհութեան  
գգուին յամենից : Ամենայն կարճահասակ  
տունկք պողաւէտք կամ փոքրագոյն ծաղիկք  
հոտաւէտք՝ առաւել արժեն քան զբազմոս-

տեան բարձրուղէչ անբերրի մայրս լիրա-  
նանու :

Բնական է արգարե ջրոյ միշտ 'ի խորս  
իջանիլ, և կարծր մարմնոյ հակիլ 'ի կեդ-  
րոն, և ընդհակառակն թեթեւագոյն գոլոր-  
շեաց յօդս 'ի վեր բարձրանալ 'ի սկզբա-  
նէ անտի. նմանապէս խոնարհ անձանց 'ի  
բարձրութիւն հասանել՝ իրրե բնական գի-  
տեմք լինել, զի Մատուածային է հրաման  
որ ասէ. որ խոնարհեցուցանէ զանձն բարձ-  
րացի, և թէ մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր  
սպասաւոր. քանզի չի՞ք ինչ յառաքինու-  
թիւնս Մատուածահաճոյ քան զխոնարհու-  
թիւն, որպէս ասէ Մատուածարեալն Պա-  
ւիթ, պատարագ Մատուծոյ հոգի խոնարհ :  
Ուրեմն ահա այն շնորհափայլ բան Սիրաք  
իմաստնոյն՝ բաւական է զօրել մերս գուզ-  
նաբեայ բանից գովարանականաց յաղագս  
խոնարհութեան 'ի վկայութիւն հաստատու-  
թեան, թէ 'ի ներ հրոջ փորձի ոսկի և ար-  
ծաթ, իսկ մարդիկ ընդունելիք 'ի բովում  
խոնարհութեան. և այս փորձառութիւն առ  
ի՞նչ, առ որոշումն զբարի, բարին յամանս  
համբարել, և զխոտանն ամբարտաւան 'ի  
բաց ընկենուլ :

Երդ՝ զայսքան բանս խրատականս յի-  
նէն առ քեզ՝ զոր 'ի սէր վաղեմական մը-

րելի եղև յաչա հօր իւրոյ քան զամենեսին :  
Դաւիթ որ կրտսերն էր յեղբարս , զբարձ-  
րայօն հպարտութիւն հաստարազուկ և սոս-  
կավիթխար հսկայ Գողիաթու՝ որ միայն յիւր  
գօրութիւն ապաւինեալ էր , իսպառ նուա-  
ճեաց , սպանմամբ զնա . և սիրելի եղև Լու-  
տուծոյ և ժողովրդեան քան զՍաուլ թա-  
գաւ որ : Օ իմօրդ մերժեաց զպատուհաս Լու-  
ուածային բարկութեան խոնարհութիւն ար-  
քային՝ Աինուէացւոց , որ սակաւարառ քա-  
րոզութեամբ Յոմնանու էջ յաթոռոյ իւր-  
մէ , անմիջապէս և մերկացեալ զչթեղ փա-  
ռաւորութիւն արքայական զգեստուցն՝ բըր-  
ձաղբեաց եղև : Յորժամ ապօրինակ համա-  
րէր ամենափրկիչն Յիսուս թողուլ զոչխարս  
զընտանիս տանն իսրայէլի և շանց անհաւատից  
ընձեռել , զիմօրդ անյապաղ մերձեցաւ խնա-  
մով՝ ՚ի բժշկութիւն դստեր քանանացւոյն ,  
մինչ լուաւ զխոնարհագոյն պատասխանին ,  
և զյանձնառութիւն յաւէտ ստորին աստի-  
ճանի համարիլ իբրև զշուն ասպականաս-  
պաս լինել փշրանաց անկելոց ՚ի սեղանոյ  
մանկանց : Այրենի գաղանք չեն ումեք սի-  
րելի , այլ գառինք վասն խոնարհութեան  
գգուին յամենից : Լմենայն կարճահասակ  
տունկք պտղաւետք կամ փոքրագոյն ծաղիկք  
հոտաւետք՝ առաւել արժեն քան զբազմոս-

տեան բարձրուղէչ անբերրի մայրս լիբու-  
նանու :

Բնական է արգարե ջրոյ միշտ 'ի խորս  
իջանիլ, և կարծր մարմնոյ հակիլ 'ի կեդ-  
րոն, և ընդհակառակն թեթեւագոյն գոլոր-  
շեաց յօդս 'ի վեր բարձրանալ 'ի սկզբա-  
նէ անտի. նմանապէս խոնարհ անձանց 'ի  
բարձրութիւն հասանել՝ իրրե բնական գի-  
տեմք լինել. զի Մատուածային է հրաման  
որ տսէ. որ խոնարհեցուցանէ զանձն բարձ-  
րացի, և թէ մեծն 'ի ձէնջ և զիցի ձեր  
սպասաւոր. քանզի շի՛ք ինչ յառաքինու-  
թիւնս Մատուածահաճոյ քան զխոնարհու-  
թիւն, որպէս տսէ Մատուածարեալն Պա-  
ւիթ, պատարագ Մատուծոյ հոգի խոնարհ :  
Ուրեմն ահա այն շնորհափայլ բան Սիրաք  
իմաստնոյն՝ բաւական է զօրել մերս գուզ-  
նաբեայ բանից գովարանականաց յաղագս  
խոնարհութեան 'ի վկայութիւն հաստատու-  
թեան, թէ 'ի ներ հրոջ փորձի ոսկի և ար-  
ծաթ, իսկ մարդիկ ընդունելիք 'ի բովում  
խոնարհութեան. և այս փորձառութիւն առ  
ի՞նչ. առ որոշումն զբարի, բարին յամանս  
համբարել, և զխօտանն ամբարտաւան 'ի  
բաց ընկենուլ :

Երդ՝ զայսքան բանս խրատականս յի-  
նէն առ քեզ՝ զոր 'ի սէր վաղեմնական մը-

տերիմ եղբայրութեան մերոյ ստիպեալ ոչ  
ձանձրացայ երբէք իբրև ընծայ առ քեզ  
նուիրել, ընկալ ամենայն յօժարութեամբ  
սրտի 'ի խրատ՝ բարեկամ, ըստ որում յՄ.ս.  
տուժոյ և յՄ.ստուածայնոց յիշեցուցի քեզ  
սրբազան վկայութիւն կենսախրատոյս բա-  
նից՝ յապացուցութիւն անկեղծ ասաց-  
ուածոց իմոց. զի շատ լիցի քեզ այս խը-  
րատ, եթէ սչ 'ի կուրծս արարեալ անմո-  
ռաց կալցես 'ի մտի. որով զատուցեալ  
զանձնդ 'ի մահազեկոյց հպարտութենէ,  
զհոգեկեցոյցն կարես առ քեզ ձգել զօրեղ  
զսպեղանի հպարտութեան զխոնարհութիւն  
զփարեւին ամենայն առաքինեաց, որք նման-  
օրինակ լիապտուղ ծառոյն վայրահակ ոս-  
տոց՝ խոնարհագոյն ցուցանեն զանձինս. զի  
նոյն ինքն որ հեղն է և խոնարհ սրտիւ՝  
խնդրէ և 'ի մէնջ զխոնարհութիւն, ուսա-  
րուք յինէն ասելով. ապա զնորին նմանու-  
թիւն յանձին քում բերելով՝ երկնընթաց  
առաքինութեանց բազմաց ձեռնհաս լինել  
կարես բարեպէս, յառիժ երանաւէտ ուրա-  
խութեան խամբացեալ սրտի

Նուաստ եղբօր քում,

ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



## ՆԱՄԱԿ ԽՆԴՐԱՆԱՑ

Հոգեկցորդ բարեկամիդ խնդալ յաւետ .

Ընպայման բարիք մեզ համարիմք , զի շղթայապինդ ունիք ընդ սիրտ մեր զսերտ յօդաւորութիւն սիրաբուղիս սրտիդ . որով իշխեմք համարձակիլ զամենայն գաղտնիս սըրտից մերոց աներկեան յայտնել միմեանց , ոչ երբէք խիթալով ընդ անկեղծութիւն մըտերիմ եղբայրութեան մերոյ : Ի սոյն յուսադիր լեալ աներկբայ , և այժմ ելի 'ի խընդիր անձկալոյս , այն է շնորհել ընդ գրաբերիս զայս ինչ իր , որոյ կարի հարկաւորութիւնն ստիպէ զիս և այժմ 'ի ձանձրոյթ արկանել զանխոնջ բարերարդ . և ակն ունիմ 'ի քէն արդիւնաւորիլ անձանձիր . որով շնորհապարտ կացուսցես զիս գլխովին անկեղծ մտերմութեանդ :

Մնամ առասիկ եւ ես ակնապիշ սոլասեալ ,

Ն. Ծ. ԵՊԻՓԱՆՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ա Ռ Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ի Ի Ր

ՎԱՄՆ ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ԻՆՉ ԳՈՐԾՈՅ

Ճրագ լուսաւոր՝ փայլեալ դերբոյնի,  
 հարուստ վաճառող՝ անդին մարգարտի.  
 արթուն ուսուցիչ՝ մանկանց մերազնի,  
 կեցցես յանդորբու՝ յերկոսին կենի.  
 Ազբիւր քաղցրաբուրդի՝ ջրոյն կենդանի,  
 դրիչ տիրախօս՝ ցուցակ մատենի.  
 յորդոր մանկաւոյն՝ վարժիլ ՚ի բարի,  
 բազմաշխատ ձեռացդ՝ համբոյր նաւիրի.

Աշտեռանդ բարեփափագ սրտիդ իղձ  
 որ առ ազգս, ո՞ք քաջիմաստ պերճացեալ  
 ազգասէր, ստիպէ զիս մերձենալ և այժմ՝ ՚ի  
 գրիչ յայտնել զցնծալից բերկրութիւն սըր-  
 տիս, և ո՞չ ՚ի գովեստ. զի որպէս լուսոյ  
 չի՞ք կարօտութիւն այլում ճրագի, սոյնպէս  
 և ո՞չ իմաստնոց՝ գովութեան իմիք. և մա-  
 նաւանդ բազմազան բարեյիշատակ գործ ձեր  
 անմռունչ բարբառով գովէ զբարեսիրութիւն  
 ձեր, զոր դարձեալ կրկնակի ցուցէք ՚ի մօտ  
 աւուրս, ՚ի լոյս ընծայելով զմեծագործու-  
 թիւնդ աստուածատուր բազմախրատ հրա-  
 հանգօք մանկանց լցեալ մատենին՝ ՚ի շնորհս  
 վայելել ազգիս. պարծեցայց ապա այսուհե-  
 տե վստահապէս զվաղ ժամանակեայն գու-  
 շակելով զյառաջագիմութիւն շայկական

մանկուտյն . և դու ոչ այժմ անցաւորօքս ,  
այլ 'ի գալստեան տեանն պարծեսցիս . զի  
ոչ իբրև զքանքարաթագոյցն ամօթահար  
պատկառանօք , այլ իբրև զազնիւ ծառայ և  
հաւատարիմ ներկայացցիս առաջի տեանն  
մատուցանելով ընդ միոյ քանքարոյն զոր ըն-  
կալար , երիս և չորիս . քանզի իբրև զլուսին  
գեղեցիկ յընտիր արեգակնէ արդարութեան  
ձգեալ առ քեզ զլոյս հոգւոյն շնորհաց , լու-  
սաւորեցեր զմերազնեայ մանկունս բազումս ,  
որ 'ի բազում ժամանակաց հետէ ցանկա-  
յին ունիլ զայդ հոգեմէկար խրատաբանու-  
թեան հանդէս 'ի հրահանգութիւն վարուց  
բարեաց : Տի 'ի կենդանի հրոյն առեալ  
զկայծ երկիւղիւ և հաւատով՝ իբրև զկայ-  
ծակնամաքուր ունելեօքն հրեշտակի , նովաւ  
վառեցեր զածուխ բանիցդ 'ի կրակարան մա-  
տենի այդր արծարծմամբ հոգւոյն ջեռու-  
ցանել զսառուցեալ եռանդս ընդհանուր  
մանկանց ազգիս :

Աշեր փողար քաղցրանուագ Շստուա-  
ծային բարետաւիղ շնորհացն հոգեզուարթ  
հնչմամբ յականջս ամենից . զի 'ի բաց տա-  
րեալ զանձինս իւրեանց 'ի մահառիթ մո-  
լութեանց՝ զհամեղութիւն առաքինութեանց  
արդէն 'ի մանկութեան ընկալցին 'ի քիմս  
իւրեանց , և բարեսնունդ լեալ՝ երկնային

պարզեաց սուրբ արքայութեան լիցին որ-  
դեղիր և ժառանգ : Այլ զորօրինակ որքան  
բարձր իցէ արեգակն յերկրէ , այնքան ա-  
ռաւել ներգործել ճառագայթէ զշող նը-  
շուլից իւրոց 'ի հեռուստ . այնպէս և  
քոյդ հոգեխրատ բանիցդ ճաճանչք ոչ մի-  
այն 'ի մերձաւորս , այլ և 'ի հեռաւորս ծա-  
ղեցին լոյս մեծ փարատիչ խաւարի մոլե-  
կան կրից 'ի բացուստ : Քանզի որչափ ա-  
ռատ իցէ վառօդ 'ի թնդանօթի , այնպէս  
ուժգնութեամբ յարձակեալ յառաջս ըն-  
թանայ յաւէտ . սոյնպէս և ազգասիրիդ ա-  
ռատապէս ունելով 'ի թնդանօթի սրտիդ  
զվառօդ ( իսուսաւանդ սիրոյ ) ուժգին զօ-  
րութեամբ արձակեցեր որ 'ի քեզ էին ումքս  
կենսախրախոյս բանիցդ ընդդէմ երից գո-  
ռողացեալ թշնամեաց մերոց :

Ապա՛ զիա՞րդ ամենախնամն փակեցէ ըզ  
մուտ ծառոյն կենաց ընդդէմ բարեխնամիդ ,  
որ այդու բազմաջան աշխատանացդ ար-  
դեամբ յորդոր և պատճառ լիցիս բազմաց  
արժանիս լինել յախտենական կենացն 'ի  
մուտս . և կամ զիա՞րդ իբրև անծանօթ ար-  
տաքսել հրամայեցէ զձեզ որ անզադար  
բարբառով հրաւիրէք զամենեսին 'ի հար-  
սանիսն այն անապական :

Քանզի անմուռնչ փառաւորի հայր

մեր երկնաւոր 'ի մանկանց, որք ոչ միայն տեսանողք են բարեաց գործոց ձերոց, այլ և վայելողք բազմազան օգտիցն որ 'ի նմա. նա և այս աներկբայ յուսալի է թէ ընդունելի արասցէ ամենախնամն զհոգեւանդ բարեմաղթութիւնսն զձէնջ որ 'ի վայելողաց. յորմէ չունին երբէք դադարիլ, մինչդեռ ընդ իւրեանս ունելով հոտոտեսցին զայդ երկնապարգև փունջ անթառամ ծաղկանց քաղցրագոյն բանահիւսից, որպէս և յետին

ծառայ ձեր նուաստ

ԵՊԻՓԱՆՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

### ԿԱՐՕՏԱԼԻՐ ՆԱՄԱԿ

ԱՌ ՀԱԻԱՍՏԱՐԱԶԱՓ ԲԱՐԵԿԱՄ ՌԻՖ

Անհամեմատ սիրով շղթայապիւնդ կապեալ հոգեկից բարեկամիդ սէր եղբայրական փոխանակ սրտիս.

Ո՞ր սիրտ կարէ սփոփիլ թէ հեռացեալ գտցի 'ի սրտակից բարեկամին իւրոյ տեսութենէ. և այն 'ի բազում ժամանակս. ապա ես զհա՞րդ կարացից մտիթարիլ, որ

ոչ միայն 'ի քաղյր տեսութենէ աղնիւ սի-  
րելոյդ զրկեալ, այլ և բազմադիմի տրտ-  
մաթախիծ կասկածանօք վարանեալ կամ  
'ի մտատանջութեան, թէ 'ի դառնաղէտ  
ժամանակիս յայսմիկ յորպիօի կենցաղավա-  
րութեան իցէք, 'ի հանգստութեան եթէ 'ի  
տրտմութեան ինձ նման: Վանզի յորմէհե-  
տէ տարագիր եղեր աստի, աստեղանիչ  
լուսափայլութիւն վաղեմնական սիրոյ մերոյ  
մառախլապատ մնաց զերթ ձեռայնոյ. ընդ  
որ զցայդ և զցերեկ տրտմագոյնաց լեալ  
տանջիմ անմխիթար: Արօտակէզ սրտիս  
բաղձանաց բոց՝ յայն աստիճան երբեմն կրէ  
զօրութիւն ուժգնակի, մինչև կարծել ինձ  
թէ գուցէ՞ իբրև սրաթև թռչուն, կամ իբ-  
րև զօդապարիկ իմն արծուոյն օրինակաւ վե-  
րասլացեալ անձամբ հասանել առ սիրելիդ  
'ի տեսութիւն, եթէ բազմաղան հաբկսւոր  
գործոցս զբաղանք շիցեն խոչընդոտն իբրև  
սաստկաշունչ հողմ ընդդիմակ: Ահ. զի-  
մրդ կարացից յայտնել զստուգութիւն ա-  
սացուածոցս ապացուցարար, սիրելի. դու  
քեզն կարես իմանալ յիշելով զվաղեմի  
հազորդակցութիւն անկեղծական սիրոյ սըր-  
տիդ բոցափայլ վառմամբ անշիջանելեալ իբրև  
ղիմս: Սակայն եթէ կարելի ինչ լինէր, ո-  
չինչ յապաղէի աստ 'ի նամակի ծրարեալ

զսիրտս առաքել առ քեզ իբրև ընծայ, որ-  
պէս զի դէմ յանդիման ակներև տեսցես իբ-  
րև 'ի հայելոջ, թէ յոր եղանակ խանձոտ-  
եալ կայ 'ի տապախանձ ջերմութենէ սի-  
րոյս: Արեմն վայելուչ համարեցայ զանօթ  
սիրոյ առ իս թողուլ, և շփջինն զայն ջինջ  
սէր առ քեզ ընծայել գրութեամբ, գուցէ  
և յարգութիւնդ զճշմարիտ եղբայրութեանն  
կատարելով զօրէն, գուն գործել փութաս-  
ցիս յօժարութեամբ զորպիսածանոյց սիրա-  
նիչ գրութիւնդ շնորհել առ իս, զոր զը-  
լարթերես ցնծութեամբ առ ընկալայց յանօթ  
օրտիս իբրև երկնապարզև գանձ, կամ իբ-  
րև դեղ բժշկական միսթարութեան և ըս-  
փոփութեան սրտի

Նուաստ ծառայ

ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՌ ԲԱՐԵՊԱՏՃԱՌՀԱՅՐ ԻՒՐ

Խնամածու հայր բարերար.

Ըրդարև յոյժ ցանկալի և փափաքելի  
է միսթարութիւն որդւոց, եթէ վայելիցեն

Հանապազօր զսէր ծնողական . քանզի չիք առաւել քան զայս մխիթարութիւն Հանապազօրեայ . և շունին փոխարինութիւն առնել Հարստութեամբ և մեծութեամբ առ 'ի լինել երախտագէտ . նաև երանի է մանկանց այնպիսեաց , որք Հանապազ բախտաւորութեամբ իւրեանց հոգարարձու և աչալուրջ ուսուցիչ և խրատատու ունելով պատրաստի , իբրև մշակ արդիւնարար միշտ 'ի ձեռն որոց զարգանան և պայծառանան լուսակայլակ իմաստութեամբ առաջի ծնողաց իւրոց իբրև զջահ լուսատու , 'ի լուսաւորութիւն հոգւոց և մարմնոց . յորոց և ես անարժանս գոլով յայսմ բարեբաստիկ վիճակի , անդադար վայելել վայելեմ զսէր գորովագութ հօրդ անդստին 'ի մանկութենէս մինչև ցարդ . և զոր մեծն է ասացից , լինելդ նախկին բարերար պատճառ իմոյս վարժութեան յուսմունս բարեկրօնս և իմաստալիրս . որով ոչ սակաւ կենցաղօգուտս և հոգեձաշակս շահընկալեմ անձին իմում . որ 'ի վաղուց անտի հրահանգելով ընդ հովանեաւ խնամոց գերիմաստ ուսուցչաց . որք Հանապազ անդուլ անդադար տքնին և նոքա աչալուրջ՝ զիս զանարժանս քաջաշնորհ և ճոխագէտ առնել , որոց շեմ բաւական ճոխարար բանահիւսել շնորհակալութեան և



գոժարանութեան բարբառ զարժանագոյժ  
աշխատանաց նոցին և ձեր :

Եւ այց միայն սոյն բարեպատեհ գրոյս  
առթիւ պարտաւոր համարիմ զնուաստու-  
թիւնս, նախ գոհանալ զվերին Վախախնա-  
մութենէն յամենայն սրտէ և յամենայն անձ-  
նէ, որ ինքն է աղբիւր ամենայն բարութեանց,  
և առանց նորա ոչինչ կարեմք առնել. երկ-  
րորդ՝ հազարապատիկ ջերմեռանդ բարեմաղ-  
թութիւնս վերառաքել առ բարձրեալն Լստ-  
ուած վասն երկարութեան բարեբաստիկ  
ազնիւ կենաց որդեսիրիդ 'ի միսթարու-  
թիւն շնորհընկալ

Նուաստ որդւոյ քում

ԵՊԻՓԱՆԻԾ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ԽՐԱՏ ԱՌ ԱՐԲԵՑՈՂ ԱԶԳԱԿԱՆ ԻԻՐ

Ո՛վ անգուօք բարեկամ.

Ո՞րպիսի քարեղէն սիրտ գոյ 'ի քեզ. բոլորո-  
վին խստասիրտ եղեր, որ 'ի բազում ժա-  
մանակաց հետէ ոչ միանգամ երբէք երթ-  
եալ է քո 'ի տուն, և հայեցեալ 'ի վերայ  
խղճալի աղքատիկ և ողորմելի ընտանեաց

քոց՝ որք հոգեհատոր են քեզ, զի առաւել  
 քան զառաւել նքթելով նոցա շունին բը-  
 նաւ կարողութիւն հեծեծալոյ անգամ: Ո՛չ  
 կարեմ յոտն կալ, վասն զի նօթիս եմ ասէ  
 ինձ յերեկեան աւուր զաւակ քո, մինչ ես  
 ինքնս յայցելութիւն եկեալ ականատես  
 եղէ: Մինչև ցերբ դու զվաստակս քո վատ-  
 նես ՚ի գինետունն: Ի որբոքեալ սրտիւ ի-  
 մով մի գուցէ բազումս բարբառելով և  
 խտագոյնս խօսելով խորտակեցից զսիրտ  
 քո. միայն զայս բան Առաքելոյն յիշեցու-  
 ցեալ բաւական համարեցայց, որ ասէ. ե-  
 թէ ոք ընտանեացն խնամս ոչ տանիցի, ՚ի  
 հաւատոցն ուրացեալ է. բարւոք խելամուտ  
 լեր օէր իմ՝ բարւոք, թէ զի՞նչ ասել է.  
 որով գուցէ դրունք խնամոց սիրոյ քո բաց-  
 ցին, և քարեղէն սիրտ քո կակղացեալ, լի-  
 ցի մարմնական. և այնուհետև ՚ի չափազանց  
 արբեցութենէ քումմէ հրաժարեալ՝ հացա-  
 գին կալցես քեզ գթութեամբ մատակարա-  
 բել առ ընտանիս քո ըստ կարեաց քոց հա-  
 նապազորդական. իսկ եթէ ոչ լինիցիս ուն-  
 կընդիր սոյն բանի սրբազան Առաքելոյն, զա-  
 մենայն բանս Աւետարանի, և զկանոնագ-  
 րաց սրբազան Հայրապետաց համահաւա-  
 քեալ առ քեզ առաքել անօգուտ է:

ԵՊԻՓԱՆ  
 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

## ԽՐԱՏ

ՎԱՍՆ ԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՆ ԻՆՉ ԳՈՐԾՈՅ

ԵՂԲՕՐ ՄԵՆԻ

Ազնուաբարոյ սիրէլիդ իմ.

Տրտմալից եղէ յաւէտ, յորժամ լուայ  
թէ զժառանգութիւն եղբօր քո յափշտա-  
կել կամիս. զի՞նչ անգթութիւն եղբայր և  
զի՞նչ ագահութիւն. տեսց՛նաք՝ կարողաս-  
ցի՞ս արդեօք վայելել 'ի կեանս քո զայ-  
նոսիկ զամենեսին, զոր ունիս 'ի բազում ա-  
մաց ամբարեալ. զի ագահութեամբ անիրա-  
ւիս ընդ եղբօր քում տնանկի և մանաւանդ  
արենակցի. չե՞ է լուեալ քո զբան Տեառն  
վասն ագահութեամբ ամբարողի. անմիտ՝  
յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պա-  
հանջիցեն, իսկ զոր պատրաստեցերդ, ում  
լինիցի. բարի է մարգկան յառաջագոյն  
նկատել զվախճան զոր ինչ կամիցի առնել.  
որ անիրաւն կամ զրկողն շահաւորեալ է  
զբարիս բաց 'ի մնասուց, թէ հոգեկան և  
թէ մարմնական. հաճոյ թուիցի՞ քեզ ար-  
դեօք, յորժամ զնոյն անիրաւութիւն նա  
առնիցէ քեզ եղբայր, որ դու զայդ անի-  
րաւութիւն ջանաս առնել եղբօր քում. ա-  
պա զոր ինչ կամիս թէ արասցէ քեզ, այն-

պէս արասջիր և դու նմա : Ետուած մի  
արասցէ, եթէ ոք զարդար իրաւունս աշ-  
քատաց յափշտակիցէ, բոլորովին կորուսա-  
նել երևի զամենայն ստացուածս իւր զանա-  
զան փորձանօք. կամ 'ի ձեռն աւազակաց,  
կամ հրդեհիւ, կամ անյաջողութեամբ գոր-  
ծոց, կամ մահագուժ հիւանդութեամբ ըն-  
տանեաց և կամ այլ ինչ ապօրինակ վնա-  
սուք : Իսկ արդարաւաստակ անձինք թէ և  
սակաւ աշխատին, բազումս շահաւորին անկո-  
րուստ ունելով յինքեանս, և հանգիստ վա-  
յելեն անգորր կենօք. իսկ դու զորն կամիս  
ունիլ. արդար իրաւամբ բարգաւաճի՞լ բա-  
րեօք բազմօք, թէ անիրաւութեամբ ցեցա-  
կեր առնել զամենայն ստացուածս քո, և  
հոգեկան վիրօք տուժել զանձն քո. ընտրեալ  
դու քեզէն. զի չեմ բաւական ես քան զայս  
առաւել համարձակիլ խօսել առաջի մեծա-  
պատիւ եղբօրդ : Եթէ ունիցիս ականջս ը-  
սելոյ, բաւական է այսքան խրատաբանու-  
թիւն քեզ 'ի կրտսեր եղբօրէ քումմէ

ՅԵՊԻՓԱՆԷՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ԳԱՆԳԱՏ ՎԱՍՆ ԱՊԻՐԱՏ ԾԱՌԱՅԻ ԻՒՐՈՅ

Հոգեկցորդ մտերմիդ խորիմաստ մը-  
տացն խոհեմագոյն բերմանց կարօտալիր  
անձկանօք մատչիմ 'ի խնդիր.

Ըփսո՛ս դժբաղդութեան իմում սի-  
րելի՛ բարեկամ, զի այս ինչ պատանին՝  
զոր 'ի մանկութենէ անտի անդստին աշա-  
կերտեալ 'ի կրպակն իմ, ամենայն նեղու-  
թեանց պատահելոց յանձնառու լեալ յօ-  
ժարութեամբ, մարդասիրական խնամով սը-  
նուցի զնա սեղանակից առնելով ընդ իս .  
մինչ զի աչացս մին զարենակից զաւակն  
իմ համարէի, և միւսն զսա . այսու ամե-  
նայնիւ յամենայն եօթնեկի զվարձս իւր ան-  
թերի տայի նմա, որ նոյն դրամովք ևս 'ի  
չուկայն ազնիւ կրպակ մի ստացաւ եկամուտ  
ինքեան . բայց այժմ յայսմ ամի մեծի ապե-  
րախտութեամբ ջանայ հատուցանել զփո-  
խարէնն 'ի ձեռն քանի մի չարախորհուրդ  
թշնամեաց իմոց, որք նախանձէին առ իս ըն-  
կեր իմ լինելոյն աղագաւ . չար խարդախու-  
թեամբնոցին այժմ ապստամբեալ է զայս ա-  
նիրաւութիւն առնելով յիս . զվեց տարեկան  
վարձ՝ զոր անթերի հատուցանէի նմա յիւ-  
րաքանչիւր եօթնեկի, կրկին պահանջէ յինէն  
այժմ . որով ստապատիր բանիւք աղերսա-

գիր մի արարեալ առ դատաւորն գանգա-  
տի զինէն: Հորմէ հարկեցայ 'ի վաղուեան  
աւուր կամ անձամբ անձին կամ բնակա-  
լաւ երթալ անգր. ուստի աղաչեմ զմտեր-  
մութիւն քո, եթէ կարելի իցէ՝ գայցես ընդ  
իս, և վաղեմնական բարեկամութեան անա-  
ղօտ նշուլիւք օգնել փութասօջի՛ր վասն ար-  
դարութեան. թէպէտ անիրաւութիւնն մարդ-  
կային՝ ոչ կարէ շիջուցանել զիրաւունս Մտ-  
ուածային, բայց չունիմ ընդիս փաստարան  
որ բանագէտ և իրաւախնդիր. վասն զի  
պատանիս այս՝ որոյ ձեռք իմ պաշտէին ըզ  
խնամողականն հոգատարութիւն 'ի սնունդ  
նորա բարեպէս. զի եթէ զվեց տարեկան  
վարձս իւր չէր առեալ յինէն, ուստի՞ կա-  
րողացաւ քսան հազարից գնել զկրպակ  
'ի շուկայն. որ բնաւ երբէք ձեռնամուխ չէ  
եղեալ յայլ ինչ գործ շահեկանութեան մին-  
չև ցարդ. ուրեմն յայտնի երևի թէ ան-  
թիւ գողութիւնս արարեալ է 'ի տանէ իմմէ,  
ահաւասիկ 'ի քննին լեալ պահանջելոց եմ  
'ի նմանէ բազմութիւ դրամս որ յայսպիսի  
կասկածանս արկ զիս ահամայ:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ԲԱՂԻՈՒՀԱԿԱՆ ՎԷՊ

ԻԻՐ ԶԿԱՄԻԼ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵԼ ԸՆԴ ՑԱՄԱՔ

Յարգոյ սիրելի.

Լուեալ է իմ՝ թէ 'ի մերձակայ աւուրս ճանապարհորդելոց ես յԱրգիպտոս քաղաք 'ի գործ վաճառականութեան. Լստու ծոյ ուղորմութեամբ յաջողաձեռն լիցիս 'ի գործ. Ուստիայէլ հրեշտակ զօրավիգ և պաշտպան լիցի քեզ հանապազ, մանաւանդ 'ի պանգրխտութեանդ այդմիկ. բայց սիրելիս՝ զիմորդ զվաղաժաման անկասկածաւոր աղնիւ ճանապարհորդութիւն ծովու թողեալ, աներկիւղ 'ի մէջ բազմավտանգ կասկածանաց անկանիւ վստահիս, լեռնաշրջիկ լեալ ցամաքային ճանապարհորդութեամբ անխոհեմաբար. յորում ոչ սակաւ յաճախէ ճանապարհորդաց կերպառկերպ մահառիթ վստանգ, զորոց զքանիցս թուել առաջի սիրելութեանդ աւասիկ ստիպի՞մ 'ի համուզումն առ բարին, Տի 'ի լերինս և 'ի վայրս անապատի և 'ի փապարս լեբանց և 'ի միջի անտառաց եղեգանց անթիւ գտանին գիշատիչ մարդակեր գազանք, յորոց ժանտաժանիք տեսութեանց և եթ՝ ահաքեկ լինին

մարդիկ յանկարծուստ պատահմամբ . թող և  
ընդ նոսին բազմութիւն բազմատեսակ սող-  
նոց և օձից . յորոց 'ի ժանեաց և 'ի սըրտ-  
մտութեանց հրացանիւ անգամ հազիւ կա-  
րասցես զերծանիլ . որք իւրաքանչիւրք զա-  
նազան եղանակաւ զօրէն մահացուցանել ըզ-  
մարդ . զորօրինակ նետ օձն և իժն՝ յար-  
ձակմամբ 'ի վերայ . հիգրանն՝ զազրահո-  
տիւ իւրով . կուրացուցիչ թքացայտն՝ թուք  
արձակելով . բասիլիսկոսն՝ միայն հայելով .  
թող զասպետն և զվիշապն՝ որք թշնամի  
մեծ են մարդկան . և սոքա ամեներին վնա-  
սաբեր գոլ գիտեմք ճանապարհորդաց : Աշ-  
եթէ ձեռնարկ գտանիցի պատերազմական  
խոռովութիւն սահմանակից թագաւորաց , ընդ  
որ ճանապարհորդելով ո՞րպէս կարես ժա-  
մանել անվնաս 'ի նպատակ քո . քաւ՝ մի լի-  
ցի քեզ այդպիսի վտանգ մահառիթ սրոյ  
ճարակ գտանիլ , եղբայր՝ մի . և 'ի նեղսա-  
կիր անձուկ ճանապարհի որ գտանին 'ի հո-  
վիտս լերանց , գիտես՝ ո՞րչափ վտանգաւոր  
է , յորժամ երիվարդ ընդ անցանելն ընդ  
անցուկ ճանապարհն , գայթիտոն եղեալ  
լպրծեսցի , և անկցի 'ի ձորն , անձինդ մա-  
սունք իբրև քանի՞ս թուել ունիս անօգնա-  
կան լեալ յումեքէ . և գերեզման քո անտես  
և անյայտ կամիս առնել 'ի մէնջ , և 'ի կող-



մանս Մրարիոյ՝ գետոց և աղբերաց ջուրց  
սակաւագիւտ լեալ, 'ի ծարաւու պասքիլ և  
մեռանիլ ստէպ պատահեալ է ճանապար-  
հորդաց : Ալ Եթէ 'ի ճանապարհի հիւան-  
դանայցես՝ զո՞ր բժիշկ կամ զո՞ր բարեկամ  
և ազգական կարես գտանել 'ի լերին յայն-  
միկ, տալ անձինդ դարման : Ալ Երիվարիդ  
Եթէ յանկարծ սատակումն ինչ պատահի-  
ցի՝ զհա՞րդ կարես յետիոտս ընթանալ զօրն  
զողջոյն բնածին թուլամարմին տկարութեամբ  
քով : Ալ զոր մեծն է ասացից . քանի՞ քանի  
սպառազէն աւազակք, որք 'ի թագստիկան  
հանապազ 'ի քարանցաւս վասն ճանապար-  
հորդաց, գողութեամբ կենցաղաւարիլ . Ե-  
թէ սուսերամերկ յարձակիցին յանկարծուստ  
'ի սպանումն, զի՞նչ բօթալի լուր աստ առ  
մեզ . ո՞րքան լալիւն և ողբումն . որպէս և  
պատահեալ գոլ պատեն այս ինչ վաճառա-  
կանի ումմն . զի 'ի ճանապարհորդութեան  
խրում եկեալ հասեալ արիւնդուշտ աւազա-  
կացն 'ի վերայ նորա, զամենայն ինչ նորին  
յափշտակեալ սրախողխող սպանեալ են :

Այա՛ այսպիսի մտացածին գործս ար-  
ժանի՛ է 'ի բաց թողուլ յետ ծանուցանե-  
լոյս զբազմալտանգ փորձանսն, որ պատա-  
հին 'ի ցամաքային ճանապարհի, և փու-  
թալ վայելել որ ինչ առ բարին և օգտա-

կարն դիտէ կայանալ անվնաս : Այժմ ու-  
նիմք զշոգենալ :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՆԱՄԱԿ ՄԻԻԹԱՐԱԿԱՆ  
ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ ՀՕՐ ԲԱՐԵԿԱՄԻ  
Յարգապատիւ բարեկամ.

Արդարեւ մեծ տրտմութեան եղև առիթ  
նուաստիս լուր մահուան հօրդ բարերարի .  
և յիշատակ նորին մեծ տրտմութիւն բերէ  
ամենեցունցս . բայց սակայն՝ սիրելիս , թէ-  
պէտ ինքն զրաւեցաւ 'ի կենաց աստի , իսկ  
զառաքինութիւնս իւր եթող առ քեզ յիշա-  
տակ , զբարի վարս՝ զխոնարհութիւն և ըզ  
հեզութիւն իւր . որ յիրաւի անկորնչելի  
գանձ են . մանաւանդ ընտիր և անկեղծ  
եղբայրսիրութիւն իւր՝ զոր ունէր . որովոչ  
սակաւս շահաւորէր անձին իւրում զառա-  
քինականն գործ 'ի պաշար յաւիտենականին :  
Տէր Հիսուս Քրիստոս մարդասիրական  
գթութեան խնամով լուսաւորեալ զհոգի  
նորին , երկնային ամենացանկալի սուրբ տե-  
սութեան իւրում արժանի արասցէ . և քեզ

և ամենայն ընտանեաց՝ քոց երկար կենդանութիւն տացէ : Եկն ունիմ արդարեւ գործագիր լինել քեզ անշուշտ, զոր ինչ ուսեալ է քո՝ ի նմանէ զբարեմասնութիւն առաքինական . որով կարողասցիս արժանաւորութեամբ՝ զարգանալ շնորհօք և իմաստութեամբ յօրինակ բարեաց լինել բարեբողբօջ և բարեմոյն զաւակացդ նմանօրինակ լուսահոգի առաքինի հօր քում բարեսիրի :

Ողջ լեր յաւետ :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՊԱՏԱՍԻԱՆԻ

ՎԵՐՈՅԻՇԵԱԼ ՆԱՄԱԿԻՆ

Մշտնջենական մխիթարութիւն սրտիս բարեխրատ անկեղծ բարեկամիդ սեր յաւետ ՚ի սրտեա .

Ենչէջ, գիտեմ արդարեւ մշտարորբօք սիրոյ ձեր վառարան յամենայն առթից գլխբարդգութեան, զոր ունիք ՚ի վաղուց անտիանդատին . որով յօգնութիւն ինձ ստէպ հասանելով զփրկչաւանդ եղբայրսիրութեանն

կատարէք զօրէն անշուշտ . և մանաւանդ  
մարգասիրական խնամով տրտմահազորդ եղ-  
բարց բազմաց մխիթարութիւն ձեր՝ ովկա-  
րէ երբէք թուել . յորոց սակի է յայսմ  
նուագի ևս հոգեշնորհ մխիթարական բանից  
ձերոց նամակագրութիւն . շնորհակալ եմ  
մեծապէս , յորմէ իբրև ՚ի մեծի հոգեշահ  
մատենէ քաղեցաք ոչ սակաւ ժուժ համբե-  
րութեան դառնաղէտ ցաւոց բազմամեայ ե-  
րախտաւոր ծերունի հօրս ննջեցելոյ . զորոյ  
տէր Հիսուս արժանաւորաց սուրբ աղօթիւք  
հանգուսցէ զհոգին յերկնից խորան սուրբ  
արքայութեան . և քաղցրահայեաց լուսեղէն  
սուրբ տեսութեան իւրոյ արժանի արասցէ  
երանական բանիւն՝ թէ մ՛ուտ յուրախութիւն  
տեսան . և ձեզ համայն ընտանեօք ձերովք  
երկար կեանս անդորրականս շնորհեսցէ .  
զի շունիմ զայլ մխիթարութիւն այսուհետև  
քան զձեօք և զձերայնովք :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Դ Ա Տ Ա Ր Կ Ա Շ Ո Ւ Ր Ջ Մ Ա Ն Կ Ա Ն

ՀԵԳՆԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

Ո՛վ հանգստաբարոյ ընկեր բազմագետ.

Օր՞նչ օգուտ կարիցես քաղել յայնմ դպրոցէ, ուր ոչ գտանիցիս շարունակ զամենայն աւուրս 'ի գործ. զի ոմանց այսպէս արարեալ, զուրկ իմաստից և գիտութեանց գտանին. և յետոյ հարբ և մարբ տրտընջան զդպրոցէ և զանձանց ուսուցչաց, թէ յայսքան բազում ամս սկսեալ գոլով 'ի գործ, դեռ ոչ կարացաք մտանել 'ի կարգս գիտնոց. և դու ըստ սոցունց օրինակի առնիցես տանէ 'ի տուն շրջելով կամ 'ի պարտէզս զբօսնլով, կամ 'ի խաղս մանկականս պարապելով. մերթ 'ի դպրատան գտեալ և մերթ յայլում տեղուջ, ժամավաճառութեամբ և անպիտան զբաղանօք պաշարեալ մշտափոյթ չլինիս 'ի գործ, այժմէն ընկալ յինէն ճշգրիտ զուր. զի այնպիսեաց նման յար և հանապազ տրտնջելոց ես բարբանջմամբ զայնպիսեաց, որ տընին մեծաջան սիրով խնամել զքեզ յուսմունս ճահողապէս: Յորոց հարկադրեցայ 'ի խրատաբանութիւն. քեզ է բանս այս սիրելիս. զի ահաւասիկ

ակներև տեսանեմ զքեզ 'ի կարգս նոցա .  
որ երբեմն գտանիս իբրև առաջօր իմն կամ  
իբրև զճիւաղ ողջոյն , և 'երբեմն անյայտ  
լինիս քանի ինչ աւուրս . յոր վաճառատե-  
ղի կամ յոր բեհեզաստան շրջիս . զի՞նչ է  
անուն գործոյդ . յայնպիսի ժամանակս ա-  
ռևտրական զի՞նչ գործ ունիս . շահաւոր  
իցէ արդեօք գործդ թէ ոչ . երանի թէ  
իմացեալ և իմ զայդ շահաւետ գործ բախ-  
տաւորութեամբ՝ ընկեր լինէի ընդ քեզ . քան  
թէ 'ի դպրոցս անտանելի շարքաշուծեամբ  
զամենայն աւուր հազար երկնուկի քար իբ-  
րև զբեռնակիր 'ի յուս բարձեալ վեր 'ի վայր ,  
և վայր 'ի վեր կրելով տազնապէի հանա-  
պազօր 'ի ձանձրութիւն հոգեւտանջ :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ  
ԱՌ ՓԵՍԱՅԱՑՈՒ ԲԱՐԵԿԱՄՆ

Հոգեկցորդ սիրելի .

Մեծապէս շնորհակալ եմ , որ միշտ ու-  
րախացուցանէք զմեզ ողջունադրիւ ձերով .  
յորմէ ծանօթացեալ ձերդ ողջկեցութեան

և անդորրութեան, իբրև մեծի աւետօք  
 ցնծացեալ բերկրիմ յաւէտ, քանզի աւե-  
 տամատոյց լուր ցանկալի ողջկեցութեան եղ-  
 բօր՝ ուրախառիթ է բաւական. եղբօր  
 հաւատարմի և սրտակցի : Այլ զոր լուայ  
 զպատրաստութիւն հանդիսի հարսանեաց  
 ձերոց, զոր հանդերձեալ էք կատարել  
 յառաջիկայ կիւրակէ, կրկնապատիկ ուրա-  
 խացայ, ըստ հրաւիրական քանից ձերոց  
 պարտ վարկայ 'ի նոյն արժանագով հան-  
 դէս ուրախութեան ձեր ներկայ գտանիլ 'ի  
 շնորհաւորութիւն և յուրախակցութիւն յայ-  
 նրմ աւուր, որպէս օրէն է խնդալ ընդ  
 խնդացողս, մանաւանդ յանկեղծ բարեկամս :  
 Ուստի շնորհ ունելով մեծապէս զմտերմու-  
 թենէ ձերմէ, խնդրեմ յԱստուծոյ ամենա-  
 կալէ, զի երկոցունցդ պսակելոց տէր Աստ-  
 ուած միակամ սէր շնորհելով լցցէ զձեզ  
 անպայման ուրախութեամբ և ցնծութեամբ  
 և բարգաւաճ արասցէ օրհնութեամբ որպէս  
 Հակոբու և Սաքելի, 'ի մխիթարութիւն և  
 'ի ցնծութիւն բարեսէր ծնողացքոց և հա-  
 ւուց և ամենայն սերնդոց, յորոց և ինձ

Նոնաստապոյն Էղբօր քում  
 ԵՊԻՓԱՆԻՍ  
 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ

Ի ԽՆԴԻՐ ԵԼԱՆԵԼ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՍՏ ԱՌԱՋԻՆ ԽՆԱՄՈՅ

Խնամառատ հայր քարերար:

1

Թեպէտ 'ի վաղ ժամանակի ստէպ ընկալնլով զսիրալիր նամակդ, մխիթարէի շարունակ իբրև անտրտում ուրախութեամբ բերկրեալ, եւ իբրև երկնաձիր պարգևօք պերճացեալ, որ հանապաղ գուն գործեալ փութայիր անքուն ակամբ խնամել զնուստ ծառայ քո կատարելով զվարժութեանս թրութիւն, արգասաւոր և պտղատու առնել զիս իբրև զծառ բանաւոր ոռոգանելով յառատահոս աղբերէ հոգւոյն շնորհաց:

Ահ, ուր այժմ նոյն մարդասիրական հեղեղ խնամոց խրատաբանական նախկին բարելուր նամակացդ, որով ոչ սակաւ գթասիրեալ յիս ոռոգանէիր. լստ յանցանաց իմոց մի լիցի ցամաքիլ նոյն սէր հայրախնամ բարերարիդ, աղաչեմ. քանզի այս երեք ամիս է, յորմէ հետէ ոչ ընկալայ զնամակ 'ի բարեխնամ տեառնէդ:

Աթէ արդարև յանցանօք իւիք զայրացուցեալ է իմ զտէրութիւնդ, զայն ևս յիշեցուցանել՝ բարերարիդ է գործ խնա-



մողական պաշտպանութեամբ, որով զստուն-  
գանելն իմ ճանաչելով, զամօթի հարեալ  
ուղղեցից զգնացս իմ ըստ վայելութեան  
բանականին :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՎԱՍՆ ԱՂՔԱՏԻ ՈՒՐՈՒՔ

Համեստաբարոյ սիրելիդ իմ.

Եհաւասիկ գրաբերս այս, որ թէպէտ  
աղքատասէր ոմն գոլով, ո՛չ սակաւ 'ի թի-  
կունս հասանէր երբեմն կարօտելոց. մինչ  
զի ոմանց տնանկաց ամեական ինչ դրամ  
կամ իւղ կամ որից ջամբէր. բայց այժմ  
աւուր պարենի ո՛չ ունելով զհաց, անօգ-  
նական և անտերունչ մշտաջարչար տագնա-  
պի յաղքատութեան հնոց, ըստ դառնա-  
գոյն դարձուածոց բազմավրդով ժամանա-  
կիս բերմանց. և զի՛ ամաչէ յայտնել ու-  
մեք զողորմելի կեցութիւն իւր ջրաւորութեան.  
բայց իմ գրակակից լեալ նմա, իրազէկ եղէ  
զանմխիթար յոգնատանջ կենաց իւրոց.  
փոխան նմին այժմ ես ինձէն հարկեցայ ա-  
ղերսաբանել աղքատասէր գթառատ տէրու-

Թեանդ , զի ըստ բարեյօժար կամօց քոց  
 գուն գործեալ զարժանաւորն գործեսցես  
 առ սոյն տառապեալ անձն զողորմութիւն ,  
 որ պարագլուխ է յառաքինութիւնս Ըստ-  
 ուածահաճոյ , ապա եթէ այսքան պանծա-  
 լի է ողորմութիւնն և սիրելի առաջի Ըս-  
 տուծոյ , ողորմածն քանի՞ցս առաւել . ահա  
 Յաւիթ գեղեցիկս համառօտէ , թէ երանի՛  
 որ խորհի զաղքատն և զանանկն , յաւուր  
 չարի փրկէ զնա տէր :

ԵՊԻՓԱՆ  
 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԿԱՏԱՐՄԱՄԲ ԽՆԴՐՈՅՆ ՈՒՐԱԽԱԿՅԻԼ  
 ԸՆԴ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Յարգապատիւ Էղբայր .

Ըստ որում պարտաւոր եմք զհաճոյս  
 միմեանց կամիլ յօգնականութիւն , և ՚ի նոյն  
 տքնիլ գործով . վասնորոյ զայս ինչ խնդիր  
 ձեր՝ զոր պատուիրեալ էիք ՚ի վաղուց նը-  
 լաստիս կատարելագործել , ո՛չ կամեցայ լով  
 նամակագրութեամբ խօսիլ . զի եթէ յա-  
 ռաջ քան զգործ տկարութիւն խոստա-  
 նայի , հարկ լինէր ինձ լսել զյանդիմա-

նութիւն ինչ իբրև անփոյթ լինել եղբօր  
օգտի . իսկ եթէ պատրաստ եմ գուն գոր-  
ծել ասելով վստահութեամբ խոստանայի  
կատարելագործել, յետոյ գուցէ անկարող  
գտեալ ամօթով լինէի առաջի մեծապատիւ  
եղբայրութեանդ : Սակայն մինչև ցարդ ա-  
ռանց պարծանաց և առանց խոստման ջա-  
նալովս, ամենախնամն Ղստուած ահա յա-  
ջողեաց ըստ հաճոյից քոց, ուրախ լեր : Ու-  
րեմն աղաչեմ, ներողամիտ լեր անպատասխա-  
նի թողլոյս աղագաւ զսիրածրար մարգար-  
տահիւս նամակ եղբայրութեան ձերում :

Ըրդարև հաշէի մաշէի տրտմութեամբ  
մեծաւ նաև 'ի վերայ հիւանդութեան ան-  
ձինդ սիրելւոյ, սակայն բժշկապետն Յիսուս  
առողջացուցեալ զսիրելիդ, ուրախացոյց  
զմեզ զամենեօին աստանօր, փառք մարդա-  
սիրական Սախախնամութեան իւրոյ . և զայդ  
ցաւալի տրտմութիւնդ յառաքինական կարգ  
համարեսցի յառիթ յաւիտենական ուրա-  
խութեան : Աւ միջնորդութեամբ աղօթից  
սրբոց հարց՝ մի՛ ևս կրկին դիպեսցի այսպի-  
սի ցաւալի հիւանդութիւն անձինդ բարե-  
սիրի . այլ քաջառողջ կենօք յանդորրու-  
թեան կացցես հարուստ ամօք 'ի մտիթա-  
րութիւն ինձ ,

Ն. ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱԻԵՏԱԼԻՐ ՆԱՄԱԿ

Վ Ա Ս Ն Գ Ա Լ Ս Տ Ե Ա Ն

Պ Ա Ն Գ Խ Տ Ա Կ Ի Ց Ա Ջ Գ Ա Կ Ա Ն Ի

ՄԷԾԱՊԱՍԻԻ ԷՊԲԱՅՐ.

Ի մեծի ուրախութեան լինելով նուաստըս՝ արդէն կամեցայ ծանուցանել սիրելիութեանդ. զի քեռայրն մեր՝ ի հեռաւոր երկիր անդ՝ ի պանդխտութեան գոլով՝ ի վաղուց, զորոյ զորկենութեան նամակ չե էր ձեզ և մեզ ընկալեալ՝ ի նմանէ մինչև ցարգ. բայց յաւուրս յայսոսիկ բախտաւորութեամբ դէպ լինելով նուաստիս, տեսաւորեցաք ընդ միմեանս գրկախառն սիրով՝ ի նմին քաղաքի. և յուսադիր լիցուք գալստեան նորին՝ ի հայրենիս՝ ի ձեզ՝ ի մօտ աւուրս. ըստ որում ոչ սակաւ փոյթ կալայ համոզել. զի փոխանակ նախնւոյ տրտմալիբ կարօտակիզութեան մերում ցնծասցուք և ուրախ լիցուք յաւուր յայնմիկ : Բարեմաղթեցէք ուրեմն առ Տէր, զի ի միասին՝ ի միում աւուր ներկայ գտցուք ի նոյն հանդիսի ուրախութեան ամենայն ընտանեաց և բարեկամաց մերոց :

Ողջ լէք հանապազօր:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՍԿՆՍՏԱՆԻ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՎԷՊ

Վ Ա Ս Ն Ո Ի Բ Ա Յ Ո Ի Թ Ե Ա Ն

ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ԶԳՐԱԻ

Պաղատիմ առ. քեզ իրաւախոն դատաւոր. նայեմա՛ առ իս եւ օգնեմա՛ ինձ տառապելոյս եւ զրկելոյս:

Ճանցելում ամի մինչ զութն հազար դահեկան առեալ իմ յայս ինչ յառնէ, ազնիւ մատանի մի ետու նմա առ 'ի գրաւ իբրև տասն հազար դահեկանաց. բայց յանցեալ եօթնեկի մինչ գնացի հատուցանել զպարտս իմ, 'ի խնդրելն իմ զայն մատանին, անիրաւի յիս ուրանալով. և զայդպիսի մատանի չեմ առեալ 'ի քէն ասելով վանէ զիս յարտաքս. և յերեկեան աւուր լուայ յուժեմնէ, թէ զայն մատանին գրաւ եղեալ է յայլում վասն պարտուց իւրոց, որ յազագս տան նորոգ կառուցելոյ: Ահաւասիկ վաղածանօթ տէրութեանդ այս ինչ մեծատունն, որ քսան հազար դահեկան կանխիկ կամէր տալ 'ի գնել զայս մատանին զոր ոչ հաճեցայ տալ. և այնու պատճառաւ բարեկամութիւն մեր բարձաւ 'ի միջոյ: Այլ անիրաւս այս յօժար է մեծապէս զգրամոցն զանցառու լինել ապիրատութեամբ նեն-

գաւ, և շնորհել ինձ, քան տալ ինձ զգրաւ  
զայն հաղուագիւտ մատանին. որ կրկնակի  
ունի արժէք քան շինողքելիսն. ուստի մեծի  
իրաւախոհութեանդ ապաւինեալ առ քեզ  
դիմեցի այսու ազերսագրութեամբ գթառատ  
տէր. արդար իրաւամբ դատմամբ պահան-  
ջեսցես զմատանին իմ վերոյիշեալ մեծա-  
տան վկայութեամբ. տէր Յիսուս անդոր-  
րական կենօք անսասան պահեսցէ զտէրու-  
թիւնդ բարեբողոք սիրելի զաւակօքդ հան-  
գերձ:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ը

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ռ Մ Ե Մ Ա Ր Ո Ւ Ո Մ Ն

Վ Ա Ս Ն Ա Ջ Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ո Ւ Ր Ո Ւ Ք

Ի ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԺՈՅ

Ազգասիրութեան Աստուածահաճոյ ա-  
ռարինութեամբ գերբնտիր պանծացեալ վը-  
սեմափառ, գթառատ տեառնդ բարերար  
ձեռաց համբոյր ծառայական ընծայելով՝  
մատչիմ յաղերս խոնարհական դիմօք:

Չկամիմ ձանձրացուցիչս լինել բարե.

լուր լսելեաց քոց , երկարաբանութեամբ  
պատմելով զորպիսութիւն ցաւալի եղելու-  
թեանս , տէր բարեգութ . որ վասն մեղաց  
իմոց եղև յանցեալ եօթնեկի 'ի թաղս մեր .  
և ես ինձէն հարկեցայ աղերսաբանել  
տէրութեանդ համառօտ ծանուցմամբ : Օր  
այս ինչ առն յաւուր միում 'ի հիւր գնա-  
ցեալ գոլով , 'ի վերադառնալն 'ի տուն ե-  
տես , զի իբր հինգ հազար դահեկանաց ինչս  
գողացեալ են , զոմանս աւազակաց ետ բան-  
տարգել . բայց աւասիկ յերեկեան աւուր  
զսպասաւոր իւր ' որ իբրև հնգետասանամեայ  
պատանի ոմն է , և 'զայն յանպատմելի  
տանջանաց ներքոյ եգեալ է ընդ նո-  
սին . որ կարի պարզամիտ և միամիտ է  
փոքր հասակաւ իւրով , խօսիլ անգամ  
ոչ գիտէ . և ոչ զգործ ինչ բանականու-  
թեան . եթէ հայիս յերեսս և յայլանդակ  
դէմս նորա Ազորեան , իսկ և իսկ ճանա-  
չես զանկարութիւն նորա յայգպիսի գոր-  
ծառնութիւնս գողութեան , որ հնարագէտ  
ճարտար մարդոյ է գործ , և ոչ այսպիսի  
բնտիւն անկիրթ լիննասուն սոպա ումեք .  
յորում բանականութեան ինչ նշոյլ ոչ ե-  
րևի 'ի շարժմունս . քանզի բնաւ ոչ գիտէ  
թէ որպիսի մետաղ իցէ արծաթն . և ամե-  
նեին ոչ գիտէ կերպ ինչ գողանալոյ . մի-

այն թէ վասն աւուր պարենի սպասաւոր է առ նա :

Ահաւասիկ ազգասիրական ստիպմամբ Հարկեցայ վկայագրութեամբ աղերսաբանել տէրութեանդ , նկարագրութեամբ զձե և զհասակ սոյն ողորմելոյն . զի և դու ըստ ազգասիրական բարոյիցդ բերմանց ընդունելով զաղաչանս իմ , փութասջիր զաստուածահաճոյն գործել բարութիւն ազատելով զսոյն տառապեալ անձն 'ի չարաչար լլկանացն . որ յաջողածեան ես յայսպիսի առաքինութիւնս . զոր աէր Յիսուս անգորրական կենօք անսասան պահեսցէ , և զհովանաւորութիւն քո խնամողական . անպակաս արասցէ 'ի լուսաւորչածին ազգէս 'ի միութարութիւն այսպիսի , անտերունչ խըղճալեաց :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՊԱՏԱՍԻԱՆԻ ՍԻՐՈՅ ՆԱՄԱԿԻ  
Ա Ն Կ Ե Ղ Ծ Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ի Ո Ի Ր Ո Ի Ք

Գեղեցկափթիթ' ծառայդ բանական,  
Ընծայի յաւէտ' սէր անկեղծական:

Յիսուսաւանդ սիրով պերճացելոյդ աղ-



նիւ մատանց սիրասքանչ գրութիւն ժա-  
մանեալ առ նուաստութիւնս, ելից զիմ  
բազմաժամանակեայ կտրօտութիւն: Կանգամ  
ցնծութիւն մեծ, զի բոցափայլ շառաւիղ  
անկեղծ սիրոյդ լուսասփիւռ ցոլացեալ յի-  
մանալի աչս հոգւոյս 'ի ձեռն օգաչու բա-  
նից սիրածրար քարտենիդ, զառաօտ ցըն-  
ծութեան պարգևեաց ինձ վարանելոյս յաղ-  
ջամուղջ գիշերի կտրօտութեան: Աւետա-  
բարբառ լուր ձերդ քաջողջութեան հասեալ  
'ի լսելիս զուարթացոյց զթմբեալս. խորիսխ  
անուշութեան 'ի բճճէ սրտիդ բղխեալ  
քաղցրացոյց զքիմս հոգւոյս: Փունջ անու-  
շահոտ՝ երփնագեղ անթառամ ծաղկանց 'ի  
տնկախիտ բուրաստանէդ ուղերձեալ զմայ-  
լեցոյց զսիրտ հոգեհատոր եղբօրդ: Հողմն  
քաղցրասիւք 'ի լերանց բարձանց շնչեալ  
զծուխ վարանական կրիցս ցնդեաց: Հօղ  
մանրատեղաց յամպոյդ հովանացելոյ անձ-  
րեալ, զերաչտացեալս սիրտ զովացոյց: Աշ-  
թէ 'ի միակ սրտի հոգիք բազումք անկեղծ  
բարեկամաց տաւաղին, ապա 'ի վշտանալ  
միոյն, վշտանան ամենեքին. և 'ի բերկ-  
րիլ միոյն, 'ի ցնծութեան գտանին ամե-  
նեքին: Աւստի զի՞նչ առաւել ինձ տա-  
րացոյց ուրախութեան առիթ բան զձե-  
րոյին հարազատութեան բարելաւութիւն:

Յոյր սակս և իմ գիտելով չափ զքաջող-  
ջութիւն ձեր 'ի դառնաղէտ ժամանակի աստ,  
օն անդր քան զպայման բերկրիմ ուրախա-  
ցեալ յաւէտ :

Ողջ լեր 'ի տեր բարգաւաճեալ ամե-  
նայն բարեաց լիութեամբ 'ի ցնծութիւն սրբ-  
տի նուաստ եղբօր քում,

ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՍԻՐԵԼՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ  
ՈՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ  
ԲԱԶՈՒՄ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲՆ ՏԵՍԱՆԻ  
Հոգեկցորդ սիրելիդ իմ.

Սերն փրկչաւանդ զոր ունիմք ընդ մի-  
մեանս, անչիջանելի գիտեմք լինել, որ ջեր-  
մաջերմ սաստկութեան եռանդիւ մշտաբոր-  
բօք էր 'ի մեզ. սակայն սոյն սէրն սակաւ  
ինչ պակասիլ սկսաւ, մինչ յերեկեան աւուր  
յայս ինչ տեղւոջ գտանելով և իմ, ական-  
ջալուր եղէ տգիտական և անհաճոյ բասրե-  
լի բանիցդ. ազգատեցութեամբ բան ինչ  
նախատանաց խօսելով առաջի Յունաց զազգս  
մեր եպերել ժպրհեցար 'ի ծաղը այլոց :

Ըստուածային է վճիռ չդատել զոք ըստ  
կամաց, իսկ դու ազգովի՞մք դատել համար-  
ձակիս. վա՛շ անձին քում. դու շնո՞ յազգէ  
մերմէ. յորմէ՞ ազգէ ես, կամ յորմէ՞ ազ-  
գէ էին ծնողք քո և նախնիք՝ յորոց շա-  
ռաւիղեցար. ո՞չ ապաքէն հայազն էին ա-  
մենեքին. պակասութիւն կամ կատարելու-  
թիւն անհատին՝ սեռօրէն համարիլ՝ պա-  
կասութիւն է յիմարական: Արդարեւ՝ ի տը-  
գեղութենէ մասանց անտի երևի և ամբող-  
ջին տգեղութիւն, եթէ յիւրաքանչիւր մա-  
սունս գոյ տգեղութիւն. ապա թէ ոչ՝ ո՞չ  
ամենայն մասունք են տգեղ վասն միոյն.  
բայց յորժամ զամբողջէն տսիցես բարի  
կամ չար, ամենայն մասունք նորա ընդ նը-  
մին իմանի լինել բարի կամ չար: Արեմն  
Հայոց ազգն ասելովք ՚ի միջի ամենեցուն  
և ընդ ամենեսին դտար հաղորդ և մաս-  
նակից, զինչ և ասացեր զհամայնից բարուց.  
ազգն որո՞վ է. ո՞չ ապաքէն քե և ինե:  
Այլ այս է պատճառն, զի չունիմք երբէք  
զմտաւ ածել զնախկին փառաւոր պերճու-  
թիւն ազգիս ՚ի թագաւորութեանս ասեմ  
դարս և ՚ի պայծառափայլ լուսաւորութեան  
իմաստալից ճոխութեամբ, զորս թուել մի  
ըստ միոջէ չզօրէ երբէք տկարիմաստ մտացս  
յառաջատութիւն և նամակիս բաւական եր-

կարուծիւն : Հուսկ ուրեմն զանց արարեալ զծանօթուծենէ բազմաթիւ արիական քաջութեանց զօրեղագոյն թագաւորացս փառահեղ և ահընկեց աշխարհաքարոզ զանազան մեծագործութեանց զարմնալեաց ազգիս, զայնս միայն յիշեցից զՄատուածային խնամօցն՝ յատկական պարգևս մասնաւոր, որով իբրև աշխարհափայլ արեգական անշամանգաղ լուսաւորութիւն պերճապայծառ փայլփայլի ազգս Հայոց մինչև ցյաւիտեան : Մատուածային ասացի պարգև, զի գուշակէ մարգարէն զպատուականութենէ ազգիս յասելն, ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց տէր . թէպէտ մարգարէութիւնս վասն իսրայէլի էր ՚ի հին օրէնս, սակայն ՚ի շնորհական նոր օրէնս առ մեզ կատարեցաւ տու ազգս Հայոց . ծանի՛ր ապա զմտացածին կարծեացդ սխալումն լսելով զՄատուածատուր սեպհական պարգևս, որով նախամեծար պարծի ազգ մեր ողջոյն այժմ և յապայն :

Սախ՝ Մատուածատունկ լուսաճեմ գըրախտն ընդ արևելս էր ՚ի մերս Հայաստան յորմէ դետ մի ելանէր ըստ գրոց, և անտի ՚ի չորս առաջս բաժանէր որոց անուանքն են Գեհնոն, Փիսոփն, Ափրատ, Տիգրիս : Եւհա չորեքին զեաքս այսօքիկ ՚ի Հայաստան են յսկներև ապացոյց դրախտին անդ գո-

լոյն : Ոյր վասն պատշաճաւոր համարին  
քրիստոնեայք յաղօթելն դառնալ յարեւելս ,  
որպէս և մերս :

Բ. Հայերէն էր բարբառ նախաստեղծին  
Լ. դամայ , զորմէ վկայութիւնս բազումս ու-  
նիմք 'ի սուրբ Վրոց :

Գ. Տապան Նոյ նահապետին որ էր օ-  
րինակ սրբոյ եկեղեցւոյ՝ յետ ջրհեղեղի 'ի  
Սասիս լերին եկաց յԼ. յրարատ գաւառի  
'ի Հայաստան :

Դ. Սիայն ազգիս Հայոց պարզեցաւ  
մասն ինչ տապանափայտին 'ի ձեռն հրեշ-  
տակին ըստ բաղձանաց հայրապետին մերոյ  
սրբոյն Յակոբայ :

Ե. Հայրապետական դահ սրբոյ աթո-  
ռոյ ընդհանրական կաթողիկոսութեան ազ-  
գիս մերում յԼ. ստուածուստ յայտնեցաւ յա-  
ւուրս սրբոյն Վրիգորի լուսաւորչի . զի բանն  
Լ. ստուած յետ հնգից հարիւրոց և յիսնից  
ամաց տնօրէնութեան իւրում ոսկեղէն ու-  
ռամբ վերստին իջեալ յերկնից գիշերայն՝  
լուսակազմ երեցոյց զձեակերպութիւնն տա-  
ճարին 'ի շինել :

Զ. Լ. նոյն Վրիստոսահիմն աթոռոյն  
արժանաժառանգ գահակալ սուրբ Վրիգոր  
լուսաւորիչ՝ թէպէտ 'ի Վ. Լոնդիոս պատրի-  
արքէն կեսարիոյ ընկնլաւ զաստիճան բա-

Հանայութեան, սակայն զիջխանութիւն ընդ-  
հանրական կաթուղիկոսութեան 'ի Յիսու-  
սէ փրկչէ մերմէ ընկալաւ իբրև զառաքեալս .  
որպէս և գրեալ է 'ի Շարականի . ընտրեալ  
Մատուծոյ քահանայապետ Ճշմարիտ, և հո-  
վիւհոգևոր բանաւոր հօտի տէր սուրբ Վրի-  
գոր : Այլ թէ որ փոխանակ առաքելոց առաք-  
եալ և քարոզ առաքելցեր զսուրբն Վրիգոր :

Ե. Հրեշտակ տեառն որ յիւրաքանչիւր  
աւուր 'ի խոր վիրապի մխիթարիչ լինէր  
սուրբ Առսաւորչի մերոյ, զերկնային տօնա-  
խմբութեան հանգիսին զուր՝ ազգիս Հայոց  
եբեր ծանուցանելով Առսաւորչին :

Ը. Ո՛չ որ ազգապետ այլոց ազգաց կո-  
չեցաւ Առսաւորիչ, բայց միայն ազգապետն  
մեր սուրբն Վրիգոր . զորմէ և մարգարե-  
ութիւն ունիմք գրեալ . եթէ նստայց 'ի խա-  
ւարի, տէր է իմ լոյս : Այլ թէ ցանկալի էր  
տեառն անձն նորա, վասն որոյ տաղնապե-  
ցաւ 'ի միջոյ չարեաց :

Թ. Արիական քաջութիւն մեծ էր ար-  
դարև նախկին նահապետին մերոյ Հայկայ,  
որ իբրև զօրեղ ախոյեան ընդդէմ կալեալ  
չարավիրագ և ժանտաբարոյ հուժկու բե-  
լայ՝ զերկաթապատ կրծիցն լայնալիճ աղե-  
ղամբ նետահարեալ ընդ թիկունս յայնկոյս  
Թափանցեալ սատակեաց չարաչար և նուա-

ձեաց զամենեանն որք ընդ նմա :

Ժ. Ազգս Հայոց ողորմած գոլով Աստուածուսոյց են օգնել կարօտելոց . թէպէտ ոմանք փառասիրութեամբ ողորմութիւն չընորհեն , սակայն անթիւ են որք խղճահարութեամբ 'ի գութ շարժին :

ԺԱ. Ի հայր Աբրահամէ սերեալ ունիմք մեզ զՀիւրասիրութիւնն , որպէս և մինչև ցարդ սովորութիւն գոյ 'ի Հայաստան 'ի գիւղեանս լուանալ զոտս պանդուխտ Վրիստոնէից և կերակրել առանց դրամոյ մինչ 'ի մեկնիլ նոցա . յորոց 'ի բազմաց լուեալ է իմ ասել , թէ ո՛ր այդ նորացոյց անպատշաճութիւն 'ի քաղաքս վաճառել դրամով հաց կամ ջուր :

ԺԲ. Ասացից և զարմանալին . զձևս տառից մերոց 'ի սուրբ Հոգւոյն ընկալաւ սուրբ Մեսրոպ հայրապետն մեր 'ի տեսչեան : Օ՞ր շնորհ Աստուածային եղբայր . ո՞ր ազգ վայելէ բաց 'ի մէնջ :

ԺԳ. Արտասանութիւն մերս լեզուի դիւրին յարմարի ուսմանց և խօսակցութեան ամենից ազգաց , զի չունի արգելք ինչ բնաւ խոչընդոտն լինել որպէս զՆունացն և ըզ Հրէից և զԱրաբացւոց և զայլ ազգաց բազմաց . որք շունելով ուղղապէս հնչել , միշտ յայտնեն ընդ հայրենի լեզուս իւրեանց ըզ

խորթաշունչ բարբառս . թէ և 'ի բազում  
ժամանակս դեգերեսցին 'ի հնչմունս այլա-  
լեզու ուսմանց :

ԺԴ. Հիսուս 'ի ծնանիլն իւրում 'ի Հա-  
յաստանէ բերել հաճեցաւ երկրպագուս  
զերիս թագաւորս . որպէս ասէ սուրբ Աւե-  
տարանն . ահա մոզք եկին յարևելից եր-  
կրպագանել նմա . այսինքն 'ի դաւառէն մո-  
կաց որ է 'ի կողմանս Անայ : Ասա յայտ-  
նի է թէ հայազն էին երեքին թագաւորքն  
այնորիկ . զի անուանք նոցա էին Մելքոն ,  
Գասպար , Պաղտասար :

ԺԵ. Ընդրանիկ հաւատացեալ թագաւոր՝  
մեր Աբգար թագաւորն եղև :

ԺԶ. Հիսուս զդաստառակ իւր զինքնա-  
նկար՝ 'ի Հայաստան առաքեաց 'ի պարգև  
առ Աբգար թագաւոր 'ի ձեռն սուրբ թա-  
ղէի առաքելոյն :

ԺԷ. Աոյնպէս և Բարթուղիմէոս առա-  
քեալն երեր 'ի Հայաստան զհրաշանկար  
պատկեր սուրբ Աստուածածնի 'ի միթա-  
րութիւն . զի 'ի վերափոխիլն սրբոյ Աստ-  
ուածնի ոչ գտաւ նա ընդ այլ առաքեալսն  
անդանօր 'ի տես :

ԺԸ. Հոգելից իմաստունք 'և քերթողք  
բազում գտան յաղգիս մերում քան յօտար  
ազգս , մինչև անյաղթ փիլիսոփոսյ անուամբ :



ԹԹ. Այլ և աստուածահաճոյ հատընտիւր առաքինի անձինք անթիւս եղեն 'ի Հայաստան որ վասն Վրիստոնէական սուրբ հաւատոյ նահատակելով, պատուական արեամբ իւրեանց վարդապոյն ներկեցին զերկիրն Հայաստանու . ընթերցի՛ր զմատեանս հարանց վարուց, յայսմ աւուր կոչեցեալն ասեմ և զՃառընտիրն, որչափ տօնելիս կամ յիշատակելիս գտանես մարտիրոսք կամ նահատակք 'ի Հայոց . որք ոչ միայն 'ի կենդանութեան սքանչելահրաշս գործէին ըզգործ և մեռելյարոյց անուանէին, այլ և աստուածընկալ սուրբ մասունք իւրեանց մինչև ցարգ բժշկութիւն պարգեեն հիւանդաց և ակտաժետաց, եթէ հաւատով և ուխտադրութեամբ դիմեսցեն 'ի գերեզմանս կամ 'ի սուրբ մասունս իւրեանց :

Ի. Օրնչ մեծ երանութիւն Աստուածազգեսց իզնատիոսի մանկան, որ բարերախտաբար նստաւ 'ի գիրկս տեառն մերոյ Հիսուսի Վրիստոսի, զի 'ի չափահասութեան հայրապետ եղև Հայոց :

ԻԱ. Աստուածատուր պարգև մի ևս՝ Մարեկ աղօթագիրք մեր 'ի ձեռն սուրբ Վրիգորի՝ Մարեկացւոյ վարդապետի, մեծ սպեղանի ամենայն հողեկան վիրաց անբժշկականաց, զոր ոչ ոք յազգաց կարէ ստանա

կեր աւագ խորանին կամարակապ . և ան-  
տի ծաւալեցաւ 'ի մէջ տաճարին աստեղա-  
նիչ . յորմէ ինքնին լուցան շիջեալ կանթեղք  
'ի տես ընդ հանուր ժողովորոց և օտար ազ-  
գաց իբրև ժամս երիս ակներև :

Լ . Լուսապսակ ամբողջ մարմին սրբոյ  
կարապետի Մկրտչի տեառն շնորհեցաւ ազ-  
գիս Հայոց մնալ 'ի Հայաստան յերկիրն  
Տարոնի , 'ի բժշկութիւն ակտաժետաց . որ  
ամենայն ուխտաւորաց և աղաչաւորաց խնդ-  
րակատար է իբր սուրբ Եստուածածին :

Ուրեմն բարեկամ՝ ճանաչելով զպան-  
ծալի գերսյարդութիւն ազգիս Հայոց , մի  
երբէք բնաւ հաճոյացիս վասն ազգիս ար-  
համարհանս խօսիլ կամ լսել միւսանգամ .  
այլ զն<sup>ն</sup>չ արլիք համօրէն եղբարք Հայոց  
ազգ . ըստ վայելչութեան անդրանկաց ուղ-  
ղելով զվարս մեր՝ համարձակապէս աղա-  
ղակեցո՛ւք զի Եստուած ընդ մեզ է . և  
ձայնակցելով Ղաւթի , աստցուք հանապազ  
յանուն Եստուծոյ մերոյ մեք մեծք եղիցուք :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

# ԱՂԵՐՍԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա Ռ Մ Ե Մ Ա Պ Ա Տ Ի Ի Ո Ք

ԳՈՎԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԵՐՉ

Մառ առուածատունկ՝ ընտիր բանաւոր,  
հայկազեան տոհմիս՝ ցանգ հովանաւոր,  
Բարերար ձեռաց՝ քոց երախտաւոր,  
մատչիմ 'ի համբոյր՝ յաղերս կարևոր:

II Աստուածախնամ տեսչութեան արարչապետին բնութեան, որ ընդ դարս դարս երևելի և սքանչելի տնօրէնութեամբ յանակնկալս պարզեւէ ամենայն արարածոց զմխիթարութիւն խնամողական. զի գիտէ անխրէպ իմաստութեամբ ուղղել զամենայն ըստ կարգի և ըստ վայելչութեան առ իւրաքանչիւր վախճան. զձախորդութիւնն կից ընդ յաջողութեան. զարամութիւնն ընդ սփոփութեան. զցաւն ընդ առողջութեան. զանկումն ընդ վերամբարձ կանգման. զաւերումն ընդ վերստին նորոգման. զայս ամենայն ոչ սլլով իւրիք, և թէ ոչ 'ի ձեռն հաւատարիմ և իմաստուն պաշտօնէից իւրոց պարզեւէ արարչապետն բնութեան, զորս Աստուածեղէն աջովն զօրացուցեալ լցուցանէ Աստուածաձիր պարգևօք իբրև շտեմարան անսպառ բարութեան. զի որպէս 'ի հնօյն, նոյնպէս և 'ի նորոյս իօրայելի ունիմք

Թարգմանու թեամբ, թէ և 'ի ձեռարանս  
փարիզու և Մթենի լեզուադիտու թեամբ  
յղփացեալ իցեն :

ԻԲ. Պերագնիւ երգարան եկեղեցւոյ ու-  
նիմք զՇարական ըստ պատշաճի աւուրչա-  
րադրեալ յիմաստուն վարդապետաց մերոց,  
զոր անթարգմանելի գոլոյն աղագաւ ոչ ոք  
կարաց ստանալ մինչև ցարդ :

ԻԳ. Պարու թիւն մերս եկեղեցական  
պաշտաման ձրի է. միայն փառաբանիչ հը-  
րեշտակաց վարձուցն յուսով վարեն զպաշ-  
տոն :

ԻԴ. Ի սուրբ եկեղեցւոջ սփռոց ունիմք  
զոր ոչ ունին այլազգ Վրիստոնեայք. թէ  
և ոչինչ գերազանց ինչ համարի սա ումանց,  
սակայն ըստ որում Մստուած ինքն հրա-  
մայեաց Սոփոսի հանել զհօշիկս 'ի Սինա,  
և այնպէս ներկայանալ 'ի սուրբ տեղին.  
ուստի գոհացարձք զտեառնէ. զի ահա և  
մէք սփռոց ունելով, առանց օգից ներկա-  
յանամք յաղօթատեղին ըստ իւրում հրա-  
մանի. որոյ վասն այսու յարգանօք պաշտել  
զՄստուած և զսուրբ տեղի նորա պարգև  
մեծ համարիմք մեզ Մստուածուստ :

ԻԵ. Օկենարար մարմին Տեառն մերոյ  
Յիսուսի թաթաւեալ ճաշակելով մեր, ան-  
կասկած եմք հաղորդիլ մարմնոյ և արեան

նորա . քանզի մինչ ասաց Յիսուս առ այն  
խորհուրդ՝ կերէք , յայնժամ և ասաց ար-  
բէք : Թե և գոն այլ Վրիստոնեսայ ազգք  
որք թաթաւեալ ճաշակեն , բայց նշխար  
նոցա խմորեալ է , և ոչ իրրև զմերս ան  
խմոր :

ԻԶ. Թե և սոքա կրօնական ինչ , զի ո  
մանք Վրիստոնեսայ ազգք թէպէտ առնեն  
անխմոր , բայց ճաշակելին ոչ տան ժողո-  
վրդեանն . իսկ մեք անխմոր ունելով՝ կա-  
րեմք և սովաւ պարծիլ . զի զոր օրհնեացն  
Յիսուս ՚ի սուրբ վերնատան , անխմոր էր .  
ըստ որում տօն էր Հրէից բաղարջակերաց .  
և նոյն իսկ օրհնեալ հացն էր զոր ետ Ա-  
ռաքելոց իւրոց :

ԻԷ. Կանոնաւոր նիւթ սուրբ Սիւսանին  
մեր , և հոգւով սրբով սքանչելի իմն եռալ  
նորին առ մեղ է միայն . ոչ թէ այլոց նը-  
ման հասարակ ձիթով օծումն :

ԻԸ. Ի մտանել սրբոյն Ղրիգորի հայ-  
րապետին մերոյ Ալուսաւորչին ՚ի գերեզման  
տեառն լոյս բղխեցաւ , ուր յայնժամ եր-  
գեաց սուրբ Հայրապետն զԱլոյս զուարթն :


ԻԹ. Ո՞չ ապաքէն և ՚ի 1848 ապրիլ 12  
Ղարուսաղէմ ՚ի Վանս սրբոյն Յակոբայ ՚ի  
մեռելոցի աւուր Օատկի՝ յետ արձակման  
ժամու սքանչելի լոյս ցոլացաւ նախ ՚ի պատ-

կեր աւագ խորանին կամարակապ . և ան-  
տի ծաւալեցաւ 'ի մէջ տաճարին աստեղա-  
նիչ . յորմէ ինքնին լուցան շիջեալ կանթեղք  
'ի տես ընդ հանուր ժողովրդոց և օտար ազ-  
գաց իբրև ժամս երիս ակներև :

Լ . Լուսապսակ ամբողջ մարմին սրբոյ  
կարապետի Մկրտչի տեառն շնորհեցաւ ազ-  
գիս Հայոց մնալ 'ի Հայաստան յերկիրն  
Տարոնի , 'ի բժշկութիւն աստաժետաց . որ  
ամենայն ուխտաւորաց և աղաչաւորաց խընդ-  
րակատար է իբր սուրբ Էստուածածին :

Արեմն բարեկամ՝ ճանաչելով զպան-  
ծալի գերայարդութիւն ազգիս Հայոց , մի  
երբէք բնաւ հաճոյացիս վասն ազգիս ար-  
համարհանս խօսիլ կամ լսել միւսանդամ .  
այլ զինչ արիք համօրէն եղբարք Հայոց  
ազգ . ըստ վայելչութեան անդրանկաց ուղ-  
ղելով զվարս մեր՝ համարձակապէս աղա-  
ղակեսցուք զի Էստուած ընդ մեզ է . և  
ձայնակցելով Դաւթի , աստացուք հանապազ  
յանուն Էստուծոյ մերոյ մեք մեծք եղիցուք :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



# ԱՂԵՐՍԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա Ռ Մ Ե Մ Ա Պ Ա Տ Ի Ի Ո Ք

ԴՈՎԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՆԴԵՐՁ

Մտուածատունկ' ընտիր բանաւոր,  
Հայկազեան տոհմիս' ցանգ հովանաւոր.  
Բարերար ձեռաց' քոց երախտաւոր,  
մատչիմ 'ի համբոյր' յաղերս կարեւոր:

Ո՛ր Աստուածախնամ տեսչութեան ա-  
րարչապետին բնութեան, որ ընդ դարս  
դարս երևելի և սքանչելի տնօրէնութեամբ  
յանակնկալս պարզէէ ամենայն արարածոց  
զմխիթարութիւն խնամողական. զի զիտէ  
անվրէպ իմաստութեամբ ուղղել զամենայն  
ըստ կարգի և ըստ վայելչութեան առ իւ-  
րաքանչիւր վախճան. զձախորդութիւնն կից  
ընդ յաջողութեան. զտրտմութիւնն ընդ  
սփոփութեան. զցաւն ընդ առողջութեան.  
զանկումն ընդ վերամբարձ կանգման. զա-  
ւերումն ընդ վերստին նորոգման. զայս ա-  
մենայն ոչ այլով իւրք, եթէ ոչ 'ի ձեռն  
հաւատարիմ և իմաստուն պաշտօնէից իւ-  
րոց պարզէէ արարչութեան բնութեան. զորս  
Աստուածեղէն աջովն զօրացուցեալ լցուցա-  
նէ Աստուածաձիր պարգևօք իբրև շտեմա-  
րան անսպառ բարութեան. զի որպէս 'ի  
հնոյն, նոյնպէս և 'ի նորոյս իսրայէլի ունիմք

երևելի ապացոյց մեզ յանդիման . որպէս  
զի աւերումն և կործանումն Արուսազէմի՝  
'ի ձեռն Օօրաբաբէլի եհաս 'ի նորոգութիւն  
կրկին պայծառութեան . և ջրովն Աւելովմայ  
բժշկէին ակտացեալքն 'ի վերս զանազան .  
նոյնպէս՝ առ նորոյս իսրայէլիւ անթիւք են ,  
զորս մի ըստ միջէ յիշել չէ արժան : Աւ-  
րեմն գոհանալով զամբաւ մարդասէր խնա-  
մոց Աստուածային գթութեան՝ համապատ-  
շաճ է ասել ընդ մարգարէին , ինձ յոյժ  
մեծարու եղեն բարեկամք քո՝ Աստուած :  
Աւ թէ հաճոյքն Աստուծոյ ծանօթ եղեն  
մեզ , ըստ Առաքելոյն . զի յարոյց մեզ 'ի վեր-  
ջին ժամանակիս նոր Օօրաբաբէլ զգերա-  
մեծար ամիրայ զգորովագութ խնամակալդ  
զտէր՝ ողորմելի անտերունչ ցաւագնելոց  
կանգնեաց զերթ աւազան բժշկութեան հա-  
սանել 'ի թիկունս տկարութեան նոցա . ոչ 'ի  
հրեշտակէն 'ի տարին և եթ միանգամ , այլ  
'ի Հոգւոյն Արքոյ շարժեալ յարաժամ :

Աստի արտասուածոր աչօք պաղատիմ  
առ Վրիստոսազօր ամիրայդ , խնամատար  
գտանիլ ինձ կարօտելոյս որ յամենից կամ  
անօգնական . դիմեմ բոլորով սրտիւ առ բը-  
ժշկարարդ աւազան , բժշկել և զիմս հիւան-  
դութիւն յօժար կամօք մարդասիրութեան .  
այն է գուն գործել նախկին խնդրոյս վաղ-



վաղ կատարման . և հայրական սիրոյդ այդ  
խնամք բարերարութեան՝ աղօթապարտ կա-  
ցուցէ զիս մինչ 'ի կենիս վասնձան, վասն  
պատուական կենիդ անդորրական քաջողջու-  
թեան, 'ի մսիթարութիւն սրտի

Նուաստ ծառայ

ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ՝

---

ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ  
Ս Ի Ր Ո Յ Ն Ա Մ Ա Կ Ի  
ԵՂԲՈՐ ՄՏԵՐՄԻ

Եղբայրսիրութեան գանձիդ ցանկալոյ,  
մտերիմ եղբօրդ յարգի սիրելոյ.  
Ընծայեմ զփունջ խանդակաթ սիրոյ,  
յաւէտ տարփանօք սրտիս թախճելոյ:

Որ գտանէ զբարեկամ հաւատարիմ, գը-  
տանէ զգանձ ասէ Սիրաք իմաստունն . զայս  
բան առիս վերանկարեալ համարիմ, զի ու-  
նիմ զայս գանձապետութիւն . ըստ որում  
զոր 'ի գանձարանի սրտիս անվերջանալի  
սիրով ունիմ գանկեղծ բարեկամիդ մշտա-  
հաստատ մտերմութիւն, գանձ ցանկալի ու-  
նիմ անճողոպրելի, այլ զի՞նչ խնդրեմ քան

դայս առաւել ինձ բարերախտութիւն. զի ոչ միայն 'ի մերձակայութեան մերում հանապազօր վայելէի զսրտուղ հողեկեցոյց քաղցրաճաշակ սիրոյ սիրասնունդ նազելւոյդ, այլ զի 'ի բացակայութեան ևս զնոյն եռանդագին սիրոյդ ջերմութիւն յաւետ մտերմութեամբ անշէջ պահեալ 'ի վտարանի սիրոյդ, զոր 'ի մտիս ճեմէր բազմաժամանակեայ կարօտութեանս զմիդապատ մթութիւն, իբր սաստկաշունչ հողմոց հնչմամբ 'ի լերանց բարձանց 'ի ցիր ցնդական իսպառ փարատեցեր մտացս յանդորրութիւն:

Երբ զոր ցուցեր ինձ զփափագելին իմ զորպիսածանոյց սիրանիչ նամակիդ բանագրութիւն, ընդ իսրայէլեան բանակին մանհու մանհու սսելով ձեռբակալեցի զայդ երկնատեղաց մանանայ ինձ 'ի խնդութիւն. և մինչ լուայ ամենայն հանգամանօք հանդերձ զպատուական անձինդ բաջողջութիւն, իբրև զուարթառիթ ողկուզոյն երկրին Աւետեաց ետ 'ի քիմս մտաց իմոց զհամեղութիւն, և իբրև սիրարողբօջ ստեղնեալ անթառամ ծաղկանց սիրալիբ բանիցդ քաղցրահոտութիւն, հասեալ 'ի սնգունս հողւոյս անուշահոտ բուրմամբն զթմրեալս էած 'ի սթափութիւն. յոյր սակս զայդ քաջողջութեանդ ծանուցիչ աւետամատոյց գարնայնոյ

Նամակ՝ զերթ ծաղկաւէտ պսակ փառազար-  
գութեան յօրինակ մտերմութեան սիրոյդ  
անկեղծութիւն, առնկալեալ սիրով եղի՛ր  
գագաթ սրտիս ՚ի յաւերժական ցնծութիւն .  
զորմէ զչնորհակալութեանն արժանապէս գը-  
րութիւն, չէ բաւական բառնալ տկար գըր-  
չիս զօրութիւն . այլ այս միայն լիցի աւա-  
սիկ շրթանցս պարտաւորութիւն, հոլանի  
մաղթել հանապազօր առ Աստուածութիւն .  
զի աստ ամենայն մարմնաւոր բարեօք իւր  
մարգասիրութեան, և ՚ի հանդերձեալն սէ-  
րարփի լուսով յաւիտեան, զքոյդ պահեսցէ  
անձն սխրասարաս և անսասան, ՚ի մտիթա-  
րութիւն

Նուաաստ եղբօր քում

ԵՊԻՓԱՆԻՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ԲԱՆՔ ԵՐԱԽՏԱԴԻՏՈՒԹԵԱՆ

ԱՌ ՄԵԾԱՐՈՒ ՌՔ ՀԱՅՐԱՊԱՏԻ

Յոգնախնամ հայրապատիւ տէառնդ  
բազմերախտ ձեռաց համբոյր ծառայական,  
որդիապարտ սիրով.

Աստուածահաճոյ ընդունելութիւնն և

անհամեմատ մարդասիրական գթութիւնն որով ասպնջական գտայք ինձ, և այցելուեղէք յամենայն պէտս հոգւոյ և մարմնոյ իւրոյ, և հոգենորոգ բարեաց բազմաց մատակարար յայսմ ամի զճշմարիտ բարեկամութեանն պտղաբերելով զարդասիս, շտան երբէք ինձ մոռանալ զյիշատակ անթիւ հայրական երախտեաց ձերոց, թէ և բսու անձանց ոմանց շաղակրատութիւն կեղծուպատիր բանիւք ընդ մէջ մտեալ իցեն. վասն զի յայսբան ժամանակ անտես արարեալ զաղերսանօք իմուք թողեր զիս այսպէս անբուժելի վիրօք 'ի տրտմաթախիծ վարանման վիրաւորեալ. բայց բռունք երախտագիտութեանս զայս ամենայն 'ի բաց վարատեալ որոնեն զառիթս, որով կրկին կարացից հանդիսանալ յառաջին ցանկալի վիճակ որդեգրութեան ներումն խնդրելով 'ի բազմերախտ հօրէդ

Ն. Ծ. ԵՊԻՓԱՆՍ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԾՆՈՂՄԿԱՆ ՔԱԶԱԼԵՐՈՒԹԻՒՆ Ի ՀՕՐԷ

ՅՈՒՄՄՈՒՆՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՐՁ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՄԲ

Սիրասնունդ բարեփափագ որդւոյդ իմոյ սիրելւոյ հայրական սէր 'ի սրտես.

Հանձնարինս ունէր սաստկանալ տապ տոջորման ծնողական սրտիս կարօտութեան, եթէ զյառաջագիմութեանդ բարեպատճառ լուր չունէի ինձ առիթ մխիթարութեան: Գիտեմ որդեակ իմ նազելի և բարեջան, զմշտավառ իղձ քո զոր ունիս յաղագս բարւոք կրթութեան 'ի զանազան մակացութիւնս մանաւանդ 'ի լեզուագիտութեան. քանզի մինչև ցարդ բաւական զարգացեալ 'ի մեզ 'ի հայրենի տան, լցեր զմերս սրտից սիրաբորբոք փափաք վաղեմնական. և աչք մեր հանապազ յուսային տեսանել զքեզ ևս առաւել պերճացեալ 'ի գիտութեան:

Եւ լայժմ քանզի ընդ կատարեալ գիտունս գտանիս 'ի կենցաղավարութեան, յայտ առնեն զքէն՝ թէ դոյ հասանել ձեզ 'ի կատարելութիւն. որով թէ ինձ սիրատոչոր հօրդ և թէ ազնիւ մարդ մխիթարութիւն մեծ լինելդ չէ անյուսական:

Եպա դուզնաքեայ բանիւս յորդորեմ

զսիրելիդ իմ ազնուական, համբերութեամբ  
աշխատիլ 'ի դործս քո առանց ձանձրու-  
թեան. զի կարասցես 'ի վախճանի վայելել  
զպատուդ բաղձաժամանակեայ քոյդ աշխա-  
տութեան :

Կսե հոգեհատոր որդեակ իմ բարե-  
ջան՝ զՄտուածպաշտութիւնն կալ քեզ իբր  
ժառանգութիւն հայրենական. և կաց 'ի նը-  
մին հաստատուն միշտ և յաւիտեան. զի  
քաջ ուսեալ է քո թէ երկիւղ տեառն ըս-  
կիզքն է զգօնութեան :

Յետ այսորիկ և աղօթող եմ տեսանել  
զքեզ քարեզարդեալ Մտուածային շնոր-  
հօք հոգեկան, 'ի մօտիժարութիւն սրտիս մըշ-  
տընջենական :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ԾՆՈՂԱԿԱՆ ՔԱԶԱԼԵՐՈՒԹԻՒՆ Ի ՄՕՐԷ  
Ի ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՆԵԼ  
ՅՈՒՄՄՈՒՆՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Ծնողական սրտիս զուարթատեսիլ փայ-  
լուն արուսեկիդ խնդալ յողջկէցութիւն 'ի  
սէր գրկախառն.

Աիրածրար նամակ սիրասնունդ որդւոյդ

իմոյ եհաս առիս, որով յորդորէիր չտրտմիլ ընդ հեռաւորութիւն քո: Յիրաւի տրտմութիւն մեծ պաշարեալ էր զիս յօրէ յորմէ հեռացար լուսափայլ արուսեակդ, և թողեր զիս յաղջամուղջ գիշերի կարօտակիզութեան. սակայն սիրալիր նամակիդ անպակաս շարունակութիւն սփոփութեան լինի միշտ առիթ: Այլ մանաւանդ զյառաջագիմութեանդ մտիթարական լուր լուեալ յուսուցչաց քոց, փարատի յինէն տրտմութիւն արտասուառիթ և գտանիմ 'ի ցնծութեան:

Արդ՝ քանզի բազմախնամ ազնիւ հայր քո փափաքելով ականատես լինել բարւոք զարգացման քո փութացաւ գալ այդր առ քեզ, ապա և դու պարտիս ոչ միայն զորդիական երախտագիտութեանդ յայտնել նմա զնշան, որ ըստ օրէ հնազանդութեամբ սպասահարկութեանն, այլ և յաւելուլ զջանս քո զոր ունիս յուսմունս, 'ի լրումն նորին բարեփափագ բաղձանաց. որով լիցիս ճշմարիտ առաքինի և կատարեալ Արիստոնեայ և ընտիր իմաստասէր:

Իսկ ես սիրալառ մայր քո յանձնելով զքեզ պաշտպանութեան սրբոյ Կուսին, ազօթող եմ առ Աստուած պարգևել քեզ 'ի հոգւոյն շնորհաց զուշիմութիւն մտաց և

սողջութիւնս կենաց 'ի պարծանս և 'ի փա-  
ռաւորութիւն ազգիս և հայրենեաց :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՊԱՏԱՍԻԱՆԻ ՍԻՐՈՅ ՆԱՄԱԿԻ ԵՂՔՕՐ !  
ԳՈՎԱԲԱՆՈՒՓԵԱՄԲ

Լուսացայտ վառարան անշիջանելի  
կայծական Յիսուսաւանդ սիրոյն՝ սիրաբող-  
բոջ եղբօրդ ազնուի ողջոյն շատ.

Սեռին սզ'իւ քաղցրացուցանէ զքիմս  
մարմնական, այլ ո՞ր ճաշակելի քաղցրահամ  
զիտէ այնպէս անուշել զքիմս հոգեկան,  
որպէս սէր սիրեցելոյդ, հայելի ջինջ ցու-  
ցանէ զնմանութիւն իրին առաջօք իրբն գո-  
յական. այլ կարասցէ՞ արգեսօք այնպէս ան-  
ջինջ տպաւորեալ ունել յինքեան, որպէս  
սիրտ հարազատիդ. 'ի յամպօց արտադրի ցօղ  
լուսակայլակ և 'ի ծովէ մարգարիտ պատուա-  
կան, իսկ 'ի քէն բղխեցան առ իս հոսանք  
քաղցրութեան՝ անթիւ բարութեան, իրբ  
խորիսիս մեղու ջամբեալ 'ի փեթակէ սիրա-  
կազմսրտիդ : Սափոր ոսկեղէն լի մանանա-  
յիւ՝ սիրտ քո մարմնեղէն կօշիլ իրաւամբ :



քանզի հոգեկիր գտաւ իսկութեան սիրոյն  
ճշմարտի : Ա՞յլ թէ՛ սակաւամասնեայ բա-  
նից յօդուածովք զիս՞րդ զօրեցից զմտերիմ  
սիրելիդ 'ի ճահ ներբողել ըստ բաւականին՝  
զի այնչափ խուժանք բազմադիմի զբազանաց  
քոց կարևորաց զորս յանձինդ վերայ բարձ-  
եալ կրես , ոչինչ արգելք կարացին լինել  
քնաւին զնուաստութիւն մեր 'ի մոռացօնս  
արկանել յիմաստարուղիս մտացդ յիշողու-  
թեան գանձարանէ . այլ յաժարեալ փու-  
թով սիրանիչ գրութեամբ շնորհազեղ մա-  
տանցդ 'ի խնդիր ելեր հանգամանաց ողջ-  
կեցութեան մերոյ : Ա՞յո՛, քաջ ճանաչեմ ըզ  
մեծագոյն բարիս հարազատ բարեկամիդ ի-  
մում 'ի մխիթարութիւն , զորմէ շնորհակալ  
գոլ երախտապարտ գտանիմ յոյժ մինչև  
ցյաւիտեան :

Իսկ դու ո՞վ բաղձալիդ իմ ազնուական՝  
լեր ողջ յամայր ամօք ամենայն բարեբաս-  
տութեամբ բարգաւաճեալ 'ի պարծանս և 'ի  
մխիթարութիւն սրտի

Նուաստ ծառայիս

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

### ԶՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵՆԷ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Անկեղծ եղբայրասէր շնորհագարդ ազնուագարմիդ սիրելւոյ, սէր անկեղծութեան 'ի կարօտ դիմաց:

Արդարեւ ոչ ոք 'ի մարդկանէ կարէ լինել միշտ 'ի միում միճակի կեցութեան, զի երբեմն 'ի տկարութեան լինի գտանիլ և երբեմն 'ի կարողութեան, երբեմն 'ի հիւանդութեան և երբեմն յառողջութեան, երբեմն 'ի տրտմութեան և երբեմն յուրախութեան: Ապաքէն՝ և նուաստս որ մինչ 'ի մեծի տրտմութեան էի վարանեալ յաղաքս տարագրութեամբ հեռանալոյ ձեր աստի՛ վաղվաղ ժամանեցի յուրախութիւն յանկարծ բաղդաւորութեամբ, գոհանամ զտեսանէ, քանզի ժամանել առ մեզ սիրածանոյց ցանկալի նամակի ձերոյ իբրև զներդաշնակաւոր նուագս քաղցրաշունչ թռչնոց զտխրեցելոյս տրտմական վարանումն իսպառ փարատեաց՝ զորմէ շնորհակալութիւն ոչ սակաւ, զի լստ բնական քոց բարի բարուց ոչ ունիս զձեզ 'ի մոռացօնս բնաւ, այլ մանաւանդ սիրարարդրոջ ստեղնեալ գրութիւն արուեստաճմուտ մատանցդ առ մեզ շնորհելով նը՝

չան յայտնէք ճշմարիտ բարեկամութեան  
որում փափաքիմ շարունակութեան, և յամս  
յուզվս անթարշամ կենացդ սիրալառու-  
թեան մխիթարիլ լուսով:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԲԱՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՌ ՈՒՍՈՒՅԻԶ ԻԻՐ

Քաղցրաճաշակ պտղով իմաստութեան  
վայելչագարդ հանդիսացեալ 'ի պարտեզ  
գրոց բանաւոր ծառ. ամբարձուդէ՛ր՝ գերա-  
վսեմ եւ ճոխիմաստ ուսուցչիդ բազմերախտ  
ձեռաց համբոյր ծառայական յաւետ տար-  
փանօք:

( ) րէն է թերաւարժից ուսումնականաց՝  
դիմել խնդրանօք առ դուրս լիցն գիտու-  
թեամբ, հասանել 'ի բաղձանս իրեանց. և  
քաղցրասիրտ մարդասիրական հաճութիւն  
կատարելադունից գիանոց պատրաստ է գուն  
գործել 'ի կատար աշակերտելոցն դասուց  
զհայցուածս հոգեշահ: Ըհաւասիկ նուաստ  
ծառայ ձեր ո՛չ սակաւ ինչ ժամանակ դե-  
գերեալ կայի ընդ հովանեաւ խնամոց ձե-  
րոց 'ի վարժութեան վոյելուչ շարագրու

Թեան . բայց դժբաղդութեամբ իմն սաստ .  
կաշունչ հողմոց աշխարհային զբաղմանց ա-  
ռեալ տարեալ զիս հեռի 'ի խնամոցդ թո-  
ղին զիս այսպէս անմխիթար :

Ուստի մեծաւ աղերսանօք խնդրեմ յազ-  
նուագութ կամաց քաղցրութենէ բարեխնամ  
տեառնդ , զի ըստ բնական բարոյիցդ բա-  
րեփափագ բերմանց՝ յօժարակամ սիրով և  
մարդասիրական խնամողօրէն պաշտպանու-  
թեամբ դժասիրեալ , վասն Աստուծոյ և  
Վասն Աւետարանական Հիսուսաւանդ սիրոյ՝  
լցուսցես և կատարեսցես զփափագ սրտի  
թերալարժ ողորմելոյս , հաճելով 'ի բարե-  
լից շնաշխարհիկ չքնաղ մթերից քոց զխնդ-  
րելին իմ զայն զշնորհացնցուղ զրչիդ կաթ-  
ուած անպակաս ցօղել մերձ առ մերձ առ  
իս . զի խակակութ տտիպ պտուղ տկարի-  
մաստ ուշիս հասունակ լիցի . որով ընդ յա-  
ւելուլ երախտեաց քոց՝ յաւէտ յաւելացի  
և իմս պարտաւորութիւն , աղօթապարտ լի-  
նել մշտնջենական բարեմաղթութեամբ առ  
Աստուած վասն պատուական անձինդ աղ-  
ղօգուտ կենդանութեան . զոր ամենախնամ  
փրկիչն մեր զերթ ծաղիկ անթառամ՝ ան-  
թարչամ պահեսցէ զամս բազումս յանդոր-  
րութեան :

Մնամ աւանիկ յաւէտ տենջանօք իբրև

երկնաձիր սարգեաց, և իբրև փշրանաց ած-  
կելոց ՚ի սեղանոյ տեսուն սպասեալ վեհանձ-  
նութեանդ գուն գործել գթութեամբ ՚ի կա-  
տար խնդրոյս որ եմ

Նուստն ծառայ բարեացակն

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՂԵՐՍԱԳԻՐ ԵՐԱՆՏԱԴԻՏՈՒԹԵԱՄԲ

ԱՌ ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՅ

ՏԷՐ ԻՒՐ ԲԱՐԵՐԱՐ

Երկնապարգէ գանձ ցանկալի բար-  
եացապարտ տեսունդ իմոյ գերապատիւ ո-  
ղորմած տեսունդ բարերար ճեռաց համբոյր  
ծառայական յաւետ ցնծութեամբ.

Ո՞ր բերան կամ լեզու կարասցէ լինել  
բաւական ծանուցանել ջանթիւ բարերարու-  
թիւն խնամատար տէրութեանդ. զի մինչ  
բազուարութեամբ իմն յայտն ժամանակ  
սպաստահարկութեամբ կայի յազբատադար-  
ման բնակարանի ստրկամեծար տէրութեանդ,  
իբրև զուսասփիռ արեգականն մշտափայլ  
լուսաւորութիւն՝ զմխիթարական բարերար-

ըու թիւնս քո ծառայախնամ՝ անշափօրէն և  
անխօրի ծագէիր յիս հանապազ. և որ մեծն  
է, այժմ ըստ բարեսէր բնական բարուցդ  
բարեձիր բերմանց՝ զանպիտանս 'ի պիտան-  
ծաց կարգի համարեալ շնորհեցեր ինձ ա-  
նարժանիս զգործակալութիւն այսր տեղւոյ.  
զմարմնականն շահաւորելով կեալ անկարօտ .  
որոց փոխարէն չունելով ինչ տրիտուր հա-  
տուցանել, երախտագիտութեամբ պարտաւոր  
համարիմ զանձն իմ մինչև ցելս շնչոյս աղօ-  
թարար լինել առ Աստուած վասն ալգօ-  
գուտ պատուական կենացդ. զի նա միայն  
է բարերարացն վարձատրիչ արժանապէս :

Այլ այժմ թէպէտ և խնդիր մի ևս ու-  
նիմ առաջարկել տէրութեանդ, սակայն եր-  
կնչիմ՝ մի գուցէ գանգատօրէն իմն երևես-  
ցի. արեգական է միշտ ծագել զլուսածաւալ  
շառաւիղս յաշխարհ ամենայն անխօրի. այլ  
երբեմն թանձրամած մթադին ամպոց ընդ-  
դիմակաց լեալ, թողուն զաշխարհս 'ի խա-  
ւարի անմխիթար : Ապաքէն այրն ընդ որում  
առաքեցեր զիս, թանձրացուցեալ զսիրտ իւր  
զերթ ամպ լրթագոյն անխնամ դտանի առ  
իս. վասնորոյ երես անկեալ աղաչեմ, մի  
արգելուր յինէն զքո տիրական խնամս 'ի  
բացուստ, տէր իմ. կամք բարեսիրիդ մի  
յօժարեսցի թողուլ զիս այսպէս անմխիթար.

'ի ձեռն. առնս այսորիկ խոչընդոտն լեալ  
բարեաց. բազմազան խնամք ձեր իբր զջեր-  
մուծիւն արեգական կարող է զթանձրաց-  
եալն զայն ամպ յանձրև փոխարկել 'ի վերա  
իմ:

Ողջ լեր հանդերձ բարեբողբոջ որդ-  
ւովքդ 'ի պարծանս Ազգիս եւ 'ի մեծ մը-  
խիբարութիւն աղօրասպարտ ծառայիս

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՐ ԱՂԱԶԱՆԱՅ

ԶԻ ԵՒ ԻՆՔՆ ՈՒՍՅԻ

ՅՈՐԳԻՈՅ ՆՈՐԻՆ ԶԳԻՏՈՒԹԻԻՆ

Բարեացասպարտ տէր իմ.

Մինչ բարեբախտութեամբ 'ի պանդըխ-  
տութեանս արժանացայ տեսաւորիլ յայ  
ինչ քաղաքի ընդ ուսումնասէր որդւոյ քո և  
մտերմին իմոյ. զորոյ զբազում մարդասի-  
րութենէ ըստ արժանւոյն գրել 'ի նամակիս  
չեմ բաւական. յերաւի իմաստալից մտացն  
ուշիմութեամբ յառաջեալ 'ի գիտութիւնս  
լուսաշաւիղ շնորհաց արդեամբ չքեղափայլ  
չողչողէր. յորմէ բարւոք նախագուշակեցի:

զի տուչութեամբ սուրբ հոգւոյն անշուշտ  
ունի զարգանալ քան զայս առաւել 'ի զա-  
նազան ուսմունս լեզուաց և արհեստից յորս  
պատաղի: Ա՛հ՛ իցէ՞ արդեօք զի 'ի վերա-  
դառնալն իւրում աստ 'ի հայրենիս ողջամբ  
խուն մի գթացեալ առ իս զմտերմականն  
գուն գործել հաճեսցի աննահանջելի հրա-  
մանիդ միջոցաւ, հեղուլ և յիմս տկարի-  
մաստ ուշիս անօթ յիմաստալիբ ճոխունակ  
ճեմաբանէ մտաց իւրոց: Վանգի 'ի մանկու-  
թենէ հետէ շղթայապինդ եմք ընդ միմեանս  
փրկչաւանդ սիրով, զոր յուսամ 'ի հաստա-  
տութեան պահել մինչև ցելս շնչոյս մերոյ:

Սմին իրի զտիւ և զգիշեր հանապազ  
անարժանութեամբ աղօթող եմ մշտամուռնչ  
անյապաղ վաղվաղ վերադառնալ առ մեզ  
ջանկալի եղբօր իմոյ 'ի կատարումն զտննչ  
սրտի իմոյ բազմաժամանակեայ:

Արեմն աղաչեմ զվեհանձնութիւնդ  
խնդրանօք մեծաւ, ազդ առնել աւետեօք  
իմն զգալուստ նորին, յորում ժամբ և ի-  
ցէ. զի նուաստութիւնս կրկին տեսեալ ըզ  
փափաքելին իմ առաւել քան զառաւել ու-  
րախացոյց ձեօք հանդերձ:

Ողջ լեր ամենայն բարօրութեամբ:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Ի ՔԱՀԱՆԱՅԷ

Սուսանի շնորհաց հօր բարեխնամ իմ հոգևորի,  
 Սուրբ աջոյդ համբոյր յաւետսիրաբար յարակայ ձօնի:

Սպիտակաստի տենչ սրտիս ստիպէ ըզ  
 նուաստութիւնս հարցանել զորկենութենէ  
 մաքրասուն տէրութեանդ, թէ զիւրդ կեայ  
 սրբոյ անձինդ անդորրութիւն. քանզի մինչ  
 մեկուսացեալ եմք ՚ի միմեանց՝ Աստուածա-  
 ւանդ մշտաբորբօք սէր սրբաւնունդ հօրդ՝  
 տոչորէ զսիրտս ՚ի կարօտակիզութեան: Այս  
 վասն համարձակեցայ երկտողի գրութեամբս  
 ողջունել զխոհեմառատ տէրութիւնդ: Այ-  
 նեթէ զորպիսութիւն նուաստիս հարցանել  
 յօժարիցիս հայրախնամ տեսչութեամբ,  
 փափք ամենախնամ արարչին ողորմութեան,  
 զի մինչև ցկէտ գրոյս ողջ առողջ գոլ ՚ի  
 մարմնի արժանահայց մաշթանօք սրբու-  
 թիւնդ, ՚ի պաշտամանս զբաղեալ կամհա-  
 նապաղ, և անարժանութեամբ ազօթող եմ  
 վասն անդորրական կեցութեան սրբոյ հօրդ:  
 Այլ աղաչեմ զխնամակալութիւնդ անպակաս  
 առնել հայցմամբ կնդրկանուէր ազօթիցդ ՚ի  
 տեառնէ՝ օժանդակութիւն մեծ իմուսն տը-  
 կարութեան. որով կարողասցուք մարտնչել  
 ընդդէմ հնարից սատանայի յոյսմ աշխար-

Տիս, և 'ի հանդերձելումն զուարթ զիմօք  
Ներկայանալ առաջի ահեղ ատենին Վրիս-  
աոսի, աղատ լեալ 'ի ժանգարեր ժանտկէն  
ժանեաց ժանտաժուտ ժպրհին, խաւարա-  
բլնակ շարին :

Ողջ լեր ամօք բազմօք հանդերձ պա-  
րագայիւք:

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌ ՄԵՇԱՐՈՒ ՌԲ

ՎԱՄՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ի Ձ Ե Ռ Ա Յ Ա Ն Օ Ր Ի Ն Ա Յ

Յար բարեխնամ ազգիս Աբամեան,  
ազգաւեր ընտիր՝ վեհ զիւցազնական,  
Լուր ողորմութեամբ՝ գթասիրական,  
Ճիս փորձանաւոր՝ ծառայ տրտմական:

Որ ազդասիրական խնամածութեամբ  
փայլիս որպէս զարուսեակ և հայրական  
տեսչութեամբ, առ ամենեսին ոչ սակաւ բու-  
րելով բազմաբուրեան զանուշահոտութիւն  
մարդասիրական կնդրկաց՝ բարեհաշակ ծա-  
ծանիս յամենայն ուրեք: Ըրդ՝ մի՛ անտես  
առներ զաղերսանօք շարատանչ տառապե-

լայս, տէր գթառատ, զի յանցեալ աւուր 'ի շուկայն սակարկութեան միջոցաւ ընդ օտարազգի ումեք մինչ ոչ հաճեցայ զիւրացին վաճառել զիննգրելին, անվայել բանս ոչ սակաւ խօսեցաւ բարբաճնջօրէն. և քանզի ոչ ինչ լուելով իմ առաջի նորա, գազանական կատաղութեամբ բարկացեալ զբարտութեան եմուտ 'ի բանս մահադուշակս, թէ հայհոյեաց մերս հաւատոյ և դեմի. որոյ վասն ետ զիս ունել բռնակալաց, որք տարան զիս առ բռնիսն, որոյ լուեալ զբանս նորա զբարտութեան՝ առանց քրննութեան հրամայեաց բանտապետին կըրկին շղթայիւք ռոնակապօք կապել և արկանել զիս 'ի ներքսագոյն մեալ անդ ամիսս երիս 'ի խաւարչոի, անտես 'ի լուսոյ և 'ի մարգկանէ. Ահ ցաւագին տրտմութեանս, զի սովալուկ եմ աստ հանապազօր զուրկ մնալով ոչ միայն 'ի տեսութենէ ընտանեաց, իմոց և բարեկամաց, այլ և յազգասիրական գործոց իմոց որ օգուտ իմն է հասարակաց, և մանաւանդ 'ի բարերար տեսնէդ: Արոյ վասն արտասուածոր աչացս մեղանաւ գրեցի զայս զիր աղաչանաց առ ազգասէրդ վասն ազատութեան անպիտան ծառայիդ, զի 'ի քեզ եմ ապաւինեալ, և դուես յոյս իմ, տէր բարեգութ. ոչ զոր ու

նիմ ինձ այցելու բաց 'ի քէն . պաշտարիմ  
առ քեզ, բարեհաճեացի'ր կատարել զխն-  
դըրուածս իմ գուն դործելով ազատութեան  
աստի 'ի սէր փրկչին վասն անթարշամ կե-  
նաց քոց, զոր տէր Յեսուս անփորձ և ան-  
սասան երկար ամօք պահեալ, կենաց յա-  
ւիտենականաց արժանի արասցէ հանդերձ  
ամենայն գերդաստանօրդ :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

ՆՈՅՆԱՏԱՌ ԶԵԻՈՎ

ՆԱԽԵՐԴԱՆՔ ԵՂԲՕՐ ՍԻՐԵԼԻՈՅ

Սիրուն սիրական' սաստիկ սիրելի,  
սիրալիր սեղան' սերունդ սիրալի,  
Ստեղնեալ սքանչական' սիրով ստեղծողի,  
սրբասնունդ սէր' արտակից սրտի .  
Սոյն սիրով սերեալ' սիրոյդ անեկի,  
ստոյդ սրբութեամբ' սիրտս սիրահարի :

ԵՊԻՓԱՆ  
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

---

## ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌ

### ԲՆԱԲԱՆ

Նրէ ո՛չ հատն ցորենոյ անկեալ յերկիր մե-  
ռանիցի, ինքն միայն կայ:

Ո՛վ սգազգեսաց տխրագէմ եղբարք՝ որք  
գումարեալ կայք համախոհութեամբ և լայք,  
լուութեամբ պատուեցէք զժամանակս զայս  
սակաւ ինչ լսել: Ի կիանս աշխարհի չիք  
ինչ մխիթարական ուրախութիւն որպէս ող-  
ջամբ կենակցութիւն ընդ սիրելիս, նոյնպէս  
և չիք ինչ չար սր տրտմեցուցանէ զսիրտ  
սիրելեաց և բարեկամաց, որպէս և մահ-  
ուամբ անջատումն սիրելեաց, գիտեմք զայս  
ապաքէն հաստատուն և փորձեալ եմք բա-  
ւական, զի՞նչ ապա գեղեցիկ ևս ընտրու-  
թեամբ մեզ արժան իցէ աննել, թերևս  
արտասուել դառնապէս իսպառ ՚ի վերայ  
սիրելեաց մինչև ՚ի խաւարումն լուսոյ աչաց  
մերոց. չէ այս ընտրութիւն գեղեցիկ զոր  
միտք խորհրդական թելադրեն մարդոյ. իբ-  
րև զի որչափ գիտեմք թէ սուգ է անհնա-  
րին մահ սիրելեաց. նոյնպէս և գիտեմք հա-  
ւաստի գիտութեամբ, թէ հարկ է մահ ա-  
մենեցուն, զի անխափան և աննահանջելի  
վճիռ է տիրական, իսկ յազազս մահուան

ամենայն մտորդկան իրրև ՚ի քաղաք անպա-  
 րիսպ են բնակեալ, ասէր ոմն իմաստասէր,  
 մինչև գեղեցիկ ևս կ'իքէր այլ ոմն իմաստուն,  
 թէ մեռելութիւն է այս կեանք. և սկզբնա-  
 կան առաջին դուռն է մտից այնր հանդեր-  
 ձեալ կենաց. ապա իբր անխուսափելի կաշ-  
 կանդեալ ցաւիլ իսպառ անմխիթար՝ չէ՛ ըմ-  
 բոն. ցաւիլ շափով է օրէն գորովագութ  
 սրտից սիրատենչութեան աղագաւ. են և ՚ի  
 ձեզ՝ արդարև ծնողք որք ունին օրհնեալ զա-  
 ւակունս կենդանիս, որոց տացէ Մատուած ա-  
 րեշատութիւն կենդանութեան, որ մխիթա-  
 րիչ մեծ են ծնողոց հնազանդութեամբ, և  
 բազում բարեպաշտական մասամբ. և են ՚ի  
 ձեզ սմին նման հոգեհատոր զաւակք որք  
 առիթ մեծ եղեալ իցեն ցաւոց սրտից ձե-  
 րոց մահուամբ իւրեանց յիշելով զաստուա-  
 ծահաճոյ բարեանունդ վարս և զբարեբար-  
 բառ խօսակցութիւն նոցին. աստուածա-  
 պարգև մխիթարութիւնն ցամաքեցուցէ  
 զարտօսք աչաց ձերոց ամենիւյ. յիշեցէք  
 հայր մեր զՄ. քրահամ, և զսիրելին զմիամօր  
 Օրսահակ. զհրամանաւն Մատուծոյ կարէր  
 զանցանել չզոհել զորդին իւր անհնազան-  
 դութեամբ. թանձրացաւ սիրտ իւր հայ-  
 րական. նուաղեցաւ գութ իւր ծնողական.  
 Վաղվաղ մոռացաւ զորդեսիրութեան կա-

նոն բնական . այլ զի՞նչ են կամք տեառն  
օրհնեալ , փութագաւ գոյն շտապ կատարել .  
իւր ձեռօքն կապեալ զձեռս օրդւոյն սիրելոյ  
սուսերամերկ արձակեցաւ 'ի վերայ իբրև  
զոչխար սպանդարանոցի զոհել հաճութեամբ ,  
զի մի՛ լուիցէ և ինքն , թէ անգուշեաց զսի-  
րելին . ընդ նոսին և Օհսահակ զնմանու-  
թիւն հօր յանձին բերելով զնոյն օրինակ՝  
յօժարամիտ լեալ հնազանդութեամբ հա-  
ճեցաւ կամակից լինել ըստ Աստուածային  
կամաց :

Արդարև տէրն մեր Փրկիչ ելաց 'ի վե-  
րայ սիրելւոյն հանդէպ զերեզմանին . բայց  
էր աղագաւ . ծանուցից ձեզ զներքինսն ըզ  
խորհուրդ . նաւուղիղն Վրիստոս հանդէպ  
նաւին զմէ՞ գեգերեալ ողբաց . ձեռն 'ի ծնօտի  
արտասուելով :

Վասն զի՛ նաւն բանական՝ պերճ պսակ-  
եալ Աստուածախնամն մարդ՝ զարդարեալն  
անմեղութեամբ և անմահութեամբ՝ պայծա-  
ռազգեստն լուսափայլ՝ զորոյ օրինակն իսկ  
եցոյց յինքեան 'ի թափօրական լերին , զոր  
'ի բախմանէ ալեաց աշխարհի 'ի ձեռն նեն-  
դաժոտ ժանտաժուտ շարին խորտակեալ  
ետես արժանաւոր դատակնութեամբ . իբ-  
րև կոճղ կիսայրեաց , տախտակ անշարժուն ,  
պատկեր անբարբառ , եղեալ առաջի գար-

չահոտութեամբ . իմնց տայ Մարթայ՝ հօտեալ է քանզի շորեքօրեայ է . տեսէք տեսն շրէտյք ՚բոպիսի սիրէ զնա : Իշ՛հ՛ միայն ՚ի դերեզմանի՞ն սիրեաց սրտաբեկ լինել սիրելոյն , զի՞նչ գոյր նորա գործ ՚ի մարին ՚ի ծնանիլն ՚ի Քեթիէհէմ . ոչ ապաքէն սիրոյ եցոյց նշան մտաբերելով և անդ թէ ժաման էր բանականն նմանեցաւ անասնոց որ ՚ի պատուի էր ՚ի դրախտին . աւել աղետիս , այնպիսումն ահա եկեալ հանդիպեցաք ժամանակի . յորում առաւելապէս զքաջ և զառաքինիս և զականաւորս ՚ի մարդկանէ առեալ տանի գազանն անողորմ մահն անխրտաբար և անխնայաբար :

Մ՛վ մահ քանի՞ դառն է յիշատակ քո . և ո՞ր սարսափ արդեօք ոչ պաշարէ զՖարդկային բնութիւն յիշելով և եթ զանունքո սոսկալի , ՚ի յաւիտենից մինչև ցայսօր բեկզնն կենսազրաւ համայն . ոչ կարացին քաղցրացուցանել զքեզ և ոչ յագեցուցանել աշխարհակուլ ժանիքդ մահաբեր . ո՞ անգութ գազան , մինչև ց՞րքան ժամանակ առանց կատարելութեան հասակի իբրև գայլ յափըշտակիչ դիմես ՚ի վերայ . և իբրև անագորոյն բռնաւոր քօտմենլի և նախանձոտ շարակնեալ . թէ երեկոյի , թէ ՚ի մէջ զիշերի , թէ հաւախօսի , առեալ տանիս իբրև շար շե-



րովդի անգութ զինուոր յերկեմենից մինչև  
'ի խոնարհ սպառել 'ի կենաց իբրև անյա-  
գուրդ գազան. դունախահարցն անսաստ-  
կութեան պատուհաս, ոյք 'կարեն արդեօք  
կակղացուցանել զքեզ և զզօրութիւն քո .  
յորդահոս արտասուք ողբոց գորովաղէտ  
մարց, թէ վշտահար ընտանեաց ցաւալի ձայ-  
նակցութիւնք . էր ոչ խնայես գոնէ առա-  
քինի զուարթահասակ երիտասարդաց և նո-  
րածաղիկ ամուսնացելոց սիրապատար կեն-  
ցաղալարութեանն, ամենայն մտխանօք և խո-  
հեմամիտ զգաստ ընտանեացն . երբէք ոչ  
գթաս կողկողանաց մատաղ հասակաց . այլ  
անաչառութեամբ դիմել դիմես իբրև ըզ  
դաւթեան յանձնառական պատիժ՝ բարեաց  
և չարեաց միանգամայն, մեծաց և փոքունց  
ազբատաց և փարթամաց տիրեօ խրոխտա-  
բար, ուժգնապիրկ առնել առ հասարակ .  
ամենեին ուկնախից և լսելարեկ լեալ . սոս-  
կալի սարսափ անգթութեանդ աշխարհա-  
սիիւռ հրատարակեալ դողացուցանէ զաշ-  
խարհ համայն . քանիցս 'ի սիրահարուստ  
ընկերաց բաժանեօ . քանիցս 'ի ծնողական  
խանդակաթ սիրոյ զրկես, այնպիսի թանձ-  
րութեան քուն արկանես խորին, զոր ոչ  
կարեն զարթուցանել արապանք և ահագ-  
նագոչ թմբուկք՝ Աբուգսդոնոսորեան . ոչ

որ կարեն 'ի թագստի լինել եթէ կամիցին  
աշատ լինել յերկիւղէ քումքէ և 'ի տազ-  
նապէդ. թէ և Աովհասու և Վիրանանու բարձ-  
րաւանդակ լիրանցն ներքոյ խնդրեսցնն ա-  
պաստանարան, և ո՛չ 'ի մէջ Ավիհանեան  
ընդ ամէհի փրփրադեզ և մրկածուփ ա-  
լեաց. բայց հարկանես սաստկապէս հար-  
ուածդ անխնայ, և ո՛չ երբէք անխայես,  
բոլոր աշխարհ առ քեզ սպասեն աշխարել.  
զի իբրև զցորեան ընդ առաջ մանդաղի ար-  
կեալ, և կտորեալ 'ի ներքոյ սուր դերան.  
դիդ, խարփալել պարաստ ես զնոսա. ո-  
րովհետև խանձարուր երախայից անգամ որ  
ո՛չ ելեալ են տակաւին յօրորոցէ և դեռ  
չեն կարող բարբառիլ զանուն քո, դու ըզ  
նոսա հարուածես դառնակափտ մահազինօք.  
և անփորձ պատանեակք մինչև իցն ծա-  
նօթացեալ սուտ աշխարհիս անցաւոր վա-  
յելչութեան, և զնոսա յափշտակես կեն-  
սազրաւ արարեալ տարաժամ, և վշտակիր  
ծնոյս նոցին՝ ո՛հ թաղես 'ի սուդ դառնու-  
թեան. իսկ որ անյաղթելի կարծէին 'ի զօ-  
րութենէդ՝ ո՛չ սակաւ նուաճեցեր. թէ և յաղ-  
թահասակ էին հսկայ: Այն Անուր և Ա-  
զնա որ սպասեն 'ի գալստեան նեոին քա-  
րողել զտեառնէ՝ ռումբդ հարկանելոց ես և  
նոցս զի ժամանեսցն 'ի կեանս. յիրաւի

ողբացին և ողբան ծնողք անդառնալի ճա-  
նապարհորդութիւնն որդւոց իւրեանց . սա-  
կայն երանեն զհօգիս նոցա . որ կենաց 'ի  
կեանս փոխեցան : Արպէս և յայսմ աւուր  
սրտառուչ տեսարանիս պատկեր նորոգ ճըշ-  
գըրտեցեր 'ի ներկայութեան ամենեցունցս  
զայն պատկեր տխրադէմ կենսազրաւ հար-  
ուածդ շանթելով յայսմ ներկայ ննջեցելոյս  
զփորձ փորձեցեր . դառն զօրութիւնդ անո-  
ղոքելի զրկել զսա յայսմ աշխարհէս ան-  
կարեկցարար կտրելով հատու մկրատովդ .  
և ո՛չ խնայեցեր բնաւ . զքաջութիւն և ըզ  
ճարտարութիւն բժշկաց և զբաղադրութիւն  
գեղօրէից բաղմաց յանկարծահաս գալըս-  
տեամբդ 'ի գերեւ հաներ . ուրեմն արժա-  
նապէս ողբացեն ամենեքեան յարտասուս  
դառնութեան խառնել իւր ընտանեացն մե-  
ծակական լալեաց ասելով զբան մարգարէին ,  
ո՞ տայր զգլուխ իմ ջուր և զաչս իմ աղբիւր  
արտասուաց . զի յայսմ հետէ ո՛չ կարեն  
տեսանել զայս սիրուն պատանին . զի՞նչ  
ասացից . քանի՞ցս թուեցից . անխոնջ ջա-  
նասիրութիւնն , պարկեշտասուն բնաւօրու-  
թիւնն . ո՛վ դաժան մահ՝ մինչ արբուն  
հասական խայտայր 'ի բարեմասնութեանցն  
կատարելութիւն դիմել անձկանօք , դաւա-  
ճանեցեր զնա , անգթարար խլեցեր զմատա-

ղատունկս այս . յորում իրրև շառաւիղ լուսափայլ արեգական 'ի ծագելն իւր 'ի հորիզոն , դու նախանձարար նսեմօտուեր ամպովք քովք ծածկեցեր և խաւարու մթադնեցեր լուսապայծառ զայս աշտանակ . խուժեցեր ձահաբեր հիւանդութեամբ . աւերեցեր և յերկիր կործանեցեր շքեղատեսիլ տաճար բանական . ժպրհեցար արբուցանել սմա զբաժակիդ դառնութեան ժանտաշուր . որով կնքեաց անմեղն զիւր զկեանս 'ի մէջ պատանեկութեան ցանկալի հասակի . լացին լալեաց արժանին գուժաբեր արշալոյս սգոյ և հառաչանաց եղև առարկայ . զի քուն թանձրութեան ընկալաւ անձին սպառսպուռ անզգայացեալ անդամօք . մինչև յարիցէ 'ի կոչման փողոյն գաբրիէլեան : Իսկ դու յայնժամ ամօթազգեաց լինելոց ես ո՛վ մահ . դու Մատուծոյ արդարութեանն և վրէժխնդրութեանն պատուհաս . որ կենարարին անդամ անմեղ և անարատ սուրբ մարմինն զօրել փութացար լրբենի անխտրաբար . բայց մինչ կապել կամէիր և զնա , ահա յայնժամ դու կապեցար անլուծանելի . մինչ ցայն վայր էր զօրութիւն բո , այսուհետև մահ ո՛չ համարի մահ . այլ միայն նընջումն . որպէս գրեալ է 'ի Շարականի , որ ըզմահ մահու ծանուցեր մահ . ուրեմն արդա-

բացաւ բան մարդարէին Վաւթի որ ասէ .  
մի՞թէ որ ննջիցէ այլ ո՞չ ևս յաւելցի յառ-  
նել . արդարեւ յետ երից աւուրց մինչ յար-  
եաւ կենարարն և կենդանին՝ կոչեցաւ ա-  
ռաջին պտուղ ննջեցելոց . ընդ որում և  
զմեզ յարուցանելոց է յաւուրն հատուց-  
ման , ըստ գործոց իւրաքանչիւրոց յաւիտե-  
նական կենօք պսակել . ահա սովաւ եղև  
մահն հանգիստ ննջումն , և առաքինեաց ըս-  
կըզընադուռն ժամանել՝ ի կեանս . ապա ու-  
րեմն վա՛շ զօրութեան քում . ո՞ւր են հա-  
զարամեայ յաղթութիւն քո . ո՞ւր են յաղթա-  
բազուկ զօրութիւն քո . թուլացաւ քաջու-  
թիւնդ . լուծաւ իշխանութիւնդ . ո՞չ կա-  
րացեր նկատել թէ ո՞ւմ մաքառիս արդեօք .  
կամէիր զամենեսին երկեցուցանել ահարեկ  
լեալ ՚ի քէն . դու կորար մեռար զմահն  
յաւիտենական , անմիտ՝ վասն որո՞յ պատ-  
ճառի ՚ի վերայ մահկանացուացն ամենից դը-  
րոշմեալ ես անուն քո քաջութեան . յորէ  
յայնմանէ որ յարեաւ Տէրն մեր Վրիս-  
տոս՝ բազումք են որք փափաքին կանխաւ  
մտանել յայն դուռն , արձակեալ զճա-  
ռայս քո տէր ՚ի խաղաղութիւն ասելով .  
դու խրոխտանաս յայնմ , ուր չև է ծանու-  
ցեալ բեկումն քո . անդ ձայնի ահաւոր ա-  
նունդ ուր յիշեսցեն զքեզ ՚ի խաւարի , այլ

որք ընդ լոյս գնայցեն՝ խաւարն ինչ ոչ վե-  
նասէ նոցա . զի ասէ Առաքեալն այնպիսեաց .  
Եբանի՛ այնոցիկ որք ՚ի Վրիստոս ննջեցին  
պատրաստաբար . ուրեմն եղբարք իմ սգա-  
ւոր և վշտակից՝ անսահման արտօսք բրիս-  
տոնէիցս չէ վայել հեթանոսաբար . ՚ի հը-  
նումն լային զձնեալսն , և երանէին զմեռ-  
եալսն . դուք ձեզէն ծաներո՞ւք և զայս չեր-  
կարել բանիս . անագորաս իմաստասէր ՚ի լը-  
սել զմտհ որդւոյն իւրոյ՝ զի՞նչ ասէ . ես  
զնա մահկանացու ծնայ :

Եւ մանաւանդ զի՞նչ ուրախութիւն էր  
այն՝ յորժամ երկորեակ թողմաս առաքեալն  
լուաւ զյարութիւնն՝ Վազարոսի , փափաքե-  
ցաւ և ինքն ուրախութեամբ ընթանալ ՚ի  
գերեզման նորին . որպէս և ինքն իսկ ասէ  
յարութեան յուսով , Օ՛ն անդր և մեք մեռ-  
ցուք : Արդ՝ նոյնպէս և սա անչունչ և ան-  
կենդան մարմին հողեղէն՝ հողազանգուածդ  
համայն՝ լուարուք . դարձ անձն իմ ՚ի հանդիստ  
քո ասելով՝ և ձեզ ամենեցունցդ առ հա-  
սարակ տեառն յանձն արարեալ , մնաք բար-  
եաւ ասելով սանդուղք աղօթից խնդրէ ՚ի  
ձէնջ , ելանել անտի ընդ դժուարին անձուկ  
ձանապարհ որ առ Աստուած . քանզի ընդ  
այսս օթայնոց անցանել ունի անմահ իւր  
հոգին . և թէ մարդկեղէն տկարութեամբ

մնոս ինչ գործեալ իցէ սորա, թողութիւն  
 և ներումն խնդրէ. որպէս և ես նովին բե-  
 քանով խօսեցայ և խօսիմ 'ի դամբանական  
 ճառիս վերջաբանութիւն. միաբերան մաղ-  
 թեսցուք առ Աստուած. զի ներելով զյանցանս  
 սորա, զհոգի սորին Աստուածութեանն լու-  
 սով լուսաւորեսցէ. և զանունն 'ի դարու-  
 թեան գրեսցէ. մխիթարեսցէ զվշտահար  
 ծնողս և զեղբարս և զամենայն աղգականս.  
 և սրբեսցէ զարտասուս աչաց ամենիցդ.  
 սփոփեսցէ զսիրտ ձեր ցաւալից. և զամբու-  
 ժելի վէրս սրաից ձերոց. բժշկեսցէ սուրբ  
 Հոգւոյն պարգեաց ամենարուեստ մխիթա-  
 րութեամբ. որք բաղմահառաչ կողկողէք  
 անմխիթար. և ներեսցէ զյանցանս զիւրաքան-  
 չիւրոցդ ամենից. և ամենայն քրիստոնէից  
 արժանի արասցէ սմին նման ուղղափառ  
 հաւատով բարի գործով և սուրբ մարմնոյ  
 և արեան տեառն հաղորդութեամբ հասա-  
 նել առ անձկալին տեսութիւն սուրբ Աստ-  
 ուածութեան փափաքանօք ընդ Ղաւթի. որ  
 ասէ. ե՞րբ եկից երևեցայց երեսացդ Աս-  
 տուծոյ. և ըստ Արարեկացւոյն, արդեօք մը-  
 տի՞ց 'ի խրախճանութիւն խորանին լուսոյ  
 քե առաջնորդեալ. և սմա ուրախութեամբ  
 ժամանել առ անձկալին ամենեցուն, ար-  
 ժանիս արասցէ. 'ի վերին խորան սուրբ

արքայութեան, վայելել անդանօր զանեղրական փառաց լոյս աստուածութեան, ընդ հըրեշտակս լինել օրհնարան, որում վայելէ փառք՝ յաւիտեան :

Ն. Ծ. ԴԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

### ՋԴՈՒՇԱՆԱԼ ՅԱՂԱՆԴԱԽՈՐԱՅ

Վտղեմնական բարեկամի իմոյ խնդալ ՚ի տէր բարեպաշտական բերկրանօր.

Օայս բան փրկչական՝ լծէ ՚ի ճանապարհի ողջոյն մի տայջիք. զմտաւ ածեսալ իմ, հաճոյ թուեցաւ ինձ ոչ յայն վայր յերեկեան աւուր ողջունել զքեզ, մինչ մտանէիր յայն ժողովարան աղանդաւորաց. այլ դու ընդէք ոչ զմտաւ ածես զքոյսդ զպիտոյս, լծէ զգոյշ լերուք ՚ի խմորոյ փարիսեցւոց. և լծէ ՚ի քաղաքս սամարացւոց մի՛ մտանիցէք, չմտանել և քեզ՝ ուր ամօթ համարին ուղղագաւան մարդիկ մտանել. ճշմարտիւ ասեմ եղբայր՝ զբօսնուլ անգամ ոչ ակօրժին, այսու երկիւղիւ, լծէ մի՛ զայնց մարդասանձ բանսարկու անձանց որոգսյթաձիգ պատրոգական բանս լսելով ապականեսցին ականջք, և մեղսակիր լինիցին մեղաց շիթթմամբ մը-



տաց . վասն զի՝ որչափ տկարամիտ դիւրագ-  
գաց անձինք մերձենալով առ նոսա , միտե-  
լին աշխարհային ցանկութեանց վայրագարչ  
մեղկութեամբ . այնուհետե խեթիւ հայեց-  
եալ և 'ի ճշմարիտ հաւատս մեր . չարա-  
բանական նախատ բանիւք քարակոծ առնել  
ջանան հանապազ զկաթուղիկէ մեր սուրբ  
Աղկեղեցի , իսկ և իսկ նման այն մարդարե-  
ութեան Ղաւթի , թէ նստեալ զեղբօրէ  
քումմէ չարախօսէիր , և 'ի վերայ որդւոյ  
մօր քո դնէիր զգայթակղութիւն . քան-  
զի արդարեւ զառաջինն եղբայր էին մեզ  
միոյ մօր սուրբ աւազանին զուակ գոլով 'ի  
միասին . իսկ այժմ որդւոյ մօր ասելն զի՞նչ  
է , որ ոչ յորժորջէ յերկրորդումն եղբայր  
ըստ առաջնոյն . ըստ որում հեղձան և հե-  
ռացան , այնուհետե դնել դնեն զգայթակ-  
ղութիւն ընդ այնոսիկ , որք տակաւին որ-  
դիք են մօր սուրբ աւազանին հարազատք .  
արդարացաւ իմաստալիր բան արքայորդւոյն  
'ի դիմաց հարսին , այսինքն 'ի ժողովրդոց  
մոյր մեր սուրբ Աղկեղեցւոյ ընտրեալ զա-  
ւակաց . թէ որդիք մօր իմոյ մարտեան ընդ  
իս . արդարեւ մօր իմոյ . քանզի նոյն ինքն  
մայր մեր Աղկեղեցի որ ծնաւն զմեզ , և ըզ  
նոսին սնուցանէր ընդ մեզ բարեպէս . իսկ այ-  
ժ ըմ ընդ մեզ մարտնչին , այսինքն մօր իմոյ

սուրբ աւագանին նախկին որդիք իբրև ըզ  
հակառակորդ սատանայ՝ մտանշին ընդ մեզ  
նախատանաց բանիք : Այս գայնպիսիսն՝  
քարամբ պարսից հաւատոյ բանից արտաքս  
հերբել ՚ի ձեան սուրբ հայրապետաց մերոց՝  
արժան և իրաւ . քանզի կամին և զընտ-  
րեալս կորուսանել յորոց առ ոտս մերձե-  
նալ անգամ մահուան ունի գուշակումն .  
թէ և իցէ սիրելի եղբայր . կամ հայր քո  
կամ զաւակ ամբողջական անձին լրումն զի՞նչ  
իցէ գերընտիր և սիրելի և առաւել հար-  
կաւոր . ոչ ապաքէն ազգ . կամի ասել Հի-  
սուս Փրկիչ ՚ի ձեան Աւետարանշին վասն  
այսպիսեաց . թէ և իբրև զուշս մեր սիրելի  
իցէ , ՚ի բաց հանել զնա ՚ի մէնջ . զի և մի  
նորին պատճառաւ գեհնն պատրաստիցի մեզ  
օթեան . քանզի լաւ է միականի և խեղա-  
թիւր մտանել յարբոյժութիւն երկնից յա-  
ւիտենական փառոց , քան թէ նախատոր-  
դի ազգականացն սիրով իբրև ամբողջական  
մասամբ մտանել ՚ի գեհնն :

Ն. Ծ. ԳԵՈՐԳ.  
ՅԱԿՈՒԵԱՆ



ՇՆՈՐՀԱՆՈՐՈՒԹԻՒՆ ԱՆՈՒԱՆ

ԲԱՐԵԿԱՄԻ ԻՒՐՈՅ

Յարգի բարեկամ.

Հնորհաւոր եղիցի տօն բարեբաստիկ  
անուան քում քաջատոհմիդ յաւուր տա-  
րեգարձիդ. որ արդարեւ մեծի ուրախութեան  
առիթ եղև մեզ օրս այս. խնդրեմ յԱստու-  
ծոյ ամենակալէ քեզ տալ յամս ողջոյն  
անդորրական կեանս ուրախականս, խնկա-  
նուէր աղօթիցն սժանդակութեամբ անուա-  
նակցին քո սրբոյ հայրապետին:

Եւ ա՛յլ գժբազդութեանս որ արքունա-  
կան գործոյս աղաքաւ ոչ կարացի անձամբ  
գալ ՚ի շնորհաւորութիւն գերընտիր աղնիւ  
եղբօրդ, և անդանօր ուրախակցիլ ընդ քո-  
յայինսդ. վասնորոյ աղաչեմ զմտերմութիւն  
քո հաճութեամբ ընդունել զայս ապացու-  
ցական սիրաբարբառ գրութիւն. իբրև զանձ-  
նական գալուստ շնորհաւորութեան:

Ողջ լեր բարեհոջակ անուամբ քով  
՚ի հարուստ ամս յուրախութիւն ամենայն  
գերկաստանաց բոց Է. ինն յետնօրդ եղբօր  
քում

ԳԵՈՐԳԻՍ  
ՅԱԿՈԲԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻ

ՈՒՐՈՒՄՆ ԱՆՉԿՈՒԹԻՒՆ

Բ Ն Ա Կ Ի Լ Յ Ա Յ Ս Ի Ն Չ Դ Պ Ր Ո Ց

Բարեկամ իմ եւ մտերիմ.

Յորժամ պատահիցի որ ծաղկալից բեղմ-  
նաւոր պարտիզի իմիք, ո՞չ ապաքէն ցանկա-  
նալով ցանկայ մտանել 'ի մէջ նորա և վա-  
յելել 'ի բարութենէ անտի. կամ ջահազ-  
գեստ լուսակայակ և պայծառափայլ օթա-  
րանի պատահիցի, ո՞չ ապաքէն խնդութեամբ  
աճապարէ մտանել անդ, և լուսազգեստ  
լինել պայծառափայլ լուսով նորին: Սմին  
նման՝ յորժամ ուսումնասէր որ տեսանիցէ  
զդպրոց ինչ յոգնարեղուն զարդարեալ զա-  
նազան գիտութեամբ կարևորաց. ո՞րպէս  
ևսայ զեռայ սլանայ մեծի անձկանօք մտա-  
նել անդանօր և ընդ հովանեաւ լինել խը-  
նամոց պերճիմաստ ուսուցչաց, սնանիլ և  
օծանիլ հոգեպէս հոգեպարար իւզով գի-  
տութեան և իմաստութեան: Որպէս և ես  
տգիտագոյնս ուսումնասիրաց՝ յորժամ տեսի  
զայսպիսի բողմազան գիտութեամբ լուսա-  
ւորեալ բարեհամբաւ Մայր Գպարոց մի նո-  
րոգ կառուցեալ ընդ առաջ Եկեղեցւոյ սըր-  
բազան Եռաբելոցն թաղէոսի և Բարդու-

լիմէոսի անուան կառուցելոյ, զորոյ զջա-  
տագոյութիւնն՝ յայսմ կէտեղեցւոջ լուայ 'ի  
քարոզութեան Հարութիւն անուն պերճի-  
մաստ ըարունւոյն համառօտ վկայաբանու-  
թեամբ, այսպէս. թէ քաջապէս խուզար-  
կութեամբ յորժամ քննեցի զուսանողաց  
մանկանց վարժելոցն զաշխատանաց արդիւնս  
հնգից ամաց կառուցեալ Ղարոցիս այս՝ իբ-  
րև երեսնից ամայ դպրոցաց նման գտի ըզ  
յառաջագիմութիւն: Ասնորոյ յայնժամ ըստ  
վաղեմի կարօտակիղութեան սրտի իմում  
յաւէտ անձկութեամբ գուն գործեալ ջա-  
նացի հնարիք իմն մտանել յայս իմաստա-  
լիբ բեղմնաւոր պարտէզ վարժութեան. և  
ահաւասիկ կամ անարժանս ընդ հովանեալ  
խնամոց սրբազան Առաքելոցն, և ակն ու-  
նիմ միջնորդութեամբ նոցա օր քան զօր  
պայծառանալ լուսով գիտութեան, 'ի ձեռն  
մեծաջան աշխատութեան այս ինչ անուն  
ուսուցչի. փանք ամենախնամ Արարչին, որ  
տուիչն է բարեաց և կատարիչ խնդրուա-  
ծաց ամենայն ուսումնասիրաց:

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ



## ԽՐԱՏ ԱՆՅԻՇԱԶԱՐՈՒԹԵԱՆ

Յառաջիկ էղբօր իմոյ սիրելւոյ սէր Աստուածաւանդ.

Ի հասանել նամակիդ՝ ձայն մահադուշակ զերթ թնդիւն որոտընդոստ ամպրոպաց հասեալ ուժգնակի յականջս 'ի բովիւն մեծ, ո՛չ միայն զխելս մտաց իմոց ցնդեաց 'ի սընարս զլիսոյս, այլ և զամենայն մարմինս իմ սարսեցոյց իսպառ. զի ծանուցանելով զցարտիդ՝ որ վասն այն ինչ պատահական վըշտաց 'ի ձեռն թշնամոյդ՝ խորխտարանես զմասալիք բարկութեան քում զլիզին արբուցանել նմա, ընդ շարի շար հատուցանել անխնայարար, ափսո՛ս:

Ընդ այն յաւէտ զարմացայ քան 'ի խոր խոցումն սրտիս. զի աղնիւ առաքինութեան զնիւթ փոփոխեւ կամիս 'ի նիւթ մեղսական զսպիտականիչն որակ՝ առնել սևորակ: Ո՛չ ապարէն գլուխ ամենայն առաքինութեանց համբերութիւնն է. ոստչ առաքինութեան երբ աճին 'ի քեզ ըստ իմաստասիրին, եթէ չիցէ քեզ երբէք շար արկած ինչ ուստեք: Միշտ յանդորրութեան և ամենեին բարեկեցիկ իցես եթէ, որով ստեղնի և պտղաբերէ 'ի քեզ ցանկալի առաքինութիւն հասրերութեան. ամենայն գովաբան բերանք միշտ

Տեճացուցանելով պատուեսցեն զքեզ եթէ,  
զիա՞րդ կարասցես սիրելի Մատուծոյ համա-  
րիլ և նորին յաւիանական վարձուց պար-  
գեաց արժանաւորս գտանիլ. զի համբուրես-  
ցէ զքեզ 'ի համբուրից բերանոյ իւրոյ զըր-  
կախառն սիրով յանպարսաւ կեանս. այն  
ինչ կենսազրու գանձիք բազմօք բարգա-  
ւաճեալ առանց աղքատութեան խնդայցես  
յնձասցես եթէ, երբ բաժանորդ կարասցես  
գտանիլ այնր երանական բանին Յիսուսի  
թէ երանի աղքատաց հոգւով, զի նոցա է  
արքայութիւն երկնից. առանց հալածակա-  
նաց ինչ ուստեք միշտ անպարսաւ իցես ե-  
թէ, ո՞ւստ ուստեք լսելոց ես երանի որ հա-  
լածեալ իցեն վասն արդարութեան, զի նո-  
ցա է արքայութիւն երկնից. մի' սիրեր եղ-  
բայր մի սիրեր 'ի մարդկանէ դովիլ և 'ի  
տեսողէն պարսաւիլ. 'ի հողածնելոցս երա-  
նել և յորդուց լուսոյ աւաղիլ. այլ զա՞ս  
պատիւ երանութեան ընկալ քեզ յախտ-  
եան, երանի որք հալածեալ իցեն վասն ար-  
դարութեան: Այթէ զիս հալածեցին, ապա  
և զձեզ հալածեսցեն ասաց Յիսուս Վրկիչն  
մեր. ո՞չ ապաքէն ամենեին բարեկեցիկք՝  
անսանձ են մեղաւոր, բարձի թողի զնոսա  
ասէ՝ երթալ զհետ կամաց սրտից իւրեանց.  
որոց շերեի 'ի գիրս ժառանգութիւն սուրբ

արքայութեան : Սագաւորք ազգաց ' դրօշակաւոր պարգևս երբ տան զինուորաց , ո՛չ ապաբէն 'ի խռովութեան պահու 'ի պատերազմի . յորժամ քաջսյաղթ գտցեն 'ի մարտիս պատերազմաց : Արդ ըստ որում բարեկամի բացեր զվիշտ քո իրր կարեկցութիւն խնդրել յինէն , ահա եղէց քեզ ճշմարիտ կարեկից , եթէ լուիցես . եթէ մտերիմ բարեկամ իցեմ քեզ ստուգապէս՝ բնամարդահաճութեամբ չունիմ տալ քեզ հրամանն ռիս տանուլ յայնմանէ որ վշտացոյցն զքեզ , անդամ անդամոց վրէժխնդրութիւն ո՛ր տեսեալ է քո , մանաւանդ եղբօր քում հայազնի , ա՛ն քեզ բարեկամիդ գլխաւոր զօրինակ 'ի խրատ . դիցուք թէ՛ յանդամոց քոց փոքրիկ մասն՝ ճկոյթ մատն քո ասեմ՝ ձախորդ դիպուածով իմն յանկարծ գաչաց քոց զմին հանցէ կամ վնասեսցէ , կարենս անխնայարար պատժել զայն գէթ ծայրատութեամբ . քաւ լիցի՛ , ո՛չ . և ո՛չ երբէք . եթէ կամիս վրէժխնդիր լինել 'վրիժուց փոխան՝ հուր բորբոքեալ ունիմք զսէր փրկչաւանդ կայծակունս դիզել 'ի գլուխ թշնամույն . ըստ աւետարանի խոնարհութեամբ բարիս հատուցանել , այս է որ ասէ՛ մի՛ յաղթիր 'ի շարէն , այլ յաղթեա՛ բարեաւն շարին . թէպէտ ըստ ճարտասանին բարկութիւնն է



կիրք և բաղձանք վրէժխնդրութեան, բայց  
այն վասն հաւատոյ և վասն ազգային բա-  
րեաց գրգիռ լինել 'ի համոզումն. իսկ վասն  
անձին՝ ոչ, քանզի իմ է վրէժխնդրութիւն,  
ասէ Մատուած: Աւրեմն նախ յաղթել փու-  
թասջի՛ր հաժրերութեամբ, որ զօրաւոր է  
քան զամենայն յաղթութիւն, և գուն  
գործել փութասջի՛ր զհուր բարկութեան  
ք՞ շիջուցանել խոնարհութեամբ, որով  
կոչեսցիս անյիշաչար:

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

ԿԱՐՕՏԱԼԻՐ ՆԱՄԱԿ

ԱՌ ՎԱՂԵՄԻ ԲԱՐԵԿԱՄ

ՆԱԽԿԻՆ ՍԻՐԱՎԱՌՈՒԹԻՒՆՆ

ՅԻՇԱՏԱԿԵԼՈՎ

Սիրով սիրեցեալ եղբայր նազելի,  
սրախ բաղկացեալ վարդ մի ցանկալի.  
Աէր անկեղծական առ քեզ նուիրի,  
կարօտով սրախ յարգանօք մեծի:

Չի՞ բարի՝ կամ զի՞ վայելուչ, զի բնա-  
կին եղբարք 'ի միասին:

Աւր բարութիւն և վայելչութիւն, անդ  
է ցնծութիւն հոգեկան և մարմնական փոր-

ձառեալ եմք երբեմն բարեբախտաբար, ցանկալի էին աւուրքն այնոքիկ յորում ունէաբ մեք երկոքին սիրաւառ եղբարքս զայսպիսի ուրախառիթ միջոց. 'ի մի տեղւոջ 'ի միասին ուրախակցիլ և խոյաալ հոգեպարար Աստուածաւանդ սիրով անյագուրդ իրր զերկնայինն ունելով 'ի ձեռին զբաժակ սիրոյ հոգելից զմիմեամբ ելեալ 'ի պատիւ Վան զայս առաւել բարի վայելչութիւն արդարեւ չիք, զոր ոչ կարաց Ղաւիթ գլտանել, պերճն ամենայն վայելչականօք, Իսկ այժմ զի՞նչ գթազգութիւն բարեկամ՝ քանի՞ անմխիթար տրտութիւն, զի յուրախառիթ քաղցրարարբառ տեսութենէդ զրկեալ կամ աւասիկ անմխիթար յորէ յայնմանէ՝ մինչ քողարկեցար, և եղեր թագստի հեռանալով աստի 'ի մէնջ. արդեօք եղիպտակա՞ն իցէ սուլս այս եօթնեքին ամօք, արդեօք ո՞ր գտանելոց եմք այժմ զայն սիրակապից նշան գերագոյն և վեհապանծ, զի զերթ Հովսեփոյ գեղեցկի 'ի սիրաբարձ միայնակեցութեանն խաւարին բանտարգելութենէ ազատութեան հնարաւորեցայց մխիթարիլ յետագոյ առատութեամբ հոգեկեցոյց սիրաւառ ընկերակցութեան: Աւրեմն թէպէտ ես ոչ կարացի անձամբ գալ իբրև բնեխամին առ յարդու.

Թիւնդ, սակայն ահա այսու թշնամիութեամբ խնդրեմ զուրախառիթ լուր քաջողջութեան և բարեկեցութեան քոյին՝ ի մանալ 'ի պաշար հոգեկան և մարմնական սովալուկ անձինս առաւել քան Հոլսեփու համբարեալ բուժանող ցորեան :

Ողջ լեր ուրախ կենօր յաւերժական զի ուրախ էդէց քեւ եւ ես

Ն. Ծ. ԳԷՈՐԳՍ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

ԱՂԵՐՍԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՆ

ԻՆԴՐԵԼ ԶՏԵՂԻ ԻՆՉ ԱՊՐՈՒՍՏԻ

ՆՈՐԻՆ ԲԱՐԵԹՍՈՒԹԵԱՄԲ

Սրբազնասուրբ եւ երանաշնորհ տեառնդ վեհայիառուրեան երկնաճեմ սուրբ զարշապարաց մատչիմ 'ի համբոյր յաւեա խոնարհութեամբ .

Ըզգախնամ բարերարութեան ձերոյ համբաւ աշխարհատարած գոլ, ոչ սակաւ սիտփե և քաջալերե զօրտ տրտմաթախիծ վըտացելոց . ով բարեխնամ, չկամիմ ձանձ-

բացուցիչ լինել վեհափառ աէրութեանդ  
երկարաբանութեամբ, այլ լուր քաղցրու-  
թեամբ համառօտ ծանօթութեանս. վասն  
զի՛ կս ամենանուստ ծառայ ձեր որ 'ի վի-  
ճակ թշուառութեան տանչիմ տոչորիմ տագ-  
նապաւ մեծաւ հանդերձ կօթնեքին զաւա-  
կօք, առ բարեգթութիւն ձեր դիմեմ աղեր-  
սանօք և խնդրիմ լինել ինձ խնամակալ և  
այցելու. պատրաստելով անձին իմոյ տեղի  
ինչ պաշտօնի միոյ. որով կարացից գոնէ  
հոգալ և հայթայթել զամենահարկաւոր  
որդւոց իմոց զհացագին 'ի պարէն:

Վանզի եղին աւուրք բաղու՛ք յորս  
յետ ցաման հրդեհին՝ մեծաւ թշուառու-  
թեամբ աստանդական տատանիմ 'ի քաղց և  
'ի ծարաւ ընտանեօքս համայնիւ նքողեալ.  
Վա՛յ անձինս թշուառութեան, որ չեղև ինձ  
ըստ ժամանակին ստանալ զարհեստ ինչ  
ձեռագործ. յորս սովալուկ լեալ հաշիմ և  
մաշիմ հանապազ անօգնական յուժեքէ.  
Վասնորոյ յոգօք դեգերիմ այժմ այսու ա-  
ղերսական քարտենիւ, աչօք գթութեան  
հայիլ առ իմս նուաստութիւն և ըստ ազ-  
գասէր բնաւորութեան ձերոյ զկարեորն ինձ  
անօրինել. ուրեմն 'ի վերայ բարձու իշխա-  
նութեան մեծարդիւն դաւաղանիդ հաստա-  
տուն լեալ, ողջ լերուք յամայր ամս ընդ

Հովանեաւ խնամոց քոց միտթարիլ խըղ-  
ճալեաց, յորոց և մէն մի ստորագրեալս յե-  
տին թշուառութեամբ ակնապիշ սպասեմ  
բարեաց: Ապա թէ ոչ՝ ՚ի մայթի օթեանիլ  
մուրացիկ զիմորդ կարացից այժմէն յերի-  
տասարդական Հասակիս, իմաստասիրեսօջիք  
գուշակել աղաչեմ զհետեական լալիս վասն  
սլասկառանսց:

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

ՊԱՐՄԱԻ ՇՌԱՅԼՈՒԹԵԱՆ

ԲԱՐԵԿԱՄԻ ԻԻՐՈՅ

Հոգեհատոր բարեկամ.

Յայտ է զի շոայլութիւնն և ժլատու-  
թիւնն՝ երկոքին մոլութիւնք են միմեանց  
հակասական և անհաճոյ ՚ի գործ, զի եր-  
կոքին սոքա իսպառ բառնան զամենայն հա-  
ճոյական գործս աղգասիրութեան և մար-  
դասիրութեան, իսկ զմիջին սոցա ուսանիլ  
և ՚ի գործ դնել՝ է առատաձեռնութիւն, որ  
է առաքինութիւն ընդունելի ՚ի գործ դնել  
իւրաքանչիւր անձանց շահեկանութեան ըստ  
օրինի ծախելոյ զայն զոր ունիմք թէ առ  
Աստուած և թէ առ մարդիկ, զէ քա-

դանցութիւնն ծախուց յաղքատութիւն անկանիւ պատճառէ մեզ յորում զպիտոյսն տկարանամք գործել. նոյն գունակ ծանցուք և ժլատութիւնն, զի զարժանաւորն և զկարեւորն կծծի բնութեամբ 'ի բաց թողուլ՝ երկոքին ևս չէ հաճելի առաջի Աստուծոյ, յայտ է. քանզի հետեւաբար ծագէ արծաթսիրութիւն, որ է կռապաշտութիւն ըստ Առաքելոյն. այլ առատաձեռնութիւն բաւական ծախույ՝ է գիտութիւն մեծ և գովանի:

Քանզի զոր ինչ կարեւորագոյն իցէ և զպիտոյս անձին կամ հասարակութեան՝ զայն ըստ արժանոյն տայ տնօրինել, յորմէ վերբնծիւղի, ո՛չ զրկել զայլս, և ո՛չ զրկիլ յումեքէ. գորինակ ունիմք զեղկելի գործ շոյլութեան անառակ որգւոյն որ յաւետարանին եղբայր՝ մեծամեծ շարեաց եղև պատճառ ժառանգս հօր իւրոյ շոյլութեամբ վատնելովն. մինչև անգամ արածող եղև ըզհօրանս խողիցն վայրենեաց. իսկ յետոյ զի՞նչ, անկեալ 'ի յետին աղքատութիւն և 'ի չքաւորութիւն, թշուառութեամբ կալուղկեանս կարօտ գօլով եղջեր միում զոր ատէին խողքն. որում ասյր նմա ոչ ոք: Ազէ և զայս բան իմաստասիրին ազգողական տամ քեզ ընթեռնուլ. որ ասէ վասն երի-

տասարդի ուրուք կարօտելոյ . զի որկրամո-  
լութեամբ իւրով վատնեալ էր զամենայն  
ինչս իւր, տեսանելով զնա յաւուր միում,  
որ ժլատութեամբ ուտէր զձիթապտուղ մի՝  
երկնչելով թէ մի գուցէ պակասիցի . զոր  
ականկալութիւն . եթէ 'ի վաղուց այդպէս  
խնայէիր ասէ, գուցէ մինչև ցարդ կար-  
կանդակ ուտէիր . գոն արդարև յաւետայդ-  
պիսի զուր ականկալութ, որ գերդաստանաց  
իւրոց անխնամ լեալ նեղեն զնոսա խնայե-  
լով զինչս 'ի պէտս նոցա . բայց 'ի շոյլու-  
թեան յատկապէս անձանց իւրեանց ցան-  
կութեան՝ յաճախ, միայն զիւրն հոգալով  
կատարել զաղօթանս, թէ 'ի խորտիկս ու-  
տելեաց թէ 'ի զքօսանս և թէ 'ի հանդերձս  
բեհեղեղինաց . այնպիսեաց է զոր ասէ Ա-  
ռաքեալն . թէ՛ եթէ որ ընտանեացն խնամոչ  
ունիցի 'ի հաւատոցն ուրացեալ է . և սար-  
սափելին՝ իմա՛ աստէն յորժամ կցորդէ յա-  
սելն . առաւել քան զանհաւատսն է . լուս՛ր  
արդեօք յորո՞ւմ աստիճանի կայացաւ վեր-  
ջաբանութեան մեր բանք յորդորանաց յեր-  
կուց մոլութեանց անտի շոյլութեան ա-  
սեմ և ժլտութեան . մինչև անդամ ան-  
հաւատութեան երեր մեղ լուր լինել պատ-  
ճառ . և առաւել քան զանհաւատսն յո-  
ռեգոյն լինել ըստ Պօղոսի սրբազան Առա-

քելոյն . ապա արդարացաւ հոգելից բան  
Նարեկացւոյն հետորի , թէ դրունք տեսա-  
նելեաց ներհակաց . մինն 'ի լաց և միւսն 'ի  
վրիպումն . և թէ համբարձումն երկակի բազ-  
կաց , ոմն 'ի հարուածս և ոմն 'ի մերժումն :  
Ըպա այսուհետև՝ աղաչեմ ունկն դնել վե-  
րոյիշեալ ազգու վկայարանից՝ թէ անառակ  
որդւոյն շալուժեան , և թէ չքաւորու-  
թեան ստրջացեալ երիտասարդին , և թէ  
յետագայ մեծամեծ վնասուց նոցին , զոր  
պատմէ մեզ սրբազան Ընաքեալն : Ըն-  
թեռնլովդ զսոսա՝ յօժարակամ սիրով փու-  
թասջի՛ր 'ի բաց թողուլ զսովորականդ շք-  
աայլութիւն յանպիտանս , և 'ի միջասահման  
առաքինութեան վարիլ առատաձեռնութեամբ  
'ի կարևորս :

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ



ԿԱՅՐԳԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Ի ՎԵՐԱՅ ՇԱՐԺՄԱՆ ԵՐԿՐԻ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

Սի՛րեկիբ .

Չեզ և տան ձերում յորում բնակեալ



էք՝ միասնաց արդեօք նոյն միաստութի թ մեծ  
շարժն . սասպէս ասեմ, այն զարմանալի  
Յօնան՝ որ յաւուրսն յայնոսիկ ընթանալ  
ընթանայ ՚ի Պրուսայէ ՚ի Պօլիս, և ՚ի Պօլ-  
սոյ ՚ի Պրուսայ . թէպէտ անտես աչաց  
մերոց և թագստի ընթացք իւր ՚ի ճանա-  
պարհ, բայց անձայն և անմտունչ ազդո-  
ղական շնչէ մեզ քարոզ . արդեօք Յեսայեայ  
մարգարէէն առեալ է զխրատ՝ որ ասէ, գոչեա  
զօրութեամբ և մի խնայեր . կամ թէ աշա-  
կերտ մահաքարոզ Ազնկիէի իցէ : Բայ-  
քէն որ ունիցի ականջս լսելոյ լուրիցէ . զի՞ նչ  
ասացից ես այժմ ՚ի կացրդական հանդիսիս  
փոքու, փասն այսպիսեաց պատուհասալուր  
քարոզութեանց . արդարեւ իրբև Յօնան  
առնէ երթեկելութիւն . բայց Յօնան ՚ի Ալեքսան-  
քաղաքի միանգամ և եթ ընթացաւ ՚ի վե-  
րուստ ՚ի վայր քարոզութեամբ . սակայն սա  
՚ի տուէ և ՚ի գիշերի անգաղար ընթանալ  
ընթանայ անտի առ այսր, և աստի առ  
այդր . և զօրութիւն իւր ներգործէ շարժել  
այս մեծի ծանրագոյն երկրագնդի, յորում  
բարձրաբերձ լերինք մեծագոյն ոչ սակաւ .  
սակայն մերս իւրաքանչիւրոց բարձրամտու-  
թեան հպարտօրէն բարուց մինչև ցերբ ոչ  
զօրէ ներգործել ՚ի շարժումն ՚ի հպարտու-  
թենէ ՚ի խոնարհութիւն, և ՚ի շար սուլորու-

թենէ 'ի բարի սովորութիւն, 'ի հակառակութենէ 'ի միարանութիւն, յասելութենէ յեղբայրսիրութիւն, յորկրամտութենէ, 'ի ժուժկալութիւն և 'ի պահեցողութիւն, և 'ի զանազան հոգեկործան մտութենէ 'ի դարձ և յապաշխարութիւն :

Ն. Մ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

### ՆՈՒԻՐԱՄԱՏՈՅՑ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Սերարփի պայծառ առ ազգիս կաճառ,  
յատուկ կառավար ինձ և միթար.  
Համբոյր կադողին ձեռացդ բարերար,  
առ վերընծայեմ միշտ ծառայաբար :

Միշտ պարտական դատիմ զանձն իմ ընծայել ձերում յարգութեան զերախտագիտութեան ինչ նշան յոյժ յոյժ . գոնէ շքնորհակալութեան զայս երկտողի գրութիւն բարեմաղթութեամբ հանդերձ . ըստ որում առաջին գործ երախտագիտի է ճանաչել զերախտիս բարերարին . որպէս ասի . թէ իմաստութիւն է այն՝ ճանաչել թէ յուժմէ է շնորհն . և երկրորդ՝ գուն գործել զփոխարէնն արդեամբ հատուցանել 'ի բարեպատեհ ժամու . որչափ և կարողութիւնն զո-

րեսցէ . որով արժանաւոր գտանիլ վերստին  
ենթակայ լինել ապագայ բազմագունից բա-  
րեաց բարերարին . նա զի՛ շիք մեծագոյն  
պատիւ ստորնագունից , քան զպարտս պատ-  
ուոյն արժանապէս մատուցանել առ վեհա-  
գոյնս , որպէս վկայեաց ոմն իմաստասէր :  
Վասն այսորիկ որչափ յամենայն վայրկենի  
ցանկանալով ցանկայի ցուցանել առ բա-  
րեկնամ տէրութիւնդ զպարտաւորութեանս  
այս նիշ արդեամբ , սակայն բացակայու-  
թիւն վայրացս և հոյք զբաղանացս խա-  
փանել զօրեցին մինչև ցարդ . իսկ այժմ  
'ի բաց թողեալ զայնպիսի խափանարար զա-  
ռիթս ըստ եռափափար ցանկութեան սրբ-  
տիս ամենայն տենջանօք խնդրեմ հաճու-  
թեամբ ընդունել զայս գուղնաբեայ նուէր  
փանաքի . որ ընդ գրարերիս է : Այժմէ կամք  
իցէ զորկենութենէ ծառայիդ իմանալ , ըստ  
հրամանի տէրութեանդ նոյն իսկ գործով  
զբաղիմ ողջամբ 'ի պարէն . և փութեանդ  
կամ աւասիկ չլինել պակասաւոր յաղօթս  
վասն ազդօգուտ կենացդ . նախախնամութիւն  
տեառն Աստուծոյ ամենակալի՛ ըստ մեծի  
մարդասիրութեան իւրում 'ի բարեմասնա-  
կան երջանկութեանն պահեսցէ զանխոնջ բա-  
րեսէրդ . և ամենայն պարգևօք բարեաց լի-  
ացուցեալ , արժանիս արասցէ անդորրական

կենօր կալ մնալ յամս յորովս յանսպառ  
չնորհս նորին յաւէտ վայելել, 'ի ցնծութիւն  
և յաւրախութիւն սրտի բարեացակն ապի-  
կար

ԳԷՈՐԳԻՍ  
ՅԱԿՈԲԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱՎՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ

ԱՌ ՀԱՅՐ ԻՒՐ ՎԱՄՆ ԵՐԱԽՏԵԱՅ

Ամենապատիւ ծնողի աստուածասիրի-  
նօր՝ բազմերախտ ձեռացն որդիական սի-  
րով մատչիմ 'ի համբոյր 'ի մեծի յարգանս.

Մանուկական սիրոյ քո զգեղեցիկ խրա-  
տարանութիւնս որ առ անարժանս, ըն-  
թերցայ ամենայն յարգանօք, որպէս պարտ  
և վայել իսկ է որդւոյ լսել և ընդունել  
պատկառանօք զծնողայն զխրատ. ընկալայ  
արդարև յօժարակամ յիմուժ սրտի՝ իբրև  
'ի մագնեստիս զբողմեցի անջնջելի զամենայն՝  
զոր 'ի ծնողական առատագութ սիրոյ ձեր-  
մէ բղխեալ ծանուցիք նուաստութեանս հո-  
գնկար զրշաւ: Ուրեմն փոյթ յանձին կալ-  
նուլ պարտիմ հանապազօր 'ի կեանս իմ  
սիրով ձաշակել իբրև զաւրախառիթ ողկոյզ  
զօր բերին յերկրէն աւետեաց, և զսիրա-

ծրար նամակդ իրրե ոսկետառն քսակ սս-  
կելից յանկործան գանձարանի մտաց իմոց  
ընդունել առաւել քան զականս : Հաւէտ  
բախտաւորութիւն իմ այն է՝ զի որդեսիրա-  
կան խնամով ձեր փութալ փութայք զոր-  
դիս ձեր բարեսնունդս առնել ամենայն կեր-  
պիւ . և բարեյիշատակ կացուցանել առաջի  
ամենեցուն : Արդ ասպաքէն խրատք քո կեանք  
են հոգւոյ իմոյ և հաստատութիւն դիտոյ ի-  
մոյ , և ամբուսութիւն բովանդակ կենաց իմոց :  
Արոց պահպանութեամբ ակն ունիմ աներ-  
կեան յուսով ժառանգորդ լինել օրհնու-  
թեանն Աստուծոյ անանցանելի , և ազնուա-  
գութ ծնողիդ . և նորօք զօրեմ ընուլ ըստ  
մասին զորդիական սարստ իմ առ քեզ՝ ուր  
զբովանդակն հատուցանել՝ այն , անհնարիցն  
է ինձ մինչև ՚ի կենացս վախճան . բայց ա-  
ղաչեմ զորդեսէր ծնողդ և յայլ նուագս ոչ  
դադարիլ գրել առ նուաստութիւնս զբանս  
խրատականս ՚ի քաջալերութիւն յառաքինա-  
կան դործս . որք քաղցր են ՚ի լսելիս իմ ,  
քան զաւետաբարբառ երկնառաք ձայն շքնշ-  
ման փողոյ հրեշտակապետի . որով միայն  
քաջալերեալ զօրանամ յառաջադէմ ձգիլ  
անգր յառաքինութիւնս և ՚ի գիտութիւնս ,  
ըստ անհրաժեշտ պարտուցս որդիականի :

Ողջ լերուք յաւերժ կենդանութեամբ

ի Բրիստոս ՚ի գերամեծար ճայրութեան Ձե-  
րում:

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԱՄՆ ՄՍԻՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԻ  
ՀԱՇՈՒԱՄՈՒՏՍ ԽՆԴԻԵԼ ՎԱՃԱՌԱՅ

Սէր իմ.

Յետ հարցանելոյ զորկենութենէ քում-  
մէ, որ ակն ունիմ ՚ի տեառնէ ամենակալէ  
՚ի բարւոք կենդողավարութեան լինել քեզ  
յաւիտեան: Այժմէ կամիք յաւուրս յայտ-  
սիկ ՚ի միասին կալ մեք երկոքին ՚ի քննին  
մտցուք տարեկան հաշուին մերոյ առւտրա-  
կան ընկերակցութեան, թէ մինչև ցարդ  
զի՞նչ շահ կամ վնաս արդիւնաւորեալ է  
մեզ. ծանիցուք և իմասցուք, վասն զի այն  
լինչ բազմաթիւ պարտուցդ աղագաւ որ ՚ի  
չափազանց մսխողութենէդ յաւելաւ, մին-  
չև անգամ տոկոսիս տալով արկղ գանձին  
իմոյ թեթեւեցաւ. կարեմ ասել թէ մերձ է  
պարասլիլ և ունայնանալ մինչև իցէ զկայ  
առեալ սոյն փութեռանդ ջանք առատա-  
պարգև շնորհաբաշխիդ որ առ զբոսանս:

Աստի գրոյս պատասխանւոյն սպասեմ, զի  
առանց յապաղելոյ աղդ արասցես նուաս-  
տիս, թէ դձև կամիս գալ առիս և թէ ես  
եկից առ քեզ, երկոքին ևս հաճոյ է ինձ,  
'ի կատարումն սոյն վերոյիշեալ խնդրոյս  
առաջարկութիւն :

Ն. Ծ. ԳԷՈՐԳ.  
ՅԱԿՈՒԵԱՆ

---

ԱՂԱԶԵԼ ՎԱՍՆ ՊԱՐՏԱԿԱՆ

ԱՂՔԱՏԻ ՈՒՐՈՒՔ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՍԱՆԵԼ

ՅՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բարեխնամ տէր.

Հայսմ աւուր աղքատ ոմն յաւէտ պար-  
տական գոլով, հրամանաւ սրբազան Պատ-  
րիարքի եկեալ առ մեզ աղաչէ, վասնորոյ  
ընդ սմին և ես աղաչեմ զբարեսէրդ, զի  
սոյն առաքինութեան և յարգելիդ կցորդ  
լեալ ընդ իս, օգնել և միտարել զեղկե-  
լին զայն փութասցուք 'ի միասին իբրև 'ի մի-  
օրինակ պսակառիթ առաքինութեամբ ցըն-  
ծացեալ, միակամ սիրով, շափաւոր դրամ  
տալով նմա և երկու ծրար հանդերձս ըստ

հրամանի փրկչին մերոյ որ ասէ, թէ որ ոք  
ունիցի զերկուս հանգերձս, մինն տացէ աղ-  
քատաց. որով և արժանի գտցուք 'ի հան-  
գերձեալն լսել զայն զերանական բարբառ  
կոչման 'ի մուտ ուրախութեան. թէ՞ միում  
'ի փոքրկ սնցս յայսցանէ առնելով՝ զիս ըզ-  
գեցուցիք և կերակրեցիք :

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

ՇՆՈՐՀԱԽՈՐՈՒԹԻՒՆ  
ՎԱՍՆ ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆԿԱՆ

Բարեբաղդ յարգոյ սիրելւոյդ խնդալ 'ի  
տէր յարգանօր.

Ուրախօրար հաճուաւ ծննդեան Լ'ստ-  
ուածապարգև անդրանկին ձերոյ՝ լուեալ  
իմ ախորժ տենչանօք և ցնծացեալ 'ի հողի,  
ոչ հանգուրժեմ լսել 'ի խնդակցութիւն նա-  
մակին. իբրև զի՝ առն ցնծացելոյ անհնար  
իցէ անխօսուն լինել. զիտեմ աւասիկ հա-  
մայն ընտանեաց ձերոց յոյժ խրախացեալ  
յայնմ աւուր, և ևս աստանօր 'ի բաղական  
վայրէս բարեգուշակելով զցնծութիւն ձեր  
'ի հեռուստ առաւել քան զառաւել ուրա-



խացայ զուրախութիւն մեծ 'ի վերայ նորա-  
ծին մանկանդ . վասնորոյ պարտ կալաւ անձն  
իմ մաղթել առ Մատուած վասն անդրան-  
կին՝ շառաւիղ օրհնութեան լինել 'ի պայ-  
ծառութիւն բարգաւաճ տան ձերոյ . հայրա-  
կան աչով ձեր պահպանեսցի երկար ամօք  
ամփոք լեալ յամենայն արկածից շարին .  
ղարդարեսցէ Մատուած բազմադէմ կատա-  
րելութեամբ այժմէն անդոտին մինչև 'ի տիս  
կատարելութեան . որպէս զի անուն պար-  
ծանաց եղիցի յաւիտեան ձերումդ ազնուա-  
մեծար ազգատոհմի . որով և դուք զուար-  
ճացեալ բերկրեսցիք իսպառ . և այժմեան  
ուրախութիւն ձեր ամենայն մասամբք ան-  
վճար լեալ .

Ողջ լերուք :

Ն. Ծ. ԳԵՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ  
ՍԻՐԵԼԻ ԱՌՆԷ ԶՍՏԱՅՈՂՍ  
ՅԱԶՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Յարգապատիւ եղբայր իմ սիրելի .

Լուայ թէ որդիդ ըստ բառականին ու-

սեռալ գոլ զաղատական արհեստ հայկաբա-  
նութեան, կամփք այժմ 'ի շուկայն ուղար-  
կել վասն ծառայականին ապրուստ հայ-  
թայթել 'ի կենցաղս իւր, ուրախացայ 'նչ  
սակաւ: զի ջանասիրութեամբն իւրով յուս-  
մունս, իրրև ջաշ լուսաւոր ցուցաւ յաղ-  
նուատողմ գերգաստանի ձերում, աչքդ 'ի  
լոյս եղիցի: որպէս և եսս ականատես իսկ  
եղեալ եմ, զի յիւրում վարժարանի մինչ  
'ի քննութեան աւուր՝ յայցելութիւն երթա-  
լով իմ պատասխանատուութեանն պատա-  
հեցայ, որ քաջահմուտ ցուցաւ 'ի նմին հան-  
դիսի: զոր հանդիսականք և գասատուք՝ հա-  
մայն արժանապէս գովարանեցին և օրհնե-  
ցին իրրև ժառանգաւոր Ղստուածային բա-  
րեխնամական շնորհաց: վասնորոյ ցանկալի  
է յաչս իմ յաւետ՝ ընկալնուլ զնա յաշա-  
կերտութիւն ինձ և խնամել սիրով, և ար-  
հեստագէտ առնել 'ի սուղ ժամանակի, ե-  
թէ կամփք արժաթագործ առնել: Վան-  
դի արգարև գովելի՛ և ցանկալի՛ է յաչս ա-  
մենեցուն այգպիսի հնազանդ պարկեշտ և  
ջանասեր տղայք: որք օր ըստ օրէ յառա-  
ջագէմ լինին յամենայն ուսմունս բարիս  
հաճոյական ընտիր վարուք իւրովք, և եր-  
բէք չլինին կարօտ հացի և ապրուստի որ-  
պէս վատ անձինք, որք 'ի մանկութեան ան-

Հնազանդ գող մեծաց, հեռի շրջին յաշխատանաց . իսկ յետոյ անկոչ բարեկամ աղքատութիւնն դիւրաւ գտանէ զինքեանս . իսկ սա որդի քո, ոչ այնպէս, ոչ . այլ յուսալի՛ է յամենայն ժամ քաջավարժ արհեստագէտ լինել իւր բարեբարոյ բնութեամբն : Աստուծոյ կրկին ասեմ և սպասեմ եթէ կամիս Աստուծոյ յանձնելով առաքեալ առ իս, պատրաստ եմ բնդունել հայրախնամ սիրով :

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈՒԲԵԱՆ

---

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՄԲ  
ԲՈՂՈՒԲՈՒՄՆ ՈՐԴԻՈՅ ԱՌ ՀԱՅՐ ԻՒՐ  
ԶԱՆԻՐԱԻ ՍՊԱՍԱԻՈՐԷՆ ԻՒՐՄԷ

Հանր բարեխնամ .

Թե՛ և ձանձրութիւն ևս ինչ իցէ յարգապատիւ հայրութեանդ, զայս փոքր տումսակ իմ բարեխնամ կամօք քովք ընթեռնուլ ազաչեմ . եթէ յանցանք ինչ գործեալ է իմ, ներումն և թողութիւն շնորհել Աստուածուսոյց ես անդստին : Ասն զի յայսմ առաւօտու մինչ շրջէի՛ ի բարգա-

ւաճ տան պարտիզի քում, ոչ կամեցայ  
 դատարկաձեռն վերադառնալ անտի. ուստի  
 զտրուսս անարժանութեամբ ճշմարիտ ժա-  
 ուանգ համարելով իմ բարերար ծնողիդ, իբրև  
 առանց հրամանի քաղէի ծաղիկ ինչ, յայն-  
 ժամ պարտիզականին դիպեալ հասեալ 'ի  
 վերայ իմ վազ 'ի վազ, այնպէս ուժգին  
 ապտակ մի եհար ինձ, մինչ զի արիւնաշա-  
 ղախ վերադարձայ 'ի տուն: Սուտի ահա յա-  
 ղագս վերաց երեսաց իմոց՝ և զայս արար իմ՝  
 յանցանս ինչ համարելով յիս, յոյժ ամա-  
 շեցի ներկայանալ առաջի տէրութեանդ,  
 այլ բաւական համարեցայ սոյն սակաւբան  
 աղերսիւ ստուգապատում ծանուցանել տէ-  
 րութեանդ, և զմնացելոյն զոր ինչ արժան  
 է առնել՝ դու ինքնին կարող ես, 'ի սակաւու  
 բազումս իմանալ և այնպէս տնօրինել: Ա-  
 թէ չունիս հրաման մտանել 'ի պարտէզ բո՝  
 մինչև ցկէտ օրհասիս մահուան իմոց ոչ մը-  
 տից երբէք:

Ողջ լեր 'ի մխիթարութիւն խոշտան-  
 կեալ տրտմալիբ ինձ նուաստագոյն ծա-  
 ուայիս.

ԳԷՈՐԳ.  
 Յ. ՍԵՐՎԷՐԵԱՆ



Վսեմայնորդ տէր իմ բարեխնամ.

Մփստ<sup>ա</sup> եղկելի անձին իմում զի յաւուրս յայսոսիկ մեծաւ տառապանօր տագնապեալ տոչորիմ տարաբաղդիկ ես ինքնս, յաղագս բարեժառանգ որդւոյ իմոյ, զոր սիրէի յաւէտ. նա՛ աւասիկ անիրաւի ընդ իս ապերախտութեամբ: Վանզի տէր իմ՝ յառաջ քան Հնգնտասան աւուրբք՝ ի մէջ գիշերի ելեալ անիրաւ որդին իմ իբրև վեց հազար դրամոց ինչս ուրուք որ յիս էր պահեստի, գողացեալ զբոլորն, անտես եղև յաչաց իմոց ժամանակս ինչ, իսկ յաւուրս յայսոսիկ եկն ՚ի տուն իմ, և նուաստս լուայ յումեմեկ, զի քանի մի ընկերօք Հանդերձ մօխեալ է զամենայն, բայց յերեկեան աւուր ՚ի ինդրել ինձ ՚ի նմանէ զգրամն, յանկարծ առ իս յարձակեալ ՚ի վերայ իմ, ասէ. ես ականատես եմ զոր գու վատնեցեր յայս ինչ տեսարան որ կոչի (Թատրոն). արստ<sup>ա</sup> գժբաղդիս, ո՞վ չարըմբեր գուժիս, ահա ընկերակից դտաւ չարախօսքհուրդ որդին իմ հանգունատիպ լեալ բարուք Մբիսողոմի Վաւթեան, անմեղ

սպանումն գործել անգթաբար բազմերախտ  
 հօր իւրոյ . նա՛ երկաթի սրով ջանայ  
 սպանանել . և իմն նոր Արիստղոմ՝ մարմնե-  
 ղէն ժանտաբարու լեզուաւ իւրով զրպար-  
 տել անիրաւութեամբ, անուն չար հանե-  
 լով զինէն . զի՞նչ հայրասիրութիւն և զի՞նչ  
 որդիական պարտաւորութիւն . ո՞վ մտերիմ  
 բարեկամ՝ ո՞չ թողու ծնողական գութն ա-  
 նէծս կարգալ զաւակաց . Մարգարէն Դա-  
 ւիթ պատուիրէ զօրացն խնայել որդւոյ իւ-  
 րում՝ Արիստղոմի, սակայն Աստուածային ար-  
 դարութիւնն՝ ո՞չ հանդուրժեաց առնել զիւր  
 դատաստան վասն ապերախտութեան մեղաց .  
 սոյն աղագաւ և ես՛ի կասկածի վարանեալ  
 տանջիմ հայրական խնամով իմով . զի մի  
 գուցէ զերթ Արիստղոմի պատժապարտս գլտ-  
 ցի որդին իմ՝ ապերախտ Աստուածային ար-  
 դար իրաւանցն դատաքնութեամբ :

Վասնորոյ՝ յաւուր ամբաստանութեան  
 անիրաւ որդւոյ իմոյ կամ անձամբ անձին  
 կամ բռնակալաւ ներկայանալոց եմ ընդ  
 նմին . աղաչեմ զմեծազօր տէրութիւնդ , քե  
 ներկայանալ անդանօր՝ի դատաստանի , զի  
 յետ արդարացուցանելոյ զիմս , դարձին  
 նորա ջանասցուք յորդորիչ լինել՝ի միաօին :

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
 ՅԱԿՈԲԵԱՆ

ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ  
ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Շնորհապանժ հօր մերոյ հոգեւորի Տեառն  
(այս անուն) Աստուածընտիր նորապսակ  
Եպիսկոպոսի սրբազնասուրբ երկնքնքաց  
գարշապարի, մատչիմ 'ի համբոյր խոնարհ  
դիմօք 'ի շնորհաւորութիւն.

Օ ի որպէս և մեր քաջ ծանօթութիւն  
ունէաք որ 'ի նախախնամութենէ փրկչին  
ուսեալ ձերդ սրբազնութեան խնամս ա-  
ռատս ժողովորդեան ըստ Առաքելոյն ընտիր  
հոգատարութեամբ, նոյնպէս լսելով յան-  
դաստանէ օրհնութեան սիրածրար նամա-  
կէդ զարժանաւոր ժառանգութիւն հայրա-  
պետական սրբազան կարգիդ հանդիսացելոյ  
և զքաջողջութեան սրբոյ անձին ձերում զա-  
ւետիս, որ զօրէն տէրունեանն տնօրէնու-  
թեան ուրախառիթ յայտարար տասնադէպ  
տաւիղ՝ քաղցրասիկ շնչով երգաձայն հըն-  
չեաց 'ի լսելիս մեր բարբառ աւետեաց բա-  
րեբարբառ օրհնութեամբ. յորմէ առաթ-  
րեցաւ մեզ ժամանել յուրախութիւն մեծ  
գերքան զօրինակ. որով և փառս մատու-  
ցաք ամենակալին Աստուծոյ, զի գիտէ նա

յընտիր ընտիրս ընտրութեան անօթ հե-  
ղուլ զշնորհս բազմապատիկս վեհընտիր եօթ-  
նարփեան հոգւոյն զօրութեամբ, առ 'ի կա-  
ցուցանել զէտ հոգաբարձութեան ազգիս  
Մրամեան, զոր Տէր Յիսուս հաստատ պա-  
հեսցէ երկար ամօք 'ի շնորհս վայելել զգոյն  
նորափթիթ ծաղկեալ գաւազանիդ հոգևոր  
իշխանութիւն 'ի պայծառութիւն բանեղէն  
բուրսստանս հայկազնեանս գրոհի. զի ար-  
դարև 'ի խանդակաթ միասրտութեան գո-  
լով մեր, ընդ նազարանութեան իմաստնոյն  
է սիրտ և ներքին մարդ յարթնութեան,  
թէպէտ 'ի քուն գրութեան էաք այսքան մի-  
ջոցաւ 'ի բազում զբաղանաց գործոց յա-  
պաղեալ 'ի պատասխանեաց. ուստի ներումն  
խնդրելով 'ի տեառնէդ մերս ապաշնորհ տը-  
մարդութիւն՝ կամեցաք այսու սակաւածեան  
գրութեամբ բառնալ զտարակոյս անձան-  
ձիր յայտարարութեամբ զառողջութենէ պա-  
բադայից մերոց. զի եղիցի կրկին օգի ար-  
ժանապատիւ բարձրելոյդ 'ի վերայ մեր,  
յորժամ զարժանաւորն գործիցէք մշտնջե-  
նական առնել զցանկալին մեր ստեմ և ըզ  
փափաքելին զբաջողջութեանն ձերում յայ-  
տարար բանագրութիւն, մշտավառ սրբա-  
լոյս սիրոյ օրհնութեամբ իբրև զաւետարեր  
և զուրախառիթ ողկոյզ քաղցրահամ յերկ-



րէն աւետեաց . որ ցանկ բերէ մեզ մեղք և  
զկաթն հոգեպարար Եստուածատուր սիրոյ  
'ի պարարումն և 'ի բարգաւաճութիւն յեր-  
կօսին կեանս իմ որ եմ ամենանուաստ

ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԱԿԱՆԻ  
ՁԻ ԲԱՐԵԽՕՍԵՍՅԷ ԻԻՐ ՊԱՐՏԱՊԱՆԻ

Տէր իմ բարեբար .

Որպէս օրէն է տկարաց դիմել առ կա-  
րողս , և հիւանդաց առ բժիշկս , սոյն գու-  
նակ ահա և ես տառապեալս և վշտացեալս  
'ի պարտատեառնէ ումեքէ , որ ծանրագոյն  
պարտուցս աղագաւ որոնէ զիս արկանել 'ի  
բանտ : Աւստի գիտելով իմ 'ի վաղուց ան-  
տի զառաքինասէր սրտիդ բարեգթութիւն ,  
որ ոչ միայն նեղելոց և տառապելոց ազ-  
գաց քրիստոնէից , այլ և անհաւատից ան-  
գամ որք դիմեն առ քեզ , գթածաբար տես-  
չութեամբ այցելու լինիս վայթ ընդ փոյթ ըստ  
արժանւոյն զանազան դեզս ինչ խելաց մա-  
տակարարելով : Ասանորոյ մեծաւ աղերսանօր

և դառնահոսան արտասուօք մատչիմ առ մե-  
ծահոչակ մարդասիրական բարեգթութիւն  
տէրութեանդ . որ հայր ես որբոց և մսի-  
թարիչ վշտացելոց . զի լսելով ձայնի ա-  
ղաչանաց իմոց , փութասօջի՛ր գուն գործել  
ապաքինել ղցաւս բժշկապէս , պաշտպան  
լինելով ինձ անօգնական ծառայի՛ի պէտս  
վերոյիշեալ պարտուցս՝ ի սէր մարդասի-  
րին Մատուծոյ . և պատուիրեսօջի՛ր նմա ըս-  
պասել սակաւ ինչ ժամանակ . զի ունիմ զբեղմ-  
նաւոր այգի մի մեծ՝ ի Պրուսա , վաճառե-  
լով հատուցից նմա ամբողջ . որով ուրա-  
խացեալ ոչ սակաւ աղօթապարտ եղէց ՚ի  
կենիս վասն ազօգուտ բարերար կենաց քոց  
և վասն նորափթիթ զաւակացդ արեշատու-  
թեան անմոռաց յիշմամբ ես ամենապիկար  
ծառայ տէրութեանդ :

ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

ԿԱՆՈՆ ԽՕՍԱԿՅՈՒԹԵԱՆ

Շառաւիղ բարեհամբաւ սերնդոց մե-  
րոց որդեակք իմ սիրասունն .

Ո՛ւր բանականութեանս մեր վայել-

չութիւն բարւոք բարբառիլ կանոնաւոր ա-  
 սացուածովք . ուր մարդավարութեանս մեր  
 յատկութիւն կարգաւոր խօսակցութեամբ .  
 և ուր բան բացայտյտիչ բարւոք նշանակե-  
 լոյ մտաւոր եզեր հաւաքաբանական կանո-  
 նիւ . ո՞չ ապաքէն յարարչագործութեան  
 պահու յասելն սուրբ Արրորդութեան՝ ա-  
 րասցուք մարդ ըստ պատկերի մերում, այս  
 բանականութիւն եղև մեղ պարգև բանին  
 Մտուծոյ . որով կարողասցուք յայտնել  
 միմեանց զխորհուրդս մտաց մերոց և նովաւ  
 օրհնաբանել զՄտուած . զոր Սերովբէք և  
 Վերովբէք և ամենայն դասակարգութիւնք  
 հրեշտակաց հոգեղէն լինելով գոյացութիւն ,  
 չունին բանիւ բարբառիլ և ցանկան մեծա-  
 պէս . իսկ մեք ո՛չ ինչ գիտելով զյարգ  
 նորին , չունիմք գոնէ կանոնաւոր բարբա-  
 ռիլ . զի՞նչ յարգութիւն վերերևեսցի մար-  
 դոյ՝ եթէ չունիցի կանոնաւոր ասութիւն  
 ինչ զօրէն բանականին . որպէս և մերս  
 յայնմ աւուր մինչ համահաւաքեալ էաք՝ի  
 բնակարանի այս ինչ վաղամեռիկ երիտա-  
 սարգի . ուր փոխան ցաւակցութեամբ մխի-  
 թարիչ լինելոյ ընտանեաց նորին , իբրև  
 խենդամոլի զուարճալի ասութիւն լուայ՝ի  
 ձէնջ , և կարի յոյժ ամթթահար լեալ , ՚ի  
 կարծիս մտի թէ իցեմ ՚ի ժողովս խառնի-

Ճաղանճ արանց . որ ամենեկին չեղև ձեզ եր-  
բէք երկոցունցդ որդւոց իմոց բարբառիւ  
կանոնաւոր . քանի՞ լեզուագարութիւն . քա-  
նի՞ փասքսութիւն . քանի՞ ճամարտակութիւն .  
ո՞րչափ պայթումն բանից . ստուգիւ ասեմ .  
առաւել քան զշատաբանս բարբառող էիք .  
շատաբանք միայն առատախօս են . բայց  
դուք արտաքոյ կարգի կանոնաց ընդ մի-  
մեանս յափշտակէիք զասութիւնն . բնաւին  
ո՛չ էր ձեզ ունկնդիր լինել այլոց . յապա-  
ցուցութիւն բանին իմաստասիրին , թէ որ  
ո՛չ գիտէ լռել , ո՛չ գիտէ խօսիլ . և առա-  
ջի դիւցազնական բարձր վեհազուն անձանց  
ո՛չ կարացիք ցուցանել զվայելուչ աղնուու-  
թիւն սերնդոց ձերոց . յորմէ քանի մի ան-  
ձինք յազնուազարմից տաղտկացեալ , և ես  
ընդ նոսին ելաք մեկնեցաք անտի յար-  
տաքս : Ասանորոյ ամենապատշաճ համարիմ  
ծանուցանել ձեզ այժմ՝ ի նամակիս զկանոն  
խօսակցութեան ՚ի մշտնջենական յիշատակ  
հայրական խնամոց իմոց , որ բանականու-  
թեան մերում իբրև հայելի իմն է . և որպէս  
ամբողջութիւն զանգակի ՚ի ձայնէն ճանա-  
չի , և այր իմաստուն ՚ի նամակէ իւրմէ . սոյն-  
պէս խոհեմութիւն բանականին ՚ի բանիցն :

Ա. Նախ պարտ է զմտաւ ամել թէ ըզ  
ծանուցումն զայն զոր կամիցի որք առնել ա-

սացեալ իցէ արդեօք արանցն այնոցիկ և յայլում պահու :

Բ. Պարտի նկատել ատենարանն թէ իցէ՞ արդեօք 'ի բազմականս ակնածելի և մեծարու ոք, զի ակնածօրէն հիւսեցէ ըզբանս իւր :

Գ. Վկատել պարտ է նաև չլինել անդ 'ի խնճոյս սրիկայաձև ոք կամ արբեալ. զի մի՛ խափանիչ լիցին պատմութեան :

Դ. Վրաջ գիտել պարտ է զի զսրբազան Պատմութիւնս չէ վայելուչ բացատրել առաջի թերահաւատ արանց իբրև ըզմարդարիտ արկանել առաջի խողաց :

Ե. Եւ զայս գիտել պարտ է զի առաջի կանանց և տղայոց չէ վայել խօսիլ ըզբանս ամուսնութեան շաղակրատաբար 'ի զուարճախօսութիւն :

Զ. Ընպատեհ իմն է ջնջին պատմութիւն առնել առաջի պատկառելի մեծարու արանց . և ոքք 'ի սպասաւորաց կարգի են համարեալ, կարի անպատեհ թուի բարձրանշան յարգական անուամբ յորջորջել զայնոսիկ և գովաբանել առաջի նոցա :

Է. Պարտ է դարձեալ գիտել զի չէ վայելուչ երկար պատմութիւն ինչ առնել 'ի սակաւամիջոց ժամանակի . վասն զի՛ ոչ խօսելն է իմաստութիւն, այլ ճանաչելն ըզ

ժամանակ խօսելոյն :

Ը. Պարտ է խօսիլ զայնմանէ միայն ,  
ոյր ] վասն ժողովեալ իցեն հանդիսականք :

Թ. Ընթաղաքավարութիւն է ընդմիջել  
զբանս այլոց , և զիւրն սկսանիլ : Եւ ըստ ի-  
մաստասիրին խրատու պարտիմք ճանաչել ըզ  
տեղին , զանձն , և զժամանակն , որ է մեծ  
գիտութիւն քաղաքական :

Ժ. Պարտ է ատենաբանին զգուշանալ  
'ի բանս իւր 'ի պարծանաց գովաբանութեամբ  
զանձնէ իւրմէ . զի անարգանք համարի ին-  
քեան . որպէս պատուէր իսկ ունիմք 'ի  
սուրբ Գրոց , մի գովեսցէ զքեզ բերան քո .  
և ոմն իմաստասէր ասէ . որ պարծիցի , ա-  
մենեցուն պարտական լիցի :

ԺԱ. Եւ զզորեցունց աստի զգուշանալ  
պարտի խօսողն . զի ըստ որում կամ զայլ-  
մէ ումեքէ խօսեսցի ' մի երևեսցի 'ի բանիցն  
անարգութիւն ինչ նորին հաւատոյն կամ  
վարուցն կամ ընչիցն և կամ պատուոյն ,  
բամբասանս ինչ արկեալ 'ի բանս , թէ և  
չիցէ նա անդանօր , գուցէ բարեկամ կամ  
ազգական նորին գտցի 'ի նոյն բազմականս :  
Եպա առ փորձեալս կարելի է մտերմաբար  
խօսիլ . թայց առ այլս՝ առ երեսս մեծ զգու-  
շութեամբ , զի յիմաստնոց է այս բան որ  
ասի . (լեզու խոհեմին 'ի վերայ սրտին . սիրտ

անխոհեմին 'ի վերայ լեզուին) :

ԺԲ. Ո՛չ երբէք պարտ է երդնուլ կամ ստել 'ի բանս . վասն զի միով ստախօսութեամբ հազարաւոր ճշմարտախօսութիւնք դիւրին խափանին . և միով երդմամբ կասկածելի լինին ամենայն բանք պատմաբանին :

ԺԳ. Ո՛չ է պարտ կրկնաբանութիւն առնել , զի մի նիրհել երևեսցի բաղմականին .

ԺԴ. Որովհետև ասութիւնն յատկապէս լինի շորեքկին եղանակաւ , պատմաբանօրէն , դաշնաձև , անբրևոյթ , և հրամայական . և հրամայականն դարձեալ բաժանի յերկուս . է որ՝ պատուիրէ վճռաբար , և է որ՝ աղերսէ ողորբաբար . և ողորբաբարն նախամեծար է քան զհրամայականն . պարտի ատենաբանն արթնութեամբ և խոհեմութեամբ որոշել , թէ որով կերպիւ քաղցր թուի ունկնդրաց ըստ նիւթոյն , և գոյ նաև ձև մի հարցական որ վայելուչ թուի ըստ տեղոյն :

ԺԵ. Ըէ արժան ընդմիջել զբանս իւր մուծանելով զայլ ինչ պատմութիւն :

ԺԶ. Պարտ է զգուշութեամբ զկարգ ժամանակին պահել . այսինքն զնախագործն յառաջագոյն պատմել , և զհետևորդն՝ զկնի :

ԺԷ. Օգուշութիւն մի ևս պարտ է՝ մի օրինակ լեզուաւ կատարել զասութիւնն և ո՛չ՝ մերթ գրաբառ , մերթ աշխարհաբառ , և

մերթ այլազգի լեզուաւ :

ԺԸ. Սի՛րն գախօս , զի մի՛ ասացնն նմա , թէ շկամիս դիմաստ յայտնել , ամեննին կարես լռել . և մի՛ բարձրագոչ իբրև ցոփաբան . զի ձայն ատենարանին յորժամ լինիցի համեղ , շարժմունքն համեստ , և առտութիւնն համառօտ , յոյժ քաղցր թուի բազմականին :

ԺԹ. Լթէ աւետալի լուր , կամ աղէտալի գուժկան պատահեսցի , վտանգաւոր է եթէ յեղակարծ ծանուցեն , այլ ձևով իմն պարտ է ծանուցանել . եթէ աւետալի լուր իցէ , ուրախագէ՛մ . իսկ եթէ շարալուր , տխրագէ՛մ :

Ի. Ասա կանոն շնորհակալութեան պարտ է բարեմաղթութեամբ առնել . և այն որ հաւասարաչափ իցէ . բայց եթէ իցէ ոք մեծարու՝ միայն բաւական է համբոյր մատուցանել խոնարհութեամբ :

Լ. պա ուրեմն այսքան բանս խրատականս յայտարարութեամբ կանոնաց ասացուածոց՝ առ յինէն ՚ի գութ շարժեալ խօսեցայ որդեսիրական պարտաւորութեանս խնամով . և գութ անմոռաց կալի՛ք ձեզ ՚ի մտի ազաչեմ . զի յորում վայրի գտանիցիք ընկերակցութեամբ , և ուր հարկ լիցի բարբառիլ բանս առաջի բազմականաց համայնից



բազմաց և թէ անհատից, ըստ վերագրելոցդ կանոնաց գուն գործել փութասջի՛ք, 'ի վայելչագեղ յանգաւորութիւն Մտուածապարգև բանականութեան մերում:

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

ԿԱՐՕՏԱԼԻՐ ՆԱՄԱԿ


Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԻԻՐՈՅ

Յարգի՛ Էղբայր.

Յայսմ նուագի գրութեանս չունիմ նորիմաց արժանալուր բան ինչ ծանուցանել սիրելութեանդ, եթէ ոչ զկարօտակիզութիւն սրտիս. զի թէպէտ երբեմն բաղդաւորութեամբ վայելելով զանձկալին իմ զաւետամտոյց լուր ողջկեցութեան անձինդ, և բարեյաջողութեամբ գործոյդ մխիթարիմ ոչ սակաւ: Բայց ոչ շատացեալ այնու միայն, ցանկանալով ցանկամ բարեյաջողութեամբ գործոյս վերադառնալ 'ի հայրենիս այդք 'ի տեսութիւն չքեղափայլ թագ գլխոյս բազմերախտ հօր մերոյ՝ յորում և ընկերակցութեամբ՝ շնորհօք զարդարեալ զուարթասակ եղբօրդ իմոյ ընուլ զբազմաժամանա-

կեայ կարօտակէզ սրտիս զբաղձանս : Վասն  
 զի՝ չի՞ք մխիթարութիւն մեծ քան զայս յաշ-  
 խարհի հայր որդւովք բերկրեալ, և թէ զի՞  
 բարի կամ զի՞ վայելուչ զի բնակին եղբարք 'ի  
 միասին . այլ մինչև ցայն վայր յոր յուսա-  
 ցեալն եմ, կարօտալիր լեալ արդէն խընդ-  
 րեմ շարունակել վերստին զմխիթարականն  
 իմ և զուրախառիթ զուր քաջողջութեանդ  
 հանգամանօքդ հանդերձ . վասն զի յաճա-  
 խել մարդկան հոտոտալ զծաղիկ քաղցրա-  
 հոտ, յաւելու յօժարութիւնն հետզհետէ  
 կրկին հոտոտալ . ուստի անմոռաց յիշմամբ  
 խնայեա՛ յիս անվախճան մխիթարել զպան-  
 դուխտ եղբայր քո

ԳԷՈՐԳՍ  
 ՅԱԿՈՒԵԱՆ



ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԵԿ ԱՌԱՋՆՈՐԴԻ

Մաքրագոյլ անօթ սուրբ հոգւոյն շնորհի,  
 հայր մեր հոգևոր պերճիմաստ արհի .  
 Յուէա տենջանօք ըզձական սրտի,  
 համբոյր խանդակաթ տեսանդ նուիրի :

Ինուլ բաղձանօք՝ որ ինչ օրէն է սի-  
 րոյ և բարեկամութեան առ ձեր հայրախը-  
 նամ տեսչութիւն՝ պարտ վարկանիմ շնոր-

հաւորութեամբ նամակիս յաւուրս յայս ցըն-  
ծութեան և ուրախութեան հանդիսաւոր  
տօնի վեհափառ սուրբ հօրդ հոգևորի հան-  
դիսացելոյ, առաջնորդական անուամբ հով-  
ուութեան զհօտ հովուապետին՝ Յիսուսի՝ հայր  
մեծախնամ նշուլագեղ ճաճանչ լուսոյ բա-  
նին Մատուծոյ փառաց հօր, որ ձայն բազ-  
մաց իբրև ձայն Մատուծոյ համարեալ հա-  
ճեցաւ զտէրութիւնդ առաքել այսր, զու-  
սաշաւիղ կենաց ճանապարհ ծանուցանել 'ի  
ձեռն վեհապանծ հօրդ հոգևորի 'ի լսելիս  
մեր, և ընտրութեամբ Մատուածախոհ միա-  
բանիցդ արժանապէս կարգեցար յաթոռ ա-  
ռաջնորդութեան սուրբ և մեծափառ ուխ-  
տիդ, ծաղկեալ գաւազանիդ իշխանութեամբ  
յոգնաճաճանչ բանեղէն լուսով հոգեպար-  
գև գիտութեամբ, լցուցանել զբաղձանս  
մեր: Ասանորոյ և այսօր ծառայ ձեր և որ-  
դի անարժան՝ բերկրեալ սրտիւ և խոնար-  
հեալ անձամբ 'ի համբոյր լուսացնցուղ ա-  
ջոյդ սրբութեան, անարժան շրթամբ մաղ-  
թեմ հեղձես և 'ի մեզ ղցօղ Մատուածա-  
ձիր օրհնութեան ո՛վ առաջնորդ վիճակիդ  
արժանաժառանգ, ում վիճակեցաք և մեք  
բարբաղդաբար լինել ընդ հովանեաւ գա-  
ւազանի սրբութեան ձերում, և փափագիմք  
առ 'իքէն լուսոյդ 'ի լուսաւորութիւն հոգ-

ւոց մերոց 'ի Քրիստոս Հիսուս 'ի փառս և  
'ի վայելչութիւն ամենայաղթ եկեղեցւոյ, առ  
որ բերկրեալ 'ի սիրտ և յոգի վայելեալ ցըն-  
ծասցուք ընդ երկայն աւուրս մշտափայլ և  
յանչամանթաղ լոյս զուարթարար սրբու-  
թեան ձերոյ անդորրական կենօք 'ի պար-  
ծանս ազգիս և ինձ

Ամենախոնարհ ծառայ

ԳԵՈՐԳԻՍ  
ՅԱԿՈՅԵԱՆ

---

### ԿԱՆՈՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Հոգեհատնր որդեակ.

Որպէս վկայեցերդ իսկ 'ինամակիդ թէ  
միտք իմ և խորհուրդ հանապազ 'ի տուէ և  
'ի գիշերի յածին զքե տքնութեամբ առնել  
զքեղ բարեբարոյ և բարեկիրթ առաջի Մս-  
տուծոյ և մարդկան՝ քաղաքավարն ընթա-  
ցիւք յամենայն գործս քո : Աւ արդ՝ ըստ  
որում յաւուրս յայսոսիկ պատրաստիս եր-  
թալ յ'սիս վաճառականութեան գործով .  
ամենախնամ Մստուած զօրավիգ և օգնա-  
կան լիցի քեզ, յաջողութեամբ հասանել 'ի  
նպատակ քո բարի, ուրեմն գիտելով և իմ՝

Թէ մարդ խրատու զարգարեալ՝ է հաճելի 'ի մէջ աշխարհի, յառաջ քան զճանապարհորդութիւն քո յոյժ վայելուչ և հարկաւոր համարիմ՝ փոքր 'ի շատէ ծանուցանել քեզ զկանոնս վաճառականութեան, զի անմոռաց ունելով 'ի մտի՝ գործադիր եղեալ յարաժամ շահաւոր և առատ արգեամբ վախճան կայցես քեզ, և մի տգիտական գործառնութեամբ վնաս ինչ կրեսցես նրման տգէտ վաճառականաց: Որք թէպէտ կարողք էին, սակայն անընտել գոլ կանոնաց, յունայնս վատնեցին դամենայն ինչս իւրեանց և եղեն սնանկացեալ, բայց ես ոչ կամիմ նման նոցա տգէտ լինել քեզ կանոնաց վաճառականութեան, զոր ներքնաշարեալքդ ծանուցանեն:

Ա. Սախ եթէ կամիցի վաճառականն բերս ինչ կամ ո և իցէ վաճառս տանել յայլ երկիր, հարկաւոր է յառաջագոյն գիտել, թէ զի՞նչ իր կարէ լինել անդ դիւրավաճառ:

Բ. Քաջագէտ լինել պարտ է թէ յոր քաղաք կամ յոր երկիր առատ իցէ և դիւրագին վաճառն այն, զոր կամիցի գնել և տանել յայլ երկիր:

Գ. Պարտ է նաև գիտել յառաջագոյն ընդ որ կամիցի երթևեկել կամ մաճառս

ուղարկել, արդեօք 'ի խաղաղութեան իցէ տեղին այն թէ 'ի խռովութեան պատերազմի . կամ իցէ արդեօք անդանօր աւազակք լեռնայինք :

Գ. Օարժէք ամենայն տեսակ դրամոց իւրաքանչիւր երկրին քաջ գիտելով պարտ է բաղդատել . թէ ո՞րքան աւելի կամ պակաս իցէ հարիւրի . կամ հաւասար իցէ . և տեղեկասցի թէ որով կարէ բազումս շահաւորիլ . դրամ տանելով թէ վաճառս :

Ե. Պարտ է գրել դարձեալ զգինս երկոցունց կողմանցն մաքսից . և ծանօթանալ թէ ո՞րքան տալ պարտի վասն հարիւրի :

Զ. Տեղեկանալ պարտ է զնաւագինսն շոգենաւ և առագաստաւոր նաւուց , թէ արդեօք ո՞րքան իցեն զիւրաքանչիւրոցն նաւագին . որով ծանիցէ թէ ո՞րն շահաւոր թուի , զի որ թանկագին է՝ վաղվաղ բերէ զվաճառս . իսկ որ զիւրագին՝ յապաղ :

Է. Պարտի հարցութիւնք և այսմ տեղեկանալ բարւոք . զի զվաճառս զոր կամիցի տանել . ցո՞րքան ժամանակս կարէ վաճառել . որպէս զի՝ հաշուելով զամսական վարձս պանդոկին և սպասաւորին , և զծախս ուտելեաց՝ շափաւոր գնով վաճառել փութասցի զինչս իւր անփնաս :

Ը. Չէ հարկ յուսագիր լինել վաճառե-

լի իրացն զոր ապառիկ առեալ է, ասելով թէ յայս ինչ ժամանակ վաճառելով, ըզ պարտս իմ հատուցից. վասն զի՝ կարելի է փորձանաց ինչ պատահելով անկարող գըտանիլ ՚ի հատուցումն: Այր աղագաւ դիւրագին վաճառել պարտաւորի զինչս, մեծի վնասու երևի հանդիպել յայնժամ. ուրեմն ՚ի մուրհակագրին միշտ պարտ է հեռաձիտ առնել զմիջոց հատուցանելոյ:

Թ. Եթէ ընկեր կամ գրագիր ունել հարկաւորեսցի, քաջ փորձել պարտ է յառաջմէ զհաւատարմութիւննոցա և զբարս. զի մի լիցի յանպատեհս մտնել զինչս շեռայութեամբ, որով կարօտ լիցին ճարակ խնդրել գողութեամբ:

Ժ. Բաջաճանօթ պարտ է լինել թուարանութեան. զի յառաջագոյն հաշուելով զամենայն ծախս, ծանօթացի թէ նովին վաճառականութեամբ շահընկալ լինելոց իցէ թէ վնասակիր:

ԺԱ. Պարտ է ճանաչել զխորթս գրամոցն իսկ և իսկ նման հատավաճառայ:

ԺԲ. Պարտ է ամենայն կերպիւ ունել արթնութիւն՝ հաստատ և պայծառ պահել զվարկումն իւր և զգուշանալ ՚ի խարերայ արանց, որք մշտաստօր են զինչս այլոց յափշտակել:

ՓԳ. Այս ամենայն ոչինչ են և անպի-  
տան, սիրելիս, թէ չունիցի վաճառական որ  
դրամս առատորէն, ըստ բանի խոհական ու-  
րուք, թէ 'ի հաստատութիւն ամենայն ի-  
րաց պէտք են դրամ՝ դրամ՝ և դորձեալ  
դրամ: Ահա դորձեալ դրամ ասելով իմա-  
նամք զի պարտ է ունել պատրաստի դրամս  
կրկնապատիկս քան զվաճառացն, վասն զի՝  
եթէ դիւրագին վաճառ ինչ յորում պա-  
հու գտցի, կարացե կանխիկ դրամով գը-  
նել. կամ թէ Աստուած մի՛ արացե, եթէ  
վաճառելի ինչս իւր հրդեհի կամ ալէկո-  
ծութեան և կամ այլ ինչ փորձանաց պա-  
տահիցի, կարող գտցի վերստին ձեռնա-  
մուխ լինել յայլ գործ, և շահ ընկալութեամբ  
ծածկել զառաջին վնասն. ապա թէ ոչ՝ սը-  
նանկացեալ երևի լինել նոյն վաճառականին:

Ահա որդեակ իմ հոգեհատոր՝ զոր ծա-  
նուցի քեզ փոքր 'ի շատէ, եթէ այսու ըն-  
թացիւք վարեսցիս, անշուշտ շահաւորիլ ու-  
նիս քեզ բարութիւնս անթիւս բաղմաղան  
օգտից. և ես սիրալառ ծնողդ բաղկատա-  
րած եմ միշտ ազօթամատոյց լինել առ Աստ-  
ուած վասն բարեյաջողութեան գործոյդ  
շահաւէտ և անվնաս բարգաւաճութեամբ, 'ի  
մխիթարութիւն կարօտակէզ սրտի բարե-  
փափագ ծնողիդ որ եմ

Ն. Ծ. ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ



Կենսածաղիկ առարիւնական բերիւք  
 պանծացեալ յագգս մեր վսեմայարգ ամի-  
 րայիդ բազմերախտ ձեռաց համբոյր ձո-  
 նեմ ծառայական խոնարհութեամբ 'ի յա-  
 դերս.

Վաջածանօթ էք տէր իմ ընածիսական  
 արարից մարդկան, զի սովորութիւն է ան-  
 կելոցն 'ի թշուառութիւն՝ դիմել առ բա-  
 րերարս, և կարօտելոց՝ առ դուրս լիոց :  
 Վասնորոյ և ես անկեալս 'ի թշուառութիւն՝  
 գիտելով զմարդասիրական բարեսրտութիւն  
 ձեր, դիմեմ առ վեհանձնութիւնդ այսու ա-  
 ղերօական բարեհայց գրութեամբս ծանու-  
 ցանելով զվշտալիր անձինս զվիճակ. զի ըստ  
 բերման դառնադէտ ժամանակիս՝ և ըստ չա-  
 փու հարկաւոր ծախուցս առ բազմաթիւ  
 պարագայից տան՝ որ ընդ հովանեաւ իմով  
 են, շունելով իմ վարձս բաւական, օր  
 քան զօր առաւել պարտուց ներքոյ յաւէտ  
 ճնշիմ, հեծեծամ. որոյ վասն բարեգթու-  
 թեան ձերում ակնկալեալ ստղատիմ բազ-  
 կատարած, տէր բարեխնամ. զի մխիթարա-  
 կան դեղ ինչ շնորհեսցես վշտացելոյս ըստ  
 հաճոյից բարեսէր կամաց քոց յաւելով

զվարձս իմ. որով բաւականացեալ աղքատանոցիս պարէն հոգալ, մխիթարեցայց ընտանեօքս համայն, և ծառայական երախտագիտութեամբ աղօթող լիցութեալ բարեացապարտ անձինդ ազգասիրի. և ուրախ սիրտ լինելով 'ի հարկէ զամենայն աւուրս կենաց իմոց 'ի պաշտօնս իմ անթերի աշխատութեամբ արդիւնաւոր ցուցանել զգործ պարտաւորիմ անշուշտ, զօրէն սերմնընկալ երկրի. որ ըստ չափու սերմանն տայ քաղել սերմնացանին ըստ ժամանակին զբերս բնականաբար. ուստի աղբիւր բարեաց բարեխնամն Մատուած բարեօք բազմօք լիացուցէ զբարգաւաճութիւն հացալից տան քոյ. և աղքատադարման ողորմած յարգելիդ ընդ հովանեաւ մարդասիրական խնամոցն ցանգ պահեալ յայսմ աշխարհի, շնորհապերճ որդւովք և համայն պարաքայիւքդ հարուստ ամօք կեցուցէ անթառամ. զի յարատե բուրեսցի հոտաւէտ բուրումն քաղցրութեան Մատուածատունկ խնկենի ողորմածութեանդ առ կարօտեալս ազգիս և առիս, որ եմ բարեացակն հրամանակատար

Ամենախոնարհ աղօթապարտ ծառայ

ԳԷՈՐԳ  
ՅԱԿՈԲԵԱՆ

Ի ԽՆԴԻՐ ԼԻՆԵԼ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ  
ԼՐՈՅ ՀԻԻԱՆԴ ԲԱՐԵԿԱՄԻՆ  
ՋՈՐ ԼՈՒԵԱԼ ԻՑԷ Ի ՆԱՄԱԿԷՆ

Անկեղծ եղբայրասէր գերբնտի՛ր մը-  
տերիմ.

Իբրև զոսկի հրափորձական փորձի հա-  
ւատարմութիւն անկեղծ բարեկամի՛ի դառն  
ժամանակի իբրև ՛ի բովս նեղութեան. զոր  
և ՛ի քեզ յինքնդ անթերի տեսանեմ. քան-  
զի վիմական հաստախարխսխ Լստուածահա-  
ճոյ ճշմարիտ բարեկամութեան և մտերմու-  
թեան յայտնի ցուցեր զօրինակ. յորժամ  
՛ի խնդիր ելեր նամակագրութեամբ զորկե-  
նութենէ իմմէ ՛ի բարօրութեան և յանդոր-  
րութեան կամելով զիս լինել, շնորհակալ  
եմ մեծ գոհունակութեամբ զանկեղծ սի-  
րոյդ, ցանկալի՛ բարեկամ. սակայն տարա-  
բաղդիկ անձինդ վշտակրութեան լուր որ ՛ի  
նամակիդ, սարսեցոյց զիս ուժգնակի, տըխ-  
րեցոյց զիս անբերկրի, խոթեցոյց զիս ներք-  
նաթախիծ յանկողնի, որ կամ աւասիկ զերթ  
կարեվեր սրախողխող անբուժելի, իբրև ՛ի  
մտախաբ խարխուլ խաւարչուտ բանտի ո-  
ղորմագին թախճանօք հեծեծանաց, մինչև  
ծագեսցի վերստին գեղափայլ արուսեակ ա-

ւետարեւր լուր ցանկալի առողջութեանդ  
Մատուծով, 'ի մխիթարութիւն և 'ի հան-  
դարտութիւն խորհրդածուփ ալետանջ մը-  
տաց իմոց, և 'ի ցնծութիւն խանդակաթ  
սքտիս և ամենայն ոսկերաց իմոց: Մէ ի-  
ցէ՞ արգեշք տեսանել զյոզնաթախիծ սիրտ  
վշտացելոյս բերկրեցեալ, իցէ՞ թէ կենդանի  
լինիցին ոսկերքս ըստ Ազգեկիէլի եկա-  
ւորութեամբ աւետալուր ազդողական շնչոյ  
առողջութեան անձինդ՝ յիս զօրացեալ: Քան-  
զի որպէս քաղցրասիգ հողմոց գարնայնոյ  
շնչումն յայտ առնէ մեզ զտրտմասաղարդ  
ամպապարոյր եղանակի ձմերան գփախուստ,  
ընդ նմին յաջորդեալ քաղցրանուագ ներ-  
գաշնակաւոր երգ սոխակաց այսպէս և աւե-  
տալի լուր քաջողջութեան մտերիմ բարեկամի՝  
'ի կենդանութիւն և 'ի ցնծութիւն զօրէ դի-  
մել անմիջապէս ամենայն ոսկերք ցամա-  
քեալք և ծունկք կ'թուցեալք: Այդա որ ակն  
ունիմ ոչ յետ բազում ինչ աւուրց լսելարժա-  
նանալ զքաջողջութեանդ լուր, մնայ ինձ ար-  
դէն աղօթել առ բարձրեայն այսպէս. տէր  
բարերար և բժիշկ ախտայելոց՝ օգնական  
լիւր բարեկամի իմում 'ի մահիճս ցաւոց իւ-  
րոց, դարձուցանելով 'ի հիւանդութենէ նո-  
րա. զի ընդ ցաւաբեր ձախորդութեանդ  
այդմիկ նաև տացէ քեզ սիրեցելոյդ զհա-

մտղամն առաքինութեան զհամբերութիւն  
ըստ երանելոյն Հորայ, ըստ որում յորժամ  
նեղութիւն ետ Հորայ, ետ և զհամբերու-  
թիւն ընդ նմին. որով ժառանգորդ գտաւ  
բարեաց բազմաց, մանաւանդ զանուն ստա-  
ցաւ երանութեան. զի ոյք համբերեն տեառն՝  
նորա ժառանգեսցեն զերկիր. և զի՝ ոստք  
առաքինութեան ՚ի ձախողակս աճին. որպէս  
աւասիկ պանծալի եղբայրսիրութեան գործ  
մտերմական յայսմ դառնաղէտ ձախորդու-  
թեանդ պահուցուցանել քո, սիրասքանչ  
պայծառ և ջինջ նշան անջինջ մտերմու-  
թեանդ եղև ինձ

Նուաստագոյն ծառայ

ՆՇԱՆԻՍ  
ՅԱԿՈՒԲԵԱՆ

---

ՀԱՄՈՋՈՒՄՆ ԲԱՐԵԱԻ ՅԱՂԹԵԼ ՉԱՐԻՆ

Սիրելի եղբայր.

Մինչ լուայ ՚ի բարելիր նամակէդ, թէ  
այս ինչ անուն ոմն հակառակի ընդ քեզ թըշ-  
նամաբար բամբասելով յայն ինչ տեղւոջ  
՚ի ներկայութեան բազմաց. ո՛հ զի՞նչ ա-  
սացից և ես քեզ այժմ. և յորպիսի ձեռ-

նարկութեան խրատու ձեռնաձիգ եղեց բաց  
'ի համբերութենէ, առ 'ի ստանալ սիրե-  
ցելոյդ գլխաւոր և ընտիր առաքինութիւնս  
զայս: Ապաքէն մի բնաւ՝ և մի զանգիտես-  
ցէ սիրտ քո 'ի կասկածի մտատանջութեան  
զօղեալ, թէ մի՛ արատաւորեսցէ զվարկումդ  
և ընդ նմին բարեհաշակ զանունդ. երկայ-  
նամիտ լեր այնմ. կարես ունել քեզ զջուրն  
օրինակին խոնարհութեան, զոր մեծամեծ և  
բոցաբորբոք հրդեհի թշնամեաց ոչ կարեն  
երբէք այրել զնա. այլ ինքն միայն ունի  
զօրութիւն շիջուցանել զայնպիսի բարձրա-  
բորբոք հուր ամենայն բարկացողի և թշնա-  
մանողի. յիշեա՛ զյաղթութիւն նահապետին  
Յակոբայ, որ խոնարհութեամբ իւրով յաղ-  
թեաց Ասաւայ 'ի վերագառնալն իւրում 'ի  
տանէն Աբանայ. յանդիման ելեալ խո-  
նարհութեամբ փոխարկեաց զհուր բարկու-  
թեանն 'ի հաշտութիւն. և յիշեա՛ զբան  
մարգարէին Աւաթի յաղօթս քո. տեսցեն  
ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգ-  
նեցեր ինձ և մխիթարեցեր զիս. և թէ  
ապրեցո՛ զիս տէր 'ի մարդոյ շարէ, յառնէ  
անիրաւէ փրկեա՛ զիս. բայց մի՛ անիծաներ  
այլովք բանիւք թէ արկցես 'ի վերայ նոցա  
զկայծակունս հրոյ. կամ մարդոյ լեզուա-  
նոյ մի՛ յաջողեսցի ասելով 'ի վերայ երկրի:

Վաւ լիցի . ոչ կամիմք մեզէն բարբա-  
ռիլ զայն անիծարանութիւն որպէս վրէժ-  
խնդիր . ունիմք զայլ ինչ վրէժխնդրութեան  
բանս՝ անէծս մեծամեծս կուտել 'ի վերայ  
այնպիսեաց վկայագրութեամբ Առաքելոյն  
Պօղոսի 'ի գիրս Հռովմայեցւոց . եթէ քաղ-  
ցեալ իցէ թշնամի քո ասէ Հաց տուր նմա,  
եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա . զայս ա-  
րարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես 'ի վե-  
րայ նորա . ահա տեսեր ո՞րպէս կարող եղեր  
դու քեզէն արկանել 'ի վերայ նորա զկայ-  
ծակունս հրոյ . որով յայնմ ժամանակի  
բարձցի 'ի քէն երկիւղ չարին , և դու յաղ-  
թեսցես չարին բարեաւ . զի եթէ սիրեմք  
զսիրելիս մեր զո՞ր շնորհ է մեզ . սոյն աղա-  
գաւ սիրեցէք զթշնամիս ձեր ասէ Հիսուս  
Փրկիչ . զի խորհուրդ նոցա մի կատարեսցի .  
և զի՝ վախճան կատարածի նոցա՝ վաստակ  
չլծանց ; իւրեանց ծածկեսցէ զնոսա . և դու  
մնաս 'ի յանդորր :

ՆՇԱՆ  
ՅԱԿՈՒԲԱՆ



ՅՈՐԳՈՐ

ՅԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՍՆ ԵԿԵՂԵՅԱՇԻՆՈՒԹԵԱՆ

Խոհեմառանտ յարգոյ ազգասէր.

Որպէս երկուց աչաց է բարւոք նկատել, և երկուց ձեռաց ծափահարութեան ձայնարձակութիւն ուժգինս տայ ազդուութիւն, նոյնպէս երկուց մտաց խորհրդակցութիւնն լինի բարւոք, դիւրին օժանդակելով 'ի սկիզբն, յաջող 'ի մէջն, և երջանիկ յելան եղբակացութեան վսխճանի գործոյն. և ընկերութիւն մարդկային յայն սակս է ընդունելի և ամենացանկալի 'ի կատարումն ամենայն ազգային բարեմասնութեան գործոց բարեաց զօրեղապէս: Այսանորոյ հայցեմ 'ի մտերմութենէ ձերմէ յայն ինչ գործ մեծախորհուրդ զօգնականութիւն ձեռնատուութեամբ հանդերձ. զի վեհազոյն է գործս այս և խորհրդոյ մեծի իմաստութեան պէտս ունի, խոհեմառանտ տէր իմ: Այսն զի խորհուրդ մտաց իմաստնոյ լաւ է քան զբաղում ձեռս, ըստ վկայութեան Աւրիպիդէսի: Ուստի մեծի ակնկալութեամբ սղաղատիմ գուն գործել ազգասիրիդ հասանել յօգնականութիւն առ մերս բարեշաւիղ գործ



եկեղեցաշինութեան, որում արգարե 'ի  
 պատրաստութեանն հոգարկութեան չեմք  
 բաւական մեք առանձին: Յիշեսցիր զՎաւ-  
 թեան բանս հոգունակութեան որ վասն շի-  
 նութեան տաճարին. զի յորժամ լուր եղև  
 նմա թէ որդի իւր Սողոմոն շինելոց է ըզ  
 տաճարն Մատուծոյ, ասէ. մե՞ծ է տունն Մ-  
 տուծոյ, ապա մեծ պատրաստութեան պէտս  
 ունի. ըստ նիւթականին կրկնակի ունիմք  
 իմանալ, բազում դրամոց և բազում խելաց  
 պէտս ունիլ 'ի պատրաստութիւն 'ի սկզբան  
 գործոյս. զոր տէր յաջողեացէ և 'ի կատա-  
 րումն ժամանել յելն երանական, քանզի  
 և զայս ասէ Վաւթիթ վասն կատարելութեան  
 շինին, եթէ ոչ շինէ տէր զտուն իւր, 'ի  
 նանիր վաստակին շինողք նորա:

Ն. Ծ. ՆՇԱՆ  
 ՅԱԿՈԲԵԱՆ

ԲՆԱԿԱՆ ՈՐԴԵՍԻՐՈՒԹԻՒՆ ԾՆՈՂԱՅ  
 ՈՐՔ Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՈՐԴԻՈՅ  
 ՅԱԻԷՏ ՏԱԳՆԱՊԻՆ

Խոնեմամիս սիրելի.

Խնդրեմ անմեղադիր լինել՝ և մի հա-

մարել զիս կեղծարարբառ բանահիւսոք, եթէ ասիցեմ կրկնատեսակ ցոլացաւ ինձ որակութեան տեսիլ 'ի նամակէ քումմէ յընթեռնուլն իմ. մինն՝ ուրախութեան ասեմ յողջութեանդ ծանուցմանէ պատճառեալ, և միւսն՝ տրտմութեան 'ի յիշատակութենէ սիրելի որդւոյդ խօթութեան: Բայց արդարև ողջութեան լուր բարեկամի ուրախացուցիչ ձայն աւետեաց գիտեմք հանապազ, ո՞ր ծնող յուրախութեան կարէ լինել, եթէ որդին իցէ 'ի մեծի տազնապի նեղութեան մահճօք. այլ նովին ցաւովք և ինքն հեծէ հեծեծէ անմխիթար ամենատխուր դիմօք քեզ նման իբրև կենդանի նահատակ. մինչև առողջացի իւր սիրասնունդ հոգեհատորն: Բնականապէս է զոր խօսիմս մեծոյարգ եղբայր՝ ապացուցական օրինակ ունիմք ակններև զկինն քանանայի. որ վասն այսաւար դստեր իւրոյ յաղաղակելն առ Յիսուս՝ չասէ թէ դստեր իմում ողորմեա՛. այլ զամենայն վիշտս հիւանդութեան նորին՝ ինքեան համարելով, սղորմեա՛ ինձ ասէ՝ որդի 'Դաւթի, զի դուստր իմ չարաչար այսասհարի: Աւստի և զծնողդ սմին նման հաղորդ և ցաւակից որդւոյդ հիւանդութեան գիտելով իմ, ո՞ւր տեսիլ ուրախութեան 'ի նամակէդ, այլ կրկնապղտոր պժգալի մրուր

դառնութեան արրոյց ինձ դժբաղդիս յի-  
 շատակութիւն յոգնաթախի՞ծ վշտացդ յայսմ  
 նուագի 'ի սուգ և 'ի տրտմութիւն, մինչև  
 'ի բժշկութիւն և յառողջութիւն մերս ա-  
 չաց լոյս սիրելի որդւոյդ. քանզի բնակա-  
 նաբար բնաւորեալ է 'ի բանականս սէր,  
 աղետաւորութեան կարեկից լինել: Ապա ու-  
 բեմն մաղթեսցուք առ բարձրեալն, Աստուած  
 քանանացւոյն զձայն. զի ըստ մեծի բարե-  
 խնամ մարդասիրութեան իւրոյ ողորմելով  
 և մեզ, շնորհեսցէ նմա կատարեալ բժշկու-  
 թիւն և առողջութիւն, 'ի մեծ ուրախու-  
 թիւն մեզ տրտմեցելոցս. զոր փափաքիմք  
 լսել 'ի բարերարէդ զաւետալիլուր երկրորդ  
 նամակաւդ, ոչ յետ բազում ինչ աւուրց:

Ն. Ծ. ՆՇԱՆ  
 ՅԱԿՈԲԵԱՆ



ՓՈԽԱՐԻՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԱՅ ՁԵՌՆՏՈՒՈՒԹԵԱՄԲ

Հայրենական բարեկամ.

Երանութիւն մեծ համարի ոք ունել զբա-  
 րեկամ ճշմարիտ. թող զբազմապատիկ օգ-

տիցն, որ ծնանին բարեկամաց պատճառաւ .  
 յորոց զմին յայտ արարից գժբաղդ սիրելու-  
 թեանդ որ վասն մեղաց իմոց փորձանաւոր  
 լեալ տառապիս 'ի նեղութեան : Օ՛ի լուեալ  
 է իմ թէ 'ի փորձանաւորութեան և 'ի չքա-  
 ւորութեան ժամանակի հօր իմում՝ լուսա-  
 հոգի բարեսէր հայրն քո ձեռնտուութեամբ  
 օգնութիւն արարեալ է նմա . յոյր սակս և  
 մեք երկու բարեսէր անձանց որդիք՝ իբրև  
 համանման բերք երկու համանման ծառոց  
 բարեաց, պարտական դատիմք միմեանց օգ-  
 նել . որպէս և գրեալ է՝ թէ հայրն զինչ  
 գործէ՝ որդին նմին նման . և թէ չեմք ծըն-  
 եալ վասն մեր միայն . ուրեմն հարկադրե-  
 ցայ եղբայրսիրութեան կանոնաց օրինիւ ըստ  
 կարեաց իմոց օգնել այսու գործնական ձե-  
 ոընտուութեամբ փոխանակ բարերարութեան  
 հօր ձերում, զոր արարեալ է մարդասի-  
 րութեամբ լուսահոգի հօր իմում . և յար-  
 գութիւնդ առանց ձանձրանալոյ ընդունես-  
 ցես զայն ինչ չորս բեռ մետաքսն . զոր ու-  
 նիմ պահեալ յայլ ինչ քարաշէն կրպակի  
 իմում . յայս ինչ անուն սպասաւորէ անտի  
 իմէ խնդրեալ առնուցուս անյապաղ . և  
 բաց 'ի սմանէ զոր ինչ կամիս դրամ ըստ  
 չափու պիտոյից քոց պահանջելով պահան-  
 ջել յինէն առանց ակնածութեան հարկ լի-

ցի քեզ, և զոր վայելուն է գիտես՝ ի գործ  
դնել ստորագրութեամբ ինչ զգրութիւն ու-  
ղարկել առ իս ըստ չափու ընչից և դրա-  
մոց զոր առնուցուս ՚ի հատուցումն տարա-  
պայման միջոցաւ :

Ո՛ղջ լեր ՚ի խնդակցութիւն ծառայ  
տեառն

ՆՇԱՆԻՍ  
ՅԱԿՈՒԲԵԱՆ

ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Ազնուագնրմ եղբայր.

Ուրախ եմ յաւէտ յորդեսիրական մար-  
դասիրութիւն բարեխնամ հօրս. զի յաւուրս  
յայսոսիկ ծանուցանելով նմա զեռանդա-  
զին բաղձանս սրտի իմոյ, յաղերս անկեա  
հրաման առի երթալ ՚ի սուրբ Արուսաղէս  
յուխտ և յերկրպագութիւն շնորհարուղիս  
տնօրինական տեղեաց Փրկչին մերոյ. բայց  
խոհեմագոյն զոմն խնդրէ, յանձնել նմա ճա-  
նապարհորդակից լինել ինձ. և անվնաս  
տանել և բերել բարւոք պաշտպանութեամբ.  
քանզի մանկական փոքր հասակաւ իմով ա-  
ռանց առաջնորդի և պաշտպանի վտան-

գաւոր համարելով զայն հեռաձիգ Ճանապարհորդութիւն, զխոհեմառատ յարգութիւնդ խնդրէ հայրս Ճանապարհորդակից առնել ինձ իմս ծախիւք, և ես ակն ունիմ զի մի տայցես հրաժեշտ այսմ. որովհետև և յայսմ միջոցիս անգործ գոլով դատարկաշուրջ ես. ահա ըստ նմանութեան Ուսփայէլ հրեշտակին է այս կամակատար գործ յարգական և մարդասիրական. որ արար Տօբիայի որդւոյն Տօբիթայ և ազգասիրի գերեւոյ Բաբելոնի. ուստի մի՛ բացասէր ազաչեմ. զի յոյժ սիրավառեցաւ անձն իմ, 'ի վերայ նազելւոյդ :

Ն. Ծ. ՆՇԱՆ  
ՅԱԿՈՒԲԵԱՆ

---

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՌԻԲԺԻՇԿ ԻԻՐ

Քաջահմանտ բժիշկ.

Արսէս 'ի ժամանակի անդ յետ հիւանդութեանս մինչ վերադարձաւ առ իս շունչ իմ կենդանական, զառաջին բարբառս ջրնորհապարտ սրտի իմոյ առ ձեզ յօղելնուրաստեղծ շնչովս՝ ահաւասիկ պարտ վարկաւ մահկանացու մարմինս առաջին շարժ

մամբ նորահաստատ մատանցս առ ձեզ բա-  
նագրել. մեծապէս շնորհակալ եմ զքաջահը-  
մուտ արհեստագիտէդ, զի ոչ դանդաղէիք  
բնաւ, գալ փոյթ ընդ փոյթ և այց առնել  
խօթացեալ բարեկամիդ. օգնական ինձ լեալ  
'ի մահիճս ցաւոց իմոց զամենայն անկողինս  
իմ դարձուցիք 'ի հիւանդութենէ. և զմար-  
մինս իմ՝ որ վայրկեան մի ևս իբրև ճրագ  
առ կայծեալ շիջեալ էր 'ի կենաց. վեր  
առիք 'ի հողոյ տապանէս. ուրեմն ընդ շը-  
նորհակալութեանս այս նամակի և զընծայս  
զոր առաքեցի, ընկալի՛ք սիրով իբրև զնիշ  
շնորհակալութեանս զբազմախոնջ աշխատա-  
նաց փոխան, և միայն յիշել զիս 'ի կար-  
գըս երախտագիտաց, որ Մատուածային բա-  
րերար կամօքն հանդերձ և ձերդ քաջար-  
ուեստ գործառնութեամբ ընկալայ զքաջող-  
ջութիւն, յորմէ արդարև ստիպեցայ աղօ-  
թարար լինել 'ի կենիս վասն ազգօգուտ կե-  
նացդ անդորրութեան.

Ո՛ղջ լեր 'ի տեր.

Ն. Ծ. ՆՇԱՆ  
ՅԱԿՈԲԵԱՆ



## ՈՒՐԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

### ԱՌՈՂՋԱՅԵԱԼ ԲԱՐԵԿԱՄԻ ԻՒՐՈՅ

Ընտիր գանձարան շնորհացն յիսուոթի,  
որ սիրով փայլիս 'ի քոյդ ընկերի.

Սիրահար տեսոյդ անձն իմ կարօտի.  
Փրկչաւանդ զսէր առ քեզ մատուցի:

Ըրդարեւ պատշաճ է 'ի միտ ածել այժմ  
զմարգարէական դուշակումն 'լաւթի հոգե-  
լից երգաբանի, ընդ երեկոյս հանգիցեն լա-  
լիք, յառաւօտու եղիցի ուրախութիւն:

Քանզի մինչ երբեմն էաք 'ի լալիւն 'ի  
ծանր հիւանդութեանդ ժամանակի, երեկո-  
յացեալ էր ժամանակն 'ի վերայ մեր և  
ձեր, բայց այժմ ամենառատ մարգասիրու-  
թեամբ Ըրարչին յառողջութիւն դիմել քո,  
եղև մեզ առիթ դիմել 'ի մեծ ուրախութիւն  
լուսարեր առաւօտեան. յճրպիսի ցանկալի  
ուրախութիւն առաջնորդել զօրէն ծագ-  
ման առաջնորդին արուսեկի 'ի ժամ առա-  
ւօտու մեծափայլ ծագման արեգական. որ  
զգիշերն ողջոյն 'ի խաւարի և 'ի քուն թանձ-  
րութեան լեալ էր մեզ տառապելոցս,  
յանկարծ պարգևեցաւ յստուծոյ ամենա-  
կալէ այսպիսի շնորհ մի մեծ և մխիթարա-



կան, ընդ Սողոմոնի ասել միաբերան թէ սեաւ եմ ես և գեղեցիկ . զի տառապակիր հիւանդութեան քո ցոյցք իրրև մառախլապատ ամպ լրժագոյն պաշարեալ էր զմեօք, այս է սևորակ . այլ և զի՞նչ առուօտեան ուրախութիւն կամ սողոմոնեան գեղեցկութիւն . արդարև երեկոյեան մթութիւնն ցանկալիս աննէ զառաւօտն, և լուսոյ շքաւորութիւնն զտեսութիւն արևու . ծարաւու թիւնն՝ զջուրն աղբերաց ըստ բանին ի մաստասիրին, թէ (ոչինչն է պատճառ ամենայն արարածոց կամ գոյական իրաց) : Այնպէս 'ի ժամանակս հիւանդութեան քում քանի՞ առաւել ցաւ զգայի և տրտմազգեաց լինէի մինչ տեսանէի զքեզ անշարժ 'ի մահճի, և զանազան դեղորէից անօթս որք շուրջ էին զքեւ պատրաստի . զհետ վաղեմի բարեկամացդ և բժշկաց ցորչափ ցանկայիր խօսել, սիրովառ տատրակ, հաւատարիմ գոլ 'ի սէր եղբայրական, զոր ունէիր և 'ի վերայ իմ և ո՞չ կարէիր բնաւ . և նուաստս առաջի քո նստեալ ակնապիշ դիտմամբ հայելով առ քեզ տխրագէմ, խանձոտէր սիրտ իմ, ներքնախայթ խոցոտէին ոսկերք իմ, նման յարգութեանդ կապկապէր շրթունք իմ, երկոցունցս աչք ընդ աչս յառեալ անմըսուունչ . որչափ գոհ լինէի եթէ խօսէր սի-

րելին իմ ընդ իս . ոչ ըստ նախկին սովորութեան ճոխաբարբառ իմաստալից բանիւք , այլ գոնէ երից և չորից բառիւք շաղկապեալ , թէ մերձ է ապաշխարանացս լուումն , յայնժամ նովին աւետեօք 'ի ցնծութիւն դիմել պատշաճէր ինձ ըստ օրինակի երանուհի սուրբ Կանանցն . որք 'ի խնդիր ելեալ գիշերայն ամենասիրելի Փրկչին մերոյ Հիսուսի , իբրև լուան յաւետաւոր հրեշտակէն զբարբառ , թէ չէ աստ այլ յարեալ , իսկ՝ որչափ ուրախացան : յորժամ լուան ըզմի բառն (Մարիամ) 'ի բերանոյ Փրկչին առաւել քան զառաւել ուրախութեամբ ըջան յանպատմելի խնդութիւն :

Ըրդ ահաւասիկ և ես իբրև լուայ սիրալուր նամակաւդ ցանկալի բարբառ՝ թէ 'ի քաջողջութեան ես , նմանօրինակ երջանիկ կանանցն ուրախութիւն մեծ ուրախացայ , փառք Ըստուծոյ ողորմութեան . զի ուրախացոյց զմեզ առողջութիւն պարգևելով սիրելութեանդ , ուրեմն և ես խնդրեմ զի փոքր ինչ ժամանակ օգափոխութիւն առնել կամելով յազբատանոց մեր հրամայեցես , որովհետև ջուր և օդ մեր աստանօր օգտակար և առողջարար գոլ զիտեմք , ուրեմն առ մեզ օթեանիլ քո ըստ կամաց քոց քանի մի եօթնեկի՝ օգուտ մեծ գործես ան-

ձին քուժ, և ինձ շնորհ մեծ աներկբայ . ա-  
րի՛ սէր իմ, արի՛ . մի զանց առներ զխնդրանովք  
իմովք . զի ժամանակս ինչ ակն ընդ ական  
բերան առ բերան դէմք ընդ գիմաց կեն-  
ցաղավարեալ սփոփեսցուք :

Ողջ լեր անդորր կենօք 'ի մխիթարու-  
թիւն ինձ յետնորդ նուաստ

ՆՇԱՆ ԾԱՌԱՅԻՍ  
ՅԱԿՈԲԵԱՆ

---

### ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ՎԱՍՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՐՈՑ

Յարգնյ ազգասէր .

Ըզնուական քաղցրասիրտ և ազգասէր  
ոգի ձեր արդարեւ յայտնի է ամենեցունցս  
և բարի զգացմանց ձերոց անդստին . զորոց  
շնորհակալութեանս մեր բարբառիլ բանս ա-  
հա յայսմ նուագի ևս պարտաւորիմք 'ի սըր-  
տէ ցնծութեամբ նուիրել և անգին կենաց  
ձեր բարութիւնս մաղթել 'ի տեառնէ . որ-  
պէս այն ինչ աղքատիկ դպրոցն առանց ար-  
գելական միջոցաւ օր ըստ օրէ 'ի յառաջա-  
դիմութիւն դիմէ իւրաքանչիւր մեծարու բա-  
րերար անձանց ազգասիրական ձեռնտուու-  
թեան խնամով , 'ի պայծառութիւն հոգե-

տանս այսորիկ, և 'ի հոգեգարման զարգացումն մանկանցս 'ի զանազան գիտութիւնս կարևորս. որպէս և դու սիրելիդ քաղցրահայեաց տեսութեամբ խնամոց գուն գործէք հանապազ առ կարօտեալս և առ եկեղեցական հոգևոր դասս և առ ուսումնասէր պաշտօնեայս Ըստուածաւանդ յօժարակամ սիրով, օժանդակ գտանիլ զանազան նուիրօք ձեռնտուութեան. զի ազգասիրական աչօք տեսանել ջանայք և զայս դպրոցս նմանօրինակ այլոց բարեհաշակ իմաստալից վարժարանաց. ընդ այն վստահացայ ահա յայսմ ամի ևս 'ի խնդիր մտանել, զի ըստ բարեհաճոյ սովորութեան ձերում ըզտարեկան նուէր ձեր, բարեհաճեսցի՛ք ուղարկել վասն արեշատութեան զուարթածաղիկ զաւակաց ձերոց. զոր տէր Յիսուս անփորձ և անօտան պահելով ընդ նոսին մխիթարեսցէ և զձեզ աստ և 'ի հանդերձեալն և արժանի արասցէ լսել զերանական և կենսախրախոյս բան Հիսուսի, թէ միում 'ի փոքրկանցս յայսցանէ արարիք, ինձ արարիք :

Ո՛ղջ լեր յարատեաական կէնօր յուրախութիւն մեծ եւ 'ի մխիթարութիւն ինձ պաշտօնեիս որ եմ,

Ն. Ծ. ՆՇԱՆ  
ՅԱԿՈԲԵԱՆ

## ՀԱՒԱՍԱՐԱԶԱՓ ՆԱՄԱԿ ՍԻՐՈՅ

Քաջատոնմիկ ազնիւ յարգելւոյ՛ ձօնեացի ողջոյն յաւետ տարիանօք .

Օի որպէս Հիսուսասէրն երջանիկ սիմէօն մեծաւ բաղձանօք և եռանդասէր սըրտիւ առ ընկալաւ 'ի գիրկս իւր զփափաքելին համայնից զսէրանունն Հիսուս, և խանդակաթ սիրոյ համբուրիւ գգուեաց զփարելին զայն . ըստ նմին օրինակի և դու ազնուածին ծիածան սիրասնունդ սիրալիդ՝ սիրապատար հեշտութեամբ պարարեալ, առնկալեալ ունիս հանապազ Հիսուսաւանդն զսէր անկեղծ մտերմութեամբ . զոր իրրև ըզհուր մշտատև վառեալ բորբոքեալ ունելով 'ի վառարանի սրտիդ՝ սքանչելափայլ և սիրալիր ընտիր ընկերակցութեամբ . որպէս և յիս կատարելապէս, մինչ առ բեզ էի անդ մերձակայ : Արոյ վասն՝ այսու սքանչացի գործառնութեամբ քով հանգունատիպ դասէի զսիրելիդ նոյն Հիսուսընկալ սիմէօնի . շնորհակալ գոյ զազնուաբարոյ մարդասիրութենէ քումմէ :

Բայց արդ՝ եթէ իմ զանցառութեանս աղազաւ մինչև ցարդ մոռացօնս եղեալ անպատեհ ինչ համարեցեր գոնէ երկտողի սիրանիշ գրութեամբ իւրք յիշել զիս կամ

հարցանել զորկենութենէ իմմէ, ահա այսուհետև աներկբայ ակնկալնում գալ ժամանել առ իս ուրախառիթ քաջողջութեանդ և անդորր բարելաւութեան քում որպիսածանոյց գրաւոր ձայն բերկրանաց, իբրև զարուսեկի լուսափայլ ծագումն, 'ի սփոփութիւն ինձ

Նուաստ եղբօր քում,

ՆՇԱՆԻՍ  
ՅԱԿՈՒԲԵԱՆ

---

ԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԶԱՐԳԱՅԵԱԼ  
ԵՂԲՕՐ ԻԻՐՈՒՄ ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻԻՆ

Քաջահմուտ ուսումնասէր ցանկալի եղբօրդ վերջնձայի սէր կարօտակէզ.

Ղաճանչ նշուլից լուսաւոր իմաստութեան մեծապատիւ առնէ զստացողս իւր, և լուսաւորէ զսիրտ այնոցիկ որք զէնտ պնդին սրտի մտօք, քաջ 'ի միտ առեալ զյարգ նորա, շին պէտք մեզ աստանօր ձգել յերկարութիւն բանից, 'ի ցուցանել թէ քանի պատիւ և փառք և պերճութիւն ստացան ժրաջան նախնիքն մեր ուսումնասիրութեամբ:

Քանզի դուք ինքնին կանխադէտ գոլով

այնց ամենից, յօժարակամ սիրով մատու-  
ցիք զանձինս ձեր անդատին 'ի մանկութենէ  
Հետէ 'ի զանազան մակացութիւնս գիտու-  
թեանց. և յառաջացեալ գտայք 'ի նոյն ըստ  
բաւականին. որով ստացայք զփառս և ըզ  
պատիւ, և սիրելի եղէք յաչս մեծամե-  
ծաց. և որ մեծն է համբերատար լռութեամբ  
ժուժկալեալ այն ինչ փորձութեան ժամա-  
նակաւոր, ըստ երանելոյն Յորայ ընտիր գը-  
տայք առաջի տեառն. որոյ տեսեալ զբար-  
ւոք հաւատս ձեր. ամբարձ զձեզ վերստին  
յայլ վիճակ լաւագոյն քան զառաջինն. և  
ըստ աւետարանին արժանի եղէք լսել թէ  
լիջի՛ր ունել իշխանութիւն 'ի վերայ տասն  
քաղաքաց :

Ն. Ծ. ՆՇԱՆ  
ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՌ. ՆԱԽԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԳ ՔԱՂԱՔԻՆ


Առաքելաշնորհ եւ գերերջանիկ տեառն  
ազգասէր քարեխնամ գերբնտիր հօր մե-  
րոյ քրիստոսագօր աջոյն համբոյր ընծայի  
ծառայաբար.

Կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք՝  
համբարձին զԼճիւն. իսկ զքեզ ո՞հ հայր բա-

րեգութ՝ ոչք ոմանք հեռացուցին 'ի մէջ,  
թերևս նոյն հողին՝ որ վերացոյց զնա և ըզ  
քեզ անջրպետեաց 'ի մէջ. հուր սիրոյ քո  
կիզու զսիրտ մեր, և բոց կարօտութեան քո  
զերիկամունս մեր. աւետարեր համբաւ կեն-  
սունակ ողջութեան քո իբր իւղ զուարթ  
պարարէ զոսկերս. և իբրև զհօտ կնդրկի  
աղնուոյ զմայլեցուցանէ զմեզ. ընդունակ  
մաղթանք հորդ սրբոյ ցանկալի են մեզ իբ-  
րև ծառ հովանաւոր, ընդ որով հանդուցեալ  
զովանամք 'ի տապոյ կարօտակէզ անձկու-  
թեան՝ հոգենորոգ զուարթութեամբ :

Աղաչեմ զքեզ ո՞վ հայր հոգևոր՝ արա՛  
առ մեզ ըստ մեծի պերճութեան քում, զի  
եղիցի կրկին ոգի քո 'ի վերայ մեր. զի ա-  
հա ձերոյին հաճոյական սուրբ մաղթանօք  
կամք անվնասելի ամենեքումբք, որք են ընդ  
մեզ. և խնդրեմ 'ի տեառնէ կալ մնալ քեզ  
'ի բազում ամս բարգաւաճեալ բարեմաս-  
նութեամբ 'ի ցնծութիւն սրտի :

Ն. Ծ. ՆՇԱՆԻՍ  
ՅԱԿՈԲԵԱՆ





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՌ ՈՐ ՊԱՏՃԱՌ ԵՂԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ԿԱՄԻ ԸՆԴ ՆՈՅՆ ԿԵՆԱԿՑԻԼ

Զ Ի Հ Ա Ն Ա Պ Ա Ջ Հ Ա Ղ Ո Ր Դ Ե Ս Ց Ե Ն

ՄԻՄԵԱՆՑ ԶՄԷՐ

ԿԵՆԱԱՊԱՏԱՆՈՒ ԿԱՐԵԿԻԳ ԱԳԱՍՏԱՐԱՐ ԷՊԲԱՅՐ.

Քան զայս առաւել զի՞նչ բաղդաւորութիւն ինձ սի՛րելի. որ եղև ՚ի ձեռն բարերարիդ յայնմ վայրկենի, մինչ յայն յա՛հէ անտի ժանտաժանիք գաղանի միոյ փախուցեալ, ելեալ սպասէի ՚ի վերայ ծառոյ միոյ դողալով. և Ղստուած լուեալ աղօթական ձայնի իմում բարեգթութեամբ իւրով ողորմելով ինձ նուաստիս, ալատարար առաքեաց զքեզ առ իս. որ հրացանիւ քով հարեալ զնա սատակեցեր. որով ազատութիւն շնորհեցաւ յՂստուծոյ երկոցունցս միանգամայն. սպա թէ ոչ՝ մինչև ցերբ կարէի սպասել անդ սովալուկ. զի գաղանն այն ժանտաժուտ՝ որչափ սպասէր ընդ ծառովն այնուիկ, և ՚ի վերայ նորա հարկ լինէր ինձ նստել քաղց և ծարաւ. շունէի զթևս թռչնոյ որով կարողանայի թռչելով փախչիլ անտի օդապարիկ սլացեալ. ուստի

երախտագէտ սրտիս յօժարութեամբ անձ-  
կացեալ, բարւոք համարիմ մշտնջենական  
եղբայր կոչիլ անլուծանելի հաստատուն սի-  
րով ընդ միմեանս. առ ինչ գործ կամ յո-  
րում տեղւոջ եթէ գտանիցիմք, 'ի միասին  
կենցաղավարեալ սփոփեսցուք. զի զեղբայ-  
րական ճշմարիտ սիրոյ կենսաւէտ արդեամբ՝  
հաղորդութիւն առնել կարասցուք միմեանց  
հանապազօր գրկախառն սիրով, որում և  
Մատուած յօժարի յաւէտ :

Ն. Ծ. ՆՇԱՆ  
ՅԱԿՈՒԲԵԱՆ

---

### ՅՈՐԴՈՐՈՒՄՆ Ի ԲԱՐԻՍ

#### ԱՌԱԻԵԼ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱԿԻ

Ազնիւ պաղաքեր ծառ արմաւենի,  
բողբ համեղախօս խոհեմ սիրելի.  
Հոգեկից որդեակ ճաշակ իմ սրտի,  
ոէր հայրախնամ առ քեզ նուիրի:

Ահ ցանկալի և փափաքելի հասակ ե-  
րիտասարդութեան. որք յամենայն ինչ գոր-  
ծըս բարիս կարող են ձեռնամուխ լինել և  
սքանչելապէս ցուցանել վարս հոգեկանս և  
Մատուածահաճոյս ջերմաջերմ Մատուածա-  
յին սիրով ջերմեռանդութեան սոյն հասա-

կաւ . և թէ յազգային բարձրանշան և մե-  
ծագուտ իրս հասարակութեան մեծագոր-  
ծութեամբ զընտիր ընտիրս գուն գործեն  
արտաբերել արթուն և եռանդուն գոլ 'ի  
ջանս և 'ի վաստակս . և դիւրապէս կարող  
են ձեռնամուխ լինել մեծամեծ գիտութեան  
բաւականապէս և յայլ յայսպիսիս : Այլ գու-  
որդեակ իմ սիրելի՛ ահա ելեալ 'ի վիճակէ  
պատանեկութեան մուծար 'ի հասակ երի-  
տասարդութեան օր ըստ օրէ դիմել 'ի կա-  
տարելութիւն Մատուածային անհուն գթու-  
թեամբ . յորում կարող ես և դու վերնա-  
ծանոյց բանիցս կերպարանօք և նմանու-  
թեամբ երևիլ 'ի գործս լրջագոյն բնու-  
թեամբ քով , ըստ վայելչութեան հասակիդ  
մեծաշահ բարութեան արդեամբ պերճ և  
բարգաւաճ գտանիլ յանձին քում , և յազ-  
գիդ : Քանզի որպէս օրէն է 'ի քառից ե-  
ղանակաց մինն գարուն՝ յորժամ պանծա-  
ցեալ խայտայ 'ի վերայ երկրի եթերապարզ  
պայծառութեամբ և արփիափայլ լուսաւո-  
րութեամբ և զամենայն արարածովք շքե-  
ղատեսիլ երևամբ . յայնմ ժամանակի է  
արդարե տեսանել զգեղեցկութիւն դալա-  
րազարդ դաշտաց և կանանչագեղ ծառոց  
պարտիզաց և զանուշահոտ բուրումն զուար-  
թատեսիլ գոյնզգոյն ծաղկանց և զներդաշ-

նակութիւն խայտափետուր դալայլիկ թըռչ-  
նոց, որք ձայնակցութեամբ ընդ միմեանս  
ելեալ 'ի բունոց իւրեանց ձմերանոցաց,  
օթաչու ընթացիւք երամովին սլացեալ խայ-  
տան մեծապէս հայելով ընդ քաղցրասիւզ  
օդս և ընդ նշուլագեղ շողշողումն լուսոյ  
պայծառարփի արեգական, յորոց անդադար  
ծփին ամենայն մարգագետինք շքեղատեսիլ  
ալեօք: Ահա և դու սիրելիդ խոհեմ բա-  
նականդ՝ զտարերացն և զօդայնոցն թռչնոց  
առեալ զնմանութիւն, զքնտիր ընտիր գործս  
բարեաց արտաբերել պարտիս 'ի կենիդ  
յայսմ աշխարհի թէ 'ի հոգեկանս և թէ 'ի  
մարմնականս, թէ 'ի կրօնս և թէ յուսմունս,  
'և թէ յո՛ և իցէ ամենայն ազգօգուտ պայ-  
ծառարփի գործ բարութեան երիտասար-  
դականդ տենչիւ. և իբրև զհոտաւէտ ծա-  
ղիկ գարնայնոյ 'ի սոյն այս դալարագեղ  
հասակիդ՝ զերթ մեմնօնի հրաշակառոյց  
արձան ձուլածոյ՝ որ 'ի ջերմութենէ արե-  
գական քաղցրիկ ձայնս արձակէ. նմանօ-  
րինակ և դու սիրելիդ բորբոքեալ սիրոյ  
ջերմութեամբ իբր յԱստուածուստ կառու-  
ցեալ արձան կենսունակ խնամարկել ու-  
նիցիս համայն ազգիս 'ի մտիթարութիւն և  
'ի պարծանս ինձ անարժան ծերունի հօրդ,

ՆՇԱՆԻՍ  
ՅԱԿՈՒԵԱՆ

ՔԱԶԱԼԵՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԳԱՍՆԿԵՐՍ  
ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ԶԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆ  
ՎԱՍՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Համախոհ եղբարք.

Ղանապարհորդք մինչև իցեն հասեալ 'ի նպատակ իւրեանց 'ի քաղաք, շէք նոցա խընդու թիւն և ուրախութի հանդարտութեամբ սրտի. նոյնօրինակ և ամենայն ձեռակերտական գործ մարդկան վախճանաւն պսակի:

Թէպէտ ոմանք առ նախանձու կամ մարդահաճութեամբ կամիցին զթուխն սպիտակ առնել, և զճշմարիտն խափանել, բայց ոչ ճշմարիտն խափանի, և ոչ սպիտակն փոխէ զիւր զորակ. ուրեմն այնպիսիքն թէ և ընդդէմ կալ հակառակին երկնաւոր փրչմանն շնորհաց 'ի չարէն առեալ զխորհուրդ, որ է մարտնչումն ընդդէմ ճանաչեալ ճշմարտութեան, յանթողի մեղացն զհոգւոյն գոլ ճանաչեմք 'ի կարգի:

Սակայն իբրև սաստիկ հոգմոյ շնչէ սուրբ հոգին ուր և կամիցի. զերկնապարգև մանանայ հոգեբոյժ՝ ո՞վ կարէ արգելուլ 'ի կերակուր. և զերկնատեղաց անձրև որ ըստ կամաց ժառանգութեան իցէ պատրաստեալ, ո՞վ կարէ զրկել 'ի ծարաւութեան պատրի թո-

դուլ զժողովուրդն յանապատի յանջրդի . ա-  
նօրէն է եթէ որ կարօտելոցն կարևորաց  
խափան լիցի շարութեամբ . սակայն որ ինչ  
Մատուծոյ իցէ՝ ոչ որ կարէ քակտել . քա-  
մի լիցի , միթէ ոչ գոն արբ իրաւասոհք և  
արդարադատք չխափանել զվայելութիւն  
օգտից բազմաց զարդարութիւնն Մատուծոյ  
գործիս ունելով ինքեանց . ապա յիմարա-  
կան է այս խակամտութիւն քաղցր ջրոյն  
դառն ասել և զլուսաւորս խաւար կոչել .  
զի ոչ անուշութիւն ջրոյն փոխի 'ի դառ-  
նութիւն , և լուսաւորութիւնն 'ի խաւար :

Ապա երկուցեալ յերկիւշալիւր կասկա-  
ծանաց մինչև ցերբ զմնասն Մատուածաւանդ  
'ի փաթութանս և 'ի ծրարս պահեսցուք ան-  
յայտ յաչաց . մինչև ցերբ զլուսակիւր աշ-  
տանակն Մատուածատուր ընդ գրուանաւ ա-  
րասցուք անողորմաբար . ո՛ւր արդեօք տա-  
րակուսանօք սպասեալ կամք զգործ մեր նո-  
րակառոյց 'ի թագստի պահեալ , և անփոյթ  
լեալ զվայելչականն գուն գործել յայտ  
ածելով . նախ հոգևորական խմբից իմաստ-  
նոց 'ի քննութիւն և 'ի վկայագրութիւն տը-  
պագրութեան , և յետոյ նովաւ հրատարա-  
կել 'ի վայելումն ազգիս . որով պսակեսցի  
այս գործ մեր Մատուոր : Ն. Ծ. ՆՇԱՆ,  
ՅԱԿՈԲԵԱՆ

## ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Բարեհոգակ ողորմած ազգասիրիդ բարերար մեռաց մատչիմ 'ի համբոյր յաղերս թախծագին դիմօք.

Չիք ոք յաշխարհի որ շիցէ տապալեալ ինչ ինչ աշխարհային փորձութեամբ, և 'ի հանգստութեան կալ մինչև ցօրհաս վախճանի կենաց իւրոց անդորր կենօք ըստ ամենայնի բարեկեցիկ գոլ: Վանզի են ոմանք որք բնաւ չեն կարողացեալ աղատ կալ 'ի շար ժանեացն փորձանաց բազմածուփ աշխարհիս. ըստ այնմ օրինակի իմա՛ զսոյն սագրաբերն, որ 'ի բազում ժամանակաց հետէ դատարկաշուրջ լեալ, և կերպ առ կերպ նեղութեանց պատահեալ, յորմէ ամենախնամն Մատուած զերծ կացուսցէ զքեզ, ով բարեխնամ յարգելի. և այժմ անօգնական յումեքէ իբր աւուր պարենի կարօտ դիմեաց առ մերս նուաստութիւն, և մեք քաջածանօթ լեալ աղբատութեանն տառապանաց սորին, և յուսադիր լեալ 'ի վսեմութեանդ գթառատութիւն, յանձնեցաք զսա առ բարերար կամս քո. գուցէ կրպակացդ միում պաշտօնեայ կարգեսցես. զի հաւատարիմ է ըստ ամենայնի. և վկայեմ զհարազատ հա-

ւատարմութենէ սորին թէ 'ի բարս և թէ  
'ի վարս . որպէս տեսար զսա առ ժամանակ  
մի առ լուսահոգի այս ինչ անուն յարդոյ  
Միւրայն վայելչական ընթացիւք վարուց'  
խոհեմ, արթուն, և բանիրուն գտաւ 'ի պաշ-  
տօնի սեղանաւորութեան շահաւորս ար-  
դիւնաւորելով: Եւրդ' եթէ ինչ և իցէ պաշ-  
տաման առարկայիւ այցելու գտանիցիս սմա,  
և Մստուած այցելու գացի քեզ 'ի մխիթա-  
րութիւն և 'ի ցնծութիւն ինձ յետնորդ  
նուաստ

ՆՇԱՆ ԾԱՌԱՅԻՍ  
ՅԱԿՈՒԲԵԱՆ

ԽՐԱՏ ՎԱՍՆ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ

Բարեզգաց սիրեցելւոյդ խնդալ 'ի տեր  
յարգանօր.

Բարեխնամն Մստուած յորժամ եդ ըզ  
նախաստեղծ ծնողս մեր 'ի դրախտի յանմե-  
ղութեան և յանմահութեան վիճակի 'ի վա-  
յելումն բարեաց, յայնժամ յառաջ քան  
զամենայն՝ եդ զօրէնս պահոց առ ազնուա-  
տես ծառոյ միոյ, մի ուտէք ասելով. զի ըզ  
ժուժկալութեանն ուսանելով զառարինու-



Թիւն, յանձնողութեան պահելով զանձինս  
իւրեանց, յանձնահողութեան ունիցին զկեանս  
անվախձան : Ահա յայտնեցաւ զի վասն  
ժուժկալութեան խօսիլ ունիմ սակաւ ինչ  
յարգի մտերմութեանդ յայսմ նամակի, ըստ  
որում անպատեհս լուայ զքէն վասն պա-  
հեցողութեան : Ապաքէն՝ սրբոց հարց հո-  
գելից քարոզութեանցն նպատակ՝ որ վասն  
պահեցողութեան առ ժողովուրդս, և իմս  
նուաստութեան առ վստիմնական բարե-  
կամիդ ծանուցումն՝ խտրութիւն կարծես  
առ նախանձու. ոչ ապաքէն մարմնական  
բժիշկք ՚ի բժշկարան գրոց իւրոց ուսեալ  
կազմեն զգեղորայս. ըստ նմին օրինակի և  
հոգևոր բժիշկք հոգեկիր սուրբ հայրապետք  
և բարեխրատ քարոզիչք քաջածանօթ գող  
բժշկարան սուրբ Աւետարանի Փրկչին մե-  
րոյ, յորմէ զօրաւոր դեղս պատրաստեալ  
ցուցանեն մեզ զեկուցանել զԱստուածային  
կամս և զհրաման. թէ զի՞նչ է բարին՝  
հաճոյն՝ և կատարեալն. և որով առաքինու-  
թեամբ կարեմք Աստուածային կոչել, և  
տեառնապարգև անվախձան ցանկալի փա-  
ռաց սուրբ արքայութեան ժառանգորդ լի-  
նել : Ար զօրէնս սրբութեան պահոց նախ  
՚ի դրախտին աւանդեցեր, զոր երգէ Ակե-  
ղեցին, որով ծանիցիս զի ՚ի տեսանէ է այս

աւանդութիւն պահոց 'ի դրախտին . զոր ոչ  
որ կարէ՞ փոփոխել ըստ կամաց իւրոց , ոչ  
ապաքէն խնամածու ծնողք զանդէտ զաւա-  
կունս իւրեանց առ 'ի պաշտպանել 'ի վնա-  
սակար ճաշակելեաց արգելուն . յորմէ գի-  
տելով զնիւթել հիւանդութեան և ատա-  
ժէտութեան , զայս մի ուտեր ասելով հո-  
գատարութիւն առնեն հայրաբար , զի մի  
ընդ նոսին և ինքեանք վշտասցին . ըստ նը-  
մին օրինակի և իմաստուն բժիշկք , զոր ինչ  
չիցէ արժան ուտել՝ համարձակապէս ար-  
գելուն ժամանակ առ ժամանակ , և մանա-  
ւանդ սուրբ Գիրք ասեն վասն տկարաց , և  
որ հիւանդն է բանջար կերիցէ . այսինքն  
խոտեղէն : Բարերար կամք ամենաստեղծին  
բաղմատեսակս արար յաւէտ զբերս խոր-  
տիկս և համեղաճաշս 'ի վայելումն . որով  
զերախտիս նորա ճանաչել պարտիմք շնոր-  
հակալ գոլ զբարերարութեանցն , ըստ ո-  
րում ամենայն ինչ բարի է՝ զոր ինչ արար  
Նստուած , բայց անպատեհ ժամանակի ու-  
տելն վնաս մեծ գործէ : Բանակք իսրայէ-  
լացւոց մինչ ցանկացան զցանկութիւն յա-  
նապատի , ոչ ապաքէն որկորական էր ցան-  
կութիւնն , զմիս ինզրել նոցա պատճառ  
եղև քառասուն աւուր ճանապարհի ձգել  
յամս քառասուն , արդարև լորամարգի յոյժ

յոյժ ետ նոցա զոր յղփացան յուտել, բայց  
զի՞նչ օգուտ՝ մինչդեռ կերակուրք նոցա ՚ի  
բերանս իւրեանց էին, բարկութիւնն նոյն  
յանկարծ ՚ի վերայ նոցա. գերեզման ցան-  
կութեան անուանեցաւ տեղին այն՝ յորում  
որկորածէտ խումբ թաղեցաւ. եղեմական  
այն պարտէզ բազմատեսակ պտղով էր զար-  
դարեալ լիուլի. բայց ժուժկալութեան ե-  
ղաւ անդանօր օրէն, շուտել ՚ի պտղոյ ծա-  
ռոյն գիտութեան բարւոյ և չարի. ապա տե-  
սեալ զանազան վայելչութիւնս, եղբայր,  
մի խաբիցիս անխտրաբար ուտել ՚ի ցանկու-  
թիւն, ամենայն ինչ օրէն է ուտել ասելով.  
այո՛, օրէն է և հրաման ՚ի վայելումն, որ-  
պէս և ասացաք ՚ի վերոյ, բայց ոչ յամենայն  
ժամ զամենայն ինչ ուտել. պարտիմք ճան-  
նաչել զժամանակն. լաւ է ասէ Պօղոս ոչ  
ուտել ժիս և ոչ բմպել գինի, և ոչ՝ որով  
եղբայրն քո գայթակղի, կամ գժէ կամ  
տկարանայ, համառօտաբար ասացից. ոչ  
ապաքէն եօթն մահացու մեղաց մինն որկ-  
րամոլութիւնն է, մոռացեալ իցէ քո ար-  
դեօք զՅրէկեղի ցասման պատիժն և զՍո-  
դոմայ և զՎոմորայ հրկիզութեան պատիժն,  
զոր յասելն Յիսուսի ՚ի սուրբ Լուստարա-  
նի՝ նախագասէ զպատճառ ցասման ըստ նա-  
խաիննամական վարդապետութեան իւրում.

(որպէս և մանկավարժից է այս դորձ սովորականն առ հասարակ մանկանց հրատարակել զառիժս պատժոյն անզուսպ մանկանն պատժապարտի, և յետոյ պատժել 'ի խրատ) . այնպէս կամի Աստուած զամենեսին զմեզ ազատել և խնամով պաշտպանել 'ի ցամանէ անտի ապագայէ. ապա ուրեմն հարցցուք Յիսուսի վարդապետին յերոյ, որ շարունակէ զյանցանս այնոցիկ յասելն, ուտէին ըմպէին, գնէին վաճառէին, տնկէին շինէին և յետոյ զի՞նչ, եկն ջրձեղնի և կորոյս զամենեսին . բայց յառաջ քան զամենայն, ուտէին ըմպէին ասէ. յորմէ բազմաստեղծեան ճոխանալ ունին դիւրապէս ամենայն մահացուցիչ մոլութիւնք . սորին տղազաւ նախ 'ի դրախտին աւանդեաց մեզ զօրէնս զայս 'ի զգուշութիւն . քանզի սոյն զանցառութիւն հրամանին էր, որ քանիցս դղրդեցոյց զաշխարհ ամենայն, և զաշխարհասէրս կորոյս զամենեսին . զերկիր և զամենայն մարմնաւոր որ 'ի նմա՝ համայն ապականեաց . և եթէ այնպիսեաց մեղօք մարդկան հարիւրամէից շաղախիցի որ, և նա ըստնոցին օրինակի ունի անիծակիր լինել, զոր մարգարէն ասէ, [թէ որ հարիւրամեան մեռանիցի՝ մեղաւոր և անիծեալ կոչեսցի . տեսն՞ր արդեօք յիտագայից մոլելոց անգամ

լինի պատճառ ապականութեան , զի յորկ-  
րամոլութենէ ընծիւղին բազում ժանտա-  
սաղարթ մոլութիւնք . մինչ զի որկրամո-  
լութիւն մարդկան պատճառ եղև բանին  
Մատուծոյ յաշխարհ գալ , մարմնանալ , և 'ի  
խաչ ելանել . և վասն անժուժկալութեան  
մեղաց մերոց զքառասուն տիւ և զքառասուն  
գիշեր պահել , ծանիր 'ի Հարկանէն . որ  
զգառնութեան պտղոյն ճաշակն , որով մե-  
ռաք արդարութեան , պահելով քո քառաս-  
նօրեայ փոխեցեր 'ի քաղցրագոյն օրինաց  
քոց ճաշակումն : Մի ըստ կամաց քոց թիւր  
մեկնեսցես ասելով . եթէ Վրկիչն մեր Հի-  
սուս քաւեաց զայն զանժուժկալութեան մեղս  
Մգամայ , ուրեմն անխտրաբար կերիցուք .  
և ես քեզ ասեմ . ոչ ապաքէն կրկին մե-  
ղուցեալ է մեր ներգործականաւ . կամ վը-  
կայութիւն ինչ բերեալ զբան մարգարէին  
իրբև ամուր ապաստանի արարեալ ասիցես ,  
կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ , գրեալ ու-  
նիմք 'ի Պաւթէ . և ես ունիմ քեզ պատաս-  
խանի 'ի Հիսուսէ , ոչ միայն հացիւ կեցցէ  
մարդ , այլ ամենայն բանիւն Մատուծոյ .  
որով կարողացուք լինել օրհնող և փառա-  
բանիչ Մատուծոյ յաւիտենականի . կեցու-  
թիւնն արդեօք միայն ուտելով ըմպելով  
կարծես , սի'րելիս , չիցէ՞ հարկաւոր և պա-

տրսպարութիւն հանդերձի, մանաւանդ մար-  
գասիրին Մստուծոյ երկնաստեղծ ձեռացն  
Վախախնամական պաշտպանութիւն երևելի  
և աներևոյթ կերպ առ կերպ մահառիթ փոր-  
ձանաց. յորոց առ հասարակ զերծ լինել  
խնդրէ մարգարէն պաշտպանութեամբ տեա-  
ռին: Պահեցողութիւն առնել հարկաւորի,  
ըստ որում երից գլխաւոր առաքինութեանց  
մին՝ պահեցողութիւն է. զայս ո՞վ կարէ  
ուրանալ. արդարև ամենայն զգայարանաց  
է այս օրէն պահեցողութեան, բայց բերա-  
նոյն և շրթանց պահեցողութիւն առաւել է  
քան զամենայն. քանզի յորժամ որկրամո-  
լութիւնն չիցէ արգելեալ, զայլ զգայու-  
թեանցն ցանկութիւն ոչ կարես արգե-  
լուլ, հայեսչի՛ր ՚ի զօրագլուխն մեր Վրիս-  
տոս, զինա երիցս անգամ յաղթեաց չարին  
սատանայի պահօք ժուժկալութեան. և մեր  
զինուորեալքս քրիստոնէութեան անուամբ՝  
պարտիմք նմանօրինակ յաղթել երից թըշ-  
նամեաց մերոց, որք են մարմին, աշխարհ,  
և սատանայ. յիշեսչի՛ր նաև զժուժկալու-  
թիւն պահեցողութեան երից մանկանց, որ  
ոչ սակաւ շահեցան օգուտս կենսաբերս.  
ոչ կամեցան ճաշակմամբ խորտկաց ընդ դէմ  
Մստուածային օրինաց մեղօք համարիլ, այլ  
ընդեղինաւ լոկով շատացան, որով շիջու-

ցին զգօրութիւն Տրոյ , և 'ի մէջ հրոյն ընդ  
հովանեաւ պաշտպանութեան լինել արժա-  
նացան որդւոյն միածնի բանին Աստուծոյ .  
որ արդարեւ ըստ Աւետարանի մազ մի 'ի  
գլխոյ նոցա ո՛չ կորեաւ . որպէս և գրեալ  
է . էակիցն հօր իջեալ 'ի հնոցն և թօթա-  
փէր զհօւրն 'ի նոցանէ և անկէզ պահեալ  
զմանկունսն 'ի հրոյն : Այլ յազմեցին զի  
օրինապահ գոլով ո՛չ հաճեցան սխալ մեկ-  
նութեամբ ասել . կեցցէ անձն իմ օրհնեսցէ  
զքեզ , զոր որկրամուք ըստ որկորական ցան-  
կութեանց յերկրել մշտաստիոր են , որ  
այնու ո՛չ կարեն երբէք շիջուցանել բարձ-  
րարօրբօք զբոց հրդեհանիչ ցանկութեան  
իւրեանց : Օարմանալի ժուժկալութիւն Ա-  
նուք նահապետի , զոր եցոյց յաշխարհի ,  
զայդի տնկէ և ո՛չ ուտէ յողկուզէ անտի՝  
և ո՛չ մի . այսու մտօք , զի գուցէ՞ արդեօք  
քաւութիւն լինել մեղաց որկրամուլութեան  
նախաստեղծից , զի զազգասիրական գործ  
մի յիշատակ թողցէ յաշխարհի . արդարեւ  
Աստուած ամենակարող զժուժկալութեանն  
զայն գործ անջնջելի յիշատակ եթող յերկ-  
րի , և վերացոյց մարմնով յերկինս . զի՞նչ  
զարմանալի առաքինութեան պաշտօն , որ  
զհողեղէնն ընդ լուսեղէնս դասակից առնէ .  
վասնորոյ բարեկենդան ասացաւ ամենայն

պահոց առաջին օրն :

Վինուէացիք համայն կործանելոց էին քաղաքաւ, ամենեցուն յայանի է. իսկ այժրմ գովաբանէ Յիսուս զնոսա յԱւետարանին ասելով. Վինուէացիք յարիցեն՝ ՚ի դատաստան. վասն ՚ինչ պատճառի տէր իմ և արարիչ իմ, երբեմն ատելի՛ և երբեմն սիրելի՞. երբեմն դատապարտելի՛ և երբեմն գովելի՞: Այն յանդիման երևի, պահօք ըստացան զայս արժանաւորութիւն գովաբանութեան յանդիմանել զամենեսին. արդարև իրաւունք է նոցա. ոչ միայն ՚ի սարսափելի յայն ահեղ ատենի ազգաժողով հրապարակին բողոք բառնալ զմէնջ, այլ և յաշխարհիս յայսմիկ արդէն յանդիմանել առ հասարակ զամենեսին, ՚ի մեծաց մինչև ցիփունս որկրամուտութեամբ յղիացելոց. որոց վասն և մարդարէն դանգատի յասելն, գիրացաւ, ստուարացաւ, լայնացաւ, և եթող զտէր Աստուած զարարիչ իւր. վասն այսորիկ գայցեն և բարոզեսցեն մեզ ՚ի յանդիմանութիւն՝ թէ մէք պահօք զբարկութիւնն Աստուծոյ զիջուցաք, գուք արդէն զանբարկանալի բնութիւնն բարկացուցանել կամիք զցանկութիւն կամաց ձերոց բորբոքելով որկորասիրութեամբ. ասացի, Վինուէացիք յարիցեն ՚ի դատաստան ասէ Յիսուս



յՆՎետարանին , ո՞չ ապաքէն զայս ևս ասէ  
անդ յՆՎետարանին , յորժամ զՆոաքե-  
լոցն գանգատէին տսելով՝ թէ ուտեն և  
լմպեն և 'ի շաբաթս գործեն , զի՞նչ ասէ  
նոցա , յայնժամ պահիցեն զի՞նչ ասել է ,  
մինչև իցէ փետային հեռացեալ 'ի նոցանէ ,  
ուտեն և լմպեն և ուրախանան . և յորժամ  
վերասցի 'ի նոցանէ , յայնժամ պահիցեն .  
տեսնէր արդեօք զհրամանն Հիսուսի վասն  
պահեցողութեան՝ քանիցս , զմտաւ ամ և  
զայս բարեոք ունկնդրութեամբ Մետարա-  
նական բանի . յորժամ Նոաքեալքն եկին և  
ասենց Հիսուս՝ թէ ընդէ՞ր զայս դիւատար  
մեք ո՞չ կարացաք բժշկել . զի՞նչ տայր պա-  
տասխանի . այս ազգ ո՞չ իւրք ելանէ , բայց  
եթէ պահօք և աղօթիք . ո՞չ ցանկալի ա-  
ռաքինութիւն և սքանչելի զօրութիւն պա-  
հեցողութեան . մինչև անգամ դեն հալա-  
ծական առնէ . 'ի սուրբ Մետարանէ ըն-  
կալաք զայս ծանօթութիւն , 'ի վրկչէն մեր-  
մէ Հիսուսէ Վրիստոսէ ասացեալ . ուրեմն  
բաւական համարեսցի՞ր զայսքանս քեզ 'ի  
խրատ , որ անմտութեամբ ասես՝ թէ չե է  
լուեալ իմ յՆՎետարանի հրաման վրկչին  
'ի պահել . իսկ եթէ 'ի գիտութիւն ճշմար-  
տութեան տկարամիտ գոլ յամառութեամբ  
պնդեսցես այսու բանիւ , ո՞չ որ ինչ մտա-

նէ ընդ բերան պղծէ զմարդ, զայս բար-  
 տք ասացեր, ընթեռնուս ընթեռնուս և ոչ  
 երբէք լսես ունկնախից գոլ ըստ հոգւոյ,  
 վասն էր ոչ պղծէ պարոն անկանոն, ան-  
 կանոն կերպիւ և անպատեհ ժամանակի շա-  
 փազանց ուտելն և շափազանց գինեաւ ար-  
 բենալն, ոչ ապաքէն թշուառութիւնս և  
 մահառիթ հիւանդութիւնս պատճառեն, մա-  
 նաւանդ թէ յորժամ ժամանակի՝ և յազգս  
 զից ասաց Յիսուս բանս այս, էր այսբան  
 անմտութիւն և զհետ անմտութեան խակու-  
 թիւն և կամակոր յամառութիւն, ոչ ա-  
 պաքէն զբիրտութիւն և զկեղծաւորութիւն  
 շրէից յանդիմանել ասաց, քանզի միայն  
 կեղծաւորաբար առաւել գերամաքուր լինել  
 ջանային այնու՝ որ ինչ մտանէ ընդ բերան,  
 և զհոգեկործան անօրէնութիւնք որ ՚ի ներ-  
 քուստ անխտրաբար գործադիր լեալ, զազ-  
 րանային անմաքրապէս, Ալ արդ ընկալ  
 այժմ զայսբանս քեզ ՚ի խրատ շանկանիւ  
 բնաւ ՚ի մահառիթ մեղս որկրամոլութեան,  
 ընդդէմ օրինաց քան զչափն առաւել ու-  
 տելով կամ յարգելեալ աւուր ուտելով,  
 զոր մեզ խնամողօրէն պաշտպանութեամբ  
 աւանդեցին Աստուած ընտիր սուրբ շարք  
 հոգելից բանիւ վարդապետութեան սուրբ  
 Աւետարանի, յանմեղութեան մնալ մեզ յա-

մենայն ժամ յամենայնի, զի մի՛ ախորժակի ցանկութեան մերում ծառայելով, լուրջութի յԱ՛ռաքելոյն յանդիմանական զայս բան՝ թէ որոց Մատուած՝ որովայն իւրեանց է, քանզի վասն կելոյ ուտել՝ օրինաց է հրաման. իսկ վասն թողութեան մեղաց մերոց ժուժկալութեամբ ապաշխարել, և սա ո՛չ է արգելեալ, որովհետև վասն մեղաց մերոց զքառասուն տիւ և զքառասուն գիշեր պահեալ, ապա քաղցեալ. ո՞վ՝ ամենատէրն, կերակրիչն ամենայն կենդանեաց. արդարն և անարատն : Մպա իրաւունս ունի, եթէ որ ասացէ առ իս, յաւուրս յայտոսիկ որ աղուհացից կոչին աւուրք, գինի ուրախ, իւղ զուարթ առ քե՛զ կամիս ո՛վ մեղսամած. և Սովսէս Մատուածատեսս եղև պահելով զքառասուն. Աղիա յերկինս վերացաւ պահելով զքառասուն : Ա՛րդ և մեզ մեղաւորացս քանի՞ առաւել պարտ և պատշաճ է ապաշխարութեան պահք :

Ի յիշատակութիւն վեցերրորդ աւուր կամաւոր չարչարանացն Յիսուսի Փրկչին մերոյ, որ վեցերրորդ աւուր ստեղծելոցս աղագաւ, տառապելով ՚ի խաչին, օր բօթոյ ասացաւ այն օր. դու զիմորդ վըստահասցիս օր խնդութեան և ուրախութեան համարել զայն ուտելեօք և ըմպելեօք զը-

ւարժացեալ, և յաւուր չորրորդի տրտմազգեաց լինել պահօք չկամիս . յորում սպանութեան փրկչին խորհեցան խորհուրդ :

Եւ աւուրք Յիսնական պահոց Ննդեան փրկչին մերոյ, զոր 'ի նշանաւոր ժամանակս բաժանեցին սուրբ Հարք 'ի դիրութիւն, շարաթապահ ասեն . ո՞չ ապաքէն և սորա առ փրկառիթ մարդեղութիւն բանին Մտուծոյ է . վասն մեր յերկնից իջանելոյն, և վասն մեր մարմնանալոյն . զի յայնմ աւուր վասն մեր մարմնացաւ անորակն, և վասն մեր 'ի չափաւորութիւն եկն անքանակն . վասն մեր նուաստացաւ անբաւն, և վասն մեր աղքատացաւ մեծատունն . որով մեծացուցէ և զօրացուցէ նովին սիրով սիրավառիլ պահպանութեամբ օրինաց իբրև հնազանդ ծառայ երկնընթաց ճանապարհին ունիլ զպաշար, զի մի' ասասցէ յաւուրն յայն . թէ վա՛յ մարմնապաշտ աշխարհասիրացդ, որ յաշխարհի այդր միսիժարեցայք . այլ ասասցէ փարելի բարբառով . երանի՛ սգաւորացդ՝ զի դուք միսիժարես՛ջիք յաւերժական խնդութեամբ, 'ի գոզն Աբրահամու 'ի սուրբ Արքայութեան :

Ուրեմն եղբայր՝ աղաչեմ զի զոր ինչ ասացի 'ի վերոյ, ուշ 'ի կուրծս արարեալ 'ի մտի քում պահեսցես անմոռանալի . զոր

տէր Մատուած բարենախանձս արասցէ հընազանդ ծառայ գտանիլ յամենայն պատուիրանս Մատուածայինս, և 'ի պահս ժուժկալութեան, որով զերկնայինն ճաշակել զանմահութեան կերակուր արժանի լիցիս յաւիտեան :

Արկակի գիտեմք զայս ուտել, է որ մահաբեր, և է որ կենսաբեր. ահա վասն առաջնոյն ըստ կարեաց իմոց ծանուցի սիրելութեանդ, իսկ վասն երկրորդին՝ յայլում նուագի եթէ տէր կամեսցի :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

### ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՌ ՀԱՅՐԱԽՆԱՄ ԽՐԱՏԱՏՈՒ ՈՔ

Յարգամեծար հօրեղբօր իմոյ մատուցանեմ համբոյր բարերար ձեռաց յաւետ շնորհակալութեամբ.

Գոհ եմ հանապազօր զՏեառնէ ամենակալէ, զի ընդ հովանեաւ խոհեմազարդ բարերար ծերակուտից լինել արժանացայ բարերազարար. որք բարելոնամ վերա-

տեսչութեամբ գուն գործել ջանան 'ի խրատ , բարի վարս ունիլ ինձ 'ի կենդանութեանս , և զարգանալ 'ի պէս պէս գիտութիւնս կարեորս , զոր ինչ պարտն է և օրէն և պատշաճ բանականութեանս ուսանիլ բաղձանօք , զի 'ի հաւատս և 'ի կրօնս քրիստոնէութեան քաջահմուտ լեալ , վարժ լիցիմ յամենայն բարեմասնութիւնս միջնորդութեամբ խրատուց նոցին . զորոց մինն զյարգապատիւ տէրութիւնդ գիտեմ , զի յորժամ յայտնեցի դոյլն ինչ բանիւ զխորհուրդ մտացս . յետս կացուցանել փոյթ կալար անձին խրատաբանութեամբ համոզել և զխակամտութիւն իմ ուղղել հայրական պաշտպանութեամբ և խնամողական տեսչութեամբ , ըստ վաղեմնական բարեհաճ սովորութեան ձերոյ , զի մի 'ի գործ եղեալ զխորհուրդս իմ չար , անկանխցիմ 'ի պէս պէս վտանգս . շնորհակալ եմ անչափօրէն զբարեխրատ տէրութենէդ : Աւ ես մինչ 'ի զննին մտեալ խուզարկու քննութեամբ տեղեկացայ զբարին , իբրև հնազանդ ծառայ առընկալայ զխրատդ հոգևորական իբրև զպաշար երկնապարգև , և իբրև զճրագ վաղորդայն 'ի պաշտպանութիւն անձին իմոյ . զի ըստ Աւսթին ճըրագ են բանք քո ոտից իմոց , և լոյս տան աշուղաց իմոց : Ասկ եթէ ըստ սուաջնոյն

անհաւան մտահաճութեամբ իսով յամառեալ մնայի, քաջ իմն գիտակ իսկ եղէ զի բազմավտանգ չարիք տեղալ տեղային յիս հանապազօր. ապա եթէ ուշի ուշով ունկընդիր լեալ խրատուց քոց բարեաց, հաստատուն կացից 'ի սոյն շահաւէտ հնազանդութեան յօժարակամ սիրով կատարել' անթիւ բարութիւնք հոգեկան և մարմնական՝ անձրեւել յիս առատապէս՝ եմ աներկբայ. որով իրրե լուսով ճրագի առաջնորդեցից ժամանել յանձկալի լոյսն երկնային սուրբ երրորդութեան յուրախութիւն անվախճան: Ուրեմն ո՛չ միայն ստէպ ստէպ գրութեամբ շնորհակալութեան բանս բարթառիլ պարտաւորիմ առ քեզ, այլ և մըշտամուռնչ աղօթարար լինել վասն ցանկալի աղօթօգուտ կենաց քոց, որչափ եմ 'ի մարմնի. զի այսպիսի բարեաց առիթ մեծ եղեր հայրախնամ տեսչութեամբ:

Լէր ռղջ յամս յուրվս յամայր ամբուրեամբ 'ի մխիթարութիւն եւ 'ի ցնծութիւն ամենայն ազգականաց քոց եւ բարեկամաց եւ ինձ նուաստ եւ ապիկար

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՌԱՅԻՍ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԴԻՄԱՌՆՈՒԹԵԱՄԲ  
ՎԱՍՆ ԶՐԱՀԵՂՑՈՅՑ ԵՂԲԱՐՑՆ

Յարգապատի՛ւ տէր իմ.

Յայտ լիցի տէրութեանդ զի յանցեալ  
աւուր քանի մի ընկերօք հանդերձ մինչ  
նաւարկութեամբ կամէաք երթալ յայս ինչ  
տեղի յուխտ և յերկրպագութիւն, յան-  
կարժ փոթորկի իմիք պատահելով նաւա-  
կոծ եղաք. իսկ նուաստութիւնս ամենակա-  
րողին զօրութեամբ և սակաւ ինչ լողագէտ  
գոլով յայս ինչ կղզի թէպէտ կարացի ե-  
լանել ողնափայտիւ միով, և ՚ի վաղիւ անդր  
նաւ մի Հռեղեստոնցի յորժամ անցանէր  
անտի, ՚ի բացուստ լսելով զաղաղակ իմ  
ուժգնաձայն, մատուցեալ առընկալաւ զիս  
անտի և եբեր աստ ողջամբ. բայց տէր իմ՝  
կենդանի՛ է տէր և կենդանի՛ է անձն քո,  
ճշմարտիւ ասեմ և ո՛չ ստեմ. զի տրտմեալ  
է անձն իմ մինչև ցմահ, ՚ի կորուստ փոր-  
ձանաւոր հեղձամղձուկ եղբարց իմոց: Ա՛հ  
իցէ՞ արդեօք տեսանել զայնոսիկ, որ ընդ-  
իսն էին յայնմ աւուր ՚ի նաւին միակամ  
սիրով ՚ի ճանապարհորդական քաղցր ըն-  
կերակցութեան: Ա՛վ բազմակոհակ լեռ-  
նացեալ ալիք ջուրց ծովու, ո՛վ սաստկա-



հնչիկ յանկարծահաս հողմունք եթերաց՝  
իմացէք, զամենայն աւուրս կենաց իմոց  
պահանջեմ ՚ի ձէնջ անդադար. ո՞ւր տա-  
րայք ճանապարհորդակից զեղբարս իմ հո-  
գեկցորդ. արդէն իսկոյն անողորմաբար կը-  
լայք զնոսա զամենեսին, թէ յոգնախումբ  
ուժգին զօրութեամբ ձերով վանեալ ամ-  
փոփեցիք ՚ի խոռոջս անծանօթ լերանց ան-  
տես առնել ՚ի մարդկանէ, և զիս թողուլ  
այսպէս անմխիթար: Ա՛յլ Աստուծոյ սուրբ  
Հրեշտակ Աստուծոյ՝ փութացի՛ր ինձ յօգ-  
նութիւն սքանչելի և երագահաս սլացմամբ  
հասեալ, առաջնորդել և բերել առ իս ող-  
ջամբ. որպէս երբեմն զՏօբիա առ հայր իւր  
Տօբիթ:

Յալթո՛ղ վկայք Յիսուսի Փրկչին չօ-  
րեքին զինուորք՝ գիտեմ, գիտեմ զերագա-  
հաս ժամանել ձեր յօգնականութիւն նե-  
ղելոց. ողորմեցարո՛ւք ողորմեցարո՛ւք վասն  
Աստուծոյ ողորմեցարո՛ւք, երագահաս ըն-  
թացիւք ժամանել ՚ի գիւտ սիրելի եղբարց  
իմոց. վասն զի զօրութիւն տարերաց յա-  
փրշտակեցին յինէն զեղբարս իմ անխնայա-  
բար, և թողին զիս այսպէս անմխիթար յա-  
ւիտեան. որդիք Աշույի համադին ազինք.  
լալ ընդ լացողս չե՞ ևս լուեալ է ձեր. ող-  
բալի՛ եղէ ես եղբարք ողբալի՛, ո՞րպէս ցա-

մաքեսցի այսուհետև շիթք արտասուաց ի-  
մոց, որո՞վ միխիթարութեամբ, հրեշտակաց  
բարեգթութեամբ, թէ մարդկան մարդասի-  
րութեամբ :

Յիսո՛ւս Յիսո՛ւս, վասն մոլորեալ ոչ-  
խարին մարմնացեալ Յիսո՛ւս, անձառ  
մարդասիրութեանդ է գործ աւել ածել 'ի  
գիւտ կորուսելոյն դրամոյ այսինքն մարդոյ,  
և լեռնաշրջիկ լեալ փութալ փութաս գը-  
տանել և բառնալ 'ի յուս, որում պաղա-  
տիմ տէր բարերար, քանզի եթէ յայլ ոք  
պաղատեցայց ընդունայն է ինձ աղաղակելն .  
որպէս Սաղմոսերգուն ասէ, մի՛ յուսայք  
յիշխանս յորդիս մարդկան, այլ 'ի քե՛զ  
բարերար՝ որ մարդասէրդ ես յաւիտեան :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

### ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԱՆՈՒԱՆ

Ազնուագարմ յարգի նազելւոյդ ողջոյն  
մտերմական.

Ընորհաւո՛ր եղիցի տօն ցանկալի ան-  
ցւան քաջատոհմիկ սիրելւոյդ, և 'ի բաղում  
ամս արժանի արասցէ ամենախնամն զաղ-

նուութիւն ձեր անփորձ հասանել յայսպիսի աւուրս քաջառողջ կենդանութեամբ, խնկանուէր մաղթանօք և պաշտպանութեամբ սրբոյ անուանակցիդ 'ի միսիթարութիւն մըշտընջենական համայն գերդաստանացդ և ինձ սիրատենչ բարեկամիդ :

Երդ յիշելով թէ անկեղծ բարեկամաց է ծանուցանել միմեանց զուրախառիթ ցնծութիւնս սրտից իւրեանց տեսաւորութեամբ, կամ թղթակցութեամբ, պարտաւորեցայ ըստ պատշաճի աւուրս յայտնել զանպատում բերկրութիւնս իմ բարեկամիդ, առիթ ունելով զքաջողջութենէ անձկալոյդ և զանդորրական կենցաղավարութենէ :

Բայց արգարև և ցաւ մեծ է նուաստիս, զի դժբաղդութեամբ իմով դէմ աւ դէմ խօսակցիլ անարժան՝ գտայ . սակայն զշնորհաւորութեանս զայս գրութիւն զոր 'ի սաստկութենէ սիրատուոր սրտիս սիրոյ ըստիպեալ գոնէ սակաւաբառ բանիւ տողեցի առ ազնուազարմ մտերմութիւն ձեր, ընկալ իբրև զնշան վաղեմի, և համարեա՛ գիս ընդ այնօսիկ, որք են զքեւ այսօր ուրախակցութեամբ :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

## ՅՈՐԴՈՐ ԱՂԻՔԱՏԱՍԻՌՈՒԹԵԱՆ

Երանաւետ ողորմած յարգոյ բարեսիրիդ խնդալ 'ի տէր անտրտում.

Մեծտալի ներքնաշար բանիւքս գրաւոր՝ ուրախ լեր սեղան բարգաւաճ գթառատ աղքատասէր : Օրնչ է այդ բարբառ սեղանաւորութեան՝ զոր ասէ Յիսուս փրկիչ Մեծտարանին՝ թէ ընդէր ոչ կտուր զարծաթդ իմ 'ի սեղանաւորս , և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն . սեղանաւոր բառ՝ հատաւաճառութեան արհեստնշանակելն ամենեցուն յայտնի է . միթէ այսքան ընդունելի՞ իցէ տալ զարծաթ նոցա , եթէ ընդունելի էր , վասն էր խարազանաւ հարկանէր և անարգէր երբեմն վանելով զնոսա 'ի տաճարէն . իսկ այժմ հակառակ նմին յարգէ և պատուէ զնոսա . յասելն թէ՛ ընդէր արծաթի տրօք ոչ կալայք յանձին փոյթ մերձենալ առ նոսա . արդեօք ո՞վ իցէ սեղանաւորս այս , որում պատուիրէ Մտուած տալ զարծաթ . վասն աղքատաց իմա՛ այլաբանօրէն ասացեալ , ընթերցողդ բարեսէր . բայց ոչ ամենայն աղքատաց առ հասարակ . յորոց ոմանք դժգոհութեամբ մշտամոռունչ տրտնջան զդժբաղդութենէ իւրեանց գանգատելով . որով ոչ բնաւ կա-

րեն կանգուն մի յաւելուլ 'ի հասակ նպատակի իւրեանց բաղձանաց: Այլ վասն այնպիսեաց, որք գոհունակութեամբ հանապազօր փառս տան Աստուծոյ առանց տրտընջանաց. և վասն այնպիսեաց, որք կոչին հոգևով աղքատ, զորոց ասէ՝ թէ երանի աղքատաց հոգևով զի նոցա է արքայութիւն երկնից, իբրու թէ դոնապան կամ վերակացու համարէ յարքայութեան. և ցուցանէ մեզ հնարս իբրև առևտրական գործ շահաւէտ, այսինքն մամոնայիւ բարեկամս ստանալ յաղքատաց և 'ի կարօտելոց: Որք են հաճելիք առաջի Աստուծոյ, ունին համարձակութիւն բաղմիլ 'ի գոգն Աբրահամու ընդ Ազար. հաճելի առնել զմեզ միջնորդութեամբ կամ բարեխօսութեամբ առաջի Աստուծոյ:

Ո՛ր ցանկալի ողորմութիւն՝ պանծալի առաջի մարդկան և առաջի Աստուծոյ. քանզի արդարև բարձրագլուխ պարծի առ դատաստանաւ յամենայն առաքինութիւնս. որպէս ասի՝ միում 'ի փոքրկանցս արարիք, ինձ արարիք, ողորմածոց է այս երանական բարբառ, և թէ ողորմութիւն կամիմ և ոչ զգոհ. Աստուծոյ ամենակալի՛ է բան. որ գերագոյն դասէ զողորմութիւնն քան ըզ զոհս և զպատարագս, և թէ՛ որ ողորմի

անանկին՝ փոխ տայ Աստուծոյ . և ըստ Սո-  
 շոմոնի՝ ողորմութիւնն փրկէ ՚ի մահուանէ .  
 Աստուածային կոչի այս արհեստ եղբայր՝  
 Աստուածային . որպէս ոմն հայրապետաց՝ ե-  
 թէ չամաչէի Աստուածս ասէի ասէ ողոր-  
 մածաց : ( ) րինակ լիցի մեզ Աստուածահա-  
 հաճոյ ընդունելութիւն աղքատասէր Տօբի-  
 թայ . զի յորժամ հացկերոյթ առնէր ազ-  
 դականաց իւրոց , ոչ հաճեցաւ նստիլ ՚ի  
 սեղան առանց աղքատաց և կարօտելոց .  
 այլ առաքէ զորդի իւր Տօբիա դտանել զոմն  
 կարօտեալ սեղանակից առնել . և մինչ լը-  
 ւաւ թէ յազգէ իւրմէ ոմն աղքատիկ վախ-  
 ճան կենաց ընկալեալ ՚ի փողոցի անդ է  
 անտերունչ , թողեալ զսեղանն գնաց թա-  
 ղել զնա . յոյր սակս Ռափայէլ հրեշտակին  
 արժանացաւ խնամոց հրամանաւ տեառն , զա-  
 նազան բարեօք որդւոյն առաջնորդ խաղա-  
 դութեան լինելով ՚ի ճանապարհորդութեան  
 յերկիրն Մարաց : Ահա այսու աղագաւ ա-  
 սնն սուրբ Քիրք՝ որ ողորմի անանկին՝ փոխ  
 տայ Աստուծոյ . որպէս և Հիսուս իսկ ասէ  
 գանգատօրէն՝ թէ ընդէր ոչ ետուր զար-  
 ծածագ իմ ՚ի սեղանաւորս , և եկեալ ես տո-  
 կոսեօք պահանջէի . որ խոստումն է յաւե-  
 լուլ զմերս տոկոսեօք ասելով . նման այնք  
 աղքատ կնոջ ՚ի ձեռն Աղիսէի . զի թէպէտ

աղքատութեան պատճառաւ կարի սակաւագոյն եղ յիւրաքանչիւր անօթս զիւղ, այլ տէր աճեցոյց և ելից զնոսա զամենայն ողորմութեամբ իւրով լիուլի: Եւ Պօղոս Լուսաբեալ ծանուցանելով զփոյթ իւր առ այս, պատուիրէ մեզ ասելով. բայց միայն զսղքատսն յիշեցո՞ւք, զոր և ես փութացայ զնոյն առնել:

Երդ երանական տոկոսիս զայս Ըճային՝ աւետել կամեցայ սիրելութեանդ, ո՛չ թէ վերոյիշեալ դանգատանաց հաղորդ գոլ ծանիցես զբեզ. որ քաղցր ես առ աղքատս հանապաղ գթառատ մարդասիրութեամբ, որպէս յերեկեան աւուր այն ինչ աղքատին, մխիթարելով ըստ բաւականին:

Տէր վարձատրեսցէ յաւէտ ճոխութեամբ յերանական վիճակի սուրբ արքայութեան:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

ԱԿՆԿԱԼՈՒԹԵԱՆ ԼՈՒՐ

Բարեխնամ ծնողք.

Փա՛ռք ամենակարողին ողորմութեան,  
զի թէպէտ արդարև գործոյս յաջողութեամբ

զոր ինչ ունէի վաճառեցի 'ի տօնավաճառին այնմիկ, որով և վերադառնալ սկսայ անտի մեծաւ ուրախութեամբ բազում ընծայիւք . բայց սակայն՝ դժբաղդութեամբ յաւուր միում հեռի մնացի 'ի կարաւանէն, յայն ինչ լերին յորում քանի մի չարագործ ելուզակք յանտառախիթ տեղւոջ թագուցեալ գոլով՝ իբրև տեսին զիս միայնակ, միահաղոյն դիմեալ 'ի վերայ իսկոյն պաշարեցին զիս, չեղև ժամանակ ո՛չ հրացանի և ո՛չ ատրճանակի ինչ ձեռնամուխ լինել . զո՞րն լացից՝ և զո՞րն ողբացից . ո՛հ զի՞նչ ասեմ սիրելիքդ իմ . զայն ազնիւ փայլուն բազմաթիւ ոսկի՞ս, և թէ՛ զբազմատեսակ զքնտիր ընտիր զքնծայս, որովք բարեկամս բազումս ունէի ստանալ առ իս . և յատկապէս երկու հարիւր դահեկանի ևս ընտիր մարգարիտ առեալ էի, վասն հարսնացութեռ իմոյ շինել քառամանեակ մի գեղեցիկ, զամենեսին զսոսա 'ի միում վայրկենի յափշտակեալ յինէն մերկ 'ի մօրէ թողուցին զիս . բայց ծանուցանելով իմ աստ հզօր քաղաքապետիս այսմիկ, 'ի մօտ աւուրս գտանել յուսադրիմ նորին հզօր բազկաւն, թէ՛ զայնոսիկ զաւազակս և թէ՛ զստացուածս իմ ամբողջապէս :

Արեմն և գուք սիրելիքդ, թէպէտ սա-



կաւ ինչ սպասել ունիք անդանօր 'ի գա-  
լուստ իմ. բայց յետոյ ձեզ և մեզ ամենե-  
ցունցս մեծի ուրախութեան ծագումն լու-  
սոյ ճառագայթելոց է 'ի պարզեատուէն ա-  
րարչէ. վա՛շ թէ նոյն ինքն ամենախնամն տէր՝  
գոնէ ողորմելով իմս հոգեհատոր հարսնա-  
ցու քեռ, 'ի թիկունս հասցէ քաղաքապե-  
տին փութով բարեյաջողել. զի և ձերդ  
ծնողական խնամոց սիրամառ տեսչութեամբ  
կրկին արժանացայց. որ զամենայն աւուրս  
կենաց իմոց մտիթարութիւն մեծ էք անար-  
ժան որդւոյ ձերոյ

ՅԱՐՈՒԹԻՒՒՆ ԾԱՌԱՅԻՍ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՎԷՊ

Ի ՀԱՄՈՋՈՒՄՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ

Տէր իրանախոն եւ բարեկամ վաղեմի.

Յաւուրս յայտոսիկ փորձանաց իմիք  
պատահելով իմ հարկեցայ առ իրաւասէր  
բարեկամդ դիմել այսու գրութեամբս: Այսն  
զի ոսկեզօծ շրջանաւ ազնիւ հայելի մի հարկ  
եղև ինձ գնել առ 'ի ընծայել այս ինչ մե-

ծարու անձին. և այս ինչ բարեկամն յանձնառու եղև զայս գործ կատարել, առեալ յինէն երկու հարիւր դահեկան կանխիկ. բայց յուղարկելն զայն առ իս, 'ի ձեռն տհաս աշակերտի իւրոյ, խորտակեալ է զայն, և այժմ գմնացելոցն ևս մտանէ 'ի համար, հարիւր յիսուն դահեկան ևս պահանջելով:

Աստի դու տուր զիրաւոյ. զի՞նչ է արժանին. որովմ պատշաճի զայս տուտել, ի՞նձ՝ թէ նմա. ո՞ր ասաց նմա ընդ մանկտի ուրուք ուղարկել ինձ, բեռնակիրք մեռան ամենեքին: Այաև ծանի՛ր՝ թէպէտ գրեալ է յիմաստնոց՝ թէ զոր ինչ կարես անձամբ անձին մի յանձնեսցես մերձաւորին. բայց օգնութիւն միմեանց որ օրէն է բնական՝ բարձաւ արդեօք. ուրեմն բարեկամք բարեկամաց կատարել զգործ օգնականութեամբ, չէ անպատեհ ինչ. զոր ինքնայօժար հաճութեամբն խոստացաւ, որովմ և ես խոստացեալ էի դահեկանս քառասուն տալ նմա 'ի կատարման պահու, ըստ չափու աշխատանացն, եթէ հասաներ 'ի ձեռս իմ ամբողջ. ուրեմն ո՞չ միայն վասն բարեկամութեան, այլ և ընդունելոց էր վարձս ըստ չափու վաստակոցն:

Աստի ճշմարտագաստութեամբ քով զե-

բաւացին խօսել յերկոսին առ մեզ փու-  
թասջի՛ր աղաչեմ:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ԵՐԿԻՒՂ ԱՌ ՊԱՐՏԱՒՈՐՆ  
Ի ԶԻ ՄԻ ԱՃԱՊԱՐԵՍՑԷ ՓԱԽԶԻԼ

Պատուական.

Յօրէ յորմէ մինչ խոստացեալ էր քո  
զայն մուրհակագրին պարտ հատուցանել՝ ե-  
ղև ամբողջ տարի մի, որ ո՛չ մերձեցար առ  
իս միանգամ, գօնէ ձեռնունայն. և այժմ  
'ի Պրուսա ճանապարհորդել հայթայթիս.  
միթէ մինչև ցարդ անտես գողգ յաչաց ի-  
մոց չէր փախստականութիւն. որ յայլում  
կերպիւ այժմ գուն գործել ջանաս յօտար  
երկիր փախստական լինելով՝ բարձի թողի  
առնել կամիս զայն դրամն վճարել. ո՛չ. ո՛չ.  
մի՛ աշխատ առներ զանձն քո ընդունայն.  
քայլ մի ոտին փոխել աստի՛ի քաղաքէս ո՛չ  
կարես, մինչև անբողջապէս հատուցես  
աստէն զայնոսիկ: Քա՛ջ գիտակ լեր դու  
այսպէս, որպէս և ես քաջ ծանուցեալ եմ՝  
ո՛ւր որ կարող են ձեռքակալել և արգելուլ  
զքեզ յայդմ ճանապարհորդութենէդ: Ղու

յայնժամ զի՞նչ շահաւորեսցես քեզ զկեղտ  
անունն փախստականութեան, այժմէն գու-  
շակել բարուք է ե՛ղբայր . և զի՞նչ է ար-  
ժանն զայն տնօրինել . զի մի՛ բանտարգե-  
լութեամբ՝ յետինն շար լիցի քան զառա-  
ջինն :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

### ԱՆՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԱՆԻՐԱԻՒՆ

Սիրելի՛ բարեկամ .

Լսի՛ք գլխացաւութիւն ինչ շիցէ յար-  
գութեանդ, ծանուցից զոր ինչ անցք ան-  
ցին 'ի վերայ իմ յաւուրս յայսօսիկ . յա-  
ւուր միում մինչ նստեալ էի 'ի կրպակի  
իմում . եկեալ ասէր ոմն ցիս գնոց գնել  
երկու կամ երեք ձունձ ծանրագին . բայց  
զգացեալ զգողարարոյ բնութենէն՝ յոյժ եր-  
կեայ և վանեցի 'ի կրպակէս . վասն այնորիկ  
ցասուցեալ առ իս այժմ և լցեալ քինու ,  
իբրև հինգ հազարից ծանարտակ ինչ ա-  
րարեալ , եկն ընդ իս և տարաւ զիս առաջի  
դատաւորին . մտեալ 'ի դատ պահանջման  
առնուլ զվրէժ անիրաւ փաստաբանութեամբ ,  
բայց շաղբաղբական բանք վկայիցն յայտնի

ցուցին զանիրաւին խարէութիւն . որով  
ցասուցեալ դատաւորին երկաթի գելարա-  
նօք գայլից կապեալ զձեռս նոցին առ մի-  
մեանս , դատապարտեաց զնոսա յանելար-  
գելան մինչև ցմահ իւրեանց :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻԻՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

### ԱՂՕԹԻՅ ԶՕՐՈՒԹԻԻՆ

Մեծարոյ բարեկամիդ խնդալ 'ի տեր  
յարգանօք .

Որպէս և յայտ իսկ է ձերդ բարեպաշ-  
տութեան , զի քահանայական գործոց բժըշ-  
կական զօրութիւն՝ մեծ է քան զմարմնա-  
կանին . զոր յայտնապէս տեսաք ապացու-  
ցաբար , քանզի արդարև յանցեալ աւուր  
բժիշկ զոմն բերաք մեք 'ի պետս հիւանդա-  
ցեալ եղբօր իմոյ 'ի բժշկութիւն , բայց ո-  
չինչ տեղեկութիւն ունելով այնր հիւան-  
դութեան , անկարող գտաւ ծանօթանալ  
ցաւոցն և բժշկապէս մերձենալ և դարմա-  
նել ինչ դեղատուութեամբ . այլ յՄատ-  
ուածուստ այսպէս եղև նորին բժշկութիւն  
և առողջութիւն . զի իբրև հնազանդ ծա-

ուայ անսալով պատուիրանաց սրբազան Յակոբ Առաքելոյն, թէ՛ եթէ որ հիւանդանայցէ՛ ՚ի ձէնջ՝ զերիցունս կոչեսջի՛ք աղօթս առնել որպէս զի բժշկիցի. կոչեցաք արդարև զայն ինչ կրօնաւորն զի յետ խոստովանութեան և Հաղորդութեան ճաշակման, աղօթս արարեալ ՚ի վերայ նորա, կատարեալ առողջացաւ Խղբայրն իմ. փառք ամենակարողին Աստուծոյ սքանչելի ողորմութեան :

Աթէ կամիս և դու Աստուածասէր սիրելիդ իմ անսալ սրբազան Առաքելոյն, ըստ սմին օրինակի արասջի՛ր յայդ հիւանդիդ վերայ, զոր բժշկապետն ամենից Յիսուս առողջացուցէ, հաւատք քո կեցուցին զքեզ ասելով :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ԽՆԴՐԵԼ ԶԴԱՏ ԻՐԱԻԱԽՈՂՈՒԹԵԱՆ

Իրաւախոն տէր իմ.

Վաջ գիտելով ձեր՝ թէ ամենայն տուրք բարիք և պարգևք կատարեալք ՚ի վերուստ են իջեալ, սովոր էք յամենայն ուրեք իրաւախոն ընտրութեամբ և անաչառ դատողու-

Թեամբ յարդարութեան գուն գործել 'ի դատս և 'ի վճռահատութիւնս . քանզի որ 'ի քեզ է իշխանութիւնդ այդ հովուութեան 'ի տեառնէ է պարգևեալ իբրև զքանքար, զորմէ 'ի վերջին փոխման աշխարհի երկրորդ գալստեամբ տեառն ունիլ ունիք համարս տալ, և ընդ նմին առնուլ զփոխարէնն 'ի գթառատ մարդասիրէն (Յիսուսէ Փրկչէ մերմէ անսպառ գանձէն ըստ անսուտ խոստմանն վասն ընտրելոց, որ արդարութեան զսուսեր ընդ մէջ կրեցին 'ի կենցաղս յայս . նա ինքն խոստացաւ պանդոկապետին Աշրիքովի առակաւն յասելն, և զոր ինչ ծախեսցես 'ի դա, 'ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ: Ազագս այնորիկ ձերդ իրաւախոհութեան յանձնեմ զայս յառաջակայ գործս մեր, և իրաւունս խնդրեմ սոյն զրկելոյն՝ ոսկերիչ այս ինչ ծառայիդ . և աղաչեմ՝ փութասջի՛ր գուն գործել աշալուրջ քննութեամբ դատել վասն արդարութեան և վասն Մատուծոյ: Վանզի ճոխաբանից է արդարև ներկայանալ վստահութեամբ, և ըստ արժանւոյն փաստարանութեամբ քաջ գիտնլ բողոք բարձեալ խորամանկութեամբ յափշտակել զայլոց իրաւունս, կամ երկուց և երից սուտ վկայիւք հաստատել զբանս իւրեանց . յորոց մինն է

և այն, որ դատախազի ընդ այսր տկարա-  
միտ անձին խղճալոյ բարեկամին մերոյ, որ  
բողոքովին անձանօթ գոլ գիտեմք յայսպիսի  
դատա, զի մինչև ցարդ չև է նմա պատահ-  
եալ երբէք 'ի դատարան ինչ ներկայա-  
նալ սոյնպիսի խարդախ ընկերի ումեք գի-  
պեալ. ուստի մի' լոկ լեզուագար ճոխաբա-  
նութեան խորամանկ փաստաբանին դաւա-  
ճանութեան ունկնդիր լեալ պատրեսջի'ք .  
այլ խնդրեմ 'իքէն զուղիղն վճռել փու-  
թալ մանրակրկիտ խուզարկութեամբ և ա-  
նաչառ դատողութեամբ յերկուց կողմանց  
անտի, որ գալոց են ընդ առաջ տէրու-  
թեանդ :

Ողջ լեր 'ի բազում ամս 'ի մխիթա-  
րութիւն այնպիսի խղճալեաց:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

ԱԻԵՏԱԲԱՐԲԱՌ ՈՒՐԱԽԱԿՅՈՒԹԻՒՆ

Հոգեհատոր սրտիս անգնի բարեկամ.

Բաջ գիտեն ամենայն պանդուխտք' թէ  
որչափ քաղցր և փափաքելի են հայրենիք  
իւրեանց, որպէս ասէր իմաստուն ոմն, ցան-



կալի է իւրաքանչիւրումէք իւրն . իբրու  
թէ բնաւորապէս իմն առ իս , և քոյդ ցքիզ  
է հաճելի և սիրուն , յինչ և իցէ ստաց-  
ուածս . և թէ 'ի գերդաստանս առնչակա-  
նապէս , որդին սիրէ զհայր իւր և հայր զոր-  
դի իւր . աշակերտն զվարդապետ իւր և վար-  
դապետն զաշակերտ իւր . ըստ սմին օրի-  
նակի ամենայն ընտանիք և ազգականք որք  
իւրն իցեն , յորոց սակի են պանդխտակե-  
ցից սէր և փափաք . որք որչափ յապաղես-  
ցին սպասեալ յօտար երկիր շահեկանու-  
թեան աղազաւ , խնդան և ուրախանան մե-  
ծապէս 'ի վերադառնալ իւրեանց 'ի հայ-  
րենիս . որպէս և գու 'ի հասանել քո 'ի հայ-  
րենիս և առ ընտանիս քո ողջամբ , ըստ ո-  
րում մեծի ուրախութեան զգացիր քեզ զա-  
ռիթ . ահաւասիկ նոյն գունակ շնորհեցաւ  
ընտանեաց քոց համայնց և ինձ անպայման  
ուրախութիւն ոչ սակաւ . ըստ հանճարի-  
մաստ բանի ուրումն հռովմայեցւոյ՝ թէ մի-  
ակ այն օր իբրև անմահական կեանք ինձ  
թուեցաւ , յորում դարձայ 'ի հայրենիս .  
քանզի 'ի թաղում ամաց հետէ փափաք ու-  
նելով 'ի տեսանել , հանապազօր կարօտա-  
կէզ չինէաք իբրու Աւախթ որ ասէ , վասն  
քո մեռանիմք զօրհանապաղ . թէպէտ վասն  
Աստուծոյ է բանս այս , բայց վասն եղբօր

սիրելւոյ ճշմարտագունի և մտերմի անկէ  
իմանալ Աստուածաւանդ եղբայրական սի-  
րոյ աղաղաւ յարմարապէս. վասնորոյ զբազ-  
մաժամանակեայ փափաքելին իմ զոր տեսի  
աչօք, ցնծացեալ բերկրիմ յաւէտ այժմ և  
յապա:

Ուրեմն բարեաւ եղիցի ուրախառիթ ցան-  
կալի գալուստ աղնուոյդ՝ յարգոյ բարեկամ.  
փառք անբաւ գթութեան մարդասիրին Աս-  
տուծոյ, զի քստ մեծի մարդասիրութեան  
իւրում յաջողութիւն պարգևելով գործոյդ,  
անփորձ և անսասան պահեալ ողջամբ հա-  
սոյց զքեզ այսր յուրախութիւն և ՚ի ցըն-  
ծութիւն անչափական քեզ և ընտանեաց  
քոց և ինձ նուաստ

ՅԱՐՈՒԹԻՒՆԻՍ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ՃՇՄԱՐԻՏ ԵՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ Է  
ԶՅԱՆՑԱՆՍ ԵՂԲՕՐ ԻՆՔԵԱՆ ՀԱՄԱՐԵԼ

Հմյր բարերար.

Արդարև արժան եմ անարգանացդ այ-  
դոցիկ առաւել քան զոր առնեսդ բանիւ նա-  
մակիդ. բայց եթէ եղելութեանն ստուգու-  
թեան ծանօթ իցես՝ կարելի է զի և ինձ մե-

դապարտիս ներեսցես . զի թէպէտ իսկ յանցանաւորն փոքր եղբայր իմ էր , բայց զծանրութիւն եղբօր բեռին բառնալով , փութացայ կատարել զօրինաց հրաման . զի պատճառաւ ազատութեան յարժանաւոր պատժոյ եղբօրս , զուցէ և ինձ ներուժն շնորհեսցի 'ի տեառնէ բազում յանցանաց իմոց :

Ուստի խնդրեմ մեծաւ աղաչանօք , զի որպէս եսս եղբայրական սիրով փութայի ազատել , նոյն գունակ և դու տէրդ բարերար՝ սեփհական հայրագութ խնամոց սիրով ահաւասիկ ժամ է ներել երկոցունցս եղբարց որպէս և վայել իսկ է անյիշատարութեանդ . և այս անյիշատարութեան դասատուութիւն Մատուծոյ է որպէս և յայտ իսկ է տէրութեանդ . հաշտեալ եմ ընդ քեզ տա՛ւապեալդ և խախտեալդ ասելն Մատուծոյ՝ վասն մերձաւոր մեղաւորաց , և թէ եթէ թողուցուք զյանցանս եղբօր ձերում , թողցէ և ձեզ տէր զյանցանս ձեր :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

## ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱԼԱԾԱՆՍ

Սէր իմ.

Որչափ 'ի հալածանս իցէ որք, այնչափ  
 Մտուածամերձ համարի. զի ոչ միայն չու-  
 նիցի ժամանակ պարապոյ գործել զչարիս,  
 այլ և յաւէտ աղաղակել ունի հարկաւ առ  
 Մտուած ձայնիւ մաղթանաց. ուրեմն աշ-  
 խարհային անցաւոր կենիս խաչ՝ կերպ կերպ  
 փորձանաց և հալածանաց՝ յատկապէս միջ-  
 նորդ են անմեղ կենցաղավարութեան. որում  
 նպատակն է ընթացակցութիւն Յիսուսի  
 Վրկչին լուսաշաւիղ ելիւք յերկինս, յորմէ  
 և վարձատրիլ երկնային պսակօք. որպէս  
 խոստացեալն է խաչակիր անձանց. եթէ որ  
 կամի զկնի իմ գալ, առցէ զխաչ իւր և ե-  
 կեացէ զկնի իմ, հարիւրապատիկ առնուլ ըզ-  
 վարձս իւր: Մանաւանդ վասն Մտուածա-  
 յին օրինաց և հաւատոյ իցէ շարատանջ  
 նեղութիւն, վսեմագոյն համարի առաջի Մտ-  
 տուծոյ այս առաքինութիւն երանական: Առ-  
 որս ասէ Յիսուս. երանի է ձեզ՝ յորժամ  
 նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ա-  
 սիցեն զամենայն բան շար զձէնջ սուտ վասն  
 անուան իմոյ. ցնծացէք և ուրախ լերուք,  
 զի վարձք ձեր բազում են յերկինս: Որոյ  
 վասն 'ի ժամանակս հալածման քրիստոնէ-

ութեան՝ ոմանք մինչ անարգէին, և ոմանք  
զանաՀար և քարակոծ լինէին, կամ ոմանք  
մեռանէին ՚ի տանջանս վասն հաւստոյ, ու-  
րախութիւն մեծ համարէին իբրև ՚ի հարսա-  
նիս մշտատև ուրախութեան հասեալ, ըստ  
ասացելոյն Ասկիաբան հայրապետին, լաւ է  
ինձ վասն անուան տեառն իբրև զՊետրոս  
մնալ ՚ի բանտի, քան թէ լինել յերկինս  
հրեշտակ: Վրանզի յետ մեռանելոյ ոմանց  
անմեղութեան անուշահոտութիւն և բարի  
վարուց՝ բարձրանայր առ Շատուած. որ-  
պէս և Սողոմոն իմաստասիրէ վասն այնպի-  
սեաց՝ թէ այգիք ծաղկեցին և ետուն զհոտ  
իւրեանց:

Եպա ուրեմն համբերութեամբ ստասջի՛ր  
զոգի քո յայդ հալածանս եղբայր մտերիմ,  
ակնկալութեամբ տեառնապարգև փառաց  
յաւիտենականաց ընդ սուրբս և ընդ սիրե-  
լիս իւր անզրաւ կենօք անտրտում ուրախա-  
նալ:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳԻՐ

Ա Ռ Ը Ն Ծ Ա Յ Ա Մ Ա Տ Ո Յ Ց Ո Ք

Ողջոյն խանդակաբ յաւետ սիրեցեալ սիրավառ, բանաւոր տատրակիդ.

Կրկնապատիկ շնորհակալ եմ սէր իմ՝ նախ զմշտավառ եղբայրսիրութենէ բումմէ որ անմոռաց ունելով զիս 'ի մտի, մերթ առ մերթ սխրալի նամակագրութեամբ քով բարեմաղթու եղեալ 'ի բարութեան և 'ի քաջողջութեան կամիս լինել ինձ անգորր կենօք: Աւ երկրորդ զպարգևատուութենէդ, զոր առաքեցեր զայն ազնիւ թութակ գեղեցկախօսուն, զի իբրև բանաւոր սոխակ նամակագրութեանդ բանիւք, և սա ընդ նրմին ձայնակցեալ խօսելով յիշեցուսցէ մեզ հանապազ զեղբայրական զսէր զոր ունիմք 'ի վաղուց պահել մշտավառ:

Իսկ սակայն նորին փոխարէն ոչինչ գտի ընծայել առ մշտավառ անեղծական եղբայրութեանդ. բայց միայն զայս փոքրագոյն բանահիւսութիւն մաղթողական. զի սէր անուն (Յիսուս հարուստ ամօք 'ի քաջողջութեան պահեալ զհոգեհատոր սիրելիդ անպատմելի ուրախութեամբ զարգացուսցէ 'ի

սոյն արեգակնափայլ սէր քո 'ի մխիթարու-  
թիւն և 'ի ցնծութիւն սիրովդ սիրեցեալ

Նուստտ եղբօր քում

ՅԱՐՈՒԹԻՒՆԻՍ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՌ 'ՄՆՈՂՍ ԻՒՐ ԲԱՐԵՊԱՏՃԱՌ

Բարէխնամ ծնողք.

Օի որպէս պարտիզպանք յաւէտ ու-  
րախանան, յորժամ զբերս արդեանց պար-  
տիզաց իւրոց առատագոյն տեսանիցեն. ըստ  
նմին օրինակի և ծնողք յաւէտ ուրախա-  
նան, յորժամ զօրդիս իւրեանց ուսեալ տե-  
սանիցեն 'ի բարի վարս և 'ի կրօնս աստ-  
ուածպաշտութեան 'ի գիտութիւն ճշմար-  
տութեան, 'ի ձեռն բարեպաշտ և քաջահը-  
մուտ ուսուցչաց: Աւրեմն բարէ որպիսի գո-  
հունակութեամբ կարացից շնորհակալութեան  
բանս բանագրել առ բարերար խնամածուսդ.  
զի 'ի Արժարանս սնուցանել մինչև ցարդ  
զձեզ զիտեմ պատճառ ուսանիլ զպէս պէս  
ուսմունս և զգիտութիւնս դանազան խնա-  
մով, և հուսկ յետոյ երևի թէ ձեր ծնո-

զական հաստատ խնամածութեան արգեամբ  
յաւուր միում ճարտարագէտ արուեստաւորի  
ուժք յանձնելոց էք զիս զպարէն ապրուս-  
տի շահիլ անտի . և մի կարօտեալ անձամբ  
տոչորիլ 'ի կենիս : Ահա և այսմ ապագայի  
ակնկալութիւն արդէն ունիմ բնորարք .  
զձեր բարեպատճառ հովանաւորութիւն յոգ-  
նախնամ տեսչութեան անպակաս առնել յա-  
նարժան ծառայէս . զի և ես Յարութիւն ա-  
նուն նուաստ որդի ձեր արդէն խոստացեալ  
եմ ոչ իբրև բարեգրութ երախտամոռաց  
գտանիլ բնաւ 'ի ծերութեան ձերում , այլ  
վասն անգորրութեան կենաց ձերոց յորդի-  
ապարտ ծառայութեան տքնիլ հանապազ  
մինչև ցվախճան կենաց իմոց :

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ԱՌ ԲԱՐԵՐԱՐ ՏԷՐ ԻՒՐ ՄԵԾԱՐՈՒ

ձրոզ բոցափայլ՝ ազգիս արամեան,  
ընտիր գթառատ՝ մեծ բարեխնամ .  
Առ վերընծայեմ՝ վեհիդ խոհական,  
համբոյր կաթողին՝ եւ ծառայական :

Արդարև յերալուսեանն պարգևատրու-  
թենէ ունիլ ունիս արժանապէս 'ի վերուստ  
զերրակի առաքինութիւնս զայսոսիկ , յառիժ



յաւիտենական երանութեան . ազգասիրութիւն՝ մարդասիրութիւն՝ և եղբայրսիրութիւն . անբակ քանդակեալ ՚ի գագաթ սըրտիդ վայելազարդ սարդիօնիւ հանդերձ՝ շափիղայն գոզցես ընդ յակինդ առ միմեանս յար թափանցելով ազգակցութեամբ իմն նըշուլագեղ շողշողումն զարմանալի արտայայտես ձառագայթասփիւռ պայծառարփի լուսաւորութիւն արեգակնափայլ յազգս մերմեծագործութեան և առատաձեռնութեան միջոցաւ . զոր ըստ բնական բարոյիցդ բերմանց գուն գործել ջանաս անարժանիս անգամ յատկապէս բերս բեղմնաւորել բարութեան իրրև ՚ի բանական բարունակէդ բաժակ քաղցրութեան . զորմէ շնորհ մեծ ունիմ բարերար , և մշտամուռնչ բանիւ աղօթարար լինել պարտ վարկանիմ զանձն իմ առ ազգօգուտ կենաց քոց :

Ողջ լեր:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԽՐԱՏ ՀՕՐ  
ԳՈՎԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ԶԲԱՐՍ ՈՐԴԻՈՅՆ

Ճանաչագեղ պսակ սրտիս հոգեհատոր որդւոյ իմոյ սիրելւոյ սէր մատուցանի մեծաւ կարօտիւ .

Վաղցրիկ աղաւնի՝ սէր իմ ցանկալի ,  
սրտիս բաղձալի՝ զաւակ նազելի . մինչ ըզմտաւ ածեմ քաղցրատեսիլ զդէմս զուարթածազիկ հասակիդ , վայելչագեղ շարժմունս խոհական վարուցդ , զինաստալից բարբառ մեղրածորան բերանոյդ , որք փայլփայլին իբրև զճառագայթս նշուլագեղ արուսեկին , որով երբեմն վայելեալ մտիթարէի՝ ի տան մերում ոչ սակաւ : Մարթ ի՞նչ իցէ արդեօք և այժմ ծագել հանդերձ արբանեկօքն իւրովք լուր բարեկեցութեան պանդխտացելոյդ՝ ի լուսաւորել զխաւար տրամազգեաց սրտիս . որ՝ ի կասկածանաց և ի ծնողական հոգածութեանց պանդուխտ որդեկիս : Չիք և չիք սիոփումն ինչ արգահատելոյս , մինչև ծագեսցի լուսաշաւիղ քաղցրատես համեստաբարոյ արուսեկիդ գալուստ , ըստ Վաւթեան ձայնին . ընդ երեկոյս հանգիցեն լալիք , առաւօտու եղիցի ուրախութիւն :

Իսկ արդ՝ ահա տյտու ակնկալութեամբ

ես ինքնս ունիմ ժոյժ : Ուրեմն աղաչեմ ք  
 քեզ ունել զայս յենարան ակնկալութեան,  
 զվախճան աշխատանաց քոց արդիւնաւոր  
 առնել համբերութեամբ. որպէս և Վրբիս-  
 տոս ասէ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ  
 յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա  
 եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ.  
 այսինքն յոր և իցէ նեղութիւնս համբե-  
 րեսցէ իսպառ, առ մերս առարկայի : Վան-  
 զի ոչ միայն նշուլագեղ երևիլ ունիս հա-  
 մայն աղգականացդ, այլ և օգտուէտ և լու-  
 սասփիւռ, ամենայն ազգիս Հայոց վերո-  
 ճիշեալ տղնիւ բարեմասնութեամբ : Եպա  
 ամենայն վշտաց պանդխտութեան և սիրա-  
 տենջ կարօտակիզութեան համբերութեամբ  
 և երկայնստութեամբ կալ աղաչեմ 'ի վաս-  
 տակս ուսման, չհանել 'ի դերև զակնկա-  
 լութեան մեր զյոյս, որոց յանձնառու եղեր  
 կամովին 'ի շուեւ քեզ այդր. այլ և ջանա-  
 սիրութեամբ և կարևոր գիտութեամբ ա-  
 ռաւել քան զառաջինն փայլեսցիս ինամա-  
 տարութեամբ Հոգաբարձու յարգելեաց և  
 քրտնաջան Արժապետաց : Որոց արևա-  
 փայլ հովանաւորութիւնն անպակաս արաս-  
 ցէ Եստուած անտրտում կենօր, ընդ հո-  
 վանեաւ նոցին լինել քեզ յաջողութիւն և  
 կարողութիւն յառաջադիմութեան պար-

գեւելով քաջողջութեամբ հանդերձ, 'ի միտ-  
թարութիւն մշտնջենական համայն ազգա-  
կանացդ, և մանաւանդ ինձ սիրատենչ ծնո-  
ղեդ, որ եմ

ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ԽՐԱՏ ՄՇՏԱՏՐՏՈՒՆՁ ԵՂԲՕՐ

Հոգեհատնք սիրելի.

Ար ընդհանուր իցէ վշտակրութիւն՝ զի՞նչ  
անդանօր առ այն տրտունջ, զի դու յա-  
մենայն ժամ որ 'ի ձախօրդ դիպուածս ան-  
համբեր լինիս տրտնջանօք և տուայտա-  
նօք տարակուսեալ տագնապիս անդուլ ան-  
դազար, ուրեմն չիցէ՞ ընթերցեալ քո զայն  
վճիռ տէրունեան, թէ քրտամբ երեսաց քոց  
կերիցես զհաց քո. յորս պարտին ամենայն  
կենսունակք յօժարակամ սիրով կենցաղա-  
վարիլ վասն արքայութեան, աստ 'ի վաս-  
տակս լինել հալածանօք, և 'ի հանդերձեալն  
հանգչիլ խնդութեամբ: Ո՞չ ապաքէն ըստ  
իմաստասիրին 'ի ձախողակս աճեն առաքի-  
նութիւնք, և զի՞ ոստք առաքինութեանց  
քրտամբ և աշխատութեամբ բուսանին: Ար-  
կայնամիտ լեր սիրելիս՝ երկայնամիտ. ՚վ

իցէ որ ոչ ճնշեսցէ 'ի կենցաղս այս . թու-  
ղում շինականաց քրտնաշխատ հողագործու-  
թիւն 'ի բացօթեայս . որք չարատանջ կե-  
նօք գետնախշտի կան հանապաղ անմխիթար  
'ի տատասկարեր երկրիս յայսմիկ . այլ մուտ  
յապարանս բարգաւաճից մեծատանց և 'ի  
պողոտայս պալատից թագակիր արքայից . 'ի  
խնդիր ելեալ զի՞նչ գտցես արգեօք զմխի-  
թարական կամ զուրախական , որք եղեալ  
են անձամբ իբրև փշալիւր անգաստան դըժ-  
նէից դահճաց շուրջ պաշարոզաց . և անարև  
միգաւ մթազնաւ ծածկեալ յամենայն կող-  
մանց յաշխար 'ի ներքուստ , և արտօսը յար-  
տաքուստ , հալին և մալին չարատանջ կե-  
նօք : Անօգն և անմխիթար 'ի գանձուց իւ-  
րոց . են որ յանձանց իւրեանց խօթասիրտ  
լիւծելոց , և են որ 'ի կանանց իւրեանց լեզ-  
ուագարից . են որ յանառակ զուակաց իւ-  
րեանց անսանձից , և են որ յանհաւատա-  
րիմ ծառայից գողաբարոյից . զո՞րս ասացից  
քեզ սէր իմ սիրասուն , 'ի սփոփութիւն  
տրտմալիւր սրտիդ : Այլ բաւական է միայն  
զայս բան տեառն յիշեցուցանել քեզ 'ի խը-  
րատ և 'ի յորդոր , թէ համբերութեամբ ըս-  
տասջի՛ք զողիս ձեր . և թէ որ համբե-  
րեսցէ իսպառ նա կեցցէ :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

ԳԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԽՐԱՏԱԿԱՆ

ԶՐՊԱՐՏԻՉ ԵՂԲՕՐ

Խորիմաստ եղբայր.

Խորշակ տապախառն ցաւաբեր հողմով  
շնչեալ և իբր զսայրասուր նետ լայնալիճ  
աղեղան սլացեալ՝ հարուածս անբուժելիս  
եղ 'ի սրտի իմում, ո՛հ եղուկ զինև. զի՞նչ  
այս լուր նորահնար, և ծնունդ շար ան-  
խիղճ մտաց, Արդարև զըպարտութիւնդ այդ՝  
անմեղ սպանութեան բերէ օրինակ. և յի՞նչ  
պէտս յանձնառեր համանման գտանիլ ա-  
նագօրոյն կայենի, միթէ ողբ և լալիւն տա-  
ռապելոյն ախորժելի՞ թուեցաւ քեզ՝ քան  
զերդ երաժշտաց և կամ զձայն քաղցրալուր  
նուագարանաց, Հօւշ քեզ լիցի, եթէ ա-  
րիւն Աբէլի յերկին 'ի վեր սուրացեալ բո-  
ղոք կալնու առ ամենատեսն Աստուած. ո՞ր-  
չափ ևս առաւել կենդանի բարբառ ողոր-  
մելոյն այնորիկ և հառաչանացն ձայն, Ալուր  
միանգամ և զգանգատ հոգե՛նուագ մարգա-  
րէին՝ Կաւթի. եթէ թշնամւոյն նախատ-  
եալ էր զիս համբերէի արգեօք... այլ դու  
մարդ հաւասար իմ... : Աւասիկ համանման  
գտար այդու զըպարտութեամբ իսրայելաց-  
ւոյն՝ այնմիկ որ զրկէր զընկերն Ազգիպտոս


առաջի Մովսիսի . կարենս յանդգնիլ որպէս  
յառաջնում նուագի . ասել թէ Մովսէս ևս  
իրաւունս ևտ զըկողին այնմիկ , և եթէ չի-  
ցէ աստ այր արդարադատ նման Մովսիսի  
միով հարուածով տալ քեզ վճարել զկեանս .  
միթէ Մատուած ևս անտես առնիցէ , ոչ  
այդպէս եղբայր , յիշեալ միանգամ զայս պատ-  
ուէր ևս Ղաւթի , լռեցո՛ զլեզու քո՛ի չա-  
րութենէ , և շրթունք քո մի խօսեսցի զնեն-  
գութիւն : Մեր պարծանք իրաւացի և բը-  
րիստոնէավայել . միթէ չարախօսութեամբ  
լեզուիդ պանծասցիս փոխան սիրոյ անկեղ-  
ծութեան , և եթէ զամն ողջոյն զհետ եր-  
թաս գործոցն անիրաւութեան զրպարտիչ  
եղբօրդ գողով . ոչ արդեօք՝ի հաւատոց ևս  
ուրացեալ երևիս , յայտ գիտասցեն ամե-  
նեքեան , եթէ դուք աշակերտք իմ էք , ե-  
թէ սիրիցէք զմիմեանս . եթէ յամենեցունց  
ճանաչել պարտիմք թէ աշակերտք եմք  
Քրիստոսի՝ սէրն իմա նշան . ով ոք յեր-  
կոտասանիցն գործեաց զրպարտութեան ,  
Յուդաս արդեօք , որ յետ զՏէրն իւր մատ-  
նելոյ , իւրովին չոգաւ ՚ի կախաղան : Ըր-  
դարև ցաւ մեծ է ինձ ըստ սիրաքարոզ Ե-  
ռաքելոյն Յովհաննու մարդասպան գտանիլ  
քեզ . ամենայն որ ատէ զեղբայր իւր մար-  
դասպան է . և եթէ այսքան բանք կշտամ-

բանաց և խրատուց տկարացին քեզ 'ի խը-  
րատ, անըստգիւտ գտայց և ես 'ի կարծիս  
մտանել՝ Մատուածատեաց ոք լինելոյդ . որ-  
պէս և նոյն իսկ Մուաբեալն ասէ՛ . եթէ որ  
ասիցէ՛ եթէ սիրեմ զՄատուած, և զեղբայր  
իւր ատիցէ, սուտ է . զի զոր տեսանէ զեղ-  
բայր իւր և ոչ սիրէ . զՄատուած զոր ոչն  
եսես, զիարդ կարիցէ սիրել : Աւրեմն Հնար  
Բնչ իցէ քեզ՝ զրպարտութեամբ՝ ստախո-  
սութեամբ՝ սպանութեամբ զվերինն ժառան-  
գել զարքայութիւն . աղէ դու տուր զիրաւդ,  
եթէ Հաճոյ թուեսցին քեզ բանք այսքանիք,  
'ի բաց թօթափեալ յանձնէդ զայդ մոլու-  
թիւն ապաշաւեան, զի մի՛ իսպառ Հակառա-  
կող ճշմարտութեան երևեսցիս . այլ իբր  
ճշմարիտ քրիստոնեայ . լուր հրաւիրական  
բանի տեառն որ ասէ, դարձարուք առ իս,  
և ես դարձայց առ ձեզ, դարձի՛ր ուրեմն ով  
եղբայր լսելով զայս հրաւեր . զի մի՛ լիցի  
քեզ լսել վասն խստասրտութեանդ տապար  
առ արմին ծառոց, և կարծեմ թէ սատա-  
կիչ հրեշտակին է սուր այս տապար, որ ոչ  
աոցէ զկայ, մինչև հասանիցէ առ արմն ծառոյն  
աւասիկ որ ստիպեալ յանկեղծ սիրոյն եղ-  
բայրական ոչ զլացայ երբէք քանիցս խը-  
րատել բանիւ և զրով, մի՛ լիցի և քեզ հա-  
նել 'ի դերև զիմս երկասիրութիւն, 'ի մխի-



Թարութիւն հարազատ բարեկամիդ, որ եմ

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ



ԽԱՂԱՂԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ԶՍՏԱՅՈՒԱԾՍ ՆՆՋԵՅԵԼՈՅՆ  
ԺԱՌԱՆԳՈՐԴԱՅ ԲԱԺԱՆՄԱՄԲ

Յարգոյ բարեսէր.

Արդարեւ այս ինչ անուն լուսահոգի երիտասարդին վաղաժաման առ Աստուած փոխիլն յաւէտ երեք մեզ զցաւ և զարտժութիւն. բայց սա առաւել եղև մեզ ցաւառիթ տրտմութիւն և կարի վշտաբեր. զի յետ կատարման կենացն աստի խոռվութիւն անկաւ 'ի ժառանգորդս նոցա վասն ստացուածոց իւրոց բազմագունից. քանզի 'ի զանազան տեղիս զանազան եկամտից ստացուածք գոլ յայտնեցաւ. բարի էր, եթէ անձամբ անձին 'ի կենդանութեանն ձեռամբ իւրով ինքնակամ հաճութեամբն բաժանէր զինչա իւր որդւոց իւրոց և այլոց ժառանգորդաց, և շտալ յետամնացելոց զայս ձանձրոյթ, զի մի վերերևէր այժմուս կար և կուր և խոռվութիւն որպէս և լինին. մին-

չև անդամ գրակիցք նորին եկեալ առ իս  
ամբաստանեցին. ուստի կնքահայր նորին  
լինելով իմ, որպէս և ինձ հարկ է, նոյն-  
պէս հօրեղբայր գուլով քո որբոց այնոցիկ,  
երկոքին 'ի միասին հարկագրիմք երթալ և  
բաժանարարութեան զայն գործ ըստ օրի-  
նի արդարապէս կատարել 'ի խաղաղութիւն.  
որով և մեք զերանական ընկալցուք մեզ բա-  
ժին ըստ աւետման ձայնի Փրկչին որդեգիր  
լինել տեառն խաղաղասիրութեամբ:

Որ է վերջին և կատարումն ամենայն  
առաքինութեանց ըստ ( ) գոստինոսի:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ

---

### ԳՈՐԾՈՎ ԼՍՈՂ ԼԻՆԵԼ ԲԱՆԻՆ

Մտերիմ բարեկամիդ սէր եղբայրական.

Ո՞ր օրինապահութիւն հինաւուրց, ո՞ր  
պատուիրանասիրութիւն կանոնաւոր, ո՞ր  
հնազանդութիւն կատարեալ՝ սրբոց Ըւե-  
տարանչաց՝ բանից Մարգարէից և Ընաբե-  
լոց, որք 'ի տեառնէ ունին հրաման հով-  
ուել զհօտ հովուապետին և ծանուցանել  
նոցա զբարերար կամս նորին, զի մի՛ պա-

կասութեան ինչ գործով զգեցիցիմք 'ի փառաց  
սուրբ Արքայութեան . որպէս յաւուր առաջ-  
ներրորդի կիրակէի Տեճի պահոցս յառաջ  
քան զամենայն՝ պատուիրէ Աստուած մար-  
գարէին Ասայեայ տեսլով, գոչեալ զօրու-  
թեամբ և մի՛ խնայեր, բարձրացո՛ զբար-  
բառ քո, և պատմեա՛ ժողովրդեան զմեզս  
նոցա . այսինքն բարձրաբարբառ քարոզու-  
թեամբ կոչեա՛ առ ժողովուրդսդ : Ապաքէն  
որպէս և յայտ իսկ է յարգութեանդ, զի  
եթէ ոք կամիցի ումէք բան ինչ ծանուցա-  
նել առ մօտաւորս՝ բանիւ խօսի ըստ օրինի .  
և առ հեռաւորս՝ գրաւոր . այսինքն նամա-  
կագրութեամբ : Ս) մին նման աւաստիկ և Աստ-  
ուած՝ մինչ մօտաւոր էաք առ ինքն 'ի դը-  
րախտին, բանիւ պատուիրէր նախահարց մե-  
րոց՝ մի՛ ուտէք ասելով . բայց յորժամ 'ի  
ստունգանել նոցա հեռացաք և արտաքսե-  
ցաք յանձառելի փառաւորութենէ գրախ-  
տին, իբրև հեռաւորի իմն նամակագրի օ-  
րինակաւ՝ սկսաւ Աստուած գրութեամբ  
կտակարանաց յայտ առնել մեզ 'ի ձեռն մար-  
գարէին Մովսիսի զտասնաբանեայ պատուի-  
րանս, և 'ի ձեռն այլոց մարգարէից՝ զոր ինչ  
կամք իցէ նորա և հաճութիւն : Բայց գո-  
չեալ զօրութեամբ և մի՛ խնայեր բարձրացո՛  
զբարբառ քո ասելովն յայտ առնէ մեզ զե-

րիս տեսակս մեկնաբանութեան :

Մինն՝ թէ մօտաւոր և թէ հեռաւոր՝  
ամենեքին լուիցեն :

Եւ երկրորդ՝ որովհետեւ ճշմարտութիւն  
է՝ զոր քարոզէ, համարձակութեան հրա-  
ման ինչ երևի լինել. ըստ՞ այնմ՝ թէ քա-  
րոզեցէք ՚ի վերայ տանեաց ,

Եւ երրորդ՝ բարձրաձայն գոչել հար-  
կադրի վասն խլացելոց . զի թէպէտ ոչ զոք  
արար Մօտուած առանց լսելեաց . այլ նը-  
մանեցան մարդիկ այնպիսեաց՝ զորս շարա-  
մանէ Վաւիթ . ահանջս ունին՝ և ոչ լսեն .  
աչս ունին՝ և ոչ տեսանեն . ունչս ունին և  
ոչ հօտոտան . ապա ուրեմն ՚ի վերայ այսր  
երրորդի կամիմ նամակաւս այսու սակաւ  
ինչ խօսիլ ընդ քեզ բանս յարոյականս .  
որովհետեւ խլացեալ տեսանեմ և զքեզ ան-  
սալ բանից սուրբ Վրոց . բայց ոչ գիտեմ ,  
զո՞ր օրինակ խօսեցայց ազդու լինել քեզ  
առաւել քան զՄետարանական բան , քաւ-  
լիցի , յայդմ անկարող գտանիմ . այլ վասն եղ-  
բայրսիրութեանս պարտաւորութեան , փու-  
թալ փութամ յիշեցուցանել քեզ զնոսին .  
զորս օր քան զօր լսես զայն պատուէր տէ-  
րունեան , սիրեսցես զընկեր քո իբրև զանձն  
քո , ՚ի սուրբ Մետարանի , զանց արարեալ  
զնովաւ ուկնախից կամիս երևիլ ընդհակա-

ուակն թշնամանօք պատուելով զայս ինչ ընկեր քո, ո՛չ թէ սիրով. զի յաճախեցեր մերժել և անարդել ատելութեան բանիւ յայն ինչ ժողովն 'ի մէջ բազմականաց, զոր ականատես իսկ եղէ : Արդ՝ եթէ բոլորովին խլացար լսել բանից Տեառն, գոնէ և զայս երկիւղալի բան աշակերտի նորին Առաքելոյն Հովհաննու փութասջի՛ր զմաւածել յուղղութիւն 'ի խոտորնակ ճանապարհաց քոց որ ասէ. որ ատեսայ զեղբայր իւր, մարդասպան է. վասնորոյ ապացոյց մեծ լիցի քեզ պատմութիւն այնր խլին զոր բժշկեաց բժշկապետն Հիսուս թքանելով յականջս, և կալեալ զլեզուէ նորա Նիփաթայ ասէ, որ է բացի՛ր. սոյն պատճառաւ մատնամուխ բժշկեաց զնա Յիսուս 'ի յանդիմանութիւն ամենայն խլացելոց. և իրաւարար էր պատժելն Պետրոսի զականջն Մաղքոս անուն չարալլուկ ծառայի 'ի հարկանելն զուսարուղիս երեսս Հիսուսի Փրկչին մերոյ, որ արդարեւ լուեալ իսկ էր 'ի բժշկութեան պահու զայս պատուէր՝ թէ երթ յայսմ հետէ մի՛ մեղանչէր, բայց ըստ հրամանի Տեառն մինչ ո՛չ կատարեաց, պատժեցաւ արժանապէս : Թէպէտ չէր խուլ, սակայն ո՛չ կատարելոյն աղագաւ խուլ համարի. և քանզի՛ եթէ ոք մեղիցէ, յառաջ

քան զամենայն մասունս մարմնոյ իւրոյ ա-  
կանջօքն համարի մեղանչող. զի լուաւ և ո՛չ  
կատարեաց, ուրեմն տեսն<sup>ք</sup> արդեօք որո՞ց  
խից նմանեցար և դու պատուիրանազան-  
ցութեամբ. այսինքն փոխան սիրոյ՝ ատե-  
լութեամբ: Ա՛յ ապաքէն զոր ինչ պատուի-  
րէր լուարո՛ւք լուարո՛ւք ասելով սկսէր ըզ-  
րանս իւր. լուարո՛ւք զի ասացաւ. և թէ  
որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ ասելով.  
արդարև ամենեքեան նոքա ականջօք էին.  
բայց ստոյգ ականջ գործով կատարողինն  
համարէ Մատուած. վասն զի ՚ի տաճարին  
յաւուր միում մինչ ծանուցին նմա՝ թէ մայր  
քո և եղբարք քո կան արտաքոյ և խնդրեն  
զքեզ, տես՝ զի՞նչ պատասխանէ նոցա յայն-  
ժամ. սոքա են ասէ մայր իմ և եղբարք իմ,  
որք լսեն զբանս իմ և առնեն. ուստի եթէ  
յամառութեամբ կացցես յայդ գործ ատե-  
լութեան փոխանակ սիրոյ, հրաւիրել հար-  
կանգրեցայց զքեզ յայնժամ ՚ի ծանօթութիւն  
բանից չարատանջ մանասէին. զի սաստիկ  
են ասէ սպառնալիք տեսուն ՚ի վերայ մեղա-  
ւորաց թէ աստ և թէ ՚ի հանդերձեալն  
յաւիտենական. ապա որ ո՛չ լուիցէ ունկամբ,  
հարկաւ լսել երևի թիկամբ: Աւրեմն Պկա-  
րի վայելուչ համարիմ յիշել աստանօր և ըզ-  
պատասխանի այնր խնդրոյ մեծատան՝ և այն-

պէս վերջաբանել. Հայր Արրահամ՝ ասէ  
 աղաչեմ, զի առաքեսցես աստի զոմն յաշխարհ  
 մեր, որ երթեալ պատմեսցէ զեղեւթ իւնն  
 իմ հինգ եղբարց իմոց. այսինքն այնոցիկ  
 որք են Մսիա, Մփրիկէ, Աւրոպա, Մ-  
 մերիկայ, և Մովկիանիա. զն մի՛ և նորա  
 անհաւանութեամբ լիցին իբրև զիս եղկելի,  
 Հայր Արահամ զե՞նչ ետ նմա պատաս-  
 խանի. լո՛ւր և զայս սիրելէ՛ս մեծաւ ուշադ-  
 րութեամբ. նորա ունին ասէ անդ մարգա-  
 րէս՝ վարդապետս՝ քարոզիչս, ՚ի նոցանէ  
 լուիցեն զպատուիրանս Մատուածայինս որ  
 են ՚ի սուրբ Գիրս. եթէ նոցա ո՛չ լուիցեն,  
 և այլ որ աստի յարուցեալ երթիցէ և նմա  
 ոչ լուիցեն. որ արդարև ստուղեցաւ յա-  
 րութեամբն Վազարու Աստի իմաստութեան  
 է գործ, եթէ արդէն բարւոք ունկնդրու-  
 թեամբ յօժարիցիս գործով կատարել զկամս  
 Մատուածայինս զօրէն հնազանդ ծառայի,  
 յորժամ լուիցես զձայն քարոզութեանց և  
 բարոյական խրատաբանութեանց մարգա-  
 րէից՝ վարդապետաց և բարեխրատ անձանց,  
 որով մօտաւոր ազգական համարիլ տեառն  
 և մեծ կոչիլ յարբայութեան երկնից, որ ա-  
 սէ, որ արասցէ և ուսուցէ, նա մեծ կո-  
 չեսցի յարքայութեան երկնից:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
 ՍԱՀԱԿԵԱՆ

ՅՈՐԴՈՐ Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ԾՆՈՂՍ

Եղբայր իմ սիրասուն.

Ո՞ր անժխտելի ծնողասիրութեան պարտաւորութիւն որդւոց հաւատարմից, այս է երախտագիտութեանդ քո նշան, բարեկամ. որո՞վ դիտաւորութեամբ արդեօք 'ի քուն գրութեան լինելով անպատասխանի թողէր զայսքան ժամանակ ղերկոսին նամակագրութիւն գորովագութ ծնողի քո, որ յանձանձիչ և խնամող էր քեզ յամս յոլովս, իսկ այժմ վասն քո մեռանի զօրհանապազ չարատանջ կենօք, ոլոռն ոլոռն կաթուածով աչաց արտասուաց տքնի և խնդրէ իմանալ թէ որո՞վ կենցաղականաւ զբաղեալ իցէ որդի իւր սիրելի. տրտմախառն ուտէ զհաց իւր և արիւնախառն ըմպէ զջուր. քանզի գաղթական և պանդուխտ գոլոյդ աղագաւ յերկիր հեռաւոր, զօղեալ կայ յայս երկիր զկասկածանաց, թէ զի՞ եղև միտթարական ցանկալի որդւոյ իմոյ, կորեա՞ւ արդեօք. այս քանի՞ ամբ են յորմէ հետէ հեռացեալ է յինէն 'ի պանդխտութիւն, չընկալայ ասէ զողջկեցութեան զլուր 'ի նմանէ 'ի միտթարութիւն և ոչ մի: 'Աս զի՛ յա-



ուրս յայտոսիկ բօթալի լուր ինչ հասեալ  
 յականջս նորա՝ թէ նաուս միոյ՝ ՚ի գալ ան-  
 տի առ սյսր, մրկածուք ալեաց սաստկու-  
 թեան պատահելով ընկզմեալ է, և ամենե-  
 քին որ ՚ի նմա՝ հեղձամահ, ոյր վասն՝ սրբ-  
 տատոշոր լեալ ՚ի լիճ տրտմութեան առա-  
 ւել հաշի և մաշի անմխիթար: Արգ՝ այս  
 եպերելի ընթացք քո դրով խոտորնակիս  
 ընդդէմ երախտաւոր ծնողիդ, կարի վտան-  
 գաւոր երևի ՚ի տրտմալիք ցաւ փոխարկել  
 զանդորքական կեանս քո. քանզի տրտա-  
 սուք մօր անշուշտ կործանեն զտունս որդ-  
 ւոց ՚ի հիմանց:

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
 ՍԱՀԱԿԱՆ

---

ՈՂՋՈՒՆԱՏՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԿԱՄԻ

Յարգոյ բարեկամ.

Յօրէ յորմէ մեկնեցայ ՚ի ձէնջ յօտար  
 երկիր, զբաղանաց գործոյս աղագաւ ՚ի քուն  
 գրութեան լինել իմ ո՛չ սակաւ եբեր ինձ  
 տրտմութիւն. բայց ակնկալութեամբ սպասէի  
 շնորհագիծ մատանց քոց գրութեան, և յոր-  
 ժամ ՚ի դերևս ել ակնկալութեանս յոյս,  
 հարկ կալաւ զիս ՚ի գրիչ ունել ձեռս ՚ի լը-

բուժման բաղձանացս, որով գոնէ մարթացայց ողջունել զամենացանկալի մտերմութիւն ձեր և յայտնել զանմոռանալի յիշատակութիւն մտացս հատընտիր տարփալի բարեկամիդ:

Քանզի այն է ինձ պարգև մխիթարական 'ի կենիս. զի երբեմն գրամատոյց լինելովդ առ իս և ծանուցանելով զձերդ բարելաւութենէ ասեմ և զքաջողջութենէ, ուրախացուցանել զիս 'ի փոյթ լինիք:

Եւ եթէ յօժարեսցիք ծանօթանալ զորկենութենէ վաղեմի բարեկամիդ, փառք ամենակալին, գոհանամ, զգթառատ մարդասիրական խնամոց իւրոց. զի մինչև ցայս վայր անարժանութեամբ վայելիմ զկեանս իմ 'ի բարօրութեան ողջամբ, և ահն ունիմ ընդունել զքաջողջութեանդ լուր, որում սպասեմ անձկանօք:

Ն. Ծ. ՅԱՄՈՒԹԻԻՆ  
ՍԱՀԱԿԵԱՆ



## ՅՈՐԴՈՐ

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՄՆԱԼ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

Ի ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ

ՏՆԱՆԿԱՅ

Վաղէմնական սիրով պերճացեալ յար-  
զի՛ ազգասէր.

Մտուածապարզե երանութիւն ինչ հա-  
մարիմ առ մեզ եղբայր, որ տեսեալ ծած-  
կագիտին Մտուծոյ զարդիւնաւորութիւն  
մերս առաջին աւանդութեան եղբայրական  
սիրոյ, որ քանքար իմն էր փոքրիկ առ մեզ  
աւանդեալ ՚ի տեառնէ, հաճեցաւ այժմ զա-  
նարժանութիւնս մեր հասուցանել յայս հո-  
գեորական ազգօգուտ գերագոյն գործ վե-  
րատեսչութեան ըստ նախկին մերս սովո-  
րութեան եղբայրական սիրով վարիլ և ՚ի  
սէր Մզգային քաղցր մարդասիրութեամբ  
խնամարկու և այցելու լինել ազգիս կարօ-  
տելոց, քանզի այս է տնօրինական տեսչու-  
թիւն Մտուածային. զի յորժամ շահաւո-  
րեալ տեսցէ զքանքարն, տայ ունել ՚ի վե-  
րայ հնգից կամ տասանց քաղաքաց իշխա-  
նութիւն. այսինքն այսու պաշտօնիւ եթէ  
ըստ օրինի վայելչական կատարելութիւն  
տեսանի ՚ի մեզ որպէս զառաջինն, ամենաբա-

րի վերնախնամ տեսչութիւն առաւելագոյն վարձատրեսցէ յաւիտենականաւն փառաց :  
 [Սէպտեմբր 1870 թ. 10-րդ էջի վերջը] Ի սկզբան ժամանակի քրիստոնէութեանս մերում՝ ՚ի վերայ այսր գործոյ գերագունի լիս հոգւով սրբով ընտրեցին վերակացու . զի՞նչ բաղաւորութիւն , զի՞նչ երանական վիճակ , հոգեկից եղբայր , արդարեւ շնորհապերճ այնց եօթնից նման չեմք իմաստալից գիտուն , բայց եթէ վաղեմնահաստատ անկեղծ սիրով եղբայրականաւ վարեսցուք ընդ միմեանս , և հանապազօր առանց խնայելոյ զանձինս մեր յօժարութեամբ փութասցուք ՚ի հոգատարութիւն ազգայնոցս տկարաց և հիւանդաց անձանձրոյթ , աներկբայ յուսամբ ծառայ հաւատարիմ գտանիլ մեզ առաջի Մատուծոյ և մշակ արդիւնարար :

Ուստի աղաչեսցուք զՄատուած միարանութեամբ , զի մշտահաստատ պահելով ըզմեզ ՚ի սոյն սէր համախոհութեան մինչև ցօր վախճանի կենաց մերոց , յօժարութեամբ միմեարիչ լինել տքնեսցուք ՚ի փոյթ խնամածութեան կարօտելոց համայնից , որ ՚ի քաղաքիս . զի և մեզ տեսնապարզե միմեարութիւն մեծ լիցի յաւիտենական :

Ն. Ծ. ՅԱՐՈՒԹԻՒՆ  
 ՍԱՀԱԿԵԱՆ

## ԲԱՐԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

### ՎԱՄՆ ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՈՅՆ ԲԱՐԵԿԱՄԻ

Սիրելի՛ բարեկամ.

Դէպ եղև ինձ տեսանել յորդիդ քում՝  
զմեծաշահ գործ ինչ պարկեշտութեան ա-  
սեմ և քաղաքաւարական կրթութեան յա-  
ւէտ քան զօրինակ, մանաւանդ վայելչական  
երախտագիտութիւն առաւել քան զառա-  
ւել, շնորհակալեմ ընդ հակառակն: Բան-  
զի յանցեալ աւուր յայս ինչ ուրեք տես-  
եալ իմ զանվայել գործ ինչ վատթարու-  
թեան 'ի նմա, մինչ կամելով փութայի խը-  
րատաբանել զնա իբրև զմտերիմ բարեկամ,  
յայնժամ արժանի եղէ ապստամբողական  
նախատանաց բանին յոյժ խայտառակ լի-  
նել առաջի բարեկամաց և թշնամեաց, ծա-  
նօթից և անծանօթից իմոց ամենից. որով  
սաստիկ զամօթի հարեալ 'ի խոր խոցեցայ  
իբրև ներքնախայթ վիրօք: Եպաքէն ընդէր  
որդիդ քո յայդ աստիճան անխրատ գոլով  
ողորմելի եղեալ է. մի՞ արդեօք անփոյթ ի-  
ցէք բարեսնունդ առնել զորդիս ձեր բա-  
րոյականաւ բանիւ կամ գործով իբրև հա-  
յելի օրինակաւ. ո՞հ թէ զմտաւ անէր  
ձեանգամ զպատիժ արջակոտոր մանկանցն

Եղիսէի վասն ծաղրարանութեան, յայնժամ  
 ճանաչէր զյետագայ վնաս անզգամութեան  
 իւրոյ զոր եցոյց առ իս: Արոյ վասն՝ ահա  
 սակաւարան ծանուցմամբս քեզ յանձն առ-  
 նեմ, գուն գործել զոր ինչ արժան իցէ խո-  
 սիլ առ ստահակ որդին քո ուղղել խրա-  
 տարանութեամբ. զի մի՛ այնու վատթար  
 սովորութեամբ իւրով և այլու՛մ ու մեք այս-  
 պէս արարեալ, կրեսցէ զպատիժ փորձանաց  
 կամ տուգանաց, և դու ընդ նմա՛ ՚ի միասին  
 վշտասցիս. ո՛հ զի՞նչ ասեմ. ուր ուրեք գը-  
 տանիցի այսպիսի անառակ և անզգաստ ման-  
 կունք, տէր տացէ զդարձ:

Ն. Ծ. ՅԱԿՈՒԲ  
 ԹԱԳԻՈՐԵԱՆ

---

ՊԱՀԱՆՁՈՒՄՆ ՓՈԽ ԴՐԱՄՈՑ

Եղբայր պատուական.

Երգարև մինչ ցայս վայր համբերատար  
 ոգւով սպասէի քեզ, թերևս առանց խնդրե-  
 լոյ հատուցանել զպարտս, այլ ՚ի զուր: Սա-  
 կայն եթէ բարւոք զմտաւ ամիցես, զիա՞րդ  
 սփոփիցիս ընդ անիրաւութիւն և ընդ ար-  
 համարհանս զեղիս բարուցդ. ո՛չ ասպքէն

երաշխաւորութեամբ իմով յանտանելի տա-  
 ռապանաց բանտին զերծար, խոստանալովդ  
 յամէ ևս հատուցանել զոր պարտիսդ: Արդ  
 ընդէ՞ր սուտակասպաս և մարդելոյզ բանիք  
 քիւրապատիկ ջան 'ի գործ ածեր 'ի պատրել  
 զիս . կամիս՝ զի ընդ պարտատեառնքո հակ 'ի  
 կռի՞ւ կաքաւեցից: Աստ լիցին քեզ անհո-  
 գութիւնդ և տարւոյն զեղխութիւն, և եթէ  
 տակաւին յայդ կացցես յամառեալ, կար-  
 ծեմ զի մերկասցեն զքեզ 'ի զարդուց փա-  
 ռացդ անվայելից իմա՛ զժամացոյցն ոսկոյ  
 զոր գնեցեր յանցելում եօթնեկի հազար  
 դահեկանաց հատուցանել մինչ զյետին բը-  
 նիօն 'ի բանտի:

ՅԱԿՈՐ  
 ԹԱԳԻՈՐԵԱՆ

ԽՐԱՏԱԿԱՆ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱՌ ՊԱՏԺԱՊԱՐՏ ՈՔ

Ո՞հ՝ մտերիմ եղբայր.

Ափսո՛ս եղկելի անձին իմում գժբաղդի,  
 զի յաղափս վտանգառիթ և ցաւաբեր ախ-  
 տաւոր գործոյ եղբօր իմոյ գամու գամու լը-  
 սելով զգոյժ 'ի տրամութեան կամ վարա-

կեալ, քանզի հանդերձ արտաբինս զգայու-  
թեամբ և ներքինս զգայութեան իմացական  
զօրութեամբ 'ի խորաշննին մտեալ առ այսր  
չարագոյժ լուր, տկարանամ խօսիլ բանեղ  
'ի խրատ, ո՞ կարօտեալք խրատու վաղեմի  
բարեկամ: Սմանք արդեամբ ազնիւ բարուց  
իւրեանց բարեհոչակ լեալ, ճոխացեալ  
և բարգաւաճեալ ուրախացուցանեն զբարե-  
կամս իւրեանց. բայց ոմանք չար սովորու-  
թեամբ և ախտաւոր բնութեամբ իւրեանց  
'ի զանազան մոլութիւնս իրր տղմարնակ  
ընկղմեալ, մշտահոչակ չար համբաւս ունե-  
լով, կերպ առ կերպ քամահրանաց արժա-  
նի գտեալ, դառնաճաշակ տրտմութեան  
պատճառ լինին բարեկամաց իւրոց. ահա-  
ւասիկ որոց մինն դու երևեցար 'ի մէջ ազ-  
գականաց մերոց ապաշնորհ և ապօրինակ  
վարուքդ, թողեալ զազնիւ բարօրութեան  
ցանկալի քաղցր կենցաղավարութիւն առա-  
քինական, որ մխիթարիչ է բարեկամաց և  
ազգականաց, զխոտորնականն ձեռքակալես  
սատանայական թեղողութեամբ բանից  
պատրողականաց ոռոգեալ և ժանտասաղարթ  
ուռճացեալ բարձրաբերձ երևիս, բայց ան-  
պտուղ որպէս զժանտաթղենին, զոր տէրն  
անէծ: Ընմեղ սպանումն միայն արիւժակե-  
ղութեամբ դիտես լինել. ահա կերպ մի ըս-



պանութիւն ևս է սա, որ զապրուստ կե-  
 նաց տոն այլում առեալ զրկես 'ի բարեաց:  
 Աներկիւղդ 'ի Տեառնէ. բարեկամք միշտ ըզ  
 բարեկամս իւրեանց 'ի բարօրութեան տեսա-  
 նել փութան բազմազան բարեգործութեամբ  
 բարգաւաճեալ. բայց նուաստագոյն ես դըժ-  
 բաղոս մինչ դեռ լուայ զքէն զմահագու-  
 շակ զայդ լուր բօթալի, թէ գողութեանդ  
 աղագաւ բանտարգեալ ես, ո՛չ միայն տըրտ-  
 մութիւն պատճառեաց ինձ անչափական,  
 այլ և պատկառիմ և երկնչիմ այսուհետե  
 ասել եթէ այս ինչ ոք՝ եղբայր կամ ընկեր  
 է ինձ. որովհետե գոյն և գողակիցն 'ի մի-  
 ում պատժի գոլ գիտեմք. գուցէ թէ նո-  
 վին պատժով և զիս դատապարտեսցեն գոր-  
 ծակից քեզ կարծելով:

Ա՛ւր այսուհետե վարկում 'ի քեզ. խը-  
 նամածու հայր քո բարեհաշակ ոմն էր յայսմ  
 քաղաքի, զորոյ Տէր լուսաւորեսցէ զհողին,  
 յորմէ և մասն ինչ ունելով քեզ՝ մտիթա-  
 րութիւն մեծ էր հանապաղօր մեզ ամենե-  
 ցունցս. ահա սպառսպուռ կորուսէր զայն.  
 աւճղ եղկելոյդ. իսկ սակայն մի՛ լիցուք  
 բոլորովին յուսակտուր թէ գու և թէ մեք.  
 զի ամենայն յանցանք 'ի ձեռն պատժոյ ու-  
 նի հատուցումն. որպէս և դու ասաէն ապա-  
 շաւեալ սոյն պատժօք, գուցէ 'ի հանդեր-

ձեռնն ազատ գտանիցիս, 'ի յաւիտենակա-  
նէն, եթէ կատարեալ զղջացեալ է քո այն-  
ուիկ:

ՅԱԿՈՒԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

ՀԱՌԱՉԱՆԻ ՄՕՐ

ՎԱՄՆ ԿՈՐՈՒՍԵԱԼ ԶԱԻԱԿԻ ԻԻՐՈՅ

Ո՛ սիրասնունդ որդեակ:

Մինչև ցայսօր ո՛ւր իցես արդեօք անտես  
յաչաց մերոց իբրև 'ի թագստի. հայր քո  
և ես մինչև ցե՛րք տառապիմք՝ արտասուա-  
թոր լալազին, եթէ ծօյն գեղամայ 'ի ներքս  
'ի մեզ էր, վաղու ևս ցամաքեալ էր այսու  
յորդառատ հոսմամբ արտասուաց մերոց.  
լիճ լուսոյ անուանեալ զաչս մեր քստ՝ Սա-  
րեկացւոյն՝ որդեակ՝ այսուհետև լիճ ար-  
տասուաց կոչել ոչ սխալիմ. արդեօք յո՞ր  
սահման տէրութեան կամ յո՞ր քաղաք կաս  
թագուցեալ. գթասիրտ կանայք՝ եկայք դուք  
այսօր, ողբակի՛ց լերուք՝ եղկելի մօրս, ողբս  
յօրինելով՝ ինձ պատշաճաւոր. քանզի կօ-  
րուսի հոգւոյս իմ հատոր:

Տարեքք աշխարհիս՝ ո՛ւր տարսօք որ-

զիս . եղկելի մօրս մի՛ առնէք շարիս . խընդ-  
րեմ գտանել և տալ նուաստիս՝ զի միա-  
մօր է խանդակաթ սրտիս . բարձրութեան  
արդեօք թէ՛ ՚ի խորութեան . խընդրեցից  
զորդիս յոր քանակութեան :

Եմպաշարժ հողմունք վերին եթերին՝  
ո՞ւր յափշտակեալ տարայք թագուցիք . վա-  
նեցէք և զիս առ ընթեր նորին , յոր կողմ  
և արկիք զիմ կենացս գին :

Ն. Ծ. ՅԱԿՈԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

---

### ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆ

#### ԶԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՈՅ ԻԻՐՄԷ

Բարեսէր եղբօր իմոյ սիրելւոյ խնդալ  
յաւետ յարածամ .

Ո՛հ անտանելի տագնապիս եղկելի անձին  
իմում , աղէտալիս ծանուցից յայտմ նուա-  
զի յարգոյ մտերմութեանդ , տարաբաղդիկ  
դուժարկուս և մեծի ափսոսանաց արժանիս ,  
որ ըստ մեղաց իմոց տարապայման վշտակ-  
րութեամբ անմթիթար հեծեմ հեծեծեմ  
ընդ նախատանօք հողեխայթ սլաքաց լեզուաց  
բազմաց , վասն միակ որդւոյ իմոյ անառա-

կի, խորթարարոյ գործոցն զաղբագունի :

Սորին աղագաւ ինձ պատշաճ է լալ և արտասուել անմխիթար տրտմութեամբ մեծաւ 'ի կոծ և յաղաղակ զցայգ և զդերեկ :

Ո՛ր այն երանական մխիթարութիւն ումանց, և ո՛ր այն ուրախառիթ հայրասիրութիւն և որդեսիրութիւն անչական, որք 'ի միասին մշտափարեալ ցնծութեամբ բերկրին անդադար, բարեբաղդաբար ունելով հնազանդ մանկունս սիրասունս զարդարեալս ամենայն բարեկրթութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, վայելեն ծնողք զբարօրութեան բերմունս նոցին երջանկաբար. և ես աստ վաստակիմ և 'ի տրտմութիւն մատնեմ զանձն իմ տեսանելով զչաւիղ ոտից գարշելեաց նորա :

Ո՛չ առ նախանձու ասեմ հոգեհատոր եղբայր իմ արենակից . Եստուած հաստատուն և արդիւնաւոր արասցէ զայնպիսեաց և զքոյգ ուրախութիւն անգորրական կենօք յարատեական հնազանդութեամբ բարեկիրթ ցանկալի որդւոյգ : Արանել երանեմ զբարեբաղդութիւն քոյգ և նոցա, որ վասն նախանձելի օրհնեալ զաւակաց անձկան և փափագին տեսանել՝ ամենեքին. իսկ վա՛յ այնոցիկ որք 'ի մեծի տառապանս կան ծնողք իբրև զիս եթէ իցեն նոցա՝ որդիք անառակք՝

որք ոչ կամին երբէք տալ զանձինս 'ի հընազանդութիւն ծնողաց իւրոց և իբրև Սաւուղայ ընդ դէմ խթանի աքացեն 'ի բաց մեթեալ զկարևոր պարկեշտութիւն, և յանդրդնին անցանել զօրինօք տեառն թէ պատուեալ զՏայր քո և զմայր, և ընդ Սողոմոնի լուր որդեակ խրատու հօր քո՝ ո՛ւր գործարութիւն, ամենևին լսելափակ գտեալ ընդ հակառակն գործնն յանհնազանդութեամբ, ապստամբութեամբ, ամբարհաւաճութեամբ, ինքնահաւանութեամբ, և սրիկայագործ վարուք, և ևս որդւոյ իմում որ ո՛չ էր արժան լսել, լուաւ, և որ ո՛չ էր արժանի ուսանիլ, ուսաւ, և մանաւանդ զմահազնկոյց զախտ իւր զհոգեկործան ծուլութենէ նորասեսմ որ 'ի նմօ է բնաւորեալ անդստին 'ի մանկութենէ, աւաղ դժբաղդիս: Քանիցս կամեցայ տալ յուսումն արուեստից դասել զնա 'ի կարգ արուեստաւոր ճարտարապետաց, և ո՛չ կամեցաւ երբէք, ծուլանայր յուլանայր և ո՛չ կարէր երբէք ժուժել և համբերատար լինել գոնէ ժամանակս ինչ սակաւ աւուր իբրև եօթնեկի միոյ:

Նուանայր խուճապէր և փախչեր իբրև 'ի խայթոցաց կամ իբրև 'ի գազանաց թիւնաւորաց, զսնուն շուկայի և կրպակաց համարէ ինքեան իբրև զբանդ տանջողական:

որպէս 'ի մանկութեանն իսկ եղև վասն ըն-  
թերցանութեան դպրոցաց դժկամակու-  
թեամբ իւրով ո՛չ ախորժէր եղբայր՝ ընդ  
հովանեաւ ուսուցչացն անցուցանել զաւուրս  
մանկութեան իւրոյ զերթ գարնանային եղա-  
նակի ուսմամբ դալարանալ և խայտալ:

Ո՞հ անմխիթար դժբաղդիս, չե՛մ բաւա-  
կան բնաւ ալէտաբարբառ բանիւք նախա-  
տանաց միայն սևորակ գրչիս կոճոպիլ. զի  
ամենագիտին Աստուծոյ բարեբար կամացն  
տնօրէնութիւնն ինձ պատժապարտիս իբրև  
պատիժ զապաշաւ տուեալ համարիմ յիշա-  
տակաւ այնր անառակին, որ 'ի սուրբ Աւե-  
տարանին կարի թեթևագոյնս 'ի բաղդա-  
տութիւնն ընդ այսր անառակի մերում. վասն  
զի յորժամ նա ապստամբեցաւ 'ի բարե-  
բար հօրէն իւրմէ, ո՛չ եկաց առաջինորա.  
այլ հեռացաւ 'ի հացալից տանէ անտի և  
'ի խնամոց երախտաւոր ծնողին անտեսլեալ  
յաչաց. իսկ սա յարաժամ գարշահոտ մո-  
լեկան ծիտով անպատեհ իւրոց շարաց կեալ  
'ի տան մերում վարի 'ի տես աչաց մերոց  
ակներև, և 'ի լուր ականջաց ամենեցուն նա-  
խատինք մեծ լինել բարեհամբաւ զերգաս-  
տանաց մերոց:

Արդ սէր իմ մտերիմ և բարեկամ՝ ու-  
րովհետև անդստին ո՛չ կամիմ երբէք ա-

նիծաբանութեամբ բարբառիլ և ասել. բարձ-  
 ցէ տէր զչարն 'ի միջոյ, գարշելով 'ի նը-  
 մանէ իբրև 'ի շարագործ գժկամակէ և  
 զաղրագունէ. այլ միայն այսպէս բարւոք  
 թուի ինձ, զի մեք երկոքին 'ի միասին ու-  
 սեալ առակաւ հօր անառակին, համախո-  
 հութեամբ իմն համբերատար լինելով հայ-  
 րական գթութեամբ, միւսանգամ ևս ջա-  
 նասցուք խրատել 'ի խոտորումն 'ի շար ճա-  
 նապարհացն. երբեմն ողորական բանիւք  
 քաղցրութեան, և երբեմն նախատանաց,  
 զի մի շարութեամբ իւրով սատակեացի իբ-  
 րև զամբարիշտն Արիսողոմ:

Թեբրևս գուցէ ճմլիլ սրտի նորա և  
 դառնալ այսպիսեալ 'ի վատահամբաւ ըն-  
 թացից իւրոց 'ի քաղաքական վարս բարեկը-  
 րօնս բազեյիշատակ լինել ինձ և ձեզ հօ-  
 րեղբայր անուանելոյդ, զոր տէր Յիսուս  
 արժանիս արասցէ տեսանել 'ի վերայ նորա  
 զպարկեշտութեան և զզգաստութեան ինչ  
 շնորհ հոգևով սրբով. զի յայսմ հետէ ըս-  
 կիզքն ուրախութեան լիցի մեզ և ձերում  
 սիրելութեան և ամենայն ընտանեաց մերոց  
 և դրակակցաց:

Ն. Ծ. ՅԱԿՈԲ  
 ԹԱԳԻՈՐԵԱՆ

ԻՐՐՈՒ ԹԷ ՎԱՐԺԱՊԵՏ ԻԻԲ  
ՀՐԱԺԱՐԵԱԼ ԻՑԷ Ի ԴՊՐՈՑԷՆ

Բարեխնամ ուսուցիչ.

Օհայրդ հոգելից ուր արդեօք անջրպե-  
տեցին յինէն կառք հրեղէն և թողին զիս մի-  
այն առեալ 'ի դլսոյ իմմէ զկառավար վեհո  
հոգեխնամ. վասն զի մինչ երբեմն երա-  
նաւէտ բարեբաղդութեամբ ընդհովանեալ  
յոգնախնամ բարերարիդ լինելով իմ իբ-  
րև երկնաձիր բաղմազան պարգևօք բարգա-  
ւաճեալ, ցնծացեալ բերկրէի յաւէտ խըն-  
դութեամբ, իբրև յադին դարաստանի կար-  
ծելով զիս ինքնս, և մանաւանդ մեղրածո-  
րան բերանոյդ պերճիմաստ բանիցդ քաղց-  
րութիւն համեղացուցանէր զքիմս իմ հո-  
գեւորապէս. որ աննախանձաբար ոտնէիր ար-  
կանել ինձ զբանքարն Աստուածային հոգ-  
ւոյն պարգևաց, անխոնջ աշխատութեամբ  
և բաղմատքուն սիրամառ ջանիւքդ զարգա-  
ցուցանել զիս 'ի վարս Աստուածահաճոյս  
և 'ի բարեկրթութիւնս քաղաքական, լինել  
ընդունարան Աստուածային շնորհաց: Իսկ  
մինչ զիս լուսաւորող ջահդ բարձար վերա-  
ցար յինէն 'ի դպրոցէ աստի հեռանալով,  
անմխիթար մնացի իբրև 'ի բանտ խաւարի.  
և մանաւանդ փոխան այնր ուրախութեան



և ցնծութեան առաջնոյ, մթազին թանձրա-  
մած ամպոց շուրջ պատեալ այժմ զինև 'ի  
տուայտանս տխրութեան տանջիմ տոչորիմ  
տարաբաղդիկ անձամբս անմխթար: Ա՛հ եղ-  
կելի անձին իմում, ասիսո՞ս բազմապատիկ, զի  
այսուհետև ամենայն զուարճութիւնք աշ-  
խարհիս և զբօսանք 'ոչինչ են համարելի  
յաչս իմ, և ո՛չ կարեն մխթարել զիս եր-  
բէք. որ վասն բազմաթիւ մեղաց իմոց հա-  
մարիմ եկեալ զայս տարաբաղդութիւն յիս  
'ի վերուստ: Եւ, յլ արդ՝ աղաչեմ զբարերա-  
րութիւն ձեր, զի գոնէ ձերդ վաղեմնա-  
կան սիրալիր սրտի հաճութեամբ յօժարես-  
ջի՛ք առաքել շնորհազեղ մատանցդ պեր-  
ճիմաստ պանծալւոյդ գրութիւն խրատաբա-  
նութեան, և ընդ նմին քաջողջութեանդ  
ուրախառիթ լուր. որ հոգեկան պաշար մեծ  
են նուաստիս կենդանութեան. իբրև զեղի-  
ական երկնաձիր կրկին հոգի յիս զետեղեալ:

Ո՛ղջ լեր յամս յոլովս անդորրական  
կենօք 'ի մխիթարութիւն ուսումնասեր ման-  
կանց ազգիս, եւ ինձ նուաստագոյն յետ-  
նորդ ապիկար աշակերտելոյս

ՅԱԿՈՒԻՍ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

ԻՐԲՈՒ ԹԷ ՎԱՐԺԱՊԵՏ ՈՄՆ  
ՅԱԶՈՐԴ ԵԿԵԱԼ Է Ի ՏԵՂԻ ԱՌԱՋՆՈՅՆ

ՊԵՐՃԻՄԱՍՈՒ ՈՒՆՈՒՅԻՉ.

Փառք Մատուծոյ ամենակալին ամենայն  
դոհունակութեամբ. զի ահա յաւուրս յայ-  
սոսիկ նախախնամութեամբն իւրով արժա-  
նացոյց զքաջիմաստ պատուելիդ հանդիսա-  
նալ յայս ինչ դպրոցի դասատու լինել  
հայկաբանութեան, զոր 'ի վերուստ 'ի տեառ-  
նէ ամենակալէ գիտեմք զայս ընտրութիւն.  
զի գիտէ տէր զհաճոյս իւր ընտրել և զար-  
ժանիս. և եթէ ոչ տէր շինէ զտուն իւր, 'ի  
նանիր վաստակին շինողք նորա. քանզի ըստ  
նմին օրինակի գիտեմք և զինուորեալ եկե-  
ղեցի հոգեգումար Քրիստոսական մանկը-  
տին, որով պայծառագոյն զարգարի և Մատ-  
ուածարնակ աղօթարան նիւթական սուրբ  
Լիկեղեցի 'ի շինութիւն հաստատութեան.  
որպէս ասի 'ի սուրբ աղօթագիրս 'Սարե-  
կացւոյն, անբանն 'ի բանաւորէն կառուցեալ  
և 'ի նմին օժանդակեալ: Մեծահամբաւ ճո-  
խիմաստ հոգեդարման ուսուցչիդ աշխատու-  
թեամբ ունի զարգանալ դպրոցս այս. քան-  
զի դուք համարիք ձեռք Մատուածային զօ-  
րութեան և շնորհապարզ և գիտութեան, ո-

րով ունին մուծանիլ 'ի հմտութիւն կարեւորաց ամենայն դպրոցասուն մանկունք աստանօր : Այլ համարիք աչք լուսափայլ . որով հողազանգուած մարմնեղէն հոյլք բանականաց ակներե ունին տեսանել զխորութիւն խորիմաստ ներհուն գրոց պերճութեան . և 'ի ներքուստ յերկրէ յերկինս իբրև ընտիր հեռացոյց զօրեղ գիտակալ յերկինս յառեալ , և սրաթև ճեմել նոյն իսկ քերթողական արհեստիւ գիտութեան ձերոյ 'ի դպրութեան կենաց խայտալ յաւիտեան անջնջելի յիշատակաւ : Այլ պայծառանշոյլ ճառագայթաւէտ լապտերաւ ձերով ճոխիմաստ գիտութեամբ հայկազեանս գրոհի մանկունք՝ աստ և 'ի հանդերձեան 'ի լուսափայլ մխիթարութեան լինելեմք աներկբայ . և նոյն լապտերիդ լուսով այսուհետև 'ի խաւարէ տգիտութեան հեռացեալ 'ի լուսաճեմ գիտութիւնս ունին զարգանալ , և իբրև 'ի Սովսիսէ զբարերար կամս ամենակալին իմանալ , հմուտ գոլ սըրբազնասուրբ փրկարան սուրբ Աւետարանին կենսունակ բանիցն : Այլ սխալիմք եթէ համարիցիմք միտք լուսասփիւռ քեզապիսի զանձինս , որ մեծ իմն է գործիք բանականաց միանգամայն և թագաւոր 'ի վերայ անձանց . և 'ի վերայ տասանց զգայութեանց ներքին

և արտաքին . քանզի սովաւ յամենայն ու-  
րեք տիեզերաշրջիկ լեալ 'ի յերկինս և 'ի յերկ-  
րի , ընդ բարձրութիւնս և ընդ խորութիւնս  
անիմանալի մեծաչափ քանակութիւնս արա-  
րածոց վերասլացեալ մարդիկ , յար 'ի զըն-  
նին փութան անյագուրդ , իրազէկ լինել բը-  
նազննութեամբ անցելոցն և ապագայից և  
ամենայն գոյից յանէից տարերացն զօրու-  
թեան , որով լուսափայլ պայծառանալ . քան-  
զի զկարևորն հոգւոց՝ ողջամիտ վարդապե-  
տութեամբ անձանձիր ծանուցանել զկեն-  
սախորախոյս բանս ազգասիրական եռանդի-  
յօժար էք շտեմարանել 'ի միտս մանկանց :  
Որք ահա 'ի սուղ ժամանակի ունին զար-  
գանալ 'ի բարի կրօնս Մատուածահաճոյս և  
յազգի ազգի մակացութիւնս սուրբ հոգւոյն  
շնորհացն պարգևօք . որք մերձենան առ քեզ  
իբրև յաղբերէ տանուլ զանմահականն ջուր  
զովացուցիչ հոգեկան , զորս ընկալեալ ու-  
նիք 'ի հոգւոյն պարգևաց առատապէս : Ուս-  
տի զովացցին յաւէտ խնդութեամբ մանկը-  
տիս արամեան այսմ թաղիս . աճեսցին և  
զարգասցին և բարգաւաճ ճոխասցին ար-  
դիւնաւոր գործով 'ի մեծութիւն հասանել  
հոգևորապէս . որք ունին զանդաստանս իչ  
փշափեր հեղձամղձուկ դբաղանաց . այլ տա-  
կաւին երկիր բարի և պարարտ :

Երանել երանեմ զայնպիսին զի բարերադրութեամբ իւրեանց 'ի ձեռս այսպիսի խնամառատ և գթասիրտ սուուցչի արժանացան պատահիլ, վասնորոյ բազկատարած խնդրեմք զցայգ և զցերեկ Մատուծոյ ամենակալէ, զի զամենայն աւուրս անփորձ և անսասան ողջ կենօք և առաքինի հոգևով պահեալ զքեզ և զնոսա, ծագեցէ տէր Մատուած 'ի սիրտս նոցա զչոյս իմաստից յաւէտ սիրոյդ սլաքաւ բարեկարգ սուուցչիդ հոգեդարման բանից մշտափայլ լուսաւորութեամբ վսեմաբանիդ . որ լուսաճաճանչ գիտութեամբ ջահաւորեալ բազմատեսակ հմտութեանց նմանօրինակ խոհեմագոյն մտաց միսիթարութիւն մեծ ես 'ի մայրաքաղաքիս այսմիկ համայն դպրոցասուն տըղայոց, և համայն այնմ թաղի դրակակցաց, որովհետև բարեհաչակ անուանդ պայծառութիւն յամենայն ուրեք պանծացեալ տեսանի արժանապէս :

Ն. Ծ. ՅԱԿՈԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

Սէր իմ.

Ճոյժ տրտմեցայ արդարեւ յոյժ . յորժամ լուայ նախանձիլ քո 'ի վերայ այլոց բարեաց, թէ ընդէր այլք մխիթարին և փառաւորին բարեօք . զի՛նչ ասել է, թէ նարժան էր այն նոյն աստիճանի մեծութեան . յոր բաղդաւորութեամբ իմն գիպեցաւ : Ո՞չ կամիս երբէք դու զբարիս այլոց, ափսոս զոր կրես զանուն քրիստոնէութեան . է՛ արժանաբաղդ՝ ամենայն բարեաց զի՛նքդ միայն արժանի համարիս, զայլս ո՞չ . այո՛ ո՞չ . քանզի 'ի բարեաց անտի զորս կարէ նախանձն 'ի բաց զատուցանել որոց ամենից իցէ համարեալ զինքն արժանի . և ո՞չ մի . զոր իբրև յաւելուածոյ սրտի խօսելով յայտ առնես զսերմն նախանձ սրտի քո . յորմէ բեղմնաւորին ո՞չ սակաւ մոլութիւնք ընդ դէմ Լստուածաւանդ եղբայրական սիրոյ . զորս թուեցից այժմ քեզ 'ի լուր համառօտարար փոքր 'ի շատէ . գուցէ՛ կարացից այնու 'ի դարձ և 'ի զղջումն համոզել :

Ո՞չ ապաքէն նախանձն էր պատճառ յորժամ կտայէնն եղև եղբայրասպան : Ո՞չ ապաքէն նախանձութեամբ որդիք Յակոբայ վաճառեցին զեղբայր իւրեանց զՅովսէփ, որպէս և ասէինն . միթէ թաղաւորե-

լով թագաւորեցես 'ի վերայ մեր, կամ տիրելով տիրեսցես մեզ. (որում երկրպագին յետ ժամանակին քանիցս ակամայ): Ասն որոյ սպանութեան խորհեցան զխորհուրդ, և ասնն. ընկեսցուք 'ի մի 'ի գրոց աստի, և ասացուք եթէ գազան չար եկեր զնա: Այս ապաքէն նախանձութեամբ շրէայք մատնեցին զանպարտակիրն Յիսուս 'ի ձեռս Պիղատոսի և Վայիափայ, 'ի խաչ հան 'ի խաչ հան զգա՝ բարձրագոչ ձայնէին բարբառ. քանզի զառաջինն խորհեցան և ասնն նախանձութեամբ. թէ աշխարհ ամենայն զհետ նորա գնան. և յետ փառաւոր յարութեանն փութալ փութային խափանել զինքնազօր յարութիւնն, սուտ համբաւ հանելով 'ի ձեռն տիրապահ զօրաց բազում կաշառօք. զարծաթ յոյժ ետուն զօրականացն ասէ աւետարանիչն. բայց յետինն չար քան զառաջինն լինել որպէս կասկածէինն, եղևարդարև նշաւակ արժանապէս, տիեզերալոյս ամենափառաւոր յարութեամբ Փրկչին մերոյ Յիսուսի Վրիստոսի: Այլ մանաւանդ զայս իմա՛ սղորմելի. նոյն իսկ նախանձութիւնն էր որ էարկ զսատանայ 'ի գրգիռ մահու չափ վնասել բովանդակ ազգի մարդկան 'ի յետին կատաղութիւն. որպէս ասի նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշ-

խարհ :

Այա տեսեր արդեօք . որչափ մեծամեծ  
չարիք վերընձիւղին 'ի նախանձութենէ ան-  
տի . քանզի յեօթն մահացու մեղաց գլխա-  
ւորաց մինն գոլով , անի ընդ իւր բազմա-  
յոլով զամբարձուղեշս շարեաց , այս է շա-  
րակնութիւն . ատելութիւն . ռսակալութիւն .  
բամբասանք . թշնամանք . զրկանք . անիրա-  
ւութիւն . խռովարարութիւն . մարդասպա-  
նութիւն . և այլ բազումս զորս զամենեսին  
յայն թիւնարեր ժանտասաղարթ ծառոյն  
գիտեմք լինել . յորոց մին զօրէ բաւական  
իբրև մոլեխօինդ մահագործակ լինել դիւրա-  
պէս , որոց ճաշակենն . թող թէ այսքան  
դասք սպանողաց դժնէից դահճաց : Այսն  
զի որպէս հպարտն և ամբարհաւածն խը-  
րոխտանայ անզգամութեամբ , նոյնպէս և նա-  
խանձոտն ընդ դէմ եղբօր խորամանկէ խար-  
դախութեամբ խրոխտարար . և յարուցանէ  
խռովայուզութիւն ո՛չ սակաւ . և մանաւանդ  
նախանձութիւն որչափ յոռի և վատթար գոլն 'ի  
ստուգաբանութենէ անուան նախանձ բառին՝  
յայտնի ճանաչի (նախանձ) . այսինքն նա  
ինքն խանձի , որ ունի զնախանձութիւն . իսկ  
որ խանձի՝ ո՛չ ապաքէն թարշամի այրի կամ  
կիզի և տոչորի 'ի տեսանել զբարիս այլոց .  
ո՛չ միայն ըստ հոգւոյ , այլ և ըստ մարմնոյ



'ի ներքուստ և յարտաքուստ . որ է ընթա-  
նալ իւրովի յապականութիւն մնասալիւր ,  
կենսազրաւ լինել աստէն , և 'ի հանդեր-  
ձեալն հոգեկործան յաւիտեան :

Այլ զի՝ կարելի՞ իցէ արդեօք ուր նա-  
խանձութիւն է՝ երևիլ անտիսէր եղբայրա-  
կան , 'ի ներքուստ ասեմ և յարտաքուստ  
ոչ բնաւ . քանզի 'ի սրտէ իւրմէ բնաջինջ  
արարեալ գործադիր լինի ատելութեան և  
մախանայ եղբօր իւրում մնասել տարա-  
պարտուց , որպէս ասացաք 'ի վերոյ . իբրու-  
թէ բարձրակենցաղ յաջողութիւն եղբօրն՝  
պատիժ և մահ համարի ինքեան յատկա-  
բար . որպէս ասի մահ նախանձոտին՝ բա-  
րիք եղբօր . արդ՝ տեսեր արդեօք , զի նա-  
խանձութիւնն ըստ որում հպարտութեան  
անդրանիկ է զաւակ . որպէս թէ չար ծնո-  
ղին չար զաւակ : Օի մի միայն զինքն ար-  
ժանի համարելով ամենայն բարեաց , միշտ  
բարձրացուցանել կամի զանուն իւր իրօք  
քան զամենայն մարդիկ . որ է հարազատ  
պտուղ հպարտութեան : Արդ Վասն ոչ կա-  
մի տեսանել յական թօթափել անգամ զայլս  
քան զինքն վեր , քան զինքն առողջ , քան  
զինքն հանդիստ , քան զինքն անուանի , քան  
զինքն գովելի , և այլն . թէպէտ ոչ ումեք  
մնաս ինչ կարէ առնել , և ոչ մի , 'ի նանիր

աշխատի զինքն հաշելով մաշելով : Այսան զի՛ եթէ Վստուծոյ իցէ զոր ընկալան ըզբարիս՝ ո՞վ կարէ ջնջել կամ խորտակել զնա : Աթէ տէր այգւոյն վարձատրեսցէ տասներորդ պահու մշակին համահաւասար և միաշափ՝ որո՞վ իրաւամբ կարեն նախանձիւ որք ընդ այգուցն աշխատեցան . զի՞ փոյթ է նոցա , Վստուած ում կամի պարգևէ , և ում կամի խստանայ . նոյն գու նակ զյաջողուածս տերամբ ո՞վ կարէ ՚ի մարդկանէ արգելիչ լինել , բնաւին ո՛չ :

Արդ՝ էր սակս այսպէս . որո՞յ աղագաւ այսորիկ . առ ի՛նչ . ո՞չ ապաքէն ՚ի պակասութենէ սիրոյ են , զի ուր ո՛չ իցէ ծագումն լուսոյ , անդ տիրապետէ խաւարն չգոյ , զիա՞րդ կարէ ՚ի միում տեղւոջ ենթակայանալ երկուց որակաց միանգամայն . այո՛ Աո՛ղոմոն կործանումն տան մեծ է , յորժամ տրեսցէ աղասինն , այսինքն՝ թագուհի առաքինութեանց մարգասիրական գործոց փոխան՝ ատելութեան նախանձութիւնն . այո՛ թագուհի առաքինութեանց ասեմ . այն պանծալին սէր . այն վաւերական սպեղանի ատելութեան սէր , զի՞նչ ազնիւ ոգեշահ և վեհագոյն գործս լուսանկարս ընձեռէ . Վստուծոյ և մարդկան միանգամայն սիրելի առնէ . և մանաւանդ զթշնամիս բարեկամս կա-

ցուցանէ . զբաժանեալս միաբանէ և կանգ-  
նէ . զերզծեալն շինէ և նորոգ հաստատէ .  
զդառնութիւնն անուշէ և քաղցրացուցանէ .  
զմարդիկ միմեանց խորհրդակից առնէ .  
զՄատուած յերկիր խոնարհեցուցանէ . ըզ  
մարդիկ յերկինս բարձրացուցանէ . որպէս  
զԷակորայն սանդուղք . զմիմեանս սրտակից  
առնէ 'ի ներքուստ , և գրգախառնէ յարտա-  
քուստ :

Մհալասիկ սա է որում 'ի խնդիր ելեալ  
իմ գտի 'ի պարտէզ Մետարանի , ամենա-  
վայելուչ յարմարութեամբ դրոշմեալ կնիք  
'ի ճակատս ճշմարիտ քրիստոնէից , իրրև  
զՄատուածադրոշմ նիշ նշուլազարդ լուսա-  
փայլ 'ի նշան յայտնութեան ո'չ միայն այ-  
ցելութիւն մեծի դատաւորի Նիսուսի Վրբկ-  
չին մերոյ , այլ և աստ 'ի վերայ երկրի հա-  
նուրց համայնից ակնբրև յայտնութիւն և  
ճանաչումն սովաւ լինի . որպէս և ասացան .  
յայնմ գիտասցեն մարդիկ եթէ իմ աշա-  
կերտք իցէք , եթէ սիրիցէք զմիմեանս . և  
թէ պատուիրան նոր տամ ձեզ զի սիրի-  
ցէք զմիմեանս , որպէս և ես զձեզ սիրեցի :

Մպա ունի՞ս և դու 'ի քեզ զայսպիսի սէր՝  
սիրելի . ուստի՞ գիտասցուք . յատելութեանց  
քոյ բանի՞ց . զոր ասացերդ 'ի վերոյ , ո'չ  
կսրէ բղխել 'ի միում ականէ ջուրքաղցր և

դառն . այո՛ և զայս զիտեմք զի ո՛չ կարէ լինել 'ի տատասկէ թուզ . և 'ի փշաբերան զաստանէ խաղող , ուր ո՛չ իցէ սերմն բարի Մատուածաւանդ սիրոյ մշակեալ Մատուածային շնորհաց :

Նուսկ յետոյ որ ունիս զատելութիւն , ապա բնաւին չիք 'ի քեզ մասն ինչ սիրոյ եղբայրական :

Բանզի որպէս գրեալ է 'ի զիրս թէ 'ի բազմանալ անօրէնութեանց ցամաքեսցի սէր բազմաց . ուրեմն ո՛չ կարես երբէք համարձակաձայն գոչել առ քեզ սէր անուն Հիսուս զՄատուած մերձաւոր և սիրահար առնել ընդ Սողոմոնի աղաղակելով . թէ կարգեցէք 'ի վերայ իմ սէր , և յայլում թէ զարթուսջի՛ք զսէր . որ շունիցի զգութ , գութ ո՛չ կարէ գտանել յայլմէ ումքէ եղբայր , և որ շունիցի զսէր , նոյնպէս ո՛չ կարէ Մատուածային շնորհաց հոգւոյն լինել ենթակայ :

Աւտի եղբայր իմ՝ աղաչեմ 'ի բացկաց 'ի մահաբեր յատելութենէ գործոյդ յայդմանէ . վասն զի ո՛վ ոք մեղաւ՝ և ո՛չ զղջացաւ , և ո՛վ ո՛ք զազրացաւ՝ և ո՛չ ամաչեաց . հարկ է՝ զի 'ի բառնիլ բարեաց հասանին պատկառանք . նոյնպէս՝ և 'ի յայտնիլ շարեաց ժամանէ և ամօթ . ապա մի տար

տեղի շարին այնմիկ 'ի քեզ արմատանալ, այլ  
'ի բաց խլեան արդէն զկեղտ անուն յոռու-  
թեան իբրև զգծնիկ մնասառիթ. և թո-  
թափեան 'ի քէն զայդ մրուր դառնութեան  
զմէգ խաւարին, որ կարող է խանձել զքեզ  
'ի սուղ ժամանակի:

Ապա յետ այսքան բանից իմոց յոր-  
դորանաց և սրբազան դրոց վկայութեանց,  
քեզ թողում հնարաւորել ընդ Աստուած-  
սիրութեան ունիլ և զեղբայրսիրութիւն,  
սիրելի լինել Աստուծոյ և մարդկան 'ի բաց  
թողեալ զատելութեան բարբանջմունս և ըզ  
գործ որ արգելի՛չ է՝ ո՛չ միայն շնորհաց  
Աստուածայնոց, այլ և մարդկեղէն սիրալիբ  
պարգևաց:

Ն. Ծ. ՅԱԿՈԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

---

ԽՐԱՏ ՀԱԻԱՍԱՐԱԶԱՓ ԸՆԿԵՐԻ

Վ Ա Ս Ն Ա Մ Բ Ա Ր Տ Ա Ի Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն

Սիրասնունդ բնկեր.

Օր որպէս հարկ և պատշաճ է մեզ ան-  
յալ խրատու ուսուցչի մերոյ, որ նա ինքն  
համեմատ սուրբ Դրոց խոնարհութիւն քա-

րողէ որչտ 'ի լուր ամենեցուն աշակերտն .  
 Լոցս . և վերապատուէ զխոնարհս . և մա-  
 նաւանդ Մտուած ամենակարող սիրելով  
 սիրէ արարչական խնամով և ընդունի 'ի  
 խնամս իւր աստ և 'ի հանդերձելումն 'ի  
 սուրբ Արքայութեան , որ խոստացեալ է  
 բարձրացուցանել զխոնարհս ամենայն՝ երկ-  
 նային փառաց պսակօք : Իսկ դու ո՞ւմ կա-  
 միս կոչիլ աշակերտ . զի յերեկեան աւուր  
 այնպիսի ամբարտաւանութիւն բարբառելով  
 առաջի այնց բաղմականաց , որով դուցէ թէ  
 համարեցար ատելի յաչս ամենեցուն . ըստ  
 որում ամբարտաւանից չի՞ք համարումն .  
 որպէս խոնարհասէր մարգարէն Վաւիթ ա-  
 պացուցարար յայտնէ յասելն . որ ամբար-  
 տաւան էր աչօք և ագահ սրտիւ , ընդ նմօ  
 և հաց ո՞չ ուտէի . այլ Մտուած ո՞րպէս  
 հաճի ամբարտաւանից տալ զչնորհս իւր  
 մարդասիրութեամբ , բնաւին ո՞չ . և մանա-  
 ւանդ հակառակ ևս է ամբարտաւանից . որ-  
 պէս ասէ . տէր ամբարտաւանից հակառակ  
 կայ , տայ շնորհս խոնարհաց : Ո՞վ ցան-  
 կալի խոնարհութիւն՝ իբրև մաքնեստիս առ  
 ինքն ձգէ ամենացանկալի շնորհս Մտ-  
 ուածային 'ի վերուստ և զսէր մարդկային .  
 քանզի ուր է խոնարհ , անդ է Մտուածա-  
 յին շնորհաց հոգին , և առատահոս անձ .

րևէ զանազան բարիք խնամոց 'ի վերայնո-  
րա . թէ 'ի դասուց աշակերտաց իցէ , յու-  
սուցչէ իւրմէ գովաբանք . թէ 'ի դասուց զա-  
ւակաց' 'ի ծնողաց իւրոց . թէ 'ի դասուց  
սպասաւորաց' 'ի տէրանց իւրեանց :

ՅԱԿՈԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

---

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԽՐԱՏԱԿԱՆ  
Ա Ռ Ա Ն Գ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Գ Ի Ն Ե Մ Ո Ղ Ի  
Ափսո՛ս անգրութեանդ բնրեկամ .

Որ զդուռն հայրական խնամոց սիրոյ քո  
փակեալ զօրեղապէս միայն զքոյինսդ խոր-  
հիս զուրախութիւն և զհանգիստ զուարճա-  
խառն զբօսանօք հանապազօրեայ . զի 'ի բա-  
զում ժամանակաց հետէ անխնամ 'ի բա-  
ցի թողեալ ես զզաւակունս քո . վասն մարմ-  
նաւոր պիտոյից կենաց ապրուստի , թէ 'ի  
կերս և թէ 'ի հանդերձս . և նոքա բլիթ մի  
հացի անգամ կարօտ լեալ 'ի փշրանաց սե-  
ղանոյ ազգականաց կերակրիլ դանդաջին .  
իսկ դու անխոհեմութեամբ զօրն զողջոյն 'ի  
զբօսանաց տեղիս վարեալ զեղխութեամբ

և ընդ երեկս 'ի մտանել արեգական գեռ  
'ի փողոցս և 'ի գինետունս պարայածեալ 'ի  
խաւարչուտ ժամանակի զերկոսին ձեռս քո  
ունայն փարտելով, եկեալ 'ի տուն քո 'ի  
նինջ մտանես ամենեին անհոգ գոլով զըն-  
տանեաց քոց քաղցելոց . և մանաւանդ եր-  
բեմն 'ի վերագառնալն 'ի զբօսանաց շափա-  
գանց արբեալ գոլով, 'ի խնդրել նոցա 'ի  
քէն հաց, իբրև ամեհի գազան զեղեգումն  
արկանես 'ի մէջ տան գանահարութեամբ  
յագեցուցանել, աներկիւղ գոլով յԱստու-  
ծոյ և անպատկառ 'ի մարդկանէ, որ անա-  
ռակութեան է յայտնի նշանակ :

Աթէ շունիս կարողութիւն կերակրել  
զնոսին բարեկամ՝ ուստի՞ հնարաւորիս և կա-  
րողանաս տալ նուագածուաց . և բազմա-  
խորտիկ մշտակաց սեղան քո որ 'ի տեղիս  
զբօսանաց անդրամ՝ իցեն արդեօք :

Իմացայ իմացայ՝ ժլատութիւն 'ի պի-  
տոյս, շռայլութիւն յանպիտոյս . աւաղո՛ւկ  
ես եղբայր աւաղուկ, և գործք քո չարաշուք .  
քանզի անխիղճ և անհաւատի է գործ, որպէս  
Մաքեալն ասէ, եթէ որ ընտանեացն խը-  
նամս ո՛չ ունիցի, 'ի հաւատոցն ուրացեալ  
է, և առաւել քան զանհաւատսն է : Արդ՝  
ահա Մաքեալն եմուտ աստ քեզ 'ի յանդիմա-  
նութիւն և 'ի խրատ, այլ ևս զի՞նչ բաւա-



կանութիւն յիս քան զայն ազդողագոյն խօս-  
սիլ զբան՝, բերան Աստուծոյ կոչեցելոյ յանձն  
արարեալ զսիրելիդ, հարկագրիմ խփել զիմ  
բերան. զի նոյն երկիւղալիբ բան առաքե-  
լոյն բաւական գող 'ի խրատ, կակղացուսցէ  
զթանձրագոյն խիղճ քո յուղլութիւն վա-  
րուց և 'ի գութ խնամոց զաւակացդ :

ՅԱԿՈՐ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

ԽՐԱՏ

ՎԱՍՆ ԴԱՐՁԻ ԵՂԲՕՐ ԱՊՍԱՄԲԻ

Սիրելի եղբայր.

Այս ի՞նչ անձանաչ ծնողասիրութիւն  
է. և զի՞նչ որդիական պարտաւորութիւն,  
զոր տեսանեմ 'ի քեզ մտացի : Այսքան ժա-  
մանակ ընդէ՞ր զողորմելի մայր քո 'ի բաց  
թողեալ և զբնակութիւն քո հայրական,  
յայլում ուրեք բնակիս ասպտամբ գող 'ի  
նոցունց. ուրեմն ընդ դէ՛մ կալեալ ես ծը-  
նողասիրութեան օրինաց Աւետարանականի  
և Սովսիսականի, թէ պատուեալ զհայր քո  
և զմայր. զի երկայնակեաց լինիցիս 'ի վե-  
րայ երկրին բարութեան : Հարցից, ո՞ր ար-

գեօք յապստամբից գտաւ առանց փորձա-  
նաց կամ վնասուց . տկն յանդիման օրի-  
նակ ունիմք առաջի մեր զԱրիստղոմ Վաւ-  
թեան և զսովալուկ զանառակ որդին . որ  
Ղեւտարանի . որ քեզ նման թողեալ ըզ  
ժառանգութիւն իւրեանց հայրական , և 'ի  
խնամոց ծնողաց հրաժեշտ տուեալ փախեան  
յօտար աշխարհ պանդխտութեամբ կենցա-  
ղավարիլ : Օխարդ մոռացար բազմազան խը-  
նամածութիւն նոցա . որ 'ի մանկութենէ  
անտի անդստին քանի' քանի' տառապանաց  
ներքոյ անկեալ կարևորս անձին քում հո-  
գալ փութային , այժմ փոխան շնորհակա-  
լութեան և հնազանդութեան սիրոյ՝ ապրս-  
տամբութեան նշան ակներև ցուցանես 'ի  
քեզ , մի եղբայր մի . չէ' այդ գործ բարե-  
անունդ մանկանց . այլ վատահամբաւու-  
թեան է նշանակ . որպէս կրտսեր եղբօր  
քում ինձ նուաստիս մեծ տրտմութեան ե-  
ղև առիթ մինչ լուայ դքէն զայդ տմարդու-  
թիւն . ուրեմն քեզ և ինձ խորհելով զբա-  
րիս հաճեցիք երթալ ընդ իս 'ի հընա-  
զանդութիւն ծնողաց Քերոյ 'ի բնակարան  
հայրական առանց յամառութեան : Իսկ ե-  
թէ գուցէ զայրացեալ իցեն նոքա , պատ-  
րաստ եմ աւասիկ բարեխօսել առ նոսա վասն  
քո , զի կրկին տեղասցի 'ի վերայ քո զա-

նազան խնամք նոցին որդեսիրական որպէս  
զառաջինն : Ուրեմն աւասիկ սպասեալկամ  
աստանօր , զի սիրայօժար փութով 'ի գալ  
տոմսեկիս ժամանեցես առ այսր անպատ-  
ճառ , զի երթեալ 'ի միասին առ ծնողս մեր  
գործեսցուք զՇատուածահաճոյ զայս գործ  
ծնողասիրութեան և հնազանդութեան :

Ողջ լեր :

Ն. Ծ. ՅԱԿՈԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ՀՈԳԱԲԱՐՉՈՒ ԻՇԻԱՆՍ

Ի ՆԵՐՈՒՄՆ ՅԱՆՅԱՆԱՅ ԻԻՐՈՅ

Յոգնախնամ հոգաբարձուացդ բարե-  
րար ձեռաց համբոյր խոնարհական վերա-  
նուիրեմ յաղերսանս .

Միտոս եղկելի անձինս . ափսոս դժբաղ-  
դիս . ո՞ մխիթարեսցէ զիս այսուհետեւ . որ  
իրբե 'ի մահազեկոյց բանտի բանտարգեալ ,  
և իրբե 'ի բազմակոհակ ալեաց ծովու խոր-  
տակեալ մեծի տաղնապաւ տառապանաց 'ի  
տուայտանս տխրութեան տանջեալ տուր-  
րիմ տրտմալից սրտիւ անմխիթար . քանզի

յօրէ յորմէ մինչ յերկար ժամանակ Մատ-  
ուածաւանդ եղբայրսիրութեան խայտայի ընդ  
դասակցաց իմոց 'ի վերնայարկս իմաստա-  
ճեմ դասարանի յնծալով, յանցեալ աւուր  
յանկարծ յանցաւոր դտեալ իմ, արժանա-  
պէս անարգեցայ և պատժեցայ իրաւադա-  
տութեամբ 'ի ներկայութեան առաջի մեծի և  
իրաւախոհ բարերարացդ, վա՛յ ինձ հայրա-  
խնամ տեա՛րք իմ: Այս մանաւանդ՝ այլ իմն  
կսկիծ դժնդակ այս եղև սրտիս, զի փոխան  
որդեսիրական բարերարութեանց ձերոց  
բազմազունից՝ խորթաբարոյ ապերախտու-  
թեամբ ընդէ՞ր վշտացեալ դայրացուցի զգը-  
թառատ սիրտ ձեր բարեսիրաց խոչնդակն լի-  
նել գթասիրական տեսչութեան ձերում:

Ա՛հ ո՞ւր այժմայն մշտարորրոք ձեր նախ-  
կին հայրախնամ սէր անդստին՝ դգուանօր  
հանդերձ, այժմ բողբոսվին բարձեալ վե-  
րացեալ և մեկուսացեալ տեսանի յանար-  
ժան ծառայէս ըստ յանցանաց իմոց. ո՞ւր  
այն հանապազօրեայ դասառութիւն իմ կեն-  
ցաղօգուտ և համեղաճաշ հոգեկեցոյց դի-  
տութեան. մեծահանգէս քերթողութեան հո-  
ղեպարար բանից ունկնդիր լեալ 'ի զար-  
գացումն հոգեկան և մարմնական, նմանօ-  
րինակ կենսատունկն դրախտի բազմառատ  
և բազմարդիւն պտղաւէտ ծառոց հանգու-

նատիպ նախաստեղծից : Ո՞րք և այն հանա-  
պազօրեայ կենակցութիւն ընդ ճոխիմաստ  
ուսումնասէր դասակցաց իմոց , զի արտաք-  
սեցայ 'ի յնտին այս վիճակ նատիլ ընդ ման-  
կըտիս փոքու 'ի վերուստ 'ի վայր վանե-  
ցեալ անարգաբար . զուրկ և թափուր 'ի  
յորդավտակ խնամոց բազմազան գիտու-  
թեանց պերճիմաստ ուսուցչաց իմոց , իբրև  
'ի խաւարչտի խորխորատ տեղուղ տրտմա-  
պարոյր ամպոց ներքոյ սովալլուկ լեալ 'ի  
հոգեբոյժ բանից , հաշիմ մաշիմ 'ի լալիւն  
'ի լիճ ջերմաջերմ յորդահոս արտասուաց :

Ըրդ՝ իցէ՞ արդեօք այսուհետև ինձ որ ա-  
ւետարեք նորոգ կանգման իմոյ յանկմանէս  
այսու , յառաջնապարգև տեղին բերկրանաց  
յուրախութիւն անզուգական բազմատխուր  
սրտիս տեսանել զբաժանեցեալս յանցանաց  
միջոցաւ վերստին կցեալ . իցէ՞ արդեօք տե-  
սանել զյոզնաթախիծ սիրտ վշտացելոյս  
բերկրեցեալ , նա զի՝ զանկեալս 'ի շնորհա-  
կան խնամոց ձերոց դարձեալ կազդուրեալ :  
Ո՞ր էք Մ. դամ Եւայ նախահայր և նա-  
խամայր մեր , իբրև զիս անհնազանդութեան  
մեղօք զառածեալք . զի՞նչ արարից ար-  
դեօք . ձեզ ևս այսպիսի դաճնաղէտ վտանգ  
պատահեցաւ արդարև . աւասիկ և ես հո-  
գածինս Եւայածին գուրով յորդուոց և 'ի թո-

ուանց զարմից ձերոց համարեալ, անձկամ կերպառութեամբ գործոցդ ելանել 'ի լոյս 'ի միսիթարութիւն տառապելոյս, այն է ժամանել 'ի հաշտութիւն հայրախնամ տեարց իմոց, և մուծանիլ 'ի նախկին խնամածութիւնս նոցա, յորս փափաքիմ յաւէտ անձկութեամբ:

Ո՞ւր ես Մուսայիցդ Մուսքելոց ծերունազարդ Պետրէ՛, անճառ բանին խորին խորոց հաւատարիմ խորհրդակիր՝ զիմորդ զիմ նմանութիւն եղեր վշտակիր վէճդ սուրբ Ակեղեցւոյ անդրդուելի, մինչ յայնմ խոսվայոյզ մրրկածուփ ալեաց ծովու մերձ էր լինել քեզ հեղձամահ, ո՞ր ձեռք եհաս քեզ յազատութիւն յայնմ վտանգէ, և ո՞ր յեւարան եղև քեզ օգնական՝ 'ի կանգնումն յայն՝ գառնաղէտ և խաւարապատ ժամանակի յաւուր տիրամարտութեան 'ի խարխափանս խաւարասէր շրէից, յորժամ քեզ վիմիդ եղև շարժիլ 'ի յաղջկանէ՝ մատի՛ր յիս 'ի խրատ, աղաչեմ զի՞նչ արժան է և ինձ առնել:

Ո՞ւր ես գործակից իմ և ընկեր վայրագասուն եղբայր, որ ինձ նման եղեր մտախաբ անձնահաճ ապստամբութեամբ թողեալ զժառանգութիւն բարգաւաճութեան հօրդ խնամոց, հովիւ եղեր տածողական ըզ

Հօրանս խողիցն ամայարնակաց . որով ընկալար զիմս վայելչականութեան անուն աւառակ որդի առ ձայնեալ յառածաբանութեան տեառն յընդհանուրս հռչակել անարգաբար : Արի ընդ միմեանս փարելով այսու անուանակցութեամբ մտցուք 'ի խորհուրդ , դու որդի միջոցաւ կրկին խայտացեր 'ի հացալից տան հօր քում բարգաւաճիլ . նովաւ և ես նոյնհետայն կողկողեցայց խոնարհաբար , փութամ ճեպիմ վերարժանանալ նորոգ պատուաստիլ ընդ դասակիցս և 'ի խնամս գթառաւ հարց իմոց :

Արդ՝ որովհետեւ ընդ կարեօք մեղանչականաց մտեալ ապերախտս անկայ 'ի տըղմալիբ գուբ մեղաց իբր նաւաբեկութեամբ իմն ընդ ամենի ալեաց ծովածուփ աշխարհիս . սխալեցայ յանցեայ ապստամբեցայ ընդ դէմ բարեբար կամաց ձերոց հակառակ ընթացայ . բայց արդ՝ վսեմայորգ բարեգութ տեարբ իմ՝ Քրիստոսաւանդ լաստին ապաշխարանաց պարտեցայ կանգնիլ ըստ իմաստնոյն , թէ շրջեալ ընդ ալիս գոյզն լաստին ապրեցան . այս էր նաւաբեկութիւն զառաջինն առ մեզ սերեալ 'ի նախաստեղծիցն սկզբնական մեղաց պատճառաւ , յորմէ ազատեցաք մկրտութեանն լաստիւ : Աւ յերկրորդունն նաւաբեկութիւն՝

որ եղև և լինի 'ի ձեռն ներգործական մե-  
 զաց՝ կենարար խաչափայտին Քրիստոսի  
 շնորհեցաւ մեզ փրկութիւն, որով յանո-  
 խակալութիւնն Մտուծոյ ապաւինեալ, հա-  
 սանել եղև յազատութիւն: Օի հաշտեալ  
 եմ ընդ քեզ տառապեալդ և խաղտեալդ  
 ասելով՝ կոչէ առ ինքն այսպէս. եկայք առ  
 իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք և ես  
 հանգուցից զձեզ. նոյնպէս և յառակս Սո-  
 ղոմոնի, որ ոք իցէ անզգամ եկեսցէ առ իս.  
 և թէ թողէ՛ք զանզգամութիւն՝ և կեցջիք.  
 ահա ես անզգամս մեղօք բեռնաւորեալ մա-  
 նուկս մեղանչական տարտամական և վարա-  
 տական՝ ըստ հրամանի տեառն թողուլ հընա-  
 րաւորեցայ զիմս զանզգամութիւն զղջմամբ:  
 Օի ըստ որում երիս տեսակս լինի մեղան-  
 չելն, սրտիւ, բանիւ, և գործով. նմանապէս  
 երեք տեսակօք շնորհեցաւ մեզ բուժումն  
 յազատութիւն յաւիտենական պատժոց,  
 սրտին՝ է գարշիլ 'ի մեղաց: Ք. ամբաստա-  
 նել բանիւ, Լ. և Ք. դատակնութիւն գործ-  
 նական պատժօք, և երեքկին սրբա միով  
 անուամբ յապաշխարութեան կարգինն հա-  
 մարեալ իբրև Մտուածապարգև ապաւի-  
 նութեան տախտակ որ կալայ աւաղիկ եր-  
 կորումբք ձեռօք յերիս որակս: Քանզի  
 յախ գարշելով գարշեցայ սրտիւ զղջացեալ:



Քամբաստանելով ամբաստանեցի այսու գրաւոր բանիւս բազմապատիկ կամովին, և ամբաստանեցից անվախճան զգործս իմ բասրելիս, և զանձն իմ չարագործ: Այլ յետ երկոցունց աւասիկ կամ մինչև ցարդ ՚ի դատակնիս պատժոց անարգեալ, և սպասեմ ՚ի ներքնայարդ սրահի հոյակապ դպրոցիս յայսբան աւուր անմխիթար: Միայն ՚ի գրթութիւն և ՚ի մարդասիրութիւն ձեր ապաւինեալ զի գուցէ ներողամիտ մարդասիրութեամբ ձերով նկատեալ զայս խոստովանական զղջման իմոյ զդարձ, ընկալջիք զանզգամիս և զանառակիս զայս աղերսագրութիւն փանաքի՝ ՚ի վերնայարկ ուսումնարանի քաղցրաճաշակ գիտութեան սեղան վերարժանացայց ճանապարհորդել ՚ի մխիթարութիւն տառապեալ սրտիս, զօրէն իսրայէլեան բանակին՝ որ ՚ի յերկիրն աւետեաց հասանել ցանկային ՚ի մխիթարութիւն, ասեն, երթիցուք ՚ի ճանապարհ երից աւուրց, զոր երից աւուրց բանիւ՝ մեղաւորաց յայտնապէս ցուցանեն զշափ և զկանոն, զզմամբ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ կարէ որ յամենացանկալի օթեան սուրբ Արքայութեան հասանել, ՚ի ձեռին ունելով և զայս պաշար կամ լապտեր աղօթից, պահոց, և ողորմութեան, որպէս արդէն ՚ի

տնօրինութեան փրկչին եղև տեսանել զապացուցութիւն աւետեաց վերնոց . երից մեռելոց յարութեամբն , որք աղջիկն 'ի տան , երիտասարդն 'ի քաղաքի դրան . Ազգարօսն 'ի գերեզմանէն : Մէ եթէ իցէ և ինձ տեսանել երից վերոյիշեալ գործառնութեամբ իմով զաւետամատոյց ճանապարհ ներդուութեան 'ի բարեգութ բերմանց սրտից ձերոց , որում ակնապիշ դիտմամբ ակն ունիմ անձկանօք : Արոյ վասն աղերսաբարբառ բանիւս այսու համարձակեցայ դիմել առ ձերդ հայրախնամ վսեմափառութիւն , ընդ անառակ որդւոյն օրինակաւ , մեղայ գոչելով . քանզի ո՞վ ոք դիմեալ կալաւ զեղջերացն սեղանոյ այսր սրբութեան և ոչ առ ժամայն պրծեալ 'ի պատժոց անարատ գլտաւ :

Ապա այսքան նախատանաց տկարիս համբերութիւն ապաշաւանաց բաւական համարեալ գուն 'գործել փութասջի՛ք ներումն շնորհել տղայական յանցանաց իմոց , և վերստին ընդունել 'ի խնամս ձեր հայրական սիրով որպէս զառաջինն , աղաչեմ :

Ն. Ծ. Բարեացակն

ՅԱԿՈԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

Մտերի՛մ բարեկամ.

Սե՛ծ ցաւ և անմխիթար տրտմութիւն  
 արտի պատճառեաց ինձ նուաստիս շարա-  
 գուշակ լուրն այն, զոր ծանոյց ինձ ոք 'ի  
 բարեկամաց քոց զբանտարգելութիւնդ յա-  
 դագս ուրանալոյդ զպարտիս քո այն ինչ  
 վաճառականին. որով և մեծաւ տառապա-  
 նօք 'ի թշուառութեան վիճակի լեալ տրտ-  
 մազգեաց նեղիս այդր անմխիթար և անօգ-  
 նական յուժեքէ. մանաւանդ անտես 'ի ծը-  
 նողաց և 'ի բարեկամաց քոց. թէ և ար-  
 ժան: Վանզի խստասրտութեան է գործ  
 զոր առնեսդ անիրաւարար զրկել զընկեր  
 քո. և դու պարտաւորեցար յանգթութեան  
 վարակիլ 'ի նոյն և խոշտանկիլ արժանա-  
 վայել դատակնքաւ. տեսն՞ր ապաքէն զար-  
 ժանաւոր հատուցումն անիրաւութեանդ փո-  
 խան. ո՞վ ուժգնակի զօրութիւն բողոքական  
 ձայնի զրկելոյն, իբրև սրասլաք ուղղակի  
 վերասլացեալ յերկինս շտապաւ հասանել  
 առ բարձրեալն ձայն աղաղակի նորա բո-  
 ղոքել 'ի դատաստան. որ ասէ զրկեալն 'ի  
 ձէնջ բողոքէ յերկինս առ իս. ո՞վ մեծի  
 մարդասիրութեան իւրոյ. զորմէ վկայարա-  
 նէ և Ղաւթի յասելն. աչք նորա 'ի տը-

նանկս հային . և թէ միում 'ի փոքրկանցս  
յայցանէ զոր ինչ արարիք , ինձ արա-  
րիք . զի՞նչ իմանամք , իմանամք բացայայտ .  
զի Աստուած ինքնին լինելոց է դատախազ  
յազագօ զրկելոց . ահա այնուհետև դառ-  
նաղէտ կենսք ուտել զհաց արտասուաց ե-  
րևի ցորչափ կենդանի իցէ անիրաւն . բան-  
զի այսպիսի չար գործառնութեան համբաւ՝  
բարձումն է անշուշտ անձին վարկման . որ-  
պէս բազումք 'ի վաճառականաց ստութեամբ  
միով ո՞չ միայն 'ի յարգս ազնուականաց մե-  
ծարու անձանց չունեցան ինչ վարկումն ,  
այլ և խաժամուժ ազգացն բազմութեան  
համարեցան անարգք և անպիտանք . և մա-  
նաւանդ ծանի'ր զի եթէ դու այսպէս զըն-  
դաս զընդանաւ 'ի մթան յանել արգելան .  
ընտանիքդ յորպիսի կան օխրութեան նե-  
ղութեան և 'ի չարատանջ կենդանութեան .  
հուսկ յետոյ՝ յերկուց կողմանց աստի և ան-  
տի յոգնախումբ տառապելոց և զրկելոց  
դառն արտասուք հառաչմամբ սրտի 'ի խոր  
խորտակեն զբեզ յաւիտեան . անբուժելի  
զանազան փորձանաց և վիրաց հոգեկան և  
մարմնական առիթ լինել մահագուշակ . զոր  
ոչ կարեն արքունական բաջահմուտ բժիշկք  
բժշկել . զարթի'ր , զարթի'ր 'ի լսել , արձաթ  
և ոսկի ձեր ժանգ կերիցէ ասէ Աստուած

Մարդարէին բերանով . ահա՛ այս անիրաւու-  
թեանն արծաթն է ժանգահար , որ առ-  
թեաց քեզ և ընտանեաց բոց և զաւակաց  
հոսել զվտակս արտասոււաց նշաւակ գոլոյդ  
աղագաւ : Ընա՛ղ անխիղճ թմրութեան սրբ-  
տիդ յաղագոս այնր անիրաւ մամոնայի , որ 'ի  
սկզբան և 'ի վախճանի հանք հողոյ է և 'ի  
հող . որով փութամբ յիմարաբար ագահել  
նանիր . գողութեամբ , յափշտակութեամբ ,  
և անիրաւութեամբ ծծել իբրև եռանկիւնի  
բերանով տղրկի . սակայն յետ այնորիկ զի՞նչ .  
զբան Սիրաբայ իմաստնոյ մատիցուք լսել .  
թէ մեղաւորաց ետ Ըստուած զզբաղանս զի  
յաւելցէ և ժողովեցէ վասն ընդունայնու-  
թեան : Սոյն աղագաւ չև է տեսեալ մին-  
չև ցարդ բնաւ՝ եթէ որ զրկեացն անիրա-  
ւութեամբ , 'ի վիճակի հարստութեան կաց-  
ցէ տոկ և յարատև , և վայելեալ իցէ զայն  
ցնծութեամբ և ուրախութեամբ առանց  
տրտմութեան : Չանիր և զայս , զի բաց  
'ի զրկելոյ յերկար ժամանակ այսպիսի տա-  
ժանելի բանտարգելութեան զտառապանս .  
տուրևառութիւն կրպակի քո բարձի թո-  
ղի լինելոց է յայսմ հետէ . որով բազմա-  
պատիկ վնասս ունիս կրել քեզ անտի . ե-  
թէ հաստատուն կացցես յայդ պարտուցդ  
ուրացութեան : Քանզի մաքառումն զոր առ-

նես ընդդէմ ճշմարտութեան, և խտաւորութեան՝ են անթողի մեղաց բերք:

Ընչ որ աստ օրինակի եղբայրսիրութեան պարտաւորեցայ դարձեալ մերձենալ առ քեզ այսու յուսով, ղի վերոյիշեալ բանիք իմովք գուցէ համոզեսցիս և հաճութեամբ ընկալեալ զպարտուցդ սակ և զմուրհակ, խղեսցես յայնժամ զմուրհակ գայթակղութեան խոտվայոյզ սատանային:

Ըպա թէ՛ ոչ՝ մի ակնկալցիս այսուհետեւ բնաւ՝ առնել տուր և առութեան գործինչ ընդ իս, և ոչ մի, և զմնացելոցն քեզ թողում գուշակել զվնաս բազմօրինակ:

Ողջ լեր:

ՅԱԿՈՒ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

---

ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՈՒՐՈՒՔ

ԶԸՆԿԵՐԷ ԻԻՐՄԷ

Եղբայր սիրասուն.

Օի զոր ունիմ խրատականս խօսիլ ինչ զբան 'ի նշան եղբայրսիրութեան, ակն ունիմ ընդունելի և յարգոյ համարիլ յաշտքո՛ւ իրրև զպտուղ կենսաւէտ և հոգեդար-

ման : Ապարէն յաւէտ բարեպաշտական գործով տեսեալ եմ զսիրելիդ , զորոց զհատուցումն արժանապէս 'ի հանդերձեալ կենի զերկնայինն ընդունիլ զարքայութիւնս՞ վ կարէ ուրանալ : Բայց սա զոր լուայ սուտ վկայութիւնդ զընկերէ քումմէ՝ սինէական օրինաց տեսուն ցուցանէ անհնազանդութիւն . որով մի՞ գուցէ խափանեալ գըտանին երկնապարզե հատուցմունք բարեաց և գործոցդ փոխան . զի գրեալ է , եթէ միում 'ի պատուիրանացն պարտաւոր գտանիցիս , եղեր ամենայն օրինացն պարտաւոր : Արդ՝ շատախօսութեամբ քով զոր ունիս 'ի մանկութենէ անդստին իբրև բնածին , այնու ընկալար քեզ զայդ ախտ ստութեան :

Բանզի արդարև յայտնի տեսանեմք 'ի շատաբանից ո՛չ սակաւ ստութիւն , իբր 'ի մեծի շտեմարանէ . մանաւանդ յայնպիսեաց է երզնուլ երբեմն 'ի սուտ և 'ի յունայն :

Ա՞՞վ անիրաւ ստութիւն . մինչև անգամ զբանն Աստուած զորդին միածին որ 'ի ծոց հօր ամենակալի էր , յերկնից յերկիր խոնարհեցոյց 'ի շարշարանս և 'ի մահ , սակս սկզբնական մեղաց մարդկան . որ միով սըտութեամբ Աւայի տարածեցաւ ընդ ամենայն ազգս և ազիս . վասն զի 'ի հարցման

օձակերպ սատանայի . եթէ մի հուպ լինիր  
ասաց Մատուած ասելով ստուծեամբ չը պա-  
տասխանէր Ալայ , զի՛արդ կարող լինէր սա-  
տանայ մերձենալ յՄատուածակերտ մարդ .  
քանզի մի հուպ լինիր շատաց Մատուած 'ի  
ծառն այն բարոյ և չարի . այլ յամենայն  
ծառոց որ 'ի դրախտիդ են՝ ասէ , ուտելով  
կերիջիք , և 'ի ծառոյն գիտուծեան բար-  
ւոյ և չարի և եթ մի ուտիցէք . ուրեմն Մ-  
դամ և Ալայ նախահայր և նախամայր մեր  
ո՛չ միով իւր մեղանշեցին , այլ եօթնե-  
կի . յորոց մինն և առաջինն մի՛ հուպ լինիր  
բանն ստուծեան եղև . զոր պատասխանե-  
ցին սատանայի , Մատուած այսպէս պատ-  
ուիրեաց ասելով . որ է սուտ . այլ մի՛ մի-  
այն մի՛ ուտիցէք ասաց . յորմէ յայնժամ  
նոյնհետայն համարձակութեամբ սկսաւ հը-  
րապուրել պատրանօք ամենայն ջանիւք .  
վասն այն պատճառի հրամայեաց ձեզ չու-  
տել՝ ասէ չարն . զի յորժամ ուտիցէք Մատ-  
ուածանալոց էք նման նմա . ահա այսու դի-  
տաւորութեամբ և ականկալութեամբ յոր-  
ժամ կերին 'ի պտղոյ անտի , երկրորդեցին  
զմեզս իւրեանց հպարտութեամբ . ընդ որս  
չարունակեալ գտաւ յերրորդում ապե-  
րախտութիւնն . և 'ի չորրորդում անհնա-  
զանդութիւնն որ զարգելեալն կերին , որով



կոչեցան 'ի հինգերորդումն որկրամուլ .  
(Տ) . 'ի վեր անդր դասելով զյորդոր կողակ-  
ցին քան զՄատուածային հրաման , եկեր  
Լ. դամ հաճութեամբ . հուսկ յետոյ յեթ-  
ներորդումն 'ի հարցանելն Մատուծոյ թէ  
նր էք՝ փոխան զղջման մեղայի 'ի վերայ  
միմեանց արկին զմեզս ըստ 'Կաթեան ձայ-  
նին , թէ 'ի պատճառել զպատճառս մեղաց  
ընդ մարդս ոչք գործեն և այլն . տեսն՝ ար-  
գեօք սիրելիս ստութիւն մի քանի՞ պատիկ մե-  
զաց սկզբնական պատճառ եղև և առիթ  
զանազան մեծամեծ շարեաց վնասուց : Աւ-  
րեմն իմա՞ ողորմելի՛ բարեկամ . նոյն իսկ սը-  
տութիւնն է՝ որ երեքին սուտ վկայիւք ա-  
ռաջի դատաւորաց հողեղէն արարածոց ներ-  
կայայոյց դէակիցն հօր զբանն Մատուած 'ի  
դատաստան . և նոյն հպարտութիւնն էր՝ որ  
խոնարհեցոյց զարարչին գլուխ 'ի վերայ խա-  
չին . և ապերախտութիւնն նոցին էր՝ որ  
եղև պատճառ ընկալնուլ զապտակ յապե-  
րախտ Մաղքոս ծառայէ , որ երբեմն էր ան-  
դամալոյծ . և նոյն այն անհնազանդութիւնն  
եղև պատճառ զանկապելին՝ կապելոյ . և որկ-  
րամուլութեամբ նոցին ծարաւեցաւ տէր 'ի  
խաչին . որ և նոյն մարդահաճութիւնն Լ-  
դամայ երաց զբերան ձախակողմ աւազա-  
կին բարբառնել մարդահաճութեամբ . եթէ

որդի ես (ասէ) Աստուծոյ, էջ 'ի խաչէդ .  
 նոյնպէս և ամենայն Աստուածամարտ հրէ-  
 այք մարդահաճութեամբ բարբանջէին և հայ-  
 հոյէին ընդ անցանելն ընդ առաջ խաչելու-  
 թեան, և եօթներորդ' անզեղջութեան յան-  
 ցանօք նախաստեղծիցն կրկնակի վիրաւորե-  
 ցաւ 'ի խաչին 'ի ձեռն հարիւրապետին ըստ  
 Ղաւթին, և 'ի վէրս ցաւոց իմոց յաւելին .  
 քանզի յորժամ ջնջել փութայր հայրն փա-  
 ռաց զյանցանս մեր, 'ի մահ մատնեաց ծո-  
 ցածին զորդին իւր սիրելի, մահուամբ նո-  
 րին կենդանացուցանել զմահացեալս . որոյ  
 վասն՝ ըստ բաղձանաց և ըստ ջանից հօրն  
 ամենակալի հալածեցին զճիսուս Հրէայք .  
 իսկ յետ մահուանն զի՞նչ ասասցուք զկո-  
 ղին վիրացն յաւելուլ . ո՞հ հոլովամեղ ան-  
 զեղջութեան ժանտասաղարթ մոլութիւն մեր .  
 որ յետ մահուան ևս կրկնապատկէ զւարիս :

Մինչ զի հոտեալ իցէ տայ պատասխա-  
 նել քերցն այնոցիկ, վասն եղբօր իւրեանց  
 Ղազարու չորեքօրեայ մեռելոյն . յայտ առ-  
 նելով զանզեղջութեան մեր պժգալի յո-  
 ռութիւն : Վասն զի մեղս 'ի միտ ածել՝ է  
 իբրև մի օր, և հաճութիւն տալ՝ է երկ-  
 րորդ օր, և գործել զայն մեղս՝ է երրորդ  
 օր, և անզեղջ մնալ յայն մեղս՝ է չորրորդ  
 օր, որ յայնժամ եղիցի արգարև իբրև հո-

տեալ ո՛ր և իցէ անգեղշին անձն :

Այլ որ յառաքինութեան կարգի է՝ և զայն ասեմք. դիցուք թէ վատահամբաւութեան բանից բամբասանաց ականջալուր գոլուրացիս չգիտել, թէ ո՛չ լուայ երբէք ՚ի բերանոյ նորա զայդպիսի անարգական զփէն, այդ ստութիւն՝ է առաքինութիւն. որ մեծամեծ զատելութիւնս և զխռովութիւնս խափանել զօրէ, որ լինելոց էին եթէ ստոյգն ասէիր. նոյնպէս և գողութիւն գոյ որ առաքինութիւն համարի, ո՛չ թէ մեղք. զորօրինակ. գիտակ գոլով թէ ոմն զինու իւր սպանանել կամի զայլ որ. եթէ գողացեալ թագուցանիցես զայն զէն նորին, մեծ առաքինութեան առնես գործ. ըստ որում ՚ի մահուանէ ազատեցեր զայն խղճալին : Ահա այսպէս ՚ի մէջ առաքինութեանց և ՚ի մէջ մոլութեանց զանազան դիտաւորութեամբ հարկադրին բազդատութիւն. որ կամ մեծացուցանեն զգործս, կամ նուաստացուցանեն, կամ ներհակարար տան ծանօթութիւն. զոր կարծեն թէ առաքինութիւն է՝ մոլութիւն համարի. և զոր կարծեն թէ մոլութիւն, առաքինութիւն, նկատմամբ զիւրաքանչիւրոցն զվախճանական. արդ եթէ մինչև ցարդ անգիտութեամբ սովորութիւն արարեալ էր քո զայս մոլութիւն ստութեան,

աւասիկ որ այսքան բազմաթիւ շարեաց ա-  
ռիթ միայն ստուծիւնն եղև. ակն ունիմ  
այսուհետև զգուշանալ քեզ բնաւին ոչ սը-  
տել, և ՚չ մի. մինչ զի՝ ամենայն ժամանա-  
կի զճշմարիտն խօսելով՝ ճշմարտախօսեան  
անուանիլ:

ՅԱԿՈՒԲ  
ՔԱԳԻՌՐԵԱՆ

ԽՐԱՏ ՎԱՄՆ ԽՌՈՎԱՍԷՐ ԵՂՔԱՐՑ

Փորձանաւոր Էրկու Էղբարցղ միան-  
գամայն գտեսուքիւն՝ սիրովն Յիսուսի ող-  
ջագութիւ հանդիսադրիմ.

Տրտմաթախիծ եմ անհանդուրժելի յա-  
ղագս խոռովասեր անձանց ձերոց. զի մինչ  
լուայ զխոռովութիւն ձերդ, որով անիրա-  
ւիք ընդ միմեանս վրիժառու լինել. մին-  
չև անգամ բանտարգել կամիք զմիմեանս  
թշնամարար. արդարև անշուշտ կաւատամ  
այսմ այսպէս լինել. և առաւել քան ըզ  
սոյնս. զի խոռովութիւնն սկզբնապատճառ  
գիտեմք ատելութեան. և յատելութենէ  
բազմատեսակ թշնամութիւն. սպանութիւն  
անգամ ծագի ՚ի խոռովութենէ անտի և  
յատելութենէ. որպէս և գրեալ է պը-

տուղ պատերազմաց մահ և կործանումն . ար-  
գարև քանի՞ քանի խռովութեան պատճա-  
ռաւ 'ի թշնամանել զմիմեանս տեղութեամբ  
տարածամ ընկալան զմահ . թագաւորք ան-  
գամ ընդ միմեանս պատերազմին . շիցէ՞ լու-  
եալ ձեր 'ի 'Նարապատում գրոց՝ թէ ո՞ր-  
չափ արիւնհեղութիւն և կործանումն եղեալ  
են 'ի մէջ տէրութեանց բազմաց . կամ 'ի  
միում տան կամ 'ի մէջ երկուց եղբարց՝  
յորժամ անկանիցի բազմակոհակ խռովու-  
թիւնն , այնուհետև բառնայ անտի անդոր-  
րութիւն , և ո՛չ գտանի երբէք կեանք խա-  
ղաղական . այլ իբրև վայրենի գազան հա-  
նապազ կեղեքեն զմիմեանս և գիշատեն ան-  
յագուրդ , զորոց ո՛չ միայն սրախողխող առ-  
նելով զմահացուցանելն իբր մեծայանցանք  
ինչ բարձր դասեմ . այլ մսեղէն թուր երկ-  
սայրի և թիւրաչարժ լեզու՝ իբրև արիւն  
աուշտ գազան թշնամանաց 'բանիւք ան-  
բուժելի վիրաւորէ , որչափ բարբանջիցէ ա-  
տելութեամբ . իսկ դուք զի՞նչ և ո՞րպիսի ա-  
տելութեամբ . բանտարգե՛լ կամիք զմիմեանս ,  
դու զնա այսինքն զեղբայր քո , և նա զքեզ  
որ եղբայր ես նմա . այդքան խորարմատ հաս-  
տատեալ է 'ի ձեզ ատելութիւնն , ապշու-  
թիւն կալու զիս ո՞ւմ նմանեցուցից զձեզ .  
Սաւուղայ ասեմ , 'Բաւիթ 'անյղաչար էր

նմա, Այսենի ասեմ, բարեսիրտ էր Աբել  
եղբայր նորա, եթէ Համանայ նմանեցուցա-  
նել յաւելից, Սուրթքէ էր այր բարեպաշտ  
և արդար, և յազգս իւր համայն քաղց-  
րաբարոյ և ողորմած, և սոքա երկոքին չե-  
ին եղբարք, իսկ դուք եղբարք և մանաւանդ  
համարին եղբարք, զի՞նչ՝ զի՞նչ, համա-  
րի՞ւն եղբարք, վա՛շ վա՛շ... դուք եղբարք  
էք գիտէ՞ք որոց նման, այն իսրայելացւոց  
որոց մինչ ասէրն Սովսէս, թէ դուք եղ-  
բարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս, յայն-  
ժամ ցասուցեալ յարձակեցան 'ի վերայ,  
սպանանել զնա, և ես ձեզ ասեմ զնոյն  
բան ոչ իբրև զՍովսէս, այլ իբրև հոգե-  
կից և ազգական, և մանաւանդ մտերիմ բա-  
րեկամ, զի ճշմարիտ բարեկամի է գործ զե-  
կուցանել զսպակասութիւն եղբօր, յայտ ա-  
րարեալ զօրինացն հրաման թէև սկծեցու-  
ցանելով, ասեմ ասեմ, ասեմ և ոչ խնա-  
յեմ դուք եղբարք էք ընդէ՞ր զրկէք ըզ  
միմեանս, կամ ընդէ՞ր ատէք, զի ուր ա-  
տելութիւն հեռ և նախանձ, անդ չի՞ք Աստ-  
ուածային շնորհաց պարգև, և ուր ոչ գոյ  
շնորհաբաշխութիւն Աստուծոյ, չիք անդա-  
նօր պաշտպանողական նախախնամութիւն  
նորին, և ուր ոչ է նախախնամութիւն տեառն,  
անդ չի՞ք անմեղ կենդանութիւն անդորրա-

կան . այլ հանապազօր կադ և կոիւ և խա-  
ծատումն իրերաց . որ մերձ է այնուհետև 'ի  
սատակումն և յաւերումն այնպիսի տան . և  
ոչ բնաւ խուն մի անգամ սխալիմ թէ զայն-  
պիսի բնակարանն կոչեցից դիւարնակ . և  
դիւարնակն զի<sup>ն</sup>նչ ունի վախճանական դիւր  
վարձս . կարօղ էք մտաբերել զհօրանս  
հեղձամղձուկ խոզաց ամայաբնակաց որ 'ի  
սուրբ Մետարանի , զի սիրեցին ջրահեղոյց  
լինել յանդնդախորս մտեալ 'ի բանտ : Տե-  
սիք արդեօք զձերդ յօժարամտութիւն կա-  
մաց բանտարգելութեան զոր արդէն ունիք .  
յայտնի ստուգեցան աւասիկ . ձեզ թողում  
իմաստասիրել և զձերդ վախճանական վարձս ,  
որով անյիշաչար լեալ ընդ միմեանս 'ի  
հաշտութիւն փութասջի'ք ժամանել . և հա-  
կառակ սոյն ատելութեան սիրավառ լերուք  
ընդ միմեանս . զի և խաղաղասէր սուրբ հո-  
գին Մտուած պարգևելով զընորհս իւր'  
արտահալած արասցէ 'ի ձէնջ զչարն ատելու-  
թեան . զոր խոովութեան սերմամբ արմա-  
տացեալն 'ի ձեզ ժանտասաղարթն զբոյս՝ ար-  
մատախիլ արասցէ տէր Հիսուս հաշտու-  
թեան փրկանակ սուրբ խաչիւ իւրով :

Ն. Ծ. ՅԱԿՈՒԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

# ԳԺԳՈՀՈՒԹԻՒՆ ԶՆԱԽԱՍՏԵՂԾԻՑ

Մտերիմ իմ եւ հոգեկի'ց եղբայր,

Ի բազմակոհակ արեաց ծովածուփ աշխարհիս վշտակիր լեալ՝ գրեալ էիր յանցելումն տոխ զնամակ . յորում յետ ծանազանելոյ զվշտակրութիւն անձինդ՝ գրեգոհոթեամբ բարբառէիր նախաստեղծ ծընողաց մերոց իրբու պատճառ գոլ մերս թըշուառութեան , յասելդ . ո՛ր 'ի ցաւարեր կենցաղս այս շարատանջ տագնապ մեծ լինէր , եթէ հնազանդութեամբ ժուժկալէին շուտել զարգելեալն զայն պտուղ 'ի դրախտին , և ոչ արտարսէին անտի : Ստոյգ է զոր տեսդ . վկայեմ և ես , զի չէին բնաւ արկարամիա նախաստեղծ հայր և մայր մեր առաջինք . գիտէին զպատուէր տեառն թէ զի'նչ ասել է շուտել . ուշիմ էին և խօհեմ . ծանեան եթէ յոչնչէ ստեղծեալ են բուռն մի հողով մակարդեալ . ծանեան եթէ սերունդ նախնական են և շուձին յառաջ քան զինքեանս . և քան տեառն պատուիրանին յայտնի առնէր մտաց իւրոց թէ արարածք իցեն . քանզի քան զմեզ գերապատիւ լուսանիւթ գոյացութիւնն հրեշտակաց 'ի ստեղծանիւն շունելով 'ի տեառնէ հրաման կամ պատուէր , 'ի կարծիս մտին ,



Թէ արգեօք ընդ արարչին կարողասցո՞ք  
աթոռամերձ և ամենատէր լինել նման նմա  
'ի փառս, նոյն հեալն յանարգանս համա-  
րեցան, լեալ վտարանդի յանդունդս դժո-  
խոց. իսկ սոցա հողեղինաց զոր Թէպէտ  
փոքր ինչ խոնարհ արար քան զհրեշտակս,  
աներկբայ հաստատութիւն ետ խոհակա-  
նութեան մտացն. Թէ արարած գոլով պար-  
տին կատարել զհրաման տեառն արարչին :  
Արեմն իրաւունս ունէաք արդարե այ՛ մին-  
չև ցայն վայր մեղադիր լինել, մինչ չև  
էր բանին Մատուծոյ մարմնացեալ վասն մեր  
'ի փրկութիւն. իսկ այժմ 'ի պատճառել  
զպատճառս մեղաց մեզէն առ մեզ ընկալաք  
գործել զանօրէնութիւն :

Մ. պա մեք մեզէն իրաւախոհ մտօք ուն-  
կնդիր լիցո՞ք իրաւաբանութեան Մդամայ  
հօր մերոյ. զի՞նչ ասէ, արդարե ես անի-  
րաւեցայ նախ քան զամենայն առ Մատուծ .  
և սերմանեցի ընդհանուր զաւակաց իմոց  
չար. բայց սակայն պանծալի զաւակ իմօ-  
ծեալն ըստ Վաւթի Մատուծամարդն Հի-  
սուս Քրիստոս եկեալ յաշխարհ, քակեաց  
զմիջնօրմն ցանկոյն, շինեաց և նորոգեաց  
զեղծն Մդամային. հաշտեցուցանելով զա-  
րարիչն զհայր ընդ արարածս, և կենդանա-  
րար սուրբ հօգին Մատուծ նորոգեաց ըղ

մարգիկ աւազանի ծննդեամբ . ընդէր մեղադիր լինիք այսուհետեւ . ասացէք ընդ Սողոմոնի քաղթրարարբառ բանիւ . ձմեռն էանց, կամ թէ այդիք մեր ծաղկեցան . Մտուածպաշտութեան ունիք այժմ ձեզ ոսկեգար ժամանակ : Մ, յո՛ սի՛րելի՛ ոսկեգար ընծայեցաւ մեզ այս ժամանակ փրկառիթ տնօրէնութեամբ Փրկչին մերոյ , Մտուածաճանոյ առաքինութեամբ բարգաւաճիլ ՚ի յարութիւն կենաց յաւիտենականաց . Մտուածարնակ զերկնային ունել զարքայութիւն , փոխան երկրաւոր Մտուածաճեմ դրախտին : Մքաղարեւ այսուհետեւ շունիմք երբէք իրաւունս պատճառել զնախասերմունս նախաստեղծից և ո՛չ մի . Մշամ միանգամ մեղաւ . բայց բազմիցս ապաշխարեաց յորդուոցն ընկալեալ զտրտմառիթ տառապանս գունակ գունակ . իսկ մեք զամենայն աւուրս կենաց մերոց յետ կենդանութեան . այս է յիմարութեան բերմունք . յարուսաղեմէ ընթանալ յերիքով և անկանիլ ՚ի ձեռս աւազակաց ՚ի ձեռն նախաստեղծիցն եղև մեզ յիշատակ . իսկ մերս՝ զուղղորդ և զարահետ ճանապարհն կենաց թողեալ , զանձինս մեր ՚ի մահ գրաւեմք կամօք հաճութեան :

Ուրեմն ամենապատշաճ համարիմ և կարի կարևոր պատմագրել զայն գործադրու .

Թիւն խառն բանիւ բարոյականաւ իրաւա-  
խոհ թագաւորի ուրումն . որ ըստ սովորու-  
թեան իւրում մինչ յաւուր միում 'ի քննին  
եղեալ շրջէր ընդ գիւղորայս , ետես զքանի  
մի զողորմելի շինական անձինս , որք 'ի վաս-  
տակս էին յարտօրայս հողագործութեամբ :  
Յորոց մին քրտնաշխատ վաստակաւ ձանձ-  
րացեալ գոլ ասէր հառաչմամբ 'ի գանգատ  
զԼՂամայ , թէ Ը՛ղամ՝ զի՞նչ ասացից քեզ  
որ պատճառ եղեր մեզ յայսպիսի շարշա-  
րանս և 'ի տառապանս աշխատութեան ան-  
կանիլ , քրտամբ և աշխատութեամբ ուտել  
զհաց մեր , ուտելով ձեր զարգելեալն ըզ  
պտուղ : Եւ թագաւորն լուեալ զայս դառ-  
նագին հառաչել նորին , մատեաւ և ողջու-  
նեաց զնոսա ասելով բարեաւ աշխատիք եղ-  
բարք . պտղաւէտ լիցի արտօրէիցդ բեր-  
մունք . բայց զի՞նչ էր ձեր տրտունջ զոր  
այժմդ ափսոսայիք տրտնջանօք . ասացէք  
ինձ . և իբրև ճշգրտիւ պատմեցին , 'ի գութ  
մտեալ արքային սկսաւ ասել ցնոսա , թէ  
հրաման է ձեզ . 'ի վաղուեան աւուր գնա-  
ցէք 'ի պալատ իմ անդ օթեանեւջի՛ք ան-  
դորր կենօք անաշխատ ուտել հանապազօր .  
ազատ լեալ յայդց դառնաղէտ աշխատանաց  
ձերոց . և նոքա եկեալ բազմեցան յընդար-  
ձակագոյն սենեկի միում պաշտկամաւորի

այնր պալատի մեծի յարազուարճ ուրախութեամբ: Տի բազմախորտիկ պատրաստական սեղան շնորհեցաւ վայելել նոցա զամենայն աւուրս համեղաճաշ զանազան մրգօք և քաղցրահամ ուրախառիթ ըմպելեօք:

Սակայն՝ այս եղև պատուէր թագաւորին 'ի ծածուկ առ խոհարարն. զի բաց 'ի համադամ կերակրոց բազմաց և յայնց խորտկաց և ըմպելեաց, ծածկեալ սկաւառակ մի ևս գտցի 'ի սեղան անդր կենդանի թռչուն մի եղեալ 'ի միջի ծածուկ, առ 'ի փորձել զհրաւիրելոցն ժուժկալութիւն. զի յամենից յայնց կերակրոց հրամայեալ է ուտելով ուտել, և 'ի միոյն նշանաւոր սկաւառակէ անտի և եթ չուտել:

Երդ յորմէ հետէ ժամանակ ինչ անցին 'ի վերայ, յաւուր միում կնոջն առն այնորիկ անհամբեր գտեալ խուզել սկսաւ. և իբրև երաց զծածկ սկաւառակին, վաղ-վաղակի փախեալ անտի թռչունն, և յորժամ թագաւորն իմանալով 'ի խոհարարէն զանհամբերութիւն այնու փորձիւ, կոչեալ զնոսա առ ինքն, ասէ. վասն էր ոչ կարացիք զփոքր հրաման իմ պահել. առ 'ի ժառանգել մշտնջենական զվայելչութիւն տանս այսորիկ ամենայն հանգստութեամբ. ապա ուրեմն գնացէք աստի վաղվաղ. հապա

գնացէք . և ըստ առաջնոյն աշխատութեամբ  
ձերով գործեցէք ձեզ կերակուր : Աւայսու-  
հետեւ մի՛ և մի՛ իւրք պատճառ ինչ գը-  
տանէք նախահօր և նախամօր Աղամայ Այ-  
ւայի . շունիք իրաւունս բնաւին . քանզի և  
նորա ձեզ նման հողեղէն գոլով մարդ , և  
'ի տարերց քառից հակառակամարտից ու-  
նելով զնիւթականն գոյացութիւն , իսկ և  
իսկ սմին նման իբրև զձեզ տկարացան զըս-  
պել զցանկականն , յանուանիլ օրինապահ  
և առաքինի , առ 'ի ժառանգել զտեառնա-  
պարգև զանաշխատ կեանս որ 'ի դրախտին  
ադինայ :

ՅԱԿՈՒԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

---

ՅՈՐԴՈՐ ԱՌ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՍ

ՄՈՒԾԱՆԻԼ ԵՂՔՈՐ

Բարեսէր եղբայր

Ղու 'ի բազում ժամանակաց հետէ յի՞նչ  
գործս զբաղեալ կաս արդեօք . մինչև՞ ցարդ  
զինչ շահաւորեալ է անձն քո 'ի բարիս .  
քաջ գիտակ իսկ է խոհեմամիտ անձն քո .  
զի վաճառականք յորժամ զնայցեն 'ի տօ-

նաւաճառ ինչ, ոչ կամին ունայն վերագառ-  
նալ անտի զերթ ժամաւաճառ, այլ այնպիսի  
լինին գործարար, որ յետ կատարման լիցին  
շահարար: Աստ որում մեք եկեալքս յայսմ  
տօնաւաճառ աշխարհ, ոչ թէ չափել զծով  
և զցամաք իբրև զերկրաչափ. կամ աստ-  
ղաբաշխական արուեստիւ՝ դիտակաւ ըզ-  
համաստեղութիւն իւրաքանչիւր կենդանա-  
կերպից և զերկնից աստեղաց զորքանութեան  
զթիւ և զհաշիւ իմանալ. կամ թէ յերկնա-  
ճեմ օդապարիկ հեծեալ ընդ յօդս 'ի զըն-  
նին ճանապարհորդել. (որ Սողոմոն արհա-  
մարհէ զայսպիսիս արգելլով. եթէ զերկրա-  
ւորս հապիւ նկատեմք, իսկ որ յերկինս է  
ո՞վ քննեսցէ). կամ ուտելով կամ ըմպելով  
իբրև վայրագասուն կենդանի սնանիլ և մե-  
ռանիլ յունայն, որ վասն այնպիսեաց ա-  
սացեալ է մարգարէն՝ Ղաւթիթ. թէ հաւա-  
սարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ  
ձոցա: Այլ առ ի՞նչ եկեալ եմք յաշխարհ  
իմա՛ սիրելիս, զփունջ առաքինական ծաղ-  
կանց պարտ է ունիլ 'ի ձեռին. որոյ ա-  
նուշահոտ բուրմամբն զուարճասցուք թե՛ 'ի  
կեանս յայսմիկ և թէ՛ 'ի հանդերձեալն.  
իբրև զոստս արմաւենեաց 'ի ձեռս ունելով  
ընդ առաջ ելցուք Յիսուսի թագաւորին  
Փրկչին մերոյ, լօել զայն երանական բար-

բառ 'ի նմանէ . թէ անիւ ծառայ և բարի  
և այլն :

Ողջ լեր հոգեսնունդ առաքինական բա-  
րեմասնութեամբ . 'ի պաշար յախտենա-  
կան կենդանութեան :

Ն . Ծ . ՅԱԿՈԲ  
ԹԱԿԻՈՐԵԱՆ

ԵՐԿԻՒՂԱԼԻՐ ԽՐԱՏ

ԱՌ ԵՂՔԱՅՐ ԻՒՐ ՀԱՄԱՐԻՒՆ

Հոգեհատոր եղբայր .

Յայտ լիցի սիրելու թեանդ , զի յանցեալ  
աւուր յաղագս նախատելի գործոց քոց՝ զիս  
նախատեցին բազում կշտամբանօք 'ի ներ-  
կայութեան բազմականաց յայս ինչ խըն-  
ճոյս , մինչ զի 'ի կոճոպիլ սրտիս թորել  
սկսաւ յաչաց իմոց արտասուս ո՛չ սակաւ ,  
զի՞նչ գործեալ էր իմ քեզ մեղանշական  
կամ փնասառիթ՝ եղբայր իմ համարիւն՝ որ  
յայտքան կշտամբանաց և արտասուաց եղէ  
արժանի :

Եփսոս դժբաղդութեան անձին իմում  
ասացի՞ց արդեօք՝ թէ երանեցից զեղկելի  
անձն իմ , որ վասն եղբօր իմոյ արժանացայ

նախատանաց յանդիմանական բանիւք բազմօք. արդեօք զի՞նչ արարեալ ես չար, կամ զի՞նչ փորձանաց զիպեցուցեալ է ք՞ զնոսա. յո՞ր վտանգս, կամ զի՞նչ ընդդէմ իրաւանց և օրինաց. զի զիս կշտամբնն ասելով. թէ եղբայր ք՞ զնախկին բարի վարս ՚ի բաց թողեալ, այժմ ընդ հակառակն վարի ընդ ամենեսին. թէպէտ եղբայրասէր և և համեստաբարոյ գիտէսք զնա ՚ի վաղուց, այլ այժմ յաւէտ դժկամակութեամբ խռովասէր և կռուարար ոմն է եղեալ գերքան զօրինակ, ապա արդար իրաւամբ կըշտամբնն զիս, ասելով. թէ հարկաւորապէս քեզ վայել է բարւոք ընտրութեամբ քննել և իմանալ զվարս եղբօք ք՞ և դաստիարակել խրատաբանութեամբ ՚ի համոզումն առ բարիս, և քրիստոնէական պարկեշտասուն վարս : Աւրեմն ահա այժմ ըստ հարկի պահանջման ստիպիմ հարցանել քեզ, ասանք ինձ ստուգութեամբ. ՚ի փոխումն լուսահոգի հօր մերոյ յաստիկենաց՝ զիւրութիւն և համարձակութիւն ընծայեցաւ քեզմրձիլ յայդպիսի անառակութիւն. ո՛չ, ո՛չ. նուաստ եղբայր ք՞ պատրաստ է փոխան նորին ՚ի վերայ վարուցդ յատուկ տեսուչ լինել արթուն ակամբ : Քայց սիրելիս՝ զի՞նչ են կամք ք՞ կամ զի՞նչ հաճութիւն ճեմնն ՚ի



Տօր քում, մինչև 'ի տիս հասակի քում ծե-  
րութեան կամ մինչև 'ի յետին վայրկենի օր-  
հաս վախճանի կենացդ խրատատուն եղէց  
քեզ, միթէ և ես չունիմ ըստ կարեաց ի-  
մոց գործ զբազանաց, մանաւանդ հնգեկին  
դաւակս իմ զարտաքին զգայութեան որ ընդ  
իս գոլով հանապազօր, կարօտ են բարե-  
յորդոր խրատուց իմոց յամենայն վայրկե-  
նի, միթէ ոչ ունիս քեզ օրինակ զյոյլս  
յողնաստուոն քազմածիւ խոհեմառատ ան-  
ձանց ծերակուտից մէն մի յաշխարհի աստ  
քեզ օրինակ. ընդ որս կենակցիս աւասիկ  
զցայդ և զցերեկ պանծալի արհեստիդ պատ-  
ճառաւ. են որ՝ պարկեշտասուն վարուք բա-  
րեհամբաւ ստանան զանուն, և են որ՝ մո-  
լեկան ընթացիւք իւրովք խորթաբարոյից  
ունին զկարգ. բայց զվարս այլոց ցուցա-  
նելով քեզ օրինակ՝ մի՛ գիտասցես թէ զան-  
ցառութիւն խոստանամ 'ի քոյոցդ, որ  
բազմիցս նախատեցայ վասն քոյաւէտ խոշ-  
տանկեալ, և մանաւանդ պարտաւոր ևս եմ  
ըստ վերոյիշեալ բանից իմոց վերստին ազգ-  
առնել սիրելութեանդ, զի աչալուրջ կամ  
աւասիկ յայդմ, եթէ անգամ մի այսպիսի  
անպատեհ գործ ինչ տեսանիցեմ կամ լսի-  
ցեմ զքէն, այժմէն գիտասջի՛ր զի որպէս  
ինձ գանգատանօք ազգ արարին, նոյնպէս

և ես ազգայեա ամենապատիւ սրբազան  
Հօր մերում ծանուցանելոց եմ. որ ըստ  
արժանւոյն խրատեսցէ զքեզ կամ գանիւ  
կամ բանտարգելութեամբ 'ի Հիւանդանոցն .  
որ յայնմ ժամու կամայ ակամայ զզջասցիս  
ասելով. թէ երանի թէ մեռանէի, քան թէ  
այսպիսի անուն ստանայի ապիրատութեամբ,  
որ ունիցի ականջս շսելոյ, լուիցէ :

ՅԱԿՈՒԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

ԲԱՐԵԻՍՍՈՒԹԻԻՆ

ՎԱՍՆ ԱՂՔԱՏԻ ՈՒՐՈՒԲ

Առատագնօք բարեսէր.

Պիտեւլով իմ թէ ըստ Լուստարանայան  
բանին Լստուածուսոյց ես գթասիրտ և ու  
ղորմած լինել առ աղքատս . և մանաւանդ  
քանիցս անգամ ականատեսս գոլով իմ մար-  
դասիրական մեծաղործութեան քում որ առ  
ազգս մեր ազգասիրութեամբ . զայս ինչ ա-  
նուն կարօտեալ աղքատ գրարերն առա-  
քեցի առ քեզ 'ի բնածին մարդասիրութիւն  
քո ապաւինեալ . զի բաց 'ի բազմաթիւ ծանր  
պարտուցն՝ առուր պարենի անգամ հայ-

Թայթել ինչ անկարող գիտելիք, որով  
անմխիթար տագնապի հանապազօր, բաց ՚ի  
ճշմարտապատում վկայութենէս իմմէ, և  
զմնացեալսն ցաւագար և տկարագոյն կեր-  
պարանք ծերութեան իւրոյ ծանուցէ բա-  
րեգութ տէրութեանդ, որով դու Աստ-  
ուածասէր ողորմածդ քեզն ընտրեսցի՛ր զոր  
ինչ պիտոյ է առնել վայելչապէս նոյն եղ-  
կելի անձին զողորմութիւն, որ պարագլուխ  
է յառաքինութիւնս առաջի Աստուծոյ, որ-  
պէս և գրեալ է, ողորմութիւնն բարձրա-  
գլուխ պարծի առ դատաստանաւ, և թէ որ  
արարիք ՚ի փոքրկանցս յայսցանէ, ինձ ա-  
րարիք, ապա ուրեմն մի խնայեր ձեռնաը-  
ւութեամբ օգնական լինել սոյն անանկին  
վասն արեւշատութեան սիրելի զաւակացդ  
ո՛վ բարեբար:

Ար առ Պետրոս Առաքեալն առաքեցաւ  
հրեշտակ տեառն՝ նա ինքն ասէ յաղագս բա-  
րեպաշտին Առուներեայ: Աղօթք և ողոր-  
մութիւնք նորա ելին յիշատակաւ առաջի  
Աստուծոյ:

Ն. Ծ. ՅԱԿՈԲ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ



## ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԱՌ ՄԵՄԱՐՈՒ ՌՔ


ՄՈՒԾԱՆԵԼ Ի ԿԱՐԳՍ ՍՊԱՍԱԽՈՐԱՅ

Բարեգութ տէր իմ եւ ողորմած.

Որ սովոր էք երանաւէտ մարդասիրութեամբ քաղցրահայեաց գտանիլ յաւէտ առամենայն զք յամենայն ուրեք, խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս իմ 'ի լսել ձայնի աղաչանաց իմոց : Որ 'ի բազում ժամանակաց հետէ դատարկաշուրջ լեալ 'ի քաղաքիս աստ դժբաղդաբար աղաչեցի զոմն ընչաւէտ տալ ինձ քանի մի հազար դահեկան . զոր առեալ գնացի յայտ ինչ դիւղաքաղօքն փոքու վաճառականութեան ինչ գործով . և թէ իցեր ինձ վերագառնալ անտի ծայրալիբ շահիւ , զկէս շահուն ըստ շափու դրամոցն բաժին հանել փոխատուին այնմիկիսոստացեալ էի . սակայն մինչ ոչ կարացի ծայրածել յաջողութեամբ , և հասանել 'ի նպատակս , վերագարձայ 'ի հայրենիս աստ առաւել ևս 'ի ներքոյ ծանր պարտուց անկեալ : Ահա այժմ ունիմ ընդ իս փոխան որախոսութի շահուց զտրամառութի մեծամեծ մուրհակս պարտուց , ո՛հ տէր իմ մի՛ շատ սօսելով ձանձրացուցիչ եղէց տէրութեանդ .

և մի յուսահատութեանն հոգեկործան ժանդ  
ժանդիս ժամանեցէ : Այլ փութասցիր ու-  
նիլ զիս 'ի տան քում ոչ իբրև զվարձկան  
մեծապաշտօն յարգական, այլ իբրև զանարգ  
վասն աւուր պարենի . և եթէ քարեյօժար  
կամք քո գլմասցի ամսական ինչ շնորհել,  
գուցէ նովաւ կարողացայց զպարտս իմսա-  
կաւ սա սակաւ թեթեացուցանել . ապա թէ  
ոչ 'ի մահադուշակ մեծի տրտմութեան լիճ  
տրտմալիր՝ անկեալ մնամ մինչև ցմահ : Ո՞վ  
տէր բարեխնամ մարդասիրեալ յիս գթու-  
թեամբ 'ի մտիթարութիւն, բարեհաճեցի  
կամք քո բարի, քե բարերարիւ անթիւ մտի-  
թարեւոց մուծանել զիս 'ի կարգ, ընդ նո-  
սին համաձայնիլ 'ի բարեմաղթութեան վասն  
ազգօգուտ կենաց քոց գթածի, որչափ ի-  
ցեմ աստ յաշխարհի ես վշտալի

ՅԱԿՈԲՍ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ



ՈՒՐԱԽԱՊԱՏՈՒՄ ՆԱՄԱԿ

ՎԱՍՆ ԲԱՐԵՅԱԶՈՂ, ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՈՐԾՈՅՆ ԵՂԲՕՐ

ՄԷԺԱՊԱՍԽԻ ԷՂԲՕՐԳ ԻՄՈՅ՝ ՍԻՐԵԼՈՅ՝  
ԽՆԴԱՂ ԽԱՐԳԱՆՕՐ.

Մինչ յերկուց տրտմառիթ իրաց անձն  
իմ խոշտանկէր շարաչար. որ ՚ի մեկնիլ յար-  
դու թեանդ աստի անտես լեալ յաչաց մե-  
րոց ՚ի կարօտակիզութեան յարատոչոր էի  
աստանօր, սիրարորբոք հուր սրախս անշէջ  
գոլով. և երկրորդ՝ ՚ի կերպ առ կերպ մթա-  
խայթ կասկածանս էի վարանեալ վասն փ-  
ղնմնական սիրելի բարեկամիդ՝ թէ արդեօք  
յոբպիսի կենցաղաւարութեան իցես ՚ի պան-  
դխտութեանդ այդմիկ. յանդորբութեան թէ  
՚ի տառապանս. սակայն յետ տրտմութեան  
իմոյ իմա՛ և զպատճառ նորազգաց ուրախու-  
թեանս. զի զուր քաջողջութեան և ան-  
դորրական կենցաղաւարութեան ձերոյ, և  
անհնարաւոր այդր առևտրական գործոյդ  
բարեյաջող կատարման, նաև ընդ հօր ի-  
մում միախոհ նորոգ ընկերութեան յայն ինչ  
շահարէր վաճառականութիւն ՚ի ձեան սի-  
րալիր նամակիդ յորժամ լուայ, առաւօտ  
խաղաղութեան ծագեցաւ յիս ՚ի վերուստ,

և փարատեաց սպառսպուռ վերոյիշեալ զաղ-  
ջածղջին դամենայն կասկածանաց սրտի իմոյ  
տրամահաղորդ զխորհուրդ, և լցայ անպատ-  
մելի ուրախութեամբ:

Քանզի և զայս գուշակեմ սակս հօր  
իմոյ միջոց ունել այսուհետև մերթ առ մերթ  
գալ յընտանիս իւր 'ի տեսաւորութիւն, և  
լնուլ զբաղմատամանակեայ կարօտակէզ զիմ  
բաղձանս, ձեռնամուխ լինելովդ 'ի գործ նօ-  
րին. զի ոչ բաւէ ինձ երբէք մխիթարել  
զիս համայն ազգականացս տեսութիւն քան  
զձնողացս. քանզի որդիք և ծնողք եթէ հե-  
ռի գտցին 'ի միմեանց դժբաղդաբար, զուրկ  
գտանին որդիք 'ի ծնողացն խնամոց և հարք  
յորդուոցն ցանկալի զուարճութեանց. և ե-  
թէ սոյն եղբայրական սէրդ մշտալառ ու-  
նելով, ուրախառիթ քաջողջութեանդ նա-  
մակագրութիւն շարունակեսցես, յայնժամ  
ուրախութիւն իմ անվախճան և անթարչամ  
երևի լինել անշուշտ քան զառաջինն:

Ողջ լեր 'ի հարուստ ամս 'ի մխիթար-  
ութիւն ինձ նստաստիս,

ՅԱԿՈԲԻՍ  
ԹԱԴԻՈՐԵԱՆ.



## ԻՐԱՏ

ՔՈՂԵՄՈՒԹԵԱՄԻ ՉԵՌՆԱՄՈՒԽ ԼԻՆԵԼ

Ի ՅԱՆՉՆԱՐԱՐԱԿԱՆ ԻՆՉ ԳՈՐԾ

ԵՒ ՈՉ ԱՃԱՊԱԲԵԼ

Քաջարուեստ բարեկամ.

Ճիմաստնոյն ունիմք զայս խրատ բար-  
 ւոր նկատել զվախճան, զոր ինչ կամիցիմք  
 գործել. վասն զի եթէ աճապարելով գործ  
 ինչ սկսանիցիմք, ոչ կարեմք նովաւ և եթ  
 առանց մտածականութեան և խոհեմութեան  
 անվեստ հասանել ՚ի կատար. և արդիւնք  
 գործոյն ամենէին լինի անընդունակ. քան-  
 զի անխոհեմ գործակալն աճապարելով իւ-  
 րով՝ առանց նկատելոյ բարեպէս՝ յաւելու  
 շահաւորիլ և զայս անուն անխոհեմութեան  
 անշուշտ. նա զի՝ գուցէ և անխոհեմաբար  
 գոլոյն աղաղաւ եթէ այլոց երկրորդական  
 աշխատութիւն ինչ մտանիցէ յայն գործ,  
 ամօթ մեծ է արհեստադիտին. մանաւանդ  
 գործն այն զանպիտանեաց ունի այնուհետեւ  
 զյարգ. որպէս և ժամանակաւ իսկ եղև տը-  
 դէտ և անխոհեմ նկարչի ումեր. որ յեա  
 նկատելոյ զպատկեր լաղաւորին՝ եդ ՚ի հը-  
 րապարակական տեղի ինչ. զի որք անցանենն  
 անտի արհեստահմուտ նկարիչք, տեսեալըզ



գրիպանս նկարեալ նոյն պատկերին . ուղ-  
ղեսցեն իւրաքանչիւր ոք ըստ հաճոյից կա-  
մայ իւրեանց : Արդարեւ թէպէտ բազմօք  
աշխատեցան յայնմ , բայց ամենեին ոչինչ  
եղև աշխատութիւն նոցա և ընդունայն .  
վասն զի զանազան ձեռաց զանազան գոր-  
ծառնութիւն այլակերպս արարին զդէմս  
կոյսերական պատկերին այնորիկ :

Աւրեմն բան իմաստասիրի յամենայն  
ժամանակի իրրև սլայծառ հայելի առաջի  
մեր ունելով . եթէ պատահիցի որ 'ի գործ  
ինչ ձեռնամուխ լինել . հարկ է մեծի մը-  
տածականութեամբ և խոհեմութեամբ ըս-  
կզբնաւորել և ոչ աճապարել . ահաւասիկ  
և ես յարհեստագէտ ճարտարութիւն ձեր  
ապաւինեալ զայդքան հազար դահեկան  
խարճագնացութիւն առնել ձեռամբ քով ,  
խօսեցայ և խոստացայ վասն այն ինչ բը-  
նակարանին , զոր ունիս ինձ նորոգ շինել .  
ապա ուրեմն աղաչեմ զի անխոհեմաբար ա-  
ճապարելով մի՛ լիցի մօխել զդրամս իմ յու-  
նայնս և 'ի սնստիս , և տձև և ապօրինակս  
կանգնելով զայն շինութիւն տան . որով  
ստասցիս քեզ անուն յոսեգոյն վատահամ-  
բաւութեան : Այլ խնդրեմ զի խոհեմաբար  
աշխատելով քո ընդունելի լիցի և հաճոյ  
սրտիս , աղաչեմ . ո՞ր դիտէ կարելի է զի յե-

Կատարման՝ քննութեամբ: այլոց ճարտարա-  
պետաց ծանօցեալ զչափ արժէից նորին,  
պահանջել պատշաճի՝ իբէն զմեասն կամ  
զաւելորդն, եթէ շեցէ ըստ շափու ծախուց  
իմոց բարեպատշաճ:

ՅԱԿՈՒ  
ԹԱԴԻՈՐԵԱՆ

---

ԽՐԱՏ

ՎԱՍՆ ԱՆԱՊԱՐԾՈՒԹԵԱՆ

ԵՂԲՕՐ ՈՒՐՈՒՔ

Մեծարոյ եղբայր.

Համօրէն աւազակաց խիստ իմն է սի-  
րել զլոյս, մինչև ՚ի զօրագունից ևս որոց  
սովոր է վառիլ ՚ի զէն. չեն հանդարտա-  
սիրտ. թէ երբ իցէ զի ընդ ծիրս երկնից  
արեգականն ՚ի վայր խոնարհեսցի, ո՞վ դառ-  
նութեան սրտիցն, որ յետ աւարի առնե-  
լոյ զինչս և զստացուածս այլոց ՚ի կենաց  
ևս կարճեն զմարդ: Այլ ՚ի հասարակել զի-  
շերոյն գարձ յանիրաւ վաստակոցն արա-  
րեալ, ՚ի փախուստ խուճապեն ակնկառոյց  
յետս կոյս, և ՚ի խաւարի թափե առեալ

չրջին որոց արագութիւնն ընթացից ոտիցն  
չորրորտանեացն բերենն զնմանութիւնն :

Այնպէս և որք զարտուղիք իցենն 'ի ճա-  
նապարհացն արգարութեան, չհամարձակին  
երբէք ընդ ժողովս առաքինեաց կալ, զի մի  
'ի շարիս իւրեանց խայտառակեսցին : Աշ-  
քանզի ոչ որպէս զոմանս 'ի բարեկեցութեան  
են մարզեալ զաւուրս արշալուսոյ կենաց  
իւրեանց, վասնորոյ ատելի յաչս իւրեանց,  
թուին ճշմարտութեանն պարտիք. և խա-  
ւարն առաւել սիրելի է նոցա քան զլոյս :  
Աշ ոչ որ է 'ի նոցունց՝ որ ցանգմտախոհ  
լիցի առ 'ի զանձին երջանկութիւնն այլոց ևս  
երջանկութեան խնամս ունել. զանիրաւիլ  
երբէք ընդ այլս 'ի յուշ ածեալ զայս բան  
հոգեհուազ Պաւթի մարգարէին զանգարծս  
իմ տեսին աչք քո. և Արեմիային բան, որ  
յաւէտ 'ի ճահ գայ այսմ աչք իմ 'ի վերայ  
ճանապարհաց նոցա. և ոչ թագեան յերե-  
սաց իմոց. և ոչ ծածկեցան անիրաւութիւնք  
նոցա առաջի աչաց իմոց :

Այ որ Աստուած ամենատես է և քրն-  
նող գաղտնեաց. սակայն այսպիսեաց յան-  
ձին բնաւորեալ է 'ի բաց մերժել երբեմն  
զերկիւղ, և ընդ մեծամեծս կամ ընդ փոքրը-  
կունս յար 'ի կռիւ կարաւել. և այս ասե-  
նայն ոչ եթէ նախանձաւոր արգարութեան

գոլով, այլ 'ի շար կրից իւրեանց հրապու-  
րեալ զհետ երթան հաճոյից կամաց իւ-  
րեանց: Հանհնարիցսակի են այսպիսեաց 'ի  
բաց կալ 'ի շարեացն զորս ուսան 'ի տիս  
մանկութենէ, որպէս տեսանի 'ի գործս Հու-  
դայ իսկարիովտացւոյն. որ թէպէտ պար-  
ծէր 'ի պատիւ տաքելութեան և բիւրա-  
պատիկ ջան 'ի գործ ածէր ցուցանել յին-  
քեան զհաւատարմութիւն, սակայն 'ի սէր  
արծաթոյն ընդ ժանտաժուտ ժողովս հը-  
րէից ցանգ 'ի խնդիր ելանէր Հիսուսի մատ-  
նել զնա: Աշ զի<sup>բ</sup>նչ բնաւ պէտք իցեն մեզ  
'ի թիւ համարոյ մտանել խաւարասիրացն  
առ 'ի վեր պարզելոյ զնոցին բնաւորութիւն.  
որ համանման անիրաւ դատաւորին գտա-  
նին յամենայն գործս իւրեանց աներկիւղ առ  
Մատուած և անպատկառ 'ի մարդկանէ: Ան-  
պէտ և ապօրինաւոր ինչ են այս ամենայն,  
այլ խիթամ ասել որ բազում այն է զի զեր-  
կիւղն Մատուածային ոմանց առ ոչինչս հա-  
մարեալ, 'ի մարդկանէ և եթ պատկառին  
հանգոյն փարիսեցւոց. իբրու թէ 'ի խորս  
մոռացութեան թաղեսցին արձանք յիշատա-  
կի շարութեանցն: Աշ որ Մատուածոյն բան  
զգատարկ բանիցն ամենից համարս պահան-  
ջել դատակնքեաց, կեղծաւորութեան մինչ-  
չև 'ի կատար հասեալ 'ի յայտ դայ, չզօրեն

պատիւ և իշխանութեանն փառք որ ժամանակի են աւար ընդ օրինաւորս համարել որ անօրէն իցէ . թէպէտ պատրին մարդիկ 'ի սուտակասպասք բանից և 'ի շքոյ հանդերձիցն զարտաքինսն և եթ նկատելով, զներքինն ևս համանման գոլ դատեն . այլ սակայն առաւիր ինչ են այդ որպէս է տեսանել յամենայն շարս և 'ի տողս յօդուածոց մարդակազմութեան գրոյն . ըստ այնմ աչք փոքր՝ նախանձու է նշանակ . և եթէ որ յաճախեսցէ 'ի քթթել զակն՝ նենգաժողովութեան . եթէ լայնարերան և ատամամբն ցանցառ՝ հարստութեան . եթէ ճակատն և դագաթն սուր՝ անմտութեան : Եւ այց Օեղովբոսին կերպարան նկարագրել յանդգնեցայց եթէ , ճոխիմաստ առակք և ընդ նմին հընարագիտութիւնք նորին 'ի դէպ զան պատմարան լինել մեզ : Օբելայն կորովութիւն և զգեղեցկութիւն եթէ , որ ձեռօք քաջին Հայկայ ընդ ոչինչս 'ի հողս Թաղեցաւ . և զգեղ վարսիցն Երիտողոմայ եթէ , որ զճառոյն կախեալ երանգաւ արեամբն ներկէր զաշտէին զերկաթ Հովարու . ուրեմն ոչ թէյ գեղեցկութիւն կամ տգեղութիւն մարմնո, պատճառ են առաքինութեան և շարութեան այլ ամենայն որ ինքնին կարէ ընտրել ըզբարին . և մեզ հաւատացելոցս բարւոք է լը-

անլ Յիսուսի քան այլոց . քանզի տեսա-  
նեմ զամանս , զի զերախայս իւրեանց օտար  
անուամբ յաջորջեն որպէս թէ անուամբ մե-  
ծանայ մարդ : Բայց Յիսուսի չէր այսպէս ,  
այլ գործովն և եթ յայտ ասնէր զՆստուա-  
ծութիւն իւր . զգործսն զոր ես գործեմ յա-  
նուն հօր իմոյ , նորին իսկ վկայեն վասն իմ  
և ընդէր ոմանք զճշմարտութիւնն 'ի բայ  
թողեալ 'ի գեղեցկութիւն մարմնոյ և 'ի ձե  
հանգերձից պանծան . լուիցեն զինչ Պօղոս  
ասէ , այլ ինձ քաւ լիցի պարծիլ , բայց մի-  
այն 'ի խաչ տեսան Յիսուսի Վրիստոսի .  
և եթէ ամենայն ծառ 'ի պողոյ իւրմէ ճա-  
նաչի , մի' ինչ աշխատ լինիցիս այսուհետե  
'ի սնտախ պարծիլ եղբայր . այլ զբարիս մի-  
այն գործելով , շատ լիցի քեզ յանձին ցու-  
ցանել թէ իցես ոմն :

Ն . Մ . ՅԱԿՈՒ  
ԹԱԳԻՈՐԵԱՆ

ՀԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

Հոգեհատոր էղբօր մտերմի եւ բարե-  
սիրի , սեր անկեղծական հոգեհուեր ընծա-  
յի . հանդերձ .

Ի մեծի պարտաւորութեան կամ աւա-

սիկ յաղագս այն ինչ առարկայի, որ վասըն եղբոր մտերմի, զոր լուայ յայում բարեկամէ ումեքէ, մարգասէր ակեր Հիսուս ողորմելով մեզ երկոցունցս, զօրութիւն տացէ տկար գրչիս իմոյ. առանց մարգահաճութեան խօսիլ 'ի նիւթս յայս անկեղծաբար, յապացուցութիւն ճշմարիտ եղբայրսիրութեան մերում, զոր ունիմք անդատին: Վանդի որ հիւանդ կարէ յառողջութիւն ժամանել 'ի մահազեկոյց հիւանդութենէ իւրմէ, եթէ չունիցի յինքեան խնամատար բժիշկ քաջահմուտ ազգու դեղատու: Եպա որ մեղսաթաւալ անձն կարէ յառողջութիւն դիմել հոգւով թողութեամբ մեղաց, եթէ ոչ մերձեսցի առ բժիշկ հոգեբոյժ, առնուլ զգեղ 'ի դեղատուէ իմաստնոյ. ուրեմն յայտնի երեւի մեծ թշուառութիւն լինել այնոցիկ հոգւով հիւանդացելոց, որք չունին փոյթ մերձիլ առ քաջահմուտ բժիշկ քահանայն. յորոց կարգի և զքեզ դասել անվրէպ համարիմ. զի մոռացար զբարի սովորութիւն բարեաց, յիւրաքանչիւր տաղաւարի խոստովանութեամբ հաղորդիլ և դու սուրբ մարմնոյ և արեան Տեանն:

Ոչ ասպաքէն պանդոկապետ կարգեցան քահանայք 'ի վերայ մեր, նախախնամելըզ մեզ 'ի ձեռն ամենափրկչին Հիսուսի, երկո-

Քին դրամով, այսինքն հին և նոր Եստուածապատգամ կտակարանաւ . քանզի Եստուած ամենախնամ յորժամ ստեղծ զԵդամ և Վալայ, եդ 'ի դրախտին գործել և պահել, այսինքն վայելել զանտրտում ուրախութիւն դրախտին ազինայ . բայց յորժամ կորուսին զանմեղուծիւն, կորուսին ընդ նմին և զանմահութիւն, և արտաքսեցան անտի յապաշխարել յաշխարհի աստ, է ամենեցուն յայտնի . զոր սերովբէքն պահէին ըզդունն դրախտին հրեղէն սրով, շմտանել անդ, մինչև իցէ հրաման Եստուծոյ ամենակալի . ահա յայնմ աւուր որպէս զխոստովանահայր՝ Եստուած բարեգութ իւրովին եկեալ 'ի դրախտն, առ նախաստեղծ հարցանելով հարցանէ (Եդամ ուր ես) :

Այն գունակ այժմ ամենափրկիչ Յիսուս Քրիստոս 'ի դէմս մեղաւորաց, 'ի ձեռն Արեմիայի հաշտեալ եմ ասէ տառապեալդ և խախտեալդ . արդարև տառապեալ և խախտեալ է անձն մեղաւորի . բայց անս զմարդասիրութիւն տեսան ամենակալի, հաշտեալ եմ ասէ, և յայլում թէ մի՛ յիշեսցին մեղքն առաջին . փառք անյիշաչարութեանդ բարերար և ողորմած . զի ոչ ընդ մեզ դընացեր խոտորնակ՝ խոտորնակի առ քեզ հետևողացս, այլ երկայնամիտ մարդասիրու-



Թեամբ քով վերստին ընդունիս զմեզ զմեզ  
 զաւորս . և զմեզս մեր ոչ յիշելով հաշտու-  
 թիւն ցուցանես : Խեղճեա մեք մեզաք , բայց  
 անկորուստ պահես զանուն քո անյիշաչա-  
 րութեան և ողորմածութեան և մարդասի-  
 րութեան :

Վանզի ոչ անուանեցար հրեշտակա-  
 սէր , որ զպետութիւնս նոցին հաստատե-  
 ցեր , այլ մեծի դասեալ զմարդասիրութեանդ  
 անուն՝ գուն գործել փութաս հանապազ  
 խնամել մարդասիրութեամբ , և մանաւանդ  
 զերկայնմտութիւն քո և զանյիշաչարութիւն  
 յայտ արարեալ՝ կոչես զմեզ մերձենալ յազ-  
 բիւր ապաշխարութեան . որ նովին մաքրու-  
 թեամբ ընկալնուլ փութաս ՚ի գոգս խնա-  
 ժոց սիրոյ քո : Վպա երանելի՛ են մեզա-  
 ւորք ցնծասցեն ՚ի դարձ . զի Վստուած  
 խոստանայ ոչ յիշատակել . բայց որպիսի  
 մեղաւորաց . գոն մեղաւորք մերձաւոր , գոն  
 և մեղաւորք հեռաւոր . երանութիւնս այս ում  
 է արդեօք . Վաւիթ և Վաւուղ երկոքին թա-  
 գաւորք զթեցին արդարեւ մեղօք . բայց մինն  
 մօտաւոր եղև մեղաւոր , և միւսն հեռաւոր .  
 զի յերկոսին ևս խոստովանահայր եկեալ ,  
 հետազօտեցին ՚ի նոցանէ զխոստովանութեան  
 զլլումն և զմեղայն . բայց ոչ շահեցան զեր-  
 կոսին միօրինակ . զի Վաթան մարգարէ

իրրև բանիրուն և խոհեմառատ քահանայ  
 ներկայացուցանելով զմեզս առաջի նորին,  
 իսկոյն լուաւ զՎաւթի մեղայն կատարեալ  
 զղջմամբ. զի նստեալ 'ի վերայ մոխրոյ, ես  
 հովիւս ասէ մեղայ, դոքա ոչխարքդ զի՞ա-  
 րարին. ուստի ազդ եղև Վաթանայ մարգա-  
 րէին քաւել զմեզս նորին. իսկ 'ի Սաւուղայ,  
 Սամուէլ մարգարէ եզի՞տ արդեօք որպէս  
 զՎաւթին, ոչ. այլ ընդ հակառակն ամեն-  
 լին. քանզի թէպէտ և ասաց մեղայ, բայց  
 անզօր և անօգուտ. և հպարտօրէն բանս  
 բարբառէր, և խնդրէր 'ի Սամուէլէ մեծա-  
 ցուցանել զինքն առաջի ժողովրդեան. և ոչ  
 իրրև զյանցաւոր ոք յայտնել, որպէս զՎա-  
 լթ զմոխիր որպէս զհաց ուտել. այնպիսի  
 մեղայն Յուդայեան իսկարիովտացւոյ գի-  
 տեմք. որպէս և նա ասաց թէ արիւն ար-  
 դար մատնեցի. այսու եզի՞տ զփրկութիւն.  
 քաւ լիցի, այլ զորմէ ասի. ուռուցեալ հեր-  
 ձաւ ընդ մէջ նորա, և հեղաւ ամենայն փոր  
 նորա: Ասանորոյ յայտնի ծանուցանէ մեզ  
 Վարեկացի սուրբ հայրապետն մեր վասն ե-  
 րիցունց, թէ Լ.բար Օարմեան՝ Սաւուղ Ար-  
 սեան և Յուդայ Սիմոնեան ոչ արդարացան  
 այսպիսի անզեղջ մեղայիւ: Աւրեմն եղբայր  
 պատուական՝ երթ ցոյց զանձն քո տա-  
 ներէց քահանայի քում. փրկչին հրամանալ

Թրբիլ զրորոտութիւն քո հոգեկան: Քան-  
զի 'ի նախնեաց է հաստատեալ զայս պատ-  
ուէր գոնէ 'ի տօնից հնգից տաղաւարաց  
խոստովանիլ. յայնժամ ծանիցես թէ ո՞ր-  
պէս գիւրադոյն լիցի քեզ 'ի խաւարէ 'ի լոյս  
գալ. ահա այս է անձուկ ծանապարհ իբրև  
երկնընթաց սանդուղք ապաւինութեան, որ  
տանի յերկինս 'ի վեր յարքայութեան սուրբ  
խորան, եթէ կատարեալ իցէ զըջումն, ան-  
գատապարտ ճաշակել զմարմին և զարիւն  
տեանն կենարարին, զհոգեկեցոյցն մանա-  
նայ. որում արժանիս արասցէ զամենայն  
քրիստոնեայս մաքրողական խոստովանու-  
թեանն լուացմամբ:

Ն. Ծ. ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

---

ԶԳՈՒՇԱՆԱԼ ՅԵՏԱԳԱՅ ԶԱՐԵԱՅ  
ՎԱՍՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՊԱՐՏՈՒՅ

Հոգեհատոր, սիրեցելոյդ սեր առատ  
անկեղծութեան.

Ի լսել իմում թէ այս ինչ ումեք պար-  
տական գուրժ 'ի հեռաւոր երկիր գնացեալ  
ես երկնչելով 'ի պարտուցդ, սաստիկ ծի-  
ծաղեցայ 'ի վերայ այդր ծաղրելի գործոյդ.

և ասփշութիւն կալաւ զիս . միթէ այսու-  
հետեւ ազատ կարեն լինել 'ի պարտուց բոց  
այդպէս փախստականութեամբ, ոչ . ոչ . ա-  
հա լուեալ պարտատեառնդ զփախուստ քո  
յայդ երկիր, ամիրապետի տեղոյդ այդմիկ  
լուր առաքելով կամի զքեզ ձեռնակապօք  
բերել տալ այսր, որպէս և ասացն իսկ ինձ .  
սակայն խոստացայ նմա՝ այսու գրութեամբս  
վերադարձուցանել զքեզ աստ կամովին :

Աւրեմն եթէ չկամիս անարգանօք ակա-  
մայ գալ այսր նշաւակ լինել այլոց, փու-  
թասջիբ 'ի ժամանել գրոյս վաղվաղակի  
յօժարութեամբ վերադառնալ այսր կամո-  
վին . զի զոր ինչ 'ի մտի եղեալ է, անշուշտ  
ունի կատարել :

Ն. Ծ. ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՀԵՂՈՒԹԻԻՆ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՎԱՍՆ ԵՂՔՈՐ ՍԻՐՈՑ

Երանելի՛ հեգաբարոյ .

Նորգարեւ եղբօր անիրաւի համբերել նա-  
խատանաց՝ է հալածանք . բայց յութից ե-  
րանութեանց մին գոյ գիտեմք ըստ Ն. Ետա-

բանին . որ ասէ . թէ երանի՛ որք հալա-  
ճեալք իցեն վասն արդարութեան : Աւրեմն  
յերեկեան աւուր առանց զգալոյ զդառնու-  
թիւն ոգւոյ կատարեալ հեղութեամբ համ-  
բերելով քո չարաբարբառ նախատանաց ան-  
կիրթ եղբօր քու՛մ անիրաւի , զայս երանա-  
կան ընկալար քեզ բաժին 'ի փրկչէն մեր-  
մէ Յիսուսէ Վրիստոսէ , թէ երանի՛ հե-  
զոց , զի նորա ժառանգեսցեն զերկիր . մա-  
նաւանդ զի թէպէտ գոյր բան ինչ պատշաճա-  
ւոր ընդդէմ ասացելոցն , այլ խաղաղասէր  
սրտիւ քով զմտաւ ածեալ , թուի ինձ թէ ,  
նթէ յայնմ պահու ընդդիմաբանութեամբ  
հակառակաթօս լինէիր հակառակորդի քու՛մ ,  
անշուշտ ոչ սակաւ լինէր խռովութիւն 'ի  
միջի ձերում . բայց լռակացութիւնն՝ մասն  
ինչ առաքինութեան համարելով բարւոք  
համարեցար հեռանալ , քան բանիւ յաղթա-  
հարել զնա . որով արժանի ցուցար լինել  
ենթակայ երիցս անգամ երանութեան խա-  
ղաղարարաց . ո՛հ խաղաղարարաց ծայրագոյն  
երանութիւն կարի շահաւէտ քան զամենայն .  
որդիք Աստուծոյ կոչին ասէ Վրիստոս . քան  
զայս առաւել ցանկալի և տարփալի զի՞նչ .  
թէպէտ ողորմութիւնն զմարգն Աստուծոյ  
նմանեցուցանէ ըստ արտաքին գործոյն . սա-  
կայն ըստ ներքնոյն՝ առաւել նմանեցուցա-

նէ խաղաղութիւնն : Եւստ որպիսի գոհանալով բերկրեցայց 'ի սիրտ և յոգի 'ի վերայ մտերիմ բարեկամիս իմոյ, 'ի տեսանելիմ զայն յայնպիսի աստիճան վերարժանացեալ . փառք ամենախնամ ողորմութեան ամենակալ արարչին . զի հաճելիս իւր ծանօթս առնէ ձեզ, օրինակ առնուլ 'ի նոցունց, լինել իբրև զքեզ հեզահոգի և խաղաղասէր 'ի վայելումն երանական վիճակի սուրբ արքայութեան անտրտում ուրախութեան յաւիտենականի :

Ն. Ծ. ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

---

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՐՁԱՆԱԻՈՐԻ

ԱՌ ՄԵԾԱՐՈՒ ՈՒՔ

Գրառւատ տէր.

Օի որպէս ստոյգ բարեկամաց և անկեղծ եղբայրասիրաց է գործ մարդասիրական օրինօք, լալ ընդ լացողս և խնդալ ընդ խընդացողս . յաւուրս յայսոսիկ ահա ո՛չ սակաւ 'ի բարեկամաց իմոց առաւել քան զառաւել ողբան զիս ցաւակցելով, լսելով դառնաղէտ փորձութիւնս զայս, որ պատահեցաւ գլխ-

բազմաթիւ կամ լաւ ևս ասեմ անխրատիս :  
Սակայն ո՛չ կամիմ և ձեզ լինել տրտմազ-  
գեաց իբրև ցնոսա , տէր բարեխնամ՝ զհա-  
մայնն պատմելով գուժկանալուր և աղէտա-  
լի բանիւ . այլ գոյզն ինչ ըստ պահանջման  
իրին . որով գուք ձեզէն կարող էք հան-  
գամանօքն հանդերձ իմանալ և զհետեու թիւն  
նորին մակարերել գթասիրաբար : Վան-  
զի յայսմ գիշերի յեօթնբորոգ պահու մինչ  
'ի քուն մտեալ էաք մեր ամենեքին , յանկարծ  
հրգեհել սկսաւ բնակարանիս վերնայարկ ,  
մեծարորբոք վառմամբ յոյժ յոյժ : Այն  
եղկելոյս , ես ինքնս ձեռամբ իմով արարի  
զայդ անխոհեմութեամբ . զե՞նչ վայել էր  
ինձ 'ի մէջ տանեաց բազմեալ ծխպամորձ  
խմել ընդ երեկոյս , յոր լինելով ծաղկոց  
ինչ վայելչագեղ՝ զբուրումն ցանկայի զծաղ-  
կանց վայելել . որ եղև ինձ այժմ բուրումն  
մահահոտ առիթ դժոխքմբեր ցասման . ու-  
րեմն ամենայն բարեկամք և մերձաւորք իմ  
զիրաւունս ունին կառափնարեկ առնել ըզ  
զլուխ իմ բռամբ անխնայ :

Ո՛հ իրախիտ ցաւալից փորձանք , զոր ե-  
թէ չև էր զգացուցեալ մեզ սկնդկին աղա-  
ղակ՝ ամենեքին համանգամայն հրոյ ճարակ  
լինելոց էաք : Վանզի մազապուրծ փախչե-  
լով 'ի տանէ հազիւ կարացաք արտաքս ե-

լանել ողջամբ, ունելով ընդ մեզ միայն ըզ  
ծածկոյթ մերկութեան: Արդարև շուրջ ըզ  
տամբ մերով պարտէզ գոլով՝ դրակցաց մե-  
րոց վնաս ինչ ոչ եղև բնաւ, բայց բնա-  
կարան մեր և որ 'ի միջի էին արկեղք լիու-  
լի, և յովով կարասիք տան՝ կիզանիւթ լեալ  
ամենեքին այրեցան և եղեն մոխիր: Արդ՝  
որ բանալի կարէ բանալ զբերան իմ պատ-  
մել և զՏեճեճանս սրտիս բազմորակ, որ  
յանհանգուրժելի ոգեսպառ ցաւոց իմոց՝ հա-  
մայն զօրութիւն լեզուաշարժ ջղացս կապեալ  
կաշկանդեալ գոլ, յանկարող գտանիմ 'ի  
խնդիր ելանել բանիւ առաջի գթառատ տէ-  
րութեանդ. դու բարերարդ և ողորմած, քե-  
զէն քաջ գիտես զվայելչականն տէրութեան  
քում, դուն գործել մարդասիրաբար 'իմը-  
խիթարութիւն տառապելոյս: Ամենախնամն  
Աստուած յայսպիսի սոսկալի պատահարաց  
զերծ կացուցէ զձեզ և զամենայն տուն ձեր  
բարգաւաճ յար և յաւէտ:

Ն. Մ. Բարեացակն

ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ



## ՅՈՐԴՈՐ ՅԵԿԵՂԵՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Որդեանկ իմ սիրասուն.

Օր որպէս մանուկ տհաս յորժամ անկանիցի 'ի փորձութիւն կամ 'ի տառապանս, վաղ վաղ դիմէ առ խնամակալութիւն ծնողաց, զի պաշտպանեսցէ զինքն ծնողական գգուանօք, և որդեւսիրական օրինիւ գուն գործել փութասցի ազատել յայնց վշտացն և 'ի ցաւոց. սմին նման յորժամ անկանիցիմք 'ի փորձութիւն մերս հանապազօրեայ մշտաջան երից թշնամեաց, այսինքն մարմնոյ՝ աշխարհի՝ և սատանայի թելագրութեամբ, առ մայր մեր սուրբ եկեղեցի պարտ և պատշաճ է դիմել ջերմեռանդ սրտիւ աղօթամատոյց լինել, զերթ աղանւոյն 'ի նոյեան տապան. զի ազատ լիցոք յամենայն չար փորձանաց և պատահարաց, գտանելով 'ի տեսանէ խնամողական պաշտպանութեամբ զգրթութիւն և զողորմութիւն:

Բանզի ըստ ստուգաբանութեան աննուան իւրոյ եկեղեցի, այսինքն եկ զի եղիցի. ըստ մերում լեզուի. նոյնպէս և տաճար բառին. արդարև տայ մեզ ճար, ազատելով զմեզ 'ի վշտաց և 'ի նեղութեանց: Բայց եթէ ոք արտաքոյ իցէ յայսմ տէրունեան տապանէ և յ՝ստուածային պահպա-

նութենէ, անշուշտ հեղձամղձուկ լինի զերթ  
ջրահեղցոյ հարկւրամէից :

ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՅՈՐԴՈՐԱԿԱՆ ԱՂԵՐՍԱՆՔ  
ՎԱՍՆ ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ԻՆՉ ԳՈՐԾՈՅ

Ազգախնամ տէր.

Ըստղ քան զաստղ առաւել է փառօք,  
սոյնպէս բարեսէր առաքինազարդ անձինք  
ոմանք, օգնական լինելով միմեանց, եղբայ-  
րասէր կոչին միայն. բայց ոմանք առաւել  
լագոյն բարեսրտութեամբ պանծացեալ գո-  
լով, ընտրեալ լինին ազգիս ընդհանրու-  
թեան օժանդակ գտանիլ: Օի ազգասիրա-  
կան գերագոյն առաքինութեանց գործադիր  
լեալ, երանաւէտ գերագոյն պսակօք փա-  
ռաւորեսցին նորա յաւիտեան, համայն ազ-  
գիս շնորհակալու մաղթանացն ձայնակցու-  
թեամբ: Հորոց և զքեզ զինամատաւ տէ-  
րութիւնդ՝ ի վազուց ձանաչելով, աներկ-  
բայ յուսով քաջալերեցայ, աստուածային  
նախախնամութեամբ ընտրեալ ազգասիրիդ  
առաջարկել զազգօգուտ զայս Մատուածա-  
հաճոյ զգործ. որ մեծագործութիւն իմն է

համարելի և առիթ վարձառութեան երա-  
նակէտ վիճակի, փառաց սուրբ արքայու-  
թեան. զի այն ինչ թաղի եկեղեցին յոյժ  
քանդակեալ գոլով, հրամանաւ Սրբազան  
Պատրիարքի կամիմք նորոգել զնա. բայց  
այս մեծագործութիւն ոչ այլով իւրիք կարէ  
'ի կատար ժամանել, այլ միայն առատ ձե-  
ռընտուութեամբ մեծարու առատագութ  
յարգելեաց: Վաւիթ յորժամ լուաւ թէ  
որդի իւր Սողոմոն կանգնելոց է գտաճար  
Լստուծոյ, ինքն յառաջագոյն սկիզբն ա-  
բար հոգատարութեան զպատրաստութենէ  
պիտանաւորութեան, տուն Լստուծոյ մէծէ,  
մեծի պատրաստութեան պէտս ունի ասե-  
լով. յորմէ ուսեալ գոլ և մեք առ մեծա-  
հաւատ յարգութիւնդ դիմեցաք պերճացեալդ  
յազգասիրութեան ձեռնտու գտանիլ. զի այս  
գործ մեծ և ընտիր՝ հոգեշահ բարեաց մե-  
ծաց պատճառ գոլ գիտեմք անշուշտ: Ասն  
զի՝ ժամանակաւ ոմանք 'ի ծերակուտից ա-  
սէին փրկչին մերոյ Հիսուսի. թէ արժա-  
նի է որում զնորհոցս զայս առնես զի զժո-  
ղովորդանոցս նա շինեաց մեզ. նա զի՝ և ե-  
կեղեցին աղաղակէ վասն շինողաց սուրբ ե-  
կեղեցւոյ՝ ասելով, թէ շնորհեալ զթողութիւն  
կանգնողի տաճարիս. և 'ի ննջման աղօթս  
այսպէս. որորմեա՛ զեկեղեցի շինողաց: Աւս-

տի աղաչեմ, զի որչափ կամ ո՛րպէս կամիրք  
ազգայինամ բարեգթութեամբ ձերով, այն-  
պէս յօժարեսցիք նպաստամատոյց գտանիլ .  
որով ենթակայ գտցիք այսր առաքինութեամբ  
վերոյիշեալ բազմազան օգտից ընդհանուր  
ազգիս պարտուպատշաճ աղօթից :

Ո՛ղջ էլով ՚ի մխիթարօրինն Էս ինճ  
ճոռաստիս,

ՍԱՀԱԿԻՍ  
ԱՒԵՏԻՍԵԱՆ

---

ՋԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՅ ՈՒՍՄԱՆ ԵՂԲՕՐ

Սիրելի՛ բարեկամ.

Ի վաղուց արդարեւ որպէս ցանկայի տե-  
սանել զսիրելիդ բազմարգիւն գիտութեամբ  
այսպէս ճոխացեալ, ահաւասիկ յերեկեան  
աւուր ապացուցական կերպիւ զնշանն իսկ  
տեսի ՚ի սիրանիչ մարգարտահիւս նամա-  
կիդ ճոխիմաստ բանիցդ որ առիս բարեխըն-  
դիր միջոցաւ, որով ըստ բանի իմաստասի-  
րին, թէ այր ՚ի նամակէ իւրմէ ճանաչի,  
արդարեւ յայտնապէս ծանեաք շնորհունակ  
և իմաստալիր զանձն քո սիրածրար նամա-

կից զհոգեպարար ճաշակն վայելելով :

Աւստի խնդրեմ 'ի հայրաշարժ աղբերէ կենդանարար սուրբ հոգւոյն , զի յանսպառ գանձուց իւրոց շնորհաց անհատահոս պարգևելով քեզ իմաստասիրիդ առաւել քան զառաւել բազմարդիւն հրաշաղարդեսցէ ըզքեզ և պերճացուսցէ զանազան զիտու թեամբ և երկնային իմաստութեամբ 'ի պայծառութիւն ազգիս և ծնողաց քոց և ինձ վաղեմի բարեկամիդ :

Աւ զայն բարեպատճառ խնդիր նամակագրիդ յօժարութեամբ պատրաստ եմ կատարել եղբօր օգնականութեան պարտաւորութեան օրինիւ , եթէ յառաջիկայ կիւրակէի յետ արձակման ժամուն տու մեզ արասցես զնախօսաճաշիկն :

Ն. Ծ. ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՆԴԻՍԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ԴՊՐՈՑԻՍ

Քաղցրացան բանք տեսառն 'ի քիմս իմ լուարնք հարք եւ եղբարք :

Ի պատմագրութեան Հարութեան Փըրկ-

չին շարժումն մեծ եղև ասէ սուրբ Աւետու-  
րանիչն Սատթէոս, որ զանազան ճաշակս  
տայ մերս մտաց. բայց զառաջինն 'ի վերայ  
քարին սուրբ Քերեզմանի Տեառն մեկնելն է  
ըմբոն, որ 'ի լուսափայլ Հարութեան փրկչ-  
չին. և ապա զհանդերձելոցս 'ի հանդիսիս:

Քերականութեան արհեստն եցոյց մեզ  
ածականն երկու կերպ լինել ընդ գո-  
յականաւ. ոմանք զքանակութիւն յայտնեն  
գոյականին և ոմանք զորակութիւն. բայց  
բառք մեծ՝ երկոքումբք 'ի միասին տայ մեզ  
նշանակել աստ, շարժումն մեծ եղև ասե-  
լով, որ ասել է սքանչելի. արդարև սքան-  
չելի և սքանչելագործ: Բայց քարն այն  
սուրբ Քերեզմանին Տեառն, որ 'ի մեղաց  
մերոց ծանրացեալ էր 'ի վերայնորա, մար-  
դասիրութեամբ իւրով յետ կամաւոր շար-  
շարանացն և երեքօրեայ թաղմամբ կատա-  
րելոյ զանօրէնութեանն փրկական խորհուրդ,  
ինքնազօր սուրբ յարութեամբ շարժեաց զայն  
քարն ծանրագոյն՝ սքանչելի եղանակաւ ո-  
րոտմամբ երկրի. յորմէ սարսեցաւ սանդա-  
րամետ և սարսափեցաւ Սաղայէլ, որպէս և  
յաւուր Հարութեան Ղազարու, յորժամ  
լուաւ զնմանէ՝ եկ արտաքս: Ապա իմացա-  
րուք 'ի Հարութեան Փրկչին զի՞նչ լինելար-  
ժան էր, որ եղև. վասն զի հրաշափառ

սուրբ Յարութեամբ նորին դժնեայ ռաու-  
թիւնք բառնալով յերկրէ խաղառ, դրունք  
դժոխոց խորտակեցան և զօրութիւն Սա-  
ղայէլեան բանակին յաղթահարեցաւ . փառք  
մարդասիրական իւր ողորմութեան . ընդ այն  
ասէ Աւետարանիչն թէ շարժումն մեծ եղև .

Օարթիք 'ի տեսութիւն և այլոց սքան-  
չելի շարժմանց և փոխադրութեանց :

Ոչ ապաքէն շարժումն մեծ եղև, յոր-  
ժամ բանն մարմնացաւ մարդասիրութեան  
միջոցաւ . որով երկիրս եղև երկինք . զի  
սպասաւորք Աստուածութեան զօրք երկնից  
իջեալ յերկնից, ընդ մարդիկ խառնեցան  
յօգնականութիւն սպասահարկութեամբ . և  
հողաղանգուած մարմնաւոր երկրածին մար-  
դիկ երկնընթաց լուսաշաւիղ վարուք գուն-  
դագունդ ընդ երկնայնոց լուսելինացն դա-  
սակցեցան, ընդ որս փառարանիչ լինել  
յաւիտեան միասնական սուրբ Արրորդու-  
թեան : Աստ Սողոմոնի այգիք մեր ծաղկե-  
ցին և ետուն զհօտ իւրեանց, այժ . ոմանք  
կրօնաւոր լինելով, և ոմանք մարտիրոս . են  
որ՝ հեղմամբ արեան իւրեանց վասն քրիս-  
տոնէական հաւատոյ . և են որ՝ շարատանջ  
կենաց համբերութեամբ վասն սիրոյն Վը-  
րիստոսի : Այսն որոյ քան զայս առաւել  
զի՞նչ մեծութիւն շարժման, զի մահն 'ի

կեանս փոխադրեցաւ . զի թէպէտ առաջին  
Մշտամաւն մեռար , բայց երկրորդ Մշտամաւ  
Փրկչաւ մերով Հիսուսիւ Քրիստոսիւ կեն-  
դանացաք . և թէպէտ նախամայր մեր առա-  
ջին Աւայիւ զերթ թիւնարբու շարաշար լը-  
կանօք խոշտանկեցաք , իսկ երկրորդ Աւա-  
յիւ սուրբ կոյս Սարեմաւ զճառն կենաց  
ճաշակել արժանացաք :

Հարժումն մե՞ծ եղև արդարև , զի փո-  
խան առաջնոյ երկրաւոր դրախտին ադինայ՝  
երկնային արքայութիւն շնորհեցաւ մեզ . և  
շարաշուք արիւննուշտ աւազակն մահապարտ՝  
զմուտ կալաւ յարքայութիւն ընդ Փրկչին :

Ո՛ր այն Մշտարամսոյ Հրէից ազգովիմք  
սպանման առանց անխայութեան անխնայ  
հրաման . սպառսպուռ դարձաւ 'ի հրաման  
ազատութեան միջնորդութեամբ Ճշմարիտ  
Եսթեր տիկնոջ մօր Տեառն սուրբ Աուսին .  
և փոխեցաւ ջուրն 'ի գինի ուրախութեան ,  
զի խառնեաց 'ի խառնարանս զգինի իւր ,  
եզէն զզննլիս իւր . այսինքն ետ մեզ զարիւն  
իւր ուխտ կրկին՝ հանդերձ սրբալոյս Սիւսո-  
նաւ . զի աւազակախոզխող վիրաւոր բնու-  
թիւնս մարդկային՝ դարձեալ վերստին կանգ-  
նեցի բուժումն ընկալեալ 'ի ձեռն խնամու-  
ղական այցելութեան Քահանայից , հրամա-  
նաւ վերատեսչի Փրկչին մերոյ , որով ազա-



տեցաւ պարտապանն . ուրախացաւ անառակ որդին վերագարձմամբ 'ի գողն խնամակարկառ հօր իւր ամենակալի :

Հարժումն մեծ եղև, զի փոխան ժաշարեր ծառոյ գրախտին զփայտ կենաց մեզ ընկալաք բանալի գրան սուրբ Արքայութեան . և գատակնիք ժաշագուշակ երկանց և աշխատանաց նախաստեղծից՝ փոխեցաւ 'ի հանգիստ գերապանծ . զի վանումն նոցին 'ի գրախտէն ազինոյ՝ գարձաւ 'ի հաշտութեան հրաւեր 'ի վերնագաւառ սուրբ Արքայութիւն, եկայք առ իս բանիւ : Ո՛չ ապաքէն շարժումն մեծ եղև, մինչ մարգարէին բերանով ծանոցց հաշտութեան գրան, հաշտեալ եմ ընդ քեզ աստապետդ և խախտեալդ : Հարժումն մեծ եղև, զի ամուլն ծնաւ եօթն սքանչելիս նորոյս օրինաց լինել միջնորդ փրկութեան մարդկան . իսկ բազմածինն նուաղեցաւ 'ի ծննդոց, որով առաք զնորհս փոխանակ շնորհաց . և մկրտութիւնն ջուրք՝ գարձաւ 'ի մկրտութիւն հոգեկան :

Ո՛չ ապաքէն ամենափառաւոր սուրբ յարութեան շնորհիւն եղև այս մեծ շարժումն, զի կուսպարիշտ անձինք արարածոց երկրրպագուք՝ ամենակալ արարչին եղեն երկրպագուք : Սօղոսն եղև Պօղոս . հալածիչն եկե-

դեցւոյ՝ եղև անօթ ընտրութեան, Աստու-  
ծոյ բերան, քարոզ բանին ճշմարտութեան :  
Մաքսաւորն եղև Աւետարանիչ :

Չկնորս տխմար անձինք եղին որսորդք  
մարդկան և աթոռակիցք Հիսուսի փրկչին,  
դատաւորք և դատապարտողք զՔրիստոս  
նչ խոստովանողաց. նստջի՛ք ասէ յերկո-  
տասան աթոռս դատել զերկոտասան ազգս  
խորայելի : Ո՛չ ապաքէն շարժումն մեծ եղև,  
մինչ բաժանումն լեզուաց Քարիլոնեան աշ-  
տարակին յաւերումն՝ դարձաւ ՚ի քաղցրու-  
թիւն ՚ի սէր և ՚ի միաբանութիւն, առաք-  
մամբ սուրբ Հոգւոյն շնորհաց ՚ի սուրբ Մի-  
օն վերնատունն, ուր երևեցան բաժանեալ  
լեզուք իբրև ՚ի հրոյ. և սկսան խօսիլ Ա-  
ռաքեալք յայլ և այլ լեզուս, որպէս և  
հոգին տայր բարբառել նոցա :

Աշկեսցուք և առ այն ծանօթութիւն մեծ  
շարժման աւուրս պատշաճի : Ո՛չ ապաքէն  
մեծ է այս շարժումն, զի հոգեկորոյս խա-  
ւար տգիտութիւն՝ որ ՚ի բազում ամաց հե-  
տէ իբրև մասեաց լերանց ամպ թանձրա-  
մած ՚ի վանօրայս հայաստանեայց և ՚ի քա-  
ղաքս բազումս պատեալ պաշարեալ էր՝  
զԱստուածաւանդ սիրոյն ջերմութիւն սառ-  
նամանեօք պահել ՚ի տխուր. և որք առա-  
ջին լուսաւորչաց մերոց թաղէոսի և Քար-

Թուղիմէսի սրբազան Առաքելոց ջանիւք ,  
 և որք սրբոց Հարց մերոյնախկին Թարգ-  
 մանչաց քաջահնար արդեամբ լուսաբուղի  
 գիտութեամբ զարդարեալ մեծամեծ վար-  
 ժարանք՝ մինչև ցայսօր ճանապարհորդ կա-  
 րաւանաց էին պանդուկք . այժմ սուրբ հոգ-  
 ւոյն պարգևօք մեծարդիւն զարգացան ճո-  
 խացան զերթ սուրբ Սիօն վերնատան , որ ոչ  
 միայն քերականութեամբ և ճարտասանու-  
 թեամբ , այլ և կրօնական գիտութեամբ , մին-  
 չև խորիմաց բանից սուրբ Վրոց բացատրու-  
 թեամբ Աստուածաբանական գիտութիւնս  
 ձեռնամուխ լինել համարձակին տհաս ման-  
 կունք և պատանեակք ազդիս Արամեան : Ա-  
 պա ցնծասցուք ՚ի վերայ մեծամեծայն Աս-  
 տուծոյ , ցնծասցուք . նա զի՝ ուննք մանկը-  
 փիք մինչդեռ իցեն ՚ի դպրոց՝ ընդ հովա-  
 նեաւ դաստոռի , բազմավէպ զիրք յօրինեն  
 յընծայումն ազդիս խնամով :

Յնծացէք եղբարք՝ ցնծացէք , զի վա-  
 յելչական և արժանաւոր ջատագովութեանս  
 այս հաղորդ էք և դուք , որ զընտիր ընտիրս  
 ուսումնական արդեանց յաւէտ ցուցէք աս-  
 տանօր :

Արդ՝ զարդիս զինչ ունիք . դասակից  
 եղբարք իմ . քաջալերացարուք և այսօր վա-  
 յելլարար պատասխանել , զոր ինչ լիցի հար-

ցումն յայսմ ակնածելի հանդիսիս: Որ քա-  
նի մի կարգ մեծարու արամբբ համահաւա-  
քեալ, թէ պերճիմաստ Մտուածաբան վե-  
հափառ Հ.Լ.Կ.Ս.Ս. սրբազան Պատրիարք հայր  
մեր, ընդ նմին և հոգեձաշակ վարդապե-  
տաց և սրբակրօն քահանայից դասք, թէ  
քաջիմաստ վարժապետք Մտուածուսոյց  
ժողովորդականօք հանգերձ աղգասէր ամի-  
րայք՝ ամենեքին սոքա Մտուածուստ շար-  
ժեալ, թողեալ զհանգստարան տեղիս իւ-  
րեանց կամովին, Հիսուսաւանդ մարդասի-  
րութեամբ ՚ի խրախոյս աշակերտելոցս ե-  
կեալ սպասեն անձկանօք: Մյա կարի՛ պա-  
տեհագոյն եղև կենսաբարոզ Մետարան-  
չին բան յատենաբանութեանս առ մեզ լի-  
նել բնաբան, որ ասէ. շարժումն մե՛ծ ե-  
ղև:

Ն. Ծ. ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

---

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՔՈՒՄՆ  
ՎԱՄՆ ՓՈՐՁԱՆԱԻՈՐ ԱՂՔԱՏԱՑ  
Հոգեսէր բարեկամ.

Բնականաբար օրէն է Մտուածային.

Հասանել յօգնութիւն միմեանց մխիթարութեամբ: բայց նախ պարտ է քննել և իմանալ զկարօտութիւն իւրաքանչիւրոց զանազան աստիճանս և այնպէս հաղորդել զբարիս 'ի մխիթարութիւն ըստ բաւականին: ըստ որում իւրաքանչիւր անձինք ունին կարօտութիւնս զանազան կարեաց: Է որ՝ տըզէտ գոլով կարօտ է ուսանել զգիտութիւն: և է որ՝ վասն պարտուց կամ թէ վասն աւուր պարէնի կամ ապրուստի կարօտ է շափաւոր դրամի: Է որ՝ ունելով զտկարութիւն մտաց՝ կարօտ է բարեխրատ առն միում: զի վասն վարուց և բարուց իւրոց ընկալցի զօգուտ ինչ: և է որ՝ 'ի ձեռն թշնամեաց անիրաւութեան ինչ պատահեալ, կարօտ է իրաւասէր և բանիրուն առն ուրումն, զի գտցէ ազատութիւն և շահաւորեսցի իրաւամբ: Ապա թէ այս այսպէս իցէ՝ բարեսէր անձինք յորժամ ըստ արժանւոյն մխիթարեսցեն զկարօտեալս փոխարէն այնց առաքինութեանց՝ առատօրէն վարձատրելոց են աներկբայ 'ի տեսանէ: Վանզի յաւէտ առաւել հաճոյ է առաջի Աստուծոյ գործողորմութեան ո՛ր և իցէ զոր առնէ կարօտ ընկերի իւրում փարատելով զցաւս նորա:

Արպէս յայտ է յարգութեանդ զի որչափ տարժանելի տառապանաց բազմաց

պատճառ եղև հրդեհն այն յանցեալ եօթ-  
նեկի յայս ինչ թաղին . որոյ վասն և մեր  
'ի գութ շարժեալ պարտաւորեցաք Մզգա-  
սիրական եռանդիւ զրամ ինչ հաւաքել և  
բաժանել , արժանաւոր կարօտելոց վկայու-  
թեամբ և ընտրութեամբ տաներէց քահա-  
նայից նոցա . արդ՝ վասն մտերիմ բարեկա-  
ժութեան մեր զեկուցանել պարտաւորեցայ  
նամակաւս այսու , զի և դու արժանաւոր  
մասամբ հաշորդ լեալ ընդ մեզ այսմ ա-  
ռաքինութեան , 'ի միասին արժանասցուք  
լսել զայս բան 'ի բերանոյ վերկշին , թէ ե-  
րանի ողորմածաց զի նորա ողորմութիւն  
գտցեն :

Ն. Ծ. ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԿԱՅՕՐԷՆ

ՎԱՍՆ ԾԱՄԿԱԲԱՐՈՅ ՏՆԱՆԿԻ ՈՒՐՈՒՔ

Սիրասնունդ եղբայր իմ .

Մտաբարև պարտաւորութիւն գոյ մեզ ա-  
մենեցունցս միշտ և հանապազ օգնել և խը-  
նամել կարօտելոց և տնանկաց . յորոց մինն  
այս զիրընկալ ազգատ ողորմելին 'ի բազ-

մաթիւ պարտուց ներքոյ անկանելով տան-  
ջեալ քոչորի հանապազօր շախհաս երեք  
հարսնացու դասերը հանդերձ, որոց աղա-  
գաւ ոչ կարէ բացատրել և յայտնել այլոց  
բաղմաց զհառաչանս ցաւոց սրտին, և զան-  
հանդուրժելի աղքատ կենցաղաւարութիւն  
իւր. որ ՚ի խոր խոցեալ տաղնապի ՚ի վա-  
ղուց հանապազօր ծածկաբար: Աւտի՛ մերձ  
դրուասիկ գողով իմ ճշմարտագրատում վը-  
կայագրութեամբս այսու առ գթասիրտ սի-  
րելիդ ուղարկել պատշաճ համարեցի, հը-  
րաւիրելով զյարգութիւնդ ՚ի սոյն Ըստուա-  
ծահաճոյ առաքինութիւն: զոր տեսեալ  
տեսուն ՚ի ծածուկ, հատուցէ քեզ անյա-  
պաղ: Աւրեմն աղաչեմ զի յորում պահու-  
ներկայացի առաջի սիրելութեանդ՝ մի խը-  
նայեցես ըստ մարդասիրական գթութեանցդ  
բերմանց ողորմիլ ըստ օրինի ձեռնառու-  
թեամբ:

Արով բարեմաղթել հանդերձ զաւակօք  
վասն գթասիրտ կենաց քոց պարտաւոր ա-  
րացես զնա և զիս. զի ամենախնամն Ըստ-  
ուած անդորր պահեցէ՛ զբարեսէրդ ՚ի մը-  
խիթարութիւն այսպիսի խղճալեաց:

Ն. Ծ. ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԱՆՀՈՒՄՈՒԹԻՒՆ ՄՆՈՂԱՑ

ՎՏԱՆԳԱՌԻԹ Է ՈՐԳԻՈՑ

Խնամածու եւ բարերար ծնողաց իմոց  
համբոյր ձեռաց մատուցի ծառայական  
ղիմօք:

Օրորպէս օրէն է հոլուաց արթնութեամբ  
պաշտպանել զխաշինս իւրեանց . նոյն օրի-  
նակ և ծնողաց արթուն պաշտպանութեամբ  
պարտ է խնամել զորդիս իւրեանց հանապազ-  
սպա ո՞յր աղագաւ այսօր թողեալ էք զիս  
նուաստս միայնակ 'ի քուն խորին թանձրու-  
թեան 'ի պարտիզի անդ , տռանձին վե-  
րագանալ 'ի տուն . եթէ գիշատիչ և վե-  
նասակար դազան ինչ պատահէր անգանօր ,  
անշուշտ ունէր և զիս գիշատել . որով ձե-  
րումդ բարեւէր սրտի անտարակոյս առիթ  
լինէր մեծամեծ տառապանաց և ցաւոց . զի  
մինչ զարթուցեալ 'ի քնոյ տեսի զինքնս մի-  
այնակ , զահի հարեալ սաստկապէս եղէ  
խելացնոր և սասանեալ և կարկամեալ .  
երկնային լուսաւոր մետէօրէից բազմօրակ  
տեսիլ տիեզերաց՝ մառախլապատ նման  
ամպոց մթադնեցին զաշս իմ . շնչիւն եթե-  
րաձեմ հողմոց զերթ թշնամեաց հրացա-  
նից արձակումն եղև յականջս . կոնչիւն  
գորտոց որ առ գետս , իբր ձայն զնդի ա-



բիւնահեղ թշնամեաց . խոխոջիւն այնր դե-  
տոյն հոսանաց՝ իրր զխորհրդածութիւն  
ժանտ աւազակաց . գայլայլիկ թռչնոց՝ իրր  
կոնչիւն ագռաւուց . սօսափիւն տերևոց իր-  
րու ոանաձայն աւազակաց : Ալ յետոյ ար-  
տասուածօր աչօք շոգայ՝ ի խրճիթ այգե-  
պանին , յորում կամ սւանիկ տրամալի .  
աղաչեմ զհայրութիւնդ ուղարկել առ իս զու-  
ղեկից ոմն , զի ընկերացեալ ընդ նմա ե-  
կից այդր , քանզի չի՛ք իմ բնաւ ուսեալ ըզ  
ճան ապարհ

Կրտսեր որդի ձեր

ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՀԱՅՐԱԿԱՆ ԻՐԱՏ

ԱՌ ԱՊՍՏԱՄԲ ՈՐԴԻ ԻԻՐ

Բարեսնունդ որդեակ իմ հոգեհատոր .

Տրամուծիւն մեծ կալաւ զիս , մինչ լը-  
ւայ զապստամբութիւն քո զարհեստաւոր  
ուսուցչէ քումմէ . յորմէ ստիպեցայ խու-  
ղարկու լեալ , ՚ի զննին մտանել հայրախը-  
նամ տեսչութեամբ . թէ ուստի՞ պատճառէ  
քեզ այդ . արդեօք յոր շարախորհուրդ ու-  
մեքէ ուսար զայդպիսի բանս անվայելս . յոր

նիմուսից բաժնակ արբեր զայդ ջուր լի-  
փանառն : յի մահարեր ծառոց ճաշակե-  
ցեր զգտուղի զայդ գարնագոյն : Ա՛Տ՛ ըն-  
գէր օրննակնն առնուս՝ ի սևորակ և թանձ-  
րացն առամյոյ Արայնի, և ի շարաշար մահ-  
ուանե Աճիսողումայ . որ գեղեցիկն էր ե-  
րեսօք և կերպարանօք քան զամենայն մարդ .  
տգեզադառ տուսել քան զառաւել : Արպէս  
մինչ նորկմն հնազանդութիւն փայլէր ի  
քեզ, գեղեցիկս բարեր ի քեզ անուշահո-  
տութիւն : Թոյց այժմ ատելի և անգոսնե-  
լի յաչս ամենեցուն . և ամենեին անարժան  
արևու երբէք լուսաւորութեան . որպէս և  
եղև իսկ Արայնի և Աճիսողումայ . որք յաչ-  
նիւ կենդանութիւնս իւրեանց , յերիտա-  
սարգական տիս հասակի զմահարեր խառ-  
նեցին զթոյն . որով վաղվաղ ընկալան ըզ  
մահ դառնագին փշելով զհոգիս իւրեանց :  
Այա և դու գիտասջի՛ր , զի որչափ կերպ  
առ կերպ նեղութիւնք և անձկութիւնք քեզ  
սպասեն , եթէ անզեղջ և յամառեալ կայ-  
ցես ի նոյն ապստամբութեան : Այսն զի  
ամենայն նեղութիւնք և թշուառութիւնք  
անտի յառաջանան , որպէս և քեզապիտի  
անձինք այսպիսի վարուք խիտ առ խիտ դան-  
դաջելով փոփոխեն զիւրեանց արհեստաւոր  
ուսուցիչս . ապօրինակ վարուց իւրեանց

յարմարել ջանան, և ոչ կամին բնաւ տրք-  
նիլ և հպատակիլ համբերութեամբ. որով  
ի վախճանի սասանին և ոչինչ, և մնան տը-  
ղէտ և անտրուետ. որով անկարող գա-  
նին և զապրուստ պարէնի աւուր շահիլ:  
Աւտի և դու մի կարծեր թէ ըստ կամաց  
քոց և ես ՚ի ստապատիր այդց բանից գան-  
գատանաց համողեալ, բարձի թողի արա-  
րեալ իմ զայն ճարտարահնար արհեստաւոր  
ուսուցիչդ, և զայլս զեղերեցայց գտանել  
ըստ հաճոյից քոց. աժենեին անկարելի է  
ինձ զայդ առնել. միայն թէ հարկ է քեզ  
սիրով և հաճութեամբ հնազանդիլ նոյն  
բարեխնամ արուեստագիտին, եթէ ճշմա-  
րիտ հոգաբարձու գոլ զիտես զիս քոյդ կե-  
նաց, անդստին ՚ի մանկութենէդ մինչև ՚ի  
վախճան:

Ո՛ղջ լեր ՚ի բազում ամս:

ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՈՒՐԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ՎԱՄՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ  
ՈՐԴԻՈՑ ԲԱՐԵԿԱՄԻՆ


Բարձրելոյն բարեօր բարգաւաճեալ բարեփափագ բարեկամիդ բաղդաւորի, խընդալ 'ի տէր բերկրանօք 'ի խնդակցութիւն յաւերժական.

Անկ և պատշաճ եղև ինձ այսօր աւետարարաբառ գրչաւ խնդակցիլ ընդ երջանիկ բարեբաղդիդ, յաղագս բարեջան քաջուսումն ցանկալի որդւոյդ սիրելւոյ, երանել երանեմ, զի որպէս 'ի վաղուց անտի ցանկանալով ցանկայիրդ տեսանել զորդի քո պարկեշտասուն և զարդարեալ զանազան իմաստալից գիտութեամբ, ահա ողորմութեամբն Աստուծոյ՝ բարեբաղդարար արժանացար հասանել 'ի բաղձանս բարեսէր որդւոյդ, որ 'ի գերդաստանի ձերում ընտիր և պիտանի անդամ մի եղև, անձանձիր աշխատելով յուսմունս կարևորս, և իրրև ջահ մի լուսաւոր նշուլագեղ փայփայլի յաւէտ բարեկրօն վարուք և քաղաքական կրթութեամբ և ազգի ազգի մակացութեամբ հանդերձ լեզուագիտութեամբ: Այսանորոյ խրախացիր յաւէտ հրճուանօք 'ի վերայ այդբ ուսումնատենջ որդւոյդ սիրելւոյ, և շնոր-

Հակալ լեր զմարդասիրութենէ Լստուծոյ  
ամենայն գոհունակութեամբ . զի 'ի տեառ-  
նէ եղև քեզ այս շնորհ , զցանկալին ամե-  
նեցուն ունիլ զայս օրհնեալ զաւակ : Սուրբ  
աջն անեղին հովանի և պահապան լիցի զա-  
մենայն աւուրս կենաց իւրոց անփորձ և ան-  
սասան պահել յամենայն արկածից չարեաց  
և յորոգայթածից մարդախանձ թերահաւատ  
աղանդաւորաց , որ այժմ ոչ սակաւ գտա-  
նին յամենայն ուրեք 'ի թելադրութենէ չա-  
րին սատանայի : Տէր Յիսուս Քրիստոս  
նախախնամական գթութեամբն իւրով ա-  
ռաւել քան զառաւել զարգացուցէ Լստ-  
ուածային շնորհօք և իմաստութեամբ լը-  
ցեալ . զի իրրև աշտարակ հզօր յետս կա-  
սեցուցանել կարացէ զամենայն նետս պատ-  
րանաց բանսարկուին . և իրրև ըսպտեր ա-  
նաշօտ բարեյիշատակ լիցի բարեբախտ հօրդ  
բարեպաշտի :

Ո՛ղջ լեր 'ի բագում ամա 'ի մխիբա-  
րուրիւն որդւոյդ ցանկալոյ , եւ ինձ նուաս-  
տագոյն յետնորդ բարեկամ :

ՍԱՀԱԿԻՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ



ԱՌ ԿԱԹՈՒՂՈՍՈՍՆ

ԻՔՐ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԷՆՆԵՐԷ

Ի վսեմափառ, հոգեպանժ Հայրապետական վայելչութիւնս գերազանց իմն հանգիսացելոյ տեառն եւ տեառն Աստուածընտիր մեծի Քահանայապետի Արքայան . . . Ի էրերաճեմ մարութ գարշապարացն համբոյր ծառայական.

Յարգանդ ժամու եւ ժամանակի բազմատեսակս գտանելով գարձուածք եւ եղանակք արգելք լինին 'ի շրջանս ընթացից ջանդուգն զօրութեամբ իտրեանց խափանել իսպառ զբազում բազում անգամ 'ի կարևոր պիտանութեանց . մ'նտուանդ զերթեկեկու թիւն գրաւոր եղբար զօրենք բռամ' անհետս առնել' թէ եւ 'ի ծանօթից առ ծանօթս իցէ հարկիւ պահանջեալ:

Արգէն է արդարեւ սաստիկ նոյն հոյուսմն բազմաժողով շրջանի 'ի մէջ աշխարհի, եւ այն' ընդ երկորս տեկով բազմաց առիթ վերաւորութեան հանդերձ կործանմամբ. ոչր սակս անկարող գտանեաք դոնէ ըստ մասնեայ իմն գծել առ ձերում բարձր Վեհափառութիւն ցուցանելով զիմս նպատակ հարազատ ծառայութեան' որդիական


սիրատոգոր ջանիւ :

Արդ ուրեմն 'ի ձեռն բանաւոր ստոյգ պատճառիս հանդիսացելոյ՝ խնդրի ներել ըզ ծանրագոյնս զայս զյանցանս . զի արդարեւ 'ի խանդակաթ միասրտութեան գոլով մեր , ըստ նազարանութեան իմաստնոյն՝ է սիրտ և ներքին մարդ յարթնութեան , թէպէտ 'ի քուն գրութեան էաք այսքան միջոցաւ :

Ապա մնայ մեզ հարազատութեամբ հարցարանել զձերդ երջանկափառ վեհապետութիւն , և յուսամք անտարակոյս միամտութեամբ 'ի բարեյաջող խաղաղական բարեփառութեան և 'ի վսեմ քաջողչութեան գոլ հոգեւրնտիր սխրալի անձին ձերում բարձր տէրութեան :

Որում էմ անարժան ծառայ բարեացակն

ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ



ՊԱՏԱՍԽԱՆԻ ՍԻՐՈՅ ՆԱՄԱԿԻ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ՈՒՐՈՒՔ

Համեստափայլ եւ շնորհունակ տեառն  
քաբունոյդ Յիսուսագործ սրբոյ աշոյն համ-  
բոյր խոնարհակաւն յաւետ կարօտիւ:

Ի շրջանս ընթացից օրակշիռ լուսանիւթ  
արեգական շիք երբէք խոտսրումն տիեզե-  
րալոյս ծագման իւրոյ փաղփիւնափայլ ճա-  
ռագայթից ե ոչ ուրեք. ոչ ՚ի մտոյ ե ոչ  
՚ի հեռուստ:

Եւ պա՛ շնորհ մեծ ունիմ զանկեղծ մտեր-  
մութենէ խոհեմառատ տեառնդ. զի ոչ մի-  
այն անյողդողդ գոլով ՚ի վաղեմի սիրարոր-  
րոք մտերմութեանս քաջածանօթս արարեր  
զիս զքաջողջութենէ սիրապատար սրբոյ ան-  
ձինդ, այլ ե զարեգականն բերելով ՚ի քեզ  
օրինակ՝ անմոռաց յիշմամբ ՚ի հեռուստ ես  
լուսանիւթ բարեմաղթութեանդ սիրանիշ  
բանագրութեան հանդիսիւ մտիթարեցեր զիս  
իբրեւ երկնաձիր պարզեօք. տպա ընդէ՞ր է  
ինձ երբէք մոռացօնս լինել զսիրելիդ ՚ի յի-  
շողութեան, այլ պարտաւոր ես գատեցայ  
զանձն իմ յայտ ածել այսու բանագրութեամբ  
զնիշ Եստուածաւանդ սիրոյ, զոր ՚ի վաղուց  
ունիմք ընդ միմեանս: Եներկբայ հաւատամ



յօժանդակ հասանել քեզ յամենակարողէն  
Մատուծոյ կարողութիւն մեծ յայդմ բարե-  
վաստակ ազգօգուտ գործ՝ յոր հանդիսա-  
ցար արժանաժառանգ վայելչութեամբ :

Եւ յանդորրական քաջողջութեան գոլ  
անձինգ արժանասցօք միշտ տեսանել ըզ  
քեզ յայդպիսի Մատուածահաճոյ գործս բա-  
րերաղդութեամբ :

Ն. Ծ. Տերութեանդ

ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՊԱՏԱՍԻԱՆԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԵՒԹԻՍԿՈՊՈՍ

Ճշմարիտ հովուին Քրիստոսի Աստու-  
ծոյ քաջընտիր քարոզ՝ արնիապանծ հայր  
մեր հոգեւոր՝ Աստուածաշօշափ աջոյդ սըր-  
բութեան համբոյր խոնարհական.

Մնհամեմատ սէր արհի սրբութեան ձե-  
րում ստիպեցին զմեզ 'ի սէր՝ և յօրհնութեան  
մնալ հաստատուն մինչև ցյաւիտեան անձ-  
կանօք :

Երդարև հարց սրբոց բարք պանծալի՝  
զորդւոցն զսիրտ Մատուածաղէրս մաղթա-  
նօք և գրաւոր օրհնութեամբ բերկրեցուցա-

նել յօժար և փոյթ : Ըջ ձեր երկնապա-  
ղատ և մատունք շնորհածաւալ ո՞րչափ և ո՞ր-  
քան խրախ արարին զկարօտակէզ զսիրտ  
մեր նամակաւդ ոգեպարար՝ զոր ձեռամբ . . . .  
քնկալեալ իբրև զպատճէն առաքելառաք  
վերընկալաք զնա համբուրիւ մեծարանաց :

Միայն զայս այժմ Ղ. ստուծոյ հայցեմք  
'ի վերայ առաքելաշնորհ գաւազանիդ մնալ  
հաստատուն և անյեղի, և պայծառափայլ  
ճոխանալ 'ի նոյն՝ զոր հոգւով չափ դիտեմք .  
և առ որ ցանկամք ամենայն և յամենայնի  
հաստատուն սիրով : Ասն սիրոյն զոր ցու-  
ցեալ է ձերում Սրբազնութեան, շնորհ մեծ  
ունելով . և վասն օրհնարան նամակիդ ե-  
կաւորութեանն և ևս բերկրելով խնդրեմք  
աղերսիւ անմոռաց առնել զմերս նուաս-  
տութիւն թէ 'ի խնկել մաղթանացդ և թէ  
'ի գրաւոր օրհնութիւնս, ո՞ պանծալիդ 'ի  
հարս՝ հայր հոգեշնորհ : Ըրդ քաջողջիկ կե-  
նաց ձերում սրբութեան փափաքելով :

Մնամք շնորհապարտ ծառայ

ՍԱՀԱԿ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԵՂՐԱՅՐԱԿԱՆ ԽՐԱՏ  
ԱՌ ԴԱՏԱՐԿԱՇՈՒՐՋ ՈՔ

Համեստաբարոյ եղբայր սիրասուն.

Այլեցայ արդարեւ յաւէտ՝ որ ոչ հաճեցար ընդ հովանեաւ մեծարու վաճառականին լինել մեծաւ վարձուք յանձն առնուլ ըզգրագրութեան պաշտօնէութիւն. որով պարտեցայ բաղխոհական խորհրդակցութեամբ իմանալ զպատճառն առ այն՝ ՚ի համոզումն : Այո՛ ցանկալի է ոմանց անաշխատ կենօք ցաւաբեր աղքատութիւն, քան թէ աշխատանօք ունել զշահաւէտ հարստութիւն պերճութեան : Այսպէս և դու որ կարող էիր զպաշտօնդ զայդ կատարել ՚ի գրագիտութեան և ՚ի թուարանութեան գոլով քաջուսումն. յորմէ հրաժարիլ կամեցար և ՚ի մարութեանցն անգամ, ափսո՛ս : Ար յաշխատանաց անտի վերընծիւղել երևէր քեզ արգիւնաւորութիւն. բազմազան պերճութիւն ասեմ գանձուց, և անկարօտ գոլ ումք մարգաւաճ կենցաղավարութեան անգորութիւն. և հնազանդական ծառայ գտանիլ Աստուծոյ օրինաց և պատուիրանայն յօժարամիտ գործադրութիւն, թէ ձեռն որ ոչ վաստակիցէ կերիցէ մի՛, անօթի ընտրութեան

է քարոզութիւն . կամ ո՞վ վատ, երթ առ մեղուն և ուսիր պօրծս նորա, որոյ գործ և վաստակ դանդաղասէր ծուլից է կշտամբիչ և յորդորական խրատաբանութիւն . զի՞նչ ցանկալի քան ընդ մարմնաւորին և առ հոգւորս մանաւանդ մեծաշահ աշխատութիւն, վասն հանդերձեալ կեննի անաղօտ պահել զլապտեր հոգւոյն . վասն զի գայ գիշեր յորում ո՞չ ոք կարէ գործել՝ եղբայր սիրատուն . և ըստ իմաստասիրին թէ ոստք առաքինութեանց քրտամբք և աշխատութեամբք բուսանին զի՞նչ բան իմաստնոյն . սոյն սա պերճիմաստ Պղատոն բարեբարբառ խըրատտուն, որ այն ինքն էր մեծահամբաւ Վրիստոտելի դասատուն . վերոյիշեալ ազգողական բանիւ իւրով իրրե զգչիր սուր զքոյդ բանալ յուսամզունկան զփակումն մի անձանց մերոց դասատու չընդունել հաճեսցի զայն գերիմաստն՝ մեր տգիտութիւն . իցէ՞ արդեօք ՚ի քեզ այդքան պերճութիւն իմաստից քան զՎրիստոտելին գրաբանական գիտութիւն . եթէ յոչինչ են համարելի յաշտքո աթենեան կամ ստոյիկեան իմաստասիրաց խումբ խումբ դասակարգութիւն, անդըստին ՚ի սկզբանէ անտի արարածոց ունիմք զայս պատուէր տէրունեան, գործել և պահել ասութիւն, յորժամ զմարդն առաջին

եղ 'ի դրախտին փափկութիւն . գուցէ՞ ար-  
դեօք 'ի քեզ այնպիսի գանձ անսպառ , որ  
ոչ երբէք սպառելով անկանիցիս 'ի կարօ-  
տութիւն , եթէ ծնողաց քոց ընչից յու-  
սադիր ես 'ի ժառանգութիւն , ոչ օգտէ եր-  
բէք քեզ 'ի կենիդ և 'ի ծերութեան քում  
այնպիսի հողմահոս դիւրածախ ժառանգու-  
թիւն , քան զջերմին սիրով անձամբ անձին  
ձեռաց քոց շահաւէտ աշխատութիւն :

Եւ յարդ՝ այս է ամենայն ծուլից անխախտ  
և անխափան ինքնայօժար հաճութիւն . զի  
որ ինչ իցէ առ հասարակ մարդկան պատ-  
շաճաւոր ճոխունակ բարութիւն . յորդա-  
հոսան տեղալ յամենուստ մինչ յանկո-  
ղինս փափկութեան հանապազօր ընդ իւրև  
ունիցին անշարժ հանդարտութիւն . միմիայն  
'ի բաց կացցէ յինքեանց յաւիտեան ձեռա-  
կերտական ձանձիր և աշխատութիւն . եթէ  
բարեկամաբար եղբայր ոք կամ ընկեր կամ  
ազգական խրատել ջանասցի յուսով աշխա-  
տութեամբ շահաւորել անձանց իւրոց բա-  
րութիւն , համարին զայնպիսին անհանդուր-  
ժելի մահահրաւէր և հոգեպահանջ թշուա-  
ռաքիրտն մեծ թշնամութիւն . 'ի կասկածի  
եմ եղբայր և ես , թէ այսու պատշաճաւոր  
խրատական բանիւս յորում կարգի համարի  
զիս քոյդ դատողութիւն . աղաչեմ իմա՛ ի-

բաւախո՞հ մտօքդ 'ի համառօտութեանս յայս վերջաբանութիւն . զի գոյզն ինչ անգամ ըոպէի մի ժամանակ կամիմ բնաւ ո՛չ, ցաւարեր և ծանրալուր բանիւ տալ քեզ վըշտակրութիւն . այլ ճշմարիտ եղբայրսիրութեան օրինաց ստիպմամբ յաւէտ վշտացեալս առ վնասաթոշակ քոյդ գործառնութիւն , ցաւալի սրտիւ պարտ վարկայ յօրինել քեզ 'ի խրատ զայս բանագրութիւն :

ՄԱՐՏԻՐՈՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՀԱՅՅՈՒԱԾՔ ԱՆՀՆԱԶԱՆԴԻՆ

Ի ԾՈՅ ԻԻՐ ԴԱՌՆԱՆ

Եզբայր բարեւեր .

Ընատաձիր պարգևատուն յամենայն ժամ ինքնին պարգևէ զպիտոյս մեր . և զհոգս մեր վասն վաղուեան արգելու . և այլ ուր խնդրեցէք (ասէ) և տացի ձեզ . այլ զի՞նչ արգեօք , զհաճո՞յս մարդկան՝ եթէ զԸստուծոյն . հարստութիւն՝ պատիւ՝ մեծարանս յայլոց իբրև Սաւուղ , որ ոչ վայելէ մեծութեան իւրում և փառացն խնդրակատար լինել այսպիսեաց : Յակոբոս առաքեալն քաջ

իսկ գիտակ գոլ Աւետարանական բանից  
 խնդրէք ասէ և ոչ առնուք, վասն զի շա-  
 րաչար խնդրէք. աւասիկ բացատրութիւն վե-  
 րոյիչեալ բանին բարւոք ուսուցանէ զկերպ  
 խնդրելոյն. քանզի ամենակարողն Աստուած  
 պատրաստ է 'ի թիկունս մեզ հասանել, ե-  
 թէ կարևորացն և եթ'ի խնդիր ելանիցեմք.  
 որպէս ասէ Հիսուս. խնդրեցէք զարքայու-  
 թիւն և զարդարութիւն, և այլ ամենայն  
 յաւելցի ձեզ: Օոր օրինակ՝ 'ի սեր ոսկւոյ  
 ազակելով եթէ հարստութեան լինիցիմք  
 հետամուտ և 'ի խնդիր, ոչ առնումք. որ  
 չար ևս քան զօձ թիւնաւորէ զոգիս մարդ-  
 կան: Այլ եթէ երկրաւոր հարք շնն սովոր  
 փոխանակ հացի՝ քար, և ձկան՝ օձ տալ  
 որդւոց իւրեանց, որչափ ևս առաւել երկ-  
 նաւոր հայրն: Մա զի՝ զկարևորսն խնդրել  
 և առնուլ՝ հնազանդի'ց է գործ միայն. զի  
 որդի ապստամբ և աներասան եթէ ընդ վը-  
 զեալ գտցի ընդ դէմ հօր իւրոյ, զի՜արդ  
 կատարեսցին խնդիրք նորա, միթէ մարթ  
 ի՞նչ իցէ զամբարտաւանն ընդ հնազանդս  
 մեծարել, ո՞չ որ Աստուծոյ ատելի են այդ-  
 պիսիք. որպէս և ինքն իսկ ասէ 'ի ձեռն  
 Ղաւթին, դարձուցից զերեսս իմ 'ի նոցանէ:  
 Աւրեմն ընդէ՞ր բնաւ համարձակիս յետ այդ-  
 քանեաց քստմենելի գործոց քոց յանդգնու-

Թեամբ բնագատել զհայր բո ՚ի կատարումն խնդրոյդ . 'ի կենդանութեան հօր ըզբաժին ժառանգութեան խնդրել՝ հանգոյն անառակ որդւոյն է գործառնութիւն . քանզի ցորչափ ժամանակս կենդանի իցէ հայր բո՝ բնաւին ոչ կարես իշխել ստացուածոցն . Պօղոս իսկ ասէ, ցորբան ժամանակս ժառանգն տղայ է, չէ՛ ինչ առաւել քան զծառայն : 'Դարձ ուրեմն սի՛րելիս 'ի մեղմեխ խորհրդոցդ չարեաց . զի մի՛ լիցի քեզ երբէք նրմանիլ ամբարշտաց, որ՛ի բաց կացեալ Մատուածսպաշտութենէ և յօրինապահութենէ, զանձինս իւրեանց ծառայս կոչեն բարձրելոյն . յաճախեն առ անձին բերկրութիւն 'ի գինետունս, զլանան վերառաքել զառաւօտեանն փառաբանութիւն յերկինս առ Մատուած, փոխան օրհնութեան բանից ծխախոտին ծխոցն բարդ 'ի բերանոցն ընդ օդս ծաւալեն, սուրճ՝ 'ի ձեռին անվայելս բարբառին, և ընդ բազկատարած ազօթողացն 'ի տեառնէ յուսան զբարիս : Ալ որք ննջիցեն զքունս իւրեանց՝ 'ի ժամ փառաբանութեան, յետոյ զինչ գտցեն, և ինչ ոչ : Ի բարեկենդանութեան իւրեանց զՄատուած յիշել դանդաղին, իսկ 'ի նեղութեան համանժամ խորոյելացւոց զաղաղակ բառնան 'ի կոչել Մբայ հայր : Անի՛ր ուրեմն զմեծութիւն



փառացն Մտուծոյ, և փոյթ անձին կալ-  
ջիւր ուղղել զվարս քո՝ եղբայր, զի յերկնից  
Տնչեսցին քեզ այս ձայնք բերկրանաց, հո-  
վանի եղէց նմա զի ծանեաւ զանուն իմ: և  
թէ կարդասցէ առ իս, և ես լուայց նմա,  
և առ նմա եղէց 'ի ներութեան:

ՄԱՐՏԻՐՈՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

---

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՈՒՆԵԼ Ի ՊԱՇՏՅՈՒՆ ԻԻԲ

ՉՈՄՆ ԴԱՏԱՐԿԱՇՈՒՐՋ:

Սիրեի՛ր բարեկամ.

Հառաջիկայ եօթնեկի եթէ տէր կամես-  
ցի ճանապարհորդելոց եմ յայս ինչ հեռա-  
ւոր երկիր այս ինչ գործով. բայց ոչ զոք  
դտի հաւատարիմ, փոխանորդ գնել 'ի գործս  
իմ 'ի շուկայն. լուեալ է իմ թէ դու 'ի  
բազում ժամանակաց հետէ դատարկաշրջիկ  
ես շունելով զգործ ինչ յարմար գիտնական  
կարողութեանդ. եթէ հաճեսցիս՝ կամիմ  
զքեզ խոհեմամիտ յարգութիւնդ ընդունել  
'ի նոյն, մինչև 'ի վերադառնալ իմում Մտ-  
ուծով:

Բայց զայս խնդրեմ իմանալ, թէ զի՞նչ վարձս  
ամսականի պարտաւոր լինելոց եմ քեզ յիւ-  
րաքանչիւր ամիս, արդէն աստօջիւր. զի բար-  
ւոր է սակարկութիւն նախկին յամենայն ինչ,  
և յամենայն ուրեք:

Ո՛ղջ լեր ՚ի տեր:

ՄԱՐՏԻՐՈՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԽՐԱՏ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌ ՎՇՏԱԿԻՐ ԵՂԲԱՅՐ ԻՒՐ ՅՈՒՍԱՀԱՏ

Հոգեհատոր բարեկամ.

Ե՛մպ մթադին և մառախլապատ պատե-  
ցան զինև, մինչ բոթալի գուժ քստմենելի  
յուսահատութեանդ՝ իբր կարկտաբեր սաստ-  
կաշունչ հոգմ հարաւոյ հար զիս ուժգին,  
որով յանհնարինս անկայ տրտմութիւն. զի  
՚ի պատճառս փոքր ինչ նեղութեան կամ տա-  
ռապանաց՝ յուսահատութեամբ իմն խոտո-  
րիլ ցուցանես ՚ի լուսաւորչական ուղղափառ  
դաւանութենէ, և անկանիլ ՚ի հաղբս մար-  
դախոշոշ ազանդաւորաց: Ուստի հարկե-  
ցայ մերձիլ ՚ի գրիչ յորդորական խրա-  
տաքանութեան ըստ կարեաց իմոց: Ե՛պա-

քէն՝ որ ՚ի ժամանակս խաւարամած կռապաշտութեան աշխարհ ամենայն հեծէր հեծեծէր, ուր բազմութիւն հաւատացելոց Մստուած, յորժամ յանհնարին վիշտս հալածանաց և ՚ի շարշարանս տանջէին ՚ի ձեռն Աստուածամարտ կռապաշտ բռնաւորաց, ՚ի սէր ճշմարիտ հաւատոյ որ ՚ի Քրիստոս՝ համբերատար ուլուլ զոհէին զմարմինս իւրեանց ՚ի տանջանս և ՚ի մահ: Ան որ՝ սըրով մաշէին. և են որ՝ հրով իբրև զճարպ հալէին. են որ՝ ՚ի ջուրս հեղձամահ լինէին, և են որ՝ գաղանաց և թռչնոց կեր լինէին, վասն ուղղափառ հաւատոյ. որով արժանաւորս գտան ժառանգորդ լինել արքայութեան Աստուծոյ և յաւիտենական փառաց պսակելով ՚ի Քրիստոսէ:

Ապաքէն զի՞նչ ապա դու այժմ փոքրինչ նեղութեան պատճառաւ այդքան սաստիկ տրտմիս մինչ ՚ի կորստական դուռն յուսահատութեան՝ եղբայր, զմտաւածել պարտիմք զհամբերութիւն Յօբայ. որ ՚ի սէր Աստուծոյ բիւրազգի տանջանօք մաշեցաւ ՚ի ձեռն նախաշարին. մանաւանդ զգերազանց համբերութիւն վասն մեր մարմնացելոյ բանին Աստուծոյ, որ ՚ի սէր հողազանգուածոցս մարդկան ՚ի յանձն էառ կամաւ մատնիլ ՚ի խաչ և ՚ի մահ. և կտակ արար մեզ զայս

խրատ մարդասիրութեամբ . թէ համբերու-  
թեամբ ստասցիք զոգիս ձեր : Զուսկ ուրեմն՝  
'ի վերջ դուզնաբեայ բանիս յուշ քեզ լեցի  
եղբայր 'ի մտիթարութիւն , այն կենսա-  
յորդոր բան Մաքելոյն , թէ՛ զի զոր սի-  
րէ տէր՝ տանջէ և խրատէ ամենայն որդի  
զոր ընդունի . և զմնացելոցն քեզ թողում  
խոհեմաբար իմաստասիրել յօգուտ անձին  
քում :

ՄԱՐՏԻՐՈՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՀՐԱԻԷՐ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Ա Ռ Հ Ի Ի Ա Ն Դ Ա Յ Ե Ա Լ Ո Ք

ԲԺԻՂԿ ԻՈԳԵՆՈՐ .

Վիտելով շնորհափայլ տեառնդ թէ բը-  
ժըշկութիւն հոգեկանն է գործ քահանայու-  
թեան , որպէս Յիսուս առակաւ իմն , պան-  
դոկապետի անուամբ յանձն արար զժողո-  
վուրդս քահանայի հոգարկութեամբ խնա-  
մել երկոքին դահեկանօք այսինքն Զին և  
Նոր Ատակարունաւ . վասնորոյ խնդրեմք 'ի  
բարերար հօրէդ 'ի գալ նամակիս անյապա-  
ղաբար երթալ յայցելութիւն յայն ինչ հի-

ւանդ աղքատի տունն և զկարեւորն հոգեկան մասին փութալ 'ի գործ դնել այնինչ խօթացեալ խղճալոյն 'ի փառս Աստուծոյ . ուր կայ 'ի մահճի տառապեալ . քանզի շունի երբէք ինչ կարողութիւն ինքնին չալ և ոչ պատգարակաւ . եթէ ձանձրութիւն ինչ երեւոցի լինել տէրութեանդ , յիշեսցի՛ր տէ՛ր իմ աղաչեմ զայցելութիւն Առաքելոյն Պետրոսի առ Կուռնէլիոս : Արպէս զի մարմնաւոր բժիշկ քանզամ այսու օրինակաւ վարին քաջ գիտէք . զի յորժամ լսեն զոք հիւանդացեալ , ոչ յապաղին երթալ . ապա 'ի հոգևոր մասին ո՞րչափ առաւել փոյթ կալնուլ հարկ համարիք բարեյօժար կամօք ձեր , որով արժանաւորս գտանիլ վարձուցն հասուցման , զոր խոստացաւ փրկիչ պանդուկապետին :

Ն. Ծ. ՄԱՐՏԻՐՈՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

---

### ԽՐԱՏ ԱՌ ԱՆԻԾԱԲԱՆ ՈՔ

Շրթանց եւ լեզուոյ դնել դրուես աղաջեմ, եղբայր սիրասուն.

Քրիստոսաւանդ մատեանն սուրբ Աւետարան որ համարէն տիեզերաց առաջնորդէ

ի թեւս հաւատոց յերկինս վերասլանալ, ըզ  
գաղտնիս սրտից բազմաց կեղծաւարելոց առ  
ի վայտ ածել զայս օրինակ խօսի. ամենայն  
ծառ ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի. քանզի աշ-  
խարհ ամենայն յանձն իւր կարծիս վարա-  
կեալ զհաճոյս իւրեանց ՚ի կիր արկանեն  
զայլոցն եպերելով: Օոր օրինակ են ոմանք  
որ սիրելի են նոցա մարզել զանձինս իւր-  
եանց լինել քաղցրաբան, համեստաբան,  
խոհեմաբան, ճշմարտաբան, իրաւաբան, վը-  
սեմաբան, խրատաբան, օրհնաբան. և են  
որք ՚ի բնէ թափուր գոլով յառաքինութեանց  
ոչինչ փոյթ անձին ունին զբարեմասնու-  
թեանց: Ասանորոյ առաւել հաճոյ է և նոցա  
լինել շատաբան, չարաբան, ստաբան, ծաղ-  
րաբան, մեծաբան, դատարկաբան, անիծա-  
բան և այլն:

Մ.Մ. դու եղբայր՝ յերկոցունց աստի ՚ի  
կարգէ որո՞յ ես. ՚ի բարեպաշտութեան յատ-  
կութեանց եթէ յամբարշտութեան. զի եթէ  
ի բարեպաշտից գոլ ասես, զօրէնս Մ.Ե.  
տարանին և զճշմարտութիւն նորին խոս-  
տովանիս. սակայն ո՞չ ապաքէն բանաւոր ծա-  
ռոյդ բանիւ տաս ՚ի ճանաչումն, յորմէ քա-  
ղեցաք յայս ինչ ուրեք ՚ի դառն պտղոց  
անդուռն բերանոյդ ՚ի մէջ բազմականաց:  
Այլ թէպէտ սրամտեալ ընդ այն անիծա-

բանութիւն, կամեցայ քանիցս անդ 'ի խըն-  
ճոյս ծանուցանել քեզ, սակայն 'ի պատիւ  
անձինդ ակամայ հանդուրժելով լռեցի մինչ  
ցայս վայր. այլ այժմ յեղբայրսիրուծնէ  
ստիպեալ, առաքեմ աւատիկ զսակաւամաս-  
նեայ յօդուածս խրատարանութեան յօգուտ  
անձինդ :

Եւստուած 'ի ստեղծաներն  
ղմարդ, ետ նմա ականջս երկուս, և բերան՝  
մի, և զայն կրկին դրօք հաստատեաց. ո-  
րով կամեցաւ յայտնել մեզ, թէ պարտ է  
բազում անդամ լսել, բայց սակաւ խօսիլ՝  
զարժանն և եթ: Իսկ դու ընդէր զգառնու-  
թիւն սրտիդ 'ի յայտ ածեալ անխոհեմ անի-  
ծարանութեամբ յանձինքում ցուցեր զնմա-  
նութիւն այնց չարարանից. զորոց մարգարէ-  
անայր՝ Իսաի թ յասելն. անիծիք և դառնու-  
թեամբ և նենգութեամբ լի է բերան նորա,  
և 'ի ներքոյ լեզուի նորա ցաւք և վաստակք :

Եւ և Յիսուս Քրիստոս միածին  
բանն Եւստուած վասն էր 'ի բժշկել զախ-  
տաժեան զայն զխուլն և զհամրն, կաղեալ  
զլեզուէ նորա հառաջէ. որով կամեցաւ ա-  
սել թէ այս այն է, որ զառաջինն ապակա-  
նեաց զաշխարհ ամենայն. այսու լեզուաւ 'ի  
հարցանել նախաչարին ստախօսութեամբ  
պատասխանէր զմի՝ հուպ լինիրն. այսու  
եզուաւ ևս մերձենայր 'ի յորդոր առ Եդամ

ուտել 'ի պտղոյ անտի . և 'ի սոյն լեզուէ  
խնդիր եղև դարձեալ զապաշխարութեան  
ղմեղայն , բայց անզեղջ մնալով միանգա-  
ճայն և երկոքին սոյն լեզուաւ արկին զյան-  
ցանս իւրեանց առ միմեանս : Ահա սոյն լեզ-  
ուին ապօրինակ արդիւնք պատճառ եղեն  
մարմնանալոյ բանին Աստուծոյ մերոյ յերկ-  
նից յերկիր իջանելով :

Ապաքէն եղբայր՝ գիտելով զայս ամենայն  
չարութիւնս լեզուին , զգոյշ լեր այսուհե-  
տե , և մի՛ ընդ անէծս Ղաւթի կեար յա-  
ւէտ . այլ լոեցո՛ զլեզու քո՛ 'ի շարութենէ .  
քանզի ոչ միայն անիծաբանութիւն կամ  
հայհոյութիւն , այլ և շատաբանութիւն ևս  
որ ստութեան է աղբիւր , անընդունելի է ա-  
ռաջի Աստուծոյ . որպէս և Ղաւթի ասէ .  
մարդոյ լեզուանոյ մի՛ յաջողեսցի 'ի վերայ  
երկրի : Այլ զանէծս նորին որ առ շարա-  
բանսն բազումս կրկնէ . խորտակէ տէր ըզ-  
չրթունս նենգաւորս , և զլեզուս մեծաբանս .  
բանիւ Առաքելոյն կնքեմ աւասիկ զգրութիւ-  
նըս . ամենայն բան տգեղ 'ի բերանոյ ձերմէ մի՛  
ելցէ : Արեւմն ուսո՛ զլեզու քո՛ 'ի քաղցրա-  
բանութիւն , որ առաջին է յատկութիւն ա-  
րանց խոհեմից , և մատիր կրկին առ վշտա-  
ցեալն 'ի հաշտութիւն քաղցրութեամբ և օրհ-  
նութեամբ . որով սիրելի լիցիս յաչս տեառն



Մատուցոյ և մարդկան : Քանզի խայթող  
 կիզող գիշատող՝ երեքին սորա շէն բնաւ սի-  
 րելի . ո՞վ կամի մերձենալ 'ի դժնիկ՝ ոչ որ-  
 ապա մի՛ զամենից մակարերութիւն ընթաց  
 գրչիս պաշտեսցէ , աղաչեմ . Ղոմանց և դու  
 խոհեմութեամբ կարող ես բեզէն իմաստա-  
 տիրել զբարւոքն և զիրաւացին :

Ո՞րչ լեր :

Ն. Ծ. ՄԱՐՏԻՐՈՍ  
 ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԽՐԱՏ ԱՌ ԱՄԲԱՐՏԱԻԱՆ ՈՒՔ

ԱՌ ԾՆՈՂՍ

Սէր իմ .

Օի՞ է զոր ունիս ամբարտաւանութիւն  
 ընդ ամենեսեան . մանաւանդ առ ծնողս ք՞ .  
 շիցէ՞ ընթերցեալ ք՞ զոր ազաղակէ առա-  
 քեալն Պետրոս թէ տէր ամբարտաւանից  
 հակառակ կայ , տայ շնորհս խոնարհաց . և ե-  
 թէ Մատուած հակառակ կայցէ ումբ , զի՞նչ  
 լինիցի նմա . զիա՞րդ կարէ մնալ անպատիժ .  
 ենթակայ լինի այնուհետեւ այնպիսին ա-  
 մենայն չարեաց և փորձանաց . ծնունդք ի՞՞ից  
 ասէ , ո՞ եցոյց ձեզ փախչիլ 'ի բարկութե-

նէ որ գալոցն է . հրեշտակաց անգամ՝ ինչ խընայեաց վասն հպարտութեան որպէս և գըրեալ է 'ի կաթողիկեայս Պետրոսի առաքելոյն . զի եթէ 'ի հրեշտակսն յանցուցեալսն Մատուած ինչ խնայեաց, այլ խաւարային կապանօք արկեալ 'ի տարտարոսն ետ պահել 'ի դատաստան : Ապա և մեզ զինչ դիցէ պատիժ, զմտա՛ւ ան՝ աղաչեմ . և զհետևորդացն փոյթ կալլիր 'ի գործ զնել բարեպէս :

ՄԱՐՏԻՐՈՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԱՎԵՐՍԱԳԻՐ ՅՈՐԴՒՌՅ ԱՌ ԷԱՅՐՆ

ՔԱՂԵԼ ԶԻՆԱՄՍ ՈՐԴԵՍԻՐԱԿԱՆ

Բարեգոնք եւ խնամածու հայր իմ .

Տեսեալ իմ հանապազօր զգորովագութ խնամս որդեսիրութեան ձեր, համարձակութիւն եղև ինձ զխնդիրս զայս առաջարկել յարգութեանդ ազերսիւ : Օի ամենայն ծընողք՝ հնազանգ զաւակաց իւրեանց նորոգ հանդերձ շինել տան յայսմ տաղաւարիս . նոյնպէս և ես անարժանս ակնապիշ դիտմամբ սպասեալ կամ մինչև ցարդ, թէ երբ

արդեօք գալոց է դերձակն անուր զչափ  
 հասակի իմոյ: Ա՛հ և ես արժանի լինելոց  
 եմ արդեօք իբրև զայլոց զաւակաց կալ լը-  
 ոիկ և անխօսուն առաջի դերձակին անշարժ,  
 և դուք քաջ գիտէք տէր իմ, թէ ես ծա-  
 ոայ ձեր սակս այսպիսի շահաւոր իրաց եր-  
 կայնամիտ և համբերող եմ կալ յոտին հը-  
 նազանդութեամբ: Եւ յո՞ արդարև ըստ բա-  
 րեգութ սրտից ձերոց բերմանց ամ ըստ ա-  
 մէ նորաչէն պատմուճանօք մխիթարէք զիօ  
 զանարժանս, շնորհակալ եմ. բայց մի՛ հա-  
 մարիք յանդգնութիւն մինչ ՚ի միտս միայն  
 արկանել փութացի. որով ես նուաստօ  
 պարտական եղեց բարեմաղթել առ Եւտ-  
 ուած ուրախութեամբ յառաջիկայ ուրախա-  
 ութ աւուրս տօնի սրբոյ հասակի, որում  
 արժանիս արասցէ տէր Եւտուած ընդ պա-  
 տսպարական մարմնոյս հանդերձի և զեղա-  
 պաճոյճ զարգարնալ գտանիկ հոգեկեցոյց ա-  
 ռաքինութեան հանդերձի կարմրերանք ձու  
 ՚ի ձեռին, զոր կրկնակի օրինակաւ ընծա-  
 յամատոյց լինիմք միմեանց յայնմ աւուր,  
 սպիտակութեամբ ներքնոյ՝ զկուսական ծը-  
 նունդ իմա՛ փրկչին, և կարմրութեամբ ար-  
 տաքոյ՝ զարիւն շարշարանաց նորին նշանա-  
 կէ ասեն:

Ն. Ծ. ՄԱՐՏԻՐՈՍ  
 ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԲԱՐԵՆՈՐ ՀՈՒՐԴ ԳՈՒԺԿԱՆ

ՎԱՍՆ ՓՈՐՁԱՆԱԽՈՐ ՈՐԴԻՈՅ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Յարգապատիւ եղբայր իմ սիրելի.

Հոգեկից բարեկամիդ զոր ինչ կամիմ այժմ ծանուցանել, 'ի մէջ կասկածանաց եմ, թէ մի' գուցէ երկիրդ ինչ գայցէ առ քեզ. բայց ոչ պատմելով իմ' մեծի մնասու պատճառ իննել երևի. որոյ վասն նախ խնդրեմ, զի առանց երկիրդի ունկնդիր լեալ, և զՏընարս հայթայթանաց զոր ծանուցից, վաղ վաղ կատարելով անփորձ և ազատ լիցիս 'ի յետագայ մահաբեր շարեաց: Մ. յսօր 'ի միջօրեայ ժամանակի 'ի շուրջ ամել իմ 'ի ձերդ պարտիզի' մահագուշակ արկած մի դէպ եղև ինձ տեսանել, զի որդիդ մինչ ննջէր 'ի քուն թանձրութեան ընդ հովանեաւ ծառոյ միոյ, յանկարծ փոքր ի ժակորիւն մի եմուտ 'ի փոր ընդ բերան նորա. եթէ զտտանէ կալեալ իմ յարտաքս քարշել փութայի, անշուշտ մնաս մեծ լինէր մանկանն. բայց հարկաւորապէս այս է այժմ ազատութեան հնարն զոր պարտ է անմիջապէս առնել առանց յապաղելոյ. իբրու փոքր կաթսայի միոյ բաւելոյ առեալ զկաթ որ և իցէ ոչ խարաց կամ կովուց, և յնուացուցանելն

զայն 'ի վերայ հրոյն՝ ոչ ինչ ծանուցանելով  
մանկանն գլուխն 'ի վայր կախել պէտք է . զի  
օձն 'ի հոտ կաթին ցանկանալով յորովայնէն  
արտաքս կըցէ , և 'ի նոյն կաթալից կաթսային  
մէջ անկցի . այսպէս արարեալ անվտանգ ա-  
ղափ որդիդ . միայն թէ մի' լիցի յապազել  
կողկողաղին պաղատիմ :

Ն. Ծ. ՄԱՐՏԻՐՈՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

---

### ՍԻՐՈՅ ՆԱՄԱԿ

ԱՌ ՊԱՏՐԻԱՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ՅԱՇԻԱՐՀԱԿԱՆԷ ՌԻՄԵՔԷ

Թագ պարծանաց սուրբ Էկեղեցւոյ , և  
արքուն զիտապետ բանաւոր հօտին Քը-  
րիստոսի , առաքելաշաւիղ և երանաշնորհ  
վեհափառ Պատրիարքի հօր մերոյ Երկնա-  
ջոն գարշապարաց համբոյր խոնարհական .

Որ Ըստղածային տեսչութեամբ ընտ-  
րեալ քաջ հովիւ զբանաւոր ոչխարս Վը-  
րիստոսի 'ի հանգրպանս սուրբ մակաղէք , և  
հաւատարիմ պաշտօնէութեամբ կրօնաս-  
տանաց և ամենայն սելխաւորաց օր քան զօր  
արփիափայլ լուսաւօքսութեամբ անձանձրոյթ


վաստակելով խնամարկառ և յարատև պաշտ-  
պանութեամբ 'ի շինութեան փոյթ ունիք  
պահել, և իբրև լուսեղէն սին մխիթարիչ  
էք նոր. իսրայելեան բանակին անչափօրէն  
պայծառարիւի լուսաւորութեամբ 'ի վերին  
քաւառ Աւետեաց սուրբ արքայութեան ա-  
ռաջնորդելով: Ահարժանացայց արգեօք գը-  
տանել զտեղի յարկի տեառն զսուրբ սիօն,  
և Վրիստոսի Աստուծոյ մերոյ տնօրինական  
լուսարուղի սուրբ տեղեաց երկրպագանել  
'ի պարարումն հոգեկան. ըստ Ղաւթեան  
յորդորանաց՝ թէ տեսցես զու զբարութիւն  
Արուսաղեմի զամենայն աւուրս կենաց քոց:  
Այլ թէ հարցէք զողջունէ երուսաղեմի և  
զշինութենէն ոչք սիրէք զտէր: Հանկալի՛ է  
արգարև ոչ միայն հարցանել զողջունէ նո-  
րին, այլ և ըստ հայցուածոց նորին որ  
զայս միայն խնդրէր զանակիլն 'ի նմա զամե-  
նայն աւուրս կենաց իւրոց: Աւստի եռան-  
դազին իղձ սրտիս բորբոքեալ ստիպէ և պա-  
հանջէ զի աւելի արժան համարիմ 'ի կեն-  
դանութեան իմում կատարել զորդիական  
պարտաւսրութիւնս. վասնորոյ այսու երկ-  
տող գրութեամբս Գօնէ յայտնել պարտ վար-  
կայ զնշոյլ բաղձանացս զոր ունիմ:

Աւրեմն երախտադիտութեամբ սրտի մաղ-  
թեմ առ երկնաւոր քահանայապետն Հի-

սուս Վրիստոս, որ 'ի յամայր ամս 'ի բարձ-  
 րաստիճանի գերագահ Ըթողոյդ հաստատ  
 պահեսցէ զհովուական գաւազանդ նմանօ-  
 րինակ Լհարօնեան գաւազանին հրաշազան  
 պտղաբերելով, 'ի վայելումն համասփիւռ  
 Հայկազն լուսաւորչական որդւոց բերկրիւ  
 'ի սիրտ և յոգի:

Ձերումդ սրբութեան ամենախոնարհ ծառայ

ՄԱՐՏԻՐՈՍ  
 ԱՒԵՏԻՍԵԱՆ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՒՆ

Գ Ա Լ Ս Տ Ե Ա Ն Հ Օ Ր Ի Ի Ր Ո Յ

Ի ՆՈՐԱՇԷՆ ՏՈՒՆ ԻԻՐ

Գոն եմ զորդեսիրական գրութենեդ՝  
 բարերար ծնող իմ.

Յանկալի՛ եղև մեզ օրս այս, և զաւա-  
 կօքս հանգերձ երանելի եղաք մեր ամենե-  
 քին. իբրև յամենագեղեցիկ զուարճալի  
 պարտիզի անպատում ուրախութեամբ ճե-  
 մելով փառաւորեալ զմայլեցաք բարեպատ-  
 ճառ գալստեանդ միջոցաւ առ այսօր .  
 արգարև յարգելով զայս նորաշէն բնակա-

բանս իրրու գրախտի անուշահոտ բուրմունք  
 ծաղկանց բուրեցին անարժանիս : Օր չէի  
 բաւական ընդ յարկաւ իմով մտանելոյդ  
 այդու շնորհաւորութեամբ . բայց 'ի հիմնար-  
 կութենէ անտի հայրական օրհնութեանդ կա-  
 բօտ էր հաստատուն և անփորձ մեալ յա-  
 մենայն փորձանաց կամ 'ի հրդեհից . և որ  
 բնակին 'ի սմա առանց ցասման և առանց  
 խռովութեան և առանց տարածամ մահու  
 կենցաղավարիլ բարեմաղթու օրհնութեամբ  
 ձերով . քանզի օրհնութեամբ մեծաց բարձ-  
 րանայ քաղաք , ըստ իմաստնոյն :

Ն. Ծ. ՄԱՐՏԻՐՈՍ  
 ԱԻԵՏԻՍԵԱՆ



ԱՂԵՐՍԱԳԻԻՐ ՎԱՍՆ ՊԱՐՏՈՒՅ

Ն Ո Ր Ա Շ Է Ն Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Մ Ի Ո Յ

Վսեմայարգ եւ վեհապանձ Ամիրայիդ  
 պերճացելոյ խնդալ 'ի Գրիստոս յաւետ .

Ըրդարև գիտակ իսկ եմ և ականա-  
 տես հանապազօրեայ զկենցաղավարութիւն  
 տեսանդ Ըստուծով պերճացելոյդ , որ ար-  
 ժանաւոյելլ ճոխութեամբ փարթամացեալ  
 'ի մեծի ուրախութեան խայտաբ , շերթ ար-



քայական բաղմեալ 'ի դահորայս, ճարտա-  
 բարուեստ մեծագին ջահիւք և արծաթեայ  
 կարասեօք զարդարեալ, ո՞վ ծովահայկաց  
 պատշգամաւոր ապարանիդ, 'ի սնարի ու-  
 նելով բարձս ոսկեթելս, և ընդ առաջ զը-  
 ւարթագին ծածանումն մեղմաշարժ կապու-  
 տակ ծովու խառն սպիտականիչ ալեօք, և  
 չքնողատես վայելչութիւն տնկախիթ պար-  
 տիզացդ, ուր անուշահոտ բուրմունք երփ-  
 նագեղ ծաղկանցն յոյժ ցանկալի, ընդ նը-  
 մին դայլայլիկ հրճուանք արտաքին քաղց-  
 բաշունչ թռչնոց և 'ի ներքոյ վանդակա-  
 պահ հաւուց ընդ միմեանս ձայնակցեալ,  
 ո՞ւր թողից և ներդաշնակութիւն քաղցրա-  
 ձայն երգոց երաժշտաց, և մշտապատրաստ  
 առաջի ձեր բազմախորտիկ սեղան համա-  
 դամ քաղցրութեան, ախորժահամ զանա-  
 զան ըմպելեօք զարդարեալ, յորում և բազ-  
 մաթիւ պաշտօնեայք և աղախինք ձեռնա-  
 մած պատրաստ 'ի յոտին, ուր բազմութիւն  
 նուագարանաց և երգաբանից՝ որ գեղեցկա-  
 ձայնս նուագեն արդարև զերաժշտական  
 երգս զուարճալուրս, ոմանք ջութակաւ, և  
 ոմանք շիրորայիւ, և ոմանք եռմասեան եր-  
 գելով զցուց :

Սակայն՝ յայսմ խրախճանութեան ան-  
 թերի տեսանեմ զտերութիւնդ, աննախան-

ձարար ասեմ. Աստուած անսասան և ան-  
 թարչամ պահեսցէ յանկետն ուրախութեան  
 մինչև ցօր վախճան: Բայց այսր անցաւոր  
 ուրախութեան միայն սիրահարեալ իցէք  
 արդեօք, եթէ երկնային ամենացանկալի  
 մշտապէս կենաց յաւերժական ուրախութեան  
 բնակարան մի ստացեալ իցէք ձեզ բարե-  
 մասնութեամբ, զերկնից սուրբ Արքայու-  
 թիւնն զանղուգական ըստ Առաքելոյն զան-  
 պատմելի օթեան. կամ ստացեալ է ձեր և  
 մեծապանծ առաքինական գործով պաշար  
 ինչ յաւիտենականին՝ ի յարութիւն կենաց:  
 Արպէս և ահա այս աւետարներ ծանուցագը-  
 ըրևս գանձել ունիք ձեզ գանձս յերկինս,  
 ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապակա-  
 նէ. քանզի զայդ հանգիստալայել ժառան-  
 գութիւն անցաւոր խրատականութեանդ կամ  
 եղև ինձ հոգեւորականաւ իւրք անանցանե-  
 լի և հաստատուն առնել, եթէ լուիցես մը-  
 տերիմ բարեկամիդ: Այս կարօտեալ հա-  
 լատակից եղբայր մեր զոր ներկայացուցի ա-  
 ռաջի տէրութեանդ՝ ի ժամ խնդութեան  
 աղաչեմ քաղցրութեամբ ընդունել և մար-  
 գասիրութեամբ կատարել զխնդրուածսն ու-  
 րին. երկնային ուրախութեան անվախ-  
 ճան բարութեան առիթ. լինելոց է վասն  
 ձեր: Օր այրս այս թէպէտ վարկումն մեծ

ունէր ըստ ժամանակին և յազնալ էր ըն-  
 չիւք բազմօք և բարեկեցիկ ամենեւիմբ . սա-  
 կայն՝ զամենայն մարմնաւոր ուրախութեան  
 առիթս ընդ հոգևորս փոխանակել կամելով ,  
 զամենայն ինչս զոր ունէր վաճառեաց , և ան-  
 ձամբ անձին եկեղեցի մի կառոյց յայն ինչ  
 քաղաքի յանուն սուրբ Գրիգոր լուսաւոր-  
 չի . որ է անուանակից ձեր . որոյ աղագաւ  
 'ի մեծի պարտուց ներքոյ ճնչի և տագնա-  
 պի այժմ . մինչև անգամ այլազգի քաղա-  
 քացիք անդանօր՝ փոխան պարտուցն առ-  
 նուլ և յափշտակել կամին զայն նորաչէն  
 Ակեղեցին , զոր գրաւ եղեալ է առ նոսա  
 փոխան դրամոց բազմագունից իբրև հարիւր  
 քսան հազարից . ակնկալեալ դիմէ առ մե-  
 ծահամբաւ բարեպաշտդ և ընդ իս աղաչէ :  
 Գուցէ թէ ընդ երկուց և երից քեզապի-  
 սի գերայարդ բարեպաշտ Ամիրայից խոր-  
 հրդակցութեամբ հնար ինչ աղատութեան  
 երևեսցի Աստուծով . ազգասիրական ձե-  
 ունտուութեամբ ձերով՝ գուն գործել փու-  
 թասջիք ազատել զայն երկնանման սուրբ  
 տաճարն 'ի ձեռաց նոցա , ընդ նմին և  
 զայն տառապեալ անձն 'ի սէր Աստուծոյ .  
 որում նա ինքն գտաւ պատճառ շինութեան  
 բարեպաշտութեամբ և ազգասիրութեամբ  
 իւրով : Արդ մի լիցի անկանիլ այնպիսի մար-

գարիտն այսինքն հոյակապ եկեղեցին առաջի ոտից խողարարոյ անձանց պարտուցն աղադաւ . ահա յայտնի երևի զի այսու ջանասիրութեամբ և պանծալի ողորմութեան առաքինութեամբ օժանդակ լինելով անշուշտ դուք լինելոց էք յատուկ պատճառ վերստին կանգման նոյն աղօթատեղւոյն . և բաժին ունիլ յայնց աղօթից հասարակութեան , թէ շնորհեա՛ զթողութիւն կանգնողի տաճարիս : Արոյ շնորհիւն յերկնային անտրրտում ուրախութեան տէր Աստուած առաւել քան զոր ունիսդ յայսմ աշխարհի զազգօգուտ վեհանձնութիւնդ և զամենայն գործակիցսդ վեհազուն՝ ամիորձ և անսասան պահեսցէ քաջողջութեամբ , 'ի պայծառութիւն և 'ի մխիթարութիւն կրկնատեսակ եկեղեցեաց նիւթականաց և համայն ժողովորդականաց :

Վաղեմնական մտերիմ բարեկամ ձեր

ՄԱՐՈՒԳԷ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ԱՐՀԵՍԱԴԻՏՈՒԹԵԱՆ

Ազնուագարմ եղբայր իմ.

Երևալ է իմ թէ խնամածու՝ հայր քո քանի մի արհեստագէտ անձանց տուեալ է գրեղ յաշակերտութիւն. իսկ դու յաշխատութենէ երկուցեալ ո՛չ կամիս ժուժել. այլ զի հայրենական ժառանգութեամբ քով և եթ կենցաղաւարիլ կամելով 'ի տան հօր քում, դատարկաշրջիկ լինիս յամենայն ուրեք թէ 'ի տան՝ թէ 'ի փողոցս՝ և թէ 'ի սրճանոցս: Երդեօք ո՞ր աղատորդին յետ ուսման ազատականին՝ զճառայականն ուսանիլ ո՛չ հետևի կրթութեամբ. թագաւորազինք անգամ և արքայորդիք՝ 'ի ժամանակս թագաւորութեան իւրեանց չեն անարուեստ: Երդարև երբեմն գոհ էի զքէն, զի քաջուսումն գոլով քո իբրև ջահ մի պայծառ էիր 'ի մէջ դասընկերաց քոց. բայց զինորդ վաղ վաղ մոռացար իմաստասիրին զխրատ զոր մեզ ծանուցանէիր. թէ 'ի կիր առնուլ պարտ է զժամանակն: Երդարև գիտութեան արհեստն զբանականութիւն մերս մտաց և ըզգործս խոհեմ և լուսապայծառ պահէ, յամենայն բանս և յամենայն գործս արթուն և շահաւոր գտանել, ո՛չ թէ մլասակիր. բայց եթէ անարուեստ ոք իցէ՝ սյլոց հացի կա-

քօտ լինցի: Այր՝ որ հայի յայլոց սեղան, չեն  
 կեանք նորա 'ի համար կենաց: Ի հարցա-  
 նել ումք առ իմաստասէր որ թէ զիտու-  
 թիւնն է բարւոք եթէ հարստութիւնն, այս-  
 պէս ետ պատասխանին. բարւոք է զիտու-  
 թիւն. բայց տեսանեմ զզիտունս ձեռնամաճ  
 կանգնեալ առաջիտգէտ մեծատանց. ուրեմն  
 մի յուսար հայրենական ժառանգութեանդ.  
 զի բազումք այսպէս անգործ և դատարկա-  
 շուրջ լեալ վատնեցին զհայրենական ժա-  
 ռանգութիւնս իւրեանց, և յետոյ եղեն մու-  
 րացիկ անարուեստ գոլոյն աղագաւ. յորոց  
 մինն է այս անուն որ, որ ծանօթ իսկ է քեզ  
 սիրելութեանդ, զոր քանիցս ջանային ծը-  
 նողքն արհեստագէտ առնել. նա քեզ նման  
 երկուցեալ յաշխատանաց ոչ կամէր մտա-  
 նել ընդ դուռն շուկայի համբերատար լի-  
 նել 'ի կրպակ ուսուցչի յուսանիլ զարհեստս.  
 այլ միայն հայրենական ընչից իւրոց յու-  
 սագիր լեալ, զորն զողջոյն անաշխատ շրջէր  
 'ի զբօսանս. և յետ մահուան ծնողացն վատ-  
 նեալ զամենայն ժառանգութիւնսն եմուտ  
 ի կարգս կարօտելոց, որ ահա մինչև ցարդ  
 ողջ գոլով տառապի նոյն կարօտութեամբ:  
 Աւրեմն յետ ուսումնական լինելոյն, ոչ  
 միայն պատշաճ է, այլ և պարտ իսկ է ամե-  
 նեցուն և քեզ լինել արհեստագէտ, զի մի

՚ի մեծութեան լալիւն և ողբումն վերերևես-  
ցի անարուեստ գոլով:

ՄԱՐՈՒԳԷ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԳԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՎԱՍՆ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ

Ո՞վ իրանասեր բարեխնամ դատաւոր:

Քննեա՛ և տես զայս վճիռ դատապար..  
տութեան այս անօգնական ծառայիս . վասն  
Աստուծոյ և վասն արդարութեան նորա . զի  
յանցելումն խարդախական ոսկի մի գտեալ  
'ի ձեռս իմ մատնեաց զիս ոմն առ այս ինչ դա-  
տաւորն . և նա կասկածեալ 'ի վերայ իմ  
խորթարար կամ գրամանենդ կարծելով զիս .  
հրամայեաց բանտարգել:

Իրաւախոհ լեր առ իս տէր բարերար .  
արդեօք ո՞ 'ի մարդկանէ տեսեալ է գործել  
իմ զայդ խարդախ և անիրաւ գործ . կամ  
զայնպիսի գործիս խարդաւանաց գտեալ ի-  
ցեն 'ի ձեռս իմ . կամ քանի մի խորթ ոսկի  
սմին նման , այս միմիայն պատահականի ա-  
զադաւ արժանի համարի՞ք արդեօք այսմ դա-  
տապարտութեան , տէր իմ : Ո՞ գիտէ՛ 'ի գըր-

պանս այլոց բաղմաց քանիցս մտեալ է դը-  
 քանս այս. միայն թէ անհեթեթ գոլով իմ  
 պատահեցաւ ինձ այս ցասումն. ՚ի վաճա-  
 ռանոցս ընդ բազումս տամք և առնումք զայս-  
 պիսիս. բայց արդ՝ մի՛ գուցէ առ նախան-  
 ձու արարեալ իցէ այրս այս զայս մատնու-  
 թիւն. քանզի քաջ իսկ գիտակ եմ, զի ՚ի  
 բազում ժամանակաց հետէ ներհակաբար վա-  
 բէր ընդ իս նախանձարարոյ բնութեամբ իւ-  
 թով: Աւստի աղաչեմ լալազին և արտաս-  
 ուաթոր աչօք իրաւատոհ թարւոք քննու-  
 թեամբ նորոգ և դու դատեսցես իրաւամբ,  
 ՚ի պատանել զգիր դատակնքի իմոյ. ու-  
 թով և ես պարտաւորիմ աղօթապարտ լինել  
 վասն ազգօգուտ կենացդ. զոր տէր Հիսուս  
 անգորրական կենօք և քաջողջութեամբ պա-  
 հեսցէ, հանապազ հանգերձ բարեբողբոջ  
 զաւակօքդ:

ՄԱՐՈՒԳԷ  
 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



ԲԱՂԻՈՂԱԿԱՆ ՎԷՊ՝

ԱՌ Ի ՀԱՄՈՋԵԼ ԶՊԱՐՏԱԻՈՐՆ

Ի ՔԱԶԱԼԵՐՈՒԹԻՒՆ

Հարագնտ եղբայր իմ սիրելի:

Ո՞չ ապաքէն բարեկամութիւն մերս մտերմութեամբ մշտնջենական է, իբրև ոսկեպինտ շղթայիւք Յիսուսաւանդ սիրովանանջատ կապակցեալ, ուրեմն առանց կասկածանաց երկիւղի ստուգիւ ստիպիս պատասխանել այսր հարցմանս: Ապաքէն լուեալ է իմ, թէ ծածկաբար պատրաստիս յայս ինչ քաղաք երթալ. մի գուցէ պարտուցդ աղագաւ իցէ երկիւղալի փախուստդ այդ. փառք ողորմութեան Աստուծոյ ամենակալին, զի մինչև ցայսօր այնպիսի բանտարգելութիւն կամ փախուստ չեղև մեզ բնավասն պարտուց. ըստ որում համարումն և վարկումն գոյ տակաւին 'ի մեզ 'ի շուկայն. եթէ ներլիս 'ի չքաւորութենէ դրամօց, ցուցից քեզ ընչաւէտ զոմն 'ի մտերիմ բարեկամաց իմոց այս ինչ անուն 'ի մթերանօցն. առանց յապաղելոյ խնդրեալ յանուն իմ որչափ և կամիս, պատրաստ եմ երաշխաւոր ստորագրիլ 'ի հատուցումն:

Իսկ եթէ ոչ կամիս անսալ խրատուս այսմիկ,

նենգութիւն 'գոյ 'ի սրտի քում, ոչ կա-  
 միմ ունիլ քեզ բնաւ զայսպիսի անխոհեմա-  
 կան գործ, յորմէ ոչ սակաւ վնաս յառա-  
 ջակային քեզ և ընտանեաց քոց. զի հեռա-  
 նալով դու 'ի նոցունց՝ մշտնջենական լալիւն  
 և ողբումն իբր պաշար թողուս աստ 'ի տան  
 քում զաւակացդ. գուշակութիւն կարես առ-  
 նել այժմէն խոհեմութեամբ, զի շիթք ար-  
 տասուաց նոցա իբրև Սողոմայ և Ղումորայ  
 անձրև դառնութեան լիցի քեզ ծծմբային ան-  
 դադար, յորում վայրի և թագնուցուս: Եւ  
 պարտատեարք զի՞նչ գործեն բաղխելով ըզ  
 դրունս տան քո. գուշակութեան կարօտ չէ,  
 յայտնի երևի. գուցէ թէ ինքեանք զընա-  
 կարան քո յաճուրդ արարեալ անարժան գը-  
 նով, 'ի տեղի պարտուց քոց յափշտակեն.  
 որով անտուն և անբնակ աստանդական տա-  
 ռապի կողակիցդ աստ խղճալի զաւակօք իւ-  
 բովք: Օխարդ կարես թողուլ աստ զցան-  
 կալի սոյն սաքաղցրատես սիրուն զաւակունս,  
 որ միսիթարութիւն մեծ են քեզ 'ի կենիդ  
 հանապազօր. և զի՞ ըստ որում առանց տոմ-  
 սեկի ճանապարհորդութեան գնալովդ գու-  
 ցէ 'ի ճանապարհի կալեալ զքեզ, մեծի պատ-  
 ժօք յարգեսցեն փախստական զընթաց քո ա-  
 լազակի նման նշաւակ արարեալ: Իսկ յոր-  
 ժամ լուր լիցի առ պարտատեարս քո, ոչ

ինչ վայրկեան մի յապաղեն և կասին բը-  
նաւ գալ հասանել առ քեզ իբրև զարծիւ  
թեապարփակ սլացեալ և նոքա զոր ինչ ար-  
ժան է գողարարոյ փախստէից գործեն ըզ-  
չարիս : Այլ կամ եթէ հիւանդանայցես անդ,  
զո՞վ որ կարես գտանել 'ի բարեկամաց քոց  
և յազգականաց դարմանել զքեզ հոգեբուղիս  
խնամովք : Ահ հաստատուն կապակցու-  
թեան մերում եղբայրսիրութեամբ . որ ե-  
թէ յետ աւուրց ինչ ապիրատութեամբ իմն  
վարեալ շնոսայցես խրատուց իմոց , յայդմ  
ընթացս պանդխտութեան զո՞վ որ կարես  
գտանել քան զիս մօտաւոր բարեկամ յօգ-  
նականութիւն . Աստուած մի' արասցէ ե-  
թէ փորձութեամբ աշխարհի տագնապիցիս  
կամ օրհաս վախճանին քո վաղվաղ ժա-  
մանեսցէ քեզ անդանօր անտես և անյայտ  
'ի ծնողաց և յազգականաց , յայնժամ 'ի մե-  
ծատագնապ վշտալի կեանս յաւերժականս  
արկանել ունիս զմեզ զամենեսին . միթէ դու  
ծնողաց քոց վատաշնորհութեան պաշար  
թողուլ կամիս ինքնահաւանութեամբ քով .  
որպէս եղև բարեկամի ումեք անկանել 'ի  
վտանգս բազմազանս յանցելումն . զի մինչ  
շնոսալով նուաստիս , անձամբ անձին փա-  
խուստ արկեալ յօտար երկիր թագեալ ,  
պարտատեարք զկրպակն և զտունն և զկա-

րասիս տան և զամենայն ինչս իւր յաճուրդ  
արարեալ առին յափշտակեցին զիւրագին  
գնով զատաւորին զիտութեամբ : Աւստի  
կրկին ծանուցից քեզ զի փոյթ կալցես ան-  
սալ վերոյիշեալ մտերմական խրատուց ի-  
մոց հաճութեամբ, զանց արարեալ զայդ  
մտացածին գործ վնասաբեր, լեռնաշրջիկ  
լինել վտանգաւոր : Այլ երթ առ վերոյի-  
շեալ վաճառականն առնուլ զչափաւոր քեզ  
դրամ 'ի զիւրութիւն դժուարակատար գոր-  
ծոյդ, ես պարտաւորիմ զերաշխաւորու-  
թեան տալ զգրութիւն, որով մխիթարելով  
մխիթարես զու զմեօք և մէք զքե : Ա-  
պա թէ ոչ՝ առաջին դատախազ ես ստիպիմ  
լինել ծանուցանելով բռնակալի տեղոյս.  
ամենայն իրօք զոր ինչ կամիս դու այժմէն  
առնել, զմնացելոցն այնուհետև քեզ թո-  
ղում խորհել, թէ զի՞նչ յորդեացի անփր-  
կելի քեզ տագնապ :

ՄԱՐՈՒԳԷ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

## ԱՂԵՐՍԱԳԻՐ

ՎԱՍՆ ՊԱՐՏՈՒՅ ՈՒՐԱՅՈՒԹԵԱՆ

ԱՆԻՐԱԻՆ

Յարգապատիւ տէր իմ.

Ճանցեալ ամիս երթեալ իմ 'ի մթերա-  
նոցն շուկայի վաճառել կամէի զկրպակն իմ,  
և զոր 'ի միջի էին ձեռամբ իմով յօրինեալ  
զամենայն արժաթեղէնս և զոսկեղէնս, ու  
րոց բազմաթիւ գրամովն յայլ ինչ վաճառա-  
կանութեան գործ ձեռնածիգ լինել ջանա-  
յի, թէպէտ վաճառեցի վաճառականի ու-  
մեք, բայց ոչ կարացի կանխիկ առնուլ ըզ  
գրամն. միայն մուրհակագիր մի առի 'ի ձե-  
ռանէ նորին: Բայց այժմ յայտ լիցի տէ-  
րութեանդ, զի նոյն վաճառականն զդաշնագ-  
րութիւն մեր որ ըստ պայմանի մերոյ հետ  
հնգետասան աւուրց հատուցանելոց էր ըզ  
գրամն ինձ անպատճառ, աւասիկ մինչ գը-  
նացի առ նա, վանէ արտաքսէ զիս բազում  
բարբանջօք և կռիահարութեամբ: Ուստի  
աղաչեմ զազատագնեայ տէրութիւն քո, զի  
յաւուր միում խորհրդակցիլ հրամայեսցես,  
զոր ինչ արժան է տնօրինել, քև և արբու-  
նի հրամանաւ կարացուք առնուլ զայն գը-  
րամն յապիրատ յառնէն յայնմանէ. վասն

զի վաղածանօթ ես յաջողաձեռն գտանիլ  
յայսպիսի դժուարակատար գործս . ուրեմն  
օգնական լինել ինձ տկարիս անձանձիր փու-  
թասջի՛ր տէր իմ . որով պարտաւոր արաս-  
ցես զՏէգս աղօթապարտ լինել քեզ ազգ-  
օգուտ կենացդ :

Ողջ լեր 'ի մխիթարութիւն ինձ նուաստիս

ՄԱՐՈՒԳԷ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



ԱՂԵՐՍԱԳԻՐ ՍՊԱՍԱԻՈՐԻ ԱՌ ՏԷՐ ԻՒՐ  
Ջ Ի Ջ Օ Ր Ե Ս Ց Է Ջ Դ Ր Ա Մ Ս Ի Ի Ր  
ԱՌՆՈՒՎ Ի ՁԵՌԱՅ ԴՐԱՄԱԴՐՈՒԺ  
ՀԱՏԱՎԱՃԱՌԻ

Բարեխնամ տէր.

Որ 'ի բազում ամաց 'ի պանդխտութեան  
գոլով իմ աստ , ցանկամ 'ի մօտ աւուրս եր-  
թալ 'ի հայրենիս իմ հրամանաւ քով . զի  
նչ միայն կարկամեալ զառամեալ հայր իմ  
տագնապաւ կարօտութեան որդւոյն տառա-  
պեալ կայ յամս չորեքտասան , այլ այժմ  
յայսմ հօթնեկի գուժկան ոմն եկեալ առ իս

լուր բօթալի երեք զնմանէ . զի տանս ծախուց դիզացեալ բազմաթիւ պարտուց աշագաւ բանտարգեալ սպասէ :

Արդարեւ այժքան ժամանակ տէրութեանդ ծառայելով ստացայ զչափաւոր դրամ ինչ . բայց բոլոր ամենայն մնայ մերձ առ այս ինչ որ հատալաճառ , որոյ բովանդակն իմա՛ իբրև հինգ հազար դահեկան , իբրու զամս վեց ո՛չ կարողացայ առնուլ զմայր դրամն և ո՛չ զտոկոսիս . հաճոյ է ինձ այժմ . գոնէ առանց տոկոսեաց զմայր դրամն միայն առնուլ անտի , եթէ մարթացից 'ի ձեռն մարդասիրիդ . կրկնապատիկ շնորհ լիցի ինձ ներելոյս , եթէ կարողացայց երթալ 'ի հայրենիս իմ , և օգնել բազմերախտ տկար և կարօտեալ ծնողին իմոյ . և յետ այնորիկ խնդրեմ և զայս 'ի բարեխնամ պերճապատիւ տէրութենէդ , անդորրական նամակ ինչ պատրաստեալ տայցես ինձ առ ամիրապետն այն յազատութիւն ծնողին իմոյ բանտարգելոյ . որ հանապազ աղօթամատոյց լիցի վասն պատուական կենաց քոց և վասն զբարթածաղիկ սիրելի զաւակացդ . զոր ամենախնամ տէր անդորր կենօք պահեսցէ հարուստ ամօք 'ի միսիթարութիւն տառապեալ ծառայի քո

Ի ՄԱՐՈՒԳԷԻՍ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ի ՊԱՏԺՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԱԻ

Ժամանեցք 'ի լսելիս քո ճայն ազա-  
դակի իմոյ՝ տէր բարեխնամ.


Արդարալուկ անձինս զտագնապ չեմ  
բաւական ծանուցանել զամենայն՝ տէր գը-  
թառատ. քաղցրացի սիրտ քո մարգասի-  
րական կամօք լսել ձայնի աղաչանաց չա-  
րատանջ լիկելոյս և տառապելոյս. որով ցօ-  
ղեսցի՝ ցօղ բարեգլխութեան քո յիս: Այն  
ինձ զի յանցեալ ամի յանցաւոր գօլով իմ,  
արժանաւոր և արդար գատակնքաւ ընկա-  
լայ զայս պատիժ արսորման յայս արգե-  
լանոց: Սակայն բռնակալ զինուորն որ առ  
իս է վերատեսուչ՝ անդր քան զկար իմ լել-  
կանօք նեղէ զիս խոչտանկեալ 'ի բազմապա-  
տիկ տանջանս հետզհետէ արկանելով, եր-  
բեմն 'ի կոճեզս և երբեմն գետնախշտի 'ի գի-  
ջին տեղւոջ. հանապազ զօրն զողջոյն և ըզ  
գիշերն զողջոյն բանտարգեալ կամ անլոյս և  
անարև: Աւասիկ 'ի մեծի հիւանդութեան ան-  
կեալ մերձ եմ շնչասպառ լինել և մեռա-  
նիլ: Աւասի ողորմելով ինձ առն միում գը-  
թածի զայս թուղթ և գրիչ, հազիւ կարա-  
ցի զայս համառօտութիւն աղերսանաց գաղտ-



նարար առաքել առ բարեգթութիւն ձեր ,  
բարեխօսել վասն իմ առ բարեգութ դա-  
տաւորն : Կարծեմ թէ չէ՛ ծանօթ ինքն ժան-  
տաժուտ բնութեան դահճին իմոյ , ուրեմն  
զայս քան ուժգնակի տառապանս պատժոյ  
իմոյ մինչև ցարդ՝ բաւական ապաշխարանս  
ինչ համարեալ ներող լիցի աղաչեմ և ող-  
բամ , և զազատութեան հրովարտակն ու-  
ղարկել հաճեսցի բարեգթութեամբ իւրով :  
Որով աղօթապարտ արասցիք զիս և զընտա-  
նիս իմ զաղքաակ , որք 'ի մեծի կարօտու-  
թեան կան հանապազօր հանդերձ զաւակօր  
մերկ և նօթիս , ըստ որում ձերդ աղերսա-  
խօսութիւն ընդունելի է առ դատաւորն :

Ո՛ղջ լեր անհնարինս պատժակիր է  
պատռահասակո՞՞՞ բարեացակն

ՄԱՐՈՒԳԷ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՂԱՄԻՏ ԼԻՆԵԼ  
Ի ԴԱՏ ՎԱՍՆ ՈՐԴԻՈՑ ԻՒՐՈՑ  
ՏԳԻՏԱԿԱՆ ՅԱՆՑԱՆԱՑ

Ո՞ գրառատ օգոստափառ, դատաւոր  
է բարերար տէր.

Խոնարհեցո՛ զունկն քո լսել ձայնի ա-  
զաղակի իմում. լալագին և արտասուաթոր  
աչօք աղաչեմ զքեզ ողորմեա՛ խնայեա . ընկա՛լ  
զխնդիրս զայս քաղցրութեամբ ըստ մեծի բը-  
նածին գթառատ մարդասիրութեան քում .  
Որ յառաջ քան զամիսս երիս առաքեալ  
էի զերկու որդիս իմ՝ ի փոքր Լսիա յայս  
ինչ քաղաք ՚ի վաճառականութեան գործ .  
Իսկ անսովոր գոլով նոցա յայնմ՝ պաշտօ-  
նի , պակասութեամբ իմն յանցաւոր գտեալ  
քաղաքական օրինաց այնոցիկ , բանտարգեալ  
են . և կամին ուղարկել աստ ներկայանալ  
առաջի տէրութեանդ ՚ի դատաստան . նա-  
զանգ եմ տէր իմ քաղաքական ամենայն օ-  
րինաց , զոր ինչ արժան իցէ դատեօջի՛ք ար-  
դար իբաւամբ ՚ի պատիժ և ՚ի խրատ . ըայց  
սակայն՝ որպէս ասացաք անսովոր գոլով նոցա  
՚ի գործս և անգէտ նոյն տեղւոյն քաղաքա-  
կան օրինացն , պատշաճ է ներողամիտ լինել  
յայսմ մասին : Ուստի ակն ունիմ , զի ըստ

մեծի մեծաջաճ իրաւասիրութեանդ ներողա-  
մտութեամբ վճռադատեսցիր շտալ ինձ տա-  
ռապեալ ծերունւոյս հոգետանջ հրդեհ անշի-  
ջանելի վասն տգիտագոյն յանցանաց տկարա-  
միտ զաւակաց իմոց, զի 'ի ծերութեանս ո՛չ  
զոր ունիմ միսիթարիչ կամ օգնական անձին ի-  
մումբաց 'ի նոցունց, խնայեա՛ գթած՝ վասն ա-  
րեշատութեան զուարթածաղիկ զաւկց քոց :

Տառապեալ ծերունի

ՄԱՐՈՒԳԷ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԽՐԱՏ ԱՌ ԱՆՋԳՈՅՇ ՈՔ ՅԵԿԵՂԵՑԻՈՋ

Մտերիմ եղբօր իմոյ բարեպաշտի սեր  
անկեղծաբար.

Բանականութեանն օրէն մեզ արարա-  
ծոցս պարտ անձին վարկանէ ճանաչել զա-  
րարիչն, միայն լստուծոյ և եթ երկրպա-  
գուս լինել, թողում զառաջինն տասնարա-  
նեայ պատուիրանաց որ խստիւ արգելու  
երկրպագանել կռոց և ձեռակերտաց : Վասն  
որոյ մեզ ամենեցուն հաւատացելոցս 'ի Ռը-  
րիստոս անհրաժեշտ պարտք են օրհնել  
զԼստուած և երկրպագանել նմա : Օսյ-

սոսիկ գիտելով յարգութեանդ կանխեսս յեկեղեցի զամենայն աւուրս որպէս և ականատես իսկ եմ, և բարւոք առնես: Սակայն զարմանամ ընդ ապուշ կալոյդ մինչ ցաւարտ եկեղեցւոյն առանց երկրպագութեան. ոչ գիտեմ յի՞նչ պէտս գտանիս անդ ներկայ. ՚ի զննի՞ն ելանել արդեօք զգեղեցկութենէ և զարդուց եկեղեցւոյն, թէ ընդ հրեշտակս լինել փառաբանիչ սուրբ երրորդութեան: Յուշ քեզ լիցի սի՛րելիս, որ ըստ բանի Աւետարանին, հոգի է Աստուած՝ վասնորոյ հոգւով և ճշմարտութեամբ պարտիմք երկրպագանել նմա: Որպէս և Ղաւթի թիսկ ասէ երկրպագից ՚ի տաճար սուրբ քո երկիւղիւ քով: Ո՛ւր երկիւղ Ղաւթի և ո՛ւր նորին Աստուած պաշտութեան ոգի: Արդարև քան զիսքայելացիս բազումք գտանին ՚ի տան տեառն ՚ի տաճարի, սակայն՝ են ՚ի նոցունց որ ո՛չ համբոյր մի մատուցանեն Աստուծոյ. են որ՝ զձայն միոյն դպրաց ընդ միւսումն բաղդատեն. և են որ՝ ընդ այլս համարձակապէս ՚ի խնդիր ելանեն զորպիսութենէ միմեանց. այլ քեզ ո՛չ կամիմ այսպէս՝ եղբայր. զի ՚ի մտանել յեկեղեցի՝ ուսի՛ր զայս համարս մարգարէին զվերոյիշեալն. այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից ՚ի տուն քո և երկրպագից ՚ի տաճար սուրբ քո երկիւ-

դիւ քաղ. և յեղանեւդ անտի՛ողորմութիւն  
քո տէր զհետ իմ եկեացէ՛ զամենայն աւուրս  
կենաց իմոց : Աւ 'ի ներքս առանց խօսելոյ  
ընդ այլս՝ ուշադրութեամբ ամենայն խոր-  
հերձ երկրպագութեամբ : Աւ երկրպագու-  
թիւնն կրկին գող իմա՛. մին՝ Աստուած-  
պաշտութեան է նշան, զորոյ ուսոյց մեզ  
զկերպն Յիսուս վարդապետն մեր ծունր  
դնելով 'ի պարտիզի յաղթս իւր, և միւս  
կերպն՝ է յարգական, որ առ սուրբս :

Արկրպագութիւնն Աստուածապաշտութեան  
այնքան հարկաւոր է բանական արարածոցս  
'ի ժամ աղօթից, զի քանիցս անգամ 'ի ժամ  
պաշտաման քարոզեն մեզ եկեղեցականք,  
Աստուծոյ երկրպագեսցո՛ւք ասելով, առ  
յանձինս զգաստս լինել զլայելչականն առ-  
նել անդանօր. զի մի՛ փոխան վարձուց դա-  
տապարտեսցուք. եթէ տէր եմ ասէ Աստ-  
ուած 'ի բերանոյ մարդարէին՝ ո՞ւր է պա-  
տիւն իմ :

Ապա ուրեմն եղբայր մի՛ երբէք ձանձ-  
րացուք առնել զկամս տեառն արարչին, և  
զարարածոցս պարտաւորութիւն :

ՄԱՐՈՒԳԷ  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ՏԷՐ ԻՒՐ ԱՌՆՈՒՂ ԶԽՐԱՏ

ԵՒ ԶՀՐԱՄԱՆ

ԳԵՐԱՎԱՍՏԻ՛Ն ԽՈՐԵՂՔԱՅՐ ԻՄ.

Յայտ լիցի տէրութեան ձերում, զի զոր պարտական էր մեզ իբրև շորս հարիւր քըսակ դրամ, ահաւասիկ բերել ետու զայն պարտաւորն բռնակալութեամբ. բայց փոխան պարտուցն զերկաթ կամի տալ իբրև հարիւր քսակի այժմէն. և զմնացելոցն խոստանայ զմուրհակագիրն նորոգել հնգետասան աւուր միջոցաւ տալ զբոլորն: Արոյ վասն երաշխաւորութեամբ արժանահաւատ ուրուք թողաք ՚ի վաղիւ, ընդ քեզ ՚ի միասին ընկալնուլ զայն զերկաթն փոխան դրամոց: Այլ բաց ՚ի սմանէ յայնկոյս Վալաթիայու վաղածանօթ վաճառականն մեր եկեալ յերեկ զմիջաւորք խնդրէ քառասուն հազար դահեկան փոխ դաշամբ վեշտասան ամսոց. ակն ունիմ ուստեք գալ դրամոց ասելով յուսադրեցի. և նա գալոց է ՚ի վաղիւ տեսաւորիլ ընդ մեզ վասն պայմանագրութեան ՚ի նոյն:

Ուստի ՚ի վաղուեան աւուր սպասեմ անյապաղ գալստեան ձերում աստ առ այսց

երկոցունց վերոյիշեալ հարկաւոր գործոց .  
իսկ եթէ արգելիչ գործ ինչ պատահիցի ,  
երկտողի գրութեամբդ յայտ արասցես ինձ  
զոր ինչ արժան է առնել ինձ նուաստիս ըստ  
հրամանի տեառնդ :

Ողջ լեր

ՄԱՐՈՒԳ Է  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

---

ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐԿԱՆԵԼ ԶԱՆԶՆ Ի ՎՏԱՆԳ

Հոգեկցորդ եղբայր .

Առն անմախ գործ'  
է իմաստնոց իրտա և փորձ .

Եւ պաքէն յայտ իսկ է զի առաքինասէր  
անձինք բնական բարեւտէր գոլով , յորժամ  
տեսանեն զբարեգործութիւնս այլոց , փոյթ  
կալնուն սիրով առ ինքեանս ձգել զօրինակ  
իրրև մագնեստիս , ընդ նովին օրինակաւ  
վարիլ :

Ո՛չ վստահիմ ասել թէ առանց վար-  
դապետի և ուսուցչի , զի այնպիսեաց ու-  
սուցիչն Եստուած գոլ գիտեմք . որ յա-  
ջողէ իբրև փոքրոգի ցուցանել նոցա պառա-  
քինական գործս յորս հաճոյասցին սիրով :

որով լինին առաքինագործ և ընտիր բարե-  
պաշտ և հաճոյ Աստուծոյ և մարդկան :  
Սովոր են Աւրոպացիք ոմանք՝ ՚ի տեսխան-  
ձարուր և կաթնկեր մանկան ՚ի վերայ օրօ-  
րոցի գեղեցկանկար պատկեր ինչ կախել .  
զի յորժամ մանուկն բանայ զաչս իւր և հա-  
յի ՚ի միջոյ օրօրոցին յայն գեղեցիկ պատ-  
կեր , ՚ի սիրտս իւր նկարագրեսցի՝ գեղեցկու-  
թիւն ինչ . զի ամենայն լաւագունից բարեաց  
յօժարեսցին որչափ աճեսցին հասակաւ օր  
ըստ օրէ :

Այլ ՚ի նչ զարմանք՝ զի ոմանք ՚ի գոր-  
ծոց բարի մարդկանց չեն փոյթ օրինակ առ-  
նուլ և ընդ նոսին հաղորդ գտանիլ բար-  
եաց վարձուց . այլ ըստ մարգարէին ՚ի խը-  
նամս չարի արձանացեալ ՚ի մանկութենէ .  
անխոհեմից տարապարհակ գործոցն համա-  
կիլ յօժարին առաւել , քան ուղղել զին-  
քեանս , տեսանելով զարդիւնս նոցա վեա-  
սաբեր . որք չեն ազատ յաշխարհիս վտան-  
գից անընդհատ պատահելոց ՚ի տրամուծիւն  
չարատանջ :

Արպէս և դու սիրելիդ յերեկեան ա-  
ւուր ՚ի պարտիզի անդ . մինչ ընկեր քո ան-  
խոհեմաբար առ իզերք ջրհորոցն լուանայր  
զպտուղս՝ յանկարծ էարկ զժամացոյց իւր  
՚ի ջրհոր անդր . նոյն օրինակ և դու անխը-



րատ լեալ յօրինակէ անտի՝ ընդէր հաճե-  
 ցար քանի մի դրամոց փափաքելով մտա-  
 նել անդ 'ի ջրհորն և հանել զայն անտի,  
 ոչ երկուցեալ 'ի մաՀարեր վտանգէ: Օի-  
 ա՛րդ հաճոյ թուեցաւ քեզ այնքան դրամն  
 քան դքաղցրիկ կեանս քո. ըստ նմանութեան  
 աքաՀ աւճանց. որք սիրաՎառ փարին  
 զարծաթով քան զկեանս իւրեանց, զամե-  
 նայն արդարութեան կանոն և զարդիւնս  
 բանականութեան 'ի բաց թողեալ. մինչ զի՝  
 սովոր են մինչև անձնասպան լինել վասն  
 Փնիրաւ մամոնայի իրիք. քանի՞ սուտ վկա-  
 յութիւն. քանի՞ կաշառառութիւն թիւր  
 դատաստանի. ուրեմն արդարացաւ բան՝ Քաւ-  
 թի որ յազագս այնպիսեաց. թէ խոտեցին  
 այնոքիկ ոչք ընտրեալ են արծաթով: Ա՛փ-  
 սո՛ս կրկնակի. զի որպէս ընկեր քո աներ-  
 կիւղ լեալ 'ի վտանգից անխոհեմութեամբ ըն-  
 կալաւ զՎնաս, հետեարար և դու առաւել  
 քան զնորայն, որ վասն արծաթոյ անձնաս-  
 պան լինելոց էիր. այս է գործ անիմաստ և  
 վստահութիւն անպատշաճ: Քաջ գիտե-  
 լով ոմանց սիրելիս՝ զզօրութիւն բազմա-  
 ծուփ այլեաց ծովու և զբնական սաստկու-  
 թիւն կիզող հրդեհից, եթէ աներկիւղ լեալ  
 անկցին 'ի նոսա, ո՛չ ապաքէն քան զտարերս  
 լիցին անխոհեմ և անզգայ. որ կամովին

անձնատու լեալ, յետոյ տարերաց համարին զյանցանս. իբրու թէ ասել, կինս զոր ետուր ցիս նա խաբեաց զիս: Ափսո՛ս ափսո՛ս. ոչ նոր ինչ տեսանի այս իսկ արատաւոր գործառնութիւն պատճառս բերել զայլոց արարս, որով յանօրէնութիւնս շաղախիլ անձնովին, այլ 'ի սկզբանէ անտի արարչութեանն ան զմարդ. որպէս Լքարողի 'ի ձեռն Պաւլթի, 'ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս, և այլն: Ահա և սիկ այդ գործառնութիւն քո անխոհեմական՝ զոր ոչ գտար հաւատարիմ կալ 'ի վայելչութեան բանականութեան արիապէս, այլ վնասակարից յօժարիլ փութանակի, վստահապէս հարկեցոյց զիս առ այսքան ասացուածոց զրութիւն. ոչ միայն 'ի խրատ ըստ պարտաւորութեան, այլ 'ի ցաւակցութիւն առ անկեղծութիւն եղբայրական սիրոյս: Ընտել ուրեմն աղաչեսցուք զԱստուած ամենախրնամ 'ի լուսաշաւիղ խոհեմութեան պահելով զմեզ զամենեսին, մարդասիրական հովանաւորութեամբն պաշտպանեսցէ և նախախնամեսցէ, զի մի' միւսանգամ երևեսցի մեզ բնաւ մահադուշակ ինչ վտանգ:

Ն. Ծ. ԽՆԴԻՐ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

## ՂՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԽՐԱՏ

Ուսումնասէր եղբայր իմ հոգեկից.

Օ՛րր ինչ խնդիր էր քո բարեփափագ սիրելութեանդ՝ ծանեաց սիրածրար նամակաւ քով. այո՛ արդարեւ արժան եմ ամենայն յանդիմանական բանից քոց խրատականաց. բայց ինձ այսպէս թուի, թէ ոչ անհմուտ գոլով կամիս շտեղ ինչ յինէն ըզխնդրոյդ և ծանօթանալ. այլ յուշ անեալ խելամտեցուցանել ջանաս և իմումպակասութեան իմովս բանիւ վկայութեան, և այնու յորդոր կացուցանել եղբայրսիրութեան խնամով. զի մի՛ երբէք այսուհետեւ ևս՝ յառաւելն այդպէս հարեալ մխեցայց ՚ի խաղս ժամավաճառութեամբ յերիս աւուրս շարունակաբար, զորմէ շնորհակալ գոլ մատչիմ մտերմաբար և ՚ի խնդիր քո փոքր ՚ի շատէ յայս թղթիս :

Ե՛հաւաստիկ ըստ բանից քոց ճշմարտագունից եթէ արգելեալ իցէ գործ հոգևորական ընդ մարմնականին, է՞ր վասն յամենայն տէրունական աւուրս ընթերցմամբ դրոց կատարին պաշտամունք յեկեղեցւոջ. ո՛չ ապաքէն օրէնսուսոյց քարոզիչն որ յաւուրս կիւրակէի իբրև ժամ մի խրատաբա-

նութեամբ սեղանաւորէ մեզ զբանն կենաց .  
 եթէ ասես բանիւ է սա , և ես ասեմ , բան  
 և զիր միմեանց ենթակայ . և երկոքին ևս  
 'ի մտաց ծնունդ :

Եւ անց հայելոյ 'ի գիրս բանն արտաբե-  
 րել բերանով , և տեսանելով 'ի գիրս՝ մի  
 և նոյն են երկոքին : Իսկ եթէ որ 'ի ծու-  
 լից առիթ ինչ հնարաւորել դանդաղիցի՝  
 թէ շին և՛ Աորկտակարան է հոգևոր , բայց  
 արտաքին գրեանց պատմութիւնք ոչ այն-  
 պէս , ապա է՞ր արդեօք անյապաղարար ըն-  
 թեանումք փութանակի զբարեկամացն նա-  
 մակ , մինչ յուր կիւրակէի եկեալ իցէ . և  
 կամ 'ի նոյն օր ո՞չ ապաքէն առնեմք զնա-  
 մակադրութիւն անտարակոյս՝ եթէ պատա-  
 հիցի : շանապազ ընթեանումք զՄատուա-  
 ծաշունչ գիրս , ո՞չ երբէք տեսանեմք գոնէ  
 վայրկեան մի արգելեալ հոգևորաց . բայց մի-  
 այն մարմնաւորաց արգելումն յօրէնս մովսի-  
 սական սուրբ պահել զօր տէրունական 'ի բաց  
 կելով 'ի գործոց մարմնաւորաց . որոյ վասն  
 դատեցաւ Մատուած 'ի ձեռն Մովսիսի զփայ-  
 տակիր այրն այն իսրայելացի՝ յարտաբոյ  
 բանակի քարակոծ մահուամբ : որ զհոգևո-  
 րացն անփոյթ լեալ՝ զմարմնաւորն գործէր  
 վաստակ ընդդէմ օրինաց : Բայց արդ այ-  
 սու բանիւ իմով համարիս արդեօք եթէ

չարունակարար երկոցունց՝ և զմիանգամայն  
 ասեմ յընթերցողութեան՝ և թէ 'ի խաղս  
 մշտատե և եւալ պարտ վարկանիմ զոր, ոչ  
 այլ զերկաքանչիւրոց ևս ըստ չափու բե-  
 րիլ 'ի գործ . միայն զի՝ առաւել գուն գոր-  
 ծել է արժան յընթերցողութեանն գործ,  
 քան 'ի խաղս . ահա այս է կանոն անվթար  
 և անխոտորնակ . թէպէտ խաղուց ինչ զբոս-  
 նումք, այն լիցի մեզ զերթ պատահմունք :  
 Օայս արժան է առնուլ, և զայն շնորհուլ .  
 ըստ Պօղոսի՝ թէ ներելով և ոչ հրաման  
 տալով . սոյնպէս և մեք այսպէս կալնուլ  
 արժան է 'ի մտի յորժամ իցեմք 'ի խաղս :

Հուսկ յետոյ յետ այսց բանից խակա-  
 կութ ծառոյս՝ եթէ կամք իցեն յարգի եղ-  
 րայրութեանդ՝ որպէս և ասացերդ 'ի գրիդ  
 բարեոք է հարցանել ուսուցչին մերում . զի  
 նա լաւ ևս կարէ խելամտեցուցանել զմեզ,  
 քաջ զիտելով՝ թէ ո՞րքէ բարին՝ հաճոյն՝ և  
 կատարեալն : Ասան զի բազում անգամ  
 տեսեալ նորա զկրտսեր եղբայրն մեր՝ յա-  
 լուր կիւրակէի յընթերցմունս, ոչ երբէք  
 խոժոռի և կամ գոգմնի . այլ ուրախութեամբ  
 մեծաւ բարեյօժար խնամով որդեւորութեան  
 իւրոյ՝ խիտ առ խիտ պատուէ և յարգէ ըզ-  
 նա ընթերցասէր յորջորջմամբ :

Ն. Ծ. ԽՆԴԻՐ  
 ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԱՒԵՏԱԼՈՒՐ ՆԱՄԱԿ

ԳՈՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՆ ՈՐԴՒՈՅ

ԲԱՐԵԿԱՄԻ ԻՒՐՈՅ

Շնորհագւորդ մտերիմ.

Փաօք ամենախնամ արարչին արարածոց նախախնամական տնօրէնութեանն որ մարդասիրական գթութեամբ իւրով մխիթարէ զամենեւին, բայց ոչ միակերպ, այլ տարբեր և զանազան. որպէս և Առաքեալն յայտնի առնէ ասելով, միթէ ամենեքին մարգարէք իցեն. միթէ ամենեքին շնորհս բլծրչկութեանն ունիցին. միթէ ամենեքին վարդապետք իցեն. միթէ ամենեքին առաքեալք իցեն: Որպէս բազում անգամ և յամենայն ուրեք տեսանեմք, զի ոմանց ըջհարստութիւն գանձուց տալով մխիթարէ. ոմանց հանճար և իմաստութիւն. ոմանց խորին խոհեմութիւն. և ոմանց բարեժառանգ ընտիր զաւակ:

Բարեժառանգ ասելով իմ կամիմ ծանուցանել քեզ յարդութեանդ, եթէ լինիցի այդ օրդիդ քո՝ բարի՝ հլու՝ հնազանդ՝ խրատալուր՝ Աստուածավախ՝ պարկեշտասուն՝ ամօթխած՝ և բարեպաշտ, ոչ ապաքէն ցանկա ե լինի քեզ և բազմաց, քան զհա-

բըստութիւն իրր մեծագին հազուագիւտ ըն-  
չիւք բարգաւաճեալ: Ապաքէն թէ և իցէ  
ընչաւէտ՝ կամ գիտուն՝ կամ ճոխարան՝ կամ  
արուեստագէտ, կրկնակի լիցին յայնժամե-  
րանաւէտ. զի վերոյիշեալ բարեմասնու-  
թեամբք սնեալ, և ծնողաց իւրեանց պատ-  
ճառ լինին խաղաղական կենաց անդորրա-  
կանաց, թէ աստ և թէ՛ ի հանդերձելումն.  
զի յետ մահուան ծնողացն՝ բարեյիշատակ  
մնալով ՚ի վերայ աշխարհի, զհոգեշահ գոր-  
ծեն զգործ երախտագիտութեամբ, յողոր-  
մութեան զանազան պաշտօնս գտեալ յո-  
ղորմութեան յիշեցուցանեն՝ զհոգիս ծնո-  
ղաց իւրոց: Ապա որ ունիցի զայսպիսի բա-  
րեկիրթ ժառանգ, երանի՛ է. զի առա-  
ւել արժէ քան զամենայն ստացուածս, որ-  
պէս ոմն իմաստասէր զստացուածս իւր ՚ի  
ծերութեան ժամանակի բարեկամի իւրում  
տայ ՚ի պահեստ ասելով թէ՛ եթէ զաւակս  
տգէտ լինիցի՝ նմա տացես ՚ի պաքէն. զի մի  
կալցէ ինչ թշուառութիւն. իսկ եթէ գի-  
տուն և բարեկիրթ, քեզ լիցի. զի գիտունն  
չէ կարօտ գանձուց իմիք ՚ի կեանս իւր:

Ն. Ծ. ԽՆԴԻՐ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՈՐԴԻՈՅ ԱՌԻ ՀԱՅՐ ԻԻՐ

ՎԱՍՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԵԱՆՆ՝

Բարեխնամ հօր իմոյ պատուական ձեռաց համբոյր խոնարհական ՚ի մեծ շնորհակալութիւն.


Դէպ եղև ՚ինձ նուաստիս այժմ գուշնաքեայ փոքր ինչ գրութեամբս այսու յայտառնել քաջաբաստիկ տէրութեանդ զշնորհակալութեանս նիշ զարփիացնցուղ և մըշտածաւալ բարերարութեանդ ճառագայթաձիգ լուսաւորութենէ . զոր հանապազ որդեսիրական ազնուագութեամբ վեհափառութեան հօրդ ՚ի վերնայարկ սրահէ սիրոյդ քաղցրութեան փաղփիւնափայլ փայլատակեալ, խնամողօրէն տեսչութեամբ արեգակնակերպ ծաւալես ՚ի վերայ իմ . որ է հայրական յատուկ մարդասիրութեան յայտնի ապացոյց : Որպէս յայսմ եօթնեկի իսկ կըրկին զուարթացուցեր զիս հրաման տալով նորոգ շինութեան գեղեցիկ գրասեղանի միոյ :  
Եւ պա յորպիսի հատուցումն կարացից մըցիլ զփոխարէնն գուն գործել ՚ի պարտս երախտագիտութեան . շեմ բաւական քան զայս սնոտիապատուաստ բանագրութեամբ՝



ընծայամատոյց լինել հայթայթանօք՝ զոր  
ներքնաշարեալքդ ստորագրեն երկօրումբք .  
նախ՝ յաղօթս մշտամըռունչս հայցուածոց  
լինել մարթացից առ կանխօրինակ և նախա-  
շաւիղ մարդասիրութեան սէր անուն Յի-  
սուս . զի ամենառատ մարդասիրական գը-  
թութեամբ իւրով՝ անպակաս հատուցէ յեր-  
կոսին կեանս քո զփոխարէն , զոր առնես  
ամենից ըստ բնածին բարոյիցդ բերմանց .  
և երկրորդ՝ սարտ վարկանիմ աւասիկ զանձն  
իմ փանաքի՝ մշտսյօժար կալ մնալ ՚ի հը-  
նազանդութեան մեծիդ և բարեխնամիդ ա-  
ռաջի՝ մինչև ցվախճան կենաց իմոց :

Որ էմ նուաստ ծառայ անարժան որ-  
դի քո

ԽՆԴԻՐ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԳՈՎԱԲԱՆԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ԱՌ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՅԱՐԳՈՅ ՄՏԵՐԻՄ

Թագ ականակապ գագաթան սրտիս,  
 Էս դամպարափայլ լապտեր 'ի հոգիս, ա-  
 մենայն բարեմասնութեան ձրիւք բարգա-  
 ւաճեալ ազնուագարմ յարգոյ նագելւոյդ ըն-  
 ծայեմ գփունջ խանդակաք սիրոյ յարա-  
 փափաք տենչանօք 'ի յարգանս.

Յանկալի էին աւուրքն այնոքիկ յոր-  
 ժամ զերթ յՄատուած ընտիր նահապետին  
 Յակոբայ սիրակառոյց բազմասեանցն սի-  
 րամթեր մառանի անդ 'ի ձեզ կելով՝ վա-  
 յելէի հանապազ յիւրաքանչիւրոցդ 'ի ձէնջ  
 զանչափական սէր հոգեխնամ բարերարու-  
 թեամբ հանդերձ. և մանաւանդ յատուկ  
 ազնուարարոյ և սիրասնունդ մեծի յար-  
 գութեանդ մարդասիրութեամբ՝ իբրև ար-  
 փիահրաշ մխիթարական լուսոյ ծագմամբ  
 հարստացեալ էի յարաժամ. մինչ երկուքս  
 դէմ ընդ դէմ նստեալ, ակն ընդ ակն պը-  
 շուցեալ, երեսք զսփոփանս ձևացուցեալ,  
 կամք ընդ կամաց շողկապեալ, հոգիս ընդ  
 հոգւոյդ միաւորեալ, բերան առ բերան ևս  
 զիմս յայտնէի քեզ խորհուրդ, և դու ինձ  
 զբոյսդ հոգեբարբառ բանիւ յընթերցանու-

Թեան առարկայի : Բայց այժմ՝ զի որպէս ծառ որ միայն յարգաւանդահող երկրի ունելով տեղի ոչ կարէ երբէք արգասաւորիլ և պտղաբերիլ մինչ չիցէ զիւրև ծագեալ արեգական գոյացուցիչ ջերմութիւն, նոյնպէս և ես նուաստս թէ չիցէ 'ի քէն ստէպ ստէպ արեգակնափայլ տենչալի և սխրասարաս սիրոյդ մեղրածորան բանիցդ նշուլազիղ ծագումն փաղփիւնափայլ փայլատակմամբ ծաւալեալ զինև՝ ոչ երբէք կարեմ հանդիսանալ 'ի տեղւոջ իմիք ուրախասիրտ . այլ հանապազ տարտամ տազնապի տարակուսանօք տառապեալ տանջիմ տոչորիմ 'ի տուայտանս տխրութեան տրտմալի սրտիւ անմխիթար :

Արոյ վասն ոչ շատացեալ միայն յերթևեկութեանս պահու սփոփիլ հայթայթեցի այս սիրանիչ զնամակ անհամեմ, իբրև տեսուչ առաքել առ ձերդ բարեբաստիկ քաջողջութեան անդորր կենաց քննութիւն . զի ընկերացեալ ընդ կամաց քոց բարեսիրաց՝ յուս բարձեալ բերցեն ինձ աստ զցանկալին իմ ասեմ և փափաքելին քումդ քաղցրաբանութեան մշտաւառ սրբալոյս սիրոյ յայտարար գրաւօր բարբառ, իբրև զաւետարներ և զուրախառիթ ողկոյզ քաղցրահամ յերկրէն Աւետեաց, որ ցանգ բերէ ինձ

մեզր և զկաթն հոգեպաշար Շատուածատուր  
սիրոյ 'ի պարարումն և 'ի բարգաւաճութիւն  
յերկասին կեանս իմ :

Նուսաստ եղբօր քո Բարեխնդիր

ԽՆԳԻՐ ՅԱՌԱՅԻԳ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

---

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՅԱՌԱԶԱԿԱՑ

ԵՒ ՀՆԱՐԱԳԷՏՍ ԼԻՆԵԼ Ի ՆՈՅՆ

Սիրելի՛ եղբարք իմ :

Օ որ ինչ չար դէպք յայտմ գիշերի պա-  
տահեցաւ ինձ նուաստիս դժբաղդարար, ծա-  
նուցանել պատեհագոյն համարեցայ ձեզ սի-  
րելի դրակցացդ յարթնութիւն յայսպիսի ե-  
ղեանագործութիւն ինչ վտանգալի : Օի  
մինչ ընտանիք մեր ամենեքին 'ի շնորհաւո-  
րութեան հանդիսի էին յայլում տան, և  
ես միայն էի 'ի տան մեր 'ի սենեկի միում  
վերին դատիկոնի առանձնացեալ, եղև գոր-  
ծողութիւնս այս զարմանալի, ընդ նմին և  
երկիւղալի. քանզի մինչ 'ի լիալուսին լուս-  
նոյ գիշերայն լուայ 'ի տան պարտիղի մե-  
րում զձայն պղնձեայ անօթիցն, յայնժամ

Յայտ եղև ինձ թէ անկոչ բարեկամք ե-  
կեալ են. բայց գոհանամ զտեսանէ, զի  
զօրացոյց զիս այսու հնարիւս ազատիլ. քան-  
զի սկսայ բաղում մարդկան անուանակոչու-  
թիւնս առնել ՚ի ձայն մեծ հրամայական, իբր  
յորդորումն ՚ի սպաս իւրաքանչիւրոց. յորմէ  
երկուցեալ աւազակաց զգործիս իւրեանց  
անդ մոռացեալ մազապուրծ վաստեան ան-  
տի, մնաս ինչ ոչ արարեալ ինձ և ոչ մի և  
ոչ կարասեաց ասնն բնաւ :

ԽՆԴԻՐ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

---

ԱՂԵՐՍԱԳԻՐ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՅՈՐԴՈՐԵԼ

Ի ԳԻԻՏ ԿՈՐՈՒՍԵԼՈՅՆ

Նայեա՛ յիս գրութեամբ եւ ողորմու-  
թեամբ տէր բարերար.

Արդարութի՛ւն՝ արդարութի՛ւն՝ ինդրեմ  
՚ի քէն արդարութիւն, արդարադատ տէր  
բարեգութ ինայեա՛ ինձ դժբաղդիս, որ  
յամենայն կողմանց յարեան ՚ի վերայ իմ  
վկայք մեղաց. անսուտ բարբառիմ ողոր-  
մելիս, զի արդարև եթէ չէի դժբաղը՝ յայսմ

աղքատութեան վիճակի ոչ ծնանէի: Այն  
ինձ մեղայ յիմարարար. զի եթէ լինէի դըժ-  
բաղդ, այն չէ եր ծնեալ իմ քրիստոնեայ.  
ըստ հաւատոյ մասին մեծ բաղդաւոր եմ.  
բայց ըստ մարմնականին կենցաղոյս ասեմ, զի  
չի՛ք իբրև զիս դժբաղդ. քանզի այն ինչ գե-  
րապատիւ Միթրայն տեսեալ զիս զտգէտս  
ի գործս ընտիր ուսմանց սակաւ ինչ փայ-  
լուն, կամ յառաջագէ՛մ, մարդասիրական  
խնամովն մտիթարել կամելով զիս, կանան-  
չագեղ զմրուխտ քարիւ մատանի միետ ինձ  
ասելով. թէ կեանք քո այսպէս կանանչա-  
գեղ մնասցէ որդեակ. որ է օրհնութեան  
նշան. զի կանանչագեղ մնալն է անթառա-  
մելի այսինքն ողջ մնալ, այս է կեանք դա-  
ւար, և ես նուաստագոյն յետին ծառայո  
ոչ սակաւ զուրախութիւն մեծ ուրախանա-  
լի. այլ քանիցս անգամ մինչ հայէի ՚ի վե-  
րայ նորա մտիթարելով մտիթարէի ՚ի կեանս  
իմ. և մանաւանդ յամենայն ժամ խրախոյս  
քաջալերութեան մեծ լինէր ինձ գերագոյն  
ուսմանց հետեւիլ: Բայց յանցեալ աւուր  
յայն ինչ հարսանիս երթալով իմ յորժամ  
ելի յընթրեաց լուանալ զձեռս իմ, եղի մա-  
տանին ՚ի վերայ բարձի անդ, և ոչ գտի.  
ուրեմն աղաչեմ զքեզ ո՛վ իրաւախոհ դա-  
տաւոր, ահաւասիկ վասն այնր պատճառի

ներկայացայ առաջի բարերարիդ աղեկտուր  
ողբալով, զի հնարաւորեացիս 'ի զիւտ մա-  
տանւոյս ըստ մեծի մարդասիրութեան քում  
աղաչեմ:

Ն. Ծ. ԽՆԳԻՐ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

---

ՅՈՐԳՈՐԱՆՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

ԲԱՂԽՈՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍԻՒ

Սի՛րեկիս.

Մեր տաներէց հայր քահանայն գան-  
գաթի զքէն ասելով, թէ յանցելում ամի  
ոչ տեսի երբէք գալ 'ի խոստովանութիւն,  
յայսմ ամի ևս նոյն գունակ. յայնժամ և  
ես վաղվաղակի ատիբերան եղեալ մնացի 'ի  
զարմացման. միտքս շփոթեցաւ, արիւնս  
այլայլեցաւ, բերանս կաշկանդեալ մնաց, որ  
ոչ կարացի բան ինչ պատասխանել նմա և  
ոչ մի: Արդեօք վայել է քրիստոնէին այդ-  
քան ժամանակ անմասն և անհաղորդ լինել  
որում փափագիմք և ծարաւիմք այնր կեն-  
սաճաշակ սեղանոյն. միթէ պատճառ լինելոց  
ես կործանման տանս՝ այսորիկ այդպիսի վա-  
րուք, պարօն, որպէս և եղև իսկ 'ի ժամա-

նակս խորայելացւոց ելելոցն յԱզգիպոսէ  
հարխորպետ ոմն 'ի ցեղէն Յուզայի Աբալ  
անուն 'ի կործանման Աբրիքովի գողացաւ  
յլնչից նզովելոց : Ասան որոյ՝ նորին մե-  
ղացն պատճառաւ ազգովիմք յաղթեցան : Աւ-  
զի՞նչ այդ փախստականութիւն Յովնա-  
նեան , զի թաքթաքուր եղեալ 'ի բնակա-  
րանի մերում խորգաս մեղօք խռովայոյզ առ-  
նել 'ի վերայ մեր՝ տարերաց զօրեղագոյն թըշ-  
նամեաց պատուհասակոծ առնել զմեզ զամե-  
նեսին : Վան զԱւետարանիչն սուրբ Յով-  
հաննէս արդար կարծես զքեզ , որ ասէ , ե-  
թէ ասեժք մեզս ինչ մեք շունձել , սուտ առ-  
նեմք զնա . ապա վասն էր ոչ մերձենաս այնմ  
ճարտար դեղատուութիւն . արդարեւ դե-  
ղատու մեծ ըստ հոգւոյ մասին . սակայն  
ծանխր վասն քո և վասն քեզապիսեաց ըզ  
զանգատ մարգարէին 'Աաւթի . զի մի՛ լուիցէ  
ասէնա զձայն թովչի ճարտարի , և մի առցէ  
զդեղ 'ի դեղատուէ իմաստնոյ . նոյն իմաստուն  
թովնչն վիրաբուժ օձախայթից զբահանայն  
պէտք է իմանալ . և տէրն մեր Յիսուս Վր-  
րիստոս ասէ բորոտին 'ի սուրբ Աւետարանի ,  
թէ երթ ցոյց զանձն քո քահանային . և  
բորոտն այն բժշկութեան կատարելութիւն  
չունեցաւ , մինչև եր մերձեցեալ հրամանաւ  
տնառն առ քահանայն և լուացեալ Սելովա-



Մի ապաշխարութեան ջրով: Ահաւասիկ այժմ  
Աստուած ամենակարող պատրաստեաց նոր  
ուազան Սելովամ զխորհրդական ապաշխար-  
ութիւն 'ի թողութիւն ներգործական մե-  
ղաց. զի յետ ընդունելոյ զթողութիւն ըս-  
կզբնական մեղաց որ յԱդամայն, եթէ կըր-  
կին մեղանշիցեմք, պարտ է ապաշաւանօք  
լուացեալ լինիլ յաւազան ապաշխարութեան:  
Տես միանգամ անասնօց իմաստալիբ սովո-  
ութիւն, օձին մերկանալ զշապիկ իւր ամ  
ըստ ամէ ընդ անձուկ ծակ անցանելով, և  
մեր զայս լուր ունիմք 'ի տեառնէ, թէ նեղ  
և անձուկ է ճանապարհն որ տանի 'ի կեանս,  
այսինքն ապաշխարութեամբ կարեմք 'ի լոյս  
ելանել, և 'ի մաքրութիւն ժամանել:

Ո՛հ ցանկալի և փափաքելի խոստովա-  
նութիւն. զի՛նչ բարձրագոյն զօրութիւն.  
զի զցասումն Աստուածային 'ի հաշտութիւն  
և 'ի խաղաղութիւն փոխարկէ, զմեղաւորս  
արդարացուցանէ, զկործանեալն շինէ: Առ  
Սինուէացիս կործանումն խոստանայ Աստ-  
ուած համայնիւ զքաղաքաւ, իսկ յապաշ-  
խարել Սինուէացոց ստրջանայ և ներէ  
դդմենոյն օրինակաւ, ո՞րպէս կորուսից ասէ  
անխնայ Աստուած ամենակարող, որ ո՛չ կամի  
զմահ մեղաւորին, թէպէտ յԱդամայ խընդ-  
րէր զմեղայն, բայց 'ի Ամեքայ ընկալաւ

զայն . յորժամ 'ի պատրուակ ձևակերպու-  
թենէ Ապենի խարեալ յորսորդութեան  
աւուր , յետ սպանանելոյ զնա վերադարձաւ  
'ի տուն առ ընտանիս իւր , մեծաւ ստրջա-  
նօք ելաց դառնապէս . և մեղայ գոչելով ա-  
ռաջի ընտանեաց իւրոց խոստովանութեամբ՝  
ազատեցաւ յեթմնեքին պատժոցն Ապենի  
զոր խոստացեալ էր տալ Աստուած այնմ ,  
որ սպանանանիցէ զնա . որպէս Տնգեքին մա-  
սամբք ունիմք օրինակ 'ի կատարելութիւն  
խոստովանութեան առ քահանայս :

Վաս' բարւոք մտածականութեամբ յի-  
շել զմեղս մեր զառաջինս և զղջալ 'ի վերայ  
նոցա :

Բ. Ուխտել հաստատուն , գամ ևս ոչ  
մեղանշել :

Գ. Արթալ առաջի քահանային խոստո-  
վանիլ անձերի ամենայն ամօթխածութեամբ  
և պարկեշտութեամբ :

Դ. Օրր ինչ հրամայեսցէ քահանայն  
յապաշխարանս ըստ արժանւոյն , անձերի  
պարտիմք կատարել յօժարութեամբ :

Ե. Արժանաւորութեամբ ճաշակել զմար-  
մին տեառն Հիսուսի . որ ահա յայնմ ժամա-  
նակի իբրև զՎաւիթ յաղթկու գտցուք յաղ-  
թաբաղուկ հսկայ Վոդիաթու շարին սատա-  
նայի . անուամբն Հիսուսի , սպանցուք զայն

Ե նուաձեսցուք զօրութիւն նորա ունելով  
 ընդ մեզ զՏինգ մասունս խոստովանութեան  
 իբրև սոր պարսաքարիւ, զոր ունէր Վաւիթ  
 'ի պարկի անուամբն Հեսուայ յաղթել ըզ  
 Վոդիաթ :

Լպա զօրացարո՛ւք զօրացարո՛ւք անուամբն  
 Հիսուսի մերս զօրացետին՝ յաղթել զամ  
 բարհաւաճն սատանայ արժանապէս ճաշակ  
 մամբ զոգեպարարն հաց հաղորդութեան 'ի  
 ձեռն մաքրութեան երկրորդ Սերլովամի սուրբ  
 խորհրդոյ խոստովանութեան, առեալ զգեզ  
 ապաշաւանաց 'ի դեղատուէ իմաստնոյ, այ  
 սինքն 'ի հոգեբուժ քահանայէ. որով ըստ  
 օրինակի Արիքովի և զօրեղ Վոդիաթու  
 կարասցուք յաղթել՝ կործանել և խորտա  
 կել և 'ի գիմի հարկանել ամենայն նետից  
 և թիւնից սկզբնաներհակ մեր թիւնաւոր  
 գազան մեծ վիշապին. քանզի ո՛վ ոք գիմեալ  
 կալաւ գեղջերաց սեղանոյ այսր սրբութեան.  
 մեղայի, և ոչ առ ժամայն պրծեալ 'ի պատ  
 ժոց անարատ գտաւ ըստ Արեկացւոյն :

ԽՆԴԻՐ  
 ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԱՆԳՐԱՄ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ


Յարգապատի՛ն սէր իմ.

Կարծեմ թէ քոյին բաղդաւորութեանդ պատճառաւ և ես բաղդաւոր գտոյ յայսմ աւուր զեղբայրսիրութեաննչան ինչ ցուցանել յարգութեանդ . քանզի ահա աւետեմ զսիրելութիւնդ . զի զոր խնդրէիր ընդ հովանեաւ վաճառականի ուրուք լինել ահա աւսիկ յարգոյ վաճառական ոմն յաւուրս յայստսիկ ճանապարհորդել կամի ՚ի Վարիզ և խընդրէ զհաւատարիմ սպասաւոր զոմն . Ուրեմն առանց յապաղելոյ ՚ի հասանել ծանուցագրիս զիս դտանել փութասցի՛ր . զի ՚ի միասին երթալով առ նա աստէն ողջունեսցես համբոյր ընծայելով նմա , և զոր ինչ պաշաճ է՝ այժմէն խօսեցայց վասն քոյին սահարկութեան գուցէ և կանխիկ դրամ առնուլ պատշաճ լիցի արդէն վասն ծերուհի մօրդ :

Ո՛ղջ լեր:

ԽՆԴԻՐ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԻՋԻՄ  
ՏԱՍՄԻՐԻՄ



ԱՂԵՐՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԲԺԻՇԿՍ

ՅԱԻԷՏ ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ


Բազմաց մխիթարից նարտարարուէստ  
Բժիշկք յարգոյ տեարք իմ.

Արդարև բարևհռչակեալ էք դուք ճար-  
տարութեամբ ձերով յայսմ քաղաքիս, հա-  
յեցարուք և ողորմեցարուք այժմ եղկելի  
անձին իմում. զի անտանելի ցաւովք հի-  
ւանդութեան տաղնապեալ վարանի բազ-  
մախնամ հայր իմ 'ի մահճի մերձ 'ի մահ ա-  
նօգնական յումերէ: Եւ ես ամենադժբաղդ  
միամօր որդիս՝ մեծաւ նեղութեամբ բազմա-  
տխուր գիմօք և արտասուածոր աչօք ձեռ-  
նակապ արտմիմ. իբրև շնչահատ լեալ 'ի  
նեղքուստ, աղեկտուր աղաչեմ այսու գրիւս  
յօղնութիւն հասանել բարերար հօր իմոյ՝  
բժշկական արհեստիւ ձերով:

Երթալով երթայցեն յինէն ո՛չ միայն  
բազմաթիւ դրամ գանձուց, այլ և համայն  
ստացուածք զոր ունիմ: Քանզի զի՞նչ  
պատուականագոյն հարստութիւն. քան զվա-  
յելութիւն կենդանի ծնողացն, որ չարժէ  
րեաւ աչխարհիս հարստութիւն ականց պատ-  
ուականաց և քան զխեմափառ մեծութիւն  
երկրաւոր իշխանութեան:

Եկայք՝ եկայք դուք երկոքին՝ ի տրտմա-  
լից տուն մեր . և խորհեցարուք ամենայն փու-  
թով գտանել զհնարս բժշկութեան հօր ի-  
մոյ . որով յաւէտ մխիթարեսցիք զնուաս-  
տութիւնս , աղաչեմ :

ԽՆԴԻՐ  
ԳՐԻԳՈՐԵԱՆՆ



ԲՈՂՈՔ ԽՆԱՄՈՒԼԱԿԱՆ  
ԶԱՆՁՈՒՍՊ ՈՐԴԻՈՅ ԽՄԵՔԷ

Մտերիմ եղբայր՝

Հերեկեան աւուր յետ արձակման ժա-  
մուն որդի քս ընդ սպասաւորի քում գը-  
նացեալ են յայգին վայելել զբերս անդա-  
նօր . արժան և վայել . և յամենայն սրտէ  
իմէ արդարեւ օրինաւոր համարիմ . բազ-  
մախորտիկ պտղոց այգեստանաց մերոց շաշ՝  
քաղցրասցի ՚ի քիմս նորա . բերք պարտի-  
զաց և այգեստանաց առաւել վայել է ման-  
կանց ՚ի կերակուր քան շափահասից . բայց  
՚ի չրջագայելն նմա այսր անդր աներկիւզ  
լեալ յումքէ , թէ զծաղկոցն և թէ զայլ  
ինչ բուրաստան տեղիս ոտնակոխ արարեալ ,  
նչ սակաւ փնաս տուեալ է բուսոց անկա-

կանաց անխնայարար . և որչափ սպասաւորն  
ողորթական բանիւք բազմօք ընդ նմին և սաստիւ  
զահի հարկանել կամելով փոյթ կալեալ է  
յանձին զգուշացուցանել զնա , անկարող  
գտեալ է զանառակութիւն նորա զսպել :

Վ.ՍԼ եռանդագին արեան պատանե-  
կութեան իւրոյ յաւէտ բորբոքեալ բոլորու-  
վին առաւել քան զառաւել անդգայապէս  
վարեալ է անխոհեմութեամբ իբրև դիւար-  
լուկ : Մինչ զի՝ անգիտակ գոլով յինքնէ  
յիմարսրար խաղացեալ ճախարակաւ ջրհո-  
րոյն՝ ՚ի վտանգ ինչ անկեալ է յանկարծ ՚ի  
ջրհորն անկանելով : Վ.ԲԴ՝ զի՛նչ և իցէ զայս  
կսկծեցուցիչ և գուժկանալուր բանս ՚ի բաց  
թողեալ՝ յուրախութիւն մեծ դիմեցուք ՚ի  
միասին առ այժմ . զի ամենախնամն Մատուած  
ողորմելով ճնողաց նորին և գերգաստանաց  
ամենից՝ առանց մահուան վնասու եցոյց մեզ  
զվախճան . զի զանկումն մանկան ՚ի ջր-  
հորն տեսեալ մշակաց մեր , արագավազ ըն-  
թացիւք հասեալ ՚ի վերայ՝ հանեալ են զնա  
ողջամբ մինչ մերձ էր հեղձամահ վինել ,  
բայց սէր իմ՝ ծանիր ուշի ուշով զայս տըրտ-  
մախառն աւետամատոյց գրութեանս զսրու-  
թիւն նկատել . զի նախ քան զամենայն ստիպ-  
մամբ մեծաւ յորդորեմ զսիրելիդ ոչ ըստ  
սովորական մանկութեանն զանառակութիւն

իւր ուղղել ջանալ, (գորմէ ասե՛ն ոմանք թէ անհայր և անմայր իցէ արդեօք թէ անհոգ ծնողաց զաւակ, որ անխնամ յումեքէ անըզգամութեամբ իւրով խոշտանկեալ վտանգի յամենայն ուրեք)։ զի արդարև ճշմարիտ որդեսիրի է գործ ստէպ ստէպ քննել և իմանալ զտեղին և զճնկերն ընդ որ կենցաղավարեսցի որդին :

Եւ առ այժմ թողու՛վ զսա՛ի բաց, զայս՞ միայն աղաչեմ հոգալ և գործադիր լինել անմիջապէս հայրախնամ տեսչութեան բարերարիդ կամօք անյիշաչարութեան, զոր ինչ հարկ իցէ վասն քաջողջութեան որդւոյդ սիրելոյ, ցուցանելով քաջահմուտ բժշկի ումեք. զի ծանիցուք թէ զի՞նչ իցէ պատշաճ առնել. մի՛ գուցէ սաստիկ երկուցեալ ՚ի յանկարծահաս փորձանաց անտի ՚ի ներքուստ ընկալցի ցաւ անբուժելի մահաբեր : Խարուք է և զայս զոր ասեմս առնել յետ բժշկական գործոյն. այն է զինուլ առ ջըրհորաւ այնուիկ զերկու ոչխարս, զմին յընդունելութիւն աղքատաց, և զմիւսն խընդակցութեամբ համայն բարեկամօք մերովք և ընտանեօք՝ վայելեսցուք ՚ի կերակուր յազատութիւն սիրելի որդւոյդ ՚ի մահառիժ վտանգէն յայնմանէ, զոր Տէր Եստուած ողջ և անսասան պահեսցէ յամենայն ուրեք



ի միսի թարու թիւն ծնողաց և համայն բարեկամաց և ինձ նուստ հօրեղբորս

ՍՏԵՓԱՆԻՍ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ ՊԱՐՏՈՒՑ ԾՆՈՂԻՆ

Սիրելի՛ մայր մեր.

Ե՛ր աղաղաւ տխրագէմ պակուցանողական տեսիլ ինչ երևի ՚ի քեզ, վասն է՛ր փոփոխեալ է ինդայիբ երեսացդ քոց կերպարան, իբրև տրտմալիբ սգաւոր զերթ գուժկանայուր, իբր վասն մահուան որդւոյ քո սիրելւոյ, յորմէ ստիպիմք և մէք լինել տրտմազգեաց և անմիսի թար յաւէտ: Մի՛ գուցէ այն ինչ պարտուց աղաղաւ, որ եղև այն ինչ յանկարծուստ փորձութեան տուժիւ, զի՞նչ ներշնչութիւն այդ քեզ հանապազօր յուսակտուր լեալ ՚ի մէնջ: Ա՛չ ապաքէն ծանեաք մէք ՚ի վաղուց և ճանաչեմք միշտ զմերս պարտաւորութիւնն որդիական առ մայր մեր սիրելի:

Օ՛ր դու յայսքան ժամանակ ծնողական բարեգթութեամբ քով ենձակայ արարեալ զմեզ հանապազորդական խնամոց քոց բազմագունից, մի՞թէ մեծ ի՞նչ իցէ մեզ ե-

բից որդւոց քոց հատուցանել Մատուծով,  
համակամութեամբ . դու անհոգ լեր զայս-  
պիսեաց, որչափ մեք կենդանի իցեմք . մի-  
այն մնայ, քեզ աշօթող լինել առ Մատուծ  
վասն յաջողութեան գործոց մերոց, որպէս  
և մեքս եմք աշօթապարտ վասն անգորրու-  
թեան որդեխնամ կենաց քոց, և պատրաստ  
բեռնարարձ որ ինչ պատահիցի քեզ դժ-  
բաղդութեամբ :

ՍՏԵՓԱՆ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

---

ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ  
ՀՐԱԺԱՐԻԼ Ի ՎՏԱՆԳԱԻՈՐԱՑ

Յարգոյ բարեկամ.

Ար հրաւիրեցեր զիս գալ յայսմ գիշե-  
րի՝ ՚ի տուն քո բարգաւաճ, ոչ կարեմ առ  
երկիւղի արքունական արգելման . զի չէ՛ք  
հրաման այժմ երթլեկութեան գիշերայն .  
ոչ լապտերիւ և ոչ անլապտեր . մանաւանդ  
ուխտ եղեալ է իմ՝ բնաւ չելանել արտաքս  
գիշերայն . զի յանցելումն չար դէպք ինչ  
պատահեցաւ ինձ դժբաղդիս, այսպէս :

Օմէջ գիշերաւ առանց լապտերի գը-

տեալ զիս թաղապահ զօրաց, բանտարգետն  
արարին զիս, ուր ոչ գոյով անդ ներքնակ  
ինչ 'ի խաւարչտի տեղւոջ կայի շարատանջ  
գետնախշտի մինչև ցառաւօտ, և կային անոջ  
խորթարարոյ անձինք, ընդ որս բնակիլ իմ  
անպատեհ էք: Այս թէպէտ 'ի մտի ունէի եր-  
թալ 'ի հարսնարան ինչ թաղիս ընդ Նո-  
սին լինել ուրախակից, բայց ընդ հակառակն  
պատահեցաւ իբրև Ազովբոսի, որ 'ի հար-  
ցանել թագաւորին մինչ պատասխանեաց  
չգիտել, իսկոյն առնկայաւ զպատիժ բան-  
տարգելութեան, արգելեալ յուղղաշաւիղ  
ձանապարհէ իւրմէ, նոյն օրինակ իմս յու-  
սադրական նպատակի ուրախակցութիւն փո-  
խեցաւ 'ի տրտմալիր տեղիս վայելել զգի-  
շերն ողջոյն, իսկ յորժամ այգն զգիշերն  
մերկացաւ՝ տեսեալ բռնակալին զիս անվնաս  
ոք, ազատեաց, բայց զոր ինչ կրեցի ես  
յայնմ գիշերի վիշտ, այն մնաց յիս և եթ  
շահ: Իսկ դու այժմ վերստին հրաւիրել կա-  
միս զիս, ոչ կարեմ գալ, կալ զիս հրա-  
ժարեալ, զի մի՛ անկանիցի անձն իմ վերըս-  
տին 'ի մէջ այսպիսի շար պատահարաց,  
յետինն շար լինելով քան զառաջինն, բոտ  
իմաստնոյն թէ ամենայն շարեաց երկրորդն  
է մեծ քան զառաջինն, եթէ կամիս տեսա-  
ւորիլ ընդ իս, կամ դու գալ յօժարեսցիս

յայսմ երեկոյի յաղքատանոց մեր ըստ հա-  
մարձակութեանդ զոր ունիս յարքունական  
Տեճագոր դրան . կամ լաւ ևս առնես եթէ  
'ի վաղիւ 'ի տուուենջեան մնասցէ աներկիւզ  
լինել 'ի վտանգից :

ՍՏԵՓԱՆ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

ԲԱԴԽՈՂԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻԻՆ

ԸՆԴ ԱՐԺԱՆԱԻՈՐ ՄՍՏՆՈՒԹԻԻՆ

Յիրելի՛ բարեկամ.

Յաւուր միում յորժամ ազնիւ Տեճագին  
Տաճանի մի այս ոմն ինձ վաճառել կամէր,  
զտէր նորին ճանաչելով իմ կեղծիք իմն  
սակարկութիւն արարեալ յորդորեցի այս-  
պէս, թէ տաց քեզ զդրամս յայս ինչ տեղ-  
ւոջ, եկ զկնի իմ, և տարեալ զնա 'ի կրթ-  
արակ նոյն մատանւոյն տեսուն, ասեմ ցնա,  
թէ այս մատանիս մնասցէ 'ի քեզ առհա-  
ւատչեայ, ահա ինձ վոխ հինգ հազար դա-  
հեկան, և նա նոյն հետայն ծանկու զստաց-  
ուած իւր նախկին և ստուգելով վերստին  
անպահանջաց առ ինքն, թէպէտ մատնու-  
թիւն էր զոր արարի նենգաւ, ըայց 'ի վա-

դուց անտի միմեանց ծանօթ բարեկամ լինելով մեր՝ անիրաւութիւն ինչ թուեցաւ ծածկել զվնաս բարեկամին իմոյ, և նա կանգուն մի ցփսի ետ նմա աւետչեայ որ արժէք ունէր իբրև երկու հարիւր դահեկանի, և ինձ փոխան բարեկամութեանս իմոյ, զերիվար նժոյգ ձի մի: Ապկոյն 'ի մտատանջութեան եմ ահաւասիկ մեծապէս, թէ զի՞նչ արարից զնա, որ ոչ կարեմ հեծնուլ 'ի վերայ նորա և ո՛չ 'ի տունս իմ մտեալ պարուրի, յոր բնակեալ եմ. չեմ ես իբրև ամիրայ կամ մարզպան ոք, և ո՛չ կարեմ բաւական կեր տալ նմա, կամ ասպաստանեակ զոք ունել, չունիմ շտեմարան յարզի և գարւոյ. յաղքատիկ տունս ներքնատուն մի գոյ իմ ածխոյ, ուր մեծամոյր իմ հազիւ կարէ մտանել 'ի ներքս կծկելով: Արեմն ում վաճառեցից արդեօք, զի Օստկական նոր հանդերձ զնեցից աղքատ զաւակաց իմոց նովին դրամով, մանաւանդ յանցեալ աւուր այս ինչ գործոյ աղաղաւ փոխ դրամ խնդրէիր յինէն, ահա փառք ամենակարողին, յաջողեաց ըստ բաղդաւորութեան բում, յորժամ վաճառեցից ձեռամբ քով զչորքտանինս զայս, ա՛ռ որչափ պիտոյ իցէ 'ի դահեկանացն և տոկոսիս առնուլ անվայել է մինչև ցամ մի ողջն:

ՍՏԵՓԱՆ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

ՌԻՐԱԴԱԿՅՈՒԹԻՒՆ

ԱՌ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ՈՐԴԻՈՑ

ԵՂԲՕՐ ԻՒՐՈՒՄ

Քարեխնամ եղբայր իմ.

Օր որպէս որդեսէր և բարեպաշտ ծը-  
նողաց կամք են բարեսնունդ և բարեկրօնս  
լինել որդւոց 'ի հաւատս և 'ի բարեպաշ-  
տութեան, առ 'ի լինել որդեգիր Վրիս-  
տոսի Վստուծոյ մերոյ իրրև զո՛հ ընդունե-  
լի 'ի վախճանի անուշահոտ վարուցն ճեն-  
ճերիւ: Մօին նման և յարգութիւնդ յայսմ  
եօթնեկի ըստ բարեպաշտական աղնիւ բը-  
նութեանցդ բերմանց՝ բարեպէս մտածա-  
կանութեամբ մեծաւ փափաքանօք 'ի հոգե-  
շահ և 'ի շնորհարոյս ընտիր դպրոց ե-  
տուր զցանկալի զորգիգ զարգանալ անդ զա-  
նազան գիտութեամբ և բարի վարուբ 'ի  
ձեռն ճոխիմաստ և ազգընտիր ուսուցչաց  
ուրախացիր սէր իմ՝ ուրախացիր. որպէս  
և ես անարժանութեամբ հօրեղբայր գոլով  
առաւել քան զառաւել ուրախացայ. զի 'ի  
մէջ գերդաստանի մերում բարեձաշակ և ա-  
նուշահոտ գիտութիւն բուրելոց է յետ ժա-  
մանակի ինչ: Աւստի գո՛հ եմ զգերայարգ  
եղբայրութենէ քումմէ, որ հոգունակու-

Թեամբ զվայելուին գործել հանապազ տըք-  
նիս անձանձրոյթ . յաւէտ շնորհակալ եմ .  
Աստուած ամենակարող ըստ բարձանաց քոց՝  
սէր ընթերցանութեան պարգևեսցէ մերս  
սիրական որդեկին, և նորին ուսուցչացն  
երկար կեանս և կարողութիւն անդանդաղ  
վարժել յուսմունս բարեկրօնս :

ՍՏԵՓԱՆ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

---

### ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

Հոգւոյս իսկ նման. մարմնոյս զարգարան.  
սիրոյս գանձարան. սրտիս բնակարան.  
Ա զնիւ քաղցրարան, եղբայր պատուական.  
Ընծայեմ առ քեզ՝ սէր եղբայրական.

( )րէնք բարեկամութեան ուսուցանեն  
մեզ միօրինակ սիրով վարիլ առ բարեկամս  
հանապազ թէ 'ի յաջողութեան և ի՞նչ 'ի  
ձախորդութեան . զոր Ս'ենանդոս յայտ առ-  
նէ մեզ գեղեցիկ սակաւարան տառիւք յա-  
սելն, թէ որ 'ի ժամանակի ուրախութեան  
և եթ գգուեն զբարեկամն, են սիրելիք ժա-  
մանակին և ոչ բարեկամին : Սակս մտերիմ  
անձինդ վկայեմ ապաքէն հաւաստի գիտու-  
թեամբ, թէ դու որ յամենայն ժամանա-

կի գգուես զբարեկամսդ, բարեկամի՛նս սի-  
 բելի, և ո՛չ երբէք ժամանակի, քանզի որ-  
 պէս զիտեմս ՚ի վաղուց զմտերմութեան ձեր  
 զանկեղծ բարեկամութիւն, նոյն գունակ և  
 այժմ հաստատուն տեսանել բաղձալով բաղ-  
 ձամ ՚ի մշտնջենական մխիթարութիւն ինձ  
 նուաստ

ՍՏԵՓԱՆԻՍ  
 ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՎՏԱՆԳԱԻՈՐԱՑ

Յարգոյ բարեկամ.

Երդարև առատութիւն այգեստանաց ըզ  
 թշնամիս յաւելու, որպէս և մերս այգես-  
 տանաց առատութիւն օր ըստ օրէ յաւելու  
 զթշնամիս և զաւազակս, վասն զի յայժմ  
 գիշերի մինչ մէք ՚ի քուն էաք ՚ի տան մե-  
 բում, պահապան մշակն այգւոյն եկեալ առ  
 մեզ գիշերայն բարձրաձայն աղաղակաւ ե-  
 լից զգաւիթ տան մերոյ խոչին մեծ արա-  
 բեալ, և լալագին գոչմամբն զարհուրեցոյց  
 զմեզ զամենեսին մինչև դորդել բնակա-  
 բանի մերում, և զարթուցեալ ամենեցունցս




ակն յանդիման տեսաք զողորմելին վիրաւո-  
 րեալ յաղբերէ իւրմէ . վասն զի 'ի հսկել  
 նորա արթնութեամբ զերծ կացուցանել  
 զայդին մեր 'ի վնասուց աւազակաց կամ գա-  
 զանաց, վիրաւորեալ են զնա հրացանիւ  
 ընդ խրամս այգւոյն առ 'ի կատարել ըզ-  
 շար կամս իւրեանց : Արդ 'ի զարմացման  
 կամ զարմացումն մեծ պակուցմամբ, և ան-  
 գիտանամ հոգալ զդեղորայս 'ի բժշկութիւն  
 երախտաւոր սպասաւորի մերում . արդեօք  
 որո՞վ իւիք կարեմք գտանել զհնար ինչ  
 բժշկութեան նորա . կամ զո՞ր ճարտար վի-  
 րաբուժն հրաւիրեսցուք . և զդժնդակագոյն  
 զայն աւազակն արեանարբու՝ ո՞րպիսի կա-  
 րեմք գտանել, գատապարտութեան պատ-  
 ժով նշաւակ առնել զնա այլոց աւազակաց .  
 զի մի այսուհետե վերստին առնել վստա-  
 հասցի ոք զայնպիսի հղեոնագործութիւն մա-  
 հարեր և ո՛չ ումեք . որովհետե և դու սի-  
 րելիդ իմ դրակակից ես լայնատարած ար-  
 տօրէիւքդ մերոց այգեստանաց, ուրեմն խընդ-  
 րեմ զի յարբունի հիւանդանոցի անդ պսչ-  
 ածնեայ գոլով ձերդ վսեմութիւն, առաքես-  
 ցես առ մեզ զվիրաբուժ մի ճարտար 'ի ձը-  
 մերանոցէ զինուորաց, աղաչեմ . որով զնը-  
 ւաստս մեծապէս միսիթարել ունիս պատճառ  
 լինելով բժշկութեան սպասաւորիս, որ է

ինձ պատուական :

Ո՛ղջ լեր յառետ անդորրական կենօր :

ՍՏԵՓԱՆ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ



ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՅ

ԽՆԴՐԵԼ Ի ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԵՂԲՕՐ ԻԻՐՈՒՄ

Սիրուն ազգակից հարք իմ եւ եղբարք .

Ո՛հ ցաւալիւր տրամութեանս վասն կըրտսեր եղբօր իմոյ սիրելւոյ, որում վասն մեղաց իմոյ այնպէս ծանրագոյն հիւանդութիւն պատահեցաւ, մինչ զի բնաւ անկարող է շարժիլ ՚ի մահձի. ուստի միայն արժանաւորաց Մտուածահաճոյ խնկանուէր աղօթիցն օժանդակութեան մնաց կարօտ . ո՛ւր դասուց քահանայից և սրբակրօն միայնակեաց լուսակենցաղ անձանցդ բարեմաղթութիւն յաղթանուէր պաշտամունս ընդ որս և ո՛ւր դպրոցաց անմեղ մանկանց փոքրագունից միարանական աղօթիցն օժանդակութիւն . ողորմեցարձեք՝ ողորմեցարձեք հարք և եղբարք . զի ակնապիշ դիտմամբ ձեզ ակնկալեալ երկոքին աչօք յերկինս յառեալ, խաչաձև տարածեալ ձեռնամած ՚ի

Պատճառն էլ կայ 'ի տագնապի . թողում ապա  
 ձերումդ մարդասիրութեան բարևոք նկատ-  
 մամբ զպատուէր առաքելոյն՝ թէ աղօթս ա-  
 րարէք 'ի վերայ միմեանց , փութալ զվա-  
 յելականն գործել մարդասիրութիւն , սրտի  
 մտօք աղօթելով առ Մատուած վասն բժըշ-  
 կութեան և առողջութեան եղբօր իմոյ . զի  
 ուր իցեն լալիք երեկոյեան , անդ ուրախու-  
 թիւն մեծ լինել առաւօտեան , եւ աներկ-  
 րայ :

ՍՏԵՓԱՆ  
 ԳԱՄԻԱՆՈՍԵԱՆ

---

ՀԵԳՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՍՆ ԳՈՂԱԲԱՐՈՅ ՄՊԱՍԱՒՈՐԻ ԻՒՐՈՅ

Գին եւ զբարձրագոյն բարեկամութե-  
 նէ ձերմէ անհատաբար .

Հանկանալով ցանկալի 'ի վաղուց անտի  
 հաւատարիմ սպասարի ումք բաղաւո-  
 րութեամբ զիպել . ահաւասիկ արժանի ե-  
 ղէ հասանել բազմաժամանակեայ բաղձա-  
 նաց իմոց 'ի ձեռն վաղեմական բարեկամիդ .  
 շնորհակալ եմ անչափօրէն . մանաւանդ մին-  
 չե ցայսբան , զի սրում վկայեցերդ՝ արդա-

բև մեծ հաւատարմութիւն կցոյց յաւուրս յայ-  
սոսիկ զոր առաքեցերդ վկայագրութեամբ,  
թեթեացուցանել կամելով զկարասիս տան  
մեր, զպղնձեայ անօթս որք են 'ի խո-  
հարանի' 'ի փոքուէ մինչև ցմեծամեծս հաւա-  
քելով 'ի մեծի կաթսայի' տարեալ վաճա-  
ռէ. և զպղնձս անարգ՝ յոսկի փայլուն  
փոխարկել քաջ գիտէ:

Ահա այսպիսի ճարտարահնար արուես-  
տագէտ գտնով՝ զքոյդ ցբեզ վերուղարկեմ.  
քան զիս առաւել ո՛ր և իցէ յաշս քո սի-  
րելի, առ նա ուղարկելով պարգևատրել  
արժան և վայելուչ:

ՍՏԵՓԱՆ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ

ՀԵՒՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՍՆ ԻՄԱՍՏԱԿԻ ՈՒՐՈՒՄՆ

[ԱՆՊԱՏՇԱՃ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ

Քաջունսնմն եղբայր.

Ճայնմ աւուր 'ի խնջոյս անդանօր այն-  
քան լիուլի իմաստութեամբ ճոխացեալ է-  
իր, զի ո՛չ հարցանելով քեզ՝ դու պա-  
տասխանեցեր, ո՞վ ստիպէր զքեզ բըռ-

նադատութեամբ, գիտում. 'ի սաստիկ և  
յանբաւ գիտութեանդ ճոխութենէ է. քանզի  
յորժամ անօթն լի և զեղուն իցէ, 'ի հարկ  
է ստիպի արտաքս հեղուլ զաւելորդն: (Օ)՞  
փոյթ էր քեզ քան զիս յառաջագոյն պա-  
տասխանել նմա, որ ոչ հարցանէր քեզ:  
Արդարև եթէ ըստ վերոյիշեալ ասացելոյ  
բանիս խոհական լինէիր, պարտ էր ճա-  
նաչել զկարգ, և ոչ աճապարել քան զիս.  
անհմուտ երևիս իմաստասիրի ուրումն բա-  
նի որ ասէ. ո՛չ խօսելն է իմաստութիւն,  
այլ ճանաչելն զժամանակ խօսելոյն. և այ-  
լում թէ, որ ո՛չ գիտէ լռել, ո՛չ գիտէ խօ-  
սիլ: Այլ այլ ոմն ասէ, թէ լռելն լաւագոյն  
է քան զբարի բանս: (Ը)էպէտ ուսեալ ես  
բազում գիտութիւնս, բայց ո՛չ գիտեմն  
ընդէ՞ր ո՛չ: Այա կարծեմ թէ խոհեմ ե-  
րևեցայ ես ինքնս քան զքեզ 'ի խնճոյս յայն-  
միկ լռակացութեամբ իմով. ըստ որում գը-  
տաւ քան զիս յառաջագոյն պատասխանա-  
տու անդանօր:

ՍՏԵՓԱՆ  
ԴԱՄԻԱՆՈՍԵԱՆ



ԱՂԵՐՄԱԳՐՈՒԹԻՒՆ ՋՂՋՄԱՄԲ՝

ՈՐԴԻՈՅ ԱՌ ՀԱՅՐ ԻԻՐ ԸՍՏ ՅԱՆՅԱՆԱՅՆ

Բազմերախտ եւ բարեխնամ ծնողաց իմոց բարերար ձեռաց համբոյր վերբնծայեմ ծառայաբար.

Երանի՛ որդւոց՝ որք ծնողական սէր և խնամ հանապազորդական ունին յինքեանս անպակաս և անխափան. բայց առ հակադարձն՝ վա՛յ այնպիսի որդւոց, յորոց նըւազեալ և ցամաքեալ երևի ծնողական կենցաղօգուտ բարեացն խնամածութիւն. և զայս առ ՚ի յանցանաց որդւոց դո՛ւ գիտեմք զըկումն և զանարժանութիւն: «Աոյն գունակ և ՚ի նուաստագոյն ծառայիս վերայ ձերդ բարեխնամ տեսչութիւն և պաշտպանութիւն զոր ըստ բարեբարոյ մնութեանցդ բերմանց անդստին անձրեւէիք առատաձիր ըստ հոգւոյ մասին և ըստ մարմնոյ, վերացեալ տեսանեմ յաւուրս յայտոսիկ դոյզնինչ, այն ինչ անհնազանդութեան գործոյս պատճառաւ, որ ընդդէմ եկաց արդարեւ արեգակնափայլ ձերդ խնամոց սիրոյ իբրև ամպ մթազին և խաւարչուտ, ըստ որում մի և նոյն նկարչի գունաւոր որակք զանազան փայլին ընդ իւրոց ենթակայից, զոր-

օրինակ՝ ՚ի վերայ երկաթեղէն և պղնձեղէն ա-  
նօթոյ ոսկեզօծ նկար ո՛չ այնչափ փայլի,  
քան ՚ի վերայ արծաթեղինի և ոսկեղինի:  
Վա՛յ ինձ, արդարեւ զցայտ և զցերեկ խըղ-  
ճա հարութեամբ և անմխիթար մտատան-  
ջութեամբ ողբամ սրտաճմլիկ փսն այնք  
յանցանաց իմոց, թէ ընդէ՞ր վշտացուցի ըզ  
սիրտ բարերարացդ, մինչև անգամ որպէս  
տեսանէքդ ընդ ձեզ նստիլ ՚ի սեղան ա-  
նարժան համարեալ, իբրև զսպասուոր ձեռ-  
նակապ կանգուն վարիմ առաջի ներկայու-  
թեան ձերում, ուրեմն մի՛ յիշէք զմեզ սը-  
կար մանկութեան իմոյ՝ բարերարք, այլ Աստ-  
ուածահաճոյ անյիշաչարութեամբ ձերով ըզ  
ներումն և զթողութիւն շնորհեօջիք, յան-  
ցանաց իմոց, աղաչե՛մ:

ՅԱԿՈՒ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ

---

ԽՐԱՏ ՀԱՆԳԵՐՁԱՍԻՐԱՅ

ԲՆԱԶՆՆՈՒԹԵԱՄԲ

ԽՈՏԵՄԱՄԻ՛տ մտերիմ.

Յաւէտ զարմանամ ՚ի վերայ հանդեր-  
ձասիրաց տղիտական մտացն պաշարման, զի

'ի տգիտութենէ անտի շերէի լինել այն յոլովամեղ պարծանք հպարտութեան. նախ՝ զի ո՛չ յիշեն թէ նախկին մեծ պակասութեան նշան է մեր սերեալ յԱդամայ. զի յայտնի ծանուցանէ մեզ թէ զմերկութիւնս մեր ծածկել ուստի՞ հարկաւորեցաւ. յԱստուածատուր լուսեղէն հանդերձից զրկեալ արտաքսեալ նախաստեղծից 'ի գրախտէն՝ թըզնեաւն պատսպարել հնարաւորեցան տերևովք զմերկութիւնս. զի տեսի զքեզ 'ի ներքոյ թզնեւոյն ասելով առ փիլիպպոս վեկայեաց Հիսուս. վասնորոյ մաշկեղէն զգեցոյց նոցա Աստուած զհանդերձ նորոգ գթասիրեալ: Արրորդ տգիտութի՛ն՝ զի զկարևորն հանդերձ զի՞նչ է բնաւ ո՛չ գիտեն, և ո՛չ ցանկան ունիլ. զի մի՛ լուիցեն՝ թէ քնկեր՝ եթէ չունէիր հանդերձ հարսանեաց զիս՞րդ մտեր այսր. ահա այս է հանդերձ առանց հնանալոյ, որ ո՛չ ցեցակեր լինի և ո՛չ պատառի բնաւ յախտեան. այլ ամենապայծառ լուսաւորութեամբ նշուլազարդ փայփայլի արեգակնափայլ ճառագայթիւք իրրև զշղաշատեոն և զոսկեճամուկն վայելչական: Արրորդ տգիտութիւն հանդերձասիրաց բերէ ինձ ապշութիւն. զի մարդ գոլով հողազանգուած՝ և զամենայն զոր ունիմք 'ի պատսպարան և 'ի ծածկոյթ մարմ-



նոյս մերկութեան, վասն էր տակաւին տը-  
գէտ իցեն հողարոյս լինել նոցա, թէ և  
ծիրանազգեստ իցեն. ո՞չ ապաքէն բեհեզա-  
գործք ամենայն մետաքսեղինաց են հողա-  
նիւթեայ, թէ և իցէ վերթ լակոնացի. քան-  
զի եթէ շերամաորդն չուտէ հողարոյս թը-  
թենւոյն զտերև՝ զհարդ կարէ՞ սնանիլ և  
նիւթել զմետաքս. ասեմք թէ 'ի բամպա-  
կեղինաց իցեն զգեստ յոր պարծիմք, ո՞չ  
ապաքէն և նա հողարոյս է արտօրէից 'ի  
ջերմին գաւառի. և եթէ իցեն 'ի բրդեղինաց,  
զի՞նչ ուտեն մագիք և խաշինք՝ ո՞չ ա-  
պաքէն խոտաճարակք են ամենեքին: Արդ՝  
որո՞վ պարծիմք հանդերձասէր եղբարք պան-  
ծացեալք. թանկագին մորթովք կենդա-  
նեաց և չորքոտանեաց, որ մուշտակ ան-  
ուանին հասարակ անուամբ. հարցէք զնոցունց  
մուշտակագործաց, զի՞նչ անուն կոչեն յատ-  
կական անուամբ. սամոյր կամ աղուէս կամ  
սոցին նման, ո՞չ ապաքէն կենդանւոյն ան-  
ուամբ յորջորջեն դանուն իւրաքանչիւրոցն.  
ընդ որս և մեք 'ի միում աւուր ստեղծեալ  
գոլ՝ եմք ամենեքին երկրասնունդ և ապա-  
կանացու. ո՞վ կրկնապատիկ ծիծաղական.  
ապականացուն ընդ սեռիւ իւրով պարծի  
հպարտանալ. ասիսո՞ս տգիտութեան ոմանց:

ՅԱԿՈՒՅ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ

# ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՅ ՅԱՓՇՏԱԿՈՒԹԵԱՆ

ԳՈՂԱԲԱՐՈՅ ԱՂՔԱՏԻ


Մտերիմ բարեկամ.

Լորկու հակասականք ընդգլխամարտիլ միևեանց բացերևի 'ի բանիցս, զոր եթէ ճըշգրիտ պատմեցից յարգութեանդ զպարագայս իրին, և անմարթ է մերժել զմին 'ի միւսոյն. այնպիսի եղելութիւն՝ որ առաթրեաց ինձ տրամութիւն ընդ նմին և ծիծաղ. զի մինչչև ծանուցեալ իցեմ բանիւ՝ 'ի յիշողականութեանս ներքին զգայարանի տայ ինձ զարմացումն յոյժ, որով աւասիկ ստիպիմ ծիծաղել. և դու իսկ ինձ նման ունիս լինել 'ի լսելդ: Օտիծաղելոց ես անշուշտ 'ի վերայ քաջարուեստ եղելութեան իրաց, և տըրտմելոց ես յոյժ յոյժ՝ լսելով զոր ինչ դէպ եղև ինձ փնասարեր զօրէն մտերիմ բարեկամի: Վանզի յերեկեան աւուր քանի մի ընկերօք հանդերձ մինչ էաք 'ի նոր Վաղկեղոն 'ի զբօսանս, յանկարծ իբրև աղքատիկ ոմն ողորմելի դիմօք և արտասուելից աչօք եկեալ առ մեղ խնդրէր զողորմութիւն. և մեր գթացեալ 'ի նա ըստ օրինի ձեռնարուութեան հացագին զբամ ինչ տալկամելով՝

յորժամ զքսակն իմ 'ի գրպանէ խմէ հա-  
նի , յայնժամ իբրև վայրենի գազան յա-  
փըշտակեալ 'ի ձեռանէ խմէ , մեծի շտապաւ  
վազ 'ի վազ ընթանալով փախեաւ անտի-  
ո՞վ . այն ինքն մուրացիկ՝ զոր խեղաթիւք  
սին կարծէաք տկար և ողորմելի . ո՞րպէս  
թռեաւ . ո՞րպէս սլացաւ . զիւրոք փախեաւ  
անտես լեալ յաչաց մերոց , նոյն հետայն  
'ի խուն վայրկենի յակնթարթ . և մեք տա-  
րակուսեալ սպչեցաք ամենբին : Աերում  
'ի քսակիս էին երկու հազար դահեկան ա-  
մենբին ոսկի , և հինգ հազար դահեկանի  
դրամագիր . ապա զի՞նչ արարից արդեօք .  
ծիծաղեցայց 'ի վերայ նորալուրեղելութեանս  
այսորիկ , թէ զարմնն ողբացից . ո՞րպէս ող-  
բացից առանց ծիծաղելոյ և ո՞րպէս ծիծա-  
ղեցայց առանց ողբալոյ . դու զի՞ր իմն կա-  
րես մերժել 'ի բաց յայսմ սքանչելի իրս  
նորալուր՝ բարեկամ . այս ի՞նչ քաջահնար  
գործողութիւն և ի՞նչ յափշտակօրէն գո-  
ղութիւն . կերպարանաւ խղճալի մուրացիկ ,  
իսկ գործով յափշտակիչ . զի թէպէտ լալ  
ընդ լացողս և խնդալ ընդ խնդացողս յօ-  
ժարիս 'ի բարեկամութեան օրէնս . բայց  
զո՞րն կարես առնել զմին զատուցեալ 'ի  
միւսոյն , որք երկօքին միանգամայն անբաժ  
գտանին յիս 'ի միասին . այս է արտասուա-

Թոր ծիծաղ, քանզի իրս այս զարմանալի գո-  
լոյն աղագաւ՝ ծիծաղն մարտնչի ընդ ներքին  
ցաւոյս իբր զպայքար. և ո՛չ Թողու բա-  
ւական տրտմիլ վասն այնքան դրամոցն կո-  
րուսելոց. նոյնպէս և տրտմաօրթ հոգք վը-  
նասուն ո՛չ տան առ ծաղրականն բաւական  
ծիծաղիլ. քանզի չև է տեսեալ մինչև ցարդ  
այսպիսի ինչ պատահումն և այսպիսի աղ-  
քատաձև աւագակ կամ գողաբարոյ մուրա-  
ցիկ. զոր թէ և յայնմ զարմացման պահու  
ո՛չ կարացի ՚ի յետուստ ընթանալով ըմբռ-  
նել, այլ այժմ առ քաղաքապետն երթալ  
և ծանուցանել կամիմ զոր ինչ անցք ան-  
ցին զինև. զի գուցէ ըստ մեծի իշխանու-  
թեան իւրում ունելով և զմեծ խոհակա-  
նութիւն. հնարաւորեսցի զայս քաջարուեստ  
գողն ըմբռնել և զիմս գտանել կորուստ. և  
եթէ դու յտերիմ բարեկամդ ՚ի միասին եր-  
թալ յօժարիցիս՝ մեծ բարեկամութիւն է  
ինձ համարելի. ըստ որում երկուց և երկց  
վկայիւք հաստատի ամենայն բան:

ՅԱԿՈՒԲ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ



## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՊԱՇՏՕՆԷԻ ԱՌԵՆԵԵԼԻ ԳՈՐԾ

Բարերար տէր.

Յնձութիւն մեծ ինձ պատճառէ արդարեւ՝ յորժամ տեսանեմ զի բարեկամք ՚ի բարեկամաց համարին արժանաւոր գոլ թէ և շիցեն արժանի . քանզի զայս տեսութիւն զիտեմ ճշմարիտ բարեկամութեան լինել արգասիս : Տուաւ ինձ ապաքէն պաշտօնդ այդ ՚ի ձեռն բարերարիդ ո՛չ ըստ արժանաւորութեանս, այլ ըստ մեծի մարդասիրութեանդ բերմանց խնամակարկառ այցելութիւն քո լուսաւոր փայլմամբ ծագեցաւ բաղդաւոր անձինս . շնորհ մեծ ունիմ բարերար տէր . և ճանաչելով զանձինս թերութիւն դժպատեհ թուէր ինձ առ այն լինել յուսադիր . սակայն որչափ քաջութեամբ և աշարջութեամբ յառաջադէմ լինել ակն ունին զինէն իմայինք, ակն ունիմ և ես ըստ հաճութեան նոցին երևիլ Մատուծով, եթէ շիցէ փոփոխութիւն վիճակիս . զի եթէ հաստատուն կայցեմ աստանօր, և ընդ նմին ձեր խնամողական պաշտպանութիւն առիս օժանդակեսցէ հանապազօր, գուն գործել ջանացից հաւատարիմ ծառայ գտանիլ :

՞ուաջի օգոստափառ տեանդ Տեծի և մար-  
գասիրի հաստատուն սիրով հնազանդու-  
թեան . իցէ թէ և յետ ժամանակի ար-  
ժանացոյց լսել բաղդաւորութեամբ զայն  
ձայն բերկրանաց , թէ սրովհետեւ 'ի փո-  
քուդ հաւատարիմ գտար , 'ի վերայ բազ-  
մայ կացուցանել և այլն : Բաղձանք սրտիօ  
որ 'ի պաշտամանէ յայսմանէ յաւելան 'ի  
վերայ իմ , փութալ փութամ ապա ոչ ուս-  
տէք գտանիլ 'ի թերութեան , և ոչ մի . ո-  
րով մարթացայց յորդավտակ խնամոցդ ա-  
նօթ արժանաւոր գտանիլ մինչև յկեստ կե-  
նաց իմոց :

ՅԱԿՈՒ ԾԱՌԱՅԻՍ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՎԱՍՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԼՐՈՅ ԲԱՐԵԿԱՄԻ  
Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆԷ

Հոգևոյս իմ հատոր սիրուն բարեկամ .

Մինչ բոթալի լուր հիւանդութեան սի-  
րեցելոյդ դէպ եղև ինձ դժբաղդիս լսել յան-  
ցելումն , այնքան տառապէր յիս հոգի իմ ,  
և խանդակաթ սիրտ իմ այրէր տոչորէր 'ի

տազնապի հեծութեան յաւէտ վարանեալ,  
մինչ զի զցայդ և զցերեկ զիս ինքնս հա-  
մարէի 'ի բանտ խաւարի 'ի խոր վիրապի .  
և մերժեալ էր քուն յարտեանաց իմոց յա-  
րաժամ, որպէս օրէն է մտերիմ բարեկա-  
մաց և եղբարց յընակից գտանիլ միմեանց :  
Ապա ոչինչ ցանկայի երբէք այլ ինչ մե-  
ծագոյն բարեաց պատահիլ, բոյց միայն քոյդ  
պատուական անձինդ բժշկութեան և ա-  
ռողջութեան ուրախառիթ ցանկալի լոյ 'ի  
միսիթարութիւն գուժկանալուր անձինս : Ա-  
հա փառք բժշկապետ կենարարին Աստու-  
ծոյ, զի բարեչուր նամակ մտերմութեանդ  
իբրև պատգամաւոր հրեշտակ աւետարեր  
եկեալ հասեալ առ իս, յայսմ աւուր էած  
զիս 'ի խաւարէ 'ի լոյս և 'ի տրտմութենէ  
յուրախութիւն մեծ : Ապա զոր գոհութիւն  
կամ զոր շնորհակալութիւն վերննձայեցից  
առ բարձրեալն բարեգութ, եղբայր ցանկա-  
լի, զի ըստ մեծի փափաքանաց իմոց երկ-  
նապարզ և ուրախառիթ ցանկալի լոով ա-  
ռողջութեան քո փարթամացեալ աւասիկ  
ցնծամ և բերկրիմ յաւէտ խնդութեամբ :

Աստի բազկատարած աղաչեմ և պա-  
ղատիմ առ ամենախնամն Աստուած, զի  
այդքան չարատանջ տրտմալիր կեանս հի-  
ւանդութեանդ յապաշխարանաց կարգի հա-

մարեալ, օժանդակու թեամբ խնկանուէր աշօթից սրբոց հարց՝ ըստ մեծի մարդասիրական ողորմութեան իւրում՝ փոխանակ վճատակրութեանդ այսուհետև անդորր կենօք ՚ի քաջառողջ կենդանութեան պահեսցէ ըզքեզ յամս յուրս ՚ի մխիթարութիւն ինձ վաղեմական եղբօր քում,

ՅԱԿՈԲԻՊ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ

---

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Հ Ա Ն Դ Ե Ր Չ Ը Ն Ծ Ա Յ Ի Ի

ԱՌ ԴԱՍԱՏՈՒ ՈՐԴԻՈՅՆ

Խնամածն ուսուցիչ.

Յայտ լիցի բարերարիդ, զի միշտ և հանապազ բազդաւոր որդին իմ վայելելով վայելէ զարդասիս անդուլ և բազմաջան աշխատութեան ձերոյ, որով իբրև զջահ արեգակնափայլ շողշողումն զիտութեան ճառագայթաւէտ փայլփայլի ՚ի վերայ սիրելի որդւոյ իմոյ անարժանի, վասն զինս ինքն խորիմաց մակացութեանց բազմաց տեղեակ գոլ կարի խրթնաբանութեան ինչ գործ կարող է բացատրել և մեկնել. քանզի



Քինչ յատենարանութեան նորին գտայ 'ի  
քննութեան հանդիսի, ականջօք իմովք լը-  
ւայ և ուրախացայ յաւէտ նուաստս, և  
հանդիսականք ամենեքին որք արժանապէս  
ընդ իս ջատագովեցին զնա. զի ըստ մեծի  
անխոնջ աշխատութեան ձերում ուսեալ է  
զհոգեկեցոյց և զկենցաղօգուտ իմաստու-  
թիւնս. յիշատակն արդարոց օրհնութեամբ  
եղիցի ասեմ: Ուստի ձանաչելով զմերս ան-  
բաւականութիւն, միայն զայս փոքր նուէր...  
և եթ հայթայթեցաք վերընծայել յոգնա-  
խնամ բարեսիրիդ թէ և շիցէ արժանակշիռ,  
ընկալ 'ի ձեռանէ որդւոյ իմոյ իբր զնիշ ջը-  
նորհակալութեան, աղաչեմ:

ՅԱԿՈՒՐ  
ՄԻՐՈՒՆԵԱՆ

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԽՐԱՏԱԿԱՆ  
ՈՐ ԶԼԱՆԱՅ ԶՎԱՐՁՍ ՍՊԱՍԱԽՈՐԻՆ

Եղբայր իմ սիրելի.

Հաւ մեծ եղև ինձ յորժամ լուայ, զի  
հարազատ և աշխատասէր սպասաւորի քում  
զրկումն արարեալ է քո զլացմամբ վար-  
ձուցն դրամոց. զի՛նչ սրտակիզութեան գործ.

զի այսչափ ժամանակ 'ի հացալից տան բում  
 հնազանդութեամբ և աշխատասիրութեամբ  
 և ամենայն հարազատութեամբ կայր սպա-  
 սեալ այսու յուսով, զի 'ի ժամանակի մեկ-  
 նելոյ 'ի քէն՝ զկուտակեալ զբամս իւր բո-  
 վանդակ տուեալ երթայցէ յերկիր իւր 'ի  
 հայրենիս . և զպարտոց իւրոց հոգատար  
 լեալ, աղօթող լիցի վասն կենաց քոց հա-  
 նապաղօր մխիթարութեամբ : Իսկ այժմ  
 մինչ ոչինչ օգտեցան 'ի բազմաժամանա-  
 կեայ աշխատանաց իւրոց, զի՞նչ մխիթա-  
 րութիւն և զո՞ր աղօթարար շնորհակալու .  
 ոչ երբէք, բնաւին ոչ . այլ ընդհակառակն  
 իմաստասիրեսցի՛ր անէծս . և հառաչանք կող-  
 կողանաց սրտի զրկելոյն այնորիկ հասեալ  
 առ բարձրեալն Մատուած, զի՞նչ արդիւ-  
 նաւորէ քեզ շարիս արդեօք . էր տգիտա-  
 նաս զայն Տեճագոյն մեղսնաց՝ հատանել ըզ  
 վարձս մշակաց կամ զրկումն աղբատաց . ուս-  
 տի՞ է քեզ այսքան անգթութիւն, փար-  
 թամբ ընչիւք . ստուգիւ ասի տզրկի ու-  
 նել զեռանկիւն բերան ծծել անյաղուրդ .  
 արծաթասիրին գիտեմք զայս օրինակ իսկ  
 և իսկ նման և հանգունատիպ, որ ծծէ կամ  
 հաւաքէ այսու երիւք . գողութեամբ, յա-  
 փըշտակութեամբ, և զրկողութեամբ : Իսկ  
 յետոյ զի՞նչ՝ զայն լութեամբ պատուեմ .

Քանզի անթիւ են հատուցմունք փորձու-  
թեանց . Ըստուած զերծ կացուցէ յամե-  
նից . եթէ զղջացեալ զթածաբար հատուս-  
ցես զվարձս խղճաւոյն արդարաբար :

ՅԱԿՈՐ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Սէբ իմ .

Յայտ լիցի սիրելու թեանդ մտերմաբար ,  
զի այս ինչ ընչաւէտ ոք 'ի հեռաւոր եր-  
կիր ճանապարհորդել կամելով , զոր ինչ  
ունի յաճուրդ արարեալ վաճառելոց է դիւ-  
րագին գնով , բայց կանխիկ դրամով : Եթէ  
կամիս՝ և մէք երթիցուք 'ի միասին գը-  
նել զքանիս ստացուածոց , զոր ինչ պատ-  
շաճ թուի մեզ . են նորա և աղնիւ ան-  
դամանդեայ մատանիք բազմատեսակք , յո-  
րոց մին հատընտիր է և հազուագիւտ , հը-  
րաչազան փայլուն և յոյժ գեղեցիկ . մինչ  
զի՝ 'ի ճոճել ընդ առաջ արևու խտանան  
աչք ամենեցուն 'ի հոյիլ . և լուեալ է իմ ,  
թէ յանլոյս գիշերի 'ի խաւար տեղւոջ՝ նո-  
րին լուսով գտանի դիւբաւ , որ ինչ կորու-

սեալն իցէ : Բարեկամ՝ եթէ կարասցուք  
 զայն ձեռքակալել ընկերութեան դրամով,  
 քան զայս մեծ շահավաճառութիւն չիք յու  
 ուստէք . ուրեմն բարւոք աննես եթէ առանց  
 զանցառութեան բազմամիւ դրամով գոյ-  
 ցես՝ ի վաղիւ՝ ի միասին երթալ ՚ի նոյն յա-  
 ճուրդ : Ա՛չ ապաբէն և զարքայութեանն նը-  
 մանական զմարգարիտ սոյն օրինակ գնեաց  
 խոհեմ վաճառականն մշտահարուստ լի-  
 նել . զօրմէ ասէ սուրբ Մետաբանն , վա-  
 ճառեաց զոր ինչ ունէր , և գնեաց զայն  
 մարգարիտ . օն անդր ուսարուք և մեր :

Ո՛ղջ լեր :

ՅԱԿՈՒ  
 ՍԻՐՈՒՆԵԱՆ .



**ՁԵՌՆՏՈՒՈՒԹԵԱՄԲ Ե՛ՂԲԱՅՐՍԻՐՈՒԹԻՒՆ**

Բարերար ծնողի իմոյ ձեռացն ընծա-  
 յեմ համբոյր ծառայաբար .

Յայսքան ժամանակ յազնիւ տեսութե-  
 նէ ձերմէ դժբաղդութեամբ հեռի գտեալ  
 իմ , կարօտակէզ անձամբ անմխիթար տա-  
 ռապիմ աստանօր . և մանաւանդ մինչ լը-  
 ւայ զլուր հիւանդութեան եղբօր իմոյ պատ-

ուականի : Աստուծոյ մեծաւ խնդրանօք ա-  
ղաչեմ զհայրախնամաւորութիւնդ , զի զլուր  
բժշկութեաննորին փութապէս առաքեսցես :

Եւ զայսքան լիա անուն օսկի , զոր ե-  
ղեալ եմ 'ի միջի սոյն նամակիս , առեալ  
հոգ տարցես զկարեորացն բլժբշկական  
ծախուց նորին , և եթէ կամիս իմանալ  
զգալստենէ իմէ , շունիմ յապաղել թան  
զհնգետասան օր վասն խօթացեալ եղբօր  
իմոյ սիրելոյ :

Ո'ղջ լեր 'ի մխիթարութիւն ինձ կըրտ-  
սեր որդւոյ բուն :

ՅԱԿՈԲԻՍ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ

ՎԵՐՆՈՅՆ ՊԱՏԱՍԻԱՆԻ

ՁԵՂԲԱՅՐԱՍԷՐ ՈՐԴԻՈՅ

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՒՆ Ի ՀՕՐԷ

Հոգեհատնր սիրասնունդ որդեակ իմ .

Երդարե մինչ լուեալ էիր զտառապանս  
եղբօրդ 'ի մահճի չարաչար հիւանդութեամբ ,  
խնդրելով խնդրելիք զլուր առողջութեանն  
յարգի եղբօրդ սիրելոյ փութանակի ժա-  
մանել , ահաւասիկ փառք Եստուծոյ ամե-

Նակալին . զի յարտասուածոր յաչս մեր հա-  
յելով՝ ողորմեցաւ տալով նմա զբժշկութիւն .  
ուստի որդեակ իմ ուրախ լեր ընդ իս , ու-  
րախ լեր . փոխանակ զի՝ ՚ի տրտմութեան  
իմում տրտմակից էիր : Այլ այն եղբայրա-  
կան սիրոյ նշան լիք անուծ ոսկիքն թը-  
ւով . . . զոր խնամածութեամբ առաքնալ էիր  
ընդ սիրածրար նամակիդ , ամբողջ ե-  
կեալ առ իս , նովաւ կարողացայ ձեռնա-  
մուխ լինել բժշկաց ՚ի ծախ անդր . և ըն-  
դունելի մեծ եղև ինձ և յաւակիր եղբորդ .  
և մանաւանդ տեառն Աստուծոյ ամենակա-  
լի : Բազկատարած խնդրեմ , զի որպէս դու  
եղբայրական սիրով հոգաս զպիտոյս եղբորդ ,  
նոյնպէս տէր Աստուած զքեզ ամենախնամ  
մարդասիրութեամբ իւրով ՚ի խնամա իւր պա-  
հեսցէ , և ազատ յամենայն վնասառիթ  
և մահարեր արկածից և ՚ի հիւանդութեանց .  
և ամենազօր աջ իւր հովանի և պահապան  
լիցի ՚ի վերայ քո . և բարի յաջողութիւն  
տալով գործոյդ , արժանի լիցուք տեսանել  
զվերագառնալ սիրելութեանդ առ մեզ ող-  
ջամբ , որում կարօտակէզ զոլով փափաքիմք  
հանապազօր :

Ո՛ղջ լեր :

ՅԱԿՈԲ  
ՍԻՐՈՒՆԵԱՆ

## ՋԱՏԱԴՈՎՈՒԹԻՒՆ

### ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԳԱՍԸՆԿԵՐԻ

Հատընտիր ծաղիկ մերս դպրատան,  
յուսմուննս դպրութեան կիրթ բարենշան.  
Գրկախառն սէր ս'վ պարսն Նշան,  
առ քեզ ընծայի 'ի մէնջ միաբան:

Բարէ դժբաղդութեանս քաջավարժ սիրելի եղբայր. յորմէ հետէ մինչ անջատեցար 'ի մէնջ 'ի դասընկերութենէ, խաւարամած տրտմութիւնն պատեալ զմեօք յանմտիմար տաղնապս ենթակայացոյց զմեզ զամենեսին. զի բնական ուշիմութեամբ քով յաջողածեան լինելով քան զմեզ, ոչ սակաւ հասանէիր մեզ յօգնութիւն եղբայրսիրական նշանաւ. թէ 'ի խրատս և թէ 'ի գիրս. որ ոչ միայն 'ի դասառութեան պահու յուսուցչէն մերմէ, այլ և զօրն զողջոյն, որ ինչ լինէր մեզ հարկաւոր 'ի լուծումն վերստին. զորմէ քաջ գիտեմք զմերս խաւամտութեան պարտաւորական շնորհակալութեանց մերոց զթերութիւն:

Եւ այց վասն համեստաբարոյ աննոց և աննզր եղբայրսիրութեանդ վատահացեալ ակն ունիմք ներողամիտ լինել, եթէ անկարող դտեալ իցէ մեր ըստ բաւականին երախտադէտ լինել հնազանդութեամբ փո-

խան անթարչամ սիրոյդ . զոր իբրև 'ի յոգ-  
նարեզուն հոգելից պարտիզի 'ի ճեմելն մեր  
պար առեալ ընդ միմեանս ներքին զգայա-  
րանօք ծափ ընդ ծափ հարեալ ցնծայաք  
հոգեպէս յուսումնարանս ընդ զանազան մա-  
կացութիւնս վարժապետին մերոյ . յորս  
բարւօր պատուաստեալ գոլով քեզ իբր  
քաղցրահոտ ծաղիկ իմն իմաստից 'ի թարգ-  
մանութեան ասեմ և 'ի շարագրութեան բու-  
րելով բուրէր 'ի զարգացումն մերս խակու-  
թեան : Արոյ վասն յոյժ ճահողագոյն էր  
մեզ տրտմազգեաց լինել . բայց ոչ մշտա-  
տե : Օի քաջավարժ ներհուն 'ի դասակար-  
գէ ընտրեցար . և 'ի մերս աղքատիկ պար-  
տիզէ իբրև զուարթածաղիկ բուրեցար 'ի  
զանազան մակացութիւնս հայկարանութեան :  
Արեմն սակաւ ինչ տրտմազգեաց , բայց  
փառք մեծ համարիմք անձանց մերոց յա-  
րամնայուն մերային գոլոյդ աղագաւ :

Ամենախնամն հանապազ պաշտպան լի-  
ցի քեզ և թեանից և մեզ սպասողացս աս-  
տանօր օգնական 'ի զարդացումն և 'ի մխի-  
թարութիւն սժանդակութեամբ բարեմաղ-  
թութեանդ նմանօրինակ լինել քեզ պերճա-  
ցելոյդ : Արդ 'ի սփոփութիւն սրտից բազ-  
մաժամանակեայ եղբարց քոց նուաստադու-  
նից՝ մի՛ խնայեր զորպիսածանոյց ախորժա-



ճաշակ իմաստից սիրալիր նամակ յարդել-  
ւոյդ, սպաշնմբ:

Ո՛ղջ լեր ՚ի դիմաց դասընկերաց,

ՆԵՐՍԷՍ  
ԱԻՅՏԻՍԵԱՆ

---

ԽՐԱՏ ԾՈՒԼԻՑ

Եղբայր պատուական. ճեռն որ ոչ վաս-  
տակիցե, կերիցե մի'. սուրբ Առաքեալն ասէ.

Կարի յարմարագոյն է նմանութիւնս այս՝  
զի ոմանք իմաստասիրաց զծոյլն լերին ա-  
պառաժի նմանեցուցանեն, ուր ո՛չ բուսա-  
նի երբէք ՚ի նմա դալար խոտ մի և եթ ՚ի  
ճարակումն անասնոց կենդանեաց. ապա  
այնպիսիքն իբրև անպտուղ ծառ զիա՞րդ չի-  
ցեն անարգեալ յաշտ ամենից իրաւամբ, զի  
ո՛չ այլում և ո՛չ ինքեանց կարեն օգտել իբ-  
րև կշիռ մի ունկի: Այլ ընդ հակառակն ա-  
ռաւել ևս յարմարագոյն յորժամ լսեմք ըզ  
նմանութիւն աշխատասիրին պարարտ երկ-  
րի, յորում պտղաբերին յորդառատ պլտ-  
ղոց ծառատունկք և քաղցրահոտ ծաղ-  
կունք, զորս վայելեն թապաւորք անգամ,  
և այն սքանչելի աշխատասիրութիւն չքոտի

փոքրիկ կենդանւոյն մեղուի . որ 'ի պտղոց  
աշխատանացն՝ ոչ միայն քաղցրաճաշակ կե-  
րակուր լինի բանականացս, այլ և 'ի տան  
Մատուծոյ կարեօր է 'ի լուսաւորութիւն :  
Մյա իմաստունն իրաւամբ յորդորէ զծոյլն  
ասելով, թէ ո՛վ վատ երթ առ միջիւնն և  
առ մեղուն, և ուսիր զեւրդ գործանեայ ի-  
ցնն : Եւրդ՝ իմացեալ քո զանպտղութիւն  
ծուլից և զբարելիր Տեճաշահ օգուտ աշխա-  
տասիրաց՝ մի լիցիս վհատեալ յաշխատա-  
նաց 'ի պաշտօն քում օրական . իսկ եթէ  
կամիս թեթեացուցանել զաշխատութիւնդ,  
ջանասիրութեամբ ձեռնամուխ ընր 'ի գործ .  
որով անոցես ակներև՝ թէ որչափ շահա-  
ւորեսցես քեզ զօգուտ անձնական և զազ-  
գասիրական : Մյա այս է պերճութիւն հա-  
րըստութեան ըստ պատասխանատուութեան  
ուրումն իմաստասիրի 'ի հարցանել ուժեք,  
թէ որո՞վ կարացից լինել հարուստ, մի օր  
է ասէ 'ի մէջ տարւոյն, յայնմ աւուր ե-  
թէ աշխատիցիս, լիցիս հարստացեալ, ասել  
կամի՞ թէ զաՏենայն աւուրս աշխատութեամբ  
պարտ է կեալ :

ՆԵՐՍԷՍ  
ԱՒԵՏԻՍԵԱՆ



## ՅՈՐԴՈՐ

Ի ԽՐԱՒՈՅՍ ԵՒ Ի ՔԱԶԱԼԵՐՈՒԹԻՒՆ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ  
ՃԱՆԱԶԵԼ ԶՅԱՐԳ ԺԱՄԱՆԱԿԻՆ  
ԵՒ ՎԱՐԺԱՊԵՏԻՆ

Երջանի՛կ մանկուներ ուսումնասերք՝  
ողջունեմ զձեզ զամենեսին որդեսիրական  
խնամով.

Հանկալի՛ են արդարև 'ի ժողովուրդս  
և Մատուածահաճոյ դասք ուսումնասիրաց  
բարեկրօնից. մանուանդ այնքիկ որք ոչ  
միայն ինքեանք մխիթարին լուսով զիտու-  
թեան, այլ անձանձիր աշխատութեամբ և  
անյադ շահմարանելով զկարևորս բանակա-  
նութեան փոյթ ունին ջամբել հասարակու-  
թեան բաժին հանելով յայնց երկնապար-  
գև ձրից լուսասփիւռ մտաց իւրեանց, որ  
ինչ իցին հարկաւոր 'ի սնունդ բարեպէս և  
'ի մխիթարութիւն հոգեկան: Քանզի ա-  
հա յատուկ գործ իմն է թագաւորական և  
կայսերական հոգալ զպիտոյս հասարակու-  
թեան: Հարացոյց է մեզ կրտսեր որդին  
Հակոբայ Հովսէփ, որ թէպէտ գեղեցիկ ու-  
նէր անուն գովարանական 'ի ծննդենէ, բայց

որով կոչեցաւ փսոմփթումբանէ (որ ըստ  
 Ազգիպտացւոց փրկիչ Յի թարգմանի). ո՞չ  
 ապաքէն հաց պատրաստելով վասն հառա-  
 րակութեան . որ 'ի մեկնելն զերազս Փարա-  
 ւոնի յորժամ ասաց նմա դտանել զոմն ի-  
 մաստուն պատրաստել զցորեան 'ի մէջ եօթ-  
 նամեայ առատութեան վասն յետագայ եօթ-  
 նամեայ սովու, ասէ Փարաւոն ցնա դովա-  
 բանութեամբ. զո՞վ կարեմ դտանել քան ըզ-  
 քեզ իմաստնագոյն և խոհեմագոյն օգնիչ  
 հասարակաց և հոգարարձ խնամածու մար-  
 դասիրութեամբ. սիրեաց յոյժ յոյժ և հա-  
 ճեցաւ երկրորդական աննել զնա թագաւո-  
 րութեան իւրում ոսկեղէն շղթայիք պսա-  
 կազարդ պատուելով: Քանզի հոգալ զպի-  
 տոյս հասարակութեան՝ թագաւորական է  
 գործ. յոր ձեռնամուխ լինին սիրով կըրկ-  
 նատեսակ մարդիկ ազգապետք և վարժա-  
 պետք ազգասիրական ոգւով. մին ըստ մօրմ-  
 նական մասին, և միւսն հոգեկան: Ասն  
 այնորիկ յիշեսցուք զանուն այնպիսեացն իշ-  
 խան բարեմիտ, անձն վեհագուն, խնամա-  
 բար թագաւոր: Եւ պա ցնծուսցեն և աղքատա-  
 սէրք 'ի կարկանել զհաց աղքատաց: Թա-  
 գաւորական գործ ասացաք հոգալ զհաց հա-  
 սարակութեան. ո՞չ ապաքէն ամենաբարի  
 ամենախնամ մարդասէր երկնի և երկրի թա-

գաւոր Յիսուս փրկիչ 'ի սուրբ Արիւն վեր-  
նատան անմահական կերակուր պատրաս-  
տեաց վասն հոգւոց ամենից . որպէս ասէ  
մարգարէն Պաւլոս . զհաց երկնից ետ նո-  
ցա , զհաց հրեշտակաց կերին մարդիկ , իսկ  
Հրէից զարմացեալ ընդ այն , զառաջինն ասէ-  
ին . աղէ՛ հաց ևս կարասցէ տալ նա մեզ .  
և դարձեալ կամելով իմանալ զտեղին և  
զպարագայ նորին , կրկնէին . մի՛թէ կարո՞ղ  
իցէ պատրաստել սեղան յանապատի . այո՛  
կարո՞ղ է Պաւլոս մարգարէ . ՚չ չեկուցեր  
զառաջինն ժողովորդեան զանչափ կարողու-  
թիւն տեառն , ասելով՝ տայ հաց քաղցե-  
լոց , և արձակէ զկապեալս տէր , եւ թէ  
տայ անասնոց կերակուր , ձագուց ագռա-  
ւուց՝ ոյք կարդան առ նա . զի չկարօտեալս  
ելից բարութեամբ , և զմեծատունս արձա-  
կեաց յունայնս :

Եւ ամենայն սքանչելիք զոր առնէր Յի-  
սուս՝ երկնաւոր թագաւորի էին գործք . որ-  
պէս ինքեանք տային զապացուցական վկա-  
յութիւն վասն սքանչելեացն , ո՞վ կարէ թո-  
ղուլ զմեզս ասեն բայց միայն Աստուած . և  
յաւուր Յարութեան Ղազարու ասեն . ՚չ  
կարէր սա , որ երաց զաչս կուրին , առնել  
զի և սա մի՛ մեռցի . և հարիւրապետին 'ի  
խաչելութեան պահու տեսեալ զսքանչելիս

Յաւէտ դերահրաշ զոր միայն Մատուած կա-  
րէ առնել, վկայէ յասելն, արգարե այրս  
այս որդի Մատուծոյ էր: Ասև Մատուածու-  
թեամբ իւրով ոչ միայն հոգեբոյժ մանա-  
նայ կենդանարար մարմնով և արեամբ իւ-  
րով սեղան պատրաստէ մեզ 'ի պարարուն  
հոգւոց և յանմահութիւն յաւիտենական-  
այլ և՛ հրաշագէն վստեալ 'ի սէր մարդ-  
կային, երկիցս տրար յանպատի վկերակուր  
մարմնաբոյժ. որով կամեցաւ ծանուցանել  
թէ որպէս տէր և թագաւոր է երկնից և  
երկնայնոց, այնպէս և հոգաբարձ արարիչ  
և թագաւոր է ամենայն արարածոց որք են  
յաշխարհի: Տէր յերկինս պատրաստեաց  
զաթու իւր, արքայութիւննորա ամենեցուն  
տիրէ:

Մպաքէն վասն էր երկարեմ սիրելի՛ հո-  
գեհատորք աչացս լոյս ուսումնասէր ման-  
կունք դպրոցիդ. զի եթէ բացատրել կամի-  
ցիմ զվերոգրեալսն վայելչական վարդապե-  
տութեամբ յապայուցութիւն, կարոտ լի-  
ցիմ եղեգնաանտառ գաշտի միոյ պրակաց  
առ 'ի գրիչ, և զոր ինչ ոնիմ ձեզ 'ի խը-  
րատ, գուցէ մոռանայցեմ որում որդիական  
սիրով հարկ վարկաւ անձն իմ, ուսումնա-  
սէր որդեակք իմ՝ նախախնամական գթու-  
թեան պարգև արարչին է այս, որ հոգեկից

խրատատու զդասատուն զոյն վայելէք 'ի պաշտպանութիւն ձեր և ընդ հովանեաւ նորա լինել. որ հոգեկան սեղան պատրաստէ ձեզ անձանձորոյթ երկնապարզ և իմաստութեամբ. և որչափ զգարոց նոյն թաղին յիշեն 'ի ներկայութեան իմում՝ երանելի համարիմ զձեզ. զոր մանուկ հասակաւ ձերով վայելէք իւրաքանչիւրքդ բարեբաղդարար. առ 'ի լինել ձեր ամենեցուն իւրաքանչիւրոցդ օգտակար անդամ յաղգս մեր ուսմանցդ արգասիք :

Այս մեծի հնազանդութեամբ յարգեցէք զնա ընդ նմին և զանգին ժամանակն ձեր. և մի՛ լիցի ձեզ բնաւ ցուցանել նմա զնըշոյլ ինչ ծուլութեան 'ի գործս ձեր. վասն զի թշնամի իւր համարէ նա զձոյն. և մերձակայ բարեկամ զաշխատասէրն. սմին նման և իմաստասէրք անգոսնէին զծուլութիւնն և գովէին զաշխատութիւնն. վասն այնորիկ իւրաքանչիւր որ յաղագս աշխատութեան խօսեցան 'ի գիրս. որպէս ասէ Ա իրգիլիոս յաղթող է ամենայնի աշխատութիւնն. և Ալիգիոսի թէ բարձցես զդատարկութիւն, խորտակի աղեղն ցանկութեան. և Սենեքայի թէ չի՛ք ազահութիւն վայելուչ բայց միայն ժամանակին. և այլն և այլն :

ՆԵՐՍԱՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԽՐԱՏ ԱՆՀՆԱԶԱՆԴ ԵՂԲՈՐ :

Վաղեմնական սիրելի բարեկամ.

Արագ հպատակաց երբակի . վասնորոյ  
 յնուատեսակ աստիճանս գոն՝ ի մեզ անժըխ-  
 տելի պարտաւորութիւն հնազանդութեան  
 յերախտագէտս լինել . նախ՝ առ բազմերախտ  
 արարիչն , ըստ որում եմք արարած . քան-  
 ղի նա արար զմեզ և ոչ մեք էաք , մեք թո-  
 ղովուրդք և խաշն արօտի նորա . զի ոչ մի-  
 այն ՚ի չգոյէ ՚ի գոյ էա՞ծ , այլ և դալարիս  
 բուսուցանէ յերկրէ վսսն մեր ՚ի կերակուր .  
 ո՞ր լնու ՚ի բարութենէ զցանկութիւն մեր  
 հայրախնամ պաշտպանութեամբ . որպէս  
 փրկիչն մեր Հիսուս ծանուցանէ հանապա-  
 զորդական խնամածութիւն և զհոգացողու-  
 թիւն հօրն ամենակալի՝ յասելն . զի՞նչ պի-  
 տոյ է ձեզ , գիտէ հայրն ձեր երկնաւոր .  
 քանզի լաւ էք քան զբազում թռչունս . և  
 թէ զամենայն հեր զլիտոյ ձերոյ թուեալ է :  
 Այլ որպէս Վարեկացին ասէ . ՚ի մաղթանս  
 շնորհակալութեան , չէի երբեմն՝ և ստեղ-  
 ծեր , շմաղթեցի՝ և դու արարեր , չե ևս ե-  
 կեալ ՚ի լոյս՝ և տեսեր , ոչ յայտնեցեալ  
 իմ՝ և գթացար , ոչ կարգացեալ և խնա-  
 մարկեցեր . և այլն : Վստ պարտիմք երախ-



տագէտս լինել հնազանդութեամբ օրինաց և պատուիրանաց նորին :

Արկրորդ՝ և առ ծնողս ունել պարտաւորութիւն հնազանդութեան՝ հարկաւոր վասն զի բաց ՚ի բազմատարուն հոգատարութենէ զմարմնաւոր պիտոյից մերոց, ջանան և հաղորդ առնել զմեզ ՚ի քաղաքական և ՚ի բարեպաշտական կրթութիւնս իւրեանց. զի բարեյիշատակ լիցուք առաջի Աստուծոյ և հաճոյ յաշխարհի աստ և ՚ի հանդերձեալն՝ Ա՛յլ քոյդ զերախտագիտութեան պարտաւորութիւն եղբայր՝ անհնազանդութեամբ կամիս կատարել արդեօք. ականատես իսկ էի բազում անգամ հնազանդութեանդ մինչ ՚ի մանկութեան հասակի զմիմեամբ փարէաք. յուէտ ցանկայի արդարեւ յանձինս բերել զնմանութիւն և զօրինակ եղբորդ ազնուի իսկ այժմ յերիտասարդական հասակիդ ընդէր մերկացար զայդ գերընտիր առաքինութիւն երանութեան, զանց արարեալ զպատուիրանաւ տեառն Աստուծոյ, զոր ասէ. պատուեա՛ զհայր քո և զմայր, զի քեզ բարի լինիցի և երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրին բարութեան : Ա՛յլ Սողոմոն ասէ. ընթ որդեակ խրատու հօր քոյ, և մի՛ մերժեր զօրէնս մօր քոյ : Արկնչիմ մի՛ գուցե առ ամենայն երախտաւորս այսպէս ապերախտ

և ապաշնորհ իցես, ըստ սահման կշռութեան կամաց տեառն արտաքս վազելով. որ է հաւաստի կերպարան բասիր անօրէնութեան: Բազում անգամ տեսեալ է իմ զի երիտասարդք ոմանք և արք շափահասք համբոյր ձեռաց մատուցանելով ողջունեն զձրնոցս, և յեկեղեցւոջ հաշտութեան նշան զողջունատութիւնն ընդ ձերոց՝ համբուրիւ ձեռաց կատարեն. դու ճրպէս ինքնահաւանութեամբ վարիս ընդդէմ ծնողաց քոց. ասիս անգստին ընկերակցութեան վաղիմի բարեկամիդ. դասակից ևս էաք ՚ի միում վարժարանի:

Այրորդ՝ իմա և զպարտաւորութենէ հընազանդութեան որ առ ուսուցիչս թէ հոգևոր և թէ մարմնաւոր. զի իբրև զհոգևոր հայր խնամածու և նոքա փոյթ մեծ ունին բարեսնունդս առնել զմեզ առ ՚ի լինել հաստատ ՚ի հաւատս, և բարեկրօն ՚ի վարս, և զձիրս բարեմասնութեան յաւէտ ունիլ գիտութեամբ և իմաստութեամբ. յորոց կարգի է մեր բազմերախտ Հայկ Ասհապետն. որում պարտաւորութիւն հնազանդութեան է միշտ Հայերէն խօսիլ ըստ հրամանին, ՚ի մանկութեան ասէ Արքաք ուսանիլ զառաքինութիւն, այլ մի՛ կարծեսցուք թէ միայն ՚ի նոյն հասակի գործել պարտաւորիմք:

այլ հանապազ յիւրաքանչիւր ամենայն հա-  
 . ապի մինչև 'ի վախճան կենաց մերոց. քան-  
 զի ուսիր ասելովն՝ կանխաւ պատրաստու-  
 թեան քայ ծանօթութիւն 'ի գործ դնել  
 մշտապէս յապագայ ժամանակս համայն: ||<sup>Ը</sup>  
 ապաքէն զոր ինչ ուսանփցի որ զբարիս, զնո-  
 սին պարտի 'ի գործ դնել հանապազ. քան-  
 զի մանկունք 'ի տհաս հասակի իւրեանց զոր  
 ինչ փութածն ուսանիլ տքնութեամբ և աշ-  
 խատութեամբ, վասն յարատև գործադրու-  
 թեան է ցորչափ ժամանակս իցեն կենդա-  
 նի: Ի տնկականացն առցուք զօրինակ. թե-  
 պէտ փոքրագոյն են սերմանիք ամենայն տըն-  
 կոց, բայց յորժամ պարարտութեամբ երկ-  
 րին դեռարոյսք դալարացին՝ հետզհետե  
 աճիլ՝ ծաղկիլ՝ և պտղաբերիլ ունին. մինչև  
 յոստա նոցա թռչնոց բնակիլ: ||<sup>Ր</sup> սերմա-  
 նացան 'ի սերմանելն յաւուր յայնմիկ ան-  
 միջապէս կարէ առնուլ զպտուղ. այսպէս ի-  
 մա և զուսանիլն 'ի գործադրութիւն և 'ի  
 պտղաբերութիւն մշտատև. վասն այն խընդ-  
 րեմ անձկանօք քարեկամաբար եղբայր՝ զման-  
 կութեանդ ցանկալի հնազանդութեան ար-  
 դիւնաւոր արգասեաւ յարատևութիւն:

Ո՛ղջ լեր:

ՆԵՐՍԷՍ  
ԱՒԵՏԻՍԵԱՆ

ԻՐԱՏ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՊՍՏԱՄԲ ԵՂԸՕՐ

Սիրական եղբայր.

Ընդէր գուրազում անգամ անարգես ըզ  
ծնողս մեր. բա՛րէ գոնէ օրինակ առեալ լի-  
նէիք յինէն. ամենևին չէ՞ տեսեալ քո  
որ առանց բարկացուցանելոյ վարիմ ընդ նո-  
սին մեծ հնազանդութեամբ, և յայտնի է  
յարգութեանդ զի օր ըստ օրէ՛ի վերադառ-  
նալս իմ՝ի շուկայէ, պատուելով ողջունեմ  
զձեռք նորա խոնարհաբար համբուրեալ. և  
նորա փարելով զինև ողջադուրեն զիս ծնո-  
ղպիան սիրով, ըստ որում պարտ իսկ է ա-  
մենայն որդւոց պատուել զծնողս իւրեանց  
ըստ հրամանի օրինաց որ առէ՝ պատուեա՛  
լ հասը քո և զմայր, զի երկայնակեաց լի-  
նիցիս՝ի վերայ երկրին բարութեան. Ասան  
որոյ՝ լուր փոքրիկ խրատու յետին ծառայ  
եղբոր քում նուաստի. և հրաժարեալքի՞ք  
յայսպիսի վարուց չարաց, որ մահաօրիժ ևս  
լինի. որպէս և պատահեցաւ յանցելումն  
որդւոց օւմեր անհնազանդի. որ յաւուր մի-  
ում բարկութիւն եցոյց խորխտալով՝ի վե-  
րայ հօր իւրոյ, թոյց յետ երից աւուրց կու-  
րացան աչք նորա. որով կատարեցաւ ահա  
բան Աղոյսանի, թէ որ անարգէ զծնողս իւր,

շեջնի տոյս նորա, և լիբբ աչաց նորա խա-  
ւարեսցին :

ՆԵՐՍԷՍ  
ԱՒԵՏԻՍԵԱՆ

ՀԱՅՐԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ԱՆՔԱԺ ԼԻՆԵԼ ԽՆԴՐԷ ՈՐԴԻՆ

Յարգապատի՛ւ Հայր իմ խնամածու.

Վէպ եղև ինձ լսել յուճեքէ, զի վա-  
ճառականութեամբ ևրթալոց ևս յայտ ինչ  
հեռաւոր երկիր. ո՛չ ո՞րպէս մեկնելոց ևմ  
ևս Կյարգութենէդ և աստ իբրև որք զի-  
ւորդ կեցից, որ յիւրաքանչիւր աւուր քա-  
նիցս անգամ ՚ի ներկայանալ իմում առաջի  
քո ո՛չ կարէի յագենալ և մտիթարիլ խը-  
նամակարկառ յորդարուչիւ բարեօք քովք  
հայրական. իսկ յորժամ մեկնելով ձեր յի-  
նէն զուրկ գտանիցիմ ՚ի լուսածաւալ ազնիւ  
տեսութենէդ, ո՞ր բարութիւն կամ երջան-  
կութիւն զիս կարեն մտիթարել. այնուհե-  
տև ո՛չ կերպ առ կերպ ծրարք նորոգ հան-  
դերձից, և ո՛չ առաւօտեան նախաճաջիկ զա-  
նազան կարկանդակք, ո՛չ զանազան խորտ-  
կածաշ միրգք այգեստանաց քոց և պար-

տիզաց, և ո՛չ կառք . որով զամենայն ա-  
ւուրս կիրակէի զմեզ 'ի զբօսանս ուղարկել  
կանոնն եղեալ էր քո սպասաւորաց . անիւք  
կառաց 'ի միմեանց մեկնելոց են պսուհե-  
տե . և լիսեանն նոցունց 'ի բացի անկեալ և  
անշարժ կացեալ 'ի տեղւոջ իւրեանց՝ հը-  
նասցին և քայքայեսցին մասունք 'ի միմեանց .  
և երիւարք սայլից և կառաց 'ի ներքս մը-  
նասցեն 'ի մտին մինչև ցլաւտեան . և ո՛չ  
միայն տունն ինձ իրրև բանտ , այլ աշխարհ  
ամենայն մթնալորտիւ իւրով տիւ և գիշեր  
ամպախառն միգապատ և խաւարչուտ երևի  
ինձ նուաստիս , թէ հոգւոյս՝ թէ անձինս և  
թէ կենցալոյս . ամենեքին սորա հերքելի  
են յաչս իմ : Մի միսիթար ծնող . զայդ սը-  
խալ խորհուրդ շտապաւ փոխել աղաչեմ :  
Եւ յի մի՛ կարծեք թէ արգելք կամիմ լինել  
բարեշահ գործոց քոց վաճառականութեանդ ,  
յորմէ շահաւորիմք մեք և կերակրիմք , այլ  
այս հն անարժանիս աղաչանք , զի թէ 'ի  
պանդխտութեան ճանապարհին մահ ևս հա-  
ռանել պատահիցի ինձ , համարիմ զայն իր-  
րև անմահութեան ունիլ կեանս ընդ հովա-  
նեաւ քով :

ՆԵՐՍԷՍ  
ԱՒԵՏԻՍԵԱՆ

ԻՐԱՏ ՎԱՍՆ ԾԱՂԻՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲՕՐ

Եղբայր սիրելի.

Ուստի՞ ուսար զայդ անխոհեմութիւն. ո՞ր  
 եջոյց քեզ ծաղրել զծերունիս հայրապա-  
 տիս. կարի անպատշաճ է բարեպաշտու-  
 թեան քում և խոհեմութեան զոր ունիս .  
 և որպէս վայելչացուցանես ազնուազարմու-  
 թեանդ. եթէ լուր լիցի հողեսէր և բարե-  
 պաշտ հօր քում, տրտմազգեաց լինի հար-  
 կաւ . և գուցէ 'ի բարկութիւն շարժեսցի .  
 ընդէր մտահացար ծաղրել այդպէս զամ-  
 բողջական մասանց անտի դոյզն ինչ թե-  
 րութեամբն . քեզ զի՞ փոյթ է . շե՞ է ըն-  
 թերցեալ քո զպատիժ ծաղրաբանից որ 'ի  
 սուրբ գիրս . ելկնտակասելով մինչ ծաղրէին  
 քառասուն մօնկտի՝ արջակոտոր եղեն ա-  
 մենեքին Աշխսէի անիծարանութեամբ . Ու-  
 բեմն զգուշացուցանել ջանամ զսիրելիդ յայդ-  
 պիսի տղայական խաղուց զբօսանաց , զի մի  
 անկանիցիս 'ի փորձութիւն ինչ : Այլ զայս-  
 պիսիս որչափ տեսանիցեմք կաղս , կոյս ,  
 համբքս , միակողմանիս , սապատողս , ձեռ-  
 նատս , և այլ ո՞ և իցէ ցաւազարս . պար-  
 տաւոր եմք փառս տալ Աստուծոյ , զի ա-  
 մենայն անդամօք կարող և քաջառողջ եմք ,  
 և մօնաւանդ սյսպիսի խեղաթիբ արեա-

տաց սղորմութիւն տալով յօգնութիւն հասանել պարտիմք նոցա վասն ողջկեցութեան մասանց իւրապանչիւր անդամոց մերոց թէ էական թէ ամբողջական :

ՆԵՐՍԷՍ  
ԱԽԵՏԻՍԵԱՆ

ԵՐԿԱԱՅՐԻ ԽՆԴԻՐ

Սղբայր պատուակոմք.

Հարկ եղև ինձ վասն խնդրոյ իրիք խընդրել զպատասխանի յիրաւախոհ մտերմութենէդ 'ի ներողամտութիւն ձեր ապաւինեալ. զի յաւուրս յայտոսիկ կամելով իմ ճանապարհորդել ընդ ցամաք 'ի հայրենիս իմ 'ի լրումն փափագանաց կարօտալիր անձին իմում, որ առ ծնողս և յեղբարս և 'ի վաղեմնածանսթ քաղաքակիցս . թէպէտ անշուշտ գիտեմ յօրէնս և 'ի պատուիրանս թէ մահացու է մեղք մարդասպանութիւնն, որպէս ինքն էջիսուս առէ. որ սուր առնուսրով կորնչի. բայց 'ի ճանապարհի յորժամ պատահիցին ինձ աւազակք լեռնայինք և դիմեալ 'ի վերայ իմ փութասցին զբաւել զես 'ի կենաց իրրև արեան ծարաւի, զի՞նչ ինձ առնել է արժան վասն ազատութեան իմոյ . եթէ



զինչս իմ յափշտակել կամիցի, անհոգս լինել ըստ Հորայ արդարոյն է օրէն, զոր թոյլ ետ Վստուած սատանայի մեասել ընչից և մի՛ մեասել 'ի հոգին . իսկ սորա յորժամ մերձեցին 'ի հոգիս իմ, սպանից արդեօք և ես զնոսա թէ ո՛չ, խնդրեմ ըզ պատասխանին աղերսիւ :

Ո՛ղջ լեր 'ի բազում ամս 'ի մխիթարութիւն և 'ի ցնծութիւն ինձ նուաստ

ՆԵՐՍԵՍԻՍ  
ԱԻԵՏԻՍԵԱՆ

ԽԱԿԱՄՏԱՅ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ

ՁԷ ԱՆՎՏԱՆԳ

Բարեւեր եղբօր իմոյ սիրելւոյ սեր 'ի սրտես անկեղծօրէն.

Ա՛յք են որք բերեն զպարսաւ ազգայնոց, ո՛չ հասակք մանկական կամ երիտասարդական. զի 'ի ծերոց անգամ երևին բազում անգամ այս բերք զազրամորմիք. այլ ինքնահաւանութեան է գործ, զի ոմանք ըզ խակամտութիւն իւրեանց շճանաչելով ինքնահաւանութեամբ մատուցին 'ի գործ առանց հարցաքննութեան խոհական ծերոց, որով

նէ միայն անձանց իւրեանց վերադիզեն ըզ  
զէնս վնասուց 'ի վախճանի 'ի տաղնապ և  
'ի շարշարանս, և մանաւանդ 'ի բարձուն  
փարկման. այլ և ազգին լրութեան առիթ  
մեծ լինին պարտաւանաց անհեթեթ և ան-  
խորտոս բարոք :

Եւստ 'ի սէր ազգային բարեհամբաւու-  
թեան և 'ի սէր մերս փաղեմնահաստատ եղ-  
բայրսիրութեան՝ մտերիմ իմ և բարեկամ.  
զ'յդ գոր զարդիս աննել պատրաստիս դժ-  
ուարակատար գործ, մի՛ կամապաշտութեամբ  
կամ ինքնահաւանութեամբ ձեռնամուխ լի-  
ցիս սկզբնաւորել առանց հարցաքննութեան  
ծերոց խոհականաց. զի մի և յայսմ ամի  
վերանորոգեսցի բազմակերպ վնասուց անձ-  
կութիւն սիրելութեանդ. որպէս և յանցե-  
լումն գթելովդ խակամտութեամբ : (՛) Ի բանք  
ծերոց հաստատ և խելամուտ գոլով՝ խո-  
հականութեան տան ծանօթութիւն. որով  
բազումս նախագուշակ լինին յետագայ բա-  
րեաց և չարեաց գործոց ոմանց. և զայսու  
աւանդութեամբ իմաստնոց դիմորդ կարեմք  
անցանել. թէ խրատ ծերոց զէնք պատա-  
նեաց :

Ի ներքոյ մեծամեծ լերանց ո՞րչափ ազ-  
նիւ հանք գտանին ծանրագին. ոյր՝ աղա-  
բաւ ասէ Սողոմոն. ծեր 'ի տանէ քումմէ

մի՛ պակասեցի . որհնու թիւն շատ ասնիւ .  
 զի գուցէ յաւուր միում հարկաւորեացի .  
 սրպէս եղև իսկ թագաւորի ումք , որ թէ-  
 պէտ ո՛չ կամէր տեսանել բնաւ 'ի քաղաքի  
 իւրում ծերունի , առպիտան են 'ի պայ-  
 քար ասելով , իսկ յորժամ այլ թագաւոր  
 'ի նմանէ զաւագեայ մալուխ խնդրեաց կան-  
 գունս երեք հարիւր , 'ի յաղթութիւն համա-  
 ռիլ եթէ անկարող գտցի , մեծ փափարա-  
 նօք խնդրէ՝ ծերունին պէտք եղև ասելով .  
 իրրև հաշուագիւտ ինչ առնկալաւ յար-  
 գանօք յորժամ ներկայացաւ առաջի ոմն ծե-  
 րունի . քանզի հայրասէր որդին իւր 'ի  
 թագստի պահեալ էր 'ի տան զհայր իւր .  
 զի մի՛ և զայն կորուսցէ մահուամբ կամ  
 արսորելով այլոց նման : Արդ 'ի հարցանել  
 թագաւորին տես զի՞նչ ասէ խրատատու  
 ծերն : Այլ դու խնդրեա՛ (ասէ) 'ի նմանէ  
 նախ զօրինակն թզով չափ ո՞րպիսի կամիցի .  
 նս՞որ թէ թանձր . որով յաղթող գտաւ  
 թշնամուշն քան թէ յաղթեալ :

Արեմն վասն բարեկամութեանս զոր ինչ  
 ծանուցի քեզ զայս օրինակ՝ ընկալ քեզ եղ-  
 բայրսիրութեան ինչ նուէր . ո՛չ սկսել զայդ  
 դժուարակատար գործ առանց հարցման խե-  
 լամուտ խոհականաց , զի մի՛ լուիցես զայն  
 անարգութեան զբան , թէ այրս այս սկսաւ

շինել և ո՛չ կարաց կատարել:

Ն. Մ. ՆՇԱՆ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

---

ԽՐԱՏ ՀԱՅՐԱԿԱՆ ՄԻՆՉ ՈՉ ԿԱՄԻՅԻ  
ԵՐՐԱԼ ՈՐԳԻՆ Ի ԳՊՐՈՅ

Հնագանդ որդեակ՝ լնօր բարեբարի բուս  
է և երախտաւորի.

Ա՞՞՞՞՞ արթուն զուարթուն միտք իմաս-  
տուն ումնց մանկտեաց բնականապէս, որ  
ըստ յարմարութեան բանի տեան՝ թէ մինչ  
օր կայ գործեցուց զբարիս, գայ զիշեր յո-  
րում ո՛չ ոք կարէ գործել, որ ըստ օրէ տե-  
սանելով զլոյս աունջեան՝ որ միջնորդ մեծ  
է գործաւնութեան, շահասնդիր լեալ ան-  
ձանց իւրեանց բաղձանօք իմն յօժարութեամբ  
բնթանալ ընթանան զամենայն աւուրս ՚ի  
դպրոց ՚ի հրահանգս ուսմանց, ստանալ օ-  
գուտս բարեբերս, զստացուածս ո՛չ ցեցա-  
կերս, այլ անկորուստս: ըստ օրինի այնր  
իմաստուն վաճառականի որ յառակս սուրբ  
Ղեւտարանի՝ թէ զամենայն զոր ինչ ունէր  
վաճառեաց և գնեաց զմարգարիտ մի, այ-  
սինքն զսուրբ արքայութիւնն զցանկալին ա-

մենեցուն, քանզի այս է ընտիր վաճառաջ  
 կանութիւն, որ միայն ՚ի վաճառատեղիս դըպ-  
 րոցաց գտանի նախապատճառ ուսմանց միջ-  
 նորդիւ: Արդարեւ եթէ ունիցին այնպիսի  
 սի սիրուն մանկտիք ժամանակս պարապոյ,  
 կամ զանազան զուարճութեան ախարհային  
 անցաւոր դրօսանաց կամ խաղուց ՚ի բաց  
 թողեալ զամենայն, միայն զանկողոպտելին  
 գիտութիւն գուն գործեն ձեռքակալել. ո-  
 րով զբարեբար կամս տեանն բարւոք ճա-  
 նաչմամբ՝ յարժանաւորութիւն սուրբ տեղ-  
 ւոյն այնմիկ, բաղձան գտանել մերձ առ ա-  
 մենաբարին սուրբ Արրորդութիւն յարա-  
 զուարճ ցնծալ Աստուածազոյք փառաց լու-  
 սով: Այլ դու սիրելի՛ որդեակա նժան այն-  
 պիսեաց իբրեւ տէրամբ յորգորեալ վաղ  
 քաջ ընդ առաւօտն զամենայն աւուրս  
 մինչև ցարգ ունէիր զայս սովորութիւն եր-  
 թալ առանց ձանձրացուցանելոյ դոք, ո-  
 րով ո՛չ սակաւ ուրախացուցանէիր զճնո-  
 զական սիրտ իմ. վասն զի ճանաչելով ըզ-  
 բարին և զշարն և գիտելով զյարգ ժամա-  
 նակին ՚ի կիր առնուլ փութայիր զպատա-  
 նեկից զարթուն եսանդուն յօժարամտու-  
 թիւն, որ է արդարեւ տեղի և բարելից պար-  
 տեզ հոգեզուարճ ծաղկանց գիտութեան.  
 քաղցելոց խոհանոց, և պասքելոց վտակ ե-

զեմարուղիս և տրտմազգեցից որախառիթ  
հարսնտրան բազմաջահ լուսով զարդարեալ՝  
իսկ այժմ արդեօք ո՞րպիսի որոմնացան շար-  
անն եղև քեզ դիպել, ո՞րդեակ, յաւուրս  
յայսոսիկ ո՞ր հողմունք շարութեան շնչե-  
ցին զքեւ. զի ո՛չ կամելով երթալ ՚ի դըպ-  
րոց շփոթեալ երևիս դու ՚ի խարդախ բա-  
նից վատախորհուրդ մանկանց, ընդ որս  
չունիս սովորութիւն բնաւ ընդ դատարկա-  
շրջիկ սրիկայ մանկունս կենցաղավարիւ՝  
Սի՛ գուցէ տգիտագոյն արանց դիպեալ ի-  
ցէ քո, որք հաստարմատ գուլով ՚ի տգի-  
տութեան, ագիտութիւն համարին զաշխա-  
տիւն ՚ի վերայ գիտութեան ըստ Հուլիոս  
կայսեր. որդեակ իմ սիրելի՛ եթէ ՚ի տագ-  
նապ ձանձրութեան անգամ պատահիցիս պա-  
տուհասակոծ լեալ, չէ՛ արժան ՚ի կորուստ  
արկանել զայն հազուագիւտ մարգարիտ:

( )ն անդր երթալով երթասչի՛ր ըստ  
սուաջին սովորութեանդ սիրայոժար կամօք  
՚ի շահըմբեր վաստակ անձինդ քում և ազ-  
գիդ, որով և ես խանդակաթ եղեց ՚ի սէր  
քօ յաւէտ տարփանօք որդեսիրական:

Ն. Մ. ՆՇԱՆ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՍՆ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ԴԱՏ ԵՂԲՕՐ

Յարգի բարեկամ.

Հանցեալ աւուր յանկանիւն իմ 'ի թըշ-  
ուառութիւն փորձութեան՝ ակնկալեալ ըս-  
պասէի, թէ իցէ՞ որ մտերիմ բարեկամաց  
ոմն եկեալ հասցէ յուսադրել զիս, ազա-  
տութեան նշոյլ ինչ երևեցուցանելով, բայց  
հչ զոք տեսի այնպիսի բարեսէր անձն միտ-  
թարիչ բաց 'ի քէն, որ եկեալ ճշմարտա-  
գոյնս բարբառելով յայնմ ատենին՝ արդա-  
րութեան գործեցեր զիրաւունս. որով ընդ  
իրաւասէր գատաւորին միակամ և միախոհ  
լեալ ազատեցեր զիս յայնմ վտանգէ, որ  
մերձ էր անձն իմ ընկալնուլ 'ի նմանէ զվը-  
ճիռ անիրաւութեան վասն տասն հազար և  
ութ հարիւր դահեկանաց, զոր եթէ զկա-  
րասիս և զստացուածս իմ ամենայն վաճա-  
ռէի, ոչ բաւէր հատուցանել:

Եւրդ զի՞նչ փոխարէն արարից այնմ  
բարերարութեանդ, ազատիլ 'ի պարտուց ե-  
րախտագիտութեան. ոչի՞նչ կարեմ առնել  
ընչիւք. միայն այս լիցի շրթանցս պար-  
տաւորութիւն, միշտ աղօթարար լինել 'ի  
կեանս իմ աստ վասն բարեսէր անձին քում:

զի միշտ և հանապազ ամփոքձ և անսասան  
պահեցէ ամենակարողն Վստուած, և պաշտ-  
պան լիցի քեզ մինչև ցյաւիտեան :

Ն. Ծ. ՆՇԱՆ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

---

Վ. ԿԱՅԱԳԻՒՄ

Ճշմարտախնդիր գերապատիւ Ամիրայիդ  
խնդալ 'ի տեր յարգանօք, հաւախոհ լեալ  
քնդ իրաւասերս.


Հանուրց ազգիս յողնախնամ ազգապե-  
տի իրաւախոհ տեառնդ Տեճի՝ արժանահա-  
ւատ ստուգութիւնս այս յայտնի լիցի : Օի  
զայս ինչ իր՝ յայս ինչ ժամանակի՝ յայս  
ինչ տեղւոջ 'ի ներկայութեան ազգասէր և  
իրաւախնդիր արանց, յորս էր և պերճի-  
մաստ ազգընտիր արգարագատ փոխանորդն  
սրբազան Պատրիարքի Հօր մերոյ, և յար-  
գամեծար իրաւախոհ այս ինչ անուն վա-  
ճառականն, բարւոք ընտրութեամբ քննե-  
ցաք մեր ստորագրեալքս ամենքին ընդ նո-  
քօք, ոչինչ երբէք գտաք թերութիւն ինչ  
պակասութեան յայն ինչ գործ. այլ ծա-  
նեաք զիրաւունս գիրընկալ ծառայի ձե-  
րում, յոյր ձեռն զայս իրաւածանոյց վկա-



յադիր արժան դատեցաք ուղարկել առ ձերդ վսեմութիւն. որպէս զի ըստ հաւատարմութեան մերում հաւատ ընծայեալ, բարեհաճեսցի՞ք և դուք ստորագրել յայսմ 'ի հաստատութիւն վկայագրութեան մերում. որք եմք :

1858 Դեկտեմբեր 4 :

Ն. Մ. ՆՇԱՆ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ



ՄՈՒՐՀԱԿԱԳԻՐ

Ճշմարիտ եղբայրասեր յարգոյ ճարտարապետ Պօլսեցի Պ. Սիմեօն Սրապիօնէան.

Օր՞ք գոհունակութեան բանագրութիւն առնել հնարաւորեցայց, կամ զօրպիսի շնորհակալութեան բանս տողել փութասցի գրչիս ընթացք զեղբայրսիրութեանդ գործնական կատարելութենէ ըստ հրամանի փրրկչին Հիսուսի, թէ որում խնդրէ 'ի քէն տուր. շնորհալ եմ յաւէտ յարածամ: Օ՛ի մինչ յայսմ առաւօտու վասն կարի հարկաւորութեան գործոյս 500 դահեկան փոխ խընդրեցի 'ի քէն 'ի մէջ չորից տասանց և երկուց հնգից աւարց հատուցանելոյ պայմանաւ, անմիջապէս իսկոյն կատարեցեք զիմ խնդիր

անյապաղ 'ի նոյն վայրկենի ,

Վասնորոյ ոչ միայն 'ի նոյն աւուր պայ-  
մանի առանց զանցառութեան պարտիմ զվե-  
րոյիչեալ դահեկանն մաքուր դրամով հա-  
տուցանել անպատճառ , այլ և մինչև ցայն  
վայր նոյն դրամով զոր ինչ բնրցէ ինձ շահ  
այս ինչ վաճառն , զկէսն ընծայել պարտա-  
ւորեցայ յարգութեանդ յօժարութեամբ ,  
վասն Մատուածային արդարութեան և վասն  
բարեհաճութեան սրտից ամենայն իրաւա-  
խնդիր անձանց ետու զայս ձեռագիրս :

1858 Դեկտեմբեր 4.

Ն. Ծ. ՆՇԱՆ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ

### ԱՆԴՈՐՐԱԳԻՐ

Բարեհամբաւ վաճառական Մեծարգոյ  
Պ. Թովմասիդ Կարնեցոյ յապահովս լինել  
զինէն յաւետ ըղձանամ .

Օօրուի ձեռագրոյս իմոյ յայտ լիցի յար-  
գութեանդ , զի այսքան քչաւն անդամանդ մա-  
տանին զոր զնեցիւր յինէն , զորոյ զգրամն ամ-  
բողջ ընկալայ . Ե՞՞ բարի վայելումն տացէ :  
Ուստի ահա արդէն պատշաճ համարիմ խոս-  
տանալ . զի յետ ժամանակի ինչ՝ թէ վա-  
յելման բաղձանօք՝ թէ զարժեիցն ադա-


Հելոզ՝ չունիմ երբէք քնաւին՝ յետս պա-  
հանջել. ոչ ես, և ոչ բարեկամք իմ և ազ-  
գականք և որդիք և թոռունք: Աս մանա-  
ւանդ՝ Մատուած Մի արասցէ, եթէ 'ի վա-  
ղուց գողունի գողով, տեսեալ ումք պա-  
հանջիցէ իրրև իրաւացի տէր. թէ և յար-  
քունուստ անգամ իցէ, պարտաւոր եմ ես  
ինքնին հաճեցուցանել զնոսա ՚ի բաց կալ ո-  
րով կերպիւ և իցէ, կրկնակի տուժելով ըզ-  
գինս. և յաւիտեան առ քեզ թողուլ զմա-  
տանին ջանացից ամենայն փութով:

Յոյր սակս՝ հաճութեամբ ետու զայս  
անդորրագիր 'ի ձեռս քո, 'ի հաստատու-  
թիւն պայմանիս և յապահովութիւն մըշ-  
տընջենական վայելման քո առանց կասկա-  
ծանաց երկիւղի:

Կեանս անդորրականս ունիլ քեզ 'ի  
տեառնէ եմ աղօթապարտ

4858 Դեկտեմբեր 1.

Ն. Մ. ՆՇԱՆ  
ԳԻԳՈՐԵԱՆ



ԸՆԴԼԱՅՆՈՒՄՆ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԵԱՆ

Ի ՄԻԹԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՔԱՏԱՑ

ԻԲՐԵԻ Ի ԲԵՐԱՆՈՅ ԽՈՍՏՈՎԱՆԱՀՕՐ

Ըստ անետեաց Փրկչին մերոյ վերին յուսով հարստացեալ Աստուածընտիր երանելոյդ արժանավայել յարգութեամբ ողջոյն սիրայիր, եւ սուրբ օրհնութիւն հոգեծիր.

Աղքատ մարդիկ եթէ առանց տրտնջանաց յանմեղութեան ունիցին զկեանս, և զզուակունս իւրեանց բարեպաշտութեամբ մուցանիցեն, յարքայութեան ընդ ծգնաւորս վարձատրելոց են երկնային պսակօք:

Օի եթէ անբաւական իցէ սոյն վերօշիշեալ բանիս համառօտութիւն ամօքել ըզդառնութիւն ցաւոց սրտիդ, ո՞հոգեկից իմ օրհնեալդ տէրամբ. ահա ներքնաշար սացօւածօվքս ընդլայնմամբ ծանուցից քեզ անձկալոյդ զպերճութիւն վարձուց քոց համբերութեանդ առաքինութեան, 'ի մխիթարութիւն որ ասես 'ի գրիդ, թէ 'ի դառնագոյն աղքատութեան վիճակ հասեալ կամ յորում անմխիթար տաղնապիմ ընտանեօքս հանդերձ: Եպաքէն յայտ իսկ է, զի ամենայն վշտալիր տառապանաց նպատակ գիմէ

անշուշտ յանդորրութիւն հանգստեան. զոր  
օրինակ քրտնաշան վաստակք մշակին ու-  
նին նպատակ առատագոյն բերս ընդունիլ  
յերկրէ. ուստի առանց տրտնջանաց համ-  
բերատար լինել հարկ է 'ի վայելումն ապա-  
գայ բարեաց. վասնորոյ և դուսիրելիդ, որ  
'ի չարաչար վիշտս տաժանելի աղքատութեան  
տաղնապիս, ունիս աներկբայ վախճան ան-  
դորրական, այն է ժառանգութիւն երկնա-  
յին փառաց ապացուցութեամբ փրկչին Տե-  
րոյ, զոր խոստացաւ 'ի սուրբ Աւետարանի  
յասելն՝ թէ երանի աղքատաց, զի նոցա է  
արբայութիւն երկնից. վասնորոյ քաջալեր-  
եաց անարտունջ կեալ 'ի վիճակիդ այդք զառ  
'ի նմանէն վայելել զբարիս յերկինս ընդ  
ճգնաւորս. քանզի յայսմ աշխարհի քանի՛  
քանի ամուսնացեալ անձինք քեզ նման հա-  
ցակարօտ գոլով 'ի յետին չքաւորութեան  
յամենայն վայրկենի սովալուկ լեալ 'ի կեանս  
սրտատուչոր տաղնապին վասն զաւակաց,  
պատառ մի հացի գուն գործել փութան  
անձկանօք, և ո՛չ կարեն ժամանել վայրկեան  
մի հացալից հանգստական կենի վասն ին-  
քեանց և վասն զաւակաց իւրեանց, որ ո՛չ  
ցանկան հանգերձասիրութեամբ նորանոր ըզ-  
գեասուր պճնիլ. այլ մանաւանդ տեսեալ  
զմերկութիւն զաւակաց իւրեանց. արտաս

ուաթօր աչօք հայեցեալ 'ի վերայ նոցա շիասահման որդեսիրութեամբ իբրև 'ի լիճս արեան զօղեալ սիրտ նոցա, այսու մահաբեր երկամբ իբրև սրախողխող յաւէտ վերաւորեալ հանապազ մեռանին յաղէտս: Ասկայն եթէ իբրև ճշմարիտ հոգւով աղքատ յօժարակամ սիրով և զուարթագին դիմօք մըշտամնունչ գոհարանութեամբ այսու վերույիշեալ երջանկառիթ կրօնիք անմեղօրէն կենցաղավարեսցին, և մանաւանդ զաղքատիկ աղէտալի զաւակունս իւրեանց առաքինական բարեմասնութեամբ հրահանգեալ 'ի բարիս վարժեսցին, փոխան ժուժկալութեան հանդերձից ասեմ և կերակրոց՝ ընդ լուսազգեցիցն դասաւորութեան յերկնից հարսնարանին մեղրածորան բարբաբրառ բանիք աւետամատոյց քարոզ լեալ 'ի խրախոյս կենաց յաւիտենականաց յորդորեսցեն, զի և նոքա զնմանութիւն հօրն իւրեանց յինքեանս առ բերելով սիրատենջ բողձանօք ակնկալեալ՝ եթէ յուսով կենաց շատասցին, և զվերինն միայն խորհելով 'ի կատարելութիւն հասանել փութասցին առաքինական գործովք:

Վ. պաքէն՝ այնպիսի հարք զիմրդ համարին աղքատ՝ որ ըստ Վ. աքելոյն՝ ոչինչ ունին, բայց զամենայն ինչ ունին զյաւի-

տենականն կենաց ժառանգութիւն, զոր 'ի մեծ մխիթարութիւն համարեալ ինքեանց և զաւակաց իւրեանց էջիսուսաւանդ զբարոյականն զխաչ յօժարակամ սիրով առ բարձեալ ունելով յինքեանս, ըստ հրամանի փրկչին ընթանալ ընթանան զհետ նորա ամենայն միամտութեամբ իրրև զոչխար հընազանդ: Այա ըստ անսուտ խոստմանն Աստուծոյ որ վասն առաքինեաց, թէ եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ, հաւատամ արժանապէս առնուլ այնպիսեաց ընդ խոտաճարակ ճգնաւորացն սրբոց զվարձս 'ի տեառնէ զերկնային փառացն զանթառամ պսակ յանվախճան ուրախութիւն: Անզի երկոցունցս այսոցիկ անապատասուն ճգնաւորացն ասեմ և կարօտեալ ամուսնացելոց՝ միաշափ գտանին 'ի տազնապս նեղութեան անմխիթար կենօք կենցաղոյս իրրև կամաւոր պատարագ, նորա խոտարուտ կենօք 'ի լերինս, և սորա թէպէտ 'ի շէնս, բայց արիւնախառն քարթու հաջիւ շատանան, յայտնի տեսեալ զընչաւէտ մեծատանց խորտիկս զանազանս: Արպէս նորա մազեղինօք կամ մերկամարմին, նոյնպէս և սորա ցընցոտիկ և պատառոտի ձորձով, որպէս նորա գետնախշտի լեալ ընդ քարանձաւս:

նոյնպէս և սոքա ոչ 'ի բազմոցի բեհեզմ-  
դինաց, և ոչ 'ի բարձի մետաքսեղինաց. ոչ  
'ի փսիաթս եզիպտականս, և ոչ 'ի գորգս  
Լնգդիականս, ոչ 'ի պարտեզս բեղմնաւորս,  
և ոչ 'ի բուրաստանս ծաղկալիցս, զորս վա-  
յելնն մեծատունք 'ի միսիթարութիւն այսմ  
առուղեկան կենիս, այլ բնակին 'ի ներքնա-  
սենեակս հնձանակերպս, զվարձուցն հողա-  
լով մտատանջին, թէ որո՞վ իւր կարողա-  
ցին հատուցանել յամսազլուխ զվարձս :

Արոյ վասն՝ աներկբայ հաւատամ հա-  
սանել նոցա այնմ երանութեան, որում  
ճգնաւորքն ունին ժամանել, բայց եթէ ան-  
տըրտունջ իցեն : Լպա և դու սիրելիդ իմ  
Լստուածային նախասնամութեամբ յայդմ  
բարեգուշակ երանաւէտ վիճակի գոլ, աներկ-  
բայ յուսով կալ քեզ զհամբերութիւն և  
զյոժարութիւն սրտի գոհունակութեամբ  
հանդերձ . զի՛ ոչք վարեսցին աստ արտաս-  
ուօք, 'ի հանդերձեայն ցնծութեամբ հնձես-  
ցեն : ԼՏենայն չարատանջ կենաց արդիւնք՝  
ծաղկափթիթ բերէ պսակ խնդալիր 'ի վախ-  
ճանի :

ՆՇԱՆ  
ԳՐԻԳՈՐԵԱՆ



ՆՅՐԲՈՂ

ԵՐԵՐԵԼ

Ի ՍՈՒՐՐՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ի ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԱՅ ԳԻՒՑԻ

ՃԱՐԾԱՆԱԳՐԻ ԹԵՄԵ

Ի ՍԱՀՄԱՆԱՅ

Եկն տուրնջեան ճառայայթարձակ փայ-  
լեալ. աշտանակ ոսկե ձոյլ լուսարորոր պայ-  
ծառացեալ. բուրլառ կենսախարոյկ Ետ-  
ուածային կայծական. սիւն հրալառ տա-  
ճարին տիրական. կենդանի մահարձան կը-  
րօնից սրբութեան. անսխալ կերպարան ուղ-  
ղափառ պաշտաման. Հայաստան ճիս օ-  
ճառ մսրբութեան. թշնամւոյն դագաթման  
գաւազան զօրութեան. Երամեան ազգիս մե-  
ծութեան թագ փառաց. ակն պատուական  
հեռեալ ընդ ոսկի սոփերայ. ծառ երկնու-  
ղէշ զուարթառատ ՚ի բերս պտղոց. ուռ  
կենդանի ճշմարիտ որթոյն ողկուզալից. ծա-  
ղիկ շնորհագեղ փաղփիւնափայլ հրաշա-  
ցեալ. վարդ կարմրերփեան բացատերե ցու-  
ցեալ. ամպ լուսածածանչ ոսկեցօղ տարա-  
փեալ. ծով ծիծաղաշարժ բերող մարգար-

տոյ . երկիր վեհագոյն ծաղկանց առաքինու-  
թեան . երկին բարեգեղ աստեղաց փող-  
փողման . լուսաւորիչ տանս թորգոմայ և  
օծեալ մեր հայրապետ առաքելաշաւիղ տէր  
սուրբ Գրիգոր :

### Ի ԹՈՒՄԱՆԷ ՄԱՍԱՆՑ

Հոգին շնորհազարդ և զգօն . միտքն  
ճշմարտասէր . կամքն բարեխնդիր , հաւատքն  
եռանդագին . յոյսն հաստատուն . սէրն  
կենդանի . յօժարութիւնն առաքինաջան .  
նկատումն երկնային . կիրքն շափաւոր . մար-  
մինն բարեկազմ և բարեձիր . կերպարանքն  
շնորհաշուք . յլութիւնն զարմանալի . ծը-  
նունդն գովելի . սնունդն հոգևոր . վարքն  
անրիժ . կրօնքն բարեպաշտ . ընթացքն ուղ-  
ղակէտ . շաւիղն առաքելական . պաշտօնն  
Մատուածական . ժուժկալութիւնն գերա-  
զանց . համբերութիւնն երկայնամիտ . բար-  
բառն հրաշալի . բանն Մատուածուսոյց .  
յորդորն եռանդնաշարժ . վարդապետու-  
թիւնն լուսաւոր . քարոզն հոգեհրահանգ . նա՛  
այլ ևս անթիւ բարգաւաճ մասամբք գե-  
րազանցեալ գտաւ 'ի դասս սրբոց սուրբ  
հայրապետն մեր Տէր Գրիգոր լուսաւորիչ  
տանս թորգոմայ :

Ի ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԵՆԷ

Այլ անուն իսկ սրբոյ և մեծի Հայրապետիս ո՛չ ըստ դիպաց իմն կամ ըստ կամաց հաճութեան ծնողացն եղաւ. կամ փաղաքշական իմն յորջորջումն ըստ քնքնշասիրտ փայփայողաց պատշաճեցաւ, այլ ազդեցմամբ ստեղծչին՝ Աթոշունք յոստս ծառոց բանաճարակ որոճային, կոչելով Վրիգորիէ Վրիգորիէ: Օոր լուեալ բարեպաշտուհի սնուցչին նորա, և ՚ի հոգւոյն ազգմանէ ուշաբերեալ՝ զնոյն անուանեաց անուն խորհրդական այն է Վրիգոր. որ է արթուն զուարթուն, այսինքն ըստ երկնային դասուն զուարթագին ՚ի փառաբանութիւն Աստուծոյ, և ՚ի կառավարութիւն հօտին Աստուծոյ ո՛չ քնեած. այլ հսկող որ մինչև ՚ի հուսկն կատարածի աշխարհիս աննիրհելի ակամբ սքնէր, ՚ի խաւարախորհուրդ ամբարշտութեանց հերեւոյնովտաց Աստուած ընդդէմ զինելոց պարսպափակ պաշտպանեալ ուղղակրօն վարդապետութեամբ, նազի էր կանխագէտ, ուսեալ ՚ի հրեշտակէն զգալոցն անվրէպ, գտաւ և աշալուրջ, դարմանս վայելուչս յառաջագոյն ըստ պիտոյից յետագայ ժամանակաց հանդիսացոյց հայրն հաւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ

Ի ՍԵՌԷ

Արդարև սքանչացի են հոգւոյն սրբոյ  
անապական պարզեացն լուսակայլակ և կեն-  
սավտակ խաղացմունք . զոր յկեղեցի իւր  
արփիագեղ ծորեալ երկնահանդէս փայլե-  
լացոյցանէ : Ար և լուսերամ սրբոցն պարք  
մի քան զմի գերազանց փայլեցան որպէս  
աստեղք լուսացայտ , և հոտեան բուրմունք  
քաղցրացան որպէս ազնիւ մանուշակ . մաք-  
րափայլ վարուք վերամշարձան որպէս ամպ  
պայծառազարդ . և ցողարուզն շնորհօք հար-  
թեցան որպէս կանանչագեղ դաշտ : Արքա  
ականակիտ աղբիւրք ջրոյ կենդանութեան  
յորովայնէ եկեղեցւոյ յոգնահոսան փտա-  
կաւորեալ յսփլուս տիեզերաց . զծարաւեալ  
ազինս ամենայն արբուցին . բուսազարդ ծաղ-  
կապսակ փայլելացուցին ականախտիլ գեղա-  
փայլութեան անսական իմաստից . հսճ և  
խիտ ուռճանալ հոգեծին արմտեօք գործ-  
նական առաքինութեան . զուարճ մշտակա-  
նաչ շքեղանալ անխոտորհաստատութեամբ  
ճշմարտութեան հաւատոյ , փայլուն փայլ-  
փայլուն շողշողել գեղափթիթ երանգաւ  
Աստուածպաշտութեան : Ահա սորա են մօր  
գովանւոյ զաւակք գովելիք . անարատ ար-  
զանդի եկեղեցւոյ պտուղք հրաշածնունդք

և ազգի մարդկան պսակք պարծանաց . դաս-  
տիարակք հոգեհրահանգք և անհամեմատ  
բարեաց մեզ մատակարարք . որք ոչ միայն  
գեղապատշաճ պսակ բազմադէմ ներրողե-  
նից յերկրի աստ ընկալան , այլ և զան-  
թառամն և զլուսափայլն յերկինս եղին 'ի  
զլուս վայելչապէս . սուրբ Առաքեալք և  
Հայրապետքնոցին զուգաշաւիղք . և ամե-  
նայն դասք սրբոց ընդ նոսին :

### Ի ՏԵՍԱԿԷ

Ի նոցունց անտի ցուցաւ բազմաջահեան  
աշտանակն լուսոյ , որ լուսափայլեաց յաշ-  
խարհիս Հայաստան զլոյս Աստուածգիտու-  
թեան : Աշակն առաքելաջան , որ զխոպա-  
նացեալ և զկոշտացեալ անդաստան ազգիս  
արօրագրեաց յընդունակութիւն արգասեաց  
հոգևոր սերման : Աշխանիկն և մաքրակրօնն ,  
որ բազմօրինակ ձգնութեամբ զազգս վայ-  
րենացեալ յառաքինասէր ձգանց ընտելա-  
կրթեաց 'ի վարս պարկեշտութեան . զա-  
նապատս ելից կուսանօք , և զլերինս կու-  
սակրօն սրբութեամբ պայծառազգեստ յօ-  
րինեաց . ընդ երկնային զուարթնոց կար-  
գեաց փառաբանիչս Աստուածութեան . ե-  
ղև լուսատու խաւարասէր մտաց . ցուցաւ

արուսեակ հրաշագեղ 'ի նսեմ վայրի . լուսաճաճանչ հրաշացոյց զանազտ ծագումն վարդապետութեան իւրոյ 'ի Աթուղիկէ եկեղեցի Մսուրի . յամբուութեան գերազանց . Մսուրաճարանութեան հրաշալի . 'ի ճգնութեան խտակրօն . 'ի մաքրութեան անարատ . յառաջնորդութեան անստգիտ . 'ի հաւատս անյողգող . 'ի սէր առանց կեղծաւորութեան սուրբն Գրիգոր ամենբջանիկ արփին Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ :

### Ի ՆՄԱՆՈՒԹԵՆԷ

Արպէս հայրն հաւատոյ Արրահամ կոչեցաւ , եղև հայր ազգաց բազմութեան . յորմէ սերեալ յառաջացան քաջակորով թագաւորք իշխանապանծ ճոխութեամբ . և անթիւ բազմութիւնք իբրև զաստեղաց երկնից և զաւաղոյ ծովու , և լցին զեբրինս և ըզդաշտս բնակչօք : Այսպէս և տիրապէս անուանեալն հայր հաւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ եղև ծնող տանս Խորգոմայ հոգևոր ծննդեամբ սուրբ մկրտութեան . ելից զէնս Մսուրաճապաշտից բազմութեամբ իբրև զաւաղ ծովու , և զանապատս աստեղաշար զարդօք ճգնազգեաց սրբոց :

Արպէս և Սատաթիա գուն գործէր ա-

մենայն փութով պնդութեան անարատ պա-  
հել զսահմանս Աւետեաց երկրին 'ի հեթա-  
նոսական պղծութեանց : Աոյն օրինակ և  
լուսատուն մերս հոգւոց տքնէր ցանկապա-  
տել զայգիս նորատունկ . զի արձակուրդ  
սրտից մոլորամիտ հերձուածոց մի 'ի ներքս  
սողոսկեալ մտցեն և ապականեսցեն զնա :  
Եւ որպէս հաւալուսն արիւնաներկ նահա-  
տակութեամբ բհեղ հրահոսան վտակս 'ի  
վերայ ձագուց իւրոց . և զմեռեալքս կենա-  
գործեաց 'ի նորահրաշ կենդանութիւն կեն-  
սառիթ Աստուածգիտութեան , յարմարեալ  
վմեզ որպէս զանդամս կենդանիս 'ի կեն-  
դանի գլուխն մեր Վրիստոս :

### ՅԱՆՆՄԱՆՈՒԹԵՆԷ

Ո՛ր թէ շարահնարն սատանայ իւրով  
գաղտամեստ նենգանօք 'ի գերութիւն իւ-  
րոց կամաց նուաճեաց զազինս ամենայն , և  
ընդ բռնակալութեամբ իւրով թակարկէր .  
էր զորս հոգեկործան դարանօք . էր զորս ախ-  
տակիր ցանկութեանն պատրանօք . էր զորս  
մտախաբ շողոքորթութեամբ . էր զորս մարմ-  
նապաշտ փափկութեամբ , էր զորս անաստ-  
ուած մոլորութեամբ : Վանի՞ առաւել և  
Աստուած իսկարուն բարին ըարեյարմար

Միջոցօք ո՛չ 'ի հնազանդութիւն Մեծարա-  
նին ճշմարտութեան գերեսցէ զամենայն  
միաս . էր զորս 'ի ներքուստ զօրտին պնդու-  
թիւն կակղացուցեալ . էր զորս բարոյական  
պատճառօք զղջացուցեալ . էր զորս քաջա-  
յորդոր խրախուսանօք շարժեալ , էր զորս  
օրհնակօք բարեաց շրջեալ : Այլ մի՞թէ ան-  
կարող ի՞նչ գտաւ ճառագայթել ամենա-  
կարողն 'ի խորոց անդնդոց զնոր արփի 'ի  
լուսաւորութիւն հոգւոց ազբանազեան գը-  
րոհիս , և այն յընդ երկար գիշերի ստուե-  
րապաշտ մոլորութեան . ո՛չ զշորեքօրեայն  
վերարերեալ 'ի գերեզմանէն , այլ զշորեք-  
տասանամեայ տքնեայն 'ի վերապի 'ի միջոց  
թունաբերան գազանաց , ո՛չ ընդ կենդա-  
նիս գրեայն , այլ ընդ մեռեալս համարեայն .  
զմահապարտ դատեայն իբրև զանիծից լու-  
ծող , իբրև մոլորութեան ուսուցիչ անար-  
գեայն , որպէս վարդապետ ճշմարտութեան  
ընդ փրկեալ : Ար էջն 'ի գուբանդնդոց որ-  
պէս զարեգակն յինքն ծրարեալ զցնցուղս  
ճառագայթարձակ լուսոյն՝ դարձաւ 'ի մայր  
իւր . այժմ իբրև նոր արփեննի 'ի նոր արե-  
ւելից նորահրաշ լուսով նորափայլէ սուրբն  
Գրիգոր՝ հայրն պարծանաց մերոց :

Գրիգորի մասին հետազոտությունները



Ի ՀԱԿԱԴՐՈՒԹԵՆԷ

Ուշ 'ի կարծիս եղեալ քաջախոհ լեր  
անձին քում ընդ սքանչելիս ընդ այս . թէ  
զիա՞րդ յանգնդախոր դժոխոց լուսասփիւռ  
արուսեակ ծագեցաւ . 'ի խաւարչտին վիրա-  
պէ ակն արեւու փայլատակեցաւ . յաղտաղ-  
տին տեղւոջէ բուսազարդ արօտ դալարա-  
ցաւ . 'ի ճախին վայրէ ծառ բարբեր ուռ-  
ճացաւ . 'ի քարաժայռ լերանց վարդ ան-  
թարչամ ծաղկեցաւ . 'ի դիւաբնակ զարմէ  
հողանիւթ սերովբէ ցուցաւ . 'ի հրաբերան  
գայլոց դառն հանդարտիկ յայտնեցաւ . յե-  
ղեոնագործ գազանաց զաւակ ընտրութեան  
սերեցաւ . 'ի խաւարասնունդ նախնեաց լու-  
սածնունդ սերունդ երևեցաւ . 'ի դժնեայ  
տատասկէ քաղցրաճաշակ թուզ քաղեցաւ .  
'ի փշաբեր մորենւոյ ողկոյզ ուռճալից բար-  
գաւաճեցաւ . 'ի բղջախոհ ծնողաց որդի ող-  
ջանարատ շառաւիղեցաւ . յարիւնոուշտ  
տոհմէ ծնունդ հոգեկեցոյց յառաջացաւ . 'ի  
թունաւոր իժից արագիլ օձասպան ծնաւ .  
'ի մարդակերպ անասնոց այր հրեշտակա-  
կերպ ծանուցաւ | Լուսաւորիչ տանս թորդս-  
մայ սուրբ հայր մեր տէր Վրիգորիոս :

ՅԵՆՆԻՆԻՄԱՄԱՐՏԻՑ

Աղբիւր առատահոս 'ի Հայաստան յայտնեցաւ ո՛չ հեղեղուկ ջրոյ, այլ կենդանարուղի վտակի. ո՛չ երկրասոյզ յատակս անդնդոց, այլ կայուն մնայուն և ոռոգիչ բանաւոր պարտիզաց. ո՛չ հեղձուցիչ և ջրգողութեան պատճառ, այլ կենսառիթ հոգւով ծարաւեաց. ո՛չ սնուցիչ յոգնադիմի կենդանեաց և ժժմանց, այլ ունակ եօթնարփեան շնորհաց սուրբ Հոգւոյն. ո՛չ սպառեալ 'ի հոլովութենէ դարուց, այլ առաւելեալ օր ըստ օրէ և 'ի պարգևելն ճոխացեալ և 'ի սփռելն հարըստապերճ բարգաւաճեալ. ո՛չ արշաւասոյր վաղիւք զաւազահիմն տկարամիտս ողողեալ և ջրասոյզ կորուսեալ. այլ զերկնաբերձն և զհաստաբուն ընդ ազազուն և վտիտ տնկոց բողբոջեցուցեալ: Արեգակն հրաշագեղ փայլակնացայտ ցուցաւ յերկրիս մերում 'ի խոր գիշերի. ո՛չ խորշակահար տապով կիզեալ, այլ հեզիկ ջերմութեամբ զհոյս բուսոցն զարթուցեալ. ո՛չ 'ի դիմահար թխագոյն ամպոց ծածկեալ, այլ պարզահայեաց դէմ յանդիման նկատի. ո՛չ երբեմն կիզանող ճառագայթիւք զերկիր ցամաքեցուցեալ, և երբեմն նուազահայեաց եղեալ՝ տեղի տայ տիրել ցրտոյ ձիւնասառոյց ձմերան. ո՛չ ճախր

առեալ պատէ զգնտաւ աշխարհի՝ ցերեկ և  
գիշեր մեզ քանակեալ, այլ արձան կենդա-  
նի 'ի Հայաստան աշխարհի մշտածագէ ա-  
նաղօտ լուսով հայրս հոգևոց սուրբ Գրի-  
գոր Լուսաւորիչ:

### Ի ՊԱՐԱԳԱՅԻՑ

Եկն արփիագեղ լուսաբորբոք երեւցաւ  
ընդ երկնաւս ընդ վերնարնակ խմբիցն հը-  
րաշաւոր: Եստղ մշտալոյս գեղափայլեաց  
անմոլար հետովք ուղղէոր: Սին հրալեց  
գործեցաւ առաջնորդող մեզ 'ի ճանապարհն  
երկնաւոր: Եմպ լուսատեսիլ խաղաց 'ի վե-  
րայ մեր, 'ի բոցակիզութեան լինել հովանա-  
ւոր: Ա՛էմ եօթնաջեայ հաստատեցաւ, զա-  
մենեցուն զմեր գնացս ցուցանել անխոտոր:  
Տաճար տէրունեան հիմնեցաւ, 'ի տեսիլ  
դիմաց գեղաւոր: Հաճախապատում վար-  
դապետ քարոզեցաւ, ամենարուեստ բանից  
պատգամաւոր: Հայր հոգևոր ծանուցաւ,  
ուղղակրօն որդուլք բեղմնաւոր: Ա՛գնագ-  
գեաց մենակիր եղև, սրբափայլ առաքինու-  
թեամբ աշխատաւոր: Մաքրակրօն աղօթա-  
ւոր յայտնեցաւ, բանսարկուին յարուցմանց  
դիմաւոր: Հովիւ հոգունակ պայծառացաւ,  
առ փրկութիւն 'ի փարախ եկեղիցւոյ տա-

ւաղելոց նախանձաւոր : Ահա այսոքիւք բար-  
գաւած բարեզարգութեամբ հրաշալի եղև  
ուսուցիչն ճշմարտութեան սուրբ հայրս հոգ-  
ւոց տէր Գրիգոր :

Ի ՊԱՏՃԱՌԱՅ

Թեպէտ յանբարի ծնողաց ծնաւ, այլ  
յարմատոց բարեաց սերեցաւ. քանզի Սէր-  
բահամեան դաւաղանէ ցուցաւ զաւակ քա-  
ջատոհմիկ. յանդաստանէ պարթևազանց ցո-  
րեան օրհնութեան. 'ի բուրաստանէ Արա-  
րատայ ծաղիկ անթարշամ. 'ի քարոդութենէ  
առաքելոյն Թադէի պտուղ հոգեծիր. յա-  
ղօթից Հոփսիմեանց ծառ կենսոռոգ. յա-  
ւազանէ եկեղեցւոյ որդի լուսածնունդ. 'ի  
Բարթուղիմեայ հետոց շախղ անմուր . 'ի  
'ի հոտեան բուրմանց մեծագին իւղ նար-  
դեան. 'ի պատուական ականց լուսափայլ  
կարկեհան. 'ի ցօղոյ երկնից մարգարիտ ան-  
նման. յանշէջ ճրագարանէ լոյս անաղօտ.  
յանմահական տնկոց կոկոն հրաշատեսիլ.  
'ի մարգագետին մարմանդէ ընծիւղ ծաղկա-  
լից. 'ի կենսակայլակ ականէ աղբիւր յոր-  
դահոս. 'ի լուսափայլ ամպոց եղեամն ոսկե-  
փայլ. 'ի սննդարանէ Աեսարիոյ աշակերտ  
ամենազգաստ. յորհնարանէ ձեռնադրու-

Թեան նորին վերատեսչի՝ Վարդապետ ուղղափառութեան: Եստքիւք և այլ ևս գովեստից 'ի ճահ գրութեամբ հռչակեալ ծանուցաւ սուրբն Գրիգոր երանաշնորհ Հայր մեր հոգևոր:

### Ի ԳՈՐԾՈՑ

Քարմացաւ Սառայ յորժամ ետես զինքն մայր որդւոց ժառանգաւորաց երկրին Եւտեաց, և զհարդ ոչ զարմասցի հայր համատարած. որ հոգևոր երկամբք ծնաւ 'ի միում աւուր զազգ միողջոյն ժառանգորդ վերին գրախտին: Ալ զոր օրինակ երկունք յառաջ են քան զծնունդ, վասնորոյ ոչ ծնաւ զմեզ, եթէ ոչ նախ 'ի խայթոցս գժոխըմբեր շարշարանաց վազեաց ինքնակամ, ոչ սիւկ պատուոյ և մեծարանաց թագաւորին յուսով գրդուեաց զնա 'ի հաստատուն յառաջադրութենէ, և ոչ մրրիկ սպառնալեաց երկիւղիւ նահանջեցին զնա, ոչ տանջանք գառնադառն, և ոչ խոշտանգանք բազմաժամանակեայ ընկրկեցին զնա 'ի սիրոյն որ առ Եստուած: Խնդրեաց յԱստուծոյ զարիութիւն 'ի վիշտս, և բանն արդիւնք եղեն, զի որպէս վէմ անշարժ և իբրև արձան պղնձի տարաւ բազմապիսի տանջանարանացն:

զի զմեզ անչարչարութեան վիճակի որդե-  
գիրս արասցէ . որպէս պարտական մահու  
վիրապընկէց պատժաւորութեամբ պատու-  
հասեցաւ . զի զմեզ 'ի խորյատակ դժոխոց  
ազատս կացուցէ : եկաց 'ի գրի անդ բազ-  
մամեայ տքնութեամբ . և զհրեշտակս իջոյց  
յիւր ընտանեկցութիւն . զի զմեզ հրեշտա-  
կակրօն սրբութեամբ երկնաքաղաքացիս ա-  
րասցէ : Այլ անտի որպէս տրփի լուսարուն ,  
զի զմեզ յերկինս հրաւիրեսցէ :

Բժշկեաց նախ զհոգւոց Հայաստանեայց  
զհիւանդութիւն . նա զմեռելութիւն նոցա  
կենագործեաց կենդանաշունչ պատգամօք  
քարոզութեան իւրոյ : Այլ իբրև գրաւակա-  
նեաց զմիտս նոցա 'ի հաւատոց բնդունելու-  
թիւն , բժշկեաց և զմարմնոց նոցա զխոզա-  
կերպ արատաւորութիւն , և 'ի մարդկեղէն  
կերպարանս փոխաբերեաց : Գունդագունդ  
բազմութեամբ լուսաւորեաց զամենեւին , ա-  
ւաղանին մկրտութեամբ ճնեալ որդիս լուսոյ  
զթագաւորս և զնախարարս քրիստոնէական  
մարուք պանծալիս արար : Օխտանիճազանճ  
բազմութիւն Մսուածագգեացս և առաջի-  
նասէրս կացոյց : Ասուոց ըստ արփիակտն  
լուսոյն ցայտելոյ 'ի վերուստ և նկարելոյ՝ ըզ  
հրաշակառոյց զայն տաճար :

Թո՛ղ զանհամար բազմութիւնս եկեղե-

ցեաց և վանօրէից 'ի շէնս և 'ի գիւղս հը-  
րաշակերտեալս: Աւր և զՏարօնայ նահան-  
գին զՏեծահոշակ վանսն որ յանուն սրբոյ  
Արապետին էջօհաննու երկնանման կան-  
գնեաց և գեղազարդեաց: Օգաւանութիւնն  
'Արկիոյ անմոլար հաւատոյ՝ կնքեաց և ինքն,  
և հրատարակեաց յազգս Տեր: Առանձնա-  
ցաւ 'ի շեառն Սանի, և անդ հրաշալի Աստ-  
ուածարանութեամբ ճառեաց զսահմանս հա-  
ւատոյ 'ի յաճօխապատում վարդապետու-  
թեան իւրում: Այլ զի՞ մի բար միօջէ թը-  
ւել ճգնիմ զանթիւն, զորս 'ի սքանչելագոր-  
ծութեանց, և զօրս 'ի բարեկարգութեանց  
և յանբաւ արարուածոց: Տար է ընդ գը-  
րով բովանդակել: Աւրեմն լուութեամբ պատ-  
ուել արժան է, միայն զսակաւս զայս իբրև  
որդիապարտ վճարս անփոխադրելն երախ-  
տեաց բաղմերախտ հօրս Տերոյ սրբոյն Գը-  
րիգորի Առսաւորչի նուիրեմ:

### Ի ՆԱԽԸՆԹԱՅԻՅ ԵՒ Ի ՀԵՏԵՒԱՆԱՅ

Անխազէտ ընտրութիւն անհեղի օրի-  
նաց արարչապետին սահմանեալ էր զհամա-  
տարած լինել ծնող հոգևոր Հայաստան աշ-  
խարհի, ո՛չ երկմտեաց և նա . ետ զանձն բո-  
լորովին 'ի հաճոյս ամենիմաստ տնօրինողին:

ծնունդք անցաւ ո՛չ կարեն . ցաւ ոյն ժուժ-  
 կալեաց . զի ծնեալքն արդիւնաւոր իցեն ,  
 և տիրապէս որդիք եղիցին . ողկոյղք ո՛չ մա-  
 տակարարեն գինի , եթէ ո՛չ ՚ի հնձանս ճրմ-  
 լեսցին : Այլ սա ՚ի հնձանահարաց կոխոտեալ  
 դրաժակ իւր արեան իրրե զարիւն խաղողոյ  
 մատոյց յարբումն հոգևոր ազգի մարդկան :  
 Արեգակն մտանէ ընդ երկրաւս , զի անդ-  
 րէն առաւել **ԱՍ** բոցափայլեսցէ նորա-  
 սքանչ **չառաւիղօք** . և սս եմուտ ՚ի վիրսպ  
 անդ , **Ա** բաւարեալ անդ Աստուածահը-  
 րաշ խորհրդովք հաղորդելովք ՚ի հրեշտա-  
 կէն Աստուծոյ , ել ճառագայթարձակ փայլ-  
 մամբ քան զառաջին հրաշափառագոյն : Այ-  
 թէ աղօթեաց , խնկեցաւ յերկինս : Այթէ  
 նուիրեաց , ընկալաւ յԱստուծոյ : Այթէ  
 խնդրեաց , կատարեցաւ : Այթէ քարոզեաց ,  
 արդիւնաւորեցաւ : Այթէ ձեռս եդ , բժրչ-  
 կեցաւ : Այթէ օրհնեաց , զօրացաւ : Այթէ  
 կացոյց , հիմնեցաւ : Այթէ հաստատեաց ,  
 արձանացաւ : Այթէ ոռոգեաց , բարգաւա-  
 ճեցաւ : Այթէ գոչակեաց , կատարեցաւ :

### Ի ԲԱՂԴԱՏՈՒԹԵՆԷ

Վրան զնախամարդարէն Մովսէս գերա-  
 զանց եղև , զի ո՛չ իրրե զնա զպատգամս



երբեր 'ի սինէական առանձնութիւնէ, և զքստ-  
 ուերական օրինին զսահմանս հրատարակեաց,  
 այլ զճշմարտութեան Մետարանին զհե-  
 ղոյն և զխոնարհին Վերիտոսի զմիտս պար-  
 զարանեալ մեզ որդւոցս եդ առաջի: Այ-  
 հագոյն սյանծայ քան զՊօղոս հեթանոսաց  
 առաքեալ. զի նա յերրորդ յերկինս ել,  
 յափշտակեցաւ եթէ մարմնով և եթէ ա-  
 ռանց մարմնոյ անգիտակ գոլով զինքենէ.  
 սա 'ի վիրապի անդ մնացեալ իջոյց 'ի չոր-  
 րորդ դասակարգէ զհրեշտակ Մատուծոյ  
 յիւր իսկ 'ի կենակցութիւն. ո՛չ միանգամ  
 կամ 'ի սակաւ աւուրս, այլ ցորչափ 'ի վի-  
 րապի անդ վայրարնակեաց. լուաւ 'ի նմա-  
 նէ զհրաշայիս, զոր ունին մարդոյ հոգե-  
 զինի ո՛չ կարէ տանել. ուսաւ զբազմապա-  
 տիկ խորհուրդս Մատուածաշտութեան և  
 եղև հայր խնամածու և դաստիարակ մեզ  
 Մատուածածանութիւն ճշմարիտ և ուղ-  
 դափառ կրօնիւ, սրբազան ընթերցուածութիւն  
 և բարեկարգ ծիսօք. և հանապօգոր բազ-  
 կատարած կայ յերկինս առաջի Մատուծոյ  
 վասն մեր որդւոցս իւրոց: Եւ երանի թէ  
 զկնիք նմանութեան սրբոյ Զօրս յանձին  
 բարձեալ բերէի, և լինէի հարազատ որդի  
 հօրս հանուրց:

# ՆԵՐՔՈՂ

Ի ՍՈՒՐՐ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ի ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԱՅ ԳԻՒՏԻ

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ



Ի ՍԱՀՄԱՆԱՑ

Ձիւր երկնային հեղեալ 'ի յերկրի . ար-  
փի հրաշագեղ՝ բանականացս սեռի . իւղ  
նարդեան անուշահոտ գիտութեան . բուրաս-  
տան ծաղկալից աստեղազարդ հրաշացեալ .  
կայծական սուրբ սիրոյ մարմնեղէն վառարան .  
սուրբ հոգւոյն Մատուծոյ մաքրագարդ բը-  
նակարան . քրտնաջան ճգնազեաց հրեշ-  
տակ մարմնարան . մատեան հոգեշունչ կըն-  
դրկանուէր աշօթից . հոգեկիր հստոր ան-  
համեմատ 'ի ճարտարախօսութեան . փօղ  
կենդանի Մտուածաշունչ պատգամաց . օ-  
րինակ ճգնութեան . գաղափար առաքինու-  
թեան . տիպար կրօնասիրութեան . 'ի պար-  
տէզ Նարեկայ ծառ բարերոյս . յայդեստան  
վանուց ողկոյզ քաղցրահամ . յանդաստան  
աշխարհի ցորեան ատօք 'ի հասկի . աղբիւր  
յորդահոս կենդանարուղի վտակաց . գան-  
ձարան գովելի անգին մարգարտի . բժիշկ

առողջարար հոգւոց ախտացելոց . երբեմն  
հրեշտակ 'ի մարմնի՝ աշխարհի ցուցաւ . այժմ  
մարդ 'ի հոգի՝ 'ի յերկինս պսակեցաւ . ընտ-  
րեալ և փառազարդեալ տէր սուրբ Գրի-  
գոր բարունի անապատասուն :

### Ի ՔՈՒՄԱՆԷ ՄԱՍԱՆՑ

Հոգին զգաստ և զգօն . միտքն ճշմար-  
տութեան տաղաւար . կամքն բարութեան  
ենթակայ . սիրտն սրբախորհուրդ . հաւատքն  
անխոտոր . յոյսն աներկրայ . սէրն անշիջա-  
կան . կրօնքն հրեշտակակա՝ . մարրութիւնն  
բոցափայլ . իմաստութիւնն Մատուածանկատ .  
գիտութիւնն երկնահանձար . առաքինութիւն  
Մատուածահաճոյ . բաղձանքն եռանդագին  
առ Մատուած . շաւիղն անմոյար . ընթացքն  
երկնակրօն . ճգնութիւնն անստղիտ . վար-  
դապետութիւնն հրաշալի . Մատուածարա-  
նութիւնն նրբահայեաց . ձեռքն աղերսահայց  
յերկինս . բազուկն մշտատարած առ Մատ-  
ուած . ոչքն կորովարիբ 'ի տեսութիւն Մատ-  
ուածայնոց . յօժարութիւնն մշտաբորբոք հը-  
րով սիրոյ . բերանն օրհնաձայն անդագար  
օրհնաբանութեամբ . զգոյութիւնք որ ներ-  
քին և որ արտաքին՝ ժուժկալ յամենայնի .  
յերիտասարդութեան անդ յազմական մըշ-

տայադժ բերման կրից ցասման և ցանկու-  
թեան, արդարեւ այսօրիւք և այլ ևս անթիւ  
և բազմամասնեայ առաքինութեամբ ցուցաւ  
անհամեմատ սուրբն Վրիգոր Վարեկացի :

### Ի ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԵՆԷ ԱՆՈՒԱՆ

Յօրէ ծննդեանն ցուցաւ մանուկն հրա-  
շալի՝ ՚ի տեսական, հռչակեցաւ ՚ի լուր ուն-  
կան, նշմարեցան ՚ի նմա ձիրք բարեզարդ  
հանգամանաց, և համեմատ սրբոյ հօրն հա-  
ւատոյ Հայաստանեայց, վասնորոյ զնորին  
անուն և սմա եզին ՚ի մկրտութեան, և շք-  
նորհք հոգւոյն սրբութեան խաղացին ՚ի վե-  
րայ մանկանն Վրիգորոյ ազգի ազգի գերա-  
զանցութեամբ, և որ անուանեցան՝ եցոյց  
և զարդիւնս, զկոչումն Մտուածազգեցիկ  
պսակեաց լիուլի անձին ճգնութեամբ, իբր  
զի անունս Վրիգոր բոցափայլեցոյց զիւր ըս-  
տուգարան առաւելութիւնս յանձն Վրիգո-  
րի Վարեկացւոյ, քանզի եղև արթուն ՚ի  
հոգին, զուարթուն ՚ի սրտին, բազմատքուն  
՚ի մարմնի, զգաստ յանձին, անբուն մտադիր  
առաքինասէր ՚ի վարս, աչալուրջ Մտուա-  
ծայինս, հսկող անգադար՝ ընդդէմ հոգե-  
կործան դարանաց բանսարկուին, կորովա-  
տես երկնային փառացն, և սուր իմն յա-

փշտակութեամբ մտաց տեղափոխեալ 'ի յերկինս, զմայլէ ընդ զուարթուն սրբոց 'ի սէր Փրկչին, բողբոջն Նարեկայ վարսագեղ ծաղկեալ այժմ յարքայութեան սրբոց:

### Ի ՍԵՌԷ

Սեծ և սքանչելահրաշ և անհաս մտաց սլացման խոստովանելի է զարարչագործ խնամոցն զանսպառ ծաւալմունս, որ 'ի գարս իւրաքանչիւր 'ի մեզ առատազեղու անպարտական բարերարութեամբ իւրով ըստ կանուխ գիտութեան առաջագրութեան իւրոյ, մինչ զի ոչ միայն անաղտ հայրն հաւատոյ սուրբն Պրիգոր ճառագայթ ասփիւռ ծագեաց 'ի նսեմացեալքս ստուերապաշտ մոլութեամբ այլ և յամիոփման նորս բարունեաց երամֆ աստեղաշար զարդու բոցափայլեցան 'ի Հալլայստան աշխարհի 'ի նորոյ երկնի աստեղալից հաստատութեան: Ապա զճրպաթի գովութեան ոչ ընկալցի մայրն սուրբ Ակեղեցին սրբոց, որ զաւակագործէ յարգանդէ աւազանի զհաւատացեալքս, զի թէ ճնորք մարմնաւորք և մահկանացուք 'ի ճնանել զաւակս հեզահամրոյր և առաքինի, պարկեշտ և զգօն, գովանաց դտանին արժանաւորք, որթք սաղարթագեղ և ողկուղալից, բեղմ-

նաւորիչ սորեկ ողկուղոյ և արեան խաղո-  
զոյ առատութեամբ մատուակ ցանկալի ցու-  
ցանեն : Քանի՞ որ անաղտ ամբռութեամբ  
ծննդագործէ, օժմամբ իւղոյ սրբալոյս միւ-  
սոնի կակղացուցեալ զհողածինս, և իրրև  
երասանաւ կրթութեան զգաստացուցեալ 'ի  
հլութիւն հանդարտութեան ածէ : Աւ իր-  
րև լուսասաղարթ որթս ստեղնալից՝ երե-  
ւեցուցանէ յաշխարհի ողկոյզս քաղցրահամս  
և ուրախարարս սրտի :

### Ի ՏԵՍԱԿԷ

Երդ որպէս ծնողն արժանի եղև տիրա-  
պէս գովութեան, այսպէս և ծնեալքն պատ-  
ուարան ձայնիւ հռչակեցան : Յորոց անտի  
և թռչունն լուսափետուր, Սոխակն քաղց-  
րաձայն, Եղանին երգարան, Տատրակն ող-  
ջախոհ, Երծիւն երկնամոռիչ սուրբն Պրի-  
գոր՝ որ 'ի Ասպուրական աշխարհի փայ-  
լեցաւ, սէրանուն փրկչին երկնային սիրոյն  
ցուցաւ կենսախարոյկ կրակարան, վառէր  
բորբոքէր 'ի նկատել աստէն զգալի աչօք ըզ  
փրկիչն ամենայնի, և ահա ընդ առաւօտս  
յորում յափշտակեալ էր յԱստուածխօսու-  
թեան, և դեռ ծայրակարմիր նշոյլք արևուն  
ծաւալէին յերկիր, ետես զգերամաքուր

մայրն զսուրբ Աստուածածին, և 'ի գիրկն նորա զԱստուածորդին փայլակնանման կըրկնակի արեգակունք գրկափարեալ, որ ուժգնակի յաղթէին ճառագայթից . և կենդանախարուկեալ սիրով՝ ձենձերեցաւ եռանդեամբ . և որպէս կառք շնչաւոր հոլովեալ ընդ առաջ տեառն և տիրամօրն, անգրաշրջէր 'ի սէր . մինչև գրաւականեաց անձին զշնորհս թէ ան զտէրն զոր խնդրէիր :

### Ի ՆՄԱՆՈՒԹԵՆԷ

Վմանատիպ Սոյսեսի նախամարգարէին 'ի Վարեկեան սրբակենցաղ վանուց երեր 'ի Հայս զտախտակ աղօթամատոյց պատգամաց : Հանգոյն արքունի մարգարէին Ղաւթայ հոգենուագ երգաբանութեամբ քնարահարեալ առաջի Վրիստոսեան տապանակին, պարագլուխ ապաշխարողաց հանդիսացաւ : Աղիայի մարգարէին զուգաշաւիլ . կրօնական դքեմաւ բաժանեալ և հերձեալ զհոսանուտ փառս աղցաւոր կենցաղոյս, որպէս նա մաշկեկան զուղխինահոս յորդութիւն յորդանանու՝ էանց անվեաս ոչինչ գոնէ 'ի խոնաւ գոլորշեաց 'ի նա մերձեալ . վերացաւ հրեղէն կառօք և հրեղէն երիվարօք այն ինքն է կենդանախարոյկ սիրով

բորբոքեալ, սուր իմն յափշտակութեամբ  
հռանդագին հաւատոյ հողովեալ որպէս կառք  
հրակերպ՝ վերասլացաւ յերկինս երկնից շը-  
ւարթանունն Գրիգորիոս :

### ՅԱՆՆՄԱՆՈՒԹԵՆԷ

Ո՛չ իբրև զմետաղս հասարակ հրահա-  
լելեաց երևեցաւ յաշխարհի, այլ իբրև  
զոսկի անապական, ընդ կոսմոս ծաւալա-  
կան, փորձ 'ի քուրայս զտեալ պարզեալ,  
անխառն գտաւ յանբանաւոր կրից, և եղև  
արժանի ընդունելոյ զկնիք նմանութեան հե-  
զոյն Քրիստոսի : Այարկ 'ի պարանոց իւր  
մանեակ ոսկի զերկիր յ տեառն, քան զսէր  
անցաւորաց : Չարչարեցաւ ո՛չ 'ի մարմնաւոր  
բռնաւորաց, այլ ինքնադատ խղճիւ մտաց  
իւրոց, գիմամարտեցաւ ո՛չ ընդ մարդկան,  
այլ ընդ աներևոյթ դազանս : Ծագկեցաւ  
կարմրերանդ ո՛չ արեամբ նահատակութեան,  
այլ բոցատերև սրբութեամբ : Ի մահ վի-  
րաւորեաց զկիրս մարմնոյն ո՛չ քաջասուր  
երկաթովք, այլ ճգնակիր խստութեամբ, արբ  
բաժակ տէրունեան մկրտութեան թախճա-  
գին չարչարանաց ո՛չ 'ի հարկադրութենէ մա-  
տակարարողաց այլ ինքնայոժար կամօք :

Ղմկեցաւ որպէս ողկոյղ 'ի հնձան խոշ-



տանգանաց, ո՛չ ընդ ոտիւք կոխողաց, ալ  
ինքնին անձին և կրիցն բերման ոտնհարլի-  
նելով: Որով մատակարարեաց զգինի ախոր-  
ժահամ ո՛չ 'ի խրախճան զեղխելոց, այլ 'ի  
սեղան հոգևորական յարրումն հաւատացե-  
լոց, և եղև պատարագ ինքնանուէր 'ի հոտ  
անուշութեան ամենակալարարչին:

### Ի ՀԱԿԱԴՐՈՒԹԵՆՆԵ

Հտեմարան շնորհալից յայտնեցաւ ո՛չ  
իմաստութեան երկրայնոյ այլ երկնայնոյ:  
Ի ուրվառ մարմնեղէն ցուցաւ ո՛չ ատելու-  
թեան ծխոյ, այլ Եստուածային սիրոյ, ո՛չ  
գժնդակ բուրմանց, այլ անոյշ խնկենեաց:  
Ի ձիճ շնչաւոր կազմեցաւ ո՛չ դառնութեան  
լեղոյ, այլ քաղցրութեան մեղու: Եկն ա-  
րևու փայլատակեցաւ ո՛չ շացուցիչ աչաց,  
այլ լուսաւորիչ խաւարելոց: Եմպ լուսա-  
ճաճանչ հովանացաւ ո՛չ խստաշունչ մը-  
րըրկաց, այլ բարեխառն օդոյ: Օ՛հառ շը-  
նորհաբոյս ծաղկեցաւ ո՛չ արգասեաց մա-  
հաբերին, այլ բերմանց սուրբ Հոգւոյն:  
Ի ժիշկ հոգետես հանդիսացաւ ոչ զայբա-  
ցուցիչ ախտի, այլ առողջութեան ընձե-  
ռիչ: Երգող քաղցրաձայն յայտնեցաւ ո՛չ  
զբարեմիտս թմրեցուցանող, այլ զանընտելն

հրահանգող . աւագափող նուագածու ծա-  
նուցաւ ոչ զաշալուրջս պակուցանող , այլ  
զընթարմացեալս զարթուցանող : Ողբաշարժ  
երգարկու հռչակեցաւ ոչ զքնական մահ  
մարմնոյ մահկանացուի , այլ զմեղսակիր մե-  
ռելութիւն հոգւոյն անմահի : Մատենագիր  
հրաշապատում . ոչ զայլոց զգառանցանս ,  
այլ զանձին վրիպանս : Դպիր աշողակ ար-  
քայութեանս նորոյ ոչ ըստ բանաստեղծիցն  
արտաքնոց զառասպելս հնարելով 'ի վերայ  
չՄատուածոցն սնոտեաց . այլ հրաշատիպ  
հիւսուածովք քնաղ կերպագրեաց զՄատու-  
ծոյ ճշմարտի զբարիս անբաւս . որով և զա-  
պստամբ մարմին բանաստեղծութեան ընդ  
թևովք հոգւոյն աղօթից ընկձեալ նուաճեալ  
նոր Ղուսաւորիչ երկրորդս այս Դրիգոր :

### ՅԸՆԴԻԻՄԱՄԱՐՏԻՅ

Մահչեսցեն պարծել ճոնաստան և Խա-  
տալիս 'ի բանաստեղծս իւրեանց . և կո-  
րակնեալ ճնչեսցեն ընդ պարծանօք Հա-  
յաստանեայց : Օհ նոքա յախորժանս մարդ-  
կան զնուագս յարմարեցին ընդ երկրաւս .  
սա համարձակեաց վերաթևել յերկինս երկ-  
նից . և 'ի լսելիս Մատուծոյ 'քաղցրացու-  
ցանել զնուագս ախորժալուրս : Կոքա 'ի

կաքաւս ցնծութեան մարմնապէս ներդաշ-  
 նակեալ քաղցրաձայնութեամբ երգարանե-  
 ցին, սա զհոգետաւիղ քնար առեալ 'ի ձե-  
 ոին՝ արտաբերէր 'ի սրտին գանձարանէ ըզ-  
 մեզո նորագործ ստեղծարանութեան, և ըզ-  
 հին գինի Աստուածեղէն սիրոյ: Աորա 'ի  
 կշռութիւնս հասարակաց իրողութեանց 'ի  
 խորհրդարանի պետութեան ճարտարխօսու-  
 թեամբ գրգռեցին զաշխոյժ սիրտ զօրաւո-  
 րաց 'ի ճակատամարտ թշնամեաց. սա յե-  
 կեղեցիս սրբոց հրաշաքարբառ պատգամօք  
 զարթոյց զսիրտ զինուորելոց մանկանց Աի-  
 ոյնի 'ի մարտ ընդդէմ աներևոյթ գազանին:  
 Աորա խորհրդածուք 'ի վտանգի կործան-  
 ման թագաւորութեան. սա բարեյորդոր ե-  
 ոանդնաշարժ և ձեռնկալու հոգւոյն թակար-  
 դելոյ յորսողին ծուղակ: Աորա ողբերգար-  
 կու յազգային վիշտս 'ի հովտէս վշտաց դառ-  
 նակրեալս. սա հոգերգող ծանրաթախիծ  
 տրամութեամբ 'ի վերայ բեկման հոգւոյն զօ-  
 րութեան, և անխնամ թողելոյ յԱստուա-  
 ծային այցելութենէ: Ասանորոյ գերազանց  
 դասեցաւ որ առ Հայաստանեօքս երեւցաւ  
 հոգեկիր հռետոր՝ գերապանծ 'ի գիւտ, հը-  
 րաշակարգ 'ի տրամադրութեան, պերճախօս  
 'ի ճոխաբանութեան. և սքանչելաբարբառ  
 յարտասանութեան:

Ի ՊԱՐԱԴԱՅԻՑ

Շահեկան պտղոց տունկ անձնաւոր . ա-  
նքստգիւտ վարուց պատկեր գեղաւոր . երկ-  
նաքաղաքացի սրբութեամբ հրեշտակ երկ-  
րաւոր . գերնակրօն վարուք մարդ երկնաւոր .  
սրբասուն առաքինութեամբ ներանձնացեալ  
ճգնաւոր . մշտապաշտօն բաղկատարածու-  
թեամբ ազօթկեր հոգեւոր . խորիմաստ մա-  
տենագրութեամբ Մտուածարան հռչակա-  
ւոր . հրաշալի ստեղծարանութեամբ գրիչ  
բանաւոր . հոգիապայծառ շնորհօք վարդա-  
պետ լուսաւոր . զգուշապահ կուսութեամբ  
լապտեր ճառագայթաւոր . արտօսրածին կայ-  
լակաց ակն բեղմնաւոր . հոգեծին արմտեաց  
ձառ ուռձաւոր . արդարախորհուրդ կենակ-  
ցութեամբ քնկեր պատուաւոր . Մտուածա-  
սէր եռանդեամբ խրատաու ազգեւոր . ոգ-  
ւով ճշմարտութեան ուսուցիչ անխոտոր .  
տկարամտաց հաստարան սիրով մտադիր .  
արթուն զուարթուն յանուն և յարգիւն  
սուրբ Քրիստոս :

Ի ՆԱԽԸՆԹԱՅԻՑ ԵՒ Ի ՀՆՏԵՒԱՆԱՑ

Եթէ 'ի ճգունս աշխատութեան անձնա-  
տուր եղև , ոչ ել ձեռնունայն . եթէ զա-

մենակալին բազուկ յօգնութիւն կարդաց,  
եգիտ վաղվաղակի, եթէ մատոյց յերկինս  
զաղօթանուէր բուրումն, խնկեցաւ անխա-  
փան, եթէ արձանագրեաց՝ի տախտակ թըղ-  
թոց, անկորուստ մնաց, եթէ հրատարա-  
կել խնդրեաց աղօթից իւրոց սահմանին,  
կատարեցաւ իսկապէս, եթէ ընծայարեր եղև  
երկնից տիրուհւոյն, սիրողաբար ընկալաւ,  
եթէ կաթողին գտաւ՝ի տեսիլ բանին մարմ-  
նացելոյ, ետես դէմ յանդիման, նա՛ եթէ  
յափշտակեցաւ՝ի սէր անմահական փառաց,  
վաղբաջ վերացաւ, և եթէ լիք եթող զկեն-  
ցադս աղցաւոր, և նա հրաժեշտ ետ՝ի նր-  
մանէ, և երկինք վանատուր եղեն նմա՝ի  
փառս անձառ արքայութեան :

### Ի ՊԱՏՃԱՌԱՑ

Ըրգարև գովեստ սրբոյս յաղթանակ  
կանգնէ՝ի վերայ ընթացից տկար գրչի իմոյ :  
Քանզի յառատարուիս ամպոց մանանայ  
ոգերոյժ տեղաց՝ յընդարձակ ծովէ մար-  
գարիտ լուսացայտ, յանսպառ թանգարանէ  
վաճառ ազնուագոյն, ՝ի զեղուն շտեմարանէ  
տուրք բարեշնորհ, յոսկեհան մետաղաց  
գանձ հոգևոր, յանթարչամ ոստոց պտուղ  
զօղջրութեան, ՝ի կենգանագուգի ազրերէ

ջուր ականակիտ . յօրհնութեան ողկուզոյ  
 գինի ուրախութեան . 'ի քաղցրահամ նուանց  
 օշարակ ս[թ]ափեցուցիչ . 'ի պարարտ ձիթե-  
 նեաց իւղ զուարթ . 'ի յամպոց քաղցրու-  
 թեան ցօղ առաւօտեան . յեղեմարոյս ոս-  
 տոց տունկ շնորհաշաւիղ . յանմեղ ոչխա-  
 րաց գառն հեզահամբոյր . յարգաւանդ երկ-  
 րէ ցորեան լիացուցիչ . 'ի հոգեհրահանգ  
 դաստիարակաց աշակերտ պարկեշտ . 'ի շը-  
 նորհազարդ հօրէ որդի շնորհաց . 'ի սրբա-  
 սուն մօրէ մանուկ սրբակրօն . յերջանկա-  
 զարդ մենարանէ ճգնակիր անհամեմատ ե-  
 րեւցաւ սուրբ և երջանիկն մեր Քրիստոս  
 Արեւկացի :

### Ի ԳՈՐԾՈՑ

Անուամբ և արդեամբ արդարև ար-  
 թուն զուարթուն . քանզի 'ի կայտառելոյ  
 տիոց մանկութեան ո՛չ ստգիւտ ինչ վա-  
 րուց ձգեաց յանձին . այլ յամենայնի անա-  
 րատ քաղաքավարութեամբ ընթացս վա-  
 րեաց առաքինակրօն : Այլև երիտասարդ , և  
 զերիտասարդական կիրս նուաճեաց ողջա-  
 նարատ մաքրութեամբ : Այլև վարդապետ ,  
 զքանքարն Աստուածային բանից աննախանձ  
 արկ 'ի սեղանաւոր հոգիս հաւատացելոց :

Աւսոյց ճշմարտութեամբ . քարոզեաց արդարութեամբ , վարդապետեաց անաչառ . և շամենեսին յանձին ճշգրտեաց . լեալ մատեան կենդանի պարկեշտավարք կենցաղավարութեամբ . ընտրեցաւ առաջնորդ Նարեկայ սրբաժողով մենարանին . Ճգնակիր վարուք իւրովք եղև օրինակ նոցա . ո՛չ բանիւ հրամայեաց նոցա զոգեշահն և զփրրկառիթն . այլ ուսոյց և գործովք իւրովք . Օսէր նոցա արծարծեաց . զհաւատոս նոցա հաստատեաց . և զյոյս նոցա անյողդողդարար . զկուսութիւն նոցա պարսպափակ կացոյց՝ զգուշանալ որպէս ապակւոյ ազնուի՝ ՚ի ջաղջախելոյ : Տաղօթից փոյթ , զպահոց պնդութիւն , զժուժկալութեան տքնութիւն , զկամաւոր աղքատութեան սէր , զհնազանդութեան կատարելութիւն արձանագրեաց ՚ի միոյ միոյ նոցա հրաժարելոց յճէ ՚ի սրբտի : Նա որ մեծն է՝ խոնարհեցաւ և ՚ի նոցա խնդրուածս , յանձն առ և կատարեաց զսոփեր հոգեմատեան զաղօթից հրաշալի սահման . զի առաւել ևս արծարծեսցի նոցա բարեյօժար իղձ աղօթելոյ : Ի սոյն յայս մատեան ամենարուեստ ճարտարութեամբ բովանդակեաց զՄատուածաշունչ գիրս խորհրդական և բարոյական մեկնաբանութեամբ . Մատուածաբանութիւն տեսական հրաշափայ-

լէ անդ . քնար զսրտին առեալ տասնազի՛  
 երգէ իբրև բանաստեղծ . բայց ոգևով աղօ-  
 թաւորի երկիւղածի Մատուածասիրի և զըղ-  
 ջականի : Թո՛ղ զորս սքանչելապէս հրաշա-  
 գործեաց , որք իբրև գործք բարիք միտս  
 տան մեղ զբարեացն պատճառ ճանաչել  
 յարգանօք և ընդունել համբուրիւ :

### Ի ԲԱՂԴԱՏՈՒԹԵՆԷ

Մարգարէից վեհագոյն դասել ոչինչ դըս-  
 րովելի դատիմ : Օի նորագուշակ եղեն գա-  
 լըստեան բանին Մատուծոյ յաշխարհ . և  
 ծանուցին զհասարակաց փրկութիւն . սա  
 սիրով եռանդեամբ խոնարհեցոյց զՄատուածն  
 բան վասն իւր անձին առանձին , ետես և  
 ճենճերեցաւ ևս և : Եռաքելոց սրբոց զը-  
 տաւ պանծագոյն , զի նորա սպասուէրք և  
 ականատեսք բանին , սա՛ի տիրամօրէն պար-  
 գև ընկալաւ . յիւր բաղուկ սիրաբարձ զտէրն  
 և զՄատուածն բան . և հոգեգիրկ մասամբ  
 զրկախառնեալ փարեցաւ զնովաւ : Բան  
 զՅովսէփ գեղեցիկ գերազանց դասեցաւ :  
 Օի ո՛չ ցորեան հացի ՚ի սնունդ և յուտեստ  
 մարմնոյ մատակարարեաց ՚ի դժուարագիւտ  
 ժամանակի . այլ զհոգեանոյցն յստակն ՚ի  
 կշտապինդ վայելումն ամենայն հաւատացե-



լոց ջամբեաց 'ի սովալուկ աւուրս բարեաց  
անպտղութեան : Աոր Գաւիթ Հնոյն յաղ-  
թական . զի ո՛չ մարմնապէս հոլանեալ մեր-  
կացեալ խաղայր առաջի Տապանակին Մ.ս.  
տուծոյ . Ալ նուագարանօք զհանդէսն մե-  
ծափայելուչս յօրինէր գեղօրէն . այլ ըզ  
հոգւոյն մերկապարանոց արարեալ զբիծս  
արատոյ մեղաց , 'ի դիմաց ամենից զղջացե-  
լոց յանձն առակեալ , առաջի ամենատես և  
ծածկագէտ արարչին զԷիճ յուսոյն արտաս-  
ուօք լցեալ պաղատէր մորմոքէր թողութեան  
արժանի լինել : Աի ուրախ լիցի յաւուրն  
յետնում՝ որ օր է առաջին հանդերձելոց  
աշխարհին . և օր վերջին խաբանելի արա-  
րածոց 'ի վերայ փրկութեան հոգւոյն իւ-  
րե 'ի գլուխս ամսոց և տարեկանաց տօնուտ  
պարբերութեամբ անտրտում ուրախութեան .  
որում յուսամք հանդիպիլ շնորհօք տեառն  
և աղօթիք հրեշտակակրօն վարդապետիս  
մերոյ սրբոյն Գրիգորի Արեւկացւոյ . այնմ  
որ զչարարարաց իւրոց յերկրի զներումն  
խնդրեաց . և զհաճող յերկինս անտես ա-  
րասցէ զգովարանիս իւրոյ զհայցուածս :

ՎԱՍԻՆ



Հրատեք Սբբաշտնին առ այցելութիւն	
Ղարացիս այսոս նախբանարոյց տեղորո-	11
կիս ժնարդաւս .	
Շարաբանութիւն .	17
Սոսեր երախարակիտութեան առ հոգաբար-	
յոս Ղարապան .	20
Քանի յանդիմանման զանս անպարծոսութեան	
եղբօր սրտոս .	23
Սիւնյաղազարութեան կանան իւրաքանչիւր առ-	
դիմանի .	27
Սոսակ յարդոսոյ առ հայրն զանս կարօտութեան .	35
Շնորհակալութիւն յարդոսոյ առ հայր իւր	
զանս քալարեան նամակի .	37
Շնորհակալութեան նամակ առ Աղիւսիտոս	
կոս Սիւնյաղիսոս զանս քալարեան օրհնա-	
սատ նամակի .	39
Քան յանդիմանմանս առ շարախարհաւորոս ոս .	40
Սոսն սղարմութեան մարհակալիկ ինդրեւլյն .	42
Շնորհակալութեան յարդոսոյ առ հայր իւր	
զանս երախտեացն .	45
Ղոսն ի Ֆերոյ դարաստանի վերջնոյ .	46
Շնորհակալութեան առ քործակատար քարե-	
կոս իւր .	59

Երկնիցն հնար+ անհրաժեշտն .	60
Յորդորոսն եկեղեցադրութեան և լուսն լարից դեմաց զեկուսն .	71
Սերալիք պարտեանի հասարակութ նամակի .	80
Պարսապարտութեան և գաղթար իմար- հանութեան .	82
Վասնի ինքրանաց .	91
Շնորհակալութեան առ զարժայեպ իւր լուսն ազգադրական ինչ գործոյ .	92
Պարսալիք նամակի առ հասարակութ Բարե- կամ .	95
Շնորհակալութեան առ Բարեպարտապ հայր իւր .	97
Խորապ առ արքեպոս ազգական իւր .	99
Խորապ լուսն անդրադարձութեան ինչ գործոյ եզ- բօր յեթի .	101
Պանգոս լուսն պիտապ ծառայի իւրոյ .	103
Թաղիւհական զեպ իբր ինչիւ ճանապարհոր- դել ընդ ցամախ .	105
Վասնի յիշխարական լուսն ճանապարհոր բեկովի .	108
Շնորհակալութեանի պարտեանի զերոյն շեալ նամակի .	109
Յանդիմանութեան դարարկալարի ճանկան հեգնաքանութեանի .	111
Շնորհապարտութեան առ զեպոյացապ Բարեկամն .	112
Շնորհակալութեանի ի ինքիք ելանել նամա- կադրութեան ընդ առաջին ինամաց .	114

- Աղբրսագրոսնիւն զան աղբոյն սրտոյ . 115
- Աստուածաբանական սրտախոյն ընդ ա-  
ռազ զնսեան բարեկամին . 116
- Աստուածաբանական զան գալարեան պանդխ-  
տանից աղբոյնի . 118
- Պատասխանական զից զան սրտախոյնսն  
պարտապանին զգրաւ . 119
- Աղբրսագրոսնիւն առ Տեառնոս ած զան ա-  
ղբոսնիւն սրտոյ 'ի շրտախոյնսն  
պարտոյ . 120
- Պատասխանի սիրոյ նախնի տնիւն ի բարեկամ  
սրտոյ . 122
- Սիրելիսնիւն աղբիս հայոց որ առ Աստ-  
ուած բազում յարկոսնիւնսն պետանի . 124
- Աղբրսագրոսնիւն առ Տեառնոսոյն ու գովա-  
բանսնիւնսն հանդերձ . 135
- Պատասխանական սիրոյ նախնի եղբոր սիրելի . 137
- Բանտ երտարագրոսնիւն առ Տեառնոս ու  
հայրապետին . 139
- Օսնոցական զաղբրոսնիւն 'ի հօրի յառաջանա-  
գիտոսնիւն հանդերձ Աստուածապաշտո-  
սնի . 141
- Օսնոցական զաղբրոսնիւն 'ի հօրի 'ի հարա-  
բելոսնիւն հասանել յառաջանա գիտոսնիւն . 142
- Պատասխանի սիրոյ նախնի եղբոր գովաբանո-  
սնի . 144
- Աստուածաբանական զնախնիագրոսնիւն բարե-

Իսթի .	146
Բան երեկոցի գրութեան առ սուրբն իւր .	147
Եղբորոցի երեկոցի գրութեամբ առ Բաշ- ճաճանակեաց տէր իւր Բարեբար .	149
Պիլիսոսի զարկանաց շէն և ինքն սուրբ յարգաց նորին շնորհութեան .	151
Բարեկամ շնորհութեան ինքիւր 'ի Բահանայե .	153
Եղբորոցի գրութեան առ Վեհարաւ ու զան զարգութեան 'ի յերաց անօրինաց .	154
Նշանաբար յեւզ նախերգանդ եղբօր տիրելուց .	156
Պատմանակն ճառ .	157
Օգոստոսի յաշնարաւորաց .	168
Շնորհաւորութեան անսան Բարեկամի իւրոց .	171
Ոստանաւորի սրբան անյիւսնութեան Բնակել յայտնել Պարոյ .	172
Խորոք անջնշարութեան .	174
Կարօրաւոր նախնի առ զարեւոյ Բարեկամ նախ- նին տիրելութեանն յնշարակելով .	177
Եղբորոցի գրութեան առ Սրբաշուն Պարտեարտն Ինքիւր շտեղծ ինչ աղբարարի նորին Բա- րեկամութեամբ .	179
Պարտաւ շարժութեան Բարեկամի իւրոց .	181
Կարգարկան հանդէս 'ի վերայ շարժան երկրի Բարոյական վերջնականութեամբ .	184
Նախնորմարոյց շնորհակալութեան .	186
Շնորհակալութեան նախնի առ հայր իւր զան երանարեաց .	188

Ս ան ճիշտութեան ընկերին հարստացնելու խնդրելու ճանաչ .	190
Եւրոպէի ինքնապետական պետութիւններու ընկերութեամբ հասանելի յօդուածներէն .	191
Շարահասարակական ինքնապետական .	192
Պարսկական ընկերութեան ղեկավարութեան պատմութիւնը .	193
Պարսկական ընկերութեամբ բարեփոխում արդարացի հարցի վերաբերեալ պատմութիւն .	195
Պարսկական ընկերութեամբ բարեփոխում հարցի վերաբերեալ .	197
Շարահասարակական արդարացի լրացումներ .	199
Եւրոպայի ընկերութեան պատմութիւնը .	201
Անան ինքնապետական .	202
Արդարացի անձնական ղեկավարութեան ճանաչում .	209
Շարահասարակական արդարացի Եւրոպայ .	210
Անան ինքնապետական .	212
Խնդիրն է .	217
Ի ինքնապետական պետական ընկերութեան բարեփոխումը ըստ ընտանիքի .	219
Անան ինքնապետական ընկերութեան .	221
Յարգար ընկերութեան արդարացի ինքնապետական .	224
Ինքնապետական արդարացի ընկերութեան .	

անդամներն որոնց յսեպ ասինապն .	225
Փոխարիններն բարեց յեմարաններմբ .	227
Ընկերացութիւն ինքրել ճանարհի .	229
Շնորհակալութիւն առ Բժիշկի էր .	230
Որոտնացութիւն առ զՍոցեւի Բարեկամի էրոյ .	232
Յորդորումն լուսն դարացումն որոց .	235
Հասարակութիւն նամակի սիրոյ .	237
Պատմութեամբ շարժացեալ եւ ի Բժիշկի էրում գո- ւաբանութիւն .	238
Եւ նախնիք Էւստիպարոս ի զարմն նամակի .	239
Շնորհակալութիւն առ որ ոչ արճառ եղև ա- լարութեան և ի մոտ ընդ նոյն կենկոյնի .	241
Յորդորումն 'ի Բարեւ արտեւ յերկրասար- գիւնն հասակի .	242
Քաջաբարութիւնն առ դասընկերս հրատարակել չոյ՝ ի քրտնութիւն լուսն Տոբարութեան .	245
Երկրորդութիւն .	247
Խրատ լուսն պահեցողութեան	248
Շնորհակալութիւն առ հայրանամ ի բարասար- ոյ .	261
Վիդարանութիւն դիմանութեամբ լուսն զրա- նկեցոյց եւ ի բարցն .	264
Շնորհաւորութիւնն անուան .	266
Յորդորոս ալիարտիքութեան .	268
Ենկալութեան լուր .	271
'Վարասարանակն ի քոյ 'ի համարումն արդարա-	



դարձութեան .

275

Արհիւնք առ դարձարձակ շէ մի սնուցարեացի  
ժողովուրդ

276

Անյայտութեան անկումն .

277

Արհիւնք շարժութեան .

278

Ինքնուրուշ շարժարձակութեան .

280

Անարարութեան արարչութեան .

282

Տարբերութիւնք երկարութեանն է շարժանքի  
բոլոր ինքնուրուշ .

284

Շարժարձակութեանն է հարձակումն .

286

Շարժանքիւնութեանն քիչ առ ընթացարարացի ու .

287

Շարժանքիւնութեանն առ ծնողս ինքնուրուշ  
ժողովուրդ .

288

Շարժանքիւնութեանն առ բարեբար քիչ ինքնուրուշ  
ժողովուրդ .

290

Ուսումնարանութեանն ինքնուրուշ հոգի քիչ  
ժողովուրդ .

292

Խորագրի շարժարձակութեանն է շարժարձակ .

294

Շարժանքիւնութեանն ինքնուրուշ շարժարձակ  
ժողովուրդ .

297

Խորագրի շարժարձակութեանն շարժարձակ  
ժողովուրդ .

298

Պարզութիւն շարժարձակութեանն .

304

Շարժարձակութեանն ինքնուրուշ շարժարձակ .

305

Ուղղութեան շարժարձակութեանն .

307

Շարժարձակութեանն ինքնուրուշ շարժարձակ  
ժողովուրդ .

307

Պարզութեան շարժարձակութեանն ինքնուրուշ  
ժողովուրդ .

308

Պարզութեան շարժարձակութեանն ինքնուրուշ  
ժողովուրդ .

րեկմով . 309  
 Պահանջումն ժողովրդականաց . 310  
 Խորհրդանշանն յանդիմանմանն մա պարտա-  
 պարտութիւն . 311  
 Առարկանն յոր զանն իրարմեմալ շահմանն իրարայ . 314  
 Պատճառմանն շահմանն յոր պարտութեան . 315  
 Իբրևս ինն զարտապետի իրար հարձակութեանն իցե-  
 ՛ն ի պարտութեան . 320  
 Իբրևս ինն զարտապետի մեծ յաջողութեանն ի  
 ՛ն պարտութեանն . 322  
 Իբրևս մա նախանշանն . 326  
 Խորհրդականացումն զանն շահմանն մարտա-  
 նանմանն . 333  
 Յանդիմանմանն իբրևս յանն մա անգիմանմանն  
 գիտեմանն . 335  
 Խորհրդականացումն իբրևս ի շահմանն . 337  
 Արտապետութեանն մա հարձակութեանն ի շահմանն  
 ի ներքինն յանցանաց իրարայ . 339  
 Յարձակութեանն իրարայ . 347  
 Սարտապետութեանն մա շահմանն ի շահմանն . 350  
 Իբրևս զանն իրարմեմալ ի շահմանն . 356  
 Պատճառմանն շահմանն յոր պարտութեանն . 360  
 Յարձակութեանն մա անգիմանմանն մա շահմանն ի շահմանն . 365  
 Արտապետութեանն իրարայ մա ի շահմանն ի շահմանն . 367  
 Իբրևս իրարայ զանն շահմանն յոր պարտութեանն . 372  
 Արտապետութեանն յոր պարտութեանն մա շահմանն  
 մա շահմանն ի շահմանն ի շահմանն . 372

- Ուրախագրութեամբ նամակ լուսն Բարեկամացի կա-  
րարման գործոցն եղբօր . 374
- Խորատ խոհեմութեամբ յեանամսին լինել 'ի  
յաննարարական ինչ գործ և ալ աճարարել . 376
- Խորատ լուսն անարթութեան եղբօր սրտոյ . 378
- Հարկաւորութեան խոսարձանութեան . 382
- Օգոստոսն յեղից շաբաթ լուսն գործար-  
արականութեան 'ի պարտոց . 387
- Ներդրութեան հարկերութեամբ լուսն եղբօր  
սիրոյ . 388
- Եղբրս գործութեան գործանաւորի առ մեծարտա սո . 390
- Յորդոր յեկեղեցագործութեան . 393
- Յորդորական աղբրանէս լուսն աղբարական  
ինչ գործոց . 394
- Սարգստութեան 'ի վերայ սասան եղբօր . 396
- Երեւն Բանութեան 'ի հանրիսի Բանութեան ճան-  
կանց պարտքն . 397
- Ուրարսութեան հաստատման լուսն գործանաւոր  
աղբարաց . 404
- Եղբրս գործութեան վիճարկն լուսն ծածկաբարոյ  
անանկն սրտոյ . 406
- Եւհոգութեան ծնողաց լուսնգործելի ե պարտոց . 408
- Նայրական խորատ առ ապարտա՞ր որչի իւր . 409
- Ուրարսացութեան լուսն սաստատմաներ պարտոց  
Բարեկամին . 412
- Եւ Կաթնաղէկան իբր յԱպրիլն ապարտ սոսեակ . 414
- Պարտախանկ սիրոյ նամակն լարդարական սրտոյ . 416

- Պարտականի նամակն աւ Լաշիւնիոյս . 417
- Եւբոյսիան իբար աւ Գարարիւնընդ . 419
- Նայոսն զնննընդին 'ի ծոց իբար Գարանան . 422
- Սրբոսիբոսն իբար ընդարանել 'ի Գարանիբար  
ընդ Գարարիւնընդ . 425
- Խորոս հասթեբոսն իբար աւ ընդարանել եւբոյս  
իբար Եսասնոս . 426
- Նրանիբար Կանանոյնն աւ հիւանդոցեւ . 428
- Խորոս աւ անիծոբանն . 429
- Խորոս աւ ասթարոսանն . 433
- Եւբոսն իբար Եսասնոս աւ հոյսն Կանանընդ  
արարեիբարիան . 434
- Իրեիբարիբարոս Գարանիան ընդ Կարանոս  
արարոս Բարեիասն . 436
- Սիբոս Կանանի աւ Պարարիբարն Եսասնընդ  
Եսասնարանիանի . 437
- Շնարանիբար իբար Գարանան հոյս իբարոս 'ի նոս  
ընդին Գարան իբար . 439
- Եւբոսն իբար ընդ Գարանոս Կարանի Եսասնընդ  
արար . 440
- Յարարոսն արանարանիբար . 445
- Գարանարանիան հանդեւ ընդ Եսասնընդ  
իբար . 447
- Ինընդիան ընդ աւ 'ի հասնընդ Եսասնոս  
արան 'ի Կանանընդին . 449
- Եւբոսն իբար ընդ Գարանոս Կարանիբարն աւ  
անարան . 453

- Աղերսագիրք պատահարէ առ Կէր իւր զի շո-  
րեացի զարբար իւր առնուլ 'ի յեաց Կը-  
րտարարութիւնս հարազատս . 454
- Աղերսագրքսննն ազարսննն 'ի պարտացն  
հարազարսնն . 456
- Աղերսագրքսննն ներշնչութիւն լինել 'ի Կար-  
ժանն արդարայ իւրայ Կրկնութիւնն յանցանաց . 458
- Խրատ առ անշէյլն ու յեկեղեցւոց . 459
- Առեարսննն գործաց յայտարարսնննն առ-  
տեր իւր առնուլ զխրատ և զհրատան . 462
- Արժանութիւնսննն արկանել զանչն 'ի ժամագ . 463
- Ընկերացութիւնսննն իրատ . 467
- Անտարազար նամակ գործարանսննն ժամն արդարայ  
Բարեկամութիւնսնն . 470
- Շնորհակալուսննն արդարայ առ հայր իւր ժամն  
պարգևարարսննն . 472
- Պարգևարանսննն նամակ առ սուսանսնննն յար-  
գայ Կրկնագիրք . 474
- Օգրքսնննն յառաջակաց և հարգութիւնսննն լի-  
նել 'ի նայն . 476
- Աղերսագիրք Կարտարանսնննն յարգարել 'ի գիւր-  
կարսնննն . 477
- Յարգարանագիրքսնննննննն Բարեկամսնննն  
հանդիման . 479
- Անտարտ օգնականսնննն . 484
- Աղերսագրքսնննն առ Բիշէյլն յառեար ծնողս-  
նննննննն . 485

- Բարդի խնամազարկան շահաւորող արդարայ խնամք . 486
- Հանձնառուութիւնն պարտաւոր շահաւոր . 489
- Պարտաւորութիւնն լիարժեքութիւնն հրահրելու  
ի վարձագործաց . 490
- Բարձրագոյն լիարժեքութիւնն ընդ արժանա-  
ւոր հարմարութիւնն . 492
- Որոշուածութիւնն առ ստանձնաւոր արդարայ  
եղբոր խրատ . 494
- Ստանձնութիւնն բարեկամութիւնն . 495
- Խորհրդակցութեամբ հարմարութիւնն վարձ-  
ագործաց . 496
- Օժանդակութիւնն ազօրեց խնամքի ի բժշկա-  
նութիւնն եղբոր խրատ . 498
- Ներհամբանութիւնն զան զարգացող ազատա-  
րէ խրայ . 499
- Ներհամբանութիւնն զան ի ստանալի սարձն  
անպարզած պարտաւորանառութեան . 500
- Մեղքագործութիւնն շահաւոր արդարայ առ հայր  
խր ըստ յանցանացն . 502
- Խորատ հանրեցչութեաց բնաշնչութեամբ . 503
- Նիւստութիւնն ի վերայ յազգայնութեան զ-  
արգարայ ազգայն . 506
- Շնորհակալութիւնն նոր պաշտօնէի առ երեսելի  
գործ . 509
- Շնորհակալութիւնն զան ստանալիութեան լրայ  
բարեկամ ի հեռանդութեան . 510
- Շնորհակալութիւնն հանրեցչի լինողին առ

Գրադարանայն .	512
Յնդիմանմանն իրարման որ շարանայն ըն կարյն որոշանային .	513
Լեւորմանն իրարարկայնմանն .	515
Չեանորոշմանմանն եղբայրմանմանն .	516
Վերջնայն որոշմանն շեղբայրմանն որոշայ շնորհակալմանն 'ի հօրե .	517
Չորոշմանն որոշմանն որոշմանն .	519
Խորոշմանն .	521
Յորոր 'ի իրմանն և 'ի ամբողջմանն որ որոշմանն մանկանց զորոշմանն մանկեւ շնորհ յամանմանն և զորոշմանն .	523
Խորոշմանն շնորհայն եղբոր .	528
Խորոշմանն շնորհայնմանն որոշմանն եղբոր .	532
Շնորհայնմանն մեծ լինել ինդրե որոշին .	533
Խորոշմանն շնորհայնմանն եղբոր .	535
Երկայն ինդրե .	536
Խորոշմանն շնորհայնմանն շնորհայն .	537
Խորոշմանն շնորհայնմանն շնորհայնմանն 'ի որոշայն .	540
Շնորհակալմանն շնորհայնմանն 'ի որոշմանն .	543
Վերջնայն .	544
Մորոշմանն .	545
Լեւորմանն .	546
Շնորհայնմանն համարմանն 'ի շնորհայն մանն որոշայն .	548

Ներքեւ զարեւելի ի սարքն Վրիժոր Լճոս  
 արեւ ի ներքին արեւոց գիւրդի ճարտարան  
 նստելուն . 553

Ներքեւ ի սարքն Վրիժոր Նրեկոսի ի  
 ներքին արեւոց գիւրդի ճարտարաննսնելուն . 570





Պ Բ Ի Պ Ա Վ

Նրե-	-ի-ւ	--ւիւ
12	վայելել	վայելէ
20	ներկել	ներկելով
34	խնամք	խնամ
40	արգիլեալ	արգելեալ
86	սանդուղիք	սանդուղք
103	ընկեր իմ	(--ել--րք)
111	իմաստից և գիտու- թեանց	յիմաստից և 'ի գիտու- թեանց
131	ստանա	ստանալ
181	'ի վերա	'ի վերայ
189	գատակնութեամբ	գատակնքաւ
160	հօտեալ	հոտեալ
163	Ո՞ տայր զգլուխ իմ ջուր և զաչս իմ աղ- բիւր	Ո՞ տայր ինձ զգլուխ իմ ջուր, և զաչս իմ յաղբիւր
191	առաջարկութիւն	առաջարկութեան
193	աչով	աջով
194	է (21 րդ)	են
198	գատակնութեամբ	գատակնքաւ
208	ջնջին	չնչին
208	զի բոս որում կամ	զի եթէ
241	մինչ յայն	մինչ յայնմ աւուր
242	որք	յորում
244	օթաչու	օդաչու
246	զթուին սպիտակ	ղսպիտակն թուխ
262	աչղաց	չաւղաց


Արե՛ =

-ի-ւ

առաջիւ

- 270 ընդ իս
- 281 զգացիբ
- 283 ձառագայլթասիբւռ
- 301 կատարեաց
- 311 բընիօն
- 331 գրգախառնէ
- 344 գատակնութիւն
- 345 'ի ներքնայարգ
- 348 'իյարգս
- 368 մբծիլ
- 374 մըլթախայթ
- 377 խարճաղնացութիւն
- 378 արեղականն
- 379 զանիրաւիլ
- 382 յաջորջենն
- 386 երիցունց
- 435 կարմրերանք
- 437 'ի հանգրոանս
- 472 մբցիլ
- 475 անհամեմ
- 480 գեղատուութիւն
- 486 բազմախորակ
- 517 բրժըշկական
- 533 հեռեալ
- 555 խարանեկի

- առ իս
- զգացեր
- ձառագայլթասիբւռ
- ընթացաւ
- բնիոն
- գրկախառնէ
- գատակնիբ
- 'ի ներքնայարկ
- 'ի կարգս
- մերծիլ
- մտախայթ
- ծախս
- արեղակն
- չանիրաւիլ
- յորջորջենն
- երեցունց
- կարմրերանգ
- 'ի հանգրուանս
- մերծիլ
- անհամ
- գեղատուի
- բազմատեսակ
- բժշկական
- յեռեալ
- խաբանեկի







A decorative border with ornate, symmetrical scrollwork and floral motifs surrounds the central area. In the center, a circular medallion with a scalloped, floral-patterned edge contains the year 1858.

1858